ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

2017 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ, ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

ԵՐԵՎԱՆ 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 8

ԲԱԺԻՆ 1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ 10

ԳԼՈՒԽ 1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ 10

ԳԼՈՒԽ 2. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ 15

ԳԼՈՒԽ 3. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՆՁԻՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ 17

ԲԱԺԻՆ 2. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 29

ԲԱԺԻՆ 3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 33

ԳԼՈՒԽ 1. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ 33

1. Կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու հնարավորության սահմանափակումներ 33

2. Սոցիալական աջակցության իրավունք 49

3. Տարեցների իրավունքների պաշտպանությունը նրանց համար նախատեսված սոցիալական պաշտպանության հաստատություններում 54

4. Սոցիալական ապահովության իրավունքը աշխատավայրում դժբախտ պատահարների, հիվանդության դեպքում 57

ԳԼՈՒԽ 2. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ 59

1. Ճանապարհային երթևեկության կանոնի խախտման դեպքում տուգանքը տրանսպորտային միջոցի սեփականատիրոջն ուղարկելը 59

2. «Կրեդիտորական պարտք» և «դեբիտորական պարտք» եզրույթների հասկացությունները կառավարության որոշմամբ սահմանելու և ըստ այդմ՝ օրենքով չնախատեսված կարգով սեփականության իրավունքին միջամտությունը 60

3. Պետության կողմից բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու արդյունքում սեփականության իրավունքի սահմանափակումը 63

4. Հատուցման տրամադրումը հյուսիս-հարավ ավտոմայրուղու հարևանությամբ գտնվող տների բնակիչներին 67

5. Հյուսիս-հարավ ավտոմայրուղու եզրագծին գտնվող շինություններից օգտվելը դրանց սեփականատերերի կողմից 68

6. Կոոպերատիվ հիմունքներով բնակարանային շենք կառուցելու նպատակով կանխավճարային մուծումները և շենքերի կիսակառույց մնալը 69

7. Ինքնակամ շինարարության հետևանքով անձանց իրավունքների և օրինական շահերի խախտումը 71

8. Հատուցումը սողանքների հետևանքով անհատական բնակելի տները բնակության համար ոչ պիտանի դառնալու դեպքում 72

9. Լիցենզիան ստանալուց հետո մարդատար-տաքսի ավտոմեքենայով ուղևորափոխադրումներ չիրականացնելու դեպքում պետական տուրքի և տույժերի վճարման պահանջը 74

ԳԼՈՒԽ 3. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 76
1. Աշխատանքային իրավունքների պահպանումը վերահսկող արտադատական մարմնի բացակայությունը և աշխատանքային իրավունքների խախտումների կանխարգելումը 76
1.2 Վերահսկողությունը աշխատանքային օրենսդրության պահպանման նկատմամբ 80
2. Գործադուլի իրավունքը 82
3. Աշխատանքի ազատ ընտրության իրավունքը կենսաթոշակի անցնելուց հետո 83
4. Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության չափանիշների բացակայությունը 84
5. Ոստիկանությունում ծառայությունից ազատումը 85

ԳԼՈՒԽ 4. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ 88
1. Կրթության իրավունքը նախադպրոցական կրթական հաստատություններում 88
2. Կրթության իրավունքի իրացումը հանրակրթական ուսումնական հաստատություն երեխային ընդունելիս 90
3. Հանրակրթական ուսումնական հաստատություններում դասագրքերի օգտագործման համար ներդրումային գումարների գանձումը 91
4.Կրթության իրավունքի սահմանափակումը՝ կրթությունից դուրս մնալու հետևանքով 93
5. Հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության իրավունքի իրացումը 96
6. Կրթության իրավունքի իրացման սահմանափակումներ հանրակրթական ուսումնական հաստատություններում դրամահավաքի և այլ անօրինական գործողությունների պատճառով 97
7. Կրթության իրավունքի իրացման սահմանափակումները՝ կապված նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում շենքային և գույքային պայմանների, ինչպես նաև ջեռուցման հետ 99
8. Կրթության իրավունքի իրացման սահմանափակումները՝ կապված հանրակրթական ուսումնական հաստատություններում սննդի անվտանգության ապահովման հետ 104
9. Մտքի, խղճի և կրոնի ազատությունը հանրակրթական ուսումնական հաստատություններում 106
10. Կրթության իրավունքի իրացման սահմանափակումները՝ կապված բարձրագույն ուսումնական հաստատություններում (ԲՈՒՀ) ուսանողական խորհուրդների քաղաքականացվածության հետ 107

ԳԼՈՒԽ 5. ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԻՆ 109
1. Մշակութային արժեքների հասանելիությունը հասարակության սոցիալապես անապահով անձանց համար 109

ԳԼՈՒԽ 6. ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ 111
1. Խտրական վերաբերմունքը պացիենտների նկատմամբ 112
2. Պալիատիվ բուժօգնությունը 113
3. Բժշկական գաղտնիքի պահպանումը 115
4. Ֆիզիկական անձի կողմից փոստային ծառայության միջոցով այլ երկրից դեղեր ստանալը սեփական օգտագործման համար 118
5. Դեղերի հասանելիությունը հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար 119
6. Մանկական ստոմատոլոգիական բժշկական օգնությունն ու սպասարկումը 121

ԳԼՈՒԽ 7. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 123
1. Տնտեսվարող սուբյեկտների հարկային պարտավորությունների ապահովմանն ուղղված քրեաիրավական գործիքների կիրառումը 123
2. Դեղերի ոլորտում պետական գնումները և դրանց ազդեցությունը անձի իրավունքների վրա 125
3. Ապրանքի մաքսազերծումը գործարքի գնի մեթոդով 128
4. Ֆիզիկական անձանցից ԱԱՀ գանձելը 129

ԲԱԺԻՆ 4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ 133
1. Քիմիական նյութերի և թափոնների անվտանգ հեռացումն ու ոչնչացումը 133
2. Շրջակա միջավայրի հարցերի վերաբերյալ հանրային իրազեկման և հանրության պատշաճ ներգրավվածության ապահովումը 135
3. Ստուգումները «Թեղուտ» ՓԲԸ-ում 138

4. Փոքր ՀԷԿ-երի կառուցմանը զուգահեռ՝ ջրային ռեսուրսների գերօգտագործման, ինչպես նաև գետային էկոհամակարգերի հետ կապված խնդիրներ.....139

ԲԱԺԻՆ 5. ՊԱՏՇԱՃ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ.....141

1. Վարչական ակտ կայացնելու մասին որոշումների՝ օրենքով սահմանված կարգով քաղաքացիներին չծանուցումը.....141

1.1 ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության կայացրած որոշումների՝ օրենքով սահմանված կարգով քաղաքացիներին ծանուցելու խնդիր.....144

2. Հարուցված կատարողական վարույթի շրջանակներում ծնողի հետ երեխայի տեսակցության ապահովումը.....146

3. Ճանապարհային վճարների գանձման գործընթացը.....148

4.Պատշաճ վարչարարությանն առնչվող այլ դեպքեր.....151

6. Ճանապարհատրանսպորտային պատահարների դեպքերի առթիվ նախապատրաստվող նյութերը ծանոթացման չտրամադրելը.....157

ԲԱԺԻՆ 6. ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ.....159

1. Ազգային ժողովի ընտրություններ.....160

2. Երևանի ավագանու ընտրություններ.....167

3. Համայնքների ղեկավարների արտահերթ ընտրություններ.....169

ԲԱԺԻՆ 7. ԿԱՐԾԻՔԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ.....171

1. Լրագրողի մասնագիտական գործունեության երաշխիքները.....171

2. Էրոտիկ կադրերով կամ բռնություն պարունակող, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների ցուցադրումը ցերեկային ժամերին.....174

3. Հանրային ռադիոյով և հեռուստատեսությամբ հեռարձակումների եթերաժամը ազգային փոքրամասնությունների լեզուներով.....176

4. Տեղեկատվության ազատությունը. օրենսդրություն և իրավակիրառ պրակտիկա.....177

ԲԱԺԻՆ 8. ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 180

1. Բացատրություն տալիս անձի իրավունքների երաշխավորման և գործնական ապահովումը.....180

2. «Փաստացի քրեական հետապնդումից» անձի պաշտպանության օրենսդրական և գործնական երաշխիքները.....184

3. Ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառման շրջանակներում կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը վերցնելը և նրա ազատ տեղաշարժման իրավունքի սահմանափակման ոչ իրավաչափ պրակտիկան.....187

4. Քրեական վարույթի շրջանակներում վկայի և տուժողի, ինչպես նաև դատավարության մասնակից չհանդիսացող անձանց անձնագրերը վերցնելը և նրանց նկատմամբ հանրապետությունից դուրս գալու արգելք սահմանելու ոչ իրավակիրառ պրակտիկան.....193

5. Հանցագործությունների վերաբերյալ ֆիզիկական անձանց հաղորդումները չքննարկելու և հաղորդումն ընդունող մարմնի հայեցողության պրակտիկան.....194

6. Մեղադրյալի համաձայնության՝ նոտարական կարգով հաստատումը՝ որպես վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով քրեական գործով վարույթի կարճման նախապայման դիտարկելու ոչ իրավաչափությունը.....199

7. Քրեական գործով վարույթի շրջանակներում անձի ոչ պատշաճ ծանուցված լինելու և դրանով պայմանավորված՝ բերման ենթարկելու ոչ իրավաչափությունը.....202

8. Ազատությունից զրկելիս անձի իրավունքների երաշխավորումը և գործնական ապահովումը.....205

9. Ազատությունից զրկված անձի՝ փաստաբանի մատչելիության իրավունքի ապահովումը և փաստաբանների մասնագիտական գործունեության երաշխիքները.....209

10. Պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացումը.....216

11. Քրեական գործով վարույթի շրջանակներում որպես իրեղեն ապացույց ճանաչված անձի սեփականությանն անհամաչափ միջամտությունը 221
12. Քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշման պատճենը վարույթն իրականացնող մարմնի կողմից չտրամադրելը 224
13. Քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի գործողությունների հետևանքով առանց հսկողության մնացած անչափահասների կամ անաշխատունակ անձանց խնամքի պատշաճ կազմակերպումը 226
14. Կալանքի՝ որպես խափանման միջոցի կիրառման դատական պրակտիկան Հայաստանի Հանրապետությունում 227
15. Քրեական գործերի քննության ողջամիտ ժամկետի պահպանումը: Դատարանակազմական և դատավարական կանոնակարգումների լիարժեքությունը 235
16. Հանրային վստահության հատուկ բաղադրիչ ունեցող քրեական գործերով վարույթը 241
17. 2008 թվականի մարտի 1-ի 10 զոհերի մահվան վերաբերյալ քրեական գործերի քննությունը 249

ԲԱԺԻՆ 9. ԱՅԼ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 251
1. Աղմուկի հետևանքով հարակից տարածքների բնակչությանն անհանգստություն պատճառելը 251
2. Ճանապարհների անբարեկարգությունը 252
3.Տրանսպորտի գերբեռնվածությունը, սպասարկման որակ 253
4. Հայցի ապահովման միջոցի հետ կապված օրենսդրական խնդիր 255
5. Խտրականություն՝ սեռական կողմնորոշման հիմքով 256
6. Խաղալիքների որակի և անվտանգության նկատմամբ վերահսկողություն 258
7. «Օդից փող» հաղորդմամբ քաղաքացիներին պատճառված վնասների խնդիր 258
8. Ինտերնետ շահումով խաղերի և վիճակախաղերի գովազդի արդյունքում առաջացած խնդիրներ 259

ԲԱԺԻՆ 10. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ 261

ԲԱԺԻՆ 11. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ 266

ԳԼՈՒԽ 1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԶՈՐԱԿՈՉԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ 270
1. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու մասին ծանուցելու գործընթացում ՀՀ զինապարտ քաղաքացիների (զորակոչիկների) իրավունքները 270
2. Զինվորական գրքույկի, զինապարտի կցագրման վկայականի ձևերն ու դրանք լրացնելու, դրանց տրամադրման հարցերի իրավակարգավորման բացակայությունը 272
3. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ընթացքում զինապարտների առողջության պահպանումը և պատշաճ բժշկական քննությունը 274
4. Մի շարք հիվանդություններով զինվորական ծառայությանը սահմանափակումով պիտանի ճանաչված զորակոչիկներին առողջական վիճակի պատճառով տարկետման իրավունքը 279
5. Բժշկական ու ռազմաբժշկական փորձաքննություն իրականացնող հանձնաժողովները 280
6. Բժշկական փաստաթղթերը ստանալու իրավունքը 280
7. Միևնույն զորամասում ծառայելու արտոնությունը 281

ԳԼՈՒԽ 2. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԸՆԹԱՑՔՈՒՄ 282
1. Զինվորական ծառայության անցնելու իրավունքը 282
2. Զինվորական ծառայությունից արձակվելու իրավունքը 284
3. Զինծառայողների պատշաճ բժշկական օգնություն ստանալու իրավունքը 285

ԳԼՈՒԽ 3. ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ 287

1. Հայաստանի Հանրապետության զինված ուժերում մահվան և ինքնավնասման դեպքերը 287

ԳԼՈՒԽ 4. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԶԻՆՇԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ **288**

ԳԼՈՒԽ 5. ԶԻՆՇԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ **291**

1. Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների բնակարանային ապահովությունը 291

2. Զինվորական ծառայությունից արձակված քաղաքացիների զբաղվածության ապահովման իրավունքը 295

3. Զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին ոչ ֆինանսական բնույթի արտոնությունների տրամադրման առաջարկներ 296

ԲԱԺԻՆ 12. ԱՌԱՆՁԻՆ ԽՈՒՄԲ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 303

ԳԼՈՒԽ 1. ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ **303**

1. Կանանց նկատմամբ բռնություն 304

2. Թրաֆիքինգ և շահագործում 313

3. Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումներ 314

4. Կանանց մասնակցությունը քաղաքական կյանքին 316

5. Առողջության պահպանման իրավունք 318

6. Աշխատանքային իրավունքներ 319

ԳԼՈՒԽ 2. ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ **322**

1. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության իրավական համակարգ 323

2. Ֆիզիկական միջավայրի մատչելիություն 324

3. Փոխադրամիջոցների մատչելիություն 327

4. Տեղեկությունների և հաղորդակցության մատչելիություն 329

5. Մասնակցությունը մշակութային կյանքին, հանգստին, ժամանցային ու սպորտային միջոցառումներին 331

6. Կրթության իրավունք 334

7. Առողջապահական ծառայությունների մատչելիություն 341

8. Աշխատանք և զբաղվածություն 343

9. Հաշմանդամություն ունեցող երեխաների՝ ընտանեկան միջավայրում ապրելու իրավունք 344

10. Մասնագիտացված հատուկ մանկատների հաշմանդամություն ունեցող սաների համար համապատասխան կացարանների և խնամքի հաստատությունների բացակայության խնդիրը 347

11. Քաղաքական իրավունքներ 348

12. Հաշմանդամություն ունեցող կանայք 350

13. Օրենսդրական թերի կարգավորումների հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների և արդար դատաքննության իրավունքների սահմանափակումը 352

14. Հաշմանդամության սահմանման ոլորտում առկա խնդիրներ 353

ԳԼՈՒԽ 3. ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ **357**

1. Երեխաների աղքատության հիմնախնդիրը 360

2. Հաշմանդամություն ունեցող երեխաների ընտանիքում ապրելու իրավունքը 362

3. Մշտադիտարկման այցեր երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ 365

3.1. Վերաբերմունքը երեխաների նկատմամբ 366

4. Հաստատությունում գտնվող երեխաների կողմից բողոք ներկայացնելու մեխանիզմեր 372

5. Երեխաների խնամք և պաշտանություն իրականացնող հաստատություններում ընդունելության և խնամվելու գործընթացի նկատմամբ վերահսկողության խնդիրներ 374

6. Երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում 18 տարեկանը լրացածների հիմնահարցերը 376

7. Թափառաշրջիկ ու մուրացիկ երեխաներին հայտնաբերելու և աջակցություն տրամադրելու գործընթացի հետ կապված խնդիրներ 378
8. Խնամակալության և հոգաբարձության մարմիններ (հանձնաժողովներ) 380
9. Երեխայի նկատմամբ բռնությունը 382

ԳԼՈՒԽ 4. ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ **386**
1. Փախստականների և ապաստան հայցողների իրավունքներին առնչվող ՀՀ օրենսդրությունը 388
2. Ապաստան հայցողների իրավունքների ապահովումը ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության Միգրացիոն պետական ծառայության «Հատուկ կացարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունում 391
3. Ապաստան հայցողների իրավունքների ապահովումը Միգրացիոն պետական ծառայության որոշումների կայացման շրջանակներում 394

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը ստեղծման օրից ի վեր ապրել է շարունակական զարգացման ու կայացման գործընթաց: Դա արձանագրվել է Մարդու իրավունքների բոլոր պաշտպանների օրոք: Այդպիսի զարգացում հնարավոր է ապահովել միայն հետևողական աշխատանքի շնորհիվ. աշխատանք, որը կոչված է նաև ապահովելու ինստիտուցիոնալ զարգացում ու հանրային վստահություն: Այսպիսի սկզբունքներով աշխատանքի շնորհիվ է, որ Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը համապատասխանում է Օմբուդսմանի ազգային ինստիտուտի միջազգային պահանջներին և չափանիշներին: Հաստատությունն ունի «A» կարգավիճակ, ինչը վկայում է Փարիզյան սկզբունքներին համապատասխանության, ինչպես նաեւ միջազգային բարձր հեղինակության մասին:

Այս թանկ ձեռքբերումը պարտավոր է պահպանել ու զարգացնել Մարդու իրավունքների պաշտպանի բարձր պաշտոնում իրավապաշտպան առաքելություն իրականացնող ցանկացած անձ: Դա նաև պետք է գիտակցի Պաշտպանի աշխատակազմի յուրաքանչյուր ներկայացուցիչ: Հենց այս հիմնարար մղումով է իրականացվել նաև Մարդու իրավունքների պաշտպանի 2017 թվականի գործունեությունը: Ընդ որում, այդ գործունեությունն մշտապես առանձնացել է նրանով, որ ենթադրում է համագործակցություն պետական մարմինների հետ, համատեղ սերտ աշխատանք քաղաքացիական հասարակության ու միջազգային կառույցների և այլ երկրների գործընկերների հետ: Աշխատանքի արդյունավետությունը նաև պահանջում է անհանդուրժող վերաբերմունք իրավունքի ցանկացած խախտման նկատմամբ ու հետևողականություն դրա վերացման հանդեպ:

Այսքանով հանդերձ, մարդու իրավունքների պաշտպանությունը լի է մարտահրավերներով, որոնք անընդհատ փոփոխվում են և յուրաքանչյուր դեպքում հաղթահարման համար պահանջում նոր մոտեցումներ: Դրա հետ միասին, իրավունքների պաշտպանությունը կարող է արդյունավետ լինել միայն այն դեպքում, երբ պետության ներսում գործում է համապատասխան խնդրով զբաղվող մարմինների ու կազմակերպությունների հստակ ու որոշակի համակարգ: Այն իր հերթին ենթադրում է տվյալ մարմինների կամ կազմակերպությունների գործառույթների հստակ տարանջատում՝ պայմանավորված նրանց դերով ու խնդիրներով: Նրանցից յուրաքանչյուրը պետք է ունենա իրեն վերապահված գործառույթներով պայմանավորված իրավական այնպիսի կարգավիճակ, որը հատուկ է բացառապես այդ մարմնին կամ կազմակերպությանը և չի կրկնում մյուսներինը:

Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության բարձր առաքելությունը, լինելով յուրաքանչյուր պետության առաջնահերթ ոլորտներից, էական նշանակություն ունի ինչպես երկրի զարգացման, այնպես էլ յուրաքանչյուր անձի պաշտպանվածության համար:

Ըստ նոր ձևավորված համաեվրոպական սկզբունքների՝ պետություններն իրենք պետք է հնարավոր քայլեր ձեռնարկեն, որպեսզի յուրաքանչյուր ոք իրեն լիարժեք պաշտպանված զգա իր երկրում: Ուստի, օմբուդսմանի ինստիտուտին վերապահվում է

հատուկ նշանակություն՝ որպես իրավունքների և ազատությունների պաշտպանության համակարգի ինքնուրույն մասնակցի:

Այսքանով հանդերձ, Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը պետք է ընկալվի այնպիսի սուբյեկտ, որը լրացնելով պետական ինստիտուտների համակարգը և վեր լինելով գերատեսչական որևէ շահից՝ կոչված է նպաստելու իրավունքների պաշտպանության ողջ մեխանիզմի հզորացմանը երկրում՝ այդ ընթացքում ակտիվ աշխատանք տանելով քաղաքացիական հասարակության ու միջազգային գործընկերների հետ:

Այս հիմնարար գաղափարներն են, որ պետք է լինեն նաև Հայաստանի Հանրապետության ողջ իրավապաշտպան համակարգի զարգացման հիմքում:

ԲԱԺԻՆ 1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

2017 թվականի մարտից ուժի մեջ մտավ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքը, որն ամրապնդեց Պաշտպանի ու նրա աշխատակազմի գործունեության երաշխիքները, իսկ առանձին դեպքերում նախատեսեց արդյունավետ աշխատանքի համար նախատեսված սկզբունքորեն նոր իրավական լուծումներ:

Նախ, նոր օրենքի հիմքը ՀՀ Սահմանադրությունն է, որը ոչ միայն ամրագրում է Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը ստանալու յուրաքանչյուրի սահմանադրական իրավունքը, այլ նաև առանձին գլխով նախատեսեց սահմանադրական նոր գործառույթներ ու անկախության բարձր երաշխիքներ:

2017 թվականի ընթացքում Պաշտպանի գործունեությունն իրականացվել է երկու հիմնարար ուղղությամբ՝ անհատական դեպքերի քննարկման, ինչպես նաև կանխարգելիչ գործունեության իրականացման հիման վրա: Ընդ որում, այդ աշխատանքն իրականացվել է օրենքով Մարդու իրավունքների պաշտպանին վերապահված լիազորությունների շրջանակի հիման վրա:

Առաջինն, իրավունքների և ազատությունների պահպանմանը հետևելը, իսկ խախտման դեպքում՝ դրանց վերականգնմանը նպաստելն է անհատական դեպքերի քննարկման միջոցով: Այս բոլոր դեպքերով անհատական մոտեցման պայմաններում ինչպես կոնկրետ բողոքների, այնպես էլ սեփական նախաձեռնությամբ սկսված ընթացակարգերի շրջանակում ուսումնասիրվել են կոնկրետ իրավունքի ենթադրյալ խախտման մասին վկայող հանգամանքները, ձեռնարկվել են օրենքով պահանջվող միջոցները իրավունքի խախտման փաստը գնահատելու և վերականգման ուղղությամբ համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար: Այս ուղղության շրջանակում մշտական աշխատանք է տարվել քաղաքացիների հետ՝ նպատակ ունենալով ճիշտ նախանշել բողոքում բերված հարցերի լուծման ուղիները[1]:

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության երկրորդ հիմնարար ուղղությունը վերաբերում է Մարդու իրավունքների պաշտպանի կանխարգելիչ գործունեությանը: Այն իրականացվել է մոնիթորինգային պարբերական այցելությունների, այդ այցելությունների ընթացքում վեր հանված խնդիրների լուծմանն ուղղված առաջարկներ ներկայացնելու և այդ առաջարկների իրացմանը նպաստելու, փաստահավաք աշխատանքներ իրականացնելու միջոցով և այլն: Ընդ որում, այս ուղղությունը նույնպես ենթադրել է անհատական աշխատանք քաղաքացիների հետ: Այս գործառույթի հիման վրա զարգացվել են գործունեության նոր ուղղություններ:

[1] Ինչպես վկայում են վիճակագրական տվյալները, 2017 թվականին շեշտակիորեն աճել է դրական լուծում ստացած անհատաան գործերի թիվը:

Գործունեության այս երկու ուղղությունները չեն կարող առանց մեկը մյուսի գոյություն ունենալ, դրանք պետք է լրացնեն իրար: Միայն այդ ուղղությունների զուգակցված իրականացումը կարող է հնարավորություն տալ հասնելու իրական արդյունքի՝ նպատակ ունենալով բացառել հետագայում պետական և տեղական ինքնակառավարման որևէ մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից մարդու իրավունքների և ազատությունների խախտման դեպքերը:

Նշված աշխատանքների ընթացքում կարևոր ուշադրություն է դարձվել նաև Պաշտպանի աշխատակազմի կարգավիճակի ամրապնդմանն ու կարողությունների հետագա զարգացմանը:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը կամ քննարկումն ինքնանպատակ չէ: Բացի կոնկրետ իրավիճակներին առնչվող քննարկման ընթացակարգից, դրանք յուրաքանչյուր դեպքում ուսումնասիրվում են նաև այն հաշվառմամբ, որպեսզի վեր հանվեն այդ խախտումներն առաջացնող հիմքերը և ձեռնարկել միջոցներ այդ հիմքերը վերացնելու դեմ: Միայն անհատական բողոքների քննարկմամբ սահմանափակվելը չի կարող ապահովել աշխատանքի բավարար արդյունավետություն:

Գործունեության այս ուղղությունը զարգացնելու հարցում հատկապես շեշտադրումներ կատարվեցին Սահմանադրության հիման վրա մշակված «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական նոր օրենքում: Նոր լուծումներով մի կողմից բարձրացվեց Օմբուդսմանի հաստատության նշանակությունը մեր երկրի իրավական համակարգում, մյուս կողմից, ինչպես նշեցինք, արձանագրվեց Պաշտպանին դիմելու յուրաքանչյուր անձի սահմանադրական բացարձակ իրավունքը:

Իհարկե, իրավունքների պաշտպանության ոլորտում խնդիրներն արձանագրելը և դրանք սոսկ զեկույցում կամ տարեկան հաղորդման մեջ կամ որևէ զեկույցում արտացոլելը բավարար չէ: Մարդու իրավունքների պաշտպանն ինքը պետք է ունենա իրավական հնարավորություն սեփական գործիքներով նպաստելու այդ բոլոր խնդիրների լուծմանը, ինչպես նաև դրանց վերացմանն ուղղված առաջարկների իրացմանը:

Ըստ այդմ, 2017 թվականի ընթացքում զարգացվել են Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության նոր ուղղություններ: Սահմանադրությամբ վերապահված նոր գործառույթ է իրավունքներին ու ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանը նպաստելը: Սրա հիման վրա Սահմանադրական օրենքի կարգավորումները հնարավորություն տվեցին նոր պրակտիկա ձևավորել: Խոսքը վերաբերում է օրենսդրական ակտերի նախագծերի մշակմանը և դրանք շրջանառության դնելուն՝ հետագայում այդ ակտերն ընդունող մարմնի, այդ թվում՝ խորհրդարանին վերջնական ամփոփված տեսքով ներկայացնելու նպատակով: Մշակված և շրջանառված օրենսդրական փաթեթների հիմնական մասն արդեն անցել է անհրաժեշտ քննարկումների փուլ և ներկայում գտնվում է վերջնական ամփոփման փուլում:

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության հետ կապված զգալի ուշադրություն է ցուցաբերվել խոշտանգումների և վատ վերաբերմունքի դրսևորման մյուս ձևերի կանխարգելմանը: Մասնավորապես, խոշտանգումների կանխարգելման ազգային մեխանիզմի կարգավիճակով իրականացվել է հստակ տարանջատում անհատական գանգատների քննության և պարբերական կամ մոնիթորինգային այցերի միջև՝ անկախ

նրանից բողոք կա, թե՝ ոչ: Այս մոտեցումը հնարավորություն է տվել այցեր իրականացնել ազատությունից զրկման վայրեր և ձեռնարկել հիմնարար ստուգման աշխատանքներ՝ անկախ բողոքի կամ դիմումի առկայությունից: Սա ուղղակիորեն բխում է միջազգային փորձի պահանջներից: Ընդ որում, իրականացվող այցերին ներգրավվել են նաև կանխարգելման մեխանիզմի անկախ փորձագետները (հոգեբան, սոցիոլոգ, բժիշկներ, այդ թվում՝ հոգեբույժ): Կանխարգելման մեխանիզմի աշխատանքներին ներգավվել են նաև Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր խորհրդի անդամները[2]:

Մարդու իրավունքների պաշտպանի 2017 թվականի գործունեության հիմնարար ուղղություններից է նաև երեխաների իրավունքների պաշտպանությունը Սահմանադրական օրենքով տրված լուծումների հիման վրա, որն իրականացվել է համապատասխան մասնագիտացված ստորաբաժանման միջոցով: Կարևորագույն ուղղություն է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը, որի հիմնարար իրականացման հիմքեր են նախապատրաստվել հաշվետու տարվա ընթացքում՝ ընդունվելիք նոր օրենսդրությանն ընդառաջ:

2017 թվականի ընթացքում աշխատանքի կարևորագույն ուղղություն է եղել վերապատրաստումների կազմակերպումն ու իրականացումը: Սա իրականացվել է իրավապաշտպան գործունեության բոլոր ուղղություններով: Այդ դասընթացներին մասնակից են եղել ինչպես Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներ, այնպես էլ հասարակական կազմակերպություններ, լրագրողներ, միջազգային փորձագետներ:

Նշված բոլոր ուղղություններով աշխատանքն արդյունքեր չէր տա, եթե չլինեին սահմանադրական փափոխությունների ու Սահմանադրական օրենքի վրա հիմնված՝ անկախության երաշխիքները:

Նախևառաջ, կարևոր էր սահմանադրական օրենքի մակարդակով ամրագրել այն, որ Պաշտպանի աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձինք չեն կարող բացատրություն տալ կամ հարցաքննվել Պաշտպանին հասցեագրված դիմումների կամ բողոքների էության կամ դրանց ուսումնասիրությունների արդյունքում Պաշտպանի կայացրած որոշումների վերաբերյալ, ինչպես նաև դրանք այլ անձանց տրամադրել ծանոթացման՝ առանց Պաշտպանի գրավոր համաձայնությամբ: Ընդ որում, նույն այս պահանջը վերաբերում է նաև խոշտանգումների կանխարգելման ազգային մեխանիզմի շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանի հետ համատեղ աշխատող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին և անկախ փորձագետներին: Այս նոր լուծումը կարևոր է հատկապես մեզ դիմողների վստահության ամրապնդման առումով:

Դրանից բացի, Քրեական օրենսգրքի 332.1-րդ հոդվածում սահմանվեց առանձին հանցակազմ, որը քրեական պատասխանատվություն է նախատեսում Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը, այդ թվում՝ նրա գործունեությանը ցանկացած ձևով միջամտելու, իսկ 2017 թվականից սկսած՝ նաև Մարդու իրավունքների պաշտպանի՝ օրենքով սահմանված լիազորությունների իրականացման հետ կապված՝ նրա կամ նրա որոշմամբ հանդես եկող իրավասու անձի մուտքը ցանկացած վայր չթույլատրելու համար:

[2] Կանխարգելման մեխանիզմի գործունեության մասին մանրամասն տեղեկություններ ներկայացված են 2017 թվականի համապատասխան տարեկան զեկույցում:

Սահմանադրությունը և դրա հիման վրա ընդունված սահմանադրական օրենքն առաջին անգամ սահմանեցին Պաշտպանի ֆինանսական անկախության լուրջ երաշխիքներ:

Նախ, Սահմանադրության 193-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Պետությունն ապահովում է Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության պատշաճ ֆինանսավորումը: Հատուկ պետք է նշել, որ Պաշտպանի հաստատությունը Սահմանադրությունում միակն է, որի համար ամրագրված է նման պահանջ:

Սահմանադրական օրենքը դրա հիման վրա արդեն ամրագրեց, որ Պաշտպանի և նրա աշխատակազմի առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը (նախահաշիվը) ընդգրկվում է պետական բյուջեի նախագծում, իսկ առարկության դեպքում պետական բյուջեի նախագծի հետ միասին ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով: Կառավարությունն Ազգային ժողով և Պաշտպանին է ներկայացնում բյուջետային ֆինանսավորման վերաբերյալ առարկության հիմնավորումը:

Դրանից բացի, յուրաքանչյուր տարի Պաշտպանի և նրա աշխատակազմի, ինչպես նաև Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի ֆինանսավորման համար պետական *բյուջեով նախատեսված հատկացման չափը չի կարող պակաս լինել նախորդ տարվա պետական բյուջեով նախատեսված հատկացման չափից:*

Օրենքում առկա է նաև Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության հատուկ ֆինանսավորման պահանջ: Կանխարգելման մեխանիզմի անկախ փորձագետների վարձատրությունը, ի տարբերություն նախկինի, իրականացվում է պետական բյուջեի միջոցների հաշվին՝ այդ նպատակով Պաշտպանի աշխատակազմին հատկացված ֆինանսական միջոցներից:

Չափազանց կարևոր է Մարդու իրավունքների պաշտպանի համագործակցությունը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև համատեղ աշխատանքը քաղաքացիական հասարակության հետ: Համատեղ ջանքերի արդյունքում դա նպաստում է քաղաքացիների իրավունքների վերականգնմանը: Իրավասու մարմինների հետ ձևավորվել է գործնական սերտ համագործակցության պրակտիկա, որը ենթադրում է առօրյա աշխատանքում տեղեկատվության օպերատիվ փոխանակման հնարավորություն: Գրեթե բոլոր մարմիններում առանձնացված են աշխատանքային խմբեր կամ պատասխանատու մասնագետներ, որոնք Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների հետ պարբերաբար իրականացնում են իրավունքների իրացման ապահովմանն ուղղված աշխատանքային քննարկումներ:

Առանցքային է Մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքը Ազգային ժողովի հետ: Այստեղ սերտ համատեղ աշխատանք է տարվում թե՛ խորհրդարանական հանձնաժողովների (խորհրդարանական լսումներին, առանձին նիստերին մասնակցությոն և այլն) հետ, թե՛ պատգամավորների հետ անհատական համագործակցության մակարդակում: Աշխատանքի այսպիսի մոտեցումը Պաշտպանի հաստատության զարգացման համար ունի կարևոր նշանակություն: Ընդ որում, նոր պրակտիկա է խորհրդարանում Պաշտպանի ներկայացուցչի գործունեությունը, ով աշխատում է խորհրդարանի աշխատակազմի ու հանձնաժողովների փորձագետների հետ: Սա նպատակ ունի ուժեղացնելու երկու հասատատությունների ինստիտուցիոնալ կապերը:

Նույն սկզբունքով, առանցքային է Սահմանադրական դատարանի հետ աշխատանքը: Այստեղ գործունեությունն իրականացվում է Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելով, ինչպես նաև մարդու իրավունքներին կամ ազատություններին վերաբերող մյուս գործերով Սահմանադրական դատարան օժանդակ դիրքորոշումներ *(amicus curiae)* ներկայացնելով: Սահմանադրական դատարանում նույնպես գործում է Պաշտպանի ներկայացուցչի ինստիտուտը: Այս ամենը հնարավոր եղավ իրացնել Սահմանադրական դատարանի հետ բարձր որակի համագործակցության շնորհիվ:

Որպես աշխատանքի նոր ուղղություն՝ կարևոր է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ համագործակցությունը: Եվրոպական դատարանի ձևավորած իրավական չափանիշները երկրի իրավական համակարգի զարգացման համար ունեն անկյունաքարային նշանակություն: Հետևաբար, Մարդու իրավունքների պաշտպանի առաջնահերթ խնդիրներից է օրենքով իրեն ընձեռած իրավական ողջ գործիքակազմի օգտագործմամբ նպաստել այդ չափանիշների ներդրմանը երկրում:

Ակտիվ աշխատանք է սկսվել նաև Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի հետ՝ կապված Եվրոպական դատարանի վճիռների կատարման գործընթացին մասնակցության հետ:

Մշտական կապ է հաստատված ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի, Միավորված ազգերի Զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի և այլ կառույցների հետ:

ԳԼՈՒԽ 2. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Կարևորելով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության թափանցիկությունն ու հրապարակայնությունը՝ 2017 թվականին նախևառաւ մեծածավալ աշխատանքներ են իրականացվել լրատվամիջոցների հետ համագործակցությունը զարգացնելու ուղղությամբ:

Նախ, 2017 թվականին Պաշտպանի աշխատակազմում ստեղծվեց Հանրային կապերի բաժինը, որը կոչված է ապահովելու Պաշտպանի գործունեության հրապարակայնությունը զանգվածային լրատվության միջոցներով: Շարունակական կատարելագործման է ենթարկվում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական «www.ombuds.am» կայքը, որի հիմնական նպատակն է հանրության շրջանում Մարդու իրավունքների պաշտպանի դերի և գործունեության վերաբերյալ իրազեկության բարձրացումը, ինչպես նաև տեղեկատվության առավել թափանցիկ ու մատչելի ներկայացումը: Այն պարունակում է տվյալներ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կառուցվածքի, ստորաբաժանումների գործառույթների և կատարած աշխատանքների, ինչպես նաև տարեկան հաղորդումների և հատուկ զեկույցների վերաբերյալ: Կայքում հրապարակվում են նաև Պաշտպանի գործունեության վերաբերյալ նորություններն ու պաշտոնական հաղորդագրությունները: 2017 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի և «Կասպերսկի լաբորատորիա» ընկերության համագործակցությամբ գործարկվել է երեխաների իրավունքների պաշտպանությանը նվիրված կայք՝ «children.ombuds.am»: Կայքի հիմնական նպատակն է երեխաների իրավունքների և դրանց պաշտպանության իրավական հնարավորությունների վերաբերյալ իրազեկվածության բարձրացումը:

Զանգվածային լրատվության միջոցների հետ սերտ աշխատանքի շրջանակներում ներդրվել է պրակտիկա, որի հիման վրա առանձին ուղղություններով լրագրողներ մասնակցում են Մարդու իրավունքների պաշտպանի համակարգմամբ կամ աջակցությամբ կազմակերպվող դասընթացների: Դրանից բացի, խորացված վերլուծություններ են իրականացվել՝ կապված լրագրողական աշխատանքի առանձին ուղղությունների ու այդ առնչությամբ պետական մարմինների պարտականությունների հետ (այս մասին մանրամասն խոսվում է սույն հաղորդման հետագա շարադրանքում):

Մարդու իրավունքների պաշտպանի՝ իբրև մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատության առաքելությունն է նաև սերտ աշխատանքը քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ: Պաշտպանի գործունեության հիմնարար ուղղություն է հասարակական կազմակերպությունների աշխատանքի խթանումը, պետական մարմիններում նրանց գործունեությունը տեսանելի դարձնելը: Կարևորելով աշխատանքի այս առանձնահատկությունը՝ 2017 թվականին լայնածավալ աշխատանքներ են տարվել հասարակական կազմակերպությունների հետ ինչպես կանանց, հաշմանդամություն ունեցող անձանց, երեխաների պաշտպանության,

խոշտանգումների կանխարգելման, զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության, այնպես էլ այլ ոլորտներում[3]:

Գործունեության նոր ուղղություն է Պաշտպանի և նրա աշխատակազմի այցերը մարզեր ու հատկապես՝ գյուղեր: 2017 թվականի ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվել սահմանամերձ գյուղերին: Այս այցերի ընթացքում հնարավորություն է ստեղծվում անմիջականորեն ծանոթանալ գյուղերի բնակիչների խնդիրներին, միջոցներ ձեռնարկել դրանց լուծմանը նպաստելու ուղղությամբ: Ընդ որում, այցերի ժամանակացույցը ձևավորելիս հաշվի են առնվում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվող բողոքներն ու դրանցով բարձրացվող հարցերը: Այս պրակտիկան ոչ միայն ապահովում է Մարդու իրավունքների պաշտպանի հասանելիությունը, այլ նաև նպաստում է Պաշտպանի հաստատության հանդեպ հանրային վստահության ամրապնդմանը: Այս այցերին, կախված ուշադրության առարկա հարցերի բնույթից, մասնակցում են նաև Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր խորհուրդների անդամներ կամ այլ հասարակական կազմակերպություններ (օրինակ՝ «Շիրակ» հասարակական կազմակերպությունը Գյումրիում):

2017 թվականի ընթացքում տեղի են ունեցել Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր խոշտանգումների կանխարգելման խորհրդատվական խորհրդի նիստեր, այդ թվում՝ ընդլայնված, որոնց մասնակցել են ոլորտի հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, անկախ մասնագետներ ու պաշտոնատար անձինք: Նիստերի ընթացքում քննարկվել են ազատությունից զրկված անձանց առողջության պահպանման իրավունքին, ձերբակալվածների և կալանավորվածների պահելու վայրերում խոշտանգման և վատ վերաբերմունքի մյուս ձևերի հետ կապված բժշկական հետազոտությունների արձանագրության ձևերին և լրացման կարգին, նշված անձանց կրթության իրավունքին առնչվող և այլ խնդիրներ:

2017 թվականին տեղի են ունեցել նաև Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր զինծառայողների իրավունքների հարցերով փորձագիտական խորհրդի նիստեր, որոնց ընթացքում քննարկվել են զինապարտների առողջական վիճակի հետազոտմանը, զինվորական հաշվառման գործընթացում նախազորակոչիկների, ինչպես նաև կարգապահական վարույթի ընթացքում զինծառայողների իրավունքներին առնչվող հարցեր և այլն: Նիստերին մասնակցել են թե՛ խորհրդի անդամները, թե՛ Պաշտպանության նախարարության, թե՛ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության ուղղությունների զարգացմանը զուգահեռ քննարկվում են նաև այլ ուղղություններով խորհուրդներ ստեղծելու հարցը:

Խորհուրդների ձևաչափերից բացի, ակտիվորեն գործադրվել են համատեղ աշխատանքի այլ մեխանիզմներ ևս: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է համատեղ քննարկումներին, վերապատրաստման դասընթացներին մասնակցությանը, հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերին մասնակցությանը, Պաշտպանի աշխատակազմի համակարգմամբ իրականացվող ծրագրերին նրանց ներգրավմանը և այլն:

[3] Մանրամասն տե՛ս «Կանանց իրավունքներ», «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներ» և «Երեխաների իրավունքներ», «Մարդու իրավունքները զինված ուժերում» բաժիններում:

ԳԼՈՒԽ 3. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՆՁԻՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կառուցվածքը

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի ընդունումից և Պաշտպանի գործունեության ուղղությունների հստակեցումից հետո՝ 2017 թվականին սահմանվեց Պաշտպանի աշխատակազմի նոր կառուցվածքը:

Ձևավորվեց երկու դեպարտամենտ, ինչպես նաև այլ ստորաբաժանումներ՝

1) Քաղաքացիական, սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների պաշտպանության դեպարտամենտ՝

- Սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների պաշտպանության վարչություն,
- Երեխաների իրավունքների պաշտպանության բաժին,
- Հանրային ծառայության կազմակերպությունների ոլորտում իրավունքների պաշտպանության բաժին[4]

2) Քրեական արդարադատության ոլորտում և զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության դեպարտամենտ՝

- Քրեական դատավարության ոլորտում և ազատությունից զրկելու վայրերում իրավունքների պաշտպանության վարչության[5],
- Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության բաժին:

Որպես առանձին կառուցվածքային ստորաբաժանումներ՝ ստեղծվեցին նաև՝

- Խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման վարչությունը,
- Մարդու իրավունքների հետազոտական և կրթական կենտրոնը[6],
- Միջազգային համագործակցության վարչությունը,
- Հանրային կապերի բաժինը:

2017 թվականին որպես առանձնացված ստորաբաժանում՝ շարունակել են գործել մարզային ստորաբաժանումներ՝ Շիրակի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերում:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը 2017 թվականին ստացված դիմումների ու բողոքների թիվը աճել է շուրջ 1000-ով և կազմել 6417 դիմումներ: 2017 թվականին զգալիորեն աճել է նաև կարծիքի ներկայացված իրավական ակտերի նախագծերի թիվը: Այսպես, Սահմանադրության բարեփոխումներից հետո մշակվել և 2017 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ են ներկայացվել 144 նախագիծ, որոնցից 75-ով ներկայացվել են 530 նկատառում և առաջարկ:

Կրկնակիից ավելի անգամ աճել է դրական լուծված գործերի ընդհանուր թիվը (մանրամասն վիճակագրությունը ներկայացված է հավելվածի տեսքով):

Պաշտպանի գործունեությունն առանձին ոլորտներում

[4] 2018 թվականի մարտի 1-ից՝ Գործարարության ոլորտում իրավունքների պաշտպանության բաժին:
[5] 2018 թվականի մարտի 1-ից՝ Քրեական արդարադատության ոլորտում իրավունքների պաշտպանության վարչություն:
[6] 2018 թվականի մարտի 1-ից՝ Հետազոտական և կրթական կենտրոն

Նորմատիվ իրավական ակտերի և դրանց կիրառության պրակտիկայի կատարելագործմանը նպաստելը

Բազմաթիվ են եղել կարևոր նշանակություն ունեցող Սահմանադրական օրենքների, օրենսգրքերի և նոր կարգավորման առարկա ունեցող կամ ամբողջովին փոփոխվող օրենքների նախագծերը: Որպես օրինակ՝ կարելի է առանձնացնել «Տեղեկատվության ազատության մասին», ՀՀ օրենքի, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի, «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի, «Սահմանադրական դատարանի մասին», «Դատախազության մասին» ՀՀ օրենքների, «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծերը և այլն:

2017 թվականին ՀՀ սահմանադրական դատարան հասցեագրված դիմումները մանրամասն ներկայացված են սույն հաղորդման համապատասխան բաժիններում:

Հաշվետու տարին առհասարակ արժևորվել է ՀՀ սահմանադրական դատարանի հետ սերտ համագործակցությամբ: Դրա մասին է վկայում նաև Սահմանադրական դատարանում Մարդու իրավունքների մշտական ներկայացուցչի ինստիտուտի ներդրումը և նրա աշխատանքի հետագա կատարելագործումը: Մարդու իրավունքների ոլորտում համակարգային հարցերի լուծմանը նպաստելու առումով սկզբունքային էր Սահմանադրական դատարանի կողմից քննվող գործերով Մարդու իրավունքների պաշտպանի կողմից հատուկ դիրքորոշում ներկայացնելու պրակտիկայի ներդրումը:

Աշխատանքի այս նոր սկզբունքների հիման վրա 2017 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի և Սահմանադրական դատարանի աշխատակազմերն իրականացրել են ՀՀ սահմանադրական դատարանի 2015-2016 թվականների որոշումների կատարման վիճակի համատեղ ուսումնասիրություն: Այդ ուսումնասիրությունն իրականացվել է՝ նաև հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանը նպաստելու Մարդու իրավունքների պաշտպանի սահմանադրական նոր գործառույթը և օրենսդրական փոփոխությունների առաջարկներ ներկայացնելու՝ օրենքով նախատեսված հնարավորությունը: Ուսումնասիրության արդյունքում վեր են հանվել Սահմանադրական դատարանի որոշումներ, որոնցում ներկայացված են մարդու իրավունքների ոլորտում օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտության վերաբերյալ իրավական պահանջներ, որոնք, սակայն կատարված չեն:

Ըստ այդմ, Մարդու իրավունքների պաշտպանի և Սահմանադրական դատարանի աշխատակազմերը համատեղ մշակել են մի շարք հիմնարար օրենքներում փոփոխություններ և լրացումներ առաջարկող նախագծեր: Արդյունքում, ակնկալվում է, որ նախագծերի ընդունմամբ կընդլայնվի «նոր երևան եկած» հանգամանքների հիմքով վարչական դատարանի ուժի մեջ մտած ակտը վիճարկելու հնարավորությունը, հնարավոր կլինի բողոքարկել գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշումը, նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի դեմ բերված բողոքները կքննվեն վերաքննիչ դատարանի կողմից, կհստակեցվի վճռաբեկ բողոքի էլեկտրոնային տարբերակը ներկայացնելու ձևը, կվերացվի վճռաբեկ բողոքին Վճռաբեկ դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտերը կցելու պահանջը,

դատարանի որոշման բողոքարկման ժամկետի հաշվարկը կսկսվի դատական ակտը անձի համար հասանելի դարձնելու պահից, ինչը հնարավորություն կտա օգտվել բողոքարկման համար օրենքով տրված ամբողջ ժամկետից, անձի գործունակության հարցի դատական քննությունը կիրականացվի այդ անձի մասնակցությամբ, անգործունակ ճանաչված անձինք հնարավորություն կունենան իրենց գործունակության վերականգնման հարցով անձամբ դիմել դատարան, գրավի բռնագանձումն արտադատական կարգով կասեցնելու նպատակով գրավատուի կողմից ապահովում կտրամադրվի միայն գրավառուի հնարավոր վնասների չափով:

Պաշտպանը կարող է ներկայացուցիչ ունենալ նաև Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում: Սահմանադրական օրենքի այս կարգավորումն առաջնահերթ նպատակ ունի ամրապնդել խորհրդարանի և Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուցիոնալ կապերը, խթանել և զարգացնել առկա համագործակցությունը՝ հատկապես հաշվի առնելով խորհրդարանական կառավարման պայմաններում Ազգային ժողովի կարևորագույն դերակատարությունը, այդ թվում՝ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում:

Ուստի, Ազգային ժողովի օրինաստեղծ գործունեության ընթացքում երկու ինստիտուտների համագործակցությունը կարող է արդյունավետ իրականացվել թե՛ Ազգային ժողովի կողմից քննարկվող օրենսդրական նախագծերի վերաբերյալ վերլուծություններ և առաջարկություններ ներկայացնելու, թե՛ նոր օրենսդրական նախագծեր մշակելու և դրանք համատեղ քննարկման առարկա դարձնելու միջոցով: Ինչպես արդեն նշվել է, Ազգային ժողովում Պաշտպանի ներկայացուցիչն համատեղ աշխատանքներ է սկսել իրականացնել խորհրդարանի աշխատակազմի ներկայացուցիչների, ինչպես նաև ԱԺ մշտական հանձնաժողովների փորձագետների հետ:

2017 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում գործադրվել է նոր պրակտիկա՝ մարդու իրավունքներին առնչվող համակարգային խնդիրների լուծման ուղղությամբ մշակել գործող ակտերում փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտերի նախագծերի մշակման պրակտիկա՝ դրանք հետագայում իրավասու մարմինների քննարկմանը ներկայացնելու նպատակով:

1. Այսպես, «Գովազդի մասին», «Վիճակախաղերի մասին», «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքների և հարակից այլ օրենքների, նաև դրանց գործադրման պրակտիկայի ուսումնասիրման արդյունքում պարզվել է, որ բացակայում է ինտերնետ շահումով խաղերի և վիճակախաղերի (տոտալիզատոր) գովազդի մանրամասն իրավական կարգավորումը: Մինչդեռ, այդ իրավական բացը կարող է դառնալ անձանց, այդ թվում՝ անչափահասների իրավունքների խախտման պատճառ: Ըստ այդմ, Պաշտպանի աշխատակազմի կողմից մշակվել է նախագիծ, որով առաջարկվում է վիճակախաղի և ինտերնետ շահումով խաղի գովազդի ժամանակ արգելել որևէ կերպ դիմել անչափահասներին, մարդկանց կերպարների տեսաձայնային կամ այլ ձևով օգտագործելը, տպավորություն ստեղծել, թե խաղին մասնակցելն ապահովում է պարբերաբար եկամուտ (շահույթ) ստանալու հնարավորությունը կամ աշխատանքի այլընտրանք է, տպավորություն ստեղծել, թե եկամուտ (շահույթ) ստանալը երաշխավորված է, ներշնչել, որ խաղի միջոցով հնարավոր է հասնել հասարակական, մասնագիտական, սպորտային

կամ անձնական հաջողության, քննադատել վիճակախաղին կամ ինտերնետ շահումով խաղին չմասնակցելը: Առաջարկվել է նաև, որպեսզի վիճակախաղի և ինտերնետ շահումով խաղի գովազդը պետք է պարունակի ոչ սթափ կամ հոգեճնշող վիճակում խաղալու անթույլատրելիության վերաբերյալ նախազգուշացնող տեղեկատվություն:

2. Զինծառայողների իրավունքներին առնչվող բողոքների ուսումնասիրության հիման վրա մշակվել և շրջանառության է ներկայացվել օրենսդրական նախագծերի փաթեթ, որը վերաբերում է զինվորական ծառայության ոլորտում զինծառայողների իրավունքների երաշխավորմանը: Նախագծերի ընդունմամբ կբացառվի նախկինում հանցագործություն կատարած լինելու փաստը, որպես զինծառայողի կարգապահական պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք դիտարկելը, հստակ կամրագրվի կարգապահական տույժի մասին հրամանը զինծառայողին տրամադրելու կամ հայտարարելու պարտադիր պահանջ: Կսահմանվի այն որոշումների տեսակները, որոնք կարող են ընդունվել վերադաս հրամանատարի կողմից՝ կարգապահական տույժ տալու մասին որոշումը զինծառայողի կողմից բողոքարկելու արդյունքում: Առաջարկվում է նաև բացառել զինծառայողի նկատմամբ «օրվա արտահերթ վերակարգի» կիրառումը՝ որպես կարգապահական տույժ: Առաջարկվում է նաև օրենսդրորեն ամրագրել, որ ծառայողական քննությանը մասնակցելու պահից զինծառայողն իրավունք ունի գրավոր ծանոթանալ իր իրավունքներին և պարտականություններին, կհստակեցվի զինծառայողների նկատմամբ ծառայողական քննությունը դադարեցնելու, կասեցնելու, քննությունը վերսկսելու հիմքերը և ընթացակարգը և այլն:

3. Օրենսդրական նախագծերի մեկ այլ փաթեթ ուղղված է եղել բացառելու այն անընդունելի իրավակիրառ պրակտիկան, երբ քրեական գործի քննության ընթացքում առանց հիմնավոր պատճառաբանության որոշում է ընդունվում ընտանիքի անդամների հետ կալանավորված անձի տեսակցությունն արգելելու մասին: Ինքնին քրեական գործի քննության փաստը չի կարող հանդիսանալ ընտանիքների անդամների կամ մերձավոր ազգականների հետ տեսակցության իրավունքի սահմանափակման հիմք: Նման հաղորդակցման ցանկացած սահմանափակում պետք է ունենա հատուկ և անհատականացված հիմնավորում: Մասնավորապես, օրենսդրական նախագծերով առաջարկվել է՝

-տեսակցելու իրավունք ունեցող անձանց շրջանակից առանձնացնել կալանավորված անձի ընտանիքների անդամներին կամ մերձավոր ազգականներին ու նրանց հետ տեսակցելու իրավունքը սահմանափակելու հնարավորության համար նախատեսել հստակ հիմքեր և ընթացակարգ.

- նախատեսել, որ այս իրավունքը սահմանափակող որոշումները պետք է լինեն պատճառաբանված: Դրանք նաև պետք է անմիջապես հանձնվեն կալանավորվածին ու նրա փաստաբանին, որպեսզի լիարժեք ապահովվի բողոքարկման իրավական հնարավորությունը.

- նախատեսել, որ ընտանիքների անդամների կամ մերձավոր ազգականների հետ տեսակցության իրավունքը սահմանափակող որոշումը պետք է դառնա պարբերական վերանայման առարկա՝ անկախ կալանավորված անձի ցանկությունից կամ վերաբերմունքից.

- նախատեսել, որ գործը դատական քննության նշանակելու որոշման մեջ նույնպես պետք է հատուկ անդրադարձ կատարվի հիշյալ որոշմանը և այլն:

4. Արտաքին աշխարհի հետ կապի վերաբերյալ կատարված ուսումնասիրությունների արդյունքում վեր են հանվել ազատությունից զրկված անձանց՝ արտաքին աշխարհի հետ կապի պահպանման կապակցությամբ նաև օրենսդրական խնդիրներ: Քննարկման առարկա են դարձել ազատությունից զրկված անձանց կարճատև մեկնումների տրամադրման հետ կապված խնդիրները և կալանավորված անձանց համար երկարատև տեսակցություն տրամադրելու հնարավորության բացակայությունը: Խնդիրները պայմանավորված են օրենսդրական կարգավորումներում անձի անհատական ռիսկայնությունը հաշվի չառնելու, կարճատև մեկնումը միայն անձի կատարած հանցագործության ծանրության աստիճանի հետ կապելու և այլ հանգամանքներով:

5. Կալանավորված անձանց համար օրենսդրությամբ նախատեսված չէ երկարատև տեսակցություն ունենալու հնարավորություն:

Նշված և արձանագրված այլ խնդիրներին օրենսդրական լուծում տալու նպատակով Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում մշակված օրենսդրական նախագծերի փաթեթով առաջարկվում է՝

- ազատազրկման դատապարտված և կալանավորված անձանց կարճատև մեկնումներ տրամադրելու հիմքում դնել ոչ թե անձի կատարած հանցագործության ծանրության աստիճանը, այլ հաշվի առնել նրա անհատական վարքագիծը և ռիսկայնությունը.
- կալանավորված անձանց համար նախատեսել երկարատև տեսակցության հնարավորություն.
- կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխա ունեցող դատապարտյալի համար նախատեսել կարճաժամկետ մեկնում տրամադրելու հնարավորություն՝ երեխային մանկատանը կամ ազգականի մոտ տեղավորելու նպատակով և այլն:

6. Մշտադիտարկման և անհատական բողոքների քննարկման արդյունքում վեր են հանվել խնդիրներ՝ կապված ազատությունից զրկման վայրերում փաստաբանի աշխատանքը խոչընդոտելու, այդ վայրեր փաստաբանների անարգել մուտքի հետ:

Ըստ այդմ, Պաշտպանի աշխատակազմում մշակվել է օրենսդրական նախագիծ, որով առաջարկվում է՝

- ՀՀ քրեական օրենսգրքի 332.3-րդ հոդվածի 1-ին մասը ենթարկել այնպիսի փոփոխության, որով այս հանցակազմի սուբյեկտ, պաշտոնատար անձից բացի, կհամարվի ցանկացած այլ այնպիսի անձ, որը խոչընդոտել է փաստաբանի օրինական գործունեությունը՝ առանց սուբյեկտների շրջանակի սահմանափակման: Ըստ այդմ, նախագիծը լրացնել առանձին մասով:
- ՀՀ քրեական օրենսգրքի 3323-րդ հոդվածով պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնական դիրքն օգտագործելով փաստաբանի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու համար նախատեսված պատժաչափը խստացնել, ինչպես նաև նախատեսել պատիժ ազատազրկման ձևով:
- Քրեական օրենսգրքի հոդվածում նոր մասով պատասխանատվություն նախատեսել փաստաբանի գործունեությունը խոչընդոտելու համար, եթե դա դրսևորվել է

իր վստահորդին տեսակցելու նպատակով՝ ազատությունից զրկման ցանկացած վայր փաստաբանի մուտքն ապօրինի չթույլատրելով:

Վերոնշյալ բոլոր նախագծերը կարծիքի են ներկայացվել համապատասխան պետական մարմիններին ու իրավապաշտպան կազմակերպություններին և գտնվում են վերջնական ամփոփման փուլում:

Մարդու իրավունքների կրթություն և վերապատրաստումներ

Թե՛ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների, թե՛ գործընկեր կազմակերպությունների, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների կարողությունների զարգացումը մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում մշտապես գտնվում է Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության կենտրոնում: Սահմանադրական օրենքով ամրագրված է Պաշտպանի աշխատակազմի, ինչպես նաև շահառու մարմինների և կազմակերպությունների՝ մարդու իրավունքներին և ազատություններին առնչվող հարցերով վերապատրաստումներ իրականացնելու Պաշտպանի լիազորությունները:

Ըստ այդմ, 2017 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի և գործընկեր տեղական ու միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության արդյունքում կազմակերպվել են մեծ թվով դասընթացներ՝ դրանց միաժամանակ ներգրավելով թե՛ պետական մարմինների, թե՛ հասարակական կազմակերպությունների, առանձին դեպքերում նաև լրատվամիջոցների ներկայացուցիչների: Հաշետու տարում այդ միջոցառումների թիվը էականորեն աճել է:

Այսպես, 2017 թվականին դասընթացներ են կազմակերպվել Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչների համար Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում: ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հետ համագործակցության արդյունքում իրականացված թվով չորս դասընթացն ուղղված է եղել երեխաների իրավունքների պաշտպանության վիճակի մշտադիտարկմանը, երեխաների հետ հարցազրույցների իրականացման կարողությունների զարգացմանը, երեխաների իրավունքների միջազգային չափանիշների առավել հանգամանալից ներկայացմանը:

2017 թվականին Եվրոպայի խորհրդի հետ համագործակցության արդյունքում կազմակերպվել են կարողությունների զարգացման դասընթացներ «Մարդու իրավունքները զինված ուժերում» թեմայով: Իրականացված երկու դասընթացի ընթացքում ներկայացվել է զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության միջազգային իրավական կարգավորումները և այս ոլորտում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Վճռաբեկ դատարանի նախադեպային ակտերը:

2017 թվականի ընթացքում մի շարք դասընթացներ են իրականացվել նաև խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման ոլորտում առկա միջազգային չափանիշների վերաբերյալ: Այդ դասընթացներին մասնակցել են ինչպես Պաշտպանի աշխատակազմի կանխարգելման խորհրդատվական խորհրդի, ինչպես նաև Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների դիտորդական խմբի անդամներ:

Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչները, ինչպես նաև այլ շահառուներ 2017 թվականին մասնակցել են նաև արտասահմանյան երկրներում

կազմակերպված վերապատրաստման դասընթացների: Օրինակ՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և Հայաստանում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանատան համագործակցության արդյունքում դեկտեմբերի 3-9-ը Բեռլին քաղաքում Պաշտպանի աշխատակազմի և լրագրողների համար կազմակերպվել է «Մարդու իրավունքները և ընտանեկան բռնությունը» թեմայով ուսուցողական այց: Այցի ընթացքում լրագրողները հանդիպումներ են ունեցել ընտանիքում բռնության կանխարգելման ուղղությամբ պետական ֆինանսավորմամբ աշխատող կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, եղել ընտանեկան հարցերով մասնագիտացված դատարանում, հանդիպել ընդդեմ բռնության հանդես եկող հասարակական կազմակերպությունների ղեկավարների հետ: Անդրադարձ է կատարվել նաև երեխաների իրավունքներին, ընդգծվել է երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի կարևորությունը:

Մեկ այլ դասընթաց կազմակերպվել է հանրակրթական հաստատություններում ջրի և սանիտարական պայմաններին ներկայացվող պահանջների վերաբերյալ: Շվեյցարիայի Ժնև քաղաքում վերապատրաստման հատուկ դասընթաց է անցկացվել Հայաստանի և Վրաստանի Մարդու իրավունքների ազգային հաստատության ներկայացուցիչների համար:

Կարևոր է, որ մի շարք դեպքերում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներն իրենք են իրականացրել դասընթացներ այլ գերատեսչությունների ներկայացուցիչների համար: Այսպես, աշխատակազմի ներկայացուցիչներն անցկացրել են դասընթացներ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայողների համար: Դրանք իրականացվել են Եվրոպայի խորհրդի, Եվրոպական միության, ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարության համագործակցությամբ:

Դասընթացների ընթացքում հիմնականում քննարկվել են ազատությունից զրկված անձանց և քրեակատարողական ծառայողների իրավունքներին ու պարտականություններին առնչվող հարցեր: Քննարկումների ընթացքում անդրադարձ է կատարվել այնպիսի թեմաներին, ինչպիսիք են ազատությունից զրկված անձանց պատշաճ բժշկական սպասարկումը, խոցելի խմբերի նկատմամբ վարվեցողության առանձնահատկությունները, խոշտանգումների և վատ վերաբերմունքի արգելքը, բժշկական անձնակազմի կողմից մարմնական վնասվածքների պատշաճ արձանագրումը և փաստաթղթավորումը և այլն:

Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչը 2017 թվականին հրավիրված դասախոսություններ է ներկայացրել ՀՀ արդարադատության ակադեմիայում պաշտոնավարող դատավորների համար՝ կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության թեմաներով: Դասախոսության ժամանակ ներկայացվել են ոլորտի միջազգային կարգավորումները, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռները, ինչպես նաև ՀՀ-ում գործող իրավական դաշտը և դրանում նախատեսվող փոփոխությունները:

Ավելին, Պաշտպանի ներկայացուցիչը, մասնակցելով Եվրոպայի խորհրդի կողմից կազմակերպված դասընթացավարների դասընթացին, ստացել է ԵԽ «HELP» հեռահար ուսուցման դասընթացավարի որակավորում և ըստ այդմ՝ դասավանդել է «Կանանց

նկատմամբ բռնություն և ընտանեկան բռնություն» հեռահար ուսուցման դասընթացը քննիչների, դատախազների և փաստաբանների համար:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները Արդարադատության ակադեմիայում պարբերաբար իրականացրել են նաև գործող քննիչների վերապատրաստում «Խոցելի տուժողների/վկաների և կասկածյալների մասնակցությամբ իրականացվող քննությունը», ինչպես նաև «Կյանքի իրավունքին, խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի արգելքին առնչվող գործերի քննությունը» թեմաներով:

Լիովին նոր պրակտիկա էր Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ, AGBU) աջակցությամբ Հայաստանում ամերիկյան համալսարանի մասնագետների կողմից Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների համար անգլերեն լեզվի դասընթացների կազմակերպումը: Այս ծրագիրն իրական արդյունքներ ապահովելու հարցում ունեցավ անգնահատելի նշանակություն միջազգային կառույցների աշխատանքներին ու այլ երկրների գործընկերների հետ հարաբերությունում Պաշտպանի հաստատության ակտիվ ներգրավվածության տեսանկյունից: Ծրագրի շնորհիվ վերապատրաստում է անցել աշխատակազմի ավելի քան 40 աշխատակից:

Միջազգային համագործակցություն

Միջազգային համագործակցության ոլորտում հատուկ նշանակություն ունեն ծրագրերը միջազգային կազմակերպությունների հետ:

2017 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմն իրականացրել է փորձի փոխանակման ծրագրեր տարբեր երկրների Մարդու իրավունքների ազգային հաստատությունների հետ: Մասնավորապես, այդ նպատակով Հայաստան են ժամանել պատվիրակություններ Մարոկկոյից, Թունիսից, Բոսնիա և Հերցեգովինայից, Վրաստանից, Մոնտենեգրոյից, Լատվիայից, Լիտվայից և այլն:

- *Մարոկկոյի Թագավորության Մարդու իրավունքների ազգային կենտրոն*

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի՝ խոշտանգումների կանխարգելման ոլորտի հայաստանյան փորձն ուսումնասիրելու նպատակով 2017 թվականին երկշաբաթյա ժամկետով Հայաստան են ժամանել Մարոկկոյի Թագավորության Մարդու իրավունքների ազգային կենտրոնի ներկայացուցիչները: Մարոկկոյի ներկայացուցիչները Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների հետ իրականացրել են մոնիթորինգային այցեր ձերբակալված և կալանավորված անձանց, դատապարտյալների պահման վայրեր, հոգեբուժարաններ և այլն: Նրանք նաև մասնակցել են միջազգային փորձագետների մասնակցությամբ հատուկ սեմինարի՝ նվիրված հոգեբուժական հաստատություններում իրականացվող մոնիթորինգի առանձնահատկություններին:

- *Թունիսի Խոշտանգումների դեմ պայքարի ազգային մարմին*

Խոշտանգումների կանխարգելման ոլորտում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի փորձն ուսումնասիրելու նպատակով 2017 թվականին երկշաբաթյա ժամկետով Հայաստան են ժամանել Թունիսի Խոշտանգումների դեմ պայքարի ազգային մարմնի նախագահի տեղակալը և գլխավոր քարտուղարը: Նրանք Երևանում մասնակցել են Պաշտպանի աշխատակազմում ընթացող աշխատանքներին, ուսումնասիրել

կանխարգելման ազգային մեխանիզմի գործադրման նոր սկզբունքները, ինչպես նաև այդ սկզբունքների հիման վրա աշխատանքի նոր ուղղությունները:

- *Բոսնիա և Հերցեգովինայի մարդու իրավունքների երեք օմբուդսմանների գլխավորած պատվիրակություն*

Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքին ծանոթանալու նպատակով 2017 թվականին եռօրյա այցով Հայաստան է ժամանել Բոսնիա և Հերցեգովինայի մարդու իրավունքների երեք օմբուդսմանների գլխավորած պատվիրակությունը: Այցի ընթացքում բոսնիացի գործընկերները ծանոթացել են Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կառուցվածքին, լիազորություններին, քաղաքացիների հետ տարվող աշխատանքներին, կատարել են այցելություններ ազատությունից զրկման վայրեր, մասնավորապես՝ քրեակատարողական հիմնարկներ և ձերբակալված անձանց պահելու վայրեր՝ այդ վայրերում Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեությանը ծանոթանալու նպատակով:

2017 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի համագործակցության արդյունքում Երևանում մեկնարկել է «Ընտանիքում ապրելու երեխայի իրավունքը» թեմայով միջազգային երկօրյա խորհրդաժողովը: Խորհրդաժողովին մասնակցել են տեղական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի ավելի քան տասը երկրի մարդու և հատկապես՝ երեխայի իրավունքների ոլորտի պատասխանատուներ, ներկա և նախկին օմբուդսմաններ, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ:

2017 թվականին ներկայացվել է ««Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայով սահմանված չափանիշների տեսանկյունից ՀՀ քրեական օրենսդրության վերլուծություն» զեկույցը: Այն կազմվել է միջազգային չափանիշների հիման վրա: Զեկույցը մշակելիս հանդիպումներ են կազմակերպվել դատավորների, դատախազների, ոստիկանության ծառայողների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, ինչպես նաև գիտական ոլորտի աշխատակիցների հետ: Զեկույցը մշակվել է Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող՝ «Կանանց նկատմամբ բռնության կանխարգելման ծրագրի» շրջանակում՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հետ համագործակցության արդյունքում:

2017 թվականին սկսվել է նախադպրոցական ուսումնական, հանրակրթական ուսումնական, ինչպես նաև երեխաների խնամք իրականացնող հաստատություններում ջրի և սանիտարական պայմանների ուսումնասիրման ծրագիրը, որի շրջանակներում նախատեսվում է ուսումնասիրել ՀՀ գործող իրավական դաշտը, կատարել այցելություններ և մշտադիտարկումներ՝ նշյալ հաստատություններում ջրի և սանիտարական պայմանների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով:

2017 թվականի ընթացքում շարունակվել են իրականացվել 2016 թվականից սկիզբ առած ծրագրեր Հայաստանում ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (UNICEF), ՄԱԿ ՓԳՀ-ի հայաստանյան գրասենյակի (UNHCR), Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի հետ և այլն: Դրանք ուղղված են ինչպես Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարողությունների շարունակական զարգացման, այնպես էլ Հայաստանում մարդու

իրավունքների միջազգային չափանիշների առավել արդյունավետ ներդրման ապահովմանը:

2017 թվականի ընթացքում Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի հետ համատեղ շարունակվել է «Մարդու իրավունքների եվրոպական չափանիշների կիրառման ընդլայնումը զինված ուժերում» ծրագիրը, որն ուղղված է ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության առավել արդյունավետ մեխանիզմների ներդրմանը: Այդ ծրագրով նախատեսվում է նաև ակտիվ համագործակցություն հասարակական կազմակերպությունների հետ:

Մարդու իրավունքների պաշտպանն իր գործունեության ընթացքում բողոքներ է ստանում նաև այլ երկրներում բնակվող ՀՀ քաղաքացիներից: Իհարկե, Պաշտանի իրավասությունը չի տարածվում որևէ այլ երկրի մարմնի նկատմամբ, սակայն այդ երկրների գործընկեր կառույցների հետ սերտ համագործակցության շնորհիվ հնարավորություն է ստեղծվել միջոցներ ձեռնարկել բարձրացվող հարցերի լուծման ուղղությամբ: Այդ համագործակցությունն իրականացվում է ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ մակարդակներում: Այսպես, 2017 թվականին Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանը, Ռուսաստանի Դաշնության մարդու իրավունքների հանձնակատարը, Իրանի Իսլամական Հանրապետության վերահսկողության գլխավոր տեսչության նախագահը և Ղրղստանի օմբուդսմանը ստորագրել են հուշագիր Օմբուդսմանների եվրասիական դաշինք ստեղծելու մասին:

2017 թվականին եռակողմ համագործակցության հուշագիր է ստորագրվել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի, ՀՀ կրթության և գիտության նախարարի և «Կասպերսկի լաբորատորիա» բաժնետիրական ընկերության ղեկավարի միջև կրթության ոլորտում տեղեկատվական անվտանգության համագործակցության և համացանցում երեխաների տեղեկատվական անվտանգության մասին:

2017 թվականին Պաշտպանը Բուխարեստում մասնակցել է Եվրոպական օմբուդսմանների ինստիտուտի գլխավոր վեհաժողովին: Գլխավոր վեհաժողովի ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել ղեկավար կազմի խորհրդակցություններ անցկացնել նաև Երևանում: Վեհաժողովի աշխատանքների ընթացքում տեղի է ունեցել Եվրոպական օմբուդսմանների ինստիտուտի նախագահի և գլխավոր քարտուղարի ընտրություն:

<u>Արտահերթ հրապարակային զեկույցներ, իրավական վերլուծություններ և փաստահավաք աշխատանքներ</u>

2017 թվականն արժևորվել է նաև արտահերթ զեկույցներով: Դրանք թույլ են տալիս իրականացնել ոլորտային համակարգային ուսումնասիրություններ և հիմնովին վերհանել առկա խնդիրները: Այդ զեկույցներով ներկայացվել են մի շարք օրենսդրական և գործնական առաջարկներ: Այսպես 2017 *թվականին հրապարակվել է 10 արտահերթ զեկույց և իրավական համապարփակ վերլուծություն:* Դրանից բացի, *ավարտին են մոտեցել և, սահմանված ժամանակացույցին համապատասխան, 2018 թվականի առաջին եռամսյակում հրապարակման ենթակա՝ 2017 թվականին առնչվող ևս 5 արտահերթ զեկույց և իրավական վերլուծություն:* Դրանցից հիմնականներն են.

1. Հրապարակվել է արտահերթ զեկույց Հայաստանում փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ: Այն պատրաստվել է Պաշտպանի աշխատակազմի և Միավորված ազգերի կազմակերպության փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի (ՄԱԿ ՓԳՀ) հայաստանյան գրասենյակի կողմից համատեղ իրականացվող ծրագրի շրջանակում:

2. Հրապարակվել է արտահերթ զեկույց Քրեակատարողական հիմնարկներում ազատությունից զրկված անձանց առողջության պահպանման իրավունքի ապահովման վերաբերյալ: Արտահերթ զեկույցում արձանագրված են խնամքի կարիք ունեցող՝ ազատությունից զրկված անձանց բժշկական օգնության, նրանց պատշաճ խնամքի կազմակերպման, դրա ոչ բավարար լինելու հետ կապված խնդիրներ: Զեկույցում վերլուծված են բժշկական օգնության, խնամքի պայմանների, պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության, քրեակատարողական հիմնարկներում բժշկական տեխնիկայի բավարար հագեցվածության, դեղորայքային ապահովվածության և այլ խնդիրներ:

3. Հրապարակվել է արտահերթ զեկույց Խնամակալության և հոգաբարձության մարմինների ու խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների (ԽՀՄ/ ԽՀՀ) վերաբերյալ: Զեկույցի շրջանակներում ուսումնասիրվել են այդ մարմինների գործունեության արդյունավետությունը, ոլորտի օրենսդրական կարգավորումները, որոնք մանրամասն ներկայացվում են սույն հաղորդման «երեխաների իրավունքներ» բաժնում:

4. Հրապարակվել է անգլերեն և ֆրանսերեն լեզուներով 3 արտահերթ զեկույց Տավուշի մարզի Չինարի, Ոսկեպար, Բաղանիս, Ոսկեվան, Կոթի, Վազաշեն և Բարեկամավան գյուղերում իրականացված փաստահավաք աշխատանքների արդյունքում[7]:

5. Հրապարակել է ««Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայով սահմանված չափանիշների տեսանկյունից ՀՀ քրեական օրենսդրության վերլուծություն» հատուկ զեկույց: Այն քննարկում է կանանց նկատմամբ բռնությունը, ընտանեկան բռնությունը, դրա դեմ պայքարում քրեական օրենսդրության արձագանքի համար անհրաժեշտ իրավական կարգավորումները և իրավակիրառ պրակտիկան: Զեկույցը նպատակ ունի նաև աջակցել «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» ԵԽ-ի կոնվենցիայի վավերացմանը, որը, հաշվի առնելով «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» № 483-Ն որոշումը, ստորագրվել է 2018 թվականի հունվարի 18-ին: Զեկույցը բարձր է գնահատվել միջազգային կազմակերպությունների կողմից և հրապարակվել է նաև ԵԽ կայքում[8]:

6. Հրապարակվել է իրավական վերլուծություն երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության ուղենիշների վերաբերյալ: Հայաստանում երեխաների իրավունքների պաշտպանության

[7] Մանրամասն տվյալներ ներկայացված են սույն հաղորդման «Մարդու իրավունքները զինված ուժերում» բաժնում

[8] Անգլերեն լեզվով հասանելի է հետևյալ հղումով ԵԽ կայքում. https://www.coe.int/en/web/istanbul-convention/newsroom/-/asset_publisher/anlInZ5mw6yX/content/seminar-to-present-the-gap-anamysis-of-armenian-criminal-law-in-the-light-of-the-standards-espablished-by-the-council-of-europe-convention-on-preventi?inheritRedirect=false&redirect=https://www.coe.int/en/web/istanbul-convention/newsroom%3Fp_p_id%3D101_INSTANCE_anlInZ5mw6yX%26p_p_lifecycle%3D0%26p_p_state%3Dnormal%26p_p_mode%3Dview%26p_p_col_id%3Dcolumn-1%26p_p_col_count%3D2%26p_r_p_564233524_resetCur%3Dfalse

ոլորտում առաջընթացի ապահովումը ենթադրում է երեխաների՝ ընտանիքում ապրելու, սիրո և հոգատարության պայմաններում մեծանալու, իրենց կարիքների առումով լսված լինելու, իսկ իրավունքների խախտման դեպքում՝ դրանց լուծման դյուրին հնարավորություններ ունենալու համար բոլոր անհրաժեշտ նախապայմանների ապահովումը: Վերոնշյալ նպատակներին ուղղված՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ջանքերը կկենտրոնացվեն երեխաների հիմնական սոցիալական միջավայրում, այդ թվում՝ հանրակրթական և հատկապես փակ տիպի հաստատություններում երեխաների պաշտպանվածության համար անհրաժեշտ մեխանիզմների ստեղծման վրա:

7. Հրապարակվել է համապարփակ իրավական վերլուծություն, որն առնչվում է փաստաբանի մասնագիտական գործունեության մի շարք երաշխիքների՝ կապված քրեակատարողական հիմնարկ կամ դատարան փաստաբանի մուտք գործելու, զննության կամ խուզարկության պահանջի և իր վստահորդների շահերի պաշտպանությունն իրականացնելու հետ:

Վերլուծությունն իրականացվել է հետևյալ իրավաչափ շահերի հաշվառմամբ.

1) փաստաբանի հեղինակությունն ու նրա մասնագիտական աշխատանքի արդյունավետությունը.

2) փաստաբան-վստահորդ արտոնյալ հաղորդակցության և փաստաբանական գաղտնիքի պաշտպանվածությունը.

3) փաստաբանի վստահորդի, այդ թվում՝ նրա պաշտպանյալի իրավաբանական օգնության իրավունքի և արդար դատաքննության մյուս երաշխիքների ապահովումը.

4) իրավախախտումների կանխումը, համապատասխան հաստատության անվտանգության ապահովումն ու այլոց իրավունքների պաշտպանությունը:

Վերլուծության հիման վրա մշակված եզրահանգումներն ու առաջարկությունները, ուղարկվել են Արդարադատության նախարարություն, Դատարանների նախագահների խորհուրդ և Դատական դեպարտամենտ:

ԲԱԺԻՆ 2. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



Գրավոր և բանավոր դիմում-բողոքների քանակը՝ ըստ մարմինների և կազմակերպությունների



Գրավոր և բանավոր դիմում-բողոքների քանակը՝ ըստ վարչատարածքային միավորների



Տվյալներ այցերի վերաբերյալ



2016 և 2017 թվականների ընթացքում դրական լուծված գործերի

համեմատական պատկեր

(ստորև տվյալները չեն ներառում այն գործերը, որոնք հասցեագրվել են Պաշտպանին, սակայն նրա իրավասությանը չեն վերաբերում)



ԲԱԺԻՆ 3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ԳԼՈՒԽ 1. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՀՀ Սահմանադրության 83-րդ հոդվածն արձանագրում է, որ յուրաքանչյուր ոք օրենքին համապատասխան՝ ունի մայրության, բազմազավակության, հիվանդության, հաշմանդամության, աշխատավայրում դժբախտ պատահարների, խնամքի կարիք ունենալու, կերակրողին կորցնելու, ծերության, գործազրկության, աշխատանքը կորցնելու և այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք: Սոցիալական ապահովությունը պետության կողմից այն մարդկանց մատուցվող գոյության բավարար միջոցների քանակն է, ովքեր լրիվ կամ մասնակի զրկված են աշխատելու և եկամուտ ստանալու հնարավորությունից: Հայաստանի Հանրապետությունում սոցիալական ապահովության հիմնական տեսակները պետական կենսաթոշակներն ու սոցիալական նպաստներն են, որոնք սոցիալական մեծ նշանակություն ունեն, քանի որ առնչվում են բազմաթիվ քաղաքացիների կենսական շահերին:

Այս ոլորտի առնչությամբ, պետք է նշել, որ 2017 թվականի ընթացքում մասնագիտական սերտ համագործակցություն է հաստատվել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Պետական եկամուտների կոմիտեի, Երևանի քաղաքապետարանի և իրավասու այլ մարմինների հետ:

Առանձին դեպքերում նաև իրականացվել են համատեղ քննարկումներ, նշանակվել են պատասխանատու հատուկ ներկայացուցիչներ, ում հետ հաստատված է ամենօրյա սկզբունքով աշխատանք: Այդպիսի օրինակներից է Սոցիալական ապահովության պետական ծառայության հետ աշխատանքը:

Չնայած նշված օրենսդրական զարգացումներին ու համատեղ աշխատանքին, 2017 թվականի ընթացքում շարունակվել են արձանագրվել քաղաքացիների սոցիալական ապահովության իրավունքների խախտումներ:

1. Կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու հնարավորության սահմանափակումներ

1.1 Կենսաթոշակ նշանակելը արտոնյալ պայմաններով

2017 թվականի ընթացքում Պաշտպանին շարունակվել են հասցեագրվել արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակելու վերաբերյալ բողոքներ: Ըստ այդ բողոքների՝ արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակելու մասին անձանց դիմումները մերժվում են այն հիմնավորմամբ, որ արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող նրանց աշխատանքային ստաժը չի բավականացնում, քանի որ ծանր, վնասակար արտադրությունների, աշխատանքների, մասնագիտությունների, պաշտոնների և ցուցանիշների ցուցակում իրենց մասնագիտությունները ներառված չեն:

Այսպես, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակվում է օրենքով ամրագրված չափանիշներին բավարարող 55 տարին լրացած անձին: Տրամաբանությունն այն է, որ անձը ստանում է արտոնյալ կենսաթոշակի իրավունք, եթե օրենքով նախատեսված ժամկետում աշխատել է առանձնապես վնասակար, ծանր, արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող պայմաններում կամ կատարել է արտոնյալ

կենսաթոշակի իրավունք տվող աշխատանք: Օրենքը համապատասխան պայմանների առկայության դեպքում հնարավորություն է տալիս արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակել նաև 59 կամ 45 տարին լրացած անձանց (Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մաս)։ Միաժամանակ, արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող արտադրությունների, աշխատանքների, մասնագիտությունների, պաշտոնների և ցուցանիշների ցանկերը սահմանված են ՀՀ կառավարության 2012 թվականի հունվարի 12-ի թիվ 12-Ն որոշմամբ։

Խնդիրն այն է, որ մի շարք դեպքերում մարդիկ տարիներ շարունակ փաստացի կատարել են արտոնյալ կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքը, աշխատել առողջության համար վտանգավոր պայմաններում, պարզապես մինչև 1993 թվականը գործող արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող ցուցակում տվյալ աշխատանքը որակող մասնագիտությունը նշված է եղել այլ կերպ, իսկ հետագայում այդ մասնագիտությունն այլ անվամբ է կոչվել և ներառվել կառավարության որոշման մեջ (օրինակ՝ լինոտիպիստը վերանվանվել է շարատողաձուլական մեքենայի օպերատորի)։ Մեկ այլ դեպքով անձի աշխատանքային գրքույկի գրառումների համաձայն՝ որպես էներգետիկ աշխատած ժամանակահատվածը չի գնահատվել որպես արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող ստաժ, քանի որ կառավարության որոշմամբ հաստատված համապատասխան ցանկի համաձայն՝ արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստանալու իրավունք չունեն «էներգետիկ» մասնագիտությամբ աշխատած անձինք, քանի որ այդ մասնագիտությունը համապատասխան կառավարության որոշման մեջ ներառված չէ:

Բողոքներից մեկով էլ օրինակ՝ օրենքով սահմանված տարիքը լրանալուց հետո արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակելիս, աշխատանքային ստաժում չի հաշվառվել աշխատանքային գրքույկում նշված գործարաններում որպես աշակերտ աշխատած ժամանակահատվածը, ինչի արդյունքում ստաժը չի բավականացրել և անձը ձեռք չի բերել արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք։ Այնուհետև, Պաշտպանի աջակցությամբ հարցը ստացել է դրական լուծում և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը տվյալ գործարանում դիմողի աշխատած ժամանակահատվածը (այդ թվում՝ որպես աշակերտ աշխատած) գնահատել է որպես արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային ստաժում հաշվառման ենթակա ժամանակահատված, ինչը նախադեպ է դարձել բոլոր նույնաբովանդակ դեպքերի համար։

Ըստ այդմ, որոշ դեպքերում, մարդիկ զրկվել են արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունքից, քանի որ դիմումատուների աշխատանքային գրքույկներում մասնագիտության անվան փոփոխության մասին համապատասխան գրառում չի կատարվել։ Ճիշտ է, մի շարք դեպքերում Պաշտպանին դիմելուց հետո աշխատանքային գրքույկներում կատարվել են ուղղումներ, սակայն լիազոր մարմինը կրկին մերժել է կենսաթոշակի նշանակումը՝ այս անգամ պատճառաբանելով, որ գործատուների կողմից տրված տեղեկանքներն առանց հիմքերի են, իրավաչափ չեն և ենթակա են ստուգման:

Այսպիսով, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը պետք է քննության առարկա դարձնի դիմումատուների աշխատանքային գրքույկում կատարված փոփոխության վերաբերյալ համապատասխան գրառումը՝ այդպիսով չապահովելով

փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկում: Մինչդեռ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել: Եթե վարչական մարմինը հիմնավոր կասկածներ ունի անձանց ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ, ապա պարտավոր է ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար: Հակառակ դեպքում անձի հաղորդած տվյալների հավաստի լինելու փաստի ուժով վարչական մարմինը պարտավոր է կենսաթոշակ նշանակել արտոնյալ պայմաններով:

Պաշտպանին հասցեագրված մի շարք այլ բողոքների համաձայն՝ մարդիկ երկար տարիներ կատարել են սահմանված ծանր և վնասակար աշխատանքը, սակայն չեն օգտվել արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունքից, քանի որ աշխատանքային գրքույկներում նշված գրառումների համաձայն՝ աշխատանքը կատարվել է հաստատված ցանկում չընդգրկված կազմակերպություններում: Օրինակ՝ ըստ դիմում ներկայացրած անձի՝ ինքն աշխատել է զորամասում՝ որպես ջերմաքարշի մեքենավար: Ըստ կենսաթոշակային մարմնի մեկնաբանման՝ այդ իրավունքից օգտվում են երկաթուղային տրանսպորտի համակարգի այն մեքենավարները, որոնք աշխատում են դեպոյում, նորոգման գործարանում և այլն, որոնք անմիջականորեն չեն մասնակցում բեռներ տեղափոխելու և երկաթուղային տրանսպորտում երթևեկության անվտանգությունը կազմակերպելու աշխատանքներին: Ըստ այդմ, մերժվել է նրա՝ արտոնյալ պայմաններով կենսաթոշակի տրամադրումը:

Ստացվում է, որ ծանր և վնասակար աշխատանքի փաստացի կատարումը բավարար չի եղել արտոնյալ կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու համար, քանի որ աշխատանքային գրքույկի գրառումները կամ աշխատանքային գործունեության մյուս հիմքերը պետք է համապատասխանեն սահմանված ցանկին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. կենսաթոշակները նշանակելիս առաջնորդվել այն սկզբունքով, որ, եթե տվյալ անձի աշխատանքային գրքույկում նշված պաշտոնն իր էությամբ համապատասխանում է ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված արտոնյալ կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտությունների և պաշտոնների ցանկում նախատեսված պաշտոնի իրական անվանմանը կամ բնույթին, անձին նշանակի կենսաթոշակ.

2. իրավակիրառ պրակտիկայում առաջացած յուրաքանչյուր դեպքի հիման վրա կատարելագործել ՀՀ կառավարության 2012 թվականի հունվարի 12-ի թիվ 12-Ն որոշմամբ հաստատված արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող ցուցակները:

1.2 Մասնակի կենսաթոշակ նշանակելը

Համակարգային առումով 2017 թվականին շարունակվել է չլուծված մնալ դեռևս 2016 թվականից Պաշտպանի կողմից բարձրաձայնված մասնակի կենսաթոշակ նշանակելու հարցերում վարչական մարմնի կողմից գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն չապահովելու խնդիրը: Այդ մասին են վկայում 2017 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված մի շարք բողոքները,

որոնցով մարդիկ տեղեկացրել են, որ իրենց մասնակի կենսաթոշակ նշանակելը մերժվել է այն հիմնավորմամբ, որ անձի զբաղեցրած պաշտոնը, մասնագիտությունը կամ այն կազմակերպությունը, որտեղ անձն աշխատել է ներառված չեն ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշմամբ հաստատված թիվ 6 հավելվածում:

Այսպես, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ կրթության, մշակույթի որոշ կատեգորիաների աշխատողներ կարող են ձեռք բերել մասնակի կենսաթոշակ ստանալու իրավունք, եթե կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող մարմնի համապատասխան ստորաբաժանում դիմելու պահին լրացել է նրանց 55 տարին, ունեն առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ և մինչև 2003 թվականի օգոստոսի 1-ն ընկած ժամանակահատվածում առնվազն 12 օրացուցային տարի աշխատել են մասնակի կենսաթոշակի իրավունք տվող համապատասխան մասնագիտություններով կամ պաշտոններում: Ըստ այդմ, կրթության, մշակույթի որոշ կատեգորիաների աշխատողներին մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտությունների և պաշտոնների ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» թիվ 665-Ն որոշմամբ:

Խնդիրն այն է, որ նշված ցանկում թվարկվում են համապատասխան կազմակերպություններ, մասնագիտություններ և պաշտոններ, որոնց համար ձեռքբերված մասնագիտական աշխատանքային ստաժը համարվում է մասնակի կենսաթոշակի իրավունք տվող: Սակայն այն ամբողջական չէ, և մի շարք մասնագիտություններ ու կազմակերպություններ դուրս են մնացել այդ ցանկից:

Օրինակ՝ Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկի համաձայն՝ դիմողը երկար տարիներ նվագել է տարբեր փողային գործիքներ: Դիմումատուին մասնակի կենսաթոշակ չի նշանակվել այն պատճառով, որ Կառավարության թիվ 665-Ն որոշման թիվ 7 հավելվածով հաստատված ցանկում ընդգրկված չեն այն կազմակերպությունները, մասնավորապես Պարի պետական անսամբլը, Երքաղխորհրդի կուլտուրայի վարչությանը կից գործիքային երաժիշտների բյուրոն, որտեղ նա տևական ժամանակ աշխատել է:

Ստացվում է՝ նշված ցանկում չընդգրկված ցանկացած այլ կազմակերպությունում անձի կատարած աշխատանքի ժամանակահատվածը չի հաշվառվում մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտական ստաժում՝ անկախ անձի մասնակի կենսաթոշակի իրավունք տվող աշխատանք փաստացի կատարելուց:

Բարձրացված խնդրի կապակցությամբ հատկանշական է Մարդու իրավունքների պաշտպանի 2016 թվականի տարեկան հաղորդմամբ վկայակոչված՝ ՀՀ վճռաբեկ դատարանի 2015 թվականի հուլիսի 17-ի թիվ ՎԴ2/0584/05/13 վարչական գործով կայացրած դիրքորոշումը, որով դատարանն անդրադարձել է մասնակի կենսաթոշակի վերաբերյալ համանման իրավական կարգավորմանը: Դատարանը, մասնավորապես, անդրադարձել է այն իրավական հարցադրմանը, թե կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող վարչական մարմինն իրավասու է արդյոք մերժել ֆիզիկական անձին մասնակի կենսաթոշակ նշանակելն այն պայմաններում, երբ տվյալ ֆիզիկական անձի աշխատանքային գրքույկում նշված պաշտոնն իր էությամբ համապատասխանում է ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված մասնակի կենսաթոշակի իրավունք տվող

մասնագիտությունների և պաշտոնների ցանկում նախատեսված պաշտոնի իրական անվանմանը: Նույն որոշման մեջ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ֆիզիկական անձի՝ մասնակի աշխատանքային կենսաթոշակ նշանակելու դիմումի առթիվ հարուցված վարչական վարույթի ընթացքում կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ պարզելու դիմում ներկայացրած ֆիզիկական անձի մոտ մասնակի կենսաթոշակ ստանալու համար անհրաժեշտ՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված բոլոր պարտադիր պայմանների ու պահանջների առկայությունը կամ բացակայությունը:

Չնայած վերոնշյալ դատական ակտի, 2017 թվականին նույնաբովանդակ դիմումների առկայությունը ցույց է տալիս, որ հարցը դեռևս համակարգային լուծում չի ստացել: Ավելին, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում կենսաթոշակ նշանակելը մերժելու որոշման հիմքերի առանձին հաշվառում չի իրականացվում, ինչը հիմք կտար անընդհատ կատարելագործել հաստատված ցանկերը և ապահովել մարդկանց մասնակի կենսաթոշակի իրավունքի իրականացումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. կենսաթոշակի նշանակման ցանկացած դեպքում վարչական վարույթի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկում իրականացնելուց, ինչպես նաև վարչական վարույթի համար էական նշանակություն ունեցող բոլոր, այդ թվում՝ դիմումատուի օգտին առկա հանգամանքները բացահայտելուց բացի հաշվի առնել նաև Կառավարության թիվ 665-Ն որոշմամբ սահմանված ցանկում նշված կրթության, մշակույթի որոշ կատեգորիաների աշխատողներին մասնակի կենսաթոշակի իրավունք տվող յուրաքանչյուր մասնագիտության և պաշտոնի բուն էությունը և նեղ չմեկնաբանել դրանք կամ ցանկում կատարել համապատասխան լրացումներ.

2. իրավակիրառ պրակտիկայում առաջացած յուրաքանչյուր դեպքի հիման վրա կատարելագործել ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 665-Ն որոշման թիվ 6 հավելվածով հաստատված ցանկը.

3. վարել առանձնացված հաշվառում կենսաթոշակ նշանակելը մերժելու հիմքերի վերաբերյալ:

1.3 Աշխատանքային ստաժի վերահաշվարկը

2017 թվականին իրականացվել է 2013 թվականից հետո կենսաթոշակ նշանակելու համար դիմած և կենսաթոշակ ստանալու իրավունք ձեռք բերած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրություն և կատարել աշխատանքային ստաժի վերահաշվարկ և այնուհետև՝ ավելի վճարած կենսաթոշակի գումարի հետ գանձում: Արդյունքում՝ կենսաթոշակի գումարը նվազել է:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասում սպառիչ կերպով թվարկվում են աշխատանքային կենսաթոշակի վերահաշվարկման հիմքերը: Կենսաթոշակի չափը վերահաշվարկվում է նաև, եթե կենսաթոշակի գործում հայտնաբերվել է կեղծ (ոչ հավաստի) փաստաթուղթ, որի արդյունքում նվազում է կենսաթոշակի չափը, կամ կենսաթոշակի գործում հայտնաբերվել է լրացուցիչ փաստաթուղթ (տեղեկատվություն), որի արդյունքում ավելանում է կենսաթոշակի չափը:

Միաժամանակ, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ կենսաթոշակից պահումներ կարող են կատարվել՝ սխալ տեղեկություններով փաստաթղթեր ներկայացնելու, ինչպես նաև կենսաթոշակառուի՝ նույն օրենքի 50-րդ հոդվածով սահմանված պարտականությունները չկատարելու հետևանքով կամ սխալմամբ (օրենքի խախտմամբ) նրան ավելի վճարված գումարները հետ գանձելու մասին կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման որոշման և կենսաթոշակառուի գրավոր համաձայնության հիման վրա, սակայն նշանակված կենսաթոշակի 15 տոկոսից ոչ ավելի, եթե ավելի վճարված կենսաթոշակի գումարի չափը չի գերազանցում որոշումը կայացնելու ամսվան հաջորդող ամսվա կենսաթոշակի գումարի կրկնապատիկը: Նույն հոդվածի 4-րդ մասի առաջին կետի համաձայն՝ սխալմամբ (օրենքի խախտմամբ) ավելի վճարված կենսաթոշակի գումարները կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման հետ փոխհամաձայնեցված ժամանակացույցի հիման վրա կարող են ՀՀ պետական բյուջե վերականգնվել նաև կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման այն աշխատակցի կողմից, որի մեղքով (գործողությունների կամ անգործության արդյունքում) վճարվել են ավելի վճարված կենսաթոշակի գումարները:

Օրինակ, Պաշտպանին հասցեագրվել է բողոք այն մասին, որ կենսաթոշակառուն կենսաթոշակային մարմնից ստացել է ծանուցում այն մասին, որ իր կենսաթոշակի ստաժում ներառված մոտ 28 տարվա աշխատանքային ստաժը հիմնավորված չէ, ինչի հիմքով այն կրճատվել է և արդյունքում առաջացել է ավել վճարված 222.950 ՀՀ դրամ գումար, հետևաբար անհրաժեշտ է գանձապետական հաշվեհամարին կատարել փոխանցում: Դիմողի կողմից վիճարկվել է ստաժի նվազեցման հարցը: Ըստ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պարզաբանման՝ հիմնավորված չէ որոշակի ժամանակահատվածի ընթացքում դիմումատուների աշխատելու փաստը՝ նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության ապահովադիրների հաշվառման շտեմարանում գործատուի անվանմամբ ապահովադիր չհայտնաբերելու հիմքով, ինչպես նաև ներկայացված աշխատանքային գրքույկների գրառումներով և սոցիալական վճարների մասին տեղեկանքներով (որն առոչինչ է) վերջիններիս աշխատելու փաստը չհիմնավորվելու հիմքով:

Ըստ Պաշտպանին ներկայացված մեկ այլ դիմումի՝ 34 տարի, 2 ամիս աշխատանքային ստաժ ունեցող անձին 2003 թվականին նշանակվել է տարիքային աշխատանքային կենսաթոշակ: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության ծանուցումից անձը տեղեկացել է, որ իր աշխատանքային գրքույկը լրացված է սահմանված կարգի խախտումներով, մասնավորապես տիտղոսաթերթում բացակայում է գրքույկի տիրոջ ծննդյան ամսաթիվը, ստորագրությունը, աշխատանքային գրքույկի լրացման ամսաթիվը, նշված չէ մասնագիտությունը: Նույն ծանուցմամբ նշվել է նաև, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության (ապահովադիրների) հաշվառման շտեմարանում առկա տեղեկատվության համաձայն՝ անհրաժեշտ անվանմամբ աշխատակից (ապահովադիր) չի հայտնաբերվել:

Այսպիսով, հասցեագրված բողոքների ուսումնասիրությունները հիմք են տալիս եզրակացնելու, որ չեն գործում կենսաթոշակային մարմնի աշխատակիցների անբարեխիղճ և ոչ իրավաչափ աշխատանքի և գործելաոճի վերացման և

համապատասխանաբար վերջիններիս պատասխանատվության պատշաճ կառուցակարգեր: Արդյունքում կենսաթոշակային մարմնի նախաձեռնությամբ կենսաթոշակների վերահաշվարկման արդյունքում պատասխանատվությունն ընկնում է կենսաթոշակառուների վրա՝ անկախ նրանից, որ կենսաթոշակ նշանակելիս կենսաթոշակային մարմնի աշխատակիցների գնահատմամբ նշանակվել է հաշվարկվել է համապատասխան չափով կենսաթոշակ:

Նշվածից ստացվում է, որ կենսաթոշակային մարմինը ժամանակին չի ապահովել կենսաթոշակառուների փաստաթղթերի ճշգրիտ հավաքագրումը, ինչպես նաև դիմողին չի ներկայացվել աշխատանքային ստաժի վերաբերյալ ստույգ տեղեկատվություն: Ներկայացված դեպքերով, ինչպես նաև ստաժի նվազեցման տասնյակ այլ դեպքերով չի քննարկվել կենսաթոշակային մարմնի աշխատակցի մեղքի առկայության հարցը, համապատասխանաբար՝ վերջինիս պատասխանատվությունն ավել վճարված գումարի վերականգնման հարցում:

Բողոքների ուսումնասիրությունները միաժամանակ հիմք են տալիս եզրակացնելու, որ Սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակիցներն իրենց պատասխանատվությունից ապահովագրելու նպատակով կենսաթոշակառուներից վերցնում են համաձայնագրեր վերջիններից ավել վճարված գումարները ժամանակացույցով գանձելու վերաբերյալ:

Ըստ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պարզաբանման՝ 2017 թվականի ընթացքում արձանագրվել է կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման աշխատակցի մեղքով կենսաթոշակառուին ավել վճարված կենսաթոշակի գումարները սխալմամբ վճարելու ընդամենը 1 դեպք: Սոցիալական ապահովության լիազոր մարմնի պատճառաբանությամբ՝ վարչարարությամբ դժվար է որոշել կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման աշխատակցի մեղքի առկայությունը: Բացի այդ, պատճառաբանվել է, որ կենսաթոշակի գումարը ՀՀ պետական բյուջե վերականգնող անձանց հաշվառում չի տարվում, ուստի չեն բացառվում այն դեպքերը, երբ աշխատակիցն ավել վճարված կենսաթոշակի գումարը ՀՀ պետական բյուջե վերականգնի կենսաթոշակառուի անունից:

2017թ. ընթացքում ՀՀ ԱՍՀ նախարարի 2017թ. մարտի 2-ի N 39-Ա/1 հրամանի համաձայն իրականացվել են ուսումնասիրություններ սոցիալական աջակցության թվով 10 տարածքային մարմիններում (ՍԱՏՄ), սոցիալական ապահովության թվով 6 տարածքային մարմիններում (ՍԱՏԲ), զբաղվածության պետական գործակալության թվով 7 տարածքային կենտրոններում (ԶՏԿ), նախարարության ենթակայության թվով 2 մանկատներում, երեխաների խնամքի և պաշտպանության թվով 2 գիշերօթիկ հաստատություններում, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա լրիվ խնամք իրականացնող թվով 2 տուն-ինտերնատներում, ինչպես նաև թվով 4 ՍՊԸ-ներում, 2 ՀԿ-ներում և 1 ՊՈԱԿ-ում: Այդ թվում, իրականացվել են տնային այցելություններ ընտանեկան նպաստի համակարգում ընդգրված թվով 315 ընտանիքների և պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման և վերանորոգման ծառայություններից օգտվող թվով 358 շահառուների:

2017 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված վերը նշված խնդրի, ինչպես նաև կենսաթոշակային ապահովությանը վերաբերող այլ բողոքների պատշաճ ընթացքն ապահովելու և արձանագրված խնդիրներին հնարավոր և արդյունավետ լուծումներ տալու

նպատակով ձևավորվել է սերտ համագործակցություն Պաշտպանի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Սոցիալական ապահովության պետական ծառայության միջև: Մասնավորապես, աշխատակազմերում առանձնացվել են ոլորտի պատասխանատուներ: Հաշվի առնելով, որ այս ոլորտի շահառուներ են հանդիսանում տարեց անձինք և կենսաթոշակառուները՝ բողոքներին անհապաղ արձագանքելու և իրավունքի վերականգնման գործընթացի մատչելիությունն ապահովելու համար, արդյունավետ համագործակցության արդյունքում ձևավորվել է քննարկումները բանավոր ընթացակարգով իրականացնելու պրակտիկա (օրինակ՝ հեռախոսակապի միջոցով):

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է՝

1. իրականացված վերահաշվարկների յուրաքանչյուր դեպքով իրականացնել վարչական վարույթի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկում, բացահայտել վարչական վարույթի համար էական նշանակություն ունեցող բոլոր, այդ թվում՝ դիմումատուի օգտին առկա հանգամանքները.

2. կենսաթոշակների վերահաշվարկների ժամանակ կիրառել աշխատանքային ստաժի հաշվառման գործընթացում անհատական պատասխանատվության հստակ մեխանիզմներ:

1.4 Աշխատանքային ստաժի հաշվառումը

Պաշտպանին հասցեագրված մի շարք բողոքներով անձինք իրենց մտահոգություն են հայտնել առ այն, որ գործող օրենսդրական կարգավորումներով իրենց աշխատանքային ստաժում չի կարող հաշվառվել իրենց կատարած աշխատանքի որոշ ժամանակահատվածը՝ չնայած նրան, որ նշված ամբողջ ժամանակահատվածի համար վճարվել է աշխատավարձ, հաշվարկվել և փոխանցվել են սոցիալական վճարներ:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի համաձայն՝ մինչև 2013 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար աշխատանքային ստաժը հաստատող հիմնական փաստաթուղթն աշխատանքային գրքույկն է կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած այլ փաստաթուղթ, 1992 թվականի հունվարից մինչև 2013 թվականի հունվարի 1-ը՝ նաև սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթուղթը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դեպքերի: Հետևաբար 1992 թվականի հունվարից մինչև 2013 թվականի հունվարի 1-ը՝ աշխատանքային գործունեությունը հաստատելու համար անձանց աշխատանքային գրքույկից բացի անհրաժեշտ են համապատասխան լրացուցիչ փաստաթղթեր: Եթե կենսաթոշակային մարմինը պարզում է այդ ժամանակահատվածի համար սոցիալական վճարներ վճարված լինելու հանգամանքը կամ կենսաթոշակ նշանակելիս դեռ կազմակերպությունը, որտեղ աշխատել է անձը, գործում է, մարդկանց համար դժվարություններ չեն առաջանում: Մինչդեռ, եթե կազմակերպությունները, որտեղ քննարկվող ժամանակահատվածում աշխատել են քաղաքացիները, վերջիններիս կենսաթոշակի անցնելիս այլևս չեն գործում (վերացել կամ լուծարվել են), քաղաքացիների համար առաջանում են բազմապիսի խնդիրներ աշխատանքային ստաժը հաստատելու համար:

Ըստ բողոքների՝ ծրագրերի իրականացման որոշ գրասենյակներում գործատուն աշխատողների համար որոշակի ժամանակահատվածի անհատական հաշիվ բացելու

մասին հայտ և անհատական հաշվետվություն չի ներկայացրել, իսկ այդ հիմնարկների տրամադրած տեղեկանքների տվյալները նշված ժամանակահատվածի համար Սոցիալական ապահովության պետական ծառայությունը չի կարող ներառել պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարան: Պատճառն այն է, որ ՀՀ կառավարության 2013 թվականի ապրիլի 18-ի թիվ 390-Ն որոշման 4-րդ կետի համաձայն՝ գործատուներն աշխատողների սոցիալական վճարումներին վերաբերող տվյալներն անհատական տվյալների հաշվառման շտեմարան ներառելու համար կարող էին 2005 թվականի մայիսի 12-ի թիվ 938-Ն որոշմամբ սահմանված կարգով Սոցիալական ապահովության պետական ծառայություն ներկայացնել մինչև 2013 թվականի հուլիսի 1-ը, իսկ Սոցիալական ապահովության պետական ծառայությունն այլևս նման լիազորություն չունի:

Ստացվում է, որ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը չի կարող ներառել տվյալները շտեմարաններ, դրանց փակ լինելու, իսկ Պետական եկամուտների կոմիտեն՝ տվյալ ժամանակահատվածում հաշվետվություն չվարելու պատճառաբանությամբ: Արդյունքում, այդ հաստատությունների աշխատակիցները կարող են զրկվել իրենց սոցիալական ապահովության իրավունքի իրականացումից:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պարզաբանումների համաձայն՝ տարվում են համապատասխան աշխատանքներ՝ ոչ հավաստի տվյալներ պարունակող փաստաթղթերի հիման վրա ստաժի հաշվարկման դեպքերը վերհանելու և բացառելու ուղղությամբ: Ըստ Նախարարության՝ առաջիկայում ներդրվելու է աշխատանքային ստաժի հաշվարկման իրավաչափության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համակարգ, այդ թվում՝ ռիսկերի վրա հիմնված վերլուծություններ իրականացնելու միջոցով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է փոփոխության ենթարկել ՀՀ կառավարության 2013 թվականի ապրիլի 18-ի թիվ 390-Ն որոշմամբ սահմանված անհատական տվյալներն ամբողջացնելու ժամկետները:

Պաշտպանին հասցեագրված այլ խումբ բողոքներով բարձրացվել է օտարերկրյա որոշ պետությունների հետ կենսաթոշակային ապահովության բնագավառում պայմանագրի (համաձայնագրի) բացակայության արդյունքում կենսաթոշակի անցնելիս աշխատանքային ստաժում այդ պետություններում աշխատած ժամանակահատվածի չհաշվարկման խնդիրը: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության դիրքորոշմամբ՝ արտերկրում աշխատած ժամանակահատվածը դիմումատուի ստաժում հաշվառվել չի կարող, եթե Հայաստանի Հանրապետությունն այդ պետության հետ կենսաթոշակային ապահովության բնագավառում կնքված պայմանագիր չունի: Բացի այդ, պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանում տարանջատված հաշվառում չի տարվում:

Միաժամանակ, կենսաթոշակի իրավունքը փոխկապակցված է տվյալ պետությունում աշխատանքային գործունեությանը և «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով սահմանված են աշխատանքային ստաժում հաշվառվող ժամանակահատվածները և դրանք հաշվառելու պայմանները: Մասնավորապես, աշխատանքային գործունեության ժամանակահատվածները հաշվառվում են աշխատանքային ստաժում, եթե վճարվել են եկամտային հարկ կամ

կենսաթոշակային վճար, կամ սոցիալական վճարներ: Դիմողներն ունեն այլ պետություններում իրենց աշխատանքային գործունեության ժամանակահատվածների համար համապատասխան վճարումների կատարված լինելը հավաստող փաստաթղթեր: Սակայն նշվածը բավարար չի գնահատվում աշխատանքային ստաժում այդ ժամանակահատվածները ներառելու համար:

Ըստ կենսաթոշակային մարմնի պարզաբանման՝ այս ոլորտում միջպետական համաձայնագրի կնքման նպատակը կողմերից յուրաքանչյուրի տարածքում ձեռք բերած աշխատանքային ստաժի հաշվառմամբ անձի կենսաթոշակի իրավունքի իրացման փոխհամաձայնեցված կանոնների սահմանումն է: Ըստ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պարզաբանման՝ միջազգային պրակտիկայում կենսաթոշակային ապահովության բնագավառի պայմանագրերը կնքվում են՝ հաշվի առնելով «տարածքային» կենսաթոշակի նշանակումը կատարվում է ըստ բնակության վայրի կամ «համամասնական» կենսաթոշակի նշանակումը կատարվում է համամասնորեն՝ ըստ տվյալ պետության տարածքում ձեռք բերած աշխատանքային ստաժի սկզբունքները: Մասնավորապես, «Կենսաթոշակային ապահովության բնագավառում ԱՊՀ անդամ պետությունների քաղաքացիների իրավունքների երաշխիքների մասին» 1992 թվականի մարտի 13-ի համաձայնագիրը կնքված է «համամասնական» սկզբունքով:

Կենսաթոշակային մարմնի պարզաբանման համաձայն՝ ներկայումս ընթանում են ԵՏՄ անդամ պետությունների աշխատավորների կենսաթոշակային ապահովության պայմանագրի նախագծի մշակման աշխատանքներ: Պայմանագրի հիմքում դրված է «համամասնական» սկզբունքը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է՝

1. վերանայել նշանակված կենսաթոշակները, վեր հանել դրանցում առկա այլ պետություններում աշխատած ժամանակահատվածները և տվյալ պետության հետ համապատասխան պայմանագիր չունենալու պատճառով կենսաթոշակ նշանակելիս ընդհանուր աշխատանքային ստաժում չհաշվառելու բոլոր դեպքերը.

2. վերանայման արդյունքներով ընդլայնել Հայաստանի Հանրապետության հետ համապատասխան համաձայնագիր ունեցող երկրների շրջանակը:

1.5 ԱՊՀ երկրներում զինվորական կենսաթոշակ ստանալու հնարավորությունը

2017 թվականի ընթացքում շարունակվել է խնդրահարույց մնալ դեռևս 2014 թվականից ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի զեկույցներում և հաղորդմամբ բարձրաձայնված հրշեջ ծառայության մի խումբ նախկին աշխատակիցների ԱՊՀ երկրներում զինվորական կենսաթոշակ ստանալու հնարավորությունից զրկված լինելու հարցը: Խնդիրն այն է, որ «ԱՊՀ մասնակից պետությունների զինծառայողների և նրանց ընտանիքների կենսաթոշակային ապահովության և զինծառայողների պետական ապահովագրության կարգի մասին» համաձայնագրում (Համաձայնագիր) արտակարգ իրավիճակների նախարարության հրշեջ ծառայողների վերաբերյալ համապատասխան նշում առկա չէ, ինչի արդյունքում այդ անձինք զրկվում են ԱՊՀ երկրներում իրենց կենսաթոշակը ստանալու հնարավորությունից:

ԱՊՀ երկրների զինծառայողները կարող են իրենց կենսաթոշակներն օրինական կարգով ձևակերպել և ստանալ ԱՊՀ ցանկացած պետությունում, այդ թվում նաև ՌԴ-ում՝ ըստ ՌԴ պաշտպանության նախարարի 1993 թվականի փետրվարի 12-ի թիվ 4468-1 և ԱՊՀ պետությունների պաշտպանության նախարարների խորհրդի 2003 թվականի դեկտեմբերի 10-ի որոշումների: Միաժամանակ, հրշեջ ծառայության նախկին աշխատակիցները եղել են ՀՀ ներքին գործերի նախարարության հրշեջ պահպանության վարչության համակարգի աշխատակիցներ, այնուհետև, ՀՀ կառավարության 2002 թվականի օգոստոսի 1-ի N 1142-Ն որոշման համաձայն՝ պետական հակահրդեհային ծառայության են անցել ՀՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչությունում: Զինվորական կենսաթոշակի իրավունք ձեռքբերելուց հետո որպես հրշեջ հաշվառվել են ՀՀ զինկոմիսարիատի սոցիալական բաժնում, սակայն հետագայում, ձեռք բերելով Ռուսաստանի Դաշնությունում ապրելու իրավունք և ՀՀ-ում դադարեցնելով կենսաթոշակային գործն, այն տեղափոխել են ՌԴ: Սակայն հրշեջ ծառայության նախկին աշխատակիցների կողմից ՌԴ-ում զինվորական կենսաթոշակի հաշվառման համար ներկայացված դիմումները՝ Համաձայնագրում ՀՀ ՆԳՆ հրշեջ պահպանության վարչության հրշեջ ծառայողներին կենսաթոշակի տրամադրման հնարավորության մասին նշման բացակայության պատճառաբանությամբ Ռուսաստանի Դաշնության իրավասու մարմնի կողմից մերժվել է:

2017 թվականի համաձայնագրում փոփոխություն չի կատարվել, ինչի արդյունքում հրշեջ ծառայության նախկին աշխատակիցները զրկված են եղել ԱՊՀ երկրներում զինվորական կենսաթոշակ ստանալու հնարավորությունից, ինչն էլ հանգեցրել է այդ անձանց սոցիալական ապահովության իրավունքի խախտման:

Ուստի, անհրաժեշտ է հնարավորինս սեղմ ժամկետում ԱՊՀ համապատասխան համաձայնագրում կատարել փոփոխություններ՝ ՀՀ նախկին ՆԳՆ հրշեջ պահպանության վարչության հրշեջ ծառայողներին կենսաթոշակի տրամադրման հնարավորությունն ապահովելու համար:

1.6 Ժամկետները կենսաթոշակի տեսակը փոխելիս

Պաշտպանին հասցեագրվել են նաև բողոքներ այն մասին, որ կենսաթոշակի տեսակի փոխվելու պարագայում սահմանված ընթացակարգերի իրականացման արդյունքում անձը կրում է վնասներ: Այսպես, բողոքներից մեկում դիմողը հայտնել է, որ որպես 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձ, ստացել է հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակ: Նրա կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվել է հաշմանդամ չճանաչվելու պատճառով: Անձը կրկին դիմել է Բժշկասոցիալական փորձաքննությունների (ԲՍՓ) հանձնաժողով բժշկասոցիալական վերափորձաքննության ենթարկվելու նպատակով, որի արդյունքում, սակայն, հաշմանդամ չի ճանաչվել[9]: Ըստ այդմ՝ անձը դիմել է տարածքային բաժին կենսաթոշակի տեսակը փոխելու՝ տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակելու համար և նրան, օրենսդրությամբ սահմանված կարգով, դիմելու օրվանից նշանակվել և վճարվում է տարիքային կենսաթոշակ: Փաստորեն, դիմումատուն կենսաթոշակ ստանալու իրավունքի դադարման ժամկետից ուշ

[9] Անհրաժեշտ է նշել, որ ըստ ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 2-ի թիվ 276-Ն որոշմամբ հաստատված «Բժշկասոցիալական փորձաքննության իրականացման կարգի» 25-րդ կետի՝ փորձաքննական որոշումը կարող է ընդունվել բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմին դիմումը (բողոքը) մուտքագրվելու օրվանից ոչ ուշ, քան 30 օրվա ընթացքում:

վերափորձաքննություն նշանակելու արդյունքում կենսաթոշակի տեսակը փոխելու մասին դիմումը ներկայացրել է 7 օր ուշ, ինչի արդյունքում վերջինս տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունքը ձեռք է բերել 2017 թվականի փետրվարի 7-ից, իսկ նշված ժամանակահատվածում նրան կենսաթոշակ չի վճարվել այն դեպքում, երբ վերջինս ուներ այդ իրավունքը:

Մեկ այլ դիմումով անձը տեղեկացրել է, որ իր նկատմամբ սահմանվել է հաշմանդամության 1-ին խումբ՝ անժամկետ: 2017 թվականի հունվար ամսին Սոցիալական ապահովության պետական ծառայության տարածքային բաժնից դիմումատուին գրավոր տեղեկացրել են, որ 2017 թվականի փետրվար ամսից կենսաթոշակի վճարումը դադարեցվելու է՝ հիմք ընդունելով բժշկասոցիալական փորձաքննական որոշման մասին ծանուցումը հաշմանդամ չճանաչվելու մասին, մինչդեռ դիմումատուի հավաստմամբ՝ երբևէ բժշկասոցիալական վերափորձաքննության չի ենթարկվել, հետևաբար անհասկանալի է հաշմանդամ չճանաչվելու հանգամանքը: Չնայած այդ փաստին՝ 2017 թվականի փետրվարի 1-ից դադարեցվել է հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակի իրավունքը և տարիքային աշխատանքային կենսաթոշակ է նշանակվել միայն 4 ամիս անց՝ կենսաթոշակառուի գրավոր դիմումի հիման վրա:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվում է հաշմանդամության ժամկետը լրանալու դեպքում: Այս դեպքում կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվում է այդ հանգամանքն առաջանալու ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Նշված իրավանորմի կարգավորման կապակցությամբ համապատասխան տեսակի կենսաթոշակի իրավունքը կորցնելու հետևանքով կենսաթոշակի տեսակը փոխելու արդյունքում պրակտիկայում առաջանում են կենսաթոշակի նշանակման ժամկետի խնդիրներ: Այսպիսով, անձը հաշմանդամության կենսաթոշակի իրավունքի դադարեցման օրվանից կարող է ձեռք բերել այլ կենսաթոշակի իրավունք, օրինակ՝ տարիքային: Խնդիրը կայանում է նրանում, որ մի կենսաթոշակի իրավունքի դադարման և մյուս կենսաթոշակի իրավունքի ծագման ժամանակահատվածները մի շարք դեպքերում չեն համընկնում, արդյունքում անձինք համապատասխան ժամանակահատվածում մնում են առանց կենսաթոշակի դրա իրավունքն իրապես ունենալու պարագայում:

Վերլուծելով վերը նշվածը՝ պարզ է դառնում, որ կենսաթոշակի իրավունքը կորցնելու հիմքով կենսաթոշակը դադարեցվելուց հետո կենսաթոշակը վերականգնելու դրույթ Օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված չէ:

Նշված խնդրի կապակցությամբ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պարզաբանումներում վկայակոչվել են «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի դրույթները, որոնց համաձայն՝ անկախ կենսաթոշակառուի դիմելուց, տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրանալու ամսին հաջորդող ամսվա 1-ից արտոնյալ պայմաններով, մասնակի կամ երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակի տեսակը փոխվում է տարիքային աշխատանքային կենսաթոշակի՝ միաժամանակ տեղեկացնելով, որ առաջիկա օրենսդրական փոփոխությունների շրջանակում կքննարկվի նաև տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրացած անձի՝ հաշմանդամության ժամկետը լրանալու պատճառով հաշմանդամության կենսաթոշակ

ստանալու իրավունքը դադարեցնելու դեպքում նրա կենսաթոշակի տեսակը, առանց նրա գրավոր դիմումի, տարիքային աշխատանքային կենսաթոշակի փոխելու նպատակահարմարության հարցը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է կենսաթոշակի տեսակը փոխելիս սահմանել հնարավորություն դիմումը որոշակի ժամկետում ներկայացնելու պայմաններում նոր կենսաթոշակի նշանակումը և վճարումը իրականացնելու նախկին կենսաթոշակի դադարման օրվանից:

1.7 Մայրության նպաստի վերահաշվարկը

2017 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ այն մասին, որ համատեղությամբ աշխատող քաղաքացիների մայրության նպաստը հաշվարկվել և նշանակվել է առանց մյուս գործատուի վճարած եկամուտը ներառելու: Այսպես, բողոքներից մեկով 2017 թվականի ընթացքում հիմնական գործատուից մայրության նպաստը, առանց համատեղությամբ աշխատանքի մայրության նպաստի հաշվարկման, վճարելուց հետո դիմել և ներկայացրել է լիազոր մարմնի տված տեղեկանքը մյուս գործատուի վճարած եկամտի մասին, սակայն այն հիմք չի հանդիսացել մայրության նպաստի վերահաշվարկման համար:

«Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ՀՀ օրենքի ուժով համատեղությամբ աշխատելու դեպքում մայրության նպաստը հաշվարկվում և վճարվում է հիմնական գործատուի կողմից: Օրենքի կիրարկումն ապահովող՝ ՀՀ կառավարության 2011 թվականի հուլիսի 14-ի թիվ 1024-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 14-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ համատեղությամբ աշխատելու դեպքում մայրության նպաստը հաշվարկելու, նշանակելու և վճարելու համար վարձու աշխատողը հիմնական աշխատավայրի գործատուին ներկայացնում է նաև այլ գործատուի տված փաստաթուղթը հղիության և ծննդաբերության արձակուրդի ժամանակահատվածի մասին, ինչպես նաև տարածքային բաժնի տված՝ Օրենքի 22-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված տեղեկանքը:

Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարձու աշխատողի նպաստը հաշվարկում, նշանակում և վճարում է գործատուն՝ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ առաջիկա աշխատավարձի վճարման համար օրենսդրությամբ սահմանված ժամկետում: Միաժամանակ, Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սխալ հաշվարկելու հետևանքով պակաս վճարված նպաստի գումարի վճարումը կատարվում է առանց ժամկետի սահմանափակման: Ընդ որում, վարձու աշխատողներին պակաս վճարված նպաստի գումարը գործատուն վճարում է իր միջոցներից՝ սխալը հայտնաբերելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պարզաբանման համաձայն՝ «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածը հստակ նախատեսում է պակաս վճարված նպաստի վճարման հիմքերը, իսկ այլ գործատուի վճարած եկամտի մասին ՀՀ լիազոր մարմնի տված տեղեկանքի հիման վրա նշանակված և վճարված նպաստը վերահաշվարկելու դրույթ հոդվածում առկա չէ: Այլ գործատուի վճարած եկամտի մասին տեղեկատվությունը հիմնական (նպաստը հաշվարկող և նշանակող) գործատուին է ներկայացնում վարձու

աշխատողը՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով լիազոր մարմնի տված տեղեկանքի հիման վրա: Դիմումատուն այն ներկայացրել է նպաստը նշանակվելուց և վճարվելուց հետո:

Փաստորեն, օրենքով սխալ հաշվարկելու հետևանքով պակաս վճարված նպաստի գումարի վճարումն առանց ժամկետի սահմանափակման վճարման հնարավորություն նախատեսված լինելու պարագայում համատեղությամբ աշխատանքի դիմաց մայրության նպաստի չհաշվարկելը և չվճարելը չի դիտարկում որպես սխալ հաշվարկված և պակաս վճարված դեպք և դրանով պայմանավորված չի վերահաշվարկվում մայրության նպաստի վերը նշված հանգամանքներով պայմանավորված հիմք: Արդյունքում անձը տվյալ դեպքում զրկվում է համատեղությամբ աշխատած աշխատանքի դիմաց աշխատավարձ չստանալու դիմաց փոխհատուցում ստանալու հնարավորությունից:

«Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ մայրության նպաստի միջոցով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված՝ հղիության և ծննդաբերության արձակուրդի (արձակուրդի իրավունք ունենալու) ժամանակահատվածում մասնակիորեն կամ ամբողջությամբ փոխհատուցվում է նույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված անձանց հղիության և ծննդաբերության պատճառով առաջացած ժամանակավոր անաշխատունակության հետևանքով կորցրած աշխատավարձը (եկամուտը), որն անձը ստանում էր կամ կարող էր ստանալ:

Այսինքն, պետության կողմից վճարվող նպաստի էությունը կայանում է նրանում, որ անձին որոշակի՝ օրենքում նշված հանգամանքների վրա հասնելու պարագայում վճարվի որոշակի փոխհատուցում՝ ժամանակավոր անաշխատունակության հետևանքով կորցրած աշխատավարձի (եկամուտը) դիմաց, որն անձը ստանում էր կամ կարող էր ստանալ: Հետևաբար՝ պետք է ստեղծվեն համապատասխան կառուցակարգեր նշված փոխհատուցման վճարումը՝ օրենքով նախատեսված մայրության նպաստ ստանալու իրավունք ձեռք բերելու համար պայմաններին բավարարելու պարագայում, ամեն դեպքում ապահովելու համար:

Այսպիսով, սահմանված նպաստի վերահաշվարկման հնարավորություն այն դեպքում, երբ անձը օրենքով սահմանված պայմաններին բավարարում է և օրենքով սահմանված կարգով ու չափով եկամտային հարկ (շահութահարկ) է վճարել, սակայն բաց են թողնվել համապատասխան դիմում ներկայացնելու ժամկետները:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ անհրաժեշտ է համապատասխան օրենսդրական փոփոխությունների միջոցով սահմանել մայրության նպաստի վերահաշվարկման համար այնպիսի կարգավորումներ, որոնք հիմք կտան համատեղությամբ աշխատանքի դիմաց մայրության նպաստի՝ որպես պակաս վճարված նպաստի գումարի վճարման համար՝ առանց ժամկետի սահմանափակման:

1.8 Երեխայի ծննդյան միանվագ նպաստը

Պաշտպանին ուղղված բողոքներում բարձրացվել է երեխայի ծննդյան միանվագ նպաստի մերժման հարցը պայմանավորված վճարման դիմումը օրենսդրությամբ նախատեսված ժամկետներում չներկայացնելով:

«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով սահմանված է, որ երեխայի ծննդյան միանվագ նպաստի իրավունք ունեն երեխայի (որի ծննդյան կապակցությամբ ծագել է ծննդյան միանվագ նպաստի իրավունքը) ծնողը, որդեգրողը կամ խնամակալը: Երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակվում և վճարվում է, եթե ծնողը և նոր ծնված երեխան հաշվառված են Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով, և նոր ծնված երեխայի ծննդի պետական գրանցումն իրականացրել է Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը կամ ծնողը և նոր ծնված երեխան դիմելու օրվա դրությամբ գտնվում են Հայաստանի Հանրապետությունում (եթե նոր ծնված երեխայի ծննդի պետական գրանցումն իրականացրել է օտարերկրյա պետության իրավասու մարմինը): Սահմանված է նաև, որ երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակվում է, եթե դիմումը ներկայացվել է նոր ծնված երեխայի ծննդյան ամսվանից հետո՝ 12 ամսվա ընթացքում: Միաժամանակ օրենքը նախատեսում է, որ երրորդ և հաջորդ երեխայի ծնվելու դեպքում (եթե երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակվում է ընտանիքում ծնված երրորդ և հաջորդ երեխայի համար սահմանված չափով) երեխայի ծննդյան միանվագ նպաստի մի մասը վճարվում է սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի հետ ընտանեկան դրամագլխի սպասարկման պայմանագիր կնքած բանկում նոր ծնված երեխայի անվամբ բացված հատուկ հաշվին:

Մինչև 2017 թվականի դեկտեմբերի 6-ի «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-240-Ն օրենքի ընդունումը «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 9-րդ մասի 2-րդ կետը սահմանում էր, որ երեխայի ծննդյան միանվագ նպաստ ստանալու իրավունքը դադարում է, այդ թվում *երեխայի ծննդյան միանվագ նպաստ ստանալու իրավունք ունեցող ծնողին նպաստը նշանակելու ամսվան հաջորդող 12 ամսվա ընթացքում նպաստը չվճարելու դեպքում*:

Սակայն 2017 թվականի դեկտեմբերի 6-ին կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում նշված օրենքի 24-րդ հոդվածի 9-րդ մասի 2-րդ կետն այլ բովանդակություն է ստացել, մասնավորապես՝ ՀՕ-240-Ն օրենքով նշված 2-րդ կետը փոխվել է՝ «սույն օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասում նշված դեպքում»:

Օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն օրենքով սահմանված՝ չաշխատող անձի մայրության նպաստը և երեխայի ծննդյան միանվագ նպաստը (բացառությամբ 25-րդ հոդվածի 7-րդ մասում նշված գումարի) վճարվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով այն անձի անվամբ բացված միանվագ դրամական վճարների հաշվին մուտքագրելու միջոցով, որին նշանակվել է նպաստը: Եթե միանվագ դրամական վճարների հաշիվ բացելու համար անհրաժեշտ տվյալները բանկին փոխանցելու ամսվանից հաշված՝ 12 ամսվա ընթացքում, անձը չի ներկայացնում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 928.8-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջը, ապա միանվագ դրամական վճարների հաշվին մուտքագրված նպաստի գումարը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 928.8-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով և ժամկետում վերադարձվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե: Հարկ է նկատել, որ զուգահեռաբար համապատասխան լրացումներ են կատարվել նաև ՀՀ քաղաքացիական

օրենսգրքում։ Այսպիսով, օրենսդրական փոփոխությունների արդյունքում ավելի են որոշակիացվել օրենքի պահանջները՝ կապված երեխայի ծննդյան միանվագ նպաստի իրավունքի դադարման պայմանի հետ՝ նպաստի գումարը ստանալու համար համապատասխան բանկի հետ պայմանագիր կնքելու լրացուցիչ պարտավորություն դնելով ծնողի վրա։

Այսպես, մինչ օրենսդրական վկայակոչված փոփոխությունները կատարելը երեխայի ծննդյան միանվագ նպաստ ստանալու իրավունքի դադարեցումը կապվում էր այդ նպաստը ստանալու իրավունք ունեցող ծնողին նպաստը նշանակելու ամսվան հաջորդող 12 ամսվա ընթացքում նպաստը **չվճարելու** փաստի հետ։

Հարկ է նկատել, որ ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» թիվ 275-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի 25-րդ կետի համաձայն՝ նպաստի՝ ուղղակի վճարվող գումարն անկանխիկ եղանակով վճարելը գումարը ծնողի կամ նրա լիազորած անձի բանկային հաշվին փոխանցելն է։

Ուստի, «նպաստ չստանալը» որպես «նպաստ չվճարել» մեկնաբանելով՝ ծագում էր անձի՝ երեխայի ծննդյան միանվագ նպաստ ստանալու իրավունքի դադարեցման իրավաչափության հարցը, որն էլ 2017 թվականի դեկտեմբերի 6-ին կատարված օրենսդրական փոփոխություններով լուծվել է։ Մինչդեռ, մինչ օրենսդրական փոփոխությունը գործող իրավակարգավորումների սխալ մեկնաբանումը իրավակիրառ պրակտիկայում առաջացրել է խնդիրներ։

Այսպես, օրինակ, բողոքով անձը տեղեկացրել է, որ 2016 թվականի օգոստոս ամսին դիմել է Սոցիալական ապահովության պետական ծառայության տարածքային բաժին 3-րդ երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու նպատակով։ Նպաստը նշանակվելուց հետո նպաստի՝ ուղղակի վճարվող գումարը՝ 500.000 ՀՀ դրամ, փոխանցվել է իր անվամբ բացված հաշվեհամարին։ Մեկ տարի անց՝ 2017 թվականի սեպտեմբեր ամսին, համապատասխան բանկում ցանկացել է կանխիկացնել նշված գումարը, սակայն մերժվել է։ Սոցիալական ապահովության պետական ծառայությունից վերջինիս պարզաբանել են, որ երեխայի ծննդյան միանվագ նպաստ ստանալու իրավունքը դադարել է՝ երեխայի ծննդյան միանվագ նպաստ ստանալու իրավունք ունեցող ծնողին նպաստը նշանակելու ամսվան հաջորդող 12 ամսվա ընթացքում նպաստը չվճարելու պատճառով։

Փաստորեն, ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» թիվ 275-Ն որոշման հավելված 1-ով սահմանված կարգի 17-րդ կետի համաձայն՝ ներկայացված փաստաթղթերի և առկա տեղեկատվության հիման վրա տարածքային բաժինը տասն աշխատանքային օրվա ընթացքում որոշում է՝

1) մերժել նպաստ նշանակելը և դրա մասին տեղեկացնել ծնողին (ծնողին տեղեկացնել լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու անհրաժեշտության մասին).

2) նշանակել և վճարել նպաստը։

Կարգի 25-րդ կետի համաձայն՝ նպաստի՝ ուղղակի վճարվող գումարն անկանխիկ եղանակով վճարելը գումարը ծնողի կամ նրա լիազորած անձի բանկային հաշվին փոխանցելն է։

Նշվածից հետևում է, որ նպաստի՝ ուղղակի վճարվող 500.000 դրամ գումարը Սոցիալական ապահովության պետական ծառայության կողմից վճարվել է՝ դիմողի անվամբ բացված հաշվեհամարին փոխանցելու պահից: Միաժամանակ վերոնշյալից հետևում է, որ անձը նպաստի նշանակման համար կատարել է օրենքով նախատեսված պահանջը, այն է՝ դիմել նոր ծնված երեխայի ծննդյան ամսվանից հետո՝ 12 ամսվա ընթացքում:

Փաստորեն, նպաստի նշանակումն իրականացվել է, վճարումը բանկ փոխանցելու միջոցով ևս իրականացվել է, բայց, քանի որ անձը 12 ամսվա ընթացքում չի դիմել այն ստանալու համար, զրկվել է նպաստի իրավունքից:

Այսպիսով, չվճարված նպաստի գումարը ենթակա է վճարման օրենսդրության ոչ որոշակի դրույթների պարագայում, քանի որ անձի վրա օրենսդրությամբ հստակ պարտավորություն չի եղել նպաստի նշանակումից 12 ամսվա ընթացքում դիմել բանկ և ստանալ այդ գումարը: Առավել ևս, որ նոր իրավակարգավորումների համաձայն ծնողի պարտավորությունը վերաբերում է բանկին համապատասխան պահանջ ներկայացնելը, այն է՝ բանկի հաճախորդի իրավունք ձեռք բերելու պահանջ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է իրականացնել՝ մինչև նոր իրավակարգավորումների գործելը (01.01.2018թ.), իրավակիրառ պրակտիկայում վերոշարադրյալ խնդրով պայմանավորված նշանակված, սակայն չվճարված երեխայի միանվագ նպաստի գումարների վճարումը:

2. Սոցիալական աջակցության իրավունք

2.1 Ընտանիքների անապահովության գնահատման համակարգը

2017 թվականի ընթացքում շարունակվել են բարձրաձայնվել ընտանիքների անապահովության գնահատման համակարգում առկա խնդիրների, այդ թվում՝ ընտանիքի անապահովության միավորի հաշվարկման բանաձևի թերությունների, ինչպես նաև համակարգում առկա ոչ բավարար վարչարարության իրականացման մասին: Դիմումներով ներկայացված տվյալների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ շահառուները հաշվառման, հաշվառման հասցեում չբնակվելու կամ մշտական բնակության վայր չունենալու և այլ պատճառներով չեն ընդգրկվում անապահովության համակարգում: Մասնավորապես, վերջիններս, կյանքի դժվարին իրավիճակից ելնելով, ստիպված են լինում պարբերաբար փոխել իրենց բնակության վայրը, որի արդյունքում չեն ընդգրկվում անապահովության համակարգում: Խնդիրն առավել ակներև է դառնում, երբ քաղաքացիները, հատկապես ձմռան ամիսներին ստիպված են լինում փոխել բնակության վայրը:

Բողոքներ են հասցեագրվում նաև անապահովության միավորը սխալ հաշվարկելու արդյունքում անապահովության նպաստի իրավունք ձեռք չբերելու կամ զրկվելու վերաբերյալ: Խնդիրը կայանում է նրանում, որ ընտանիքների անապահովության գնահատումն իրականացվում է ինքնաշխատ եղանակով՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգի տեղեկատվական բազայում ներառված տվյալների հիման վրա: Միայն կիրառողներն են կարողանում իրականացնել անապահովության միավորի հաշվարկման գործընթացը:

Տարիներ շարունակ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հաշվառման հասցեում բնակվելու կամ մշտական բնակության վայր ունենալու պահանջի հիմնավորվածությունը փաստարկում է անապահովության նպաստների հասցեականության սկզբունքով, մինչդեռ, այն արդարացված չէ այն պարզ պատճառով, որ հատկապես միայնակ, տարեց, մշտական խնամքի կարիք ունեցող անձանց չեն տրամադրվում այլընտրանքային բավարար խնամքի ծառայություններ: Վերոգրյալով պայմանավորված անձինք կարիքն առաջանալու պարագայում ստիպված չեն փոխում իրենց բնակության վայրը՝ նպաստի իրավունքից չզրկվելու նպատակով:

Այսպես, 2017 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բողոքներում բարձրաձայնվել է հաշմանդամություն ունեցող անձանց, անժառանգ, միայնակ կենսաթոշակառուների սոցիալապես անապահով վիճակում գտնվելու պարագայում անապահովության նպաստներից չօգտվելու խնդիրը:

«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ ընտանիքի անապահովության աստիճանը գնահատելիս ընտանիք է համարվում միևնույն բնակության վայրում հաշվառված (փաստացի բնակվող) քաղաքացիների սոցիալական փոքր խումբը, որի անդամները վարում են ընդհանուր տնտեսություն և ունեն ընդհանուր բյուջե, ինչպես նաև միայնակ բնակվող քաղաքացին: Օրինակ, բողոքներից մեկով, միայնակ բնակվող քաղաքացին որոշակի խնամքի կարիք ունենալու պատճառով մշտապես չի բնակվում իր հաշվառման հասցեում և միաժամանակ չի ցանկանում դուրս գալ իր միակ սեփականություն հանդիսացող բնակարանի հաշվառումից, անգամ հաշվառումից դուրս գալը և իրեն խնամող անձի հետ նույն բնակության վայրում հաշվառվելն առաջացնում են անապահովության գնահատման խնդիրներ և չի երաշխավորում նպաստի իրավունքի ձեռքբերումը:

Միաժամանակ, Պաշտպանի ուղղված մեկ այլ դիմումով նշվել է, որ անձի նպաստի իրավունքի ձեռքբերումը մերժվել է ֆինանսական աջակցություն ստանալու պատճառաբանությամբ: Դիմում ներկայացված անձի պնդմամբ դա չի համապատասխանում իրականությանը:

Այստեղ է, որ չարաշահումների ռիսկը բխում է գործընթացում առկա մարդկային գործոնից, ինչն էլ հաճախ հանգեցնում է կոռուպցիոն ռիսկերի: Մասնավորապես խնդիրը վերաբերում է տեսուչների կողմից տնային այցելություններ իրականացնելուն: Այս դեպքում չեն գործում պատշաճ վերահսկման մեխանիզմներ՝ գնահատելու անապահովության գնահատման գործընթացին անմիջականորեն մասնակցող տեսուչի գործողությունները: Հետագայում չարաշահումներ հայտնաբերելիս պատասխանատվությունն ամբողջությամբ ընկնում է նպաստառու վրա և վերջինս զրկվում է ընտանեկան կամ սոցիալական նպաստ ստանալու իրավունքից:

Միաժամանակ, ընտանիքի սոցիալական նպաստի իրավունքի դադարեցման հիմք է «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված՝ սոցիալական նպաստն անընդմեջ 3 ամիս անհարգելի պատճառով չստանալը: Օրենսդիրն անհարգելի պատճառների գնահատումը թողել է կիրառողներին, ինչը հնարավորություն է տալիս տարատեսակ չարաշահումների և երկակի մոտեցումների կիրառման: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պարզաբանմամբ՝ 2017 թվականի ընթացքում ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված

նպաստների՝ նպաստն անընդմեջ 3 ամիս անհարգելի պատճառով չստանալու հիմքով դադարեցված դեպքերի թիվը կազմել է 1973: Նպաստի դադարեցված իրավունքի վերականգնման դեպքեր, նախարարության ունեցած տեղեկատվությամբ, 2017 թվականին չեն եղել, ուստի նաև հարգելի պատճառներ համարված դեպքերի նկարագրություն հնարավոր չէ ներկայացնել: Մինչդեռ պրակտիկայում բազմաթիվ են դեպքերը, երբ անձը տարբեր պատճառներով (վատառողջ է, բուժում է ստանում համապատասխան բուժհաստատությունում, կարճ ժամանակահատվածով բացակայել է երկրից և այլն) բացակայել է բնակության հասցեից և չի ստացել կամ չի վճարվել նպաստի գումարը:

Անապահովության գնահատման համակարգում հաճախ հաշվի են առնվում այնպիսի հանգամանքներ, որոնք իրապես չեն արտացոլում անձի անապահովությունը, մինչդեռ խոչընդոտում են անապահովության նպաստի իրավունք ձեռք բերելուն: Օրինակ, բողոքներից մեկով ընտանիքը գտնվում է սոցիալապես ծանր պայմաններում, սակայն տնտեսությունում առկա է շատ հին, շահագործման ոչ այնքան ենթակա ավտոմեքենա, ինչն էլ գնահատման բանաձևում նպաստի իրավունք ձեռք բերելու համար նվազեցնում է անապահովության միավորը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է բարձրացնել համակարգի հասցեականությունը և թափանցիկությունը, վերահսկողությունը տեսուչների նկատմամբ՝ չարաշահումների վերհանման, կանխման և պատասխանատվության ենթարկելու նպատակով:

2.2 Ավանդների հատուցումը

2017 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են բողոքներ, որոնք վերաբերում են ներդրված դրամական ավանդի դիմաց փոխհատուցում ստանալու գործընթացում վարչարարության սխալի հետևանքով վնասի հատուցման ժամկետների վերականգնման ընթացակարգերի բացակայությանը:

Մասնավորապես, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ուղղված բողոքներից մեկով ներկայացվել է, որ ներդրված դրամական ավանդի դիմաց փոխհատուցում ստանալու համար 2017 թվականի մարտի 3-ին անձը դիմել է սոցիալական աջակցության տարածքային բաժին, սակայն վերոնշյալ դիմումը քննարկվել է միայն հունիս ամսին: «Նորք տեղեկատվավերլուծական կենտրոն» ՓԲԸ-ից և սոցիալական աջակցության տարածքային բաժնից ստացված տեղեկատվության հիման վրա կատարված ուսումնասիրության համաձայն՝ սոցիալական աջակցության տարածքային բաժնի աշխատողն անձի տվյալներն ավանդների փոխհատուցման տեղեկատվական բազա մուտքագրելիս բացթողում է կատարել, ինչի պատճառով՝ ավանդների փոխհատուցման ամփոփ ցուցակում դիմողի հերթական համարը ձևավորվել է մոտ մեկ ամիս ուշացումով: Արդյունքում, 2017 թվականի օգոստոս ամսվա փոխարեն դիմողն ավանդի փոխհատուցման վճարումը նախատեսված էր իրականացնել 2017 թվականի սեպտեմբեր ամսին:

Ի պատասխան անձի ավանդի փոխհատուցման գումարն արտահերթ ստանալու մասին դիմումների՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից ստացել է մերժում այն հիմնավորմամբ, որ ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման վճարումներն իրականացվում են հերթականությամբ՝ համաձայն

ձևավորված ցուցակի՝ մեկամսյա պարբերականությամբ և ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրման գործընթացը կարգավորող իրավական ակտերով բացառություններ սահմանող որևէ դրույթ նախատեսված չէ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 95-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմինների կողմից իրականացվող վարչարարության հետևանքով անձանց պատճառված վնասը ենթակա է հատուցման: Նույն օրենքի 98-րդ հոդվածի համաձայն՝ եթե վնասը որևէ փաստացի դրության՝ ի վնաս անձի փոփոխության մեջ է, ապա պատասխանատվություն կրողը պարտավոր է վերացնել դրա առաջացրած հետևանքները՝ նախկին դրության, իսկ եթե դա անհնար կամ անարդյունավետ է, ապա դրան համարժեք այլ դրության վերականգնման միջոցով:

ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 23-ի թիվ 460-Ն որոշման 20-րդ կետը սահմանում է. «Հաշվի առնելով, որ ավանդատուի փոխհատուցում ստանալու պահանջի իրավունքը համարվում է անձի հետ անխզելիորեն կապված իրավունք, այն չի կարող անցնել այլ անձի (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 398-րդ հոդված), լինել գրավի առարկա (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 230-րդ հոդվածի առաջին մաս), մտնել ժառանգության զանգվածի մեջ (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1186-րդ հոդվածի երկրորդ մաս)»:

Վերոգրյալից հետևում է, որ անձի ավանդների դիմաց փոխհատուցման իրավունքը պատկանում է բացառապես այդ անձին, որի ժամանակին իրականացման չապահովումը կարող է նաև հանգեցնել ընդհանրապես իրավունքից զրկելուն:

Պաշտպանի աջակցությամբ՝ ներդրված ավանդի դիմաց փոխհատուցումը տրվել է նախկին վիճակը վերականգնելու սկզբունքով, այն է՝ անձի տվյալներն ընդգրկվել են ավանդների փոխհատուցման օգոստոս ամսվա վճարման ցուցակներում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրման գործընթացում անընդհատ իրականացնել ստուգումներ վարչարարության ցանկացած սխալի բացահայտման նպատակով՝ ապահովելու ավանդի դիմաց փոխհատուցման տրամադրման համար դիմում տալու և համապատասխան հաշվառման ցուցակներում ընդգրկվելու ժամկետների համապատասխանությունը:

2017 թվականին Մարդու իրավունքների պաշտպանը ստացել է բողոքներ՝ կապված ՀՀ-ում չբնակվելու պատճառաբանությամբ ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրման մերժման հետ: Օրինակ, անձը, դիմելով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին, հայտնել է, որ ՀՀ քաղաքացի է, նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրած դրամական ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու նպատակով դիմել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն: Ավանդների տրամադրումը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ ավանդների դիմաց փոխհատուցման ծրագրում հաշվառվելու համար անձը պետք է հաշվառված լինի իր փաստացի բնակության վայրի բնակչության պետական ռեգիստրում, քանի որ համաձայն ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 23-ի թիվ 460 որոշմամբ հաստատված հավելված 1-ի 6-րդ կետի 3-րդ ենթակետի՝ դիմումների հաշվառման գործընթացում սոցիալական աջակցության տարածքային բաժինը դիմումում նշված անձը հաստատող փաստաթղթի տվյալները համեմատում է բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական բազայի տվյալների հետ:

ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 23-ի թիվ 460-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի 1-ին կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք ունեն նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը, ներառյալ՝ խորհրդային ռուբլով դրամական ավանդ ներդրած Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 1444-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի ցանկում ընդգրկված համայնքներում՝ բնակչության պետական ռեգիստրում 2014 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ հաշվառված անձինք, այդ թվում, եթե ավանդը ներդրվել է մահացած ամուսնու կողմից՝ համատեղ ամուսնական կյանքի ընթացքում:

Վերոգրյալից հետևում է, որ մինչև 1931 թվականի դեկտեմբերի 31-ը, ներառյալ՝ ծնված անձանց ավանդների դիմաց փոխհատուցում տրամադրելու համար նշված հարաբերությունները կարգավորող իրավական ակտում ամրագրված չէ բնակչության պետական ռեգիստրում հաշվառված լինելու հստակ և որոշակի պահանջ, ինչը կարող է հիմք հանդիսանալ անձի այլ պետությունում հաշվառման հասցե ունենալու պարագայում ավանդի փոխհատուցումը մերժելու համար: Ավելին, լիազոր մարմնի ամրագրված պարտականությունը՝ դիմումում նշված անձի տվյալները համեմատել բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական բազայի տվյալների հետ, չի կարող մեկնաբանվել որպես պետական ռեգիստրի տեղեկատվական բազայում ՀՀ բնակության վայրի հաշվառման հասցեով հաշվառված լինելու պահանջ կամ պարտականություն*:*

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված համանման փաստական հանգամանքներով բողոքի կապակցությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից պարզաբանվել է, որ ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 23-ի թիվ 460-Ն որոշման մեջ առկա՝ տարընթերցման տեղիք տվող ձևակերպումների կապակցությամբ նախարարությունում աշխատանքներ են իրականացվում նշված որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու կապակցությամբ, որի համատեքստում կհստակեցվեն ավանդի փոխհատուցման ծրագրում հաշվառման գործընթացը, ավանդի փոխհատուցման նշանակման, վճարման և մերժման հիմքերը:

Այնուամենայնիվ, փաստացի բնակության վայրի բնակչության պետական ռեգիստրում հաշվառված չլինելու հանգամանքով պայմանավորված ավանդների դիմաց փոխհատուցում տրամադրելու մասին անձի դիմումը մերժելու ուղղակի հիմք ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 23-ի թիվ 460-Ն որոշմամբ սահմանված չէ, հետևաբար օրենսդրական գործող կարգավորումների համաձայն՝ անձի նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրած դրամական ավանդները ենթակա են փոխհատուցման:

Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն պարզաբանումների՝ «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սոցիալական աջակցության իրավունք ունի Հայաստանի Հանրապետությունում բնակվող յուրաքանչյուր ոք՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) ունեցող օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող, ինչպես նաև Հայաստանի

Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության դիրքորոշման համաձայն՝ եթե անձը հաշվառված չէ Հայաստանի Հանրապետությունում, ավանդի փոխհատուցման իրավունքը չի կարող իրացվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է ավանդի փոխհատուցման՝ ՀՀ-ում բնակության պայման հստակ սահմանված չլինելու պարագայում ապահովել այդ անձանց ավանդի դիմաց փոխհատուցման տրամադրումը:

3. Տարեցների իրավունքների պաշտպանությունը նրանց համար նախատեսված սոցիալական պաշտպանության հաստատություններում

Պետության սոցիալական քաղաքականությունը ենթադրում է սոցիալական ապահովման արդյունավետ համակարգի կազմակերպում, որը կապահովի հանրության յուրաքանչյուր անդամի համար բավարար կենսամակարդակ և միաժամանակ կներառի պետության կողմից իրականացվող համալիր միջոցառումներ՝ ուղղված այն քաղաքացիների սոցիալական ապահովմանը, ովքեր անկարող են աշխատել և հոգալ սեփական կարիքները:

Մարդու իրավունքների միջազգային սկզբունքները կոչ են անում լիարժեքորեն ճանաչել տարեց մարկանց իրավունքները, որը կապահովի տարեցների՝ որպես հասարակության խոցելի խավի առողջ և լիարժեք կյանքի իրավունքի իրացումը: Հետևաբար՝ երկրների ներքին օրենսդրությունը համապատասխան մեխանիզմներ պետք է մշակի ապահովելու և պաշտպանելու համար տարեցների հիմնական իրավունքները:

Կարևորելով տարեցների իրավունքների իրացման անհրաժեշտությունը՝ ՀՀ Սահմանադրության 84-րդ հոդվածով ամրագրված է, որ յուրաքանչյուր կարիքավոր և տարեց մարդ, օրենքին համապատասխան, ունի արժանապատիվ գոյության իրավունք: Չնայած վերոնշյալի, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից իրականացված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ տարեցների իրավունքների իրացման հարցում առկա են որոշ խնդիրներ:

Այսպես, տարեցներին սպառնացող մարտահրավերներից մեկը մասնագիտացված ծառայությունների՝ տուն-ինտերնատների, խնամքի տների և ամոքիչ (պալեատիվ) ծառայությունների համար անհրաժեշտ միջոցների անբավարարությունն է: Հայաստանի Հանրապետությունը՝ որպես սոցիալական պետություն, իրեն վերապահված սոցիալական աջակցությունն իրականացնում է տարբեր հաստատությունների, մասնավորապես՝ մանկատների, տուն-ինտերնատների և սոցիալական խոցելի խմբերի համար նախատեսված այլ հաստատությունների միջոցով:

2017 թվականի ընթացքում Պաշտպանի գործունեության կարևոր ուղղություններից է եղել տուն-ինտերնատներում ապրող տարեց մարդկանց նկատմամբ տարվող խնամքի գնահատումը: Տուն-ինտերնատներում բնակվող տարեցները հաճախ ունենում են համալիր խնամքի կարիք, բայց շատերն այնտեղ չեն միայն խնամք և բուժում ստանալու նպատակով: Որոշ տարեցների համար տուն-ինտերնատն իրենց տունն է, մշտական բնակության վայրը՝ անորոշ ժամանակով: Այս առումով շատ կարևոր է, որ ազգային, տարածքային և միջազգային օրենսդրությամբ ամրագրվեն համապատասխան

չափորոշիչներ՝ տարեցների իրավունքների պաշտպանությունը տուն-ինտերնատներում առավելագույնս ապահովելու նպատակով:

2017 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բողոքների, ինչպես նաև հարցերի սեփական նախաձեռնությամբ սկսված քննության պատշաճ ընթացքն ապահովելու և արձանագրված խնդիրներին հնարավոր և արդյունավետ լուծումներ տալու նպատակով ձևավորվել է մասնագիտական բարձր համագործակցություն Պաշտպանի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ինչպես նաև մի շարք այլ կառույցների, մասնավորապես բնակչության սոցիալական պաշտպանություն իրականացնող հաստատությունների միջև: Արդյունքում, ձևավորվել է համատեղ աշխատանքային խումբ, որի իրականացրած ուսումնասիրությունների ընթացքում քննարկման առարկա են դարձել ոլորտին առնչվող բազմաթիվ համակարգային խնդիրներ:

2017 թվականի ընթացքում պարբերաբար այցեր են կատարվել «Երևանի թիվ 1 տուն ինտերնատ» և «Գյումրու տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպություններ: Խնդիրները վեր են հանվել Պաշտպանի և Պաշտպանի աշխատակազմի աշխատակիցների տուն-ինտերնատներ պարբերաբար այցերի միջոցով: Այցելությունների, ինչպես նաև խնամյալներից ստացված բողոքների ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել և բարձրաձայնվել են հայտնաբերված խախտումներն ու թերությունները: Տուն-ինտերնատում բնակվող անձանց խնամքի պայմանների, նրանց իրավունքների և հիմնարար ազատությունների պահպանման վիճակի պատշաճ ուսումնասիրությամբ պայմանավորված Պաշտպանի աշխատակազմում սկսվել է սեփական նախաձեռնությամբ հարցի քննարկման ընթացակարգ: Մասնավորապես՝ քննարկման առարկա է դարձել տուն-ինտերնատներում խնամքի համապատասխանությունը սահմանված նվազագույն չափորոշիչներին:

Այսպես, Պաշտպանի աշխատակազմի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համատեղ աշխատանքի արդյունքում Նախարարության ենթակայությամբ գործող թիվ 1 տուն-ինտերնատում 2017 թվականի ընթացքում լուծվել են արձանագրված հետևյալ խնդիրները՝

ա) առողջական խնդիրներ ունեցողներին տրվել են մասնագիտացված բուժհիմնարկների ուղեգրեր,

բ) անհրաժեշտության դեպքում կազմակերպվել է խնամվող անձանց համապատասխան բուժհաստատություններ տուն-ինտերնատի աշխատակիցների կողմից ուղեկցումը

գ) լուծվել է դեղորայքի մատակարարման հարցը, դեղերը խնամյալներին տրամադրվում են ըստ բժշկի նշանակման,

դ) ճաշը տրամադրվում է սահմանված ժամանակին, պատրաստվում է նաև դիետիկ սնունդ,

ե) հաստատությունում խնամվող անձինք արդեն առանց սահմանափակման օգտվում են լոգարանից, իսկ հրաժարվողների համար սահմանվել է գրաֆիկ,

զ) խնամվող անձանց տրամադրվում է հագուստ, կոշիկ, հողաթափ, անկողնային և սանիտարահիգիենիկ պարագաներ,

է) հոգեբանին հատկացվել է առանձնասենյակ,

ը) հաստատության գրադարանը համալրվել է նոր գրքերով,

թ) ձեռք են բերվել նոր լվացքի մեքենաներ,

ժ) բոլոր մասնաշենքերում տեղադրվել են դիմում-բողոքների համար արկղիկներ:

Այս ամենով հանդերձ՝ տուն-ինտերնատում դեռևս չլուծված են մնում մի շարք խնդիրներ. մասնավորապես Երևանի թիվ 1 տուն-ինտերնատում անհրաժեշտ է՝

ա) իրականացնել համապատասխան մասնաշենքերի վերանորոգում,

բ) բնակելի բոլոր սենյակների տաք ջրով ապահովում,

գ) խոհանոցի օդափոխության համակարգի ապահովում,

դ) ապահովել հոգեբույժների փորձագիտական խմբի այց տուն-ինտերնատ:

2017 թվականի ընթացքում Պաշտպանը և Պաշտպանի աշխատակազմի աշխատակիցներն այցելել են նաև «Գյումրու տուն-ինտերնատ», որի ընթացքում իրականացվել է տուն-ինտերնատում բնակվող անձանց խնամքի պայմանների, նրանց իրավունքների և հիմնարար ազատությունների պահպանման վիճակի ուսումնասիրություն: Այցի ընթացքում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում արձանագրված խնդիրների հիման վրա արվել են հետևյալ առաջարկները.

- ապահովել յուրաքանչյուր խնամվողի համար անհատական բնակելի տարածք՝ մեկ խնամվողի հաշվարկով 5 քառ. մետր ոչ պակաս
- կազմակերպել վերանորոգման և բարեկարգման աշխատանքներ հագուստի պահեստում, դերձակի և վարսավիրի սենյակներում, համալրել անհրաժեշտ գույքով
- ճաշարանի օդափոխությունը կազմակերպել օդափոխիչների միջոցով
- սենյակները և սանհանգույցները հարմարեցնել հաշմանդամություն ունեցող անձանց համար
- բնակելի բոլոր սենյակներում ապահովել տաք ջրի առկայությունը
- հետևել անկողնային պարագաների մաքրությանը
- քայլեր ձեռնարկել տուն-ինտերնատում խնամվողներին հագուստով, կոշիկներով (հողաթափերով) ժամանակին ապահովելու ուղղությամբ
- հոգեբանի համար տրամադրել առանձնասենյակ տուն-ինտերնատում խնամվողների հետ արդյունավետ և անկաշկանդ աշխատելու նպատակով
- քայլեր ձեռնարկել սայլակ չունեցող խնամվողներին սայլակով ապահովելու ուղղությամբ:

Պաշտպանի աշխատակազմի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համատեղ աշխատանքի արդյունքում Գյումրու տուն-ինտերնատում առկա խնդիրների մի մասն արդեն լուծվել է, իսկ մյուս խնդիրների լուծման նպատակով Նախարարության հավաստմամբ՝ հնարավոր սեղմ ժամկետներում և իր իրավասությունների ու հնարավորությունների շրջանակներում կձեռնարկվեն համապատասխան քայլեր:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ տուն-ինտերնատում բնակվող անձանց կենսապայմանները բարելավելու նպատակով առաջարկվում է.

1. միջազգային չափանիշներին համապատասխան ապահովել բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունները նյութակենցաղային բավարար պայմաններով.

2.հագեցնել միջոցառումների շարունակականությունն ու հետևողականությունը՝ խնամյալներին համապատասխան հագուստով, կոշիկով, սնունդով ապահովելու համար.

3.շենքերում կատարել շարունակական վերանորոգման աշխատանքներ:

4. Սոցիալական ապահովության իրավունքը աշխատավայրում դժբախտ պատահարների, հիվանդության դեպքում

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի զեկույցներում և հաղորդմամբ տարիներ շարունակ բաձրաձայնվում է աշխատավայրում դժբախտ պատահարների, մասնագիտական հիվանդության դեպքում սոցիալական ապահովության իրավունքի սահմանափակման խնդիրը: Խնդրին անդրադարձ է կատարվել հաշվի առնելով «ՀՀ քաղավիացիայի հաշմանդամ օդաչուների» հասարակական կազմակերպության դիմումները, որոնք վկայում են այն մասին, որ 2004 թվականին տեղի ունեցած օրենսդրական փոփոխությունների արդյունքում մի շարք անձինք զրկվել են աշխատավայրում դժբախտ դեպքերի, մասնագիտական հիվանդությունների հետևանքով կյանքին և առողջությանը պատճառված վնասի հատուցում ստանալու իրավունքից:

Խնդիրն այն է, որ ՀՀ կառավարության 2004 թվականի հուլիսի 22-ի N 1094-Ն որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 1992 թվականի նոյեմբերի 15-ի N 579 որոշմամբ հաստատված կանոնների 16-րդ կետը, որի համաձայն՝ կազմակերպության լուծարման կամ վերակառուցման հետևանքով նրա գործունեության դադարեցման դեպքում վնասը փոխհատուցում է (վնասի փոխհատուցումը շարունակում է) նրա իրավահաջորդը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ սոցիալական ապահովության մարմինը՝ պետական բյուջեի հաշվին: Տվյալ փոփոխության արդյունքում փոխհատուցում ստանալու երաշխիքը վերացվել է այն դեպքերի համար, երբ պատճառված վնասի համար պատասխանատու կազմակերպությունները լուծարվել են 2004 թվականի օգոստոսի 1-ից հետո:

Պետք է նշել, որ սահմանված կարգով պատասխանատու ճանաչված իրավաբանական անձի լուծարման կամ սնանկ ճանաչման դեպքում համապատասխան վճարների կապիտալացման և դրանք տուժողին վճարելու կարգը սահմանվել է ՀՀ կառավարությունը 2009 թվականի հուլիսի 23-ի թիվ 914-Ն որոշմամբ, որը սակայն կարգավորում է միայն դրա ընդունումից հետո նման հնարավոր դեպքերը:

Միջազգային փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նման դեպքերում հստակ պետք է ապահովվի անձի սոցիալական երաշխիքներից օգտվելու իրավունքը, պետության կողմից հստակ կանոնակարգեր պետք է սահմանվեն այդ իրավունքների իրականացման ապահովման նպատակով: Այսպես, «Արտադրական պատահարների դեպքում աշխատողներին փոխհատուցելու մասին» 1925 թվականի կոնվենցիայի[10] 11-րդ հոդվածի համաձայն՝ ազգային օրենսդրությունը, հաշվի առնելով ազգային առանձնահատկությունները, նախատեսում է այնպիսի դրույթներ, որոնք գործատուի կամ ապահովագրողի անվճարունակության դեպքում բոլոր հանգամանքներում առավել համարժեք կերպով կապահովեն փոխհատուցման վճարումը պատահարից տուժածներին կամ, մահվան դեպքում, նրանց խնամքի տակ գտնվող անձանց:

Աշխատանքի միջազգային կազմակերպության՝ Կոնվենցիաների և հանձնարարականների կիրառման գնահատման փորձագիտական կոմիտեն ՀՀ կողմից

[10] Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2004 թվականի դեկտեմբերի 17-ին:

վերոնշյալ կոնվենցիայի 11-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ իր՝ 2015 թվականի դիտարկումներում նշել է հետևյալը. «Ի պատասխան նախորդ դիտարկմանը, որը վերաբերում էր արտադրական դժբախտ պատահարների շուրջ 800 զոհերի փոխհատուցման բացակայությանը, որոնք առաջ են եկել 2004-ից 2009 թվականների ընթացքում՝ ՀՀ կառավարության 2004 թվականի հուլիսի 22-ի N 1094-Ն որոշման ընդունումից հետո, ՀՀ կառավարությունը հղում չի կատարում այն օրենսդրական դրույթներին, որոնք կիրառվում են այն իրավաբանական անձանց լուծարման կամ սնանկացման դեպքում, որոնք պատասխանատու են կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման համար, այնուամենայնիվ, կցելով 2014 թվականի հուլիսի 25-ի ՀՀ արհմիությունների կոնֆեդերացիայի նամակը, որում նշվում է, որ պետության կողմից նշված խնդրի վերաբերյալ դեռևս ոչ մի միջոց չի ձեռնարկվել, Կոմիտեն մեկ անգամ ևս խնդրում է կառավարությանը նշել, թե ինչպիսի կիրառություն է ունենում Կոնվենցիայի այս դրույթը վերոնշյալ դեպքերում:»:

Միաժամանակ, «Գործատուի անվճարունակության դեպքում աշխատողների պահանջների պաշտպանության մասին» 1992 թվականի կոնվենցիայի 9-րդ հոդվածի համաձայն՝ գործատուի անվճարունակության դեպքում աշխատողների պահանջների պաշտպանությունն իրականացնում են երաշխիքային հաստատությունները:

Այսինքն՝ բոլոր նշյալ փաստաթղթերն ամրագրում են օրենսդրական հստակ և գործուն մեխանիզմների առկայություն, մինչդեռ այսպիսին Հայաստանում ներդրված չէ, իսկ նախկին մեխանիզմի ուժը կորցնելու պարագայում առաջացած բացի արդյունքում անձինք փաստացի զրկվում են իրենց իրավունքն իրացնելու հնարավորությունից:

Հաշվի առնելով վերոգրյալն՝ անհրաժեշտ է՝

1. 2004 թվականից հետո լուծարված կամ սնանկ ճանաչված իրավաբանական անձանց, այդ թվում՝ «Հայկական Ավիառուղիներ» ՓԲԸ-ի աշխատակիցներին տրամադրել աշխատավայրում դժբախտ դեպքերի, մասնագիտական հիվանդությունների հետևանքով կյանքին և առողջությանը պատճառված վնասի հատուցում.

2. սահմանել աշխատանքի վայրում աշխատողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասը (դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների դեպքում) հատուցելու հստակ կարգ՝ գործատու կազմակերպության լուծարված լինելու դեպքում:

ԳԼՈՒԽ 2. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Յուրաքանչյուրի՝ օրինական հիմքով ձեռք բերված սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածով, ինչպես նաև մի շարք միջազգային փաստաթղթերով, այդ թվում՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով:

2017 թվականին արձանագրվել են դեպքեր, որոնց ուսումնասիրությունը վկայում է սեփականության իրավունքի պաշտպանության հարցում առկա որոշ համակարգային խնդիրների մասին, որոնք ներկայացվում են ստորև:

1. Ճանապարհային երթևեկության կանոնի խախտման դեպքում տուգանքը տրանսպորտային միջոցի սեփականատիրոջն ուղարկելը

Դեռևս 2015 թվականից Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցներում և հաղորդմամբ բարձրաձայնվել է տեսանկարահանող սարքերի արձանագրած տեսանյութերի հիման վրա արձանագրված վարչական իրավախախտումների վերաբերյալ կայացված որոշումները ավտոմեքենան փաստացի տիրապետող և օգտագործող անձանց չուղարկելու հարցը: Խնդիրն այն է, որ 2015 թվականի դեկտեմբերի 21-ին Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի փոփոխությունների արդյունքում (ՀՕ-178) օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվեց, որ այն դեպքերում, երբ ճանապարհային երթևեկության կանոնի խախտումն ամրագրվել է տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով, ապա սույն օրենսգրքով նախատեսված վարչական պատասխանատվությունը կրում է տրանսպորտային միջոցի սեփականատերը, իսկ եթե տրանսպորտային միջոցը հանդիսանում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ սեփականություն, ապա՝ համապատասխանաբար, իրավաբանական անձի ղեկավարը կամ անհատ ձեռնարկատերը, եթե վերջիններս չեն ապացուցում, որ խախտումը կատարվել է այլ անձի կողմից: Արդյունքում, վարչական իրավախախտումների վերաբերյալ կայացված որոշումներով նշանակված տուգանքները ուղարկվում են ավտոմեքենայի սեփականատիրոջն անգամ այն պարագայում, երբ այն օգտագործման է տրվել մեկ այլ անձի և տարիներ շարունակ շահագործվել վերջինիս կողմից:

Ինչպես պարզ է դառնում օրենքի վերոնշյալ դրույթների վերլուծությունից, նշված խնդիրն արդիական է ֆիզիկական անձանց և մասնավոր իրավաբանական անձանց պատկանող ավտոմեքենաների պարագայում, քանի որ հարցն օրենսդրորեն կարգավորված է պետական և համայնքային կազմակերպություններին պատկանող տրանսպորտային միջոցների համար: Նշված դեպքում «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանվում է, որ եթե իրավախախտումը կատարվել է պետական (պետական մարմին, պետական

կառավարչական հիմնարկ, պետական հիմնարկ կամ որևէ այլ կարգավիճակ ունեցող պետական կազմակերպություն) կամ համայնքային (համայնքային կառավարչական հիմնարկ կամ որևէ այլ կարգավիճակ ունեցող համայնքային կազմակերպություն) կազմակերպությանն ամրացված (պատկանող) տրանսպորտային միջոցով, բացառությամբ նշված հոդվածի 6-րդ մասով նախատեսված տրանսպորտային միջոցների, ապա վարչական ակտի հասցեատիրոջը պարզելու նպատակով վարչական մարմինը, իրավախախտման հատկանիշները պարզելուց հետո՝ հինգ օրվա ընթացքում, գրավոր հարցում է կատարում համապատասխան կազմակերպությանը (հարցումը կարող է ուղարկվել նաև կազմակերպության պաշտոնական էլեկտրոնային փոստին):

Գործնականում թե՛ ֆիզիկական անձը, թե՛ իրավաբանական անձը հնարավորություն ունեն համապատասխան դիմումի հիման վրա պահանջելու տուգանքի վերահասցեագրում: Այսպես, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով անձի կողմից բավարար ապացույցների ներկայացման պարագայում վարչական ակտը կվերահասցեագրվի համապատասխան անձին: Սակայն հարկ է ամրագրել, որ խնդիրը կոնկրետ դեպքով սեփականատիրոջ՝ խախտումն այլ անձի կողմից կատարելն ապացուցելու հնարավորության առկայությունը չէ, այլ այն, որ օրինակ՝ թե՛ երկարաժամկետ վարձակալության դեպքերում, թե՛ իրավաբանական անձի պարագայում տրանսպորտային միջոցը այդ կազմակերպության աշխատակցին ամրակցելու դեպքերում մեքենայի սեփականատիրոջ վրա դրվում է հավելյալ բեռ, այն է՝ ապացուցել յուրաքանչյուր խախտումն այլ անձի կողմից կատարած լինելու փաստը:

Ուստի՝ անհրաժեշտ է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում կատարել փոփոխություն, որով հնարավորություն կընձեռվի իրավաբանական անձի կամ ֆիզիկական անձին պատկանող ավտոտրանսպորտային միջոցը համապատասխան փաստաթղթի (օրինակ՝ պայմանագրի) հիման վրա մեկ այլ անձի կողմից երկարաժամկետ օգտագործման պարագայում տուգանքը նշանակել տրանսպորտային միջոցը փաստացի օգտագործող անձի տվյալներով:

2. «Կրեդիտորական պարտք» և «դեբիտորական պարտք» եզրույթների հասկացությունները կառավարության որոշմամբ սահմանելու և ըստ այդմ՝ օրենքով չնախատեսված կարգով սեփականության իրավունքին միջամտությունը

2017 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված դիմումների քննարկման արդյունքում պարզվել է, որ հարկային ոլորտը կարգավորող «կրեդիտորական պարտք» և «դեբիտորական պարտք» եզրույթների սահմանումը տրված է ոչ թե «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով[11], այլ «Կազմակերպությունների (բացառությամբ բանկերի և ապահովագրական ընկերությունների) դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի (պահուստաֆոնդի) ձևավորման, դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի անհուսալի ճանաչման և դուրսգրման կարգը հաստատելու մասին» 2002 թվականի դեկտեմբերի 19-ի ՀՀ կառավարության թիվ 2052-Ն որոշմամբ[12]: Խնդրի ուսումնասիրության և վերլուծության արդյունքում վեր է

[11] Սույն բաժնում այսուհետ՝ Օրենք
[12] Սույն բաժնում այսուհետ՝ Որոշում

հանվել այն փաստը, որ «կրեդիտորական պարտք» և «դեբիտորական պարտք» եզրույթների հասկացությունները կառավարության որոշմամբ սահմանելը չի բխում Օրենքից, ինչը հանգեցնում է Օրենքով չնախատեսված կարգով սեփականության իրավունքի միջամտության:

Այսպես, օրենսդիրը, օգտագործելով «կրեդիտորական պարտք» (Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի «դ» ենթակետ) և «անհուսալի կրեդիտորական պարտք» (Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի «ժե» կետ) եզրույթները, Օրենքում չի բացահայտում դրանց բովանդակությունը: Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի «ժե» կետը նախատեսում է, որ Հայաստանի Հանրապետության կառավարության, իսկ բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների դեպքում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համատեղ սահմանած կարգով պետք է սահմանվի անհուսալի կրեդիտորական պարտքերի գումարների *դուրսգրման կարգը*, իսկ Որոշմամբ, այնուամենայնիվ, տրվել է նաև վերոնշյալ տերմինների սահմանումը: Սակայն ինչպես նշվել է, այն դուրս է Օրենքով դելեգացված կարգավորման առարկայից: Արդյունքում, Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի «ժե» ենթակետում օգտագործվող «կրեդիտորական պարտք» եզրույթը պրակտիկայում կիրառվում է Որոշմամբ «կրեդիտորական պարտք» եզրույթին տրված իմաստով:

Մյուս կողմից, Որոշման Հավելված 1-ի 3-րդ կետի «բ» ենթակետով որպես կրեդիտորական պարտք է դիտարկվում նաև շահաբաժինների գծով կազմակերպության կողմից այլ անձանց (կրեդիտորներին) վճարման (այլ ձևով հատուցման) ենթակա պարտքի գումարը: Սակայն անհրաժեշտ է ևս մեկ անգամ հստակ ընդգծել, որ Օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ վճարման ենթակա շահաբաժնի գումարը հանդիսանում է *ծախս չհամարվող տարր, ուստի որևէ ազդեցություն չի ունենում հարկվող շահույթի որոշման ժամանակ*: Արդյունքում, ստացվում է, որ այս գումարը, Օրենքով չդիտարկվելով որպես ծախս, որևէ ազդեցություն չունենալով հարկվող շահույթի որոշման գործընթացում, Որոշմամբ դրան տրված մեկնաբանության պարագայում կարող է դիտարկվել որպես անհուսալի կրեդիտորական պարտք և հարկվել:

Խնդրի ուսումնասիրության արդյունքում վեր է հանվել նաև այն հանգամանքը, որ նշված միջամտությունը չի բխում հանրային շահից ևս, մասնավորապես՝ հարկ վճարելու սահմանադրական պարտականության ապահովման սկզբունքից, քանի որ օրենքի ուժով պետությունը՝ ի դեմս հարկային մարմնի, «հետաքրքրված չէ» հարկային հաշվառման ոչ ենթակա ծախս չհամարվող տարրերով (դրանից համախառն եկամուտը չի նվազում, այն որևէ ազդեցություն չի ունենում հարկի գումարի վրա), դրանք չեն հաշվառվում որպես կրեդիտորական պարտքեր, և հետևաբար չեն կարող դուրս գրվել որպես անհուսալի կրեդիտորական պարտքեր:

Ավելին, Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է անհուսալի դեբիտորական պարտքերի դուրսգրման համար Հայաստանի Հանրապետության կառավարության *սահմանած կարգով՝* պահուստաֆոնդին կատարվող մասհանումների, իսկ այդ պարտքերի դուրսգրման դեպքում՝ այդ նպատակով ստեղծված պահուստաֆոնդին կատարված մասհանումների գերազանցող գումարի չափով: Որոշման Հավելված 1-ի 14-րդ կետով սահմանվում է, որ

նույն կարգով սահմանված դեբիտորական պարտքը ճանաչվում է անհուսալի կետանցված դառնալու 366-րդ օրվանից, եթե դեբիտորի պարտքի ընդհանուր գումարը կազմակերպությանը չի գերազանցում 100 հազար դրամը, կամ *դեբիտորական պարտքի գումարը բռնագանձելու վերաբերյալ դատարանի համապատասխան վճռի առկայության դեպքում, եթե տվյալ դեբիտորի պարտքի ընդհանուր գումարը կազմակերպությանը գերազանցում է 100 հազար դրամը*:

Օրենքը նախ չի տալիս դեբիտորական պարտքի հասկացությունը, ապա նաև Որոշումը տնտեսվարողի վրա դնում է պարտականություն՝ 100 հազար դրամը գերազանցող գումարի մասով ունենալ դեբիտորական պարտքի գումարը բռնագանձելու վերաբերյալ դատարանի համապատասխան վճիռ: Հարկ է նկատել, որ քաղաքացիաիրավական հարաբերություններով պայմանավորված, բռնագանձման մասին վճիռ հնարավոր է առկա չլինի (անցել է հայցային վաղեմության ժամկետ կամ պարզվել է անվավերության որևէ հիմք): Նշված դեպքում անհուսալի դեբիտորական պարտքի չհաշվանցումը չի կարելի համարել արդարացված:

Նման կարգավորման դեպքում պետությունը հանրային իրավունքից բխող (հարկերի վճարումը ապահովելու) որևէ գործողություն չի կատարում: Չափանիշների և կարգի սահմանումը ինքնանպատակ չէ. այստեղ տրամաբանությունն այն է, որ պետությունը պետք է համոզվի, որ տնտեսվարողը անհիմն չի նվազեցնում գումարներ: Դրա համար անհրաժեշտ է նախ համոզվել, որ նույն գործարքի մասով նախկինում վճարվել են հարկերը, ապա նաև այն, որ չկա որևէ այլ հարկային իրավախախտում: Որոշմամբ ամրագրված բռնագանձման մասին վճռի պահանջը միանշանակ չի ապահովում հանրային և մասնավոր շահերի հավասարակշռություն:

Ավելին, անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն, որ դեբիտորական պարտքը անհուսալի չճանաչելու դեպքում կստացվի, որ նախորդ հաշվետու ժամանակաշրջաններում հարկային պարտավորության բացակայության պայմաններում կատարվել են վճարումներ ավելացված արժեքի հարկի և շահութահարկի գծով:

Անհրաժեշտաբար պետք է փաստել, որ 2018 թվականի հունվարի 1-ից ամբողջությամբ ուժի մեջ մտած ՀՀ հարկային օրենսգրքի 109-րդ հոդվածի 4-րդ մասի 11-րդ կետը կրկին ՀՀ կառավարությանը լիազորում է սահմանել անհուսալի դեբիտորական և կրեդիտորական պարտքերի դուրսգրման կարգ: Այսպիսով, կրկին առկա է վտանգ ՀՀ կառավարության կողմից կարգը սահմանելիս այլ հարցեր (իրավունքներ և պարտականություններ) կարգավորելու, ինչպես նաև օրենքի իմաստին հակասող հասկացություններ սահմանելու մասով:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Հարկային օրենսգրքում կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ՝ «կրեդիտորական պարտք» և «դեբիտորական պարտք» եզրույթների հասկացությունները օրենքով սահմանելու և ըստ այդմ՝ օրենքով չնախատեսված կարգով սեփականության իրավունքին միջամտության հնարավորությունը բացառելու համար:

3. Պետության կողմից բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու արդյունքում սեփականության իրավունքի սահմանափակումը

2017 թվականին շարունակում է արդիական մնալ նախորդ տարիների ընթացքում Պաշտպանի աշխատակազմում բազմիցս քննարկված և համապատասխան իրավասու պետական մարմիններին ներկայացված այն համակարգային խնդիրը, որը վերաբերում է ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով մի շարք բնակելի տարածքների նախկին բնակիչների տարածքները պետության կողմից բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու և 2007 թվականից սկսած նշված տարածքները ձեռքբերող տարբեր կազմակերպություններին օտարելու, սակայն մինչ օրս այդ կազմակերպությունների կողմից փոխհատուցում չտրամադրելու հարցին: Հարկ է նշել, որ «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանվում է , որ հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարումը պետք է իրականացվի օրենքով սահմանված կարգով և օտարվող սեփականության դիմաց պետք է տրվի նախնական համարժեք փոխհատուցում**:** «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված կարգավորումման համաձայն՝ սեփականությունը կարող է օտարվել՝ ձեռքբերողի և օտարման ենթակա սեփականության սեփականատիրոջ միջև կնքվող պայմանագրի համաձայն, և այս դեպքում կողմերի համաձայնությամբ են միայն որոշվում օտարվող սեփականության դիմաց տրվող համարժեք փոխհատուցման չափը, ձևը, կարգը, ժամկետները, պայմաններն ու կողմերի պատասխանատվությունը: Այդպիսով ընկերություններն առաջնորդվելով վերը նշված կարգավորմամբ՝ համապատասխան տարածքներում նախկինում բնակվող անձանց հետ կնքել են իրացված տարածքների փոխարեն կառուցվելիք բազմաբնակարան շենքերում բնակարաններ տրամադրելու վերաբերյալ պայմանագրեր: Մինչ օրս, սակայն, չեն տրամադրվել ոչ՛ բնակարանները և ոչ՛ էլ՝ համարժեք փոխհատուցումը:

Ինչպես նկատելի է, տվյալ դեպքում առկա է հակասություն երկու հոդվածներում ամրագրված նորմերի միջև, այն է՝ մի հոդվածում օգտագործվում է «նախնական համարժեք փոխհատուցում» եզրույթը, համաձայն որի՝ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ, մինչդեռ մյուս հոդվածում օգտագործվում է միայն «համարժեք փոխհատուցում» եզրույթը և փոխհատուցման տրման չափը, ձևը, կարգը, ժամկետները, պայմանները ու կողմերի պատասխանատվությունը որոշելը թողնված է կողմերի հայեցողությանը:

«Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» օրենքում օգտագործվող «փոխհատուցում» բառը ցանկացած հոդվածում պետք է օգտագործվի «նախնական համարժեք» բառերի հետ միասին: Մինչդեռ, օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասում «փոխհատուցում» բառն օգտագործվել է «համարժեք» ածականի հետ, իսկ «նախնական» բառն ընդհանրապես բացակայում է նշված հոդվածում:

Ընկերությունների և օտարված տարածքների նախկին բնակիչների միջև կնքված պայմանագրերի ուսումնասիրման արդյունքում պարզվել է, որ վերոնշյալ իրավանորմի հիման վրա կողմերի երկուստեք համաձայնությամբ որոշվել է դիմումատուներին

սեփականության իրավունքով պատկանող օտարվող գույքերի դիմաց տրամադրել հետագայում կառուցվելիք բազմաբնակարան շենքերում բնակարաններ: Այսինքն՝ պայմանագրով, ըստ էության, տարաժամկետվել է փոխհատուցման տրամադրումը հստակ կանխորոշված ժամկետով: Նշված ժամկետը սպառվել է, իսկ համարժեք փոխհատուցումը չի տրվել և պարզ էլ չէ, թե փոխհատուցումն ընդհանրապես կտրվի, թե ոչ:

Վերոնշյալի համատեքստում, 2008 թվականի մայիսի 13-ի թիվ ՍԴՈ-753 որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության *(res judicata)* սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ կտա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը:

Ուսումնասիրելով բողոքներում շարադրված հանգամանքները վերոնշյալ իրավական նորմերի լույսի ներքո՝ Պաշտպանը եկել է այն եզրահանգման, որ օտարված տարածքների նախկին բնակիչներին սեփականության իրավունքով պատկանող Կենտրոն վարչական շրջանի Արամի, Բուզանդի, Ֆիրդուսի, Հանրապետության, Խանջյան փողոցներում և Կոնդ թաղամասում գտնվող բնակելի տարածքները նախնական համարժեք փոխհատուցում պայմանի խախտմամբ՝ համապատասխան պայմանագրերով, օտարվել են 30 (երեսուն) ամսյա ժամկետում նորակառույց բազմաբնակարան շենքերում բնակարաններ, այն է՝ «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված նորմերի մեկնաբանման իմաստով համարժեք փոխհատուցում ստանալու օրինական ակնկալիքով, որը նույնպես մինչ օրս չի տրամադրվել:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով՝ գույք է համարվում ոչ միայն գոյություն ունեցող նյութական միջոցը, այլ նաև՝ նյութական միջոցը ձեռք բերելու օրինական ակնկալիքը[13]:

Այս հարցի վերաբերյալ իր իրավական դիրքորոշումն է արտահայտել նաև ՀՀ սահմանադրական դատարանը դեռևս 2008թ. մարտի 18-ի թիվ ՍԴՈ-741 որոշմամբ՝ հետևյալ ձևակերպմամբ. «Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 31 հոդվածով երաշխավորված սեփականության իրավունքի պաշտպանությունը տրամադրվում է այն անձանց, ում սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է կամ ովքեր օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք»: Իր այս դիրքորոշումը ՀՀ սահմանադրական դատարանը վերահաստատել է 2014թ. ապրիլի 2-ի թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ:

Վերոգրյալից հետևում է, որ քաղաքաշինական նպատակներով որպես բացառիկ՝ գերակա հանրային շահ հասարակության և պետության կարիքների համար վերոնշյալ տարածքների օտարումը չի բխում հանրության շահերից, քանի որ նախ՝ նշված տարածքներից շատերում որպես փոխհատուցում կառուցվող շինությունները (բազմաբնակարան շենքեր) չեն ծառայում իրենց նպատակին, քանի որ տարիներ շարունակ մնացել են կիսակառույց, իսկ տարածքները չհարդարված և երկրորդը՝ չեն

[13] Տե՛ս Տրգոն ընդդեմ Խորվաթիայի (Trgo v. Croatia) գործով 2009թ. հունիսի 11-ի վճիռ, գանգատ թիվ 35298/04:

բխում հանրության շահերից, քանի որ օտարված տարածքների նախկին իրավատերերը ստիպված են եղել տարիներ շարունակ բնակվել վարձակալական հիմունքներով, արդյունքում մինչ օրս չստանալով համարժեք փոխհատուցում:

Բարձրացված հարցի վերաբերյալ Պաշտպանին ներկայացրած բողոքների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ խնդրահարույց է նաև պետության սուբսիդիար պատասխանատվության հարցը, որը համաձայն «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասում ամրագրված նորմերի՝ ծագում է ձեռքբերողի կողմից միայն նույն հոդվածի առաջին մասում նշված որոշակի գործողությունների չկատարման դեպքում: Մինչդեռ Պաշտպանին ներկայացված բազմաթիվ բողոքների ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ ձեռքբերող կազմակերպությունների և օտարված բնակելի տարածքների իրավատերերի միջև կնքվել են պայմանագրեր, որոնց ուժով նշված կազմակերպությունները պարտավորվել են պայմանագրերում սահմանված ժամկետներում կառուցել բազմաբնակարան շենքեր և տրամադրել բնակարաններ, սակայն նշված շենքերի կառուցման աշխատանքները մինչ օրս մնացել են անավարտ, իսկ այդ մասով պետության սուբսիդիար պատասխանատվությունը սահմանված չէ:

«Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ եթե ձեռք բերողը նույն օրենքի 10-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետում օտարվող սեփականության սեփականատիրոջը և գույքային իրավունք ունեցողին չի ուղարկում օտարման պայմանագրի նախագիծը կամ օրենքի 12-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետում դեպոզիտ հաշվին չի հանձնում փոխհատուցման գումարը կամ օրենքի 13-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետում չի դիմում դատարան սեփականության օտարման հայցով կամ օրենքի 13-րդ հոդվածի վեցերորդ մասով սահմանված ժամկետում դեպոզիտ հաշվին չի փոխանցում դատարանի կողմից սահմանված փոխհատուցման լրացուցիչ գումարը, ապա համարվում է, որ ձեռքբերողը հրաժարվում է տվյալ սեփականությունը ձեռք բերելուց, և տվյալ սեփականության մասով բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին բոլոր իրավական փաստաթղթերը համարվում են անվավեր: Ձեռքբերողը պարտավոր է հատուցել նշված հոդվածի առաջին մասի պահանջների խախտման հետևանքով օտարվող սեփականության սեփականատերերին, ինչպես նաև այդ սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողներին պատճառված վնասները: Պետությունը սուբսիդիար պատասխանատվություն է կրում ձեռքբերողի կողմից նույն հոդվածի առաջին մասի պահանջների խախտման հետևանքով պատճառած վնասների համար:

Այսինքն՝ նշված հոդվածը պետության սուբսիդիար պատասխանատվության ոլորտը նեղացնում է, այն կապելով ձեռքբերողի կողմից որոշակի պարտականությունների չկատարման հետ, որը տվյալ դեպքում չի հանդիսանում պետության կողմից անձանց սեփականության իրավունքի պաշտպանության բավարար երաշխիք:

Վերոգրյալից հետևում է, որ «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքում բացակայում են նաև օտարման գործընթացի նկատմամբ պետական լիարժեք վերահսկողության մեխանիզմները:

ՄԻԵԿ-ի Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածն անհատներին կամ իրավաբանական անձանց պաշտպանում է վերջիններիս գույքային իրավունքների իրականացմանը պետության կամայական միջամտություններից: Այդուհանդերձ, հոդվածը ճանաչում է պետության իրավունքը՝ վերահսկելու անհատներին կամ իրավաբանական անձանց պատկանող գույքի նկատմամբ իրավունքների իրականացումը կամ անգամ զրկելու նրանց այդ իրավունքից՝ հոդվածի դրույթներով սահմանված պահանջները պահպանելու պայմանով: Կոնվենցիան վավերացրած պետությունները պարտավոր են ապահովել, որպեսզի սեփականության իրավունքին ցանկացած միջամտություն կատարվի միայն հանրային շահից ելնելով:

Հանրային շահի և անհատի շահերի միջև համամասնություն ապահովելու համար անհրաժեշտ է, որպեսզի միջամտությունը լինի ոչ կամայական և տեղավորվի օրենքի շրջանակներում: Ինչ վերաբերում է միջամտության անհրաժեշտությանը, ապա հարկ է նշել, որ անհրաժեշտությունը գնահատելու հարցում ՄԻԵԴ-ը պետությանն օժտել է, ընդհանուր առմամբ, լայն հայեցողությամբ: Չնայած, որ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը միանշանակ անդրադարձ չի կատարում գույքն առգրավելու կամ սեփականության իրավունքին այլ միջամտության դեպքում փոխհատուցում ստանալու իրավունքին, գործնականում դա անվերապահ ենթադրվում է[14]: Միայն բացառիկ դեպքերում է, որ փոխհատուցում տրամադրելու մերժումը կարող է արդարացվել, ինչպես, ասենք, Գերմանիայի վերամիավորման իրադարձությունների պարագայում[15]:

Այնուամենայնիվ, սեփականության առնչությամբ անհատների միջև իրավահարաբերությունները քննության առնելիս Կոնվենցիոն մարմինները պետք է ճշտեն՝ օրենսդրությունը չի՞ ստեղծում, արդյոք, այնպիսի անհավասար պայմաններ, որի արդյունքում անձը կարող է կամայականորեն կամ անարդարացիորեն զրկվել սեփականությունից՝ հօգուտ մեկ այլ անձի: Որոշակի դեպքերում, սակայն, պետության վրա կարող է դրվել մասնավոր անհատների գործողությունների կարգավորմանը միջամտելու պարտավորություն:

Հարկ է նշել, որ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը հիմնականում կիրառվում է այն դեպքերում, երբ պետությունն ինքն է միջամտում սեփականության իրավունքին կամ երրորդ անձին է թույլ տալիս միջամտել:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ առաջարկվում է՝

1. փոփոխել «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասը, այն է՝ ամրագրել «նախնական համարժեք» փոխհատուցում եզրույթը նաև այս հոդվածում.

2. հոդվածից հանել պայմանագրով (կողմերի համաձայնությամբ) համարժեք փոխհատուցման չափը, ձևը, կարգը, ժամկետները, պայմաններն և պատասխանատվությունը որոշելու հնարավորությունը.

3. «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքում կատարել հետևյալ փոփոխությունները.

---

[14] Տե՛ս Հոլի Մոնասթերիս ընդդեմ Հունաստանի (Holy Monasteries v. Greece) գործով 1997 թվականի սեպտեմբերի 1-ի վճիռը, գանգատ թիվ 13092/87 13984/88:

[15] Տե՛ս Յանը և այլք ընդդեմ Գերմանիայի (Jahn and others v. Germany) գործով 2005 թվականի հունիսի 30-ի վճիռը, գանգատ թիվ 46720/99 72203/01 72552/01:

- կնքված պայմանագրերի կատարման նկատմամբ ևս սահմանել պետության սուբսիդիար պատասխանատվություն,

- սահմանել պետական վերահսկողության մեխանիզմներ սեփականության օտարման գործընթացում ձեռքբերողի շահառուի նկատմամբ ունեցած պարտավորությունների կատարման նկատմամբ՝ նախատեսելով համապատասխան պատասխանատվության միջոցներ:

4. Հատուցման տրամադրումը հյուսիս-հարավ ավտոմայրուղու հարևանությամբ գտնվող տների բնակիչներին

2017 թվականի ընթացքում շարունակել է արդիական մնալ դեռևս «*2016 թվականի ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի* գործունեության, *մարդու իրավունքների* և ազատությունների պաշտպանության վիճակի մասին» տարեկան հաղորդման մեջ բարձրացված Երևան քաղաքի Արշակունյաց պողոտայի հյուսիս-հարավ մայրուղու հարևանությամբ գտնվող բնակելի տարածքների բնակիչներին գույքային վնաս պատճառելու, սակայն դրա դիմաց որևէ փոխհատուցում չտրամադրելու խնդիրը: Ըստ 2017 թվականին Պաշտպանին ներկայացրած բողոքների՝ կառուցվող մայրուղուն հարակից որոշ բնակելի տարածքներ ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 26-ի թիվ 990-Ն և 2013 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 1256-Ն որոշումների ուժով՝ ճանաչվել են բացառիկ՝ գերակա հանրային շահ և ընդգրկվել են հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի կառուցման հետ կապված իրացման ենթակա տարածքների կազմի մեջ, սակայն կոնկրետ իրենց չեն ներառվել:

Բողոքներ ներկայացրած անձանց պնդմամբ՝ շինարարական աշխատանքներն իրականացվել են իրենց տներին շատ մոտ հեռավորության վրա, կիրառվել է ծանր տեխնիկա, որի արդյունքում պատճառվել են էական գույքային վնասներ: Մինչդեռ, հաշվի չառնելով վերոնշյալ հանգամանքները՝ նշված անձանց բնակելի տները չեն ընդգրկվել իրացման ենթակա տարածքների կազմի մեջ այն դեպքում, երբ վերջիններս ի սկզբանե մասնակցել են խնդրի կապակցությամբ կազմակերպված քննարկումներին և ստացել համապատասխան փաստաթղթեր (գրություններ): Ըստ այդմ, բողոքներ ներկայացրած անձինք պահանջել են իրենց տները ևս ընդգրկել իրացման ենթակա տարածքների կազմի մեջ կամ տալ համարժեք փոխհատուցում: Մինչդեռ, Երևանի քաղաքապետարանի պնդմամբ՝ շինություններին պատճառված վնասները հիմնականում պայմանավորված չեն կատարվող շինարարական աշխատանքներով:

Նմանօրինակ խնդիրները կանխելու և դրանց լուծում տալու նպատակով և հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է՝

1. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից շինարարության իրականացման ամբողջ ընթացքում անընդմեջ կատարել շինարարության հնարավոր ազդեցության աստիճանի վերաբերյալ ուսումնասիրություններ.

2. ապահովել շինարարության ավարտից հետո վարչական մարմնի հաշվին համապատասխան փորձաքննության կատարումը, որի արդյունքում բնակիչներին կտրամադրվի հիմնավոր և պատճառաբանված եզրակացություն, ինչը կհավաստի, որ շինության վթարային լինելը պայմանավորված չէ իրականացվող շինարարությամբ:

5. Հյուսիս-հարավ ավտոմայրուղու եզրագծին գտնվող շինություններից օգտվելը դրանց սեփականատերերի կողմից

2017 թվականի ընթացքում ներկայացրած բողոքներով բարձրացվել է հյուսիս-հարավ ավտոմայրուղու կառուցման շրջանակներում ճանապարհին հարող հատվածներում սեփականության իրավունքով անձանց պատկանող տնտեսությունների ազատ ելումուտը սահմանափակելու հարցը:

Օրինակ, բողոքներից մեկով դիմողը տեղեկացրել է, որ ՀՀ Արագածոտնի մարզի Շամիրամ համայնքի հատվածում իրեն դեռևս 1997 թվականից սեփականության իրավունքով պատկանող շինությանն անմիջապես հարող ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհի մակարդակը երկու մետրով իջեցնելու արդյունքում անհնարին է դառնում նշված շինությունից ավտոմեքենաների ելումուտն, ինչն էլ գույքային վնաս է հասցնում դիմողին:

Նշվածի կապակցությամբ՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության պարզաբանման համաձայն՝ «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 16-րդ մասի «ա» կետի ուժով՝ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների պաշտպանական գոտիների հողի սեփականատերերը և հողօգտագործողները պարտավոր են կառուցել պաշտպանական գոտում գտնվող օբյեկտները ճանապարհի հետ միացնող ուղիներ՝ նախօրոք համաձայնեցնելով ճանապարհը տնօրինողների՝ տվյալ դեպքում ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի լիազոր մարմնի հետ:

Հետևաբար, բարձրացված հարցի շրջանակներում վնասի հատուցման պահանջի իրավունք բողոքը ներկայացրած անձի մոտ կծագեր գործող ավտոմոբիլային ճանապարհից դեպի խնդրո առարկա հանդիսացող հողամաս օրինական հիմունքներով կառուցված մուտքի, ելքի առկայության դեպքում: Մինչ օրս գործող Մ-1, Երևան-Գյումրի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհից դեպի Շամիրամ 1/1 հասցեում գտնվող հողամաս մուտքի, ելքի կառուցման համաձայնություն ստանալու համար դիմում ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն չի ներկայացվել, հետևաբար հարցն օրենքի սահմաններում կարգավորում չի ստացել:

Հատկանշական է, որ «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքն ընդունվել և ուժի մեջ է մտել 2006-2007թթ. և այդ օրենքում դրա հետադարձ ուժի մասի դրույթներ չեն նախատեսվել, իսկ հյուսիս-հարավ ավտոմայրուղու վերակառուցվող ավտոմոբիլային ճանապարհին անմիջապես հարող հողամասը դիմումատուին սեփականության իրավունքով պատկանում է դեռևս 1997 թվականից, իսկ մինչ 2007 թվականը գործող ոլորտը կարգավորող իրավական ակտերով ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներին հարող օբյեկտների սեփականատերերի վրա նման պարտավորություններ դրված չեն եղել: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ դիմումատուի մոտ իրեն սեփականության իրավունքով պատկանող օբյեկտը ճանապարհի հետ միացնող ուղի կառուցելու պարտավորությունը բացակայում է:

Բացի այդ, տվյալ դեպքում հյուսիս-հարավ ավտոմայրուղու կառուցման շրջանակներում նախատեսվում է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային

ճանապարհի մակարդակը երկու մետրով իջեցնել, արդյունքում նշված շինությունից բեռնատար ավտոմեքենաների ելումուտը անհնարին է դառնալու և խախտվելու է անձի իր սեփականությունից անարգել օգտվելու իրավունքը, մասնավորապես՝ սահմանադրությամբ ամրագրված այդ սեփականությունը օգտագործելու և տիրապետելու իրավունքը:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է հյուսիս-հարավ ավտոմայրուղու կառուցման հետևանքով վնաս կրող անձանց տրամադրել համարժեք փոխհատուցումներ կամ կառուցել պետական միջոցների հաշվին ընդհանուր օգտագործման ավտոճանապարհի եզրին գտնվող հողամասերի սեփականատերերի տարածքներն այդ ճանապարհին միացնող ուղիներ:

6. Կոոպերատիվ հիմունքներով բնակարանային շենք կառուցելու նպատակով կանխավճարային մուծումները և շենքերի կիսակառույց մնալը

2017 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրած մի շարք բողոքներով բարձրացվել է դեռևս *2016 թվականի* տարեկան հաղորդման մեջ ներառված այն համակարգային խնդիրը, որ կոոպերատիվ հիմունքներով բնակարանային շենք կառուցելու և բնակարաններ հատկացնելու նպատակով անձանց կողմից կատարվել են կանխավճարային մուծումներ, սակայն Խորհրդային Միության ռուբլով վճարված գումարի արժեզրկման հետևանքով կառուցվելիք շենքերը մնացել են կիսակառույց:

ՀՀ կառավարության կողմից 2000 թվականին ընդունված «Անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոոպերատիվների փայատերերի կողմից Խորհրդային Միության ռուբլով վճարված գումարի արժեզրկումից փայատերերի կրած կորուստների դիմաց դրամական օգնության և տրամադրման կարգը հաստատելու մասին» N 432-Ն որոշմամբ նշված շենքերի կառուցման ավարտի համար նախատեսվել էր տրամադրել համապատասխան դրամական օգնություն, ինչը, սակայն, մինչ օրս չի տրամադրվել:

Բարձրացված հարցի վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված տեղեկության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 հուլիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության 2015-2017 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» թիվ 700-Ն որոշմամբ հաստատված ծրագրով՝ անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոոպերատիվներին դրամական օգնություն տրամադրելու համար միջոցներ չեն նախատեսվել:

Օրինակ, Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով կոոպերատիվի մի խումբ անդամներ տեղեկացրել են, որ 1990 թվականի Երքաղխորհրդի գործկոմի որոշմամբ իրենց կոոպերատիվին շենք է հատկացվել: Ըստ դիմումատուների՝ շենքի 51.6 տոկոսը կառուցվել է կոոպերատիվի անդամների կատարված փայավճարների հաշվին, սակայն կառուցապատումը մնացել է անավարտ: Այնուհետև Երևանի քաղաքապետարանը, առանց դիմումատուների գիտության, աճուրդային կարգով վերոնշյալ շենքը օտարել է այլ ընկերության:

ՀՀ կառավարության 1997 թվականի հունիսի 18-ի «Քաղաքացիներին ամրակցված անավարտ շինարարության պետական (հանրային) բազմաբնակարան բնակելի տների բնակարանների սեփականաշնորհման կարգը հաստատելու մասին» թիվ 191-Ն

սահմանված կարգի 3-րդ, 4-րդ և 8-րդ կետերի համաձայն՝ անավարտ շինարարության բազմաբնակարան բնակելի տների շինարարությունն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 1996 թվականի նոյեմբերի 15-ի «Քաղաքացիներին ամրակցված անավարտ շինարարության պետական (հանրային) բնակելի տները (բնակարանները) սեփականաշնորհելու մասին» թիվ 358 որոշման 3-րդ կետով սահմանված կարգի:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մեկ տարվա ընթացքում անավարտ շինարարության բազմաբնակարան բնակելի տների բնակարանների հատկացումից քաղաքացիների հրաժարվելու և սեփականատերերի միավորումներ չձևավորվելու դեպքում անավարտ շինարարության բազմաբնակարան բնակելի տները սահմանված կարգով ներկայացվում են աճուրդի՝ համաձայն նշված կարգի 8-րդ կետի:

Անավարտ շինարարության բազմաբնակարան այն բնակելի տները (բնակարաններ), որոնք քաղաքացիները սեփականության իրավունքով ստանալուց հրաժարվել են, ներկայացվում են աճուրդի՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 1994 թվականի ապրիլի 22-ի «Պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների աճուրդով վաճառքի ու պետական ձեռնարկություններն առանց գնման իրավունքի աճուրդով վարձակալության հանձնելու ընդհանուր կարգը հաստատելու մասին» թիվ 196 որոշման (ուժը կորցրել է):

Միաժամանակ, ՀՀ կառավարության 1996 թվականի նոյեմբերի 15-ի «Քաղաքացիներին ամրակցված անավարտ շինարարության պետական (հանրային) բնակելի տները (բնակարանները) սեփականաշնորհելու մասին» թիվ 358 որոշմամբ սահմանված կարգի 3-րդ կետի համաձայն՝ քաղաքացիներին ամրակցված այն սակավաբնակարան բնակելի տները և բնակարանները, որոնք սեփականության իրավունքով քաղաքացիները հրաժարվել են ստանալ, ներկայացվում են աճուրդի՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 1994 թվականի ապրիլի 22-ի «Պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների աճուրդով վաճառքի ու պետական ձեռնարկություններն առանց գնման իրավունքի աճուրդով վարձակալության հանձնելու ընդհանուր կարգը հաստատելու մասին» թիվ 196 որոշման:

Վերոնշյալ իրավանորմերի համապարփակ ուսումնասիրությունից հետևում է, որ կոոպերատիվի անդամների կողմից կառուցված կիսակառույց շենքը Երևանի քաղաքապետարանի կողմից աճուրդով վաճառելու իրավունքի ծագման համար շահառուների՝ կոոպերատիվի անդամների կողմից Երևանի քաղաքապետարան պետք է ներկայացվեր կիսակառույց շենքը սեփականության իրավունքով ստանալուց հրաժարվելու վերաբերյալ համաձայնություն, ինչը, դիմումատուների պնդմամբ, տեղի չի ունեցել, հետևաբար, բացակայում են այն իրավական հիմքերը, որոնց ուժով Երևանի քաղաքապետարանը նշված անշարժ գույքն իրավասու էր աճուրդային կարգով վաճառելու:

ՀՀ սահմանադրական դատարանի 2016 թվականի մայիսի 10-ի ՍԴՈ-1271 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման համաձայն՝ ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասով յուրաքանչյուրի համար երաշխավորվում է ոչ միայն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունքները, այլ նաև՝

օրինական հիմքով սեփականություն ձեռք բերելու իրավունքը, ինչը պետությունից պահանջում է օրինական հիմքն այնպես կարգավորել, որ դրանից անձը վնաս չկրի, այլ երաշխավորի սեփականություն ձեռք բերելու իրավունքը:

Պաշտպանի աջակցությամբ կոոպերատիվի անդամներն Ընկերության կողմից ստացել են փոխհատուցումներ, սակայն ոչ համարժեք:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է հետագա տարիների համար պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսել դրամական միջոցներ՝ անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոոպերատիվներին դրամական օգնություն տրամադրելու համար:

7. Ինքնակամ շինարարության հետևանքով անձանց իրավունքների և օրինական շահերի խախտումը

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2017 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ, որոնք վերաբերել են Երևան քաղաքում ինքնակամ շինարարության հետևանքով անձանց իրավունքների և օրենքով պահպանվող շահերի խախտմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի համաձայն՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքը, շինությունը կամ այլ կառույցը: Ինքնակամ կառույցը չի կարող ճանաչվել օրինական, եթե կառույցը պահպանելը խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

Միաժամանակ, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքային և գյուղական համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը, Երևանում՝ Երևան քաղաքի քաղաքապետը, վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

Այսպես, Պաշտպանին հասցեագրված բողոքով անձը տեղեկացրել է, որ ցանկանում է իրեն սեփականության իրավունքով պատկանող հողամասում իրականացնել բնակելի տան կառուցման շինարարական աշխատանքներ, սակայն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով հողամասին անմիջապես կից տեղադրված առևտրի տաղավարի առկայությունը խոչընդոտում է նշված շինարարական աշխատանքների իրականացմանը, իսկ Քաղաքապետարան հասցեագրված բազմաթիվ դիմումները թողնվել են անպատասխան, չեն իրականացվել վարչական լսումներ:

Նշված խնդրի կապակցությամբ Պաշտպանի հարցմանն ի պատասխան՝ Երևանի քաղաքապետարանից ստացվել է պարզաբանում առ այն, որ ինքնակամ կառուցված տաղավարը չունի իրավական կարգավիճակ և փաստացի ծանրաբեռնում է համայնքային

սեփականություն հանդիսացող հողամասը, ուստի այդ տաղավարի հետագա տնօրինման (օրինականացման կամ քանդման) հարցը ենթակա է քննարկման ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի շրջանակներում:

Մինչդեռ, բարձրացված խնդրի վերաբերյալ Պաշտպանի 2017 թվականի դեկտեմբերին կատարած հարցմանն ի պատասխան՝ Երևանի քաղաքապետարանից հայտնել են, որ ինքնակամ կառուցված շինությունն ու դրանով ծանրաբեռնված հողամասը Երևանի քաղաքապետի դեռևս 2017 թվականի մարտին ընդունված որոշմամբ ճանաչվել է օրինական և նշված անշարժ գույքի նկատմամբ անձի իրավունքները 2017 թվականի մայիսին ստացել են պետական գրանցում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատշաճ և հետևողական իրականացնել ինքնակամ շինարարության դեպքերի կանխարգելում, կասեցում և դրանց հետևանքների վերացում:

8. Հատուցումը սողանքների հետևանքով անհատական բնակելի տները բնակության համար ոչ պիտանի դառնալու դեպքում

2017 թվականին մի շարք բողոքներով բարձրացվել է սահմանամերձ բնակավայրերում սողանքների հետևանքով անհատական բնակելի տների բնակության համար ոչ պիտանի դառնալու և մինչ օրս գումարային և բնակարանային բարելավման ձևով պետության կողմից փոխհատուցում չտրամադրելու հարցը:

Բարձրացված խնդրի վերաբերյալ ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեի պարզաբանման համաձայն՝ ՀՀ մարզերից 2017 թվականի տարեսկզբի դրությամբ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե ներկայացված տեղեկության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության բնակավայրերում առկա է 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող 1000-ից ավելի բնակելի տուն, որոնցից ավելի քան 200-ը՝ ՀՀ Տավուշի մարզում:

Միաժամանակ, ըստ ներկայացված տեղեկության, ՀՀ 2017 թվականի պետական բյուջեով, ինչպես նաև ՀՀ 2017-2019 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով հանրապետության 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող բնակելի տների բնակիչների բնակարանային պայմանների բարելավմանն ուղղված ծրագրերի իրականացման համար միջոցներ չեն նախատեսվել, հետևաբար հարցի քննարկմանը հնարավոր է անդրադառնալ ՀՀ կառավարության 2013 թվականի մարտի 7-ի N9 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած՝ ՀՀ տարածքում քանդման ենթակա վթարային՝ 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող, բնակարանային ֆոնդի բնակիչներին անվտանգ բնակելի տարածքով ապահովմանն ուղղված հայեցակարգով ձևավորված մոտեցումների և առաջնահերթությունների համաձայն ծրագրերի իրականացման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պարագայում:

Վերոնշյալ հայեցակարգի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ հայեցակարգի հավելված 2-ի համաձայն՝ հավանություն է տրվել ՀՀ տարածքում (բացառությամբ աղետի գոտու վերականգնման ծրագրի շրջանակներում ընդգրկված բնակավայրերի) քանդման ենթակա վթարային՝ 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող, ինչպես նաև քանդված բնակարանային ֆոնդի բնակիչներին անվտանգ բնակելի

տարածությամբ ապահովման հայեցակարգի կիրարկումն ապահովող միջոցառումների ժամանակացույցին, համաձայն որի՝ պետք է մշակվեր և դեռևս մինչև 2013 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակը ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացվեր «Քանդման ենթակա վթարային՝ 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող, ինչպես նաև քանդված բնակարանային ֆոնդի բնակիչներին անվտանգ բնակելի տարածքով ապահովման պետական աջակցության առաջնահերթ ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, իսկ 2014 թվականից պետք է սկսվեր քանդման ենթակա վթարային՝ 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող, ինչպես նաև քանդված բնակարանային ֆոնդի բնակիչներին անվտանգ բնակելի տարածքով ապահովման պետական աջակցության առաջնահերթ ծրագրի իրականացումը, ինչը սակայն, մինչ օրս կյանքի չի կոչվել:

Ըստ ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեի՝ ՀՀ մարզերում տարբեր պատճառներով (այդ թվում՝ սողանքային երևույթների հետևանքով) քանդման ենթակա վթարային՝ 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող բնակելի տների բնակիչների բնակարանային պայմանների բարելավման հարցը ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից ներկայացվել է ՀՀ 2017-2019 և 2018-2020 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի հայտերում: Սակայն սողանքային երևույթների հետևանքով քանդման ենթակա վթարային՝ 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող բնակելի տների բնակիչների բնակարանային պայմանների բարելավման ծրագրի իրականացման համար միջնաժամկետ ծախսերի ծրագրեր մշակման մշտապես գործող բարձրագույն խորհրդի կողմից ինչպես միջնաժամկետ ծախսային ծրագրերով, այնպես էլ 2017, 2018 թվականների պետական բյուջեով ֆինանսական միջոցներ (չափաքանակներ) չեն հատկացվել:

Հարկ է նշել, որ համաձայն ՀՀ քաղաքաշինության նախարարի 2009 թվականի թիվ 282-Ն հրամանի՝ 4-րդ աստիճանի վնասվածություն ունեն այն շենքերը, որոնց կոնստրուկցիաների վիճակը վթարային է և այդ շենքերը վտանգավոր են հետագա շահագործման համար: Նույն հրամանի համաձայն՝ այդ շենքերի բնակիչները ենթակա են տարհանման, իսկ շենքերը ենթակա են քանդման, քանի որ դրանց վերականգնման-ուժեղացման աշխատանքների կատարումը տնտեսապես աննպատակահարմար է:

Հատկանշական է, որ ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեից ստացված պարզաբանումների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Հայաստանի Հանրապետության բնակավայրերում առկա են 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող 1000-ից ավելի բնակելի տներ, որոնցում բնակվող մարդկանցից շատերը լքել են իրենց տները՝ դառնալով անօթևան, իսկ ովքեր մինչ օրս շարունակում են բնակվել իրենց տներում վտանգում են իրենց կյանքը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է՝

1. հետագա տարիների համար պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով հանրապետության 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող բնակելի տների բնակիչների բնակարանային պայմանների բարելավմանն ուղղված ծրագրերի շարունակական իրականացման համար նախատեսել դրամական միջոցներ.

2. ընդունել «Քանդման ենթակա վթարային՝ 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող, ինչպես նաև քանդված բնակարանային ֆոնդի բնակիչներին անվտանգ բնակելի

տարածքով ապահովման պետական աջակցության առաջնահերթ ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում:

9. Լիցենզիան ստանալուց հետո մարդատար-տաքսի ավտոմեքենայով ուղևորափոխադրումներ չիրականացնելու դեպքում պետական տուրքի և տույժերի վճարման պահանջը

2017 թվականի ընթացքում մի շարք բողոքներով բարձրացվել է լիցենզիան ստանալուց հետո մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումներ չիրականացնելու հանգամանքով պայմանավորված լիցենզիայի տրման համար սահմանված պետական տուրքի գումարը չվճարելու, այդ գումարը ժամանակին չհաշվարկելու և չգանձելու, սակայն ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից պետական տուրքի և համապատասխան տույժերի վճարման պահանջ առաջադրելու վերաբերյալ հարցը:

Այսպես՝ Պաշտպանին հասցեագրված բողոքի համաձայն՝ 2015 թվականի մայիսի 10-ին մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումներ կազմակերպելու համար անձին տրվել է լիցենզիա, որի համար ամսական վճարել է պետական տուրքի 12.000 ՀՀ դրամ գումարի չափով: Որոշ ժամանակ անց՝ սկսած 2015 թվականի սեպտեմբերից, պայմանավորված ուղևորափոխադրումներ չիրականացնելու հանգամանքով, դիմողը պետական տուրքի վճարումներ չի իրականացրել: 2017 թվականի ապրիլի 14-ին դիմողը ներկայացրել է դիմում ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության լիցենզավորման գործակալություն լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու խնդրանքով, որին ի պատասխան՝ դիմումատուին ուղարկվել է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի 2017 թվականի ապրիլի 18-ի հրամանի համապատասխան քաղվածքը, ըստ որի՝ ուժը կորցրած է ճանաչվել մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումներ կազմակերպելու համար իրեն տրված լիցենզիան, ինչպես նաև գրությամբ (ինչպես մարմինն է ներկայացնում «հիշեցրել են») հայտնել են, որ պետական տուրքի գծով պետական բյուջեի նկատմամբ իր ունեցած պարտքը կազմում է 317.262 ՀՀ դրամ:

Լիցենզիայի գործողության ողջ ընթացքում (շուրջ երկու տարի) դիմողը պետական տուրքի վճարման պարտավորության առկայության, ինչպես նաև տույժերի հաշվարկման վերաբերյալ որևէ ծանուցում չի ստացել:

Հարկ է նշել, որ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ լիցենզավորող մարմինն *իրավունք ունի* օրենսդրության պահանջների խախտման պատճառով լիցենզիայի գործողությունը կասեցնել միայն լիցենզավորող մարմնի լիցենզավորման հանձնաժողովի եզրակացության համաձայն: Միաժամանակ, նույն օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ լիցենզիայի գործողությունը *կարող է* կասեցվել՝ տարեկան պետական տուրքը չվճարելու դեպքում:

Հատկանշական է, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 6.1-րդ հոդվածի համաձայն՝ արտոնագրի, թույլտվության, լիցենզիայի կամ որակավորման վկայականի գործողությունը կամ ծանուցված գործունեությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կասեցվելու դեպքում (բացառությամբ կասեցված լինելու ժամանակահատվածում դիմումի համաձայն ՀՀ օրենսդրությամբ արտոնագրի,

թույլտվության, լիցենզիայի կամ որակավորման վկայականի գործողության ուժը կորցրած ճանաչելու դեպքերի կամ ծանուցված գործունեության դադարեցման դեպքերի) հերթական տարեկան պետական տուրքերի գումարները ենթակա են վճարման անկախ արտոնագրի, թույլտվության, լիցենզիայի կամ որակավորման վկայականի գործողության կամ ծանուցված գործունեության կասեցման հիմքերից ու ժամկետներից: Նույն օրենքի 6.2-րդ հոդվածի համաձայն՝ նշված օրենքով տարեկան պետական տուրքի վերաբերյալ սահմանված դրույթները կիրառվում են նաև ամսական և եռամսյակային պետական տուրքերի նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով կամ չի հակասում ամսական կամ եռամսյակային պետական տուրքերի վճարման հարաբերությունների էությանը:

Վերոնշյալ իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենքով լիցենզավորող մարմինը ոչ թե պարտավոր է, այլ իրավունք ունի կասեցնելու լիցենզիայի գործողությունը լիցենզիա ստացած անձանց կողմից տևական ժամանակ պետական տուրքը չվճարելու դեպքում, միաժամանակ լիցենզավորող մարմնի կողմից նույնիսկ լիցենզիայի գործողության կասեցման դեպքում ամսական պետական տուրքը շարունակվում է հաշվարկվել մինչև դիմումի համաձայն լիցենզիայի գործողության ուժը կորցնելը:

Խնդրահարույց է նաև այն հարցը, որ ո՛չ «Պետական տուրքի մասին», և ո՛չ էլ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքներում լիցենզիայի գործողության ժամկետում պետական տուրքի չվճարման արդյունքում կուտակված պարտքի մասին լիցենզավորող մարմնի կողմից ծանուցելու պարտավորություններ նախատեսող նորմեր սահմանված չեն: Փաստորեն, տվյալ դեպքում շուրջ երկու տարի դիմումատուն մարդատար-տաքսի ավտոմոբիլով համապատասխան ծառայություններ չի մատուցել (եկամուտ չի ստացել), սակայն օրենսդրության անկատարության հետևանքով ստիպված է լինելու չմատուցված ծառայության դիմաց վճարել ինչպես կուտակած ամսական պետական տուրքի, այնպես էլ հաշվարկված տույժերի գումարը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է՝

1. նշված օրենքներում կատարել համապատասխան փոփոխություններ՝ լիցենզիայի գործողության ժամկետում սահմանելով առկա պարտավորությունների մասին ծանուցելու որևէ ընթացակարգ.

2. «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում կատարել փոփոխություններ, այն է՝ պետական տուրքը ժամանակին չվճարելու դեպքում լիցենզավորող մարմինը «իրավունք ունի» կասեցնել կամ լիցենզիայի գործողությունը «կարող է» կասեցվել եզրույթների փոխարեն՝ սահմանելով «պարտավոր է» և «պետք է» կասեցնի եզրույթները.

3. «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 6.1-րդ հոդվածում կատարել համապատասխան փոփոխություններ (սահմանել նորմեր), համաձայն որոնց՝ լիցենզիայի գործողությունը կասեցնելու դեպքում (պայմանավորված այն հանգամանքով, որ լիցենզիա ստացող անձի կողմից կասեցման հիմքով ծառայություններ փաստացի չեն մատուցվելու) կասեցման համար դիմումը ներկայացնելու կամ լիցենզավորող մարմնի կողմից լիցենզիայի գործողությունը կասեցնելու պահից պետք է դադարեցվի ամսական պետական տուրքի հաշվարկման ընթացքը:

ԳԼՈՒԽ 3. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Աշխատանքի ազատ ընտրության և աշխատանքից անհիմն ազատվելու դեպքում անձի պաշտպանության իրավունքը՝ որպես հիմնարար իրավունք, ամրագրված է ՀՀ Սահմանադրության 57-րդ հոդվածով: Միաժամանակ, աշխատանքային իրավունքների իրացման չափանիշներն ամրագրված են ՀՀ կողմից վավերացված մի շարք միջազգային պայմանագրերում՝ Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայում, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ՄԱԿ-ի դաշնագրում, ինչպես նաև Աշխատանքի միջազգային կազմակերպության մի շարք պայմանագրերում և փաստաթղթերում: Աշխատանքային իրավունքների իրացման համար երաշխիքներ են ամրագրված նաև ՀՀ գործող օրենքներով և այլ իրավական ակտերով:

Որքան էլ կարևոր է աշխատանքային իրավունքների պաշտպանությունը, և դրանց իրագործման համար առկա են օրենսդրական պաշտպանության երաշխիքներ, այնուամենայնիվ, մի շարք դեպքերում տեղի են ունենում անձի աշխատանքային իրավունքների խախտումներ: Այդ խախտումների հիմնական պատճառներ են անձանց աշխատանքային իրավունքների պաշտպանության մեխանիզմների մասին ոչ բավարար իրազեկումը, ինչպես նաև աշխատողների իրավունքների պաշտպանության թույլ աստիճանը: Ավելին, ելնելով իրենց սոցիալ-տնտեսական վիճակից, թափուր աշխատատեղերի սակավությունից, աշխատաշուկայի ոչ այնքան մեծ լինելու հանգամանքից՝ աշխատողներն իրենց աշխատանքը չկորցնելու համար շատ հաճախ ստիպված են լինում համակերպվել իրենց իրավունքների ոտնահարումներին:

1. Աշխատանքային իրավունքների պահպանումը վերահսկող արտադատական մարմնի բացակայությունը և աշխատանքային իրավունքների խախտումների կանխարգելումը

1.1 Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2017 թվականին արձանագրվել են աշխատանքային իրավունքների խախտման դեպքեր և այլ խնդիրներ: Բարձրաձայնված տարաբնույթ խնդիրները կարելի է դասակարգել հետևյալ հիմնական խմբերի.

1. գործատուների կողմից վերջնահաշվարկի չկատարում,

2. աշխատանքից աշխատողի անհիմն ազատում,

3. աշխատանքային պայմանագիրը լուծելուց առաջ այդ մասին աշխատողներին օրենքով սահմանված ժամկետներում ծանուցման չկատարում,

4. աշխատաժամանակի հետ կապված՝ աշխատավարձի այլ հաշվարկի կիրառում,

5. փորձաշրջանի դիմաց վարձատրության չտրամադրում և այն:

1) Մարդու իրավունքների պաշպանին հասցեագրված մի շարք բողոքների համադիր վերլուծությունը հնարավորություն է տալիս փաստել այն մասին, որ ոլորտում տարածված է այն խնդիրը, երբ գործատուների կողմից աշխատանքային պայմանագիրը լուծվելու դեպքում վերջնահաշվարկ չի կատարում: Մինչդեռ, Աշխատանքային օրենսգրքի (սույն բաժնում այսուհետ՝ Օրենսգիրք) «Աշխատողի հետ վերջնահաշվարկի կարգը» վերտառությամբ 130-րդ հոդվածով կարգավորվում է վերը նշված հարաբերությունը: Մասնավորապես, նշված հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ աշխատանքային

պայմանագիրը լուծվելու դեպքում աշխատանքային պայմանագրի լուծման օրը գործատուն պարտավոր է աշխատողի հետ կատարել լրիվ վերջնահաշվարկ։

Այսինքն, Օրենսգրքում իմպերատիվ կերպով նշվում է գործատուի՝ սահմանված կարգով վերջնահաշվարկ կատարելու պարտավորության վերաբերյալ, ինչն էլ նշանակում է, որ օրենքի տառից շեղվելն անթույլատրելի է։

2) Ստացված ահազանգերով բազմաթիվ աշխատողներ բարձրացրել են աշխատանքից իրենց անհիմն ազատման խնդիրը՝ միաժամանակ նշելով, որ գործատուների կողմից ժամանակ առ ժամանակ հետապնդումների են ենթարկվել, անհիմն նկատողություններ ստացել, երբեմն էլ գործատուների ճնշման հետևանքով աշխատանքից ազատման դիմումներ ներկայացրել։ Հարկ է նշել, որ աշխատանքային պայմանագրի լուծման հիմքերը հստակորեն սահմանվում են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածով։

3) Օրենսգրքի 115-րդ հոդվածը գործատուների համար սահմանում է սեփական նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելուց առաջ այդ մասին աշխատողներին կոնկրետ ժամկետներում ծանուցելու իմպերատիվ պահանջ։ Միաժամանակ, նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենքով նախատեսված ժամկետները չպահպանելու դեպքում գործատուն պարտավոր է աշխատողին վճարել *տուժանք*՝ ծանուցման յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար, որը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով աշխատողի միջին օրական աշխատավարձի չափը։ Պաշտպանին հասցեագրված բողոքներում ներկայացված խնդիրների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ գործատուները հաճախ են խախտում սեփական նախաձեռնությամբ աշխատողներին աշխատանքից ազատելիս Օրենսգրքի 115-րդ հոդվածով սահմանված նախապես ծանուցման ժամկետները։ Ավելին, ստացված բողոքների ընդհանուր ուսումնասիրությունը վկայում է, որ գործատուները ոչ պատշաճ ծանուցման դեպքում հրաժարվում են աշխատողներին վճարել անգամ Օրենսգրքի 115-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տուժանքը։

4) 2017 թվականի ընթացքում ստացվել են բողոքներ տարբեր հաստատություններում նույն պայմաններում աշխատող և նույն աշխատանքը կատարող աշխատակիցների նկատմամբ աշխատավարձի այլ հաշվարկ կիրառելու խնդրի վերաբերյալ։ Օրենսգրքի 139-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատաժամանակի նորմալ տևողությունը չի կարող անցնել շաբաթական 40 ժամից։ Աշխատաժամանակի կրճատ տևողություն սահմանելու դեպքերը սահմանված են Օրենսգրքի 140-րդ հոդվածով։ 142-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված է, որ առողջապահական, հոգաբարձության (խնամակալության), մանկական դաստիարակչական, էներգամատակարարման, գազամատակարարման, ջերմամատակարարման, կապի և աշխատանքի այլ առանձնահատուկ բնույթ ունեցող բնագավառների աշխատողների աշխատանքի և հանգստի ռեժիմի առանձնահատկությունները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը։ ՀՀ կառավարության կողմից այն սահմանվել է ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 1-ի «Առողջապահական, հոգաբարձության (խնամակալության), մանկական դաստիարակչական, էներգամատակարարման, գազամատակարարման, ջերմամատակարարման, կապի և աշխատանքի այլ առանձնահատուկ բնույթ ունեցող բնագավառների աշխատողների աշխատանքի և

հանգստի ռեժիմի առանձնահատկությունները սահմանելու մասին» թիվ 201-Ն որոշմամբ: Աշխատանքի առանձնահատուկ բնույթ ունեցող բնագավառների աշխատողների համար նշված որոշմամբ սահմանված աշխատանքի և հանգստի ռեժիմները հանդիսանում են աշխատաժամանակի նորմալ, այլ ոչ թե կրճատ տևողություն:

Միաժամանակ, Օրենսգրքի 139-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված է, որ առանձին կատեգորիայի աշխատողների (անընդմեջ հերթապահության ռեժիմով աշխատող առողջապահական կազմակերպություններ, հոգաբարձության (խնամակալության) կազմակերպություններ, մանկական դաստիարակչական կազմակերպություններ, էներգամատակարարման, գազամատակարարման, ջերմամատակարարման մասնագիտացված կազմակերպություններ, կապի և վթարների հետևանքների վերացման մասնագիտացված ծառայություններ և այլն) աշխատաժամանակի տևողությունը կարող է կազմել օրական 24 ժամ: Այդ աշխատողների աշխատաժամանակի միջին տևողությունը շաբաթվա ընթացքում չի կարող անցնել 48 ժամից, իսկ աշխատանքային օրերի միջև հանգստի ժամանակը չի կարող պակաս լինել 24 ժամից: Նման աշխատանքների ցանկը սահմանվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի «Առանձին կատեգորիայի աշխատողների՝ օրական 24 ժամ աշխատաժամանակի տևողությամբ պայմանավորված աշխատանքների ցանկը սահմանելու մասին» թիվ 1223-Ն որոշմամբ:

Ուստի, այն աշխատողների համար, ովքեր ներառված են վերը նշված երկու որոշումների ցանկերում, աշխատողների և գործատուների միջև ձեռք բերված համաձայնության շրջանակներում կարող է սահմանվել կամ աշխատաժամանակի նորմալ տևողություն (ԿՈ-201-Ն որոշմամբ սահմանված), կամ՝ օրական 24 ժամ, շաբաթվա ընթացքում 48 ժամ աշխատաժամանակի միջին տևողություն:

Այսպես, Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով բարձրացվել է երեխաների խնամքի հաստատությունների մեկում հաստատության որոշ աշխատակիցների աշխատավարձի սխալ հաշվարկի կիրառման հարցը: Ըստ քննվող բողոքի՝ մանկատան բժիշկների, բուժքույրերի և դայակների համար տաս տարուց ավել սահմանված է եղել աշխատաժամանակի կրճատ տևողություն, իսկ աշխատավարձի հաշվարկը կատարվել է՝ ելնելով շաբաթական 36 ժամ աշխատաժամանակից: Դիմումատուի պնդմամբ՝ մանկատանը շաբաթական 36 ժամ աշխատաժամանակ սահմանված է միայն այն աշխատակիցների համար, ովքեր աշխատում են ցերեկային ժամերին: Մինչդեռ նույն կազմակերպությունում, նույն մասնագիտություն ունեցող և նույն վնասակար գործոնների ազդեցության պայմաններում և նույն ժամերին աշխատողների մի մասի աշխատավարձը հաշվարկվում է՝ ելնելով շաբաթական 48 ժամ աշխատաժամանակից, ինչի արդյունքում աշխատավարձի չափը կրճատվել է մոտ 25%-ով:

Հարկ է նկատել, որ մանկատան այն աշխատակիցները, ովքեր աշխատում են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված շաբաթական 36 ժամ աշխատաժամանակի կրճատ ռեժիմով, և նրանք, ովքեր աշխատում են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 139-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված շաբաթական առավելագույնը 48 ժամ աշխատաժամանակի հերթափոխային ռեժիմով՝ կատարում են բացառապես նույն աշխատանքը, մինչդեռ հերթափոխային ռեժիմով

աշխատողները կատարած նույն աշխատանքի համար նվազ աշխատավարձ են ստանում, քան ոչ հերթափոխային ռեժիմով աշխատողները:

Ստացված բողոքի, ինչպես նաև Պաշտպանի ու ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համատեղ քննարկումների արդյունքում պարզվել է, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպությունների մանկավարժական, բժշկական և սպասարկող անձնակազմերի համար օրական 24, շաբաթական 48 ժամ միջին տևողությամբ աշխատաժամանակի ռեժիմ կիրառելու իրավական հիմքերը սահմանվել են ԿՈ-1223-Ն որոշման մեջ 2014 թվականին կատարված փոփոխություններով (ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 1378-Ն որոշում), որից հետո ՊՈԱԿ-ների վերոնշյալ աշխատողների համար կիրառվել է աշխատաժամանակի նշված ռեժիմը (օրական 24, շաբաթական 48 ժամ միջին տևողությամբ)՝ որպես առավել օպտիմալ ռեժիմ: Սակայն աշխատաժամանակի հիշյալ ռեժիմի կիրառման սկզբնական փուլում մի շարք ՊՈԱԿ-ներում, չպահպանելով Օրենսգրքի պահանջները, աշխատաժամանակի նորմալ տևողությամբ ռեժիմն ու օրական 24, շաբաթական 48 ժամ միջին տևողությամբ ռեժիմը կիրառվել են միաժամանակյա: Մասնավորապես, շաբաթական աշխատաժամանակի հաշվարկի հիմքում դրվել է 36 ժամը, իսկ օրական աշխատաժամանակ է սահմանվել 24 ժամը:

Նախարարության կողմից ՊՈԱԿ-ներում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում վեր են հանվել նշված խնդիրները և համապատասխան հանձնարարականներով շտկվել:

Տեղեկացվել է նաև, որ ներկայում Նախարարության ենթակայությամբ գործող ՊՈԱԿ-ներում աշխատանքների արդյունավետության և շահառուներին մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանն ուղղված միջոցառումներով նախատեսվում է նաև ՀՀ պետական բյուջեից առկա ֆինանսավորման շրջանակներում բարձրացնել շահառուների խնամքի գործընթացներում անմիջական ներգրավված աշխատողների աշխատավարձը:

5) Պաշտպանին հասցեագրված բողոքի համաձայն՝ քաղաքացին աղբահանության ոլորտում պետության պատվիրակված լիազորություններն իրականացնող ընկերությունում անցել էր փորձաշրջան, սակայն արդյունքում իրեն աշխատանքի չէին ընդունել և աշխատած օրերի դիմաց չէին վճարել:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ աշխատանքային պայմանագրի կնքման ժամանակ կողմերի համաձայնությամբ կարող է սահմանվել փորձաշրջան: Այն կարող է սահմանվել գործատուի ցանկությամբ՝ նախատեսված աշխատանքին (պաշտոնին) աշխատողի համապատասխանությունը ստուգելու նպատակով, կամ աշխատանքի ընդունվողի ցանկությամբ՝ առաջարկվող աշխատանքին (պաշտոնին) իր համապատասխանությունը որոշելու համար: Փորձաշրջանի մասին պայմանները պետք է սահմանվեն աշխատանքային պայմանագրով:

Փորձաշրջանի ընթացքում աշխատողն ունի բոլոր իրավունքները և կրում է բոլոր պարտականությունները, որոնք սահմանված են նշյալ օրենսգրքով, այլ օրենքներով և նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերով: Պաշտպանի աջակցության արդյունքում աղբահանության ոլորտում պետության

պատվիրակված լիազորություններն իրականացնող ընկերությունը վճարել է քաղաքացուն աշխատած օրերի դիմաց:

1.2 Վերահսկողությունը աշխատանքային օրենսդրության պահպանման նկատմամբ

Օրենսդրության նորմերի պահպանման նկատմամբ առկա պետական վերահսկողության պակասը և աշխատանքային իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ գործատուների և աշխատողների իրազեկման գործողությունների անբավարարությունը սահմանափակում են նման դեպքերի կանխարգելումը: Խնդիրը տարիներ շարունակ բարձրաձայնվել է Մարդու իրավունքների պաշտպանների կողմից: Այսպես, 2013 թվականի օրենսդրական փոփոխությունների հետևանքով ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՀՀ աշխատանքի պետական տեսչության միաձուլման արդյունքում վերակազմակերպվել է ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի Առողջապահական պետական տեսչությունը[16]: Խնդիրն այն է, որ 2014 թվականի դեկտեմբերի 17-ին ընդունված և 2015 թվականի հունվարի 9-ին ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ կատարելու և «Աշխատանքի պետական տեսչության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ ուժը կորցրած է ճանաչվել 2004 թվականի նոյեմբերի 9-ի ՀՀ աշխատանքային օրենսգրքի 34-րդ հոդվածը: Նշված հոդվածը սահմանում էր Աշխատանքի պետական տեսչության կողմից ոլորտի նկատմամբ հսկողության և վերահսկողության լիազորություն: Մասնավորապես, նշվում էր, որ գործատուների կողմից աշխատանքային օրենսդրության, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի նորմատիվ դրույթների կատարման նկատմամբ պետական հսկողությունն ու վերահսկողությունն իրականացվում էր Աշխատանքի պետական տեսչության կողմից:

Չնայած նրան, որ ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի Առողջապահական պետական տեսչությունը ՀՀ աշխատանքի պետական տեսչության իրավահաջորդն է[17], սակայն ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի Առողջապահական պետական տեսչությունը 2015 թվականի հունվարի 9-ից լիազորված է իրականացնելու միայն ՀՀ աշխատանքային օրենսգրքով և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ իրավական ակտերով սահմանված աշխատանքի անվտանգության ապահովման և առողջության պահպանության նորմեր պարունակող իրավական ակտերի կիրարկման նկատմամբ պետական հսկողություն և վերահսկողություն:

Արդյունքում, ստեղծվել է մի իրավիճակ, երբ վերը նշված ոլորտներից բացի՝ աշխատանքային հարաբերությունների ընթացքում առաջացող և առհասարակ ոլորտում առկա այլ խնդիրների քննարկմամբ և լուծմամբ, հսկողության և վերահսկողության իրականացմամբ Առողջապահական պետական տեսչությունը չի զբաղվում: Արդյունքում,

[16] ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ի N 857-Ն որոշում:
[17] ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ի N 857-Ն որոշում:

նմանատիպ խնդիրների, աշխատանքային վեճերի լուծումը հնարավոր է կատարել միայն դատական կարգով:

Աշխատողների իրավունքների պաշտպանության և աշխատանքային հարաբերությունների մշտադիտարկման անհրաժեշտության վերաբերյալ նշվում է նաև մի շարք միջազգային փաստաթղթերում: Այսպես, Հայաստանի կողմից վավերացված Աշխատանքի միջազգային կազմակերպության «Արդյունաբերությունում և առևտրում աշխատանքի տեսչության մասին» թիվ 81 կոնվենցիայի համաձայն՝ անդամ պետությունները պարտավորվում են արդյունաբերական և առևտրի ձեռնարկություններում ստեղծել աշխատանքի տեսչության համակարգ, որը կոչված է ապահովելու աշխատանքի ընթացքում աշխատողների աշխատանքային պայմաններին ու պաշտպանությանը վերաբերող իրավանորմերի կիրառումը[18]: Ավելին, աշխատանքային հարաբերությունների վերահսկման լիազոր մարմինը կազմակերպական առումով պետք է ստեղծվի կենտրոնական մարմիններին կից, նրանց հսկողության ներքո: Սակայն ՀՀ-ում ոլորտում իրականացված վերը նշված փոփոխությունների արդյունքում Առողջապահական պետական տեսչությունը դարձել է ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի ստորաբաժանում՝ իջեցվելով կենտրոնական մարմնի կարգավիճակից:

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայով ևս սահմանվում է, որ յուրաքանչյուր կողմ, ազգային պայմաններին համապատասխան, պետք է ունենա աշխատանքային վերահսկողության համակարգ[19]:

Կարևորելով խնդիրը՝ հարցի լուծման նպատակով համապատասխան գործողություն է նախատեսվել նաև «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի 4 մայիսի N 483-Ն որոշման հավելված 1-ով սահմանված գործողությունների ծրագրի 40-րդ կետով: Ի կատարումը վերջինիս՝ իրականացվել է աշխատանքային հարաբերություններում աշխատողների իրավունքների պաշտպանության արտադատական ազգային մեխանիզմի ներդրման հնարավորության ուսումնասիրությունը: ՀՀ արդարադատության նախարարությունից տեղեկացրել են նաև, որ ուսումնասիրության արդյունքները կդիտարկվեն ՀՀ նոր աշխատանքային օրենսգրքի մշակման գործընթացի շրջանակներում:

Միաժամանակ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը 2017 թվականի հուլիսին գրությամբ դիմել է ՀՀ կառավարության աշխատակազմ, որով ներկայացրել է ՀՀ կողմից աշխատանքային հարաբերությունների կարգավորման ոլորտում ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման շրջանակներում առաջացած մի շարք խնդիրներ, որոնք պայմանավորված են ներկայում Հայաստանում աշխատանքի տեսչության գործառույթների բացակայությամբ: Թեև ըստ Նախարարության տրամադրած պարզաբանումների՝ 2017 թվականի ընթացքում համապատասխան իրավասու մարմին (տեսչություն) հիմնադրելու ուղղությամբ իրականացվել են որոշակի քայլեր, այնուամենայնիվ հարկ է նշել, որ ՀՀ-ում անձանց

[18] «Արդյունաբերությունում և առևտրում աշխատանքի տեսչության մասին» ԱՄԿ թիվ 81 կոնվենցիա, հոդվածներ 1-3:
[19] Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա, Մաս 3, հոդված Ա, կետ 4:

աշխատանքային իրավունքների համակարգային խախտման խնդիրը շարունակում է չլուծված մնալ:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է

1. ստեղծել աշխատանքի պայմանների, աշխատողների աշխատանքային ազատությունների և իրավունքների պահպանման ու պաշտպանության ապահովման, աշխատանքային օրենսդրության և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ իրավական ակտերի խախտումների վերացման ու կանխարգելման նկատմամբ իրավասություն ունեցող իրավասու արտադատական մարմին.

2. զանգվածային լրատվության միջոցներով շարունակել հասարակությանը իրազեկել աշխատանքային իրավունքների և դրանց պաշտպանության ուղիների վերաբերյալ.

3. վերանայել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպությունների մանկավարժական, բժշկական և սպասարկող անձնակազմերի աշխատավարձերի չափը:

2. Գործադուլի իրավունքը

2017 թվականին լուծում չի ստացել Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցներում և հաղորդմամբ բարձրաձայնված՝ գործադուլի իրականացման օրենսդրական սահմանափակման խնդիրը: ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանվում է աշխատողների գործադուլի իրավունքը, որը սահմանափակվում է *կոլեկտիվ աշխատանքային վեճի* առկայությամբ[20]: Մինչդեռ, գործնականում աշխատողները կարող են իրենց սոցիալական և տնտեսական, ինչպես նաև այլ իրավունքների պաշտպանության համար ևս դիմել գործադուլի, ինչը նշված իրավիճակում կհամարվի անօրինական: Ստեղծված իրավիճակը խնդրահարույց է ինչպես ՀՀ Սահմանադրության, այնպես էլ ՀՀ միջազգային պարտավորությունների տեսանկյունից[21]: Այսպես, ՀՀ Սահմանադրության 58-րդ հոդվածով սահմանվում է աշխատողների՝ իրենց տնտեսական, սոցիալական կամ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով գործադուլի իրավունքը: Ավելին, նույն հոդվածն ամրագրում է նաև, որ գործադուլի իրականացումը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանության նպատակով: Ավելին, ՀՀ սահմանադրական դատարանը աշխատողների գործադուլի իրավունքը մեկնաբանելիս արտահայտել է դիրքորոշում առ այն, որ վերջինս առնչվում է ոչ միայն «աշխատողներ-գործատու» իրավահարաբերություններին, այլև «աշխատողներ-երրորդ անձինք (հասարակություն)», «աշխատողներ-պետական մարմիններ», «գործատու-պետական մարմիններ» փոխհարաբերություններին:[22] Տրամաբանությունն այն է, որ անձը պետք է գործադուլի իրավունք ունենա անգամ այն պարագայում, երբ առկա չէ կոլեկտիվ վեճ, այլ կերպ ասած՝ եթե անձի կողմից բարձրացված խնդիրը կապված չէ աշխատողի և գործատուի փոխհարաբերությունների հետ: Սակայն առկա օրենսդրական

[20] ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 73, մաս 1:

[21] «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիր», հոդված 8, Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա, մաս 2, հոդված 6:

[22] ՀՀ սահմանադրական դատարանի 2007 թվականի փետրվարի 7-ի թիվ ՍԴՈ-677 որոշում:

կարգավորումների արդյունքում ստացվում է, որ այն սահմանափակվում է միայն աշխատող-գործատու փոխհարաբերություններով:

Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ աշխատողների՝ գործադուլի անցկացման իրավունքն ընդլայնելու (գործադուլի անցկացման հնարավորության ընձեռնում նաև կոլեկտիվ աշխատանքային վեճի բացակայության պայմաններում) ուղղությամբ օրենսդրական փոփոխություններ 2017 թվականին չեն իրականացվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է մշակել և ընդունել գործադուլի իրականացման ավելի լայն կարգ սահմանող օրենքի նախագիծ, որը թույլ կտա գործադուլ իրականացնել նաև «աշխատողներ-երրորդ անձինք (հասարակություն)», «աշխատողներ-պետական մարմիններ», «գործատու-պետական մարմիններ» փոխհարաբերություններում:

3. Աշխատանքի ազատ ընտրության իրավունքը կենսաթոշակի անցնելուց հետո

2017 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ուղղված դիմումներով բարձրաձայնվել է դատավորների՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված աշխատանքի ազատ ընտրության իրավունքի սահմանափակման խնդիրը:

Այսպես, «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի և օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթների բովանդակային-համադրված վերլուծությունից բխում է, որ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի իմաստով կենսաթոշակ ստանալու իրավունք ունի դատավորի պաշտոնում պաշտոնավարած այն անձը, որը չի կատարում այլ վարձատրվող աշխատանք և աշխատանքի ընդունվելու (պետական և համայնքային պաշտոն զբաղեցնելու կամ վճարովի այլ աշխատանք կատարելու՝ բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից, որպես անհատ ձեռնարկատեր՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու, նոտարի պաշտոն զբաղեցնելու) դեպքում վերջինիս կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարում է: Ընդ որում, խոսքը վերաբերում է ոչ միայն պետական և համայնքային պաշտոն զբաղեցնելուն, այլև ցանկացած վճարովի աշխատանք կատարելուն (բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից), որպես անհատ ձեռնարկատեր՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելուն, նոտարի պաշտոն զբաղեցնելուն: Ստացվում է, որ այս պարագայում դատավորի պաշտոնում պաշտոնավարած անձի կատարած աշխատանքի դիմաց վերջինիս կենսաթոշակի իրավունքը՝ որպես անձին տրամադրվող հատուկ սոցիալական երաշխիք, իրականում կապվում է այլ վարձատրվող աշխատանք չկատարելու հետ:

Անհրաժեշտ է ընդգծել, որ որպես դատավոր պաշտոնավարած անձի՝ հիշյալ օրենքով ամրագրված սոցիալական երաշխիքը, այն է՝ կենսաթոշակը, պետության կողմից տրամադրվում է վերջինիս կողմից կատարած աշխատանքի դիմաց և որպես այդ աշխատանքի արդյունավետ և անկողմնակալ իրականացման երաշխիք: Այդ մասին են փաստում նաև միջազգային մի շարք փաստաթղթեր[23]: Համանման դիրքորոշման է հանգել

[23] «Դատական իշխանության անկախության» ՄԱԿ-ի կողմից հաստատված հիմնական սկզբունքների 11-րդ կետ; ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի կողմից ընդունված «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի (դատարանների և տրիբունալների առջև հավասարության և արդար դատաքննության իրավունք) վերաբերյալ տրված թիվ 32

նաև ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2016 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ ՍԴՈ-1302 որոշման 7-րդ կետում: Վերոնշյալ փաստաթղթերի բովանդակությունից հետևում է, որ դատավորի՝ կենսաթոշակ ստանալու իրավունքը կապվում է բացառապես դատավորների անկախության, դատարանի անկողմնակալության, ինչպես նաև դատավորների կողմից կատարվող աշխատանքի հետ:

ՀՀ Սահմանադրության 57-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ազատ ընտրության իրավունք:* Աշխատանքի իրավունքը վերլուծելիս անհրաժեշտ է նախ և առաջ անդրադառնալ դրա նպատակին և բովանդակությանը: Այսպես, աշխատանքի իրավունքի իրացման հիմնական նպատակը վարձատրություն ստանալն է:

Այսպես, զուտ օրենսդրական կարգավորումների դիտարկումը ցույց է տալիս, որ որպես դատավոր պաշտոնավարած անձանց և կենսաթոշակի տարիքի հասած դատավորների աշխատանքային իրավունքների սահմանափակում առկա չէ: Այսինքն՝ անձն ազատորեն կարող է կատարել այս կամ այն աշխատանքը: Սակայն այն պարագայում, երբ խնդիրն ուսումնասիրվում է այդ անձանց սոցիալական երաշխիքների, մասնավորապես՝ կենսաթոշակի իրավունքի իրացման տեսանկյունից, պարզ է դառնում, որ անձը կարող է ազատորեն ընտրել և կատարել իր կողմից ընտրված վարձատրվող աշխատանք, որի արդյունքում, սակայն զրկվում է պետական պաշտոններ զբաղեցնող անձանց համար նախատեսված կենսաթոշակի իրավունքից: Այսինքն՝ անձը կանգնում է երկընտրանքի առջև, ինչն իր հերթին հանգեցնում է աշխատանքի ազատ ընտրության իրավունքի սահմանափակման:

Համալիր ուսումնասիրության արդյունքում բարձրացված խնդրի շուրջ վերոնշյալ նորմատիվ իրավական ակտերի դրույթների սահմանադրականության հարցի քննության նպատակով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը 2017 թվականին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան: Դատարան ներկայացված դիմումով բարձրացվել է որպես դատավոր պաշտոնավարած անձանց կենսաթոշակի անցնելուց հետո աշխատանքի ազատ ընտրության իրավունքի իրացման հարցը՝ հատկապես մասնավոր ոլորտում աշխատելու սահմանափակման տեսանկյունից: Միաժամանակ, խնդիրը կարգավորվել է նոր Դատական օրենսգրքի ընդունմամբ 2018 թվականին:

4. Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության չափանիշների բացակայությունը

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ 2017 թվականին մուտքագրված դիմումների քննության արդյունքում բացահայտվել են հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենի պաշտոնի ընտրման մրցույթների անցկացման և վերջնական արդյունքների որոշման ընթացակարգային խնդիրներ:

մեկնաբանության 19-րդ պարբերություն; Եվրոպայի դատավորների խորհրդատվական խորհրդի՝ Եվրոպական խորհրդի անդամ պետություններում դատավորների և արդարադատության իրավիճակի վերաբերյալ զեկույցի 34-րդ կետ; Եվրոպայի դատավորների խորհրդատվական խորհրդի կողմից ընդունված դատավորների Մագնա Կարտան (17 նոյեմբեր, 2010թ., Ստրասբուրգ); «Դատավորի կարգավիճակի մասին» 1998 թվականի հուլիսի 10-ի եվրոպական խարտիայի 6.4.-րդ կետ; Դատավորների համընդհանուր խարտիայի (1999 թվականի նոյեմբերի 17) 13-րդ հոդված; Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն իր՝ 2010 թվականի նոյեմբերի 17-ի թիվ CM/Rec (2010) 12 հանձնարարական

Այսպես, ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգը հաստատելու մասին» թիվ 319-Ն որոշմամբ հաստատվել է պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգը՝ համաձայն հավելվածի: Մասնավորապես, հավելվածի 28-րդ կետի համաձայն՝ եթե մրցույթին մասնակցելու համար դիմել է մեկ հավակնորդ և մրցույթում հաղթող չի ճանաչվել, ապա կրկնակի քվեարկություն չի անցկացվում և սույն կարգի համաձայն՝ հայտարարվում է նոր մրցույթ: Եթե հավակնորդների թիվը մեկից ավելի է, ապա հավակնորդների թիվը 2 լինելու և տնօրեն չընտրվելու դեպքում կրկնակի քվեարկություն չի անցկացվում, և խորհուրդը երեք աշխատանքային օրվա ընթացքում մարզային ենթակայության ուսումնական հաստատությունների դեպքում ՀՀ փոխվարչապետին, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, Երևանի քաղաքապետարանի ենթակայության ուսումնական հաստատությունների դեպքում համապատասխան լիազորված պետական մարմին է ներկայացնում խորհրդի նիստի արձանագրության և տնօրենի պաշտոնի հավակնորդների անձնական գործերի պատճենները: Հավելվածի 28.1 կետի համաձայն՝ 28-րդ կետերով նախատեսված դեպքերում ներկայացված փաստաթղթերի հիման վրա, 5 աշխատանքային օրվա ընթացքում, հաստատության՝ մարզային ենթակայության դեպքում ՀՀ փոխվարչապետը լիազոր մարմնի ղեկավարին գրությամբ առաջարկում է հավակնորդներից որևէ մեկի թեկնածությունը՝ օրենքով սահմանված կարգով աշխատանքային պայմանագիր կնքելու համար: ՀՀ կրթության և գիտության նախարարության, Երևանի քաղաքապետարանի ենթակայության ուսումնական հաստատությունների դեպքում հավակնորդին ընտրում և օրենքով սահմանված կարգով աշխատանքային պայմանագիր են կնքում համապատասխան լիազոր մարմինները: Ընտրության արդյունքների մասին լիազոր մարմինը գրությամբ տեղեկացնում է հաստատության խորհրդին՝ հավակնորդներին պատշաճ կերպով տեղյակ պահելու համար:

Խնդիրն այն է, որ նշված որոշմամբ հաստատված պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգը չի պարունակում կարգավորում ՀՀ փոխվարչապետի կողմից հավակնորդներից որևէ մեկի թեկնածությունն առաջարկելու չափորոշիչների և համապատասխան չափանիշների վերաբերյալ, ուստի նման իրավիճակում պարզ չէ, թե ինչ չափանիշների հիման վրա է առաջնայնությունը տրվում մրցույթի մասնակիցներին, ինչը տնօրենի ընտրության համար անցկացվող մրցույթի բնույթի և նպատակայնության խնդիրներ է առաջացնում, ինչպես նաև կարող է պարունակել կոռուպցիոն ռիսկեր:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է սահմանել պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության հստակ չափանիշներ՝ հավակնորդներից որևէ մեկի թեկնածության առաջարկման և ըստ այդմ՝ տնօրենի համապատասխան թեկնածուին ընտրելու համար:

5. Ոստիկանությունում ծառայությունից ազատումը

Պաշտպանին հասցեագրված բողոքներում բարձրացվել է ոստիկանությունում ծառայությունից ազատման և դրանով պայմանավորված սոցիալական երաշխիքներից

օգտվելու հնարավորության սահմանափակման խնդիր: Այսպես, դիմողը հանդիսացել է ՀՀ ոստիկանության ծառայող, լրացել է վերջինիս աշխատանքային գործունեության 20 տարին և այդ պահից ձեռք է բերել կենսաթոշակի իրավունք: Այնուհետև 6 ամիս անց պաշտոնեական լիազորությունների չարաշահում թույլ տալու պատճառով ՀՀ ոստիկանապետի հրամանով ժամանակավորապես դադարեցվել են դիմողի լիազորությունները, որից հետո մեկ այլ հրամանով ազատվել է զբաղեցրած պաշտոնից և գրանցվել կադրերի ռեզերվում: Դիմողը ՀՀ ոստիկանապետին զեկուցագրեր է ներկայացրել ոստիկանությունում ծառայությունից ազատվելու և երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու խնդրանքով: Սակայն ստացել է մերժում այն պատճառաբանությամբ, որ համաձայն «ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքի 16.1-րդ հոդվածի 1-ին մասի՝ ոստիկանության ծառայողը, որի նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում, մինչև քրեական հետապնդումը դադարեցնելը չի կարող նշանակվել նոր պաշտոնի, իր նախաձեռնությամբ ազատվել ոստիկանությունում ծառայությունից:

Անձին աշխատանքից չազատելու և կադրերի ռեզերվից սահմանված ժամկետից առավել պահելու արդյունքում անձի ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված կենսաթոշակի անցնելու իրավունքը չի ապահովվել, քանի որ նա չի կարողացել անցնել երկարամյա ծառայության կենսաթոշակի:

«Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ ոստիկանության ծառայողները ոստիկանությունում ծառայությունից ազատվում են սահմանված կարգով կադրերի ռեզերվից հանվելու դեպքում: Նույն օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ոստիկանության ծառայության կադրերի ռեզերվում ոստիկանության ծառայողի միանգամյա գտնվելու առավելագույն ժամկետը վեց ամիս է (բացառությամբ նույն հոդվածի չորրորդ մասով սահմանված դեպքերի), բայց ոչ ավելի, քան համապատասխան խմբի համար սահմանված ծառայության առավելագույն ժամկետի լրանալը:

Մյուս կողմից, «ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքի 16.1-րդ հոդվածի 1-ին մասի՝ ոստիկանության ծառայողը, որի նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում, մինչև քրեական հետապնդումը դադարեցնելը չի կարող նշանակվել նոր պաշտոնի, իր նախաձեռնությամբ ազատվել ոստիկանությունում ծառայությունից: Ստացվում է, որ «Ոստիկանությունում ծառայության մասին» և «ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքները պարունակում են դրույթներ, որոնցից մեկի կիրառումով խախտվում է մյուսը, քանի որ մի կողմից ոստիկանության ծառայության կադրերի ռեզերվում ոստիկանության ծառայողի գտնվելու ժամկետը 6 ամիս է, մյուս կողմից էլ՝ անձը, ում նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում, մինչև դրա դադարեցնելը չի կարող ոստիկանությունում ծառայությունից ազատվել իր նախաձեռնությամբ:

Նշվածը հաշվի առնելով՝ Պաշտպանի կողմից ՀՀ ոստիկանությանն առաջարկվել է համապատասխան միջոցներ ձեռնարկել պրակտիկայում նշված կարգավորումների կիրառման, ինչպես նաև նշված իրավիճակներում քաղաքացիների աշխատանքի ընտրության ազատության և կենսաթոշակի անցնելու իրավունքի իրացման ապահովման ուղղությամբ: Արդյունքում ՀՀ ոստիկանությունից հավաստիացրել են, որ ոստիկանության

կադրային վարչության իրավակիրառ պրակտիկան ամբողջությամբ փոխվել է. այսուհետ կադրերի ռեզերվում գտնվելու առավելագույն ժամկետը լրացած և քրեական հետապնդման մեջ գտնվող ծառայողները ՀՀ ոստիկանությունում ծառայությունից ազատվելու են «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի հիմքով՝ սահմանված կարգով կադրերի ռեզերվից հանվելու դեպքում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է «ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքի 16.1-րդ հոդվածի 1-ին մասում կատարել փոփոխություն՝ ամրագրելով, որ «Ոստիկանության ծառայողը, ում նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում, մինչև քրեական հետապնդումը դադարեցնելը չի կարող նշանակվել նոր պաշտոնի: Նա չի կարող իր նախաձեռնությամբ ազատվել ոստիկանությունում ծառայությունից, բացառությամբ «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի հիմքով՝ սահմանված կարգով կադրերի ռեզերվից հանվելու դեպքում:»:

ԳԼՈՒԽ 4. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Կրթության իրավունքն ամրագրված է թե՛ ՀՀ Սահմանադրությամբ, թե՛ ՀՀ կողմից վավերացված մի շարք միջազգային փաստաթղթերով: Մասնավորապես, ըստ ՀՀ Սահմանադրության 15-րդ հոդվածի՝ պետությունը խթանում է կրթության և գիտության զարգացումը, իսկ Սահմանադրության 38-րդ հոդվածը, որպես անձի հիմնական իրավունք սահմանում է կրթության իրավունքը: Կրթության իրավունքն ամրագրված է նաև ՀՀ կողմից վավերացված մի շարք միջազգային պայմանագրերով, օրինակ՝ ՄԱԿ-ի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության «Կրթության բնագավառում խտրականության դեմ» կոնվենցիայով, «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի միջազգային կոնվենցիայով, «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» ՄԱԿ-ի դաշնագրով և այլն: Միջազգային պայմանագրերի մի մասն ընդհանրական է սահմանում կրթության իրավունքը, իսկ մյուսներն անդրադառնում են հատուկ խմբերի (օրինակ՝ հաշմանդամություն ունեցող) անձանց կրթության իրավունքին:

Կրթության իրավունքը և դրա իրացման մեխանիզմներն ամրագրված են ՀՀ մի շարք օրենքներում և այլ իրավական ակտերում: Չնայած գործող բոլոր իրավական ակտերի, առկա են կրթության իրավունքի լիարժեք իրագործմանը խոչընդոտող թե՛ իրավական, թե՛ գործնական խնդիրներ:

Այս ոլորտում աշխատանքներն իրականացվել է Կրթության և գիտության նախարարության հետ համագործակցության պայմաններում:

1. Կրթության իրավունքը նախադպրոցական կրթական հաստատություններում

Նախադպրոցական ուսումնական հաստատությունը երեխայի սոցիալականացման վաղ շրջանում կրթության իրավունքի կիրառման կարևոր ինստիտուտ է: Այն կարևոր է նաև երեխայի բնականոն զարգացման խթանման համար, քանի որ զարգացման առաջին տարիները հիմնաքարային են, և այս տարիքում ցանկացած ուղղորդում անդրադառնում է երեխայի հետագա սոցիալականացման վրա: Միաժամանակ, առ այսօր լուծում չեն ստացել որոշ վայրերում նախադպրոցական ուսումնական հաստատությունների բացակայության հարցը: Ավելին, 2017 թվականին արձանագրվել է նաև նախադպրոցական ուսումնական հաստատություններ երեխաների ընդունելության հարցի հետ կապված խնդիրներ: Արդյունքում, երեխաները զրկվում են նախադպրոցական կրթություն ստանալու հնարավորությունից:

2016 թվականին ՀՀ-ում գործել է 721 համայնքային, գերատեսչական և ոչ պետական նախադպրոցական հաստատություն (ՆԴՀ), որոնցից 575-ը՝ մանկապարտեզ, 113-ը՝ մսուր-մանկապարտեզ, 33-ը՝ դպրոց-մանկապարտեզ: ՆԴՀ-ների ընդհանուր քանակից 654-ը համայնքային ենթակայության է, 15-ը՝ գերատեսչական և 52-ը՝ ոչ պետական: Երեխաների ընդգրկվածությունը ՆԴՀ-ներում (0-5 տարեկան բնակչության թվաքանակից) կազմել է 28.9%, քաղաքներում՝ 35.6%, գյուղերում՝ 17.2%: Մեկ խմբում երեխաների միջին թվաքանակը կազմել է 27 երեխա, տեղերի փաստացի զբաղվածությունը՝ 85.8%: Միջին հաշվով մեկ ՆԴՀ հաճախել է 100 երեխա, մեկ մանկավարժին բաժին է ընկել 12 երեխա:

ՆԴՀ-ների շենքերի ընդհանուր մակերեսը կազմել է 731.0 հազ. քառ. մ: ՆԴՀ-ներին կից (օժանդակ) տարածքի մակերեսը կազմել է 557.9 հազ. քառ. մ[24]:

Երևանի քաղաքապետի կողմից 2017 թվականի օգոստոսի 31-ին ընդունված թիվ 2973-Ա որոշմամբ Երևանի քաղաքապետի 2011 թվականի մարտի 31-ի N1101-Ա որոշման մեջ կատարվել են փոփոխություններ և վերոգրյալ որոշումը լրացվել է 2.1 կետով, որի համաձայն՝ «Երեխայի նախադպրոցական հաստատություն (մանկապարտեզ) հաճախելու համար հաշվառումն /հերթագրում/ իրականացվում է ծնողի /օրինական ներկայացուցչի/ դիմումի հիման վրա, երեխայի 2 կամ 3 տարեկանը լրանալուց հետո՝ երեխայի անձը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում միայն մեկ նախադպրոցական հաստատության (մանկապարտեզի) համար, ընդ որում մինչև 3 տարեկան երեխաների հաշվառումը և ընդունելությունն իրականացվում է տվյալ մանկապարտեզում 2-ից մինչև 3 տարեկան տարիքային փուլի համար անհրաժեշտ նախադպրոցական կրթական ծրագրերի իրականացման համար համապատասխան հնարավորությունների առկայության դեպքում:»:

Երևանի քաղաքապետարանի հայտնած տեղեկությունների համաձայն՝ 2017 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ մանկապարտեզներում հաշվառված է շուրջ 30070 և հերթագրված է շուրջ 8000 երեխա՝ ըստ «Մանկապարտեզ» էլեկտրոնային համակարգի: Երևանի քաղաքապետի 2017 թվականի օգոստոսի 31-ի 2973-Ա որոշմամբ կանոնակարգվել է երեխաների՝ ըստ տարիքային փուլերի հաշվառումը և ընդունելությունը, ըստ որի՝ հերթագրումը և ընդունելությունը կատարվում է տարիքային համապատասխան խմբեր ունեցող մանկապարտեզներում:

Ստացվում է, որ այն երեխաները, որոնք մինչ վերոգրյալ որոշման ընդունումը հերթագրված են եղել և պետք է մանկապարտեզ հաճախեին 2017 թվականի սեպտեմբերից՝ զրկվել են այդ իրավունքից՝ 2 տարեկանը լրացած չլինելու պատճառով: Ավելին, նշված երեխաների ծնողները տեղյակ չեն եղել ակնկալվող փոփոխությունների մասին: Արդյունքում, ծնողները ստիպված են եղել աշխատանքի չներկայանալ, քանի որ իրենց երեխաները զրկվել են մանկապարտեզ հաճախելու հնարավորությունից:

Նշված խնդիրները, ըստ էության, պայմանավորված են նախակրթության ոլորտում առկա օրենսդրական թերի և ոչ միասնական կարգավորումներով, մասնավորապես՝ նախակրթական ուսումնական հաստատություն ընդունման միասնական կարգի բացակայությամբ: Այսպես, որևէ կենտրոնական մարմնի կողմից հաստատված չէ ՀՀ-ում նախնական ուսումնական հաստատություն ընդունման կարգը: Փոխարենը՝ յուրաքանչյուր համայնք ինքնուրույն է կարգավորում այդ խնդիրը:

2016 թվականին մշակվել է Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2016-2025 թվականների պետական ծրագիրը, որը սակայն մինչ օրս հաստատված չէ օրենքով: Այս ծրագրով սահմանված նպատակներից է՝ մինչև 2025 թվականը հավասար հասանելի և որակյալ նախադպրոցական կրթության մատչելիություն ապահովել 3-6 տարեկան բոլոր երեխաների համար: Այսինքն՝ նախադպրոցական կրթության զարգացման հիմնական գերակայություններն են նախադպրոցական կրթության մատչելիության և հասանելիության ապահովումը և կրթության որակի բարձրացումը:

[24] http://www.armstat.am/file/article/poverty_2017_a_4.pdf

Դեռևս 2012 թվականի ՀՀ կառավարության գործողությունների ծրագրով նախատեսվել է նախադպրոցական կրթության հասանելիության ապահովումը, որի իրականացման համար ՆԴՀ չունեցող համայնքում ներդրվել է նախակրթարանների համակարգը:[25] Համաշխարհային բանկի վարկային ծրագրի շրջանակներում իրականացվում է «Դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում» ենթածրագիրը, որի շրջանակներում տարբեր համայնքներում, գերազանցապես գյուղական բնակավայրերում, դպրոցների նյութատեխնիկական բազայի հիման վրա ստեղծվում են 5-6 տարեկան երեխաների նախակրթարաններ: Ծրագիրը ներառում է նաև նախակրթարանների տնօրենների ու մանկավարժների վերապատրաստում, մոնիտորինգ ու մեթոդական աջակցություն՝ Համաշխարհային բանկի «Կրթության որակ և համապատասխանություն» ծրագրի շրջանակներում[26]:

Հաշվի առնելով վերոգրյալն՝ անհրաժեշտ է՝

1. ավելացնել նախադպրոցական ուսումնական հաստատությունների թիվը, հատկապես մինչև 3 տարեկան երեխաների նախադպրոցական կրթությունն ապահովելու համար՝ հատուկ ուշադրություն դարձնելով փոքր համայնքներին.

2. ներդնել միասնական կենտրոնացված համակարգ և նախատեսել հստակ օրենսդրական կարգավորումներ երեխաների՝ նախակրթական ուսումնական հաստատություն ընդունման համար:

2. Կրթության իրավունքի իրացումը հանրակրթական ուսումնական հաստատություն երեխային ընդունելիս

2017 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ մուտքագրված դիմումների քննության արդյունքում բացահայտվել է հանրակրթական ուսումնական հաստատություններ ընդունելության ընթացակարգին վերաբերող համակարգային խնդիր, որը սահմանափակում է երեխաների կրթության իրավունքի իրացումը: Օրենսդրական թերի կարգավորումների արդյունքում երեխաները չեն կարողանում ընդունվել իրենց բնակության վայրին մոտ գտնվող դպրոց:

Այսպես, ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 1640 հրամանի հավելվածի 2-րդ կետի համաձայն՝ ընդունելությունը դպրոցում, որպես կանոն, կազմակերպվում է երկու փուլով՝ տվյալ տարվա հունիսի 1-ից մինչև 30-ը և օգոստոսի 1-ից մինչև օգոստոսի 31-ը ներառյալ, իսկ նույն հավելվածի 14-րդ կետը սահմանում է երեխային (սովորողին) դպրոց ընդունելու կամ տեղափոխելու դեպքում ծնողի կողմից ներկայացվող փաստաթղթերի ցանկը: Սակայն իրավական ակտերի ուսումնասիրության արդյունքում պետք է նշել, որ ընդունելության ընթացակարգի վերաբերյալ որոշումների կայացման հստակ ընթացակարգեր սահմանված չեն. սահմանված չեն որոշումների կայացման ժամկետներ, չկան դպրոցի ընդունելության համար ծնողի կողմից անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելու համար դպրոցի տնօրենի կողմից ծնողների իրազեկման վերաբերյալ սահմանված կանոնակարգեր:

[25] ՀՀ կառավարության 18.06.2011թ. N 730-Ա որոշման հավելված, ՀՀ կառավարության ծրագիր, էջ 8

[26] Աղբյուր՝ ԿԳՆ Կրթական ծրագրերի կենտրոն ծրագրերի իրականացման գրասենյակի կայքէջ

Այսպիսով, բողոքի քննարկման ընթացքում կայացվել է մարդու իրավունքների կամ ազատությունների խախտման առկայության մասին որոշում և առաջարկվել է ՀՀ կրթության և գիտության նախարարին քննարկման առարկա դարձնել ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 1640 հրամանով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության սովորողի ընդունելության, տեղափոխման և ազատման կարգում համապատասխան փոփոխություններ կատարելու հարցը: Արդյունքում, ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից նախաձեռնվել է համապատասխան հրամանում փոփոխություններ կատարելու մասին հրամանի նախագիծը մշակումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է.

1. ընդունել ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 1640 հրամանի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին հրամանը կամ այլ իրավական ակտերով սահմանել հանրակրթական ուսումնական հաստատություններում ընդունելության հստակ և միասնական ընթացակարգեր.

2. ապահովել հանրակրթական ուսումնական հաստատություններում ընդունելության ընթացակարգերի պահանջների կատարումը:

3. Հանրակրթական ուսումնական հաստատություններում դասագրքերի օգտագործման համար ներդրումային գումարների գանձումը

2017 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքներով բարձրացվել է հանրակրթական ուսումնական հաստատություններում դասագրքերի օգտագործման դիմաց ներդրումային գումարների գանձման խնդիրը:

ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2009 թվականի օգոստոսի 21-ի «Հանրակրթական ուսումնական հաստատությունները դասագրքերով ապահովելու, հանրակրթական առարկաների դասագրքերը հրատարակելու և հանրակրթության պետական չափորոշչին դասագրքերի համապատասխանության գնահատման առարկայական հանձնաժողովների ձևավորման կարգը հաստատելու մասին» № 752-Ն հրամանի[27] հավելվածի 5-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբից առնվազն 15 օր առաջ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից հաստատվում է սովորողների ծնողների (օրինական՝ ներկայացուցիչների) կողմից դասագրքերի օգտագործման դիմաց ներդրումային գումարների տարեկան չափը:

Ստացվում է, որ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների առաջինից չորրորդ դասարանների աշակերտներին պետությունը պետական բյուջեի միջոցների հաշվին անվճար ապահովում է տարրական ընդհանուր կրթական ծրագրերով նախատեսված դասագրքերով, իսկ այլ դասարանների աշակերտների դասագրքերի համար սովորողների ծնողների (օրինական՝ ներկայացուցիչների) կողմից դասագրքերի օգտագործման դիմաց վճարվում են ներդրումային գումարներ: Ընդ որում, այդ ներդրումային գումարների վճարումը դասագրքերի տրամադրման համար պարտադիր պայման է:

[27] Սույն բաժնում այսուհետ՝ Հրաման

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից ուսումնասիրվել են ՀՀ կրթության և գիտության նախարարների՝ հանրակրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների դասագրքերի համար ներդրումային գումարների չափը հաստատելու մասին 2010-2017 թվականների համանուն հրամանները, որոնք ցույց են տալիս, որ դասագրքերի համար նշված ներդրումային գումարների չափը տարեցտարի ոչ միայն չի պակասում, այլն՝ ավելանում է:[28]

Ընդ որում, օրենքի մակարդակով այդ վճարների վերաբերյալ խոցելի խմբերի երեխաների դասագրքերի համար որևէ բացառություն նախատեսված չէ: ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերի հաշվարկման, պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերում կատարվող վերաբաշխումների կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 25-ի N 773 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1262-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ բոլոր պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների, ըստ աշակերտների թվի, ֆինանսավորման իրականացման բանաձևը, որում ներառված է նաև սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարի համար փոխհատուցվող գումարի չափը: Ըստ այդմ, հանրակրթական ուսումնական հաստատության սոցիալապես անապահով ընտանիքների սովորողների ցուցակը քննարկվում և ձևավորվում է հաստատության մանկավարժական և ծնողական խորհուրդների համատեղ նիստում, որը հաստատվում է տնօրենի կողմից:

Սակայն խնդիրն այն է, որ պարզ չէ, թե ի՞նչ չափանիշների հաշվառմամբ, ի՞նչ սկզբունքով են ընտրվում ցուցակում ներգրավված երեխաները կամ նրանց ընտանիքը, արդյո՞ք հիմք է ընդունվում ընտանիքի նպաստառու լինելու փաստը, թե՞ ցուցակը կազմվում է նաև այլ չափանիշների հիման վրա: Անհստակության հանգեցնող բոլոր այս հարցերը գործնականում մի շարք խնդիրներ են առաջացնում: Նախ և առաջ ամոթի և իրենց երեխաներին հնարավոր խարանից զերծ պահելու պատճառով որոշ ծնողներ առհասարակ չեն բարձրաձայնում իրենց կողմից այդ վճարների տրամադրման բարդությունները, իսկ մի շարք դեպքերում էլ այս իրավիճակը բերում է խտրական վերաբերմունքի: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ներկայացված ահազանգերով ծնողները նշել են, որ դասագրքերի ներդրումային գումարներն ուշացնելու հետևանքով վատթարացել է իրենց երեխայի նկատմամբ վերաբերմունքը դպրոցի անձնակազմի կողմից: Այս մասին են վկայում նաև ոլորտի հասարակական կազմակերպությունների և անհատների հետ առանձնազրույցները: Ստացվում է, որ նույն սոցիալական պայմաններում ապրող երկու տարբեր ընտանիքների դեպքում գումարի գանձումն իրականացվում է տարբեր ձևերով: Այսինքն՝ մի դեպքում ընտանիքը կհամարվի աջակցության կարիք ունեցող և հետևաբար կազատվի ներդրումային գումարի վճարումից, իսկ այլ դեպքում՝ մեկ այլ ընտանիք, որը նույն սոցիալական վիճակում է, ստիպված կլինի

[28] Ուսումնական հաստատությունների կրթական ծրագրերով հաստատված դասագրքերի ներդրումնային գումարների տարեցտարի աճման միտումը կարելի է ցույց տալ, օրինակ՝ ուսումնական հաստատությունների 5-րդ դասարանի դասագրքերի օրինակով. մայրենիի դասագիրք՝ 330 ՀՀ դրամ 2010 թվական, 470 ՀՀ դրամ 2014 թվական, 490 ՀՀ դրամ 2017 թվական, մաթեմատիկայի դասագիրք՝ 330 ՀՀ դրամ 2010 թվական, 470 ՀՀ դրամ 2014, 490 ՀՀ դրամ 2017 թվական, ռուսաց լեզվի դասագիրք՝ 450 ՀՀ դրամ 2010 թվական, 420 ՀՀ դրամ 2014 թվական, 420 ՀՀ դրամ 2017 թվական:

վճարել ներդրումային գումարները: Փաստորեն, գործ ունենք երեխաների սոցիալական կարիքների գնահատման երկակի չափորոշիչների հետ, որոնք հենված են սուբյեկտիվ մոտեցումների վրա և համապատասխանաբար, նաև պարունակում են կոռուպցիոն ռիսկեր:

Մինչդեռ անվճար միջնակարգ կրթության իրավունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 15-րդ հոդվածով, որի համաձայն՝ պետությունը խթանում է կրթության և գիտության զարգացումը: Ավելին, ՀՀ Սահմանադրության՝ անձի հիմնարար իրավունքներն ամրագրող 2-րդ գլխի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունն անվճար է: Անվճար կրթության իրավունքը երաշխավորվում է նաև ՀՀ կողմից վավերացված մի շարք միջազգային փաստաթղթերով, այդ թվում՝ «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» ՄԱԿ-ի միջազգային դաշնագիրը, Եվրոպայի խորհրդի Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայով:

Ստացվում է, որ ՀՀ-ն ճանաչում և երաշխավորում է անվճար միջնակարգ կրթության իրավունքը: Միաժամանակ, այդ իրավունքի իրացման համար անհրաժեշտ և դրա բաղկացուցիչ մասը կազմող դասագրքերի համար նախատեսվել է վճար, որը գանձվում է իրավունքի սուբյեկտից: Ընդ որում, նախատեսված չէ որևէ տարանջատում՝ կապված, օրինակ, խոցելի խմբերի երեխաներին դասագրքերով ապահովելու վերաբերյալ: Ավելին, դասագրքերով սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին ապահովելու առկա մեխանիզմները ենթադրում են դպրոցներում առանձին երեխաների խոցելիության ամրագրումն ու այլ երեխաներից նրանց առանձնացումը, ինչը նույնպես խտրական վերաբերմունքի դրսևորում է:

Վերոնշյալը հաշվի առնելով՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը 2017 թվականին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան: Դիմումում բարձրացվել է հանրակրթական ուսումնական ծրագրերով նախատեսված դասագրքերի անվճարության հարցը և սոցիալապես անապահով ընտանիքների համար հստակ չափանիշների նախատեսման և ըստ այդմ՝ նաև աջակցության տրամադրման հարցը:

Ուստի անհրաժեշտ է սահմանել հանրակրթական ուսումնական հաստատություններում երեխաներին անվճար դասագրքեր տրամադրելու մեխանիզմ կամ կատարել համապատասխան փուլային անցում: Խոսքն առաջին հերթին վերաբերում է այնպիսի հստակ չափանիշներ ամրագրելուն, որոնց հաշվառմամբ ընտանիքը կհամարվի սոցիալապես անապահով և ըստ այդմ՝ կստանա աջակցություն դասագրքերի ձեռքբերման հարցում:

4. Կրթության իրավունքի սահմանափակումը՝ կրթությունից դուրս մնալու հետևանքով

Համակարգային առումով շարունակվում է չլուծված մնալ կրթությունից դուրս մնացած երեխաների հարցը, որին Մարդու իրավունքների պաշտպանն անդրադարձել է նաև 2016 թվականի տարեկան հաղորդմամբ: Խնդրի մասին մանրամասն նշվել է նաև «Հայաստանի Հանրապետության կողմից Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման վիճակի վերաբերյալ» 2018 թվականի Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույցում:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երեխայի՝ կրթությունից դուրս մնալու պատճառները կարող են պայմանավորված լինել տարբեր գործոններով, այդ թվում՝ վատ սոցիալական պայմաններով, երեխայի հաշմանդամությամբ, երեխաների բացակայություններին իրավասու անձանց ոչ պատշաճ արձագանքով, երեխաներին աշխատանքի մեջ ներգրավելով, իսկ առանձին էթնիկ խմբերի դեպքում անգամ երեխաների վաղ ամուսնությամբ:

«Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» ՀՀ ազգային վիճակագրական ծառայության 2017 թվականի զեկույցի համաձայն՝ 2016-2017 ուսումնական տարվա սկզբին Հայաստանում հանրակրթությունից դուրս է մնացել 260 երեխա:[29] Նույն զեկույցի համաձայն՝ 2016/2017 ուսումնական տարում դպրոցներում աշակերտների համախառն ընդգրկվածության ցուցանիշը կազմել է 86%, ընդ որում, տարրական դպրոցում այն կազմել է 91.2%, հիմնական դպրոցում՝ 90.7%, ավագ դպրոցում՝ 65.1%: Աշակերտների զուտ ընդգրկվածության ցուցանիշը տարրական դպրոցում կազմել է 89.1%, հիմնական դպրոցում՝ 89.6%: Աշակերտների «ճշգրտված զուտ ընդգրկվածության» ցուցանիշը տարրական դպրոցում կազմել է 89.5%, հիմնական դպրոցում՝ 89.9%:[30] Ի տարբերություն հիմնական կրթության, սովորողների ընդգրկվածությունը միջնակարգ դպրոցի բարձր դասարաններում և բարձրագույն կրթական հաստատություններում համեմատաբար ավելի ցածր է, իսկ աղքատների և ոչ աղքատների ընդգրկվածության տարբերությունը բավական նկատելի:[31]

Խնդիրը նախ և առաջ այն է, որ օրենսդրությամբ տրված չէ «կրթությունից դուրս մնացած երեխա» հասկացության սահմանումը: Բացի այդ, Հայաստանում դպրոցից դուրս մնացած երեխաներին հետևելու և ուղղորդելու գործող համակարգ գոյություն չունի:[32] Արդյունքում, բարդանում է նաև կրթությունից դուրս մնացած երեխաների վերաբերյալ հստակ և միասնական վիճակագրական տվյալների հավաքագրումը:

«Երեխաների կարծիքով...» համազգային հարցման համաձայն՝ վաղ տարիքում աշխատելը երեխաների կրթության խոչընդոտներից մեկն է: Այն առավել տարածված է գյուղական և հեռավոր բնակավայրերում, ինչի մասին են վկայում նաև այն հարցվածները, որոնք նշել են, որ Հայաստանի որոշ մարզերում (ինչպիսիք են Արագածոտնի, Արմավիրի, Գեղարքունիքի մարզերը), մեծ է այնպիսի երեխաների թիվը, ովքեր բացակայել են դպրոցից աշխատանքում ներգրավված լինելու պատճառով: Աշխատանքում ներգրավված լինելու պատճառով դպրոց հաճախել չկարողացող աշակերտների ամենամեծ տոկոսները գրանցվել են Գեղարքունիքի (26%), Տավուշի (19%) և Վայոց Ձորի (15%) մարզերում:[33]

Կրթությունից դուրս մնացած երեխաների վերաբերյալ հստակ տվյալների հավաքագրման, ինչպես նաև այդ երեխաների հայտնաբերման հարցում խոչընդոտ է նաև այն, որ հաճախ դպրոցում հաշվառված երեխաների թիվը կարող է հաճախող երեխաների թվից ավել լինել: Խնդրի վերաբերյալ իր մտահոգությունն է հայտնել նաև Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեն իր եզրափակիչ

[29] http://www.armstat.am/file/article/poverty_2017_a_4.pdf
[30] http://www.armstat.am/file/article/poverty_2017_a_4.pdf
[31] http://www.armstat.am/file/article/poverty_2017_a_4.pdf
[32] http://www.unicef.am/am/articles/education
[33] https://armenia.savethechildren.net/sites/armenia.savethechildren.net/files/library/YV_brief%20version_Final%20_%20arm.pdf

դիտարկումներում:[34] Հիմնական պատճառն այն է, որ հանրակրթական դպրոցները ֆինանսավորվում են աշակերտների թվով, ուստի ուսուցիչները հաճախ աշակերտների բացակայություններն օբյեկտիվորեն չեն գրանցում:[35] Նույն խնդիրն առկա է նաև ներառական և հատուկ դպրոցներում, հատկապես հաշվի առնելով այն, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար դպրոցը ստանում է 3-4 անգամ ավել ֆինանսավորում, քան կրթության առանձնահատուկ պայմանների կարիք չունեցող երեխաների համար:[36]

Խնդրի լուծման կապակցությամբ իրավասու մարմինների կողմից իրականացվել են որոշ միջոցառումներ: Մասնավորապես, դեռևս 2015 թվականի հուլիսի 31-ին ՀՀ կառավարության և ՄԱԿ-ի միջև համաձայնեցված Զարգացման աջակցության 2016-2020 թվականների ծրագրով անդրադարձ է կատարվել նշված խնդրին և նախատեսվել է ներդնել միջճյուղային այնպիսի մեխանիզմներ և ռազմավարություններ, որոնք հնարավորություն կտան հայտնաբերել և աջակցել դպրոց չհաճախող և ռիսկային խմբում ընդգրկված երեխաներին:[37]

ՀՀ կրթության և գիտության նախարարության 2017 թվականի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ ԿԳՆ Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը պարտադիր ուսուցումից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման շրջանակներում ստեղծել է «Պարտադիր ուսուցումից դուրս մնացած երեխաների հաշվառման» ենթածրագիր: Ենթածրագիրը հնարավորություն է տալիս վերահսկել դպրոցում արդեն ընդգրկված երեխաների՝ տարբեր պատճառներով կրթությունից դուրս մնալու ռիսկերը, սակայն, ի սկզբանե կրթության մեջ երեխաների չընդգրկվելը բացահայտելու համար անհրաժեշտ են յուրաքանչյուր ուսումնական տարվա թղթակցող տարում ծնված բոլոր երեխաների տվյալները: 2017-2018 ուսումնական տարում նախատեսվում է ենթածրագիրն իրականացնել Լոռու մարզում, իսկ հետագայում՝ ՀՀ ողջ տարածքում:

Այնուամենայնիվ, վերոնշյալ տվյալները և վերլուծությունը վկայում են այն մասին, որ առ այսօր Հայաստանում կրթությունից դուրս մնացած երեխաներին հետևելու և ուղղորդելու գործող համակարգ գոյություն չունի:

Հաշվի առնելով վերոգրյալն՝ անհրաժեշտ է.

1. օրենսդրորեն ամրագրել «կրթությունից դուրս մնացած երեխա» հասկացությունը՝ նախատեսելով հստակ չափանիշներ, որոնցով հնարավոր կլինի գնահատել երեխայի կարգավիճակը.

2. վարել միասնական և տարանջատված վիճակագրություն կրթությունից դուրս մնացած երեխաների թվի, կրթությունից դուրս մնալու պատճառների վերաբերյալ.

3. ձեռնարկել քայլեր նման դեպքերը կանխելու համար: Այսպիսի քայլեր կարող են լինել՝

- աջակցությունը սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին՝ բնակության վայրից հեռու գտնվող ուսումնական հաստատություններ հասնելու գործում.

---

[34] ՄԱԿ-ի՝ Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի՝ Հայաստանի 5-6-րդ պարբերական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, 2016 թվականի նոյեմբերի 18, կետ 22 և 36:
http://www.refworld.org/pdfid/583863b34.pdf

[35] Երեխայի իրավունքների իրավիճակի վերլուծություն. Հայաստան,
https://armenia.savethechildren.net/sites/armenia.savethechildren.net/files/library/book-arm.pdf

[36] Երեխայի իրավունքների իրավիճակի վերլուծություն. Հայաստան,
https://armenia.savethechildren.net/sites/armenia.savethechildren.net/files/library/book-arm.pdf

[37] http://www.un.am/up/file/Armenia%20-%20UNDAF%202016-2020%20-%20ARM.pdf

- հաշմանդամության հիմքով կրթությունից դուրս մնալու բացառումը՝ ապահովելով կրթական ծրագրերի և հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների մատչելիությունը:

5. Հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության իրավունքի իրացումը

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ մուտքագրված դիմումով բարձրացվել էր թե՛ ներառական կրթություն իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատություններում, թե՛ հատուկ դպրոցներում հաշմանդամություն ունեցող երեխաների կարիքներին համապատասխան հատուկ դասագրքերի հասանելիության խնդիրը, ինչը վկայում է այդ հաստատություններում հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության իրավունքի իրացման սահմանափակումների մասին: Մասնավորապես, ներառական կրթություն ունեցող դպրոցների համար առկա չեն տեսողության և մտավոր խնդիրներ ունեցող երեխաների համար անհրաժեշտ բավարար դասագրքեր: Ավելին, համանման խնդիրներ 2017 թվականին բարձրաձայնվել են նաև մամուլում առկա հրապարակումներով[38]: Այսպես, դրանից մեկը վկայում է, որ Երևանի թիվ 14 հատուկ դպրոցում դասագրքերի քանակը բավարար չէ, ինչպես նաև բովանդակային խնդիրներ կան՝ կապված դասագրքերի հնության և կրթական ծրագրերին դրանց անհամապատասխանության հետ:

ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ներկայացված բրայլյան համակարգով և խոսող դասագրքերի ցանկի ուսումնասիրության արդյունքները ևս ցույց են տալիս դասագրքերի մատչելիության խնդրի առկայությունը: Այսպես, 2-րդ դասարանի ուսումնական ծրագրով նախատեսված առարկաների դասագրքերից բրայլյան համակարգով է միայն մաթեմատիկա առարկայի դասագիրքը, 3-րդ դասարանում՝ միայն մաթեմատիկա և ռուսաց լեզու առարկաների դասագրքերը, 5-րդ դասարանում՝ միայն հայ եկեղեցու պատմություն առարկայի դասագիրքը, իսկ 12-րդ դասարանի ուսումնական ծրագրող նախատեսված առարկաների դասագրքերից միայն հայ գրականություն առարկան ունի խոսող դասագիրք: ՀՀ կրթության և գիտության նախարարության տեղեկությունների համաձայն՝ 2017 թվականի ընթացքում բրայլյան այբուբենով դասագրքերի և տետրերի համար դիմել են ներառական 3 դպրոցներ, որոնց դիմումները բավարարվել են միայն բրայլյան այբուբենով գրելու համար անհրաժեշտ տետրերի առումով, իսկ բրայլյան այբուբենով դասագրքեր չենք կարողացել տրամադրվել, քանի որ դպրոցում էլ դրանց քանակը խիստ սահմանափակ է: Ըստ նախարարության տվյալների՝ դասագրքերի մատչելիության, կրթական ծրագրի համապատասխանության հիմնական խնդիրը ճշգրիտ առարկաների բրայլյան այբուբենով դասագրքերի բացակայությունն է: Նույն տեղեկությունների համաձայն՝ դպրոցը տպագրել է տարրական դասարանների հայալեզու և ռուսերեն բոլոր դասագրքերը: Սակայն ծրագրային նյութի փոփոխության պատճառով այդ դասագրքերի մեծ մասը դարձել է աննպատակ: 2017 թվականի ընթացքում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար ձեռք է բերվել 2000 հատ բրայլյան տետր: Տպագրվել է «Ներառական կրթության կազմակերպման մեթոդական ուղեցույց-ձեռնարկ» (4000 հատ), որը տրամադրվել է հանրապետության բոլոր մարզերին՝ հանրակրթական դպրոցների

[38] http://www.mediamax.am/am/news/special-report/26378/

բաշխելու նպատակով: Ձեռք են բերվել և հանրապետության հատուկ հանրակրթական դպրոցներին և մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններին (26 հաստատություն) տրամադրվել են կրթական խաղերի փաթեթներ (9 անուն փաթեթ):

Այսպես, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2.1 մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը:

Ներառական կրթության և յուրաքանչյուրի համար կրթության մատչելիությունը բխում է նաև մի շարք միջազգային փաստաթղթերից: Մասնավորապես՝ ՄԱԿ-ի՝ Երեխայի իրավունքների կոմիտեի՝ Հայաստանի 3-4-րդ պարբերական զեկույցի վերաբերյալ 2013 թվականի եզրափակիչ դիտարկումներում նշվում է, որ պետությունը պետք է շարունակի հաշմանդամություն ունեցող երեխաներին հիմնական կրթական համակարգում ներառմանն ուղղված իր ջանքերը, որն իրականացնելիս առանձին ուշադրության պետք է արժանանան հատուկ ուսումնական հաստատություններում ընդգրկված և մարզային շրջանների հաշմանդամություն ունեցող երեխաները:

Ուստի՝ ներառական կրթություն իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատություններում, ինչպես նաև հատուկ դպրոցներում հաշմանդամություն ունեցող երեխաների կարիքներին համապատասխան դասագրքերի բացակայությունը համահունչ չէ միջազգային չափանիշներին, ՀՀ օրենսդրության պահանջներին, ինչպես նաև սահմանափակում է ներառական կրթության մատչելիությունը այդ երեխաների համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է.

1. ապահովել մատչելի դասագրքերի անհրաժեշտ քանակ ամբողջ հանրապետության ներառական, ինչպես նաև հատուկ կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում.

2. ավելացնել ուսումնական հաստատությունների կրթական ծրագրերին համապատասխան մատչելի դասագրքերի տպագրության ֆինանսավորումը:

6. Կրթության իրավունքի իրացման սահմանափակումներ հանրակրթական ուսումնական հաստատություններում դրամահավաքի և այլ անօրինական գործողությունների պատճառով

Ուսումնական հաստատություններում անօրինական դրամահավաքի, ինչպես նաև ուսումնատնօրինական կազմի իրավասությունների չարաշահման դեպքերի հետևանքով կրթության իրավունքի սահմանափակումը շարունակում է մնալ խնդրահարույց: Կրթության իրավունքի իրացումը խոչընդոտող նման դեպքերի վերաբերյալ 2017 թվականին ևս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում արձանագրվել են դեպքեր, ինչպես նաև դրանք բարձրաձայնվել են զանգվածային լրատվության միջոցներում:

Մասնավորապես, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ այցելած երեխաները տեղեկացրել են, որ իրենց դպրոցներում կազմակերպվում են անօրինական դրամահավաքներ (օրինակ՝ վերջին զանգի տոնակատարությանն ընդառաջ): Ըստ

երեխաների՝ իրենց որոշ ընկերներ, պայմանավորված իրենց ընտանիքների սոցիալ-տնտեսական վիճակով, չեն կարողանում վճարել այդ գումարը, ինչի հետևանքով կա՛մ իրենք են վճարում իրենց ընկերների փոխարեն, կա՛մ նրանք ուղղակի չեն մասնակցում տոնակատարությանը: Երեխաները նշել են նաև, որ սա ազդում է նաև իրենց և իրենց դասընկերների, ինչպես նաև այդ աշակերտների և նրանց ուսուցիչների փոխհարաբերությունների վրա:

Ահազանգեր ստացել են նաև համապատասխան գերատեսչությունները: Այսպես, 2017 թվականին ՀՀ կրթության և գիտության նախարարության «Թեժ գիծ» հեռախոսակապով ստացվել է 118 բողոք-ահազանգ (2016 թվականին՝ 180): Ստացված 118 ահազանգերից 78-ը եղել են ուսումնական հաստատության տնօրենի անօրինական գործունեությանը, ուսուցչի՝ մանկավարժին ոչ վայել պահվածքին կամ մասնագիտական գիտելիքներին վերաբերող բողոքներ: ՀՀ կրթության և գիտության նախարարությանն ուղղված դիմումներից բարձրացված հարցերի վերաբերյալ ստացվել են բողոքներ՝ գործատու–աշխատող հարաբերություններ՝ 17 բողոք, տնօրենի կողմից թույլ տրված անօրինականություններ՝ 49 բողոք, բողոք դպրոցի ուսուցչի դեմ՝ 26, տնօրենի՝ նույն դպրոցում աշխատող հարազատների վերաբերյալ՝ 3 բողոք, տնօրենի վատ, անարդյունավետ աշխատանք՝ 21 բողոք, տնօրենի կողմից կադրերի ոչ ճիշտ ընտրություն՝ 19 բողոք: Դիմումներով բարձրացված հարցերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանց մեծամասնությունը վերաբերում է տնօրենների և ուսումնական հաստատությունների աշխատակիցների գործունեության ոչ պատշաճ կամ թերի իրականացմանը, մասնավորապես ակնառու է դրամահավաքության խնդրի մասին բարձրաձայնող բողոքների քանակը, այն է՝ 50: Իսկ Երևանի քաղաքապետարանի տեղեկությունների համաձայն՝ 2017 թվականի ընթացքում քաղաքապետարանի ենթակայության դպրոցներից երեքում աշակերտի նկատմամբ դրսևորած մանկավարժի ոչ պատշաճ պահվածքի պատճառով երեք ուսուցիչ արժանացել է կարգապահական տույժի:

2015-2018թթ. հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրի կրթության ոլորտի հատվածում առկա է «Կրթության ոլորտում կոռուպցիոն ռիսկերի համապարփակ ուսումնասիրություն» ընդգրկուն ձևակերպմամբ միջոցառումը, որը պետք է իրականացվեր Ռազմավարության գործողության առաջին տարվա՝ 2015 թվականի ընթացքում, իսկ 2016-2018 թվականների համար նախատեսված է կոռուպցիոն ռիսկերի ուսումնասիրության հիման վրա կրթության ոլորտում հակակոռուպցիոն ծրագրի մշակում և իրականացում: Հարկ է նշել, որ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ թեպետ Կրթության և գիտության նախարարության կողմից 2016 թվականի ընթացքում մշակվել, շրջանառվել է կրթության ոլորտում հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրի նախագիծը, սակայն այն 2018 թվականի մարտի 4-ի դրությամբ չի ընդունվել[39]:

Խնդրի ուսումնասիրությունն ու դեպքերի քննարկումները ցույց են տալիս, որ վերոնշյալ խնդիրները որևէ լուծում չեն ստացել, ինչը խոչընդոտներ է ստեղծում կրթության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Ավելին, դպրոցներում տոնական միջոցառումների պատրվակով իրականացվող դրամահավաքությունն ավանդական է դարձել և խաթարում է դպրոցական կրթության հանդեպ հասարակության վստահությունը:

[39] https://transparency.am/files/publications/1489693195-0-123422.pdf

Բացի այդ կրթության իրավունքի վրա ազդում է նաև հանրակրթական ուսումնական հաստատությունների ղեկավար անձնակազմի (հատկապես տնօրինության) քաղաքականացվածությունը: Դպրոցի տնօրինությունն իրավունք չունի դպրոցներում զբաղվել քաղաքական այս կամ այն կուսակցության քարոզչությամբ, մինչդեռ տնօրեններից ոմանց կողմից կուսակցական նշանների կրելը, ծնողների հետ նախընտրական փուլում այս կամ այն կուսակցության օգտին քվեարկելու դրդումը և դրա նպատակով երեխաների ուսման հաջողության (կամ այն խոչընդոտելու) հնարավորությունների օգտագործումը պաշտոնական դիրքի չարաշահում է և ուղղակիորեն վնասում է ուսումնական գործընթացներում երեխաների ներառվածությանը: Ավելին, 2017 թվականին ազգային ժողովի ընտրություններից առաջ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում մանրամասն ուսումնասիրվել է «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության «ՀՀԿ-ն չարաշահում է վարչական ռեսուրսը դպրոցներում ու մանկապարտեզներում (114 ձայնագրություններ)» վերտառությամբ հրապարակումը: Ուսումնասիրվել են նաև այն ձայնագրությունները, որոնք կազմակերպության պնդմամբ՝ արտացոլում են հանրակրթական դպրոցների և մանկապարտեզների տնօրենների հետ հեռախոսային խոսակցությունները: Ըստ այդմ, անհանգստացնող է եղել այն, որ քաղաքացիական հասարակության կառույցի հրապարակած ուսումնասիրությունը և ձայնագրությունները վերաբերում են հանրակրթական հաստատություններին ու դրանց տնօրեններին[40]:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. մանրամասն ուսումնասիրել նման դեպքերի առաջացման հիմքերը և պատճառները.

2. ուժեղացնել և թիրախավորել դպրոցներում անօրինականության, ներառյալ ցանկացած պատրվակով դրամահավաքության դեպքերի հայտնաբերման, կանխարգելման և սանկցավորման մեխանիզմները.

3. ՀՀ ընտրական օրենսգրքում կատարել փոփոխություններ՝ արգելելով հանրակրթական ուսումնական հաստատությունների աշխատողներին մասնակցել նախընտրական քարոզչությանը կամ որևէ կերպ օգտագործել նրանց վարչական ռեսուրսն այս գործընթացում (այդ թվում՝ իրենց լիազորություններն իրականացնելուց դուրս):

7. Կրթության իրավունքի իրացման սահմանափակումները՝ կապված նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում շենքային և գույքային պայմանների, ինչպես նաև ջեռուցման հետ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցներում մշտապես անդրադարձ է կատարվել հանրապետության որոշ կրթական ուսումնական հաստատություններում առկա շենքային և գույքային անբավարար պայմանների, ինչպես նաև ջեռուցման հետ կապված մի շարք խնդիրների, որոնց մասին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստացվել են բողոքներ նաև 2017 թվականին: Խնդրի մասին բարձրաձայնել են նաև մի շարք ուսումնական հաստատությունների աշակերտներ՝ Պաշտպանի ներկայացուցիչների հետ զրույցներում:

[40] Մանրամասն տես՝ սույն հաղորդման Ընտրական իրավունք բաժնում

Այսպես, համաձայն Ազգային վիճակագրական ծառայության հրապարակած «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը» 2017 թվականի տարեկան զեկույցի տվյալների՝ 2016 թվականին Հայաստանում գործող 1432 դպրոցների 52.8%-ն ունի բավարար շենքային պայմաններ: Այսպիսով, դպրոցների գրեթե կեսը կարիք ունի ընթացիկ նորոգման կամ հիմնանորոգման: 71 դպրոց դեռևս չունի ջրամատակարարում, իսկ 141-ում չկա կոյուղացում, իսկ 8 դպրոցներում ջեռուցում չկա[41]: Ավելին, ըստ առկա տվյալների՝ Հայաստանի 425 դպրոցներ սեյսմիկ անվտանգության բարելավման կարիք ունեն: Այդ դպրոցներից շուրջ 60-ը 3-րդ 4-րդ կարգի վթարային են[42]:

Դպրոցների շենքային վատթար պայմանները խոչընդոտում են դասապրոցեսի բնականոն ընթացքին, ինչպես նաև վտանգավոր են երեխաների առողջության պահպանման տեսանկյունից: Որպես օրինակ կարելի է նշել 2017 թվականին ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքի Վ.Պետրոսյանի անվան դպրոցի ուսուցիչների և աշակերտների իրականացրած գործադուլը և դասադուլը:[43] Պատճառը դպրոցի ոչ բարվոք վիճակն է եղել. դպրոցն ունի հիմնանորոգման, վերանորոգման կարիք, շենքում առկա չեն պատշաճ սանհանգույցներ, դռները և պատուհանները շատ հին են, դպրոցը չունի մարզադահլիճ, ինֆորմատիկա, քիմիա և այլ առարկաների դասավանդման համար անհրաժեշտ համապատասխան պայմաններ: Ըստ տվյալների՝ տվյալ ուսումնական հաստատության շենքային պայմաններն էական խոչընդոտ են երեխաների կրթության իրավունքի լիարժեք իրականացման ապահովման, ուսումնադաստիարակչական պրոցեսի պատշաճ իրականացման համար:

Ըստ այդմ, Պաշտպանը սեփական նախաձեռնությամբ սկսել է հարցի քննարկումը և դրա ուսումնասիրումը: Ըստ ՀՀ կրթության և գիտության նախարարության տվյալների՝ ՀՀ Արագածոտնի մարզի 2018-2020 թվականների պետական բյուջեի հաշվին կապիտալ ծախսերի միջնաժամկետ ծրագրով նախատեսվել է 2018 թվականին պատվիրել «Աշտարակի Վ. Պետրոսյան անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման նախագիծը: Արդյունքում, սկսվել է մեկ ուսումնական մասնաշենքի վերանորոգում: Աշխատանքներն ընթացքի մեջ են:

Առանձին դեպքերում դպրոցի շենքային պայմաններով պայմանավորված ծնողներն արգելել են երեխաներին դասի գնալ: Մասնավորապես, Արմավիրի մարզի Ջրարբի համայնքի բնակիչները 2017 թվականին բողոքի ցույց և դասադուլ են կազմակերպել, քանի որ դպրոցի շենքը վթարային վիճակում է և ջեռուցում չունի: Ի վերջո, դպրոցի ջեռուցման հարցը լուծվել է, իսկ շենքային պայմանների բարելավումը խոստացել են իրականացնել առաջիկայում[44]:

2017 թվականին բարձրաձայնվել է նաև Արագածոտնի մարզի Ծիլքար համայնքի միջնակարգ դպրոցի անմխիթար պայմանների վերաբերյալ: Այստեղ շենքային և սանիտարահիգիենիկ անբավարար պայմաններից զատ դպրոցում չի իրականացվում պատշաճ ջեռուցում: Դասասենյակներում տեղադրված են թիթեղյա վառարաններ, որոնց օգտագործումը արգելված է ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի մարտի 28-

[41] http://www.armstat.am/am/?nid=82&id=1958
[42] https://www.azatutyun.am/a/27221091.html
[43] http://www.1in.am/2136343.html, http://hetq.am/arm/news/78411/usucichnery-gortsadul-en-anum-ashakertneri-apagayin-materi-aranqov-chenq-nayum.html
[44] https://www.youtube.com/watch?v=xNxnHU0tndA

ի «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ» N 2.2.4-016-17 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2002 թվականի փետրվարի 11-ի N 82 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 12-Ն հրամանով: Ըստ առկա տեղեկությունների՝ ջերմաստիճանը հասնում է 13-14 աստիճանի, դպրոցում չի գործում նաև մարզադահլիճ, հնարավոր չէ պահպանել պատշաճ մաքրություն, քանի որ հատակը բետոնապատ է և քայքայված:[45] Չնայած, որ հանրակրթական դպրոցների շենքային և գույքային պայմաններում խնդիրներ առկա են թե՛ քաղաքային, և թե՛ մարզային ու գյուղական դպրոցներում, սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ առավել խոցելի են այս առումով գյուղական դպրոցները[46]:

Բացի դպրոցների ընդհանուր շենքային պայմաններից, խնդրահարույց է նաև դրանց սանիտարահիգիենիկ պայմանների ապահովումը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այս հարցն առավելապես խնդրահարույց են համարում նաև երեխաները: Այսպես, հարցված երեխաների մեծամասնությունը նշել է, որ դպրոցական ենթակառուցվածքները բարելավման կարիք ունեն: Մասնավորապես, հարցվածների 48%-ը ցանկացել է, որպեսզի բարելավվեն ջրի և սանիտարական պայմանները:[47] Ջրամատակարարումը բացակայում է դպրոցների 6.5%-ում (88 դպրոց)՝ (Գեղարքունիքի (12.7%) և Սյունիքի (11.6%) մարզերում), կոյուղին բացակայում է դպրոցների 12.1%-ում (153 դպրոց)՝ (Գեղարքունիք՝ 19%, Արմավիրի՝ 18.2%, Տավուշի՝ 17.3%: 204 դպրոցների սանհանգույց գնահատվել է «1», այսինքն՝ այն շենքի ներսում չի գործում՝ տեղակայված է դպրոցից դուրս, որից Գյուղական՝ 198 դպրոց: 487 դպրոցների սանհանգույց գնահատվել է «2» կամ «3» այսինքն, այս դպրոցներում սանհանգույցները վերանորոգված չեն, որից 153-ում բացակայում է նաև մշտական ջրամատակարարումը[48]:

Ըստ ուսումնասիրությունների՝ անբավարար շենքային պայմանները բազմիցս մատնանշվում են Եղեգնաձորի թիվ 2 մանկապարտեզի ծնողների կողմից, ըստ որոնց՝ մանկապարտեզի շենքը վթարային վիճակում է[49]: Մալիշկայում նույնպես նշում են շենքային վատ պայմանների մասին, մասնավորապես՝ թիվ 1 մանկապարտեզում, որը ստեղծվել է այլ նպատակով կառուցված շենքի բազայի վրա, իսկ թիվ 2 մանկապարտեզում, չնայած վերջերս իրականացված վերանորոգմանը, մնացել են չվերանորոգված սենյակներ: Նոր Խարբերդի մանկապարտեզում հիմնական խնդիրը տարածքի պակասն է. խմբերից մեկը տեղակայված է դահլիճում, որը հարմարեցվել է որպես խմբասենյակ:[50]

---

[45] https://www.hraparak.am/posts/591f93a8e3d84d0d37fc3c3d/%D5%B0%D5%A1%D5%B6%D6%81%D5%A1%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6-%D5%A7-85-%D5%A1%D5%B7%D5%A1%D5%AF%D5%A5%D6%80%D5%BF%D5%AB-%D5%A1%D5%BC%D5%B8%D5%B2%D5%BB%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8-%D6%84%D5%A1%D5%B5%D6%84%D5%A1%D5%B5%D5%A5%D5%AC%D5%A8-%D6%84%D5%A1%D5%B2%D5%A1%D6%84%D5%A1%D6%81%D5%AB%D5%B6-%D5%A4%D5%BA%D6%80%D5%B8%D6%81%D5%AB-%D5%BF%D5%B6%D6%85%D6%80%D5%A5%D5%B6%D5%AB%D5%B6-%D5%B4%D5%A5%D5%B2%D5%A1%D5%A4%D6%80%D5%B8%D6%82%D5%B4-%D5%A7-%D5%AC%D5%B8%D6%82%D5%BD%D5%A1%D5%B6%D5%AF%D5%A1%D6%80%D5%B6%D5%A5%D6%80

[46] http://www.osf.am/wp-content/uploads/2017/09/Educ_Equity_MainData_PPT.pdf

[47] https://armenia.savethechildren.net/sites/armenia.savethechildren.net/files/library/YV_brief%20version_Final%20_%20arm.pdf

[48] http://www.osf.am/wp-content/uploads/2017/09/Educ_Equity_MainData_PPT.pdf

[49] https://transparency.am/files/publications/1501517554-0-840922.pdf

[50] https://transparency.am/files/publications/1501517554-0-840922.pdf

Վերոնշյալ խնդիրների վերաբերյալ ահազանգեր են ստացել նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինները: Մասնավորապես՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության տեղեկությունների համաձայն՝ ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի N 12 մանկապարտեզից ստացված դիմումում բերված փաստարկները հայտնում են, որ մանկապարտեզում չի մատակարարվում տաք ջուր: Արդյունքում, երեխաները զրկված են եղել տարրական հիգիենիկ պայմաններից: Մասնավորապես, ծորակից հոսող ջուրն այնքան սառն է, որ դաստիարակները և դայակները ստիպված արգելում են երեխաներին լվացվել անգամ սանհանգույցից օգտվելուց հետո: Ուսումնասիրությամբ պարզվել է, որ բերված փաստարկները մեծ մասամբ համապատասխանում են իսկությանը: Ավելին, նախարարության տվյալները վկայում են, որ մանկապարտեզում գործող 5 տարիքային խմբերից (կրտսեր երկրորդ, երկուական միջին և ավագ) տաք ջրով ապահովված է միայն միջին խումբը: Տաք ջրով ապահովված են նաև ճաշարանը և սպասքի լվացքասենյակը:

Խնդիրների լուծման ուղղությամբ 2017 թվականին իրականացվել են որոշ քայլեր, օրինակ՝ Երևանի քաղաքապետարանի տեղեկությունների համաձայն՝ 2017 թվականին վերանորոգվել և ժամանակակից պահանջներին համապատասխան գույքով ու նորագույն տեխնոլոգիաներով վերազինվել է Երևանի Ն. Ստեփանյանի անվան N 71 դպրոցը, 2017 թվականին ընթացքի մեջ են եղել նաև N 22, 51, 91, 143, 191 դպրոցների վերանորոգման աշխատանքները: Ավելին, դեռևս 2015 թվականից իրականացվում է Ասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ «Սեյսմիկ անվտանգության բարելավման» վարկային ծրագիրը, որի հիմնական շահառուները «բարձրացված սեյսմակայունությամբ և վերակառուցված դպրոցների մոտ 58,700 աշակերտներն են, ուսուցիչները և հարակից տարածքների թվով մոտ 87,500 բնակիչները, քանի որ երկրաշարժերի և այլ արտակարգ իրավիճակների ժամանակ դպրոցները կծառայեն որպես ժամանակավոր կացարաններ և ապաստարաններ[51]:

Սակայն ստացված տեղեկատվության համադրված ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ ձեռնարկված քայլերը բավարար չեն, քանի որ հանրապետության հատկապես համայնքային մի շարք պետական ուսումնական հաստատությունների շենքային և գույքային պայմանները բավարար չեն դասընթացի բնականոն կարգի իրականացման համար, ինչը հանգեցնում է երեխայի կրթության իրավունքի իրականացման սահմանափակման:

Խնդրահարույց է նաև հանրակրթական ուսումնական հաստատություններում ջեռուցման ապահովումը, որի վերաբերյալ 2017 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը ևս ստացել է ահազանգեր: Խնդիրն այն է, որ ընդունված պրակտիկա է դպրոցը ջեռուցել սկսած նոյեմբերի 15-ից, ինչը սակայն օրենսդրությամբ պարտադիր պահանջ չէ: Այսպես, ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի մարտի 28-ի «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ» N 2.2.4-016-17 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2002 թվականի փետրվարի 11-ի N 82 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 12-Ն

[51] https://www.adb.org/sites/default/files/project-document/175756/49078-001-sfg.pdf, http://www.atdf.am/Content/UploadedFiles/SSIP/BriefSSIP.pdf

հրամանի համաձայն՝ դասարաններում, ուսումնական կաբինետներում, դասախոսությունների լսարանում, գրադարանում, բուժկետում (բժշկի կաբինետ), մարզադահլիճի հանդերձարաններում, լաբորատորիաներում, խմբակային պարապմունքների սենյակներում, հանդիսությունների դահլիճում ապահովվում է օդի առնվազն 18-22 աստիճան ցելսիուս, իսկ ուսումնական արհեստանոցներում, նախասրահում, հանդերձարանում և ռեկրեացիաներում ցուրտ եղանակային պայմաններում՝ առնվազն 18-20 աստիճան ցելսիուս, իսկ մարզադահլիճում՝ 17-19 աստիճան ցելսիուս: ՀՀ առողջապահության նախարարի նշված հրամանով որևէ ամրագրում (այդ թվում՝ սահմանափակում) առկա չէ հանրակրթական ուսումնական հաստատությունը ջեռուցելու ժամանակի վերաբերյալ: Չնայած նշված օրենսդրական կարգավորմանը՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում հանդիպումների ընթացքում աշակերտների կողմից մատնանշվել է ջեռուցումը նոյեմբերի 15-ից սկսելու, ինչպես նաև որոշ դեպքերում դրա բացակայության մասին: Գործնականում, ջեռուցումը նոյեմբերի 15-ից սկսելու արդյունքում հաշվի չի առնվում հանրակրթական ուսումնական հաստատության տեղակայվածությունը (օրինակ՝ քամոտ կամ խոնավ վայրերում տեղակայված դպրոցներում անհրաժեշտ է ջեռուցումը սկսել ավելի վաղ քան նոյեմբերի 15-ը), ինչպես նաև հաշվի չեն առնվում նաև տվյալ տարվա բնակլիմայական պայմանները:

Ջեռուցման խնդիրը ևս հատկապես արդիական է մարզերում, ինչի արդյունքում որոշ դեպքերում նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատանքը կրում է սեզոնային բնույթ: Ավելին, որոշ դեպքերում էլ խնդրահարույց է նաև կենտրոնացված ջեռուցման համակարգի բացակայությունը: Մասնավորապես, Տավուշի մարզում որոշ նախակրթական ուսումնական հաստատությունների ծնողներ իրենց անհանգստությունն են հայտնել առ այն, որ մարզային մանկապարտեզներում էլեկտրական կամ փայտե վառարաններ են օգտագործվում, ինչն անվտանգ չէ իրենց երեխաների համար[52]:

Խնդրի մասին բարձրաձայնել են նաև ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն՝ հատուկ նշելով թե՛ շենքային և գույքային անբարեկարգ պայմանների, թե՛ ջեռուցման հետ կապված խնդիրները ու հորդորել պետությանը ներդրումներ կատարել դպրոցների ենթակառուցվածքների բարելավման նպատակով[53]: Նման առաջարկ է արել նաև ՄԱԿ-ի՝ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն՝ ընդգծելով ուսումնական հաստատությունների բարելավման համար հատկացված ֆինանսական միջոցների առավել արդյունավետ կերպով օգտագործման անհրաժեշտությունը[54]:

ՀՀ կրթության և գիտության նախարարության տեղեկությունների համաձայն՝ հանրակրթական ուսումնական հաստատություններում ջերմային ռեժիմը վերահսկելի դարձնելու նպատակով՝ 2017 թվականին ՀՀ առողջապահության նախարարության

[52] https://armenia.savethechildren.net/sites/armenia.savethechildren.net/files/library/Assessment%20on%20Access%20to%20Pre-school%20Education%20Services_ARM.pdf

[53] ՄԱԿ-ի՝ Երեխայի իրավունքների կոմիտեի՝ Հայաստանի 3-4-րդ պարբերական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, 2013 թվականի մայիսի 27-ից հունիսի 14, http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf

[54] ՄԱԿ-ի՝ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի՝ Հայաստանի 2-3-րդ պարբերական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, http://docstore.ohchr.org/SelfServices/FilesHandler.ashx?enc=4slQ6QSmlBEDzFEovLCuW0fp9m5PoYHYLH3qkguQgxwB0Dv54x9D%2FtTVTkqVlVcgKieaWt6S0CJmSRHd2YbUGKlROrDzjo9z47iNYCZgmYgv27A6%2F5Jw0ZBjno1vpNcA

նախաձեռնությամբ մշակվել է համակարգ, ինչը թույլ է տալիս յուրաքանչյուր ուսումնական հաստատությունում առցանց վերահսկել ջերմային ռեժիմն իրական ժամանակում, օբյեկտիվ և շարունակական տեղեկատվություն ստանալու համար կիրառելով ներկայում գոյություն ունեցող արդիական սարքեր (օրինակ՝ GPRS ջերմաստիճանի մոնիտորինգի և գրանցման S260 թողարկման համարի սարքը), որոնք նախատեսված են ճշգրիտ և զգայուն տվիչների միջոցով ջերմաստիճանի չափման և տվյալները GPRS կամ ինտերնետ կապով միասնական էլեկտրոնային համակարգ փոխանցելու համար: Դրանք հնարավորություն են տալիս ունենալ ոչ միայն իրական ժամանակում ջերմային ռեժիմի միաժամանակյա և շարունակական չափման տվյալներ, որոնք կարող են ստացվել բազմաթիվ ջերմաստիճանը գրանցող տվիչներից, այլ նաև ջերմաստիճանի խախտումների ահազանգ և սարքի շահագործման ամբողջ ժամանակահատվածի տվյալների բազա: Ջերմաստիճանը գրանցող սարքերի տվյալները կարող են լինել հասանելի ինչպես կրթական հաստատությունների, այնպես էլ պատասխանատու մարմինների համար:

Սույն բաժնում ներկայացված տեղեկատվության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հանրակրթական ուսումնական հաստատություններում անբարեկարգ շենքային և գույքային, ինչպես նաև ջեռուցման խնդիրները շարունակում են չլուծված մնալ 2017 թվականին ևս, մեծապես խոչընդոտելով դասապրոցեսի իրականացումը, ինչը հանգեցնում է երեխաների սահմանադրական իրավունքի իրականացման խախտման:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. ավելացնել հանրակրթական ուսումնական հաստատություններում շենքային և գույքային պայմանների բարելավման համար հատկացվող ֆինանսական միջոցները.

2. ապահովել հանրակրթական ուսումնական հաստատություններում օդային և ջերմային ռեժիմի պահպանման պահանջների կատարումը՝ ուժեղացնելով վերահսկողությունը դրա խախտման դեպքերի բացահայտման ուղղությամբ:

8. Կրթության իրավունքի իրացման սահմանափակումները՝ կապված հանրակրթական ուսումնական հաստատություններում սննդի անվտանգության ապահովման հետ

Ուսումնական հաստատություններում սննդի անվտանգության խնդիրն արդիական է եղել նաև 2017 թվականին: Խնդիրն այն է, որ մի շարք հանրակրթական ուսումնական հաստատությունների սննդի կետերում վաճառվում են այնպիսի սննդատեսակներ, որոնց վաճառքն ուսումնական հաստատություններում արգելվում է ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի հունիսի 6-ի «Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2.3.1-02-2014 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» N 32-Ն հրամանի 26-րդ կետով: Նշվածի մասին վկայում է նաև Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ այցելած երեխաների հետ առանձնազրույցների արդյունքում փոխանցված տեղեկությունը: Երեխաները հայտնել են, որ իրենց դպրոցներում առ այսօր վաճառվում է գազավորված ըմպելիքներ և չթույլատրված այլ սնունդ: Խնդրի մասին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանները

բարձրաձայնում են դեռևս 2014 թվականից և դրան անդրադարձել է նաև ՄԱԿ-ի՝ Երեխայի իրավունքների կոմիտեն[55]:

Վերոնշյալ խնդիրները հայտնաբերվել են նաև իրավասու մարմինների կողմից: Այսպես, ՀՀ Լոռու մարզպետարանի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ Լոռու մարզի նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում իրականացվել է ուսումնասիրություն: Հաստատությունների տնօրենները տեղեկացված են իրենց հաստատություններում ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակիցների կողմից արձանագրված խախտումների մասին: Արձանագրված խախտումները՝ կապված սննդի կազմակերպման կառույցներին ներկայացվող սանիտարահիգիենիկ պայմանների, աշխատակիցների պարտադիր պարբերական բժշկական զննություն անցնելու կարգի, ընդունվող սննդամթերքի մակնշման անհամապատասխանությունների և սննդամթերքի անվտանգությունը հավաստող ուղեկցող փաստաթղթերի հետ, հիմնականում վերացվել են: Խախտումների գերակշռող մասը կապված է տարածքների ոչ բարեկարգ վիճակների հետ, որոնց վերացման համար անհրաժեշտ է վերանորոգման աշխատանքներ իրականացնել: Վերոգրյալ հաստատությունների տնօրեններին հանձնարարվել է միջոցներ ձեռնարկել՝ արձանագրված խախտումները վերացնելու ուղղությամբ:

Երևանի քաղաքապետարանից հայտնած տեղեկությունների համաձայն՝ 2017 թվականի ընթացքում աշխատակազմի վերահսկողության, հանրակրթության վարչությունների և համապատասխան վարչական շրջանի աշխատակիցներից բաղկացած աշխատանքային խմբերի կողմից պարբերաբար իրականացվել է հսկողություն մայրաքաղաքի բոլոր հանրակրթական ուսումնական հաստատությունների բուֆետներում սննդի կազմակերպման և որակի նկատմամբ, բացառելով ժամկետանց սննդամթերքի օգտագործումը:

ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի հունիսի 6-ի N 32-Ն հրամանի 48-րդ կետի համաձայն՝ ուսումնական հաստատության ղեկավարը սննդի կազմակերպման և դրանում սովորողներին լիարժեք ընդգրկելու պատասխանատու անձն է: Ավելին, ըստ նույն հրամանի՝ ուսումնական հաստատությունում սովորողների առողջության պահպանմանն ուղղված կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու նպատակով հաստատության ղեկավարի կողմից ապահովվում են՝ սանիտարական կանոնների առկայությունը, սանիտարական կանոնների կատարման ապահովումը և այլն:

ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի «ՀՀ պետական հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական հիմնարկները վերակազմակերպելու, պետական հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերը սահմանելու, «ՀՀ պետական հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 2179-Ն որոշմամբ հաստատված պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ հաստատության

[55] ՄԱԿ-ի՝ Երեխայի իրավունքների կոմիտեի՝ Հայաստանի 3-4-րդ պարբերական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, 2013 թվականի մայիսի 27-ից հունիսի 14,
http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf

գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են հիմնադիրը, լիազորված պետական մարմինը և հիմնադրի կողմից լիազորված, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ պետական կառավարման մարմիններ:

«Կրթության մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի համաձայն՝ ի թիվս այլ իրավասությունների, մարզպետը վերահսկում է նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից Հայաստանի Հանրապետության կրթության մասին օրենսդրության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի կատարումը:

Ըստ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ հանրակրթության բնագավառում տարածքային կառավարման մարմինը և Երևանի քաղաքապետը՝ ի թիվս այլ իրավասությունների, վերահսկում է ուսումնական հաստատությունների կողմից Հայաստանի Հանրապետության կրթության մասին օրենսդրության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի կատարումը:

Ուստի, վերոնշյալ իրավական ակտերով սահմանված իրավասու պետական մարմինները պետք է ապահովեն հանրակրթական ուսումնական հաստատություններում սննդի կազմակերպումը՝ «Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2.3.1-02-2014 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի հունիսի 6-ի N 32-Ն հրամանի պահանջների պահպանմամբ:

9. Մտքի, խղճի և կրոնի ազատությունը հանրակրթական ուսումնական հաստատություններում

Կրոնական և ազգային փոքրամասնությունների երեխաների հետ իրականացված հարցումների արդյունքում պարզվել է, որ «Հայոց եկեղեցու պատմություն» դասընթացի ժամանակ ուսուցիչների կողմից, երբեմն պարտադրվում են ծիսական գործողություններ, օրինակ՝ աղոթք անել կամ խաչակնքվել, ինչը հակասում է որոշ անձանց կրոնական համոզմունքներին[56]: Նշված խնդրի կապակցությամբ դեռևս 2013 թվականին ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների կոմիտեն առաջարկել է Հայաստանին վերանայել դպրոցների ուսումնական ծրագիրը՝ արտացոլելով երեխաների կրոնի ազատությունը[57]:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունն ապահովում է կրթության ժողովրդավարական և աշխարհիկ բնույթը», սակայն այդ պահանջի շրջանցման համար հիմքեր են ստեղծվել նույն հոդվածի 8-րդ կետում՝ սահմանելով, որ կրոնական գործունեությունը և քարոզչությունն ուսումնական հաստատություններում արգելվում են, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, որից ելնելով՝ նման հարցերը կարգավորվում են «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքով[58]: Խնդրին անդրադարձ է կատարվել նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանների նախորդ զեկույցներում:

---

[56] http://www.coe.int/t/dg4/youth/Source/Resources/Publications/2014_Field_Study_Rights_of_Chidren_arm.pdf
[57] http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRC%2fC%2fARM%2fCO%2f3-4&Lang=en
[58] http://armhels.com/wp-content/uploads/2016/01/Ditord-2016-01Armenian.pdf

Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է արգելել պարտադիր բնույթ կրող աղոթքը և եկեղեցի այցելելը ուսումնական գործընթացում:

10. Կրթության իրավունքի իրացման սահմանափակումները՝ կապված բարձրագույն ուսումնական հաստատություններում (ԲՈՒՀ) ուսանողական խորհուրդների քաղաքականացվածության հետ

2017 թվականին համակարգային առումով դեռևս լուծում չի ստացել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցներում և հաղորդմամբ բարձրաձայնված՝ ԲՈՒՀ-երում ուսանողական խորհուրդների քաղաքականացվածության խնդիրը:

ՄԱԿ-ի «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը, որին անդամակցում է նաև Հայաստանը, պարտավորեցնում է պետությանը բոլորի համար հավասարապես մատչելի կազմակերպել բարձրագույն կրթություն:[59] Միևնույն ժամանակ, ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի համոզմամբ ուսումնական հաստատությունների համեմատ ԲՈՒՀ-ի դասախոսները և ուսանողներն ավելի խոցելի են քաղաքական և այլ ճնշումների նկատմամբ, որոնք կարող են սպառնալ իրենց գիտական և ակադեմիական ազատությանը, ինչն անհրաժեշտ է կրթության իրավունքի լիարժեք իրացման համար[60]: Ավելին, ԲՈՒՀ-ի ինքնավարության ապահովման և ազատ գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու նպատակով ԲՈՒՀ-երում ակադեմիական ազատության ապահովման պահանջը նախատեսվում է նաև կրթական համակարգի բարեփոխման Բոլոնյան գործընթացով, որին 2005 թվականից միացել է նաև Հայաստանի Հանրապետությունը:

Գործող իրավական կարգավորումները չեն ապահովում կամ մասնակի են ապահովում ԲՈՒՀ-երի կազմակերպաիրավական ձևից ու կարգավիճակից կախված ԲՈՒՀ-երի կառավարման և ինքնուրույնության հետագա զարգացման ապահովման նպատակով նրանց ինքնավարության, ակադեմիական ազատությունների անհրաժեշտ լիարժեք մեխանիզմները: Ըստ այդմ, 2017 թվականին ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ոլորտի արդիականացման, խնդիրների լուծման, միջազգային չափորոշիչներին համապատասխանության նպատակով մշակվել է «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքների նախագծերը, որոնց շուրջ ներկայացվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի նկատառումները: Խնդրի կարգավորման նպատակով նախագծում սահմանված են մի շարք դրույթներ, սակայն վերջիններս խնդրի լուծմանն ուղղված համապարփակ բնույթ չունեն, ինչպես նաև այդ դրույթներն ամրագրող նախագիծը շրջանառվել է 2017 թվականի տարեվերջին և դեռ չեն սահմանվել ՀՀ Ազգային ժողովի կողմից:

Այսպես, «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքի նախագծով ամրագրվում են ԲՈՒՀ-երի կառավարման հետ կապված դրույթներ, որտեղ, մասնավորապես, ամրագրվում են ԲՈՒՀ-երի կառավարման մարմինների, այդ թվում՝ հանրային ԲՈՒՀ-երի կառավարման խորհուրդների իրավասությունները և գործունեության հիմքերը: Պետք է նշել, որ չափազանց կարևոր է այդ խորհուրդների գործունեության անկախությունը և

---

[59] ՄԱԿ-ի «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագիր, 3-րդ հոդված, http://www.un.am/res/UN%20Treaties/III_3.pdf

[60] Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ՄԱԿ-ի կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն N13, 1999, http://www.refworld.org/docid/4538838c22.html

ապաքաղաքականացվածությունը: Այս հարցը կարգավորելու նպատակով առաջարկվել է խորհրդի անդամների թվի համամասնություն, ինչպես նաև դրույթ, ըստ որի՝ խորհրդի անդամ չեն կարող լինել քաղաքական պաշտոն զբաղեցնող անձինք և մարզպետները: Միաժամանակ, պետք է նշել, որ խորհուրդները կարող են քաղաքական կուսակցության ազդեցության տակ լինել առանց քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց՝ խորհրդում ուղղակիորեն ներկայացված լինելու: Ուստի՝ խորհրդի գործունեության անկախության ապահովման համար անհրաժեշտ են հավելյալ երաշխիքներ: Ըստ այդմ՝ առաջարկել է, որպես խորհուրդների գործունեության սկզբունք, նախագծի հիշյալ կարգավորումները սահմանող դրույթներում նախատեսել քաղաքական կուսակցությունների ազդեցությունից անկախությունը, որն ուղենիշային կլինի բոլոր խորհուրդների գործունեության համար:

Ուստի անհրաժեշտ է՝ ԲՈՒՀ-երի կանոնադրություններում ամրագրել և արգելել ԲՈՒՀ-երի տարածքում և ԲՈՒՀ-երի օղակների ուղղակի մասնակցությամբ (ներառյալ ուսանողական ինքնավարության կազմակերպությունների) կողմից ցանկացած քաղաքական գործունեության կազմակերպում և իրականացում, այդ թվում՝ ՈՒԽ-ների կողմից այս կամ այն քաղաքական ուժի ֆինանսավորմամբ ուսանողական ճամբարների, արտագնա արշավների կազմակերպումը:

ԳԼՈՒԽ 5. ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԻՆ

ՀՀ Սահմանադրության՝ մշակույթի, կրթության, գիտության խթանումը, հայոց լեզվի և մշակութային ժառանգության պաշտպանությունը սահմանող 15-րդ հոդվածը ամրագրում է, որ պետությունը խթանում է մշակույթի, կրթության և գիտության զարգացումը. հայոց լեզուն և մշակութային ժառանգությունը պետության հոգածության և պաշտպանության ներքո են: Ավելի, ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված պետության քաղաքականության հիմնական նպատակներից են քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին երիտասարդության մասնակցության խթանումը: Մշակութային կյանքի մասնակցության անձի իրավունքը սահմանված են նաև միջազգային մի շարք փաստաթղթերում (օրինակ՝ «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» ՄԱԿ-ի միջազգային դաշնագիր, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր և այլն): Միջազգային փաստաթղթերն ամրագրում են այնպիսի իրավունքներ, ինչպիսիք են մշակութային կյանքին մասնակցության հավասարությունը, սոցիալ և մշակութային կյանքի բոլոր ասպարեզներին մասնակցությունը, այլ անձանց հետ հավասար պայմաններում մշակութային կյանքի մասնակցությունը և մի շարք այլ իրավունքներ:

Այնուհանդերձ, մշակութային կյանքի մասնակցության իրավունքի արդյունավետ և լիակատար իրացման համար 2017 թվականին շարունակվել է սոցիալապես անապահով անձանց՝ մշակութային կյանքից օգտվելու սահմանափակ հնարավորությունների խնդիրը:

1. Մշակութային արժեքների հասանելիությունը հասարակության սոցիալապես անապահով անձանց համար

Հասարակության որոշ խմբերի, այն է՝ սոցիալապես անապահով անձանց համար առաջանում են բարդություններ մշակութային կյանքին այլ անձանց հետ հավասար հիմունքներով օգտվելու իրավունքի իրացման տեսանկյունից: Մասնավորապես, այդ անձանց սոցիալ-տնտեսական իրավիճակով պայմանավորված՝ վերջիններս հնարավորություն չեն ունենում օգտվելու մշակութային այն միջոցառումներից, օբյեկտներից, որոնք վճարովի են: Նշված իրավիճակը վտանգում է միջազգային կոնվենցիաներով ամրագրված վերջիններիս իրավունքների լիարժեք իրացումը:

Այսպես, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի թիվ 21 Ընդհանուր մեկնաբանությունում հատուկ անդրադարձ է կատարվել հատուկ պաշտպանության կարիք ունեցող անձանց՝ այդ թվում սոցիալապես անապահով անձանց: Մասնավորապես նշվել է, որ մշակույթը՝ որպես հասարակական արդյունք, պետք է համընդհանուր հասանելի լինի՝ հիմնված հավասարության, խտրականության բացառման և մասնակցության սկզբունքների վրա: Այդ իսկ պատճառով, իրականացնելով ՄԱԿ-ի՝ «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 15-րդ հոդվածով սահմանված յուրաքանչյուր մարդու՝ մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը, պետությունը պետք է հստակ մեխանիզմներ ձեռնարկի անապահով անձանց և նրանց համայնքների մշակութային կյանքին մասնակցության

իրավունքի իրականացման և դրա բավարար պաշտպանություն ապահովելու ուղղությամբ[61]:

Ողջունելի է, որ 2017 թվականի ընթացքում ձեռնարկվել են մի շարք քայլեր նշված խնդրի լուծման կապակցությամբ, որոնք կարող են հիմք ստեղծել խնդրի համակարգային լուծման համար: Մասնավորապես, ՀՀ մշակույթի նախարարությունը ներկայացրել է տարեցների համար մշակութային կյանքին մասնակցության ապահովման, տարեցների շրջանում ստեղծագործական գործունեության խրախուսման և խթանման, տարեցների ներուժի օգտագործմամբ երիտասարդ սերնդին ժողովրդական արհեստների փոխանցման վերաբերյալ միջոցառումներ, որոնք հաստատվել են ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի «Ծերացման հետևանքների հաղթահարման և տարեցների սոցիալական պաշտպանության ռազմավարությունը և ռազմավարության իրականացման 2017-2021 թվականների միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» N 20 արձանագրային որոշմամբ:

Ավելին, ՀՀ մշակույթի նախարարի 2017 թվականի հուլիսի 6-ի N 368-Ա հրամանով սահմանվել են նախարարության ենթակայության թանգարանների մշտական ցուցադրության այցելության և բացատրության (էքսկուրսիա) տոմսերի գները և արտոնությունները՝ թանգարանի մշտական ցուցադրության այցելության տոմսի համար սահմանվել են զեղչեր ՀՀ քաղաքացի հանդիսացող կենսաթոշակառուների, փախստականների համար (տոմսի գնի 50 տոկոսը), ուսանողների համար (մինչև/ներառյալ 1000 ՀՀ դրամ տոմսի գին սահմանած թանգարանների դեպքում՝ առավելագույնը 300 ՀՀ դրամ, 1000 ՀՀ դրամից ավելի տոմսի գնի դեպքում՝ տոմսի գնի 25 տոկոսը), ինչպես նաև դպրոցական տարիքի երեխաների համար (առավելագույնը 300 ՀՀ դրամ): Թանգարանի մշտական ցուցադրության անվճար այցելության արտոնություններ են սահմանվել՝ երկկողմանի ծնողազուրկ երեխաների, հատուկ խնամքի և կենցաղային սպասարկման կարիք ունեցող ծերերի, Երկրորդ համաշխարհային պատերազմի մասնակիցների (Հայաստանի Հանրապետության և նախկին ԽՍՀՄ պետությունների), Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության տարածքներում մարտական գործողությունների ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված զինծառայողների ընտանիքների անդամների, հաշմանդամների՝ 1-ին խմբի (ուղեկցողի հետ), հաշմանդամների՝ 2-րդ և 3-րդ խմբերի (առանց ուղեկցողի), աղքատության (ընտանեկան) նպաստի համակարգում ընդգրկված նպաստառուների, բազմազավակ ընտանիքների երեխաների, ժամկետային զինծառայողների, Հայաստանի Հանրապետության սահմանամերձ շրջանների դպրոցական տարիքի երեխաների (նախօրոք ներկայացված հայտերի հիման վրա), լրագրողների (աշխատանքային պարտականությունները կատարելիս), նախադպրոցական տարիքի երեխաների համար՝ աշխատանքային բոլոր օրերին:

[61] Տ՛ես E/C.12/2001/10, կետ 14:

ԳԼՈՒԽ 6. ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածը սահմանում է յուրաքանչյուր անձի՝ օրենքին համապատասխան առողջության պահպանման իրավունքը: Հաշվի առնելով այս իրավունքի հիմնարար բնույթը՝ բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումն ամրագրվել են որպես տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներից (ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդված):

Անձի առողջության պահպանման հիմնարար իրավունքն ամրագրված է նաև ՀՀ կողմից վավերացված միջազգային փաստաթղթերում. «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» ՄԱԿ-ի միջազգային դաշնագրի 12-րդ հոդվածի համաձայն՝ դաշնագրին մասնակցող պետությունները ճանաչում են յուրաքանչյուր մարդու ֆիզիկական և հոգեկան առողջության առավելագույնս հասանելի մակարդակի իրավունքը: 2017 թվականի ընթացքում անձանց առողջության պահպանման իրավունքի իրացման և երաշխավորման նպատակով իրականացվել են մի շարք գործողություններ, որոնք դրական լուծումներ են տվել ոլորտում առկա մի շարք խնդիրներին: Այնուհանդերձ, առողջության պահպանման իրավունքի արդյունավետ և լիակատար իրացման համար առկա են որոշ խոչընդոտներ, որոնք նկարագրված են սույն բաժնում:

2017 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված դիմումներով մարդիկ բարձրաձայնել են, 2017 թվականին չեն կարողացել պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալ՝ չնայած նրան, որ այդ օգնության և սպասարկման իրավունքն ունեն: Խնդիրը եղել է համապատասխան ծառայությունների համար պետական բյուջեից տրամադրված ֆինանսական միջոցների բացակայությունը (սպառումը):

ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման մասին» թիվ 318-Ն որոշմամբ հաստատված հավելված 2-ի 4-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ֆինանսավորումն իրականացվում է սահմանափակված բյուջեի սկզբունքով՝ փաստացի կատարված աշխատանքների դիմաց, սակայն ոչ ավելի, քան կազմակերպության և ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորումն իրականացնող մարմնի կամ նրա կողմից լիազորված մարմնի միջև կնքված՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին բժշկական օգնության և սպասարկման իրականացման ու փոխհատուցման մասին պայմանագրով սահմանված գումարը: Սահմանափակված բյուջեի սկզբունքի գործարկման պայմաններում գործնականում առաջանում են խնդիրներ, որոնք էլ բարձրաձայնվել են Պաշտպանին հասցեագրված բողոքներում:

Միաժամանակ 2017 թվականին քննարկումների և անհանգստությունների տեղ է տվել 2018 թվականի առողջապահության բյուջեի կրճատման հարցը[62], ինչը վերոնշյալ խնդիրների առկայության պայմաններում առավել խնդրահարույց է դառնում:

Ավելին, ոլորտում ձեռնարկված որոշ փոփոխությունների ընթացքը ցույց տվեց այդ փոփոխությունների իրականացումից առաջ հասարակության իրազեկմանն ուղղված ձեռնարկված միջոցների անբավարարության մասին: Այսպես 2017 թվականին ՀՀ առողջապահության նախարարության կողմից նախաձեռնվեց պապիլոմա վիրուսի դեմ պատվաստումների իրականացումը: Միաժամանակ նախաձեռնությանը հաջորդած տեղեկատվական հոսքը և հասարակության՝ տվյալ պատվաստանյութի հետևանքների վերաբերյալ պատկերացումները և իրազեկվածության պակասը ցույց տվեցին, որ նախարարության կողմից մինչ տվյալ նախաձեռնությունը չեր իրականացվել հասարակության լայն զանգվածի արդյունավետ իրազեկում:

1. Խտրական վերաբերմունքը պացիենտների նկատմամբ

ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ առողջության պահպանության իրավունքն ունի որոշակի բաղկացուցիչներ: Ըստ միջազգային չափանիշների՝ խտրականության արգելքը մարդու իրավունքների հիմնարար սկզբունքներից և բուժօգնության բարձր մակարդակի ապահովման հիմնարար տարրերից է[63]: Խտրականության արգելքն ամրագրված է նաև ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածով, որն առողջության պահպանման իրավունքի տեսանկյունից ամրագրվել է նաև «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքով: Այսպես, նշյալ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, տարիքից, առողջական վիճակից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, Հայաստանի Հանրապետությունում ունի բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք: Ավելին, նույն օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ բժշկական օգնության դիմելիս, ինչպես նաև բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս յուրաքանչյուր ոք իրավունք ունի՝ արժանանալ հարգալից վերաբերմունքի՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից: Վերոնշյալ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի «է» կետի համաձայն՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները պարտավոր են ապահովել հոգատար և հարգալից վերաբերմունք պացիենտների նկատմամբ:

Նշված իրավունքների պաշտպանության երաշխիքներ են ամրագրված նաև մի շարք միջազգային փաստաթղթերով: Այսպես, «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» ՄԱԿ-ի միջազգային դաշնագրի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետությունները պարտավորվում են երաշխավորել, որ դաշնագրով հռչակված իրավունքներն իրականացվեն առանց որևէ խտրականության: Այսինքն, ՀՀ-ն, վավերացնելով դաշնագիրը, պարտավորվել է ապահովել դաշնագրով ամրագրված առողջության պահպանման իրավունքի՝ առանց խտրականության

[62] http://armtimes.com/hy/article/124461 , http://hetq.am/arm/news/83290/inchu-en-krtchatvel-aroxjapahutyan-ev-socialakan-olortneri-byujetayin-hatkacumnery-parzabanum-e-pokhnakharary.html,
[63] http://www.ohchr.org/Documents/Publications/Factsheet31.pdf

ապահովումը: Համանման կարգավորումներ են ամրագրված նաև ՀՀ կողմից վավերացված այլ միջազգային փաստաթղթերով[64]:

Չնայած օրենսդրորեն ամրագրված վերոնշյալ կարգավորումներին և միջազգային չափանիշներին՝ այնուամենայնիվ, 2017 թվականի ընթացքում ևս արձանագրվել են բուժաշխատողների կողմից անձի նկատմամբ վերջինիս առողջական կամ այլ դրությամբ պայմանավորված (օրինակ՝ հաշմանդամություն ունեցող անձանց, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով, ինչպես նաև Հեպատիտ B և C-ով ապրող) խտրական և անհարգալից վերաբերմունքի դեպքեր: Արդյունքում, մի շարք անձինք չեն ստացել պատշաճ բժշկական օգնություն և չեն կարողացել օգտվել բժշկական ծառայություններից: Խնդիրն այն է, որ արդեն իսկ խոցելի իրավիճակում գտնվող անձինք խուսափում են դիմել բուժաշխատողին կամ բժշկական հաստատությանը՝ իմանալով, որ այդ հաստատությունում իրենց կարգավիճակով պայմանավորված՝ արժանանալու են բացասական տարբերակված վերաբերմունքի: Ավելին, որոշ դեպքերում հենց բուժաշխատողներն են հրաժարվում ծառայություն մատուցել անձանց, պայմանավորված նրանց մոտ որոշակի հիվանդության առկայությամբ (օրինակ՝ Հեպատիտ B կամ C):

Պաշտպանի 2016 թվականի տարեկան հաղորդմամբ անդրադարձ է կատարվել այն հարցին, որ ըստ ՀՀ առողջապահության նախարարության տեղեկությունների՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ բուժաշխատողներն իրենց շփումներում պացիենտների հետ արդեն իսկ պարտավոր են լինել նրբանկատ և պահպանեն էթիկայի նորմեր, ապա որևէ լրացուցիչ կրթություն հաշմանդամություն ունեցող անձանց հետ շփումներում վարվելակերպի առանձնահատկություններ ուսուցանելու վերաբերյալ չի իրականացվում: Վերոնշյալ դիրքորոշումը խնդրահարույց է միջազգային չափանիշների, ՀՀ կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների, ինչպես նաև խոցելի խմբերին պատկանող անձանց՝ առողջության պահպանման իրավունքի պաշտպանության տեսանկյունից[65]:

Հաշվի առնելով վերոնշյալը և այն, որ ՀՀ առողջապահության նախարարության նպատակներից և խնդիրներից է առողջապահության բնագավառում պետական քաղաքականության մշակումն ու դրա իրականացման ապահովումը, ինչպես նաև առողջապահության բնագավառում մարդու իրավունքների պահպանումն ու պաշտպանությունը՝ անհրաժեշտ է՝

1. մշակել համապատասխան ձեռնարկ որոշակի խմբերի (հաշմանդամություն ունեցող անձինք, ՄԻԱՎ/ՁԻԱՀ, Հեպատիտ B, C և այլ հիմքով խտրականության ենթարկվող անձանց) հետ բուժաշխատողների աշխատելու վերաբերյալ.

2. ավելացնել համապատասխան դասընթացների թիվը (դիպլոմային և հետդիպլոմային)՝ բուժաշխատողների տարբեր հիվանդությունների տարածման ուղիների և անվտանգության միջոցների վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու համար:

2. Պալիատիվ բուժօգնությունը

2017 թվականին շարունակել է համակարգային առումով չլուծված մնալ պալիատիվ բժշկական օգնության ներդրման հարցը, որը տարիներ շարունակ բարձրաձայնվել է

[64] Օրինակ՝ «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի միջազգային կոնվենցիա (5-րդ հոդված):
[65] Մանրամասն տե՛ս «Հաշմանդամություն ունեցող անձանց» բաժնում:

Մարդու իրավունքների պաշտպանների, ինչպես նաև տարբեր հասարակական և միջազգային կազմակերպությունների կողմից[66,67]: «Պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման զարգացման ռազմավարությանն ու պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման զարգացման ռազմավարության 2017-2019 թվականների միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշմամբ նշվում է, որ Հայաստանի Հանրապետությունում 2014 թվականին մահերի թվաքանակը կազմել է 27714, ու գրանցված մահերի 60-70%-ին՝ մոտ 20000 հիվանդի, անհրաժեշտ է եղել պալիատիվ բժշկական օգնություն և սպասարկում[68]: Սա վկայում է այն մասին, որ պալիատիվ բուժօգնության ներդրումը չափազանց կարևոր և արդիական հարց է:

Պալիատիվ բուժօգնության տրամադրման վերաբերյալ որոշակի կարգավորումներ նախատեսված են ներկայիս ՀՀ օրենսդրությամբ: Մասնավորապես, «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 2.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պալիատիվ բժշկական օգնությունը կյանքին վտանգ սպառնացող կամ անբուժելի հիվանդություն ունեցող պացիենտի և նրա ընտանիքի կյանքի որակի բարելավմանն ուղղված բժշկական օգնության և սպասարկման տեսակ է, որը նպատակ ունի մեղմել պացիենտի ցավը, տառապանքը և հիվանդության հետ կապված ֆիզիկական, սոցիալ-հոգեբանական, հոգևոր և այլ խնդիրներ՝ դրանք վաղ հայտնաբերելու, գնահատելու և անհրաժեշտ միջամտություններ իրականացնելու միջոցով: Ավելին, նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման տրամադրման չափորոշիչները սահմանում է Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը:

Միաժամանակ, նշյալ կարգավորումներն ինքնին բավարար չեն պալիատիվ բուժօգնության տրամադրման համար: Ավելին, դրա լիարժեք իրականացմանը խոչընդոտում են նաև որոշ գործող օրենսդրական կարգավորումներ, որոնք ըստ մասնագետների՝ բարդ են և ժամանակատար: Ոլորտի մասնագետները նշում են նաև, որ Հայաստանում մորֆինի և վերջինիս այլընտրանքային միջոցների քանակը չի բավարարում դրա կարիքն ունեցող բոլոր հիվանդներին[69]: Միաժամանակ, 2017 թվականին գործադրված չեն եղել մեխանիզմներ՝ տնային պայմաններում պալիատիվ խնամք ստանալու համար:

Դրական է այն, որ 2017 թվականի փետրվարի 2-ին հավանության է արժանացել պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման զարգացման ռազմավարությունը և 2017-2019 թվականների միջոցառումների ծրագիրը: Այսպիսով, արդեն իսկ կարևորվում է պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման համակարգի զարգացման անհրաժեշտությունը: Վերոնշյալ փաստաթղթով առանձնացվել են ռազմավարական նպատակներ, որոնց լուծումը կարող է ապահովել պալիատիվ բուժօգնության և սպասարկման տրամադրման մի շարք խնդիրների լուծում: Արդյունքում, 2017 թվականի

---

[66] http://www.who.int/mediacentre/factsheets/fs402/en/

[67] Դեռևս 2011 թվականին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի բարձր մակարդակով տեղի ունեցած հանդիպման ժամանակ մշակված քաղաքական հռչակագրով պետություններն ընդգծել են պալիատիվ խնամքի ներդրման անհրաժեշտությունը: http://www.hrw.org/sites/default/files/wr2014_web_0.pdf, http://apps.who.int/iris/bitstream/10665/250584/1/9789241565417-eng.pdf?ua=1,https://www.hrw.org/world-report/2017/country-chapters/armenia

[68] https://www.e-gov.am/protocols/item/709/

[69] http://www.who.int/mediacentre/factsheets/fs402/en/

ընթացքում ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 45-Ն հրամանով հաստատվել է «Պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման տրամադրման չափորոշիչը», որով սահմանվում են բնակչությանը ցուցաբերվող պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման տրամադրման հիմնական սկզբունքները և պալիատիվ բժշկական օգնության կազմակերպման հետ կապված հարաբերությունները, մշակվել են «Պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում ցավի կառավարման մեթոդական ցուցումները», և կազմակերպվել են ՀՀ Արարատի, Արագածոտնի, Լոռու, Շիրակի մարզերի և Երևանի բժշկական կազմակերպությունների 25 բուժաշխատողների պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ:

Չնայած պալիատիվ բուժօգնության ներդրման համար ձեռնարկված վերոնշյալ քայլերին՝ այնուամենայնիվ 2017 թվականին պալիատիվ բուժօգնությունը լիարժեքորեն հասանելի չի եղել դրա կարիքն ունեցող անձանց համար: Միաժամանակ, 2017 թվականի փետրվարի 2-ին հավանության է արժանացել պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման զարգացման ռազմավարությունը և 2017-2019 թվականների միջոցառումների ծրագրի իրականացման մշտադիտարկումը և գնահատումը: Այսպես՝ ծրագրի «Ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների ղեկավարման, մոնիտորինգի և դրանց իրականացման ընթացակարգեր» վերտառությամբ բաժնում ամրագրվում է, որ բժշկական հաստատություններում պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման զարգացմանն ուղղված գործընթացների կանոնակարգումը, *մշտադիտարկումը*, ինչպես նաև մշտադիտարկման և գնահատման գործիքների մշակումն ու կիրարկումն իրականացվելու է Հայաստանի Հանրապետության առողջապահության, աշխատանքի և սոցիալական հարցերի, կրթության և գիտության նախարարությունների և Հայաստանի Հանրապետության մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի կողմից՝ յուրաքանչյուրն իր իրավասության շրջանակներում: Ավելին, ծրագրում նշվում է նաև, որ դրա իրականացման ընթացքում գործընթացի/արդյունքի ցուցանիշների հաշվարկման համար անհրաժեշտ տվյալները պարբերաբար կհավաքագրվեն ՀՀ առողջապահության նախարարության կողմից և կվերլուծվեն: Նշված կարգավորումները բավարար հստակ և գործուն մշտադիտարկման մեխանիզմ չեն նախատեսում, ինչն էլ ռիսկի տակ է դնում ծրագրի արդյունավետ իրականացումը:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է՝

1. նախատեսել ծրագրի իրականացման մշտադիտարկում իրականացնող հստակ մեխանիզմ.

2. այդ մեխանիզմում նախատեսել նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությունը:

3. Բժշկական գաղտնիքի պահպանումը

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցներում և հաղորդմամբ բարձրաձայնվել է առողջության պահպանման իրավունքի հիմնարար տարրերից մեկը հանդիսացող[70] բժշկական գաղտնիքի պաշտպանության համար օրենսդրական երաշխիքների բացակայության խնդրի մասին, որը շարունակվել է նաև 2017 թվականին:

[70] http://www.who.int/genomics/public/patientrights/en/

Խնդիրն այն է, որ թե՛ իրազեկման պակասի, թե՛ հստակ և մանրամասն օրենսդրական կարգավորումների պատճառով շարունակվում են արձանագրվել բժշկական գաղտնիքի հրապարակման դեպքեր, ինչպես նաև ահազանգեր են ներկայացվել Մարդու իրավունքների պաշտպանին: Առ այսօր արձանագրվում են դեպքեր, երբ մի պացիենտին ներկայացվում է մեկ այլ պացիենտի բուժզննության արդյունքը, կամ, երբ բժշկական հաստատությունում բուժօգնությունը կամ խորհրդատվությունը տրամադրվում է այլ պացիենտների ներկայությամբ: Մի շարք դեպքերում անձինք կաշկանդված են լինում բուժաշխատողից պահանջել տվյալների գաղտնիության պահպանում, քանի որ նախ՝ դրա համար առկա չեն օրենսդրական բավարար մեխանիզմներ, ապա նաև հաշվի առնելով այն, որ պացիենտին անհանգստացնում է իր համար վրա հասնող հավանական բացասական ազդեցությունը (օրինակ՝ վատ վերաբերմունքը): Նշված իրավիճակը խնդիրներ է առաջացնում և՛ պացիենտների, և՛ բուժաշխատողների համար:

Բժշկական գաղտնիքի պահպանման վերաբերյալ առկա են մի շարք մանրամասն միջազգային կարգավորումներ: Այսպես, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ (2015)5 հանձնարարականի հավելվածի 9.5-րդ կետի համաձայն՝ առողջական տվյալները, որոնց վրա տարածվում է բժշկական խորհրդապահություն պահպանելու անհրաժեշտություն, պետք է միայն հասանելի լինեն և մշակվեն այն անձանց կողմից, որոնց համար ուղղակիորեն կամ մասնագիտական գաղտնիքի կամ խորհրդապահության այլ կանոններով սահմանված է նման պարտավորություն: Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ (89)14 հանձնարարականի 40-րդ կետի համաձայն՝ հանրային առողջապահական մարմնին խորհուրդ է տրվում խստորեն հարգանք դրսևորել խորհրդապահության պահպանման նկատմամբ՝ անհրաժեշտության դեպքում առողջապահական ոլորտի աշխատողների համար իրականացնել հատուկ քաղաքականություն և առաջ քաշել կրթական ծրագրեր՝ հստակեցնելով ՄԻԱՎ վարակի խորհրդապահության անհրաժեշտության հետ կապված հարցերը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մի շարք վճիռներում անդրադարձել է բժշկական տվյալների պաշտպանության կարևորությանը: Մասնավորապես՝ Եվրոպական դատարանը նշել է, որ անձնական, այդ թվում՝ բժշկական, տվյալների պաշտպանությունը ունի հիմնարար նշանակություն «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված՝ անձի անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի իրացման համար: Առողջական տվյալների խորհրդապահության հարգելը հանդիսանում է Կոնվենցիայի անդամ հանդիսացող բոլոր երկրների իրավական համակարգերի կենսական սկզբունքներից մեկը[71]: Ըստ Եվրոպական դատարանի՝ բժշկական տվյալների խորհրդապահության հարգումն ունի հիմնարար նշանակություն պացիենտի գաղտնիությունը պաշտպանելու համար[72]:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ մարդու մոտ ՄԻԱՎ առկայության վերաբերյալ տվյալների բացահայտումը կարող է կտրուկ ազդեցություն ունենալ վերջինիս ինչպես մասնավոր և ընտանեկան կյանքի, այնպես էլ սոցիալական կյանքի և զբաղվածության վրա՝ ենթարկելով նրան մերժված լինելու վտանգին: Այս

[71] Տե՛ս Զ-ն ընդդեմ Ֆինլանդիայի (Z v. Finland) գործով 1997 թվականի փետրվարի 25-ի վճիռը, գանգատ թիվ 22009/93, կետ 95, և Լ. Լ-ն ընդդեմ Ֆրանսիայի (L.L. v. France) գործով 2006 թվականի հոկտեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 7508/02, կետ 44:

[72] Տե՛ս և Լ. Լ-ն ընդդեմ Ֆրանսիայի (L.L. v. France) գործով 2006 թվականի հոկտեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 7508/02, կետ 23:

հանգամանքը այլ անձանց ևս կարող է հետ պահել ստուգվելու և բուժում ստանալու մտքից՝ այդպիսով վտանգելով հասարակության կողմից կանխարգելման անվտանգության միջոցառումների պահպանմանն ուղղված ջանքերը:[73]

Անձնական տվյալների պաշտպանությունը, որպես անձի հիմնական իրավունք, ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ, որի 34-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող տվյալների պաշտպանության իրավունք: Այս սահմանադրական իրավունքն իր ամրագրումն է գտել նաև «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով, որի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի պահանջել իր առողջական վիճակի, հետազոտման, ախտորոշման և բուժման ընթացքում պարզված տեղեկությունների գաղտնիության ապահովում: Ավելին, նույն օրենքի 19.3-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով բուժաշխատողների համար ամրագրվում է պարտականություն՝ պահպանել բժշկական գաղտնիքը: Այս իրավունքը բացարձակ չէ և ենթակա է սահմանափակման: Այսինքն, որպես բացառություն օրենքով կարող են սահմանվել այդպիսի գաղտնիքը հրապարակելու դեպքեր, որոնք, սակայն պետք է լինեն հստակ, որոշակի և հետապնդեն իրավաչափ նպատակ: Կարևորելով հարցը՝ բժշկական գաղտնիքի մշակման և տարածման, ինչպես նաև բժշկական գաղտնիքի խախտման համար պատասխանատվություն սահմանող կարգավորումների համար միջոցառում է նախատեսված նաև «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 483-Ն որոշմամբ, ինչն իր հերթին վկայում է առկա կարգավորումների անբավարարության մասին:

Օրենքի վերոնշյալ կարգավորումները բնականաբար չեն կարող համարվել լիարժեք՝ բժշկական գաղտնիքի պաշտպանության ապահովման տեսանկյունից: Այսպես, անհրաժեշտ է ընդգծել, որ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքով ամրագրված չեն այնպիսի կարևոր դրույթներ, որոնք կնախատեսեն բժշկական գաղտնիքի սահմանումը, տրված չեն այն սուբյեկտները, ում կարող է փոխանցվել բժշկական գաղտնիքը, ինչպես նաև այդ տեղեկատվության մշակման և փոխանցման կարգի առանձնահատկությունները: Օրենսդրորեն սահմանված չեն նաև պատասխանատվության հստակ մեխանիզմներ բժշկական գաղտնիքի ապօրինի տարածման համար: Խնդրի լուծման կապակցությամբ դեռևս 2016 թվականին ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակվել է «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որտեղ կարգավորում են ստանում վերոնշյալ հարցերը: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից նախագծի վերաբերյալ ներկայացվել են մի շարք առաջարկներ, որոնց ճնշող մեծամասնությունն ընդունվել և կարգավորում է ստացել նախագծի լրամշակված տարբերակում: Նախագիծը, սակայն, 2017 թվականին չի ընդունվել: Ավելին, ՀՀ վարչապետի հանձնարարականով նախագիծը շրջանառությունից հանվել է և փոխարինվելու է «Առողջապահության մասին» ՀՀ օրենքի նախագծով:

Ելնելով վերոնշյալից՝ կարելի է եզրակացնել, որ խնդիրներ են առաջանում բուժաշխատողների համար իրենց գործողությունները գնահատելու և դրանք կազմակերպելու, ինչպես նաև պացիենտների իրավունքների պաշտպանության

[73] Տե՛ս Զ-ն ընդդեմ Ֆինլանդիայի (Z v. Finland) գործով 1997 թվականի փետրվարի 25-ի վճիռը, գանգատ թիվ 22009/93, կետ 96:

տեսանկյունից: Միաժամանակ, նշված իրավիճակում վտանգվում է անձի հիմնարար՝ առողջության պահպանման իրավունքը:

Հաշվի առնելով վերոշարադրյալն՝ անհրաժեշտ է՝

1. հնարավորինս սեղմ ժամկետում ամրագրել բժշկական գաղտնիքը սահմանող, վերջինիս մշակման և տարածման վերաբերյալ օրենսդրական կարգավորումներ.

2. լրատվության միջոցներով պացիենտներին իրազեկել բժշկական գաղտնիքի պահպանման և վերջինիս պահպանման իրավական կարգավորումների մասին.

3. համապատասխան որակավորման դասընթացների միջոցով բուժաշխատողներին իրազեկել բժշկական գաղտնիքի պահպանման կարևորության և վերջինիս պահպանման իրավական կարգավորումների մասին:

4. Ֆիզիկական անձի կողմից փոստային ծառայության միջոցով այլ երկրից դեղեր ստանալը սեփական օգտագործման համար

Օրենսդրության թերի կարգավորումների արդյունքում առկա է ՀՀ տարածքում չգրանցված դեղամիջոցի ֆիզիկական անձի կողմից օգտագործման նպատակով այլ երկրներից առաքման սահմանափակման խնդիր: Խնդիրն այն է, որ այն պարագայում, երբ դեղը գրանցված չէ Հայաստանում, ֆիզիկական անձը այն պետք է իր բուժման համար ձեռքբերի այլ երկրներից: Օրինակ, Մարդու իրավունքների պաշտպանին 2017 թվականին ներկայացված դիմումներից մեկի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ անձն իր բուժման համար դեղամիջոցը ձեռք է բերում այլ երկրից և այդ երկրից Հայաստան ժամանելու պայմաններում հնարավորություն է ունենում ներկրել Հայաստան: Մինչդեռ, այդ նույն դեղամիջոցը՝ նույն վայրից գնված, հնարավոր չի լինում առաքել Հայաստան:

Այսպես, համաձայն «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետությունում թույլատրվում է արտադրել, ներմուծել, բաշխել, բաց թողնել, իրացնել և կիրառել այն դեղերը, որոնք գրանցված են Հայաստանի Հանրապետությունում, բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի: Նշված օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ դեղեր, դեղանյութեր, դեղաբուսական հումք, հետազոտվող դեղագործական արտադրանք ներմուծել թույլատրվում է ներմուծման հավաստագրի հիման վրա, բացառությամբ նշված հոդվածով նախատեսված դեպքերի: Այսպես, ըստ նշված հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի՝ ներմուծման կամ արտահանման հավաստագիր չի պահանջվում օտարերկրյա պետություն մեկնող և օտարերկրյա պետությունից ժամանող ֆիզիկական անձի բուժման կուրսի կամ անձնական օգտագործման դեղերի համար՝ ՀՀ կառավարության սահմանած քանակներով:

Ստացվում է, որ ներկայիս օրենսդրական կարգավորումների պարագայում նշված դեղամիջոցը հնարավոր է ՀՀ տեղափոխել միայն ՀՀ ժամանելիս, այսինքն՝ այդ դեղը հնարավոր չէ ՀՀ տարածքում ստանալ փոստային կամ առաքման այլ ճանապարհով ֆիզիկական անձի կողմից օգտագործման համար:

ՀՀ առողջապահության նախարարության տվյալների համաձայն՝ ՀՀ առողջապահության նախարարության և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի մասնագետների հետ համատեղ 2017 թվականին քննարկվել է «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում, Հայաստանի

Հանրապետության կառավարության 2000 թվականի սեպտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետություն դեղերի և դեղանյութերի ներմուծման ու արտահանման կարգը հաստատելու մասին» թիվ 581 և 2015 թվականի հուլիսի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված կարգով անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների ակնհայտ առևտրային չափաքանակներն ու ներմուծման հարկային հայտարարագիր ներկայացնելու և անուղղակի հարկերի վճարումն իրականացնելու պարտավորության վերաբերյալ ծանուցման ձևը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մարտի 20-ի թիվ 502-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 865 որոշումներում համապատասխան փոփոխություններ իրականացնելու վերաբերյալ հարցը: Համատեղ քննարկման արդյունքում որոշում է կայացվել մշակել «Դեղերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին նախագիծ՝ ֆիզիկական անձանց համար կենսական անհրաժեշտություն ներկայացնող դեղերի ներմուծումը կանոնակարգելու նպատակով: Սակայն 2017 թվականին խնդիրը լուծում չի ստացել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք հնարավորինս սեղմ ժամկետում օրենսդրորեն կարգավորել ֆիզիկական անձի բուժման համար անհրաժեշտ Հայաստանում չգրանցված դեղերի՝ ֆիզիկական անձի կողմից փոստային ծառայությունների միջոցով առաքման հարցը:

5. Դեղերի հասանելիությունը հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար

2017 թվականի ընթացքում Պաշտպանին են հասցեագրվել բողոքներ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանցից, որոնք դժգոհություն են հայտնել պետական պատվերով գնված դեղի որակի մասին: Ըստ ներկայացված բողոքների՝ 2017 թվականի ընթացքում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց սկսել է տրամադրվել «Օլանզապին» դեղամիջոցը՝ նախկին «Զիպրեքսա» դեղամիջոցի փոխարեն: Նոր դեղամիջոցի ընդունելուց հետո, դիմողների պնդմամբ, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց մոտ առաջանում է ինքնազգացողության վատացում. ընդհանուր թուլություն, անքնություն, վերջույթների ջղաձգումներ, ֆիզիկական պասիվություն և այլն, ինչի պատճառով ստիպված են հրաժարվել դեղամիջոցը ստանալ և ընդունել: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից համանման խնդիր էր բարձրաձայնվել նաև 2014 թվականին, երբ կրկին փորձ էր արվել «Զիպրեքսա» դեղը փոխարինել «Զոլաքսա» դեղով: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի միջամտությամբ իրականցվել էր «Զոլաքսա» դեղի փորձաքննություն, որի արդյունքում պարզվել էր, որ վերջինիս բացասական ազդեցությունը մեծ է: Արդյունքում որոշվել էր շահառուներին մատակարարել «Զիպրեքսա» դեղը՝ 2015-2016 թվականների «Արտահիվանդանոցային բուժում «Զիպրեքսա» դեղով» ծրագրի շրջանակներում:

Ըստ Առողջապահության նախարարության պարզաբանման՝ «Զիպրեքսա» դեղը հանդիսանում է «Օլանզապին» պարունակող օրիգինալ դեղը: Մյուս դեղերը, որոնք պարունակում են «Օլանզապին» ազդող նյութը, ջեներիկ դեղեր են: Հայաստանի Հանրապետությունում ջեներիկ դեղերի գրանցման ժամանակ դեղ արտադրողը ներկայացնում է փաստաթղթեր՝ հիմնավորելու օրիգինալի հետ իր դեղի

կենսահամարժեքությունը: Այդպիսի հետազոտություն կատարվել է նաև «Արփիմեդ» ընկերության արտադրության «Օլանզապին» դեղի համար, որի արդյունքները փորձաքննության են ենթարկվել գրանցման գործընթացի ժամանակ, և տրվել է դրական եզրակացություն: Որակական տարբերությունների մասին խոսք լինել չի կարող, քանի որ գրանցվող բոլոր դեղերի որակը պետք է համապատասխանի ընդունված դեղագրքերի պահանջներին: Այդ խնդրի լուծմանն է ուղղված դեղերի գրանցման համակարգը, երբ մինչև շուկայահանման թույլտվություն տալը դեղի որակը, անվտանգությունն ու արդյունավետությունը հաստատող փաստաթղթերը ենթարկվում են փորձաքննության՝ գործող օրենսդրության համաձայն: Առողջապահության նախարարության կողմից ներկայացվել է նաև ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Է. Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից պարբերաբար իրականացված դեղերի կողմնակի երևույթների բացահայտմանն ուղղված ուսումնասիրությունների արդյունքները:

Նախարարության տեղեկացմամբ՝ եթե կողմնակի ազդեցության դեպքերի դրսևորման հաճախականությունը գերազանցի արձանագրված սահմանները կամ ի հայտ գան կյանքին սպառնացող երևույթներ, ՀՀ առողջապահության նախարարությունը իրավասու է կասեցնել այդ դեղի գրանցումը և շրջանառությունը հանրապետությունում:

ՀՀ առողջապահության նախարարության դիրքորոշման համաձայն՝ նախարարությունը որդեգրել է առողջապահական ցուցանիշների բարելավման ծախսարդյունավետ ծրագրերի իրականացման քաղաքականություն. ծրագրի շարունակականությունն աննպատակահարմար է և՛ առողջապահական, և՛ ֆինանսական ցուցանիշների առումով:

Հայկական արտադրության «Օլանզապին» դեղը ստացող մի խումբ շահառուների դժգոհության, ինչպես նաև դեղի արդյունավետության բացակայության և կողմնակի երևույթների դրսևորումների կապակցությամբ Առողջապահության նախարարությունը պարզաբանել է, որ յուրաքանչյուր դեղ, թե ջեներիկ, թե օրիգինալ, կիրառման ընթացքում կարող է դրսևորել տարբեր բնույթի, ուժգնության և հաճախականության կողմնակի երևույթներ, որոնց առկայությունը կախված է ոչ միայն դեղից, այլև տվյալ հիվանդի օրգանիզմի ֆիզիոլոգիական առանձնահատկություններից, հիվանդության ընթացքի առանձնահատկություններից, ինչպես նաև բուժման գործընթացից, առանձին շահառուների կողմից դեղի վերաբերյալ բողոքները կարող են կրել սուբյեկտիվ բնույթ և չեն կարող միանշանակ հիմք հանդիսանալ դեղի որակի և արդյունավետության վերաբերյալ բացասական եզրահանգման:

ՀՀ առողջապահության նախարարության տեղեկացմամբ՝ չի անտեսվել շահառուների բողոքը և կատարվել է «Արփիմեդ» ՍՊԸ-ի արտադրության «Օլանզապին» 10 մգ N30 և «Զիպրեքսա (Օլանզապին)» ELI Lilli and company (USA) դեղերի կենսահամարժեքության փորձաքննություն, որի արդյունքում հաստատվել է նշված դեղերի կենսահամարժեքությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. առկա ֆինանսական միջոցների սահմաններում գնել մի քանի տեսակի դեղ՝ հնարավորություն տալով պացիենտին և բուժող բժշկին օգտվել իրեն առավել պիտակի դեղից.

2. իրականացնել համապատասխան հետազոտություններ՝ «Օլանզապին» դեղի բացասական ազդեցությունը և անարդյունավետությունը կրած շահառուների հաշվառման նպատակով.

3. հաշվառված շահառուներին ապահովել համապատասխան ծրագրերով «Զիպրեքսա» դեղի մատակարարումը։

6. Մանկական ստոմատոլոգիական բժշկական օգնությունն ու սպասարկումը

2017 թվականի ընթացքում Պաշտպանին են հասցեագրվել բողոքներ հանրապետության մարզերի որոշ բնակավայրերում մանկական ստոմատոլոգիական ծառայությունների տրամադրման բացակայության վերաբերյալ։ Մասնավորապես բողոքներից մեկով հաշմանդամություն ունեցող երեխայի մայրը դժգոհություն է հայտնել, որ իր երեխան ունի ատամնաբուժական ծառայություն ստանալու կարիք, սակայն ատամնաբույժը հրաժարվում է պետական պատվերի շրջանակներում կատարել բուժում՝ պատճառաբանելով, որ պետական բյուջեից տրամադրված գումարը սպառվել է: Միաժամանակ, ՀՀ առողջապահության նախարարության տվյալներից պարզվել է, որ այդ բնակավայրում, մասնավորապես Սիսիան քաղաքում պետական պատվեր իրականացնող ատամնաբուժական պոլիկլինիկա առկա չէ, նման բուժօգնություն կարող է տրամադրվել միայն Գորիս քաղաքում:

ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 17-ի «Բժշկական օգնության և սպասարկման պետական պատվերի տեղադրման կարգը և պետական պատվեր իրականացնող բժշկական կազմակերպությունների կառավարման արդյունավետության գնահատման ցուցանիշները սահմանելու մասին» թիվ 49-Ն հրամանով հաստատված կարգի համաձայն՝ ՀՀ առողջապահության նախարարության կողմից բժշկական կազմակերպություններում պետական պատվերի տեղադրման մասին որոշումը կայացվում է սահմանված կարգով մարզպետարանի/բժշկական կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերի ուսումնասիրության հիման վրա, ինչը ենթադրում է, որ պետական պատվերի տրամադրման հարցը հնարավոր է քննարկել միայն համապատասխան հայտի ներկայացման դեպքում:

Միաժամանակ, համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 45-Ն հրամանով հաստատված չափորոշչի 7-րդ կետի 1-ին ենթակետի՝ պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում բնակչությանը ցուցաբերվող ստոմատոլոգիական բժշկական օգնությունն ու սպասարկումն իրականացվում է բնակչության կողմից բժշկի ազատ ընտրության սկզբունքով, առանց տարածքային սահմանափակումների:

ՀՀ առողջապահության նախարարությունը Սիսիանում ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների կողմից պետական պատվեր տեղադրելու համար հայտ չներկայացնելու խնդիրը քննարկել է նաև ՀՀ Սյունիքի մարզպետարանի հետ:

Այսպիսով, կարելի է եզրահանգել, որ չեն պահպանվել 2017 թվականին նշված բնակավայրում պետական պատվերի տեղադրման ընթացակարգերը, մասնավորապես չեն ներկայացվել ընթացիկ տարվա դրությամբ պետական պատվերի շրջանակներում ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայություններ մատուցող բժշկական

կազմակերպությունների, ինչպես նաև այլ բժշկական կազմակերպությունների համար պետական պատվերի տեղադրման հայտեր, ինչի արդյունքում էլ չի ապահովվել մանկական ստոմատոլոգիական բժշկական օգնության և սպասարկման հասանելիությունը պետական պատվերի շրջանակներում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է հանրապետության բոլոր համայնքներում ապահովել մանկական ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների համար պետական պատվերի տեղադրման հայտերի ներկայացումը և տեղադրումը:

ԳԼՈՒԽ 7. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ՀՀ Սահմանադրության 59-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով: Մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով՝ հանրային շահերի պաշտպանության նպատակով: Չնայած իրավական դաշտում գործող իրավական ակտերի՝ առկա են սույն իրավունքի լիարժեք ապահովման կապակցությամբ իրագործմանը խոչընդոտող թե՛ իրավական, թե՛ գործնական խնդիրներ:

1. Տնտեսվարող սուբյեկտների հարկային պարտավորությունների ապահովմանն ուղղված քրեաիրավական գործիքների կիրառումը

2017 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են բողոքներ այն մասին, որ գործնականում լայն կիրառություն ունի ՀՀ ՊԵԿ հարկային ծառայության քննչական վարչությունում քրեական գործերի հարուցման և այնուհետև ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 5-րդ մասի՝ քրեական օրենքով արգելված մի շարք արարքների, այդ թվում՝ հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելու դեպքում անձին քրեական պատասխանատվությունից ազատող խրախուսական նորմի ոչ իրավաչափ կիրառման խնդիրը, որի մասին բարձրաձայնվել է Պաշտպանի տարեկան զեկույցներով և հաղորդմամբ:

Ավելին, մինչև 2017 թվականի փետրվարի 28-ի փոփոխությունները որոշակիության տեսանկյունից խնդրահարույց էր նաև ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածով ամրագրված հանցակազմի դիսպոզիցիայի սահմանումը, ինչն արդեն ձևավորել է որոշակի պրակտիկա: Մասնավորապես, 205-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելը օրենսդրությամբ նախատեսված հաշվետվություններ, հաշվարկներ կամ հարկման հիմք հանդիսացող պարտադիր այլ փաստաթղթեր չներկայացնելու կամ նշված փաստաթղթերի մեջ ակնհայտ խեղաթյուրված տվյալներ մտցնելու միջոցով, որը կատարվել է խոշոր չափերով հանցակազմի օրենսդրական նման ձևակերպումը խնդիրներ էր առաջացնում նշված հանցագործության ավարտման պահի հստակ սահմանման հետ կապված, պարզ չէր, թե արդյոք Քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում առկա «հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարումներ վճարելուց խուսափել» արտահայտությունը կարելի է մեկնաբանել որպես հարկեր չվճարելուն համարժեք: ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի դիսպոզիցիայի մեկնաբանության և կիրառության հարցում խնդրահարույց էր նաև հանցակազմի դիսպոզիցիայում առկա «չարամտորեն» եզրույթը:

Ողջունելի է այն, որ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» 2017 թվականի փետրվարի 28-ի ՀՕ-44-Ն ՀՀ օրենքով փոփոխություն է իրականացվել խնդրո առարկա 205-րդ հոդվածում սահմանված հանցակազմի դիսպոզիցիայում, այն է՝

«հարկերը վճարելուց խուսափել» ձևակերպումը փոփոխվել է և հանցակազմում ամրագրում է ստացել «հարկերը չվճարելը», իսկ «չարամտորեն» եզրույթը հանվել է: 2017 թվականի ապրիլի 8-ին ուժի մեջ է մտած «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքով լուծում է ստացել քննարկվող հարցի օրենսդրական կարգավորումների թերությունների խնդիրը, սակայն իրավական նորմի կիրառության խնդիրն առ այն, որ գործնականում նշյալ հանցակազմը կիրարկվում է որպես անուղղակի ճնշում քրեաիրավական միջոց ուղղված տնտեսվարող սուբյեկտների հարկային պարտավորությունների կատարման ապահովմանը, դեռևս համակարգային առումով լիարժեք լուծում չի ստացել:

Խոսքը, մասնավորապես, վերաբերում է Պաշտպանին հասցեագրված բողոքների վրա հիմնված ուսումնասիրությունների արդյունքներին: Մասնավորապես, պրակտիկայում առկա են դեպքեր, երբ քրեական գործի հարուցմամբ քրեական օրենքի սպառնալիքի, ինչպես նաև քրեական գործով վարույթի շրջանակներում դատավարական հարկադրանքի միջոցների (մասնավորապես՝ կալանքի) կիրառման հնարավորության ռիսկերի պայմաններում անձը համաձայնում է կատարել իր ենթադրյալ չկատարված հարկային պարտավորությունները՝ Քրեական օրենսգրքի խնդրո առարկա խրախուսական նորմի կիրառությամբ ազատվելով քրեական պատասխանատվությունից:

Ազատ շուկայական տնտեսության պայմաններում տնտեսվարող սուբյեկտների՝ հարկերի, տուրքերի ու այլ պարտադիր վճարումների ժամանակին և ճշգրիտ հաշվարկման ու վճարման պարտավորությունների ապահովումը ենթադրում է ճկուն պետական քաղաքականություն: Նման պայմաններում պետությունը պետք է մշակի այս խնդրի իրավական կարգավորման այնպիսի համակարգ, որը կապահովի հանրային (պետական բյուջեի ձևավորում) և մասնավոր (տնտեսվարող սուբյեկտներ) իրավաչափ շահերի ողջամիտ հավասարակշռություն: Պետության կողմից այս ոլորտում, այդ թվում՝ քրեական քաղաքականության շրջանակներում գործադրվող իրավական միջոցները, մասնավորապես՝ հարկեր չվճարելու համար պատասխանատվության նախատեսումն ի վերջո ուղղված են պետական բյուջեի ամբողջական ձևավորման կարևորագույն խնդրի լուծմանը:

Այսպիսով, հարկային պարտավորությունների պատշաճ կատարմանն ուղղված քրեաիրավական նորմերը չի կարելի դիտարկել այլ իրավակարգավորումներից կտրված. դրանք անհրաժեշտ է մեկնաբանել հարկային օրենսդրության հետ համակարգային միասնության մեջ՝ հաշվի առնելով քննարկվող ոլորտում պետական քաղաքականության առաջնահերթությունները: Կարևոր է նաև քրեական քաղաքականության հարցում կանխարգելիչ, այլ ոչ թե պատժիչ նպատակի գերակայության սկզբունքի արմատավորումը, ինչի մասին է վկայում ժամանակակից միջազգային փորձը:

Ավելին, հարկեր վճարելուց խուսափելու պարագայում որպես հարկային պարտավորությունների կատարման մեխանիզմ քրեական գործ հարուցելու պրակտիկայի մասին են վկայում համապատասխան գերատեսչության կողմից ներկայացված վիճակագրական տվյալները:

Այսպես, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հայտնած տեղեկությունների համաձայն՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչության կողմից 2017 թվականին հարուցված 131 և վարույթ ընդունված 448 քրեական գործերից 37 քրեական

գործերի նախաքննությունն ավարտվել է և քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան 21 քրեական գործի շրջանակներում և քրեական գործի վարույթը կասեցվել է 68 գործով: Փաստորեն, հարուցված 579 քրեական գործերից միայն 21-ն է մեղադրական եզրակացությամբ ուղարկվել դատարան: Պատկերը գրեթե անփոփոխ է նաև նախորդ տարիների ընթացքում, երբ, օրինակ՝ ըստ Կոմիտեի տվյալների՝ 2016 թվականին հարուցված 60 և վարույթ ընդունված 386 քրեական գործերից 135 քրեական գործերի նախաքննությունն ավարտվել է և քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան 16 քրեական գործի շրջանակներում և քրեական գործի վարույթը կասեցվել է 18 գործով:

Արդյունքում՝ ստացվում է, որ չնայած օրենսդրական կարգավորումների ներմուծմանը, այնուամենայնիվ, պատկերը փոփոխությունների գրեթե չի ենթարկվել, ուստի, շարունակում է արդիական մնալ այն պնդումը, որ հնարավոր անբարենպաստ հետևանքների առաջացման մտավախությունից ելնելով է միայն, որ հարկ վճարողը ենթադրյալ չվճարված հարկերը, այդ թվում՝ հաշվարկված տույժերն ու տուգանքները վճարելու պատրաստակամություն է հայտնում: Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ նշվածի արդյունքում սահմանադրորեն երաշխավորված տնտեսական գործունեության ազատության և տնտեսական մրցակցության չարդարացված սահմանափակումների առաջացումից բացի, խաթարվում է նաև անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության արդյունավետ միջոցների իրացման հնարավորությունը:

Ելնելով վերոգրյալից՝ տնտեսվարող սուբյեկտների համար իրավական որոշակիության ապահովման, ինչպես նաև քրեական գործերի հարուցման՝ իբրև հարկային պարտավորությունների կատարումն ապահովող լծակի գործադրման պրակտիկայի վերացման ուղղությամբ՝ առաջարկում ենք քայլեր ձեռնարկել սահմանված իրավական կարգավորումների պատշաճ կիրարկման և օրենսդրությամբ նախատեսված նպատակների իրագործման ուղղությամբ: *Ուստի անհրաժեշտ է՝*

1. մշակել ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածների կիրառման չափանիշներ և ուղենիշեր.

2.իրականացնել հատուկ վերապատրաստման դասընթացներ համապատասխան քննիչների համար.

3.բարձրացնել տնտեսվարող սուբյեկտների իրազեկումը Քրեական օրենսգրքի կիրառության վերաբերյալ:

2. Դեղերի ոլորտում պետական գնումները և դրանց ազդեցությունը անձի իրավունքների վրա

2017 թվականին ևս ստացվել են ահազանգեր պետական գնումների շրջանակներում ձեռքբերված դեղերի ցածր որակի և նվազ օգտակարության վերաբերյալ: Խնդիրն այն է, որ պետական գնումների ընթացակարգում նախապատվությունը տրվում է ավելի ցածր գին ունեցող դեղին, մինչդեռ այն ոչ բոլոր դեպքերում է լինում բավարար կերպով արդյունավետ: Մասնավորապես, մի շարք բուժաշխատակիցներ նշում են, որ առավել ցածր գին ունեցող որոշ դեղերի փոխարեն խորհուրդ են տալիս պացիենտներին ձեռք բերել արժեքով ավելի բարձր դեղեր, քանի որ դրանք ավելի արագ և արդյունավետ են բերում

անհրաժեշտ արդյունքների: Նշված խնդիրը գտնվում է Մարդու իրավունքների ուշադրության կենտրոնում և դրա մասին բարձրաձայնվել է տարեկան զեկույցներով և հաղորդմամբ:

Այսպես, ըստ ՀՀ կառավարության 2013 թվականի մայիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները հաստատելու մասին» N 502-Ն որոշման հավելվածի 3-րդ կետի՝ դեղերի գնումների պլանում գնման առարկա հանդիսացող դեղի գնման տեխնիկական բնութագրերը ձեռք բերվող դեղին ներկայացվող՝ ի թիվս այլ պահանջների, պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն, որ դեղի անվանումը նշելիս գրվում են դեղի միջազգային համընդհանուր (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումները: Հավելվածով կարգավորման է ենթարկվել նաև ՀՀ-ում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր նույն բաղադրատարրերով դեղի այլ գրանցված տարբերակներ) առկա լինելու հարցը, որի վերաբերյալ առկա է կարգավորում առ այն, որ նման պարագայում դեղի գնման տեխնիկական բնութագիրը կազմվում է այնպես, որ բացառվի որևէ գրանցված տարբերակի մրցույթին չմասնակցելու հավանականությունը, և ապահովվի մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանը (ռեեստր):

Նման կարգավորումների պարագայում պատվիրատուի կողմից առավել մանրամասն և կարիքների համար առավել հստակ չափորոշիչներով տեխնիկական բնութագիր կազմելու հնարավորությունը բացակայում է: Արդյունքում՝ դեղերի գնման տեխնիկական բնութագրերի կազմման ժամանակ դեղի անվանումը նշելիս, գրվում են դեղի միջազգային համընդհանուր (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումները սահմանված չափորոշիչներին համապատասխան: Վերջինս հնարավորություն է տալիս մրցույթի մասնակից դառնալ ՀՀ-ում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր) գրանցված մի շարք դեղորայքի ներկայացուցչական կազմակերպությունների, որոնց ներկայացրած դեղամիջոցները պատվիրատուի համար նախընտրելի չեն՝ հաշվի առնելով դրանց կողմնակի կամ այլ ազդեցությունը: Գործնականում, երբ երկու առաջարկվող դեղերը համապատասխանում են տեխնիկական բնութագրերին որակի սահմանված չափանիշներին, նախապատվությունը տրվում է ցածր գին ունեցող դեղերին, որի արդյունքում կարող է գնվել ավելի ցածր արդյունավետություն, ավելի շատ կողմնակի ազդեցություն ունեցող դեղ:

Նույն կարգավորման առարկա ունեցող իրավական ակտերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ խնդրի կարգավորման տարբեր մեխանիզմներ և կառուցակարգեր են նախատեսված միջազգային մի շարք փաստաթղթերով: Այսպես, Առևտրի համաշխարհային կազմակերպության վերանայված համաձայնագրի XV հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ պատվիրատուն պայմանագիր է կնքում այն մատակարարի հետ, որը, ըստ նրա, կարող է կատարել պայմանագրի պայմանները և որը բացառապես ծանուցումներում և գնման գործընթացի փաստաթղթերում սահմանված գնահատման չափանիշների հիման վրա ներկայացրել է՝ առավել շահավետ հայտը *կամ նվազագույն գինը, այն դեպքում, երբ գինը միակ չափանիշն է*: Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝

այն դեպքում, երբ պատվիրատուն ստանում է հայտ, *որում առաջարկվող ապրանքի գինը, նկատի ունենալով ներկայացված մյուս հայտերում առաջարկված գները, ընդունվածից խիստ ցածր է*, ապա վերջինս կարող է ճշտել, թե արդյոք տվյալ հայտը համապատասխանում է մասնակցության պայմաններին և արդյոք տվյալ մասնակիցը ի վիճակի է կատարել պայմանագրի պայմանները:

Եվրոպական խորհրդարանի և խորհրդի 2014/24/EC դիրեկտիվի մեջ ևս անդրադարձ է կատարվել քննարկվող հարցին: Մասնավորապես, դիրեկտիվի 67-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ չխախտելով ներպետական օրենսդրությունը, կանոնակարգերը կամ վարչական կարգավորումները, մատակարարվող ապրանքների գինը կամ ծառայությունների համար վարձատրությունը որոշելիս՝ պատվիրատուն պետք է դիտարկի *տնտեսապես ամենաշահավետ* հայտով հանրային պայմանագրի կնքումը: Միաժամանակ, նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ պատվիրատուի տեսանկյունից տնտեսապես ամենաշահավետ առաջարկը պետք է որոշվի՝ հիմք ընդունելով գինը կամ արժեքը, կիրառելով ծախս-արդյունավետություն մոտեցումը (cost-effectiveness approach), ինչպես օրինակ՝ 68-րդ հոդվածի իմաստով՝ կյանքի ցիկլի արժեքը, և նման առաջարկը կարող է հիմնվել գնի և որակի լավագույն համադրության վրա, ինչը, կախված տվյալ պայմանագրի առարկայից, պետք է գնահատվի որակական, բնապահպանական և/կամ սոցիալական հանգամանքներով պայմանավորված չափանիշներով: Արժեքի տարրը կարող է նաև ֆիքսված գնի կամ արժեքի տեսք ունենալ, որի հիման վրա մասնակիցները կմրցակցեն միայն որակի չափանիշի շուրջ: Անդամ պետությունները կարող են պահանջ սահմանել, որ պատվիրատուն չօգտագործի գինը՝ որպես միակ չափանիշ կամ կարող են սահմանափակել միայն այդ չափանիշի կիրառումը որոշակի խմբերի պատվիրատուների կամ առանձին տեսակի պայմանագրերի համար: Այսինքն՝ ըստ միջազգային փաստաթղթերով ամրագրված դրույթների՝ հնարավորություն է տրվում գնի հետ համադրման արդյունքում առավել արդյունավետ կերպով ձեռք բերել որակյալ ապրանք:

Նախկինում ՀՀ առողջապահության նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ հարցի լուծման նպատակով՝ դեռևս 2015 թվականի սեպտեմբերին ՀՀ կառավարություն էր ներկայացվել «Առողջապահական ծառայությունների ոչ մրցակցային եղանակով գնումների իրականացման չափորոշիչները և առողջապահական ծառայությունների մրցակցային եղանակով գնումների իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Սակայն պետք է նշել, որ 2018 թվականի մարտ ամսի դրությամբ այդ որոշումը դեռևս ընդունված չէ, իսկ վերը նշված խնդիրը շարունակում է արդիական մնալ:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է՝

1. փոփոխել ՀՀ կառավարության 2013 թվականի մայիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները հաստատելու մասին» N 502-Ն որոշումը՝ սահմանելով ՀՀ պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման առավել արդյունավետ չափորոշիչներ.

2. ելնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված կարգավորումից՝ ապրանքի ձեռք բերման դեպքում առաջնորդվել վերջինիս ոչ միայն նվազագույն գնի, այլ գնի և ոչ գնային այլ չափանիշների համադրության մեթոդով:

3. Ապրանքի մաքսազերծումը գործարքի գնի մեթոդով

2017 թվականի ընթացքում ևս շարունակվել են արձանագրվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի մաքսային մարմնի կողմից ապրանքի գործարքի գնի մեթոդով մաքսազերծումն անհիմն մերժելու և դրա արդյունքում առաջացած մի շարք խնդիրներ:

Գործնականում հաճախ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի մաքսային մարմնի կողմից տրանսպորտային միջոցների՝ ձեռքբերման գնով մաքսազերծումը մերժվում է, և որպես քննարկվող մեթոդի կիրառմամբ մաքսազերծման մերժման պատճառաբանություն՝ նշվում է փաստաթղթերում առկա ոչ էական, շտկելի թերությունների առկայությունը, ինչպես նաև ներկայացված փաստաթղթերի արժանահավատության վերաբերյալ մաքսային մարմնի ունեցած կասկածները:

Այս դեպքում հարկ է անդրադարձ կատարել «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքին, որի 86-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ տարածաշրջանային, մասնագիտացված կամ սահմանային մաքսային մարմինները մաքսային արժեքը գործարքի գնի մեթոդով հաշվարկելու մերժման վերաբերյալ մինչև վերջնական որոշում ընդունելը, բայց ոչ ուշ, քան նշված օրենքի 78-րդ հոդվածով սահմանված փաստաթղթերը հայտարարատուի կողմից ներկայացվելուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, հայտարարատուին գրավոր ներկայացնում են գործարքի գնի մեթոդով հաշվարկված մաքսային արժեքի ընդունմանը խանգարող հանգամանքները և առաջարկում են հայտարարատուին հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ներկայացնել լրացուցիչ փաստաթղթեր և (կամ) տեղեկություններ, որոնց քննության արդյունքում, նշյալ փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները ներկայացվելուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, կայացնում են որոշում մաքսային արժեքը գործարքի գնի մեթոդով հաշվարկելը մերժելու վերաբերյալ կամ ընդունում են հայտարարատուի ներկայացրած մաքսային արժեքը:

Պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված տվյալների համաձայն՝ 2017 թվականի ընթացքում գործարքի գնի մեթոդը կիրառվել է մաքսային ձևակերպումների 66.13% դեպքերում, 2-րդ մեթոդը կիրառվել է մաքսային ձևակերպումների 3.95% դեպքերում, 3-րդ մեթոդը կիրառվել է 11.71% դեպքերում և 4-րդ մեթոդը 18.21% դեպքերում: Ինչ վերաբերվում է ապրանքի մաքսային արժեքը որոշելիս գործարքի գնի մեթոդը չկիրառելուն, ապա դրա վերաբերյալ ստացվել է 7 բողոք, որոնցից 2-ը բավարարվել են, 2-ը բավարարվել են մասնակի, իսկ 3-ը մերժվել են:

Քննարկվող խնդրի շրջանակներում հիշատակման է արժանի նաև 2008 թվականի հունվարի 25-ին ընդունված «Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու մասին» համաձայնագիրը, համաձայն որի՝ ներմուծվող ապրանքների մաքսային արժեքի որոշման համար առավելագույն հնարավոր չափով հիմք պետք է ծառայի այդ ապրանքների հետ կատարվող գործարքի արժեքը,

այսինքն՝ ներմուծվող ապրանքների հետ կատարվող գործարքի արժեքի մեթոդը: Այն դեպքում, եթե ներմուծվող ապրանքների արժեքն այդ ապրանքների հետ կատարվող գործարքի գնի հիման վրա հնարավոր չէ որոշել, ապա ապրանքների մաքսային արժեքը որոշվում է հիշյալ համաձայնագրով սահմանված մյուս մեթոդներին համապատասխան՝ ըստ հերթականության:

Ավելին, ՀՀ սահմանադրական դատարանը 2014 թվականի թիվ ՍԴՈ-1176 որոշմամբ արտահայտել է հստակ դիրքորոշում այն մասին, որ մաքսազերծման ժամանակ մաքսային արժեքի որոշման գործարքի գնի մեթոդն ընդհանուր կանոն է, իսկ մաքսային արժեքի որոշման այլ մեթոդները՝ բացառություն ընդհանուր կանոնից, մինչդեռ, գործնականում հակառակ պատկերն է:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը կարող ենք նշել, որ հարցը շարունակում է դեռևս մնալ խնդրահարույց:

Ուստի, ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է ոլորտը կարգավորող օրենսդրության կատարելագործման և գործնականում դրա պատշաճ կիրարկումն ապահովող քայլերի ձեռնարկման միջոցով ստեղծել գործուն մեխանիզմներ, որպեսզի ապահովվի անհիմն պատճառներով գործարքի գնի մեթոդով մաքսազերծման իրականացման մերժման բացառումը:

4. Ֆիզիկական անձանցից ԱԱՀ գանձելը

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ուղղված դիմումներով 2017 թվականին նույնպես բարձրաձայնվել է հարկային մարմնի կողմից ֆիզիկական անձանցից ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարում կատարելու պահանջի վերաբերյալ խնդիրը, ինչը շարունակում է արդիական մնալ նաև 2017 թվականին:

Քննարկվող խնդրի արդյունքում ուսումնասիրվել է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը: Գործնականում վերոնշյալ դրույթի տարատեսակ մեկնաբանման, ոչ միատեսակ կիրառության արդյունքում խնդիրներ են առաջանում անձանց սեփականության իրավունքի իրացման տեսանկյունից, ինչի կապակցությամբ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են բողոքներ: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ օրենսդրական ձևակերպումների անորոշությունը և գործնականում տրված մեկնաբանությունը վիճահարույց է մարդու հիմնական իրավունքը հանդիսացող սեփականության իրավունքի տեսանկյունից:

Այսպես, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի (մինչև 01.01.2018թ. գործող խմբագրությամբ) 6-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետով սահմանվում է, որ մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի թվով անգամ անձի սեփականությունը կամ ընդհանուր սեփականությունը հանդիսացող նույն տեսակի հետևյալ գույքի՝ բնակարանի, առանձնատան (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), անձնական օգտագործման ավտոմեքենայի, գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերի, ավտոտնակի՝ որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց օտարման դեպքերում ապրանքի մատակարարում է համարվում այդ ժամանակահատվածում երկրորդ և ավելի թվով նույն տեսակի գույքի օտարումը, եթե օտարումը կատարվում է տվյալ գույքի ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում: Վերոնշյալ

կարգավորմանը համապատասխան՝ օտարման գործարքն ապրանքի մատակարարում համարելու առումով օտարմանը նախորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում ձեռքբերված լինելու պայմանը վերաբերում է երկրորդ և ավելի թվով անգամ օտարվող նույն տեսակի գույքին: Ընդ որում, օրենքի վերոնշյալ կարգավորման վերաբերյալ իր իրավական դիրքորոշումն է արտահայտել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը (ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 2016 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ ՎԴ/0811/05/15 որոշում):

Ըստ Հարկային մարմնի աշխատակիցների դիրքորոշման՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում «օտարումը կատարվում է տվյալ գույքի ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում» դրույթը գործում է այն պարագայում, երբ գործ ունենք երկրորդ և ավելի անգամ գույքի օտարման հետ: Նման մեկնաբանության և կիրառման արդյունքում ստեղծվում է մի իրավիճակ, երբ կախված օտարման գործարքների հաջորդականությունից միևնույն տեսակի երկու միավոր գույքի օտարումը, մի դեպքում դառնում է ԱԱՀ-ով հարկման օբյեկտ, իսկ մյուս դեպքում՝ ոչ:

Նշված հարցը պետք է ուսումնասիրության առարկա դարձվի «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի լույսի ներքո, որի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: Այսինքն՝ վերոնշյալ դրույթների համապարփակ վերլուծության արդյունքում եզրակացնում ենք, որ ապրանքների մատակարարում պետք է համարվի և ԱԱՀ-ով հարկվի միայն մեկ տարվա ընթացքում գույքի երկու և ավելի միավորների այնպիսի հատուցելի օտարումը, որն իրականացվել է գույքի բոլոր միավորների ձեռքբերմանը հաջորդող մեկ տարվա ժամանակահատվածում:

Այս դեպքում տեղին է հիշատակել թիվ ՎԴ/4109/05/14 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 2-ի որոշումը, որը գնահատելի կարևորություն ունի նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար: Վճռաբեկ դատարանը վերը նշված վճռում ներկայացրել է դիրքորոշում առ այն, որ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված գործարքը համարվում է ապրանքի մատակարարում, հետևաբար նաև՝ ԱԱՀ-ով հարկվող գործարք՝ մի շարք պայմանների միաժամանակյա առկայության դեպքում: Վճռաբեկ դատարանը նշել է նաև, որ եթե գործարքը բավարարում է նշված բոլոր պայմաններին, ապա այն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով համարվում է ապրանքի մատակարարում, հետևաբար նաև՝ ԱԱՀ-ով հարկվող գործարք, իսկ եթե նշված պայմաններից որևէ մեկը բացակայում է, ապա գործարքը չի կարող համարվել ապրանքի մատակարարում: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդրի կողմից որդեգրած մոտեցման համաձայն՝ ապրանքի մատակարարում համարվում են մեկ օրացուցային տարվա ընթացքում նույն տեսակի գույքի օտարման երկրորդ և հետագա գործարքները, եթե օտարվող գույքը ձեռք է բերվել օտարմանը նախորդող մեկ տարվա ընթացքում:

Վճռաբեկ դատարանը քննարկման առարկա է դարձրել մի շարք հնարավոր իրավիճակներ: Օրինակ՝ եթե անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը մեկ օրացուցային տարվա ընթացքում օտարել է մի դեպքում այն գույքը, որը ձեռք է բերվել

օտարման պահին նախորդող մեկ տարուց ավելի վաղ, իսկ երկրորդ գործարքով օտարել է այն գույքը, որը ձեռք է բերել օտարմանը նախորդող մեկ տարվա ընթացքում, ապա, ըստ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի վերը նշված կարգավորման՝ օտարման երկրորդ գործարքը դիտարկվում է որպես ապրանքի մատակարարում, հետևաբար նաև՝ ԱԱՀ-ով հարկվող գործարք: Մյուս կողմից, սակայն, երբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը մեկ օրացուցային տարվա ընթացքում առաջին գործարքով օտարել է նախորդող մեկ տարվա ընթացքում ձեռք բերված գույք, իսկ երկրորդ գործարքով՝ այն գույքը, որը ձեռք է բերվել օտարման պահին նախորդող մեկ տարուց ավելի վաղ, ապա օրենսդրի որդեգրած մոտեցման համաձայն՝ այս իրավիճակում երկրորդ գործարքը չի կարող դիտարկվել որպես ապրանքի մատակարարում: Միևնույն ժամանակ, նշենք, որ քննարկվող իրավակարգի համաձայն՝ ապրանքի մատակարարում է համարվում երկրորդ և ավելի նույն տեսակի գույքի օտարումը, նման պայմաններում առաջին գործարքը նույնպես չի կարող դիտարկվել որպես ապրանքի մատակարարում:

Վճռաբեկ դատարանի համար նման եզրահանգում ներկայացնելու հիմք է հանդիսացել «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերությունում առկա «եթե օտարումը կատարվում է տվյալ գույքի ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում» արտահայտության տառացի մեկնաբանությունից, որում օրենսդրի կողմից օգտագործված «տվյալ գույքի» արտահայտության շրջանակներում նկատի է ունեցվել ոչ թե նույն օրացուցային տարվա ընթացքում նախկինում օտարված, այլ՝ քննարկվող գործարքով օտարվող գույքը:

Այսպիսով, ելնելով վերոգրյալից՝ հարկ է նշել, որ անկախ այն հանգամանքից, թե երբ է ձեռք բերվել տվյալ օրացուցային տարում առաջին օտարված գույքը, մեկ օրացուցային տարվա ընթացքում երկրորդ և հաջորդող նույն տեսակի գույքի օտարման գործարքն ապրանքի մատակարարում որակելու համար այդ գույքի ձեռքբերման և օտարման գործարքների միջև ընկած ժամանակահատվածը չպետք է գերազանցի մեկ տարին:

Խնդրի վերաբերյալ պետք է նշել, որ 2018 թվականի հունվարի 1-ից «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքը ուժը կորցրած է ճանաչվել: ՀՀ հարկային օրենսգրքով ավելացված արժեքի հարկով հարկման առումով նման կարգավորումներ չեն նախատեսվել: Ֆիզիկական անձանց ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարման դեպքում եկամտային հարկով հարկման հարաբերությունները կարգավորվել են ՀՀ հարկային օրենսգրքի 7-րդ բաժնով: Մասնավորապես՝ օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարում է համարվում անձնական, ընտանեկան կամ տնային օգտագործման (բնակարան, առանձնատուն (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց), գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հող, ավտոտնակ, ավտոմեքենա) նույն տեսակի գույքի՝ տարվա ընթացքում երկրորդ և ավելի թվով օտարումը, եթե դրանց և՛ ձեռքբերումը, և՛ օտարումը տեղի է ունեցել մեկ տարվա ընթացքում:

Պետք է նշել, որ չնայած այն հանգամանքին, որ ՀՀ հարկային օրենսգրքի 2018 թվականին ուժի մեջ մտնելով ներկայացված խնդիրը ստացել է լուծում, սակայն ողջ 2017 թվականի ընթացքում համապատասխան դրույթը գործել է, այդպիսով՝ տնտեսվարող

սուբյեկտների համար գործնականում առաջացնելով մի շարք խնդիրներ:

Նոր դրույթի կիրառության արդյունավետության նպատակով անհրաժեշտ է՝

1. իրազեկել հասարակությանը նոր կարգավորումների բնույթի և դրանցում առկա փոփոխությունների վերաբերյալ.

2. իրազեկել այդ դրույթները կիրառողներին՝ դրանց կիրառման արդյունքում սխալ և տարակերպ մեկնաբանությունից խուսափելու նպատակով:

ԲԱԺԻՆ 4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումն ու վերականգնումը պետության առջև դրված նպատակներից մեկն է: Սահմանադրության 12-րդ հոդվածով սահմանվում է շրջակա միջավայրի պահպանության մասին հոգ տանելու յուրաքանչյուրի պարտականությունը: Նույն հոդվածով նախատեսվում է նաև պետության կողմից շրջակա միջավայրի պահպանության, բարելավման և վերականգնման, բնական պաշարների ողջամիտ օգտագործման խթանումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև:

Սահմանադրության վերը նշված հոդվածով ամրագրված նպատակներին հասնելու համար, թեև ՀՀ կողմից վավերացվել են ոլորտը կարգավորող մի շարք միջազգային պայմանագրեր, ընդունվել են մի շարք օրենսդրական ակտեր, սակայն դեռևս ակնառու են խնդիրներ, որոնք 2017 թվականի ընթացքում լուծում չեն ստացել :

1. Քիմիական նյութերի և թափոնների անվտանգ հեռացումն ու ոչնչացումը

Մթնոլորտային օդի, ընդերքի, ջրերի և հողերի աղտոտման պատճառներից մեկը թափոններն են, որոնց վտանգների վերաբերյալ բազմիցս բարձրաձայնվել է Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցներով և հաղորդմամբ: Շրջակա միջավայրի համար հատկապես բացասական է պոչամբարներում պարունակվող ծանր մետաղների, տոքսիկ նյութերի ներթափանցման և ջրամբարներում, գետերի հուներում դրանց կուտակումների ազդեցությունը: Բացի այդ, թափոնների առավելագույն օգտագործման, դրանց գոյացման նվազեցման և էկոլոգիապես անվտանգ հեռացման (ոչնչացման) հարցը ևս շարունակում է մնալ արդիական և չլուծված:

Ոլորտում խնդիրների լուծման համար խոչընդոտ է նաև այն, որ շրջակա միջավայրի պահպանության հարցում իրավասությունները բաշխված են տարբեր գերատեսչությունների միջև, ինչը նվազեցնում է իրականացվող քաղաքականության արդյունավետությունը: Միևնույն ժամանակ, առկա չէ միասնական մշտադիտարկում իրականացնող մարմին, որը հնարավորություն կունենա ներկայացնելու ոլորտում առկա խնդիրների և դրության միասնական պատկերը:

Այսպես, ըստ ՀՀ բնապահպանության նախարարության՝ վտանգավոր թափոնների ոչնչացման կամ հեռացման գործունեությունն իրականացվում է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» թիվ 121-Ն որոշմամբ սահմանված կարգով լիցենզավորված կազմակերպությունների կողմից: Ավելին, նույն կարգի համաձայն՝ լիցենզիայի պահանջների և պայմանների կատարման նկատմամբ վերահսկողությունն օրենքով սահմանված կարգով իրականացնում են ՀՀ բնապահպանության և առողջապահության նախարարությունների համապատասխան տեսչական մարմինները:

Ոլորտում առկա խնդիրների ուղղությամբ ձեռնարկվել են մի շարք քայլեր: Հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 27-ի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին ստեղծելու, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 8-ի թիվ 1237-Ն, 2008 թվականի մայիսի 15-ի թիվ 654-Ն, 2004 թվականի ապրիլի 14-ի թիվ 649-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի թիվ 1149-Ն և 2008 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 1577-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 445-Ն որոշման հիման վրա ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչությունը և ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչությունը 2017 թվականին լուծարվել են, որոնց փոխարեն ստեղծվել է ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը:

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկությունների՝ որպես ՀՀ կառավարության 2018 թվականի գերակա խնդիր, նախատեսվում է մինչև տարվա առաջին կիսամյակի ավարտը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել «Շրջակա միջավայրի պահպանության ոլորտի միասնական կառավարման համակարգի ներդրման հայեցակարգը» և մինչև տարեվերջ ձեռնարկել քայլեր ոլորտի ինստիտուցիոնալ միասնական համակարգի ձևավորման ուղղությամբ:

Ավելին, ՀՀ բնապահպանության նախարարության համակարգում գործող 4 պետական ոչ առևտրային կազմակերպությունների միաձուլման արդյունքում ստեղծվել է «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ը, որն, ի թիվս այլ գործառույթների, ավարտին է հասցրել նաև մակերևութային ջրերի և մթնոլորտային օդի մոնիթորինգի արխիվային տվյալների (1977-ից մինչև 2005 թվականներ) թվայնացման գործընթացը:

Միևնույն ժամանակ, ի կատարումն «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 483-Ն որոշման հավելված 1-ով սահմանված՝ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագրի՝ բնապահպանության նախարարության կողմից իրականացվում են մի շարք միջոցառումներ: Մասնավորապես, իրականացվում են «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի փոփոխությունների և լրացումների իրականացման աշխատանքներ, որի շրջանակներում նախագծային փոփոխությունները համապատասխանեցվում են Օրհուսի կոնվենցիայի համապատասխան կոմիտեի՝ Հայաստանի վերաբերյալ կայացրած որոշումներին, մասնավորապես, շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության ազատության,

որոշումների ընդունմանը՝ հանրության արդյունավետ մասնակցության և դատական մատչելիության հարցերում:

Միաժամանակ, հաշվի առնելով հարցի կարևորությունը՝ այն նաև ընդգրկվել է մի շարք միջազգային փաստաթղթերում: Այսպես, վտանգավոր քիմիկատների ու նյութերի արտազատման վերացումը, դրանց արտահոսքերի նվազեցումը ու կիսով չափ չմաքրվող կեղտաջրերի համամասնության կրճատումը 2016 թվականի հունվարի 1-ից պաշտոնապես ուժի մեջ մտած՝ ՄԱԿ-ի «Կայուն զարգացման 2030 օրակարգ»-ում ներառված կայուն զարգացման նպատակներից է: Հարկ է նշել նաև, որ ժամկետանց թունաքիմիկատների ոչնչացման հիմնախնդրին վերջնական լուծում տալու հարցերը արտացոլված են ՄԱԿ-ի «ՌԻՈ+20» գագաթաժողովի հանձնարարականների իրականացման ռազմավարության՝ «Մինչև 2030 թվականը կայուն զարգացման օրակարգ» համաշխարհային ծրագրի հայեցակարգում ևս: Վերջինում ներկայացվել են նաև այնպիսի հիմնախնդիրներ, որոնց լուծումը կնպաստի Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների էկոլոգիապես անվտանգ հեռացման համակարգի բարելավմանը[74]:

Հաշվի առնելով վերոգրյալը, անհրաժեշտ է ընդգծել, որ ոլորտի խնդիրների համակարգային լուծման ուղղությամբ դեռևս պետք է իրականացնել շարունակական գործողություններ:

Ելնելով վերոգրյալից առաջարկվում է՝

1. ստեղծել շրջակա միջավայրի պահպանության ոլորտի միասնական կառավարման համակարգ՝ ստեղծելով նաև կենտրոնացված մշտադիտարկող անկախ մարմին.

2. օրենսդրական փոփոխությունների արդյունքում ստեղծել արտոնություններ տրամադրող ու տնտեսական խրախուսանքի այլ միջոցներ կիրառող ծրագիր (քաղաքականություն) այն տնտեսվարողների նկատմամբ, ովքեր կներդնեն, կկիրառեն կամ կիրականացնեն առավելագույն անթափոն միջոցներ, մեխանիզմներ կամ տեխնոլոգիաներ, կամ կընտրեն դրանց այն տեսակները, որոնք էկոլոգիապես անվտանգ են և շրջակա միջավայրի վրա ունեն նվազագույն վնասակար ազդեցություն:

2. Շրջակա միջավայրի հարցերի վերաբերյալ հանրային իրազեկման և հանրության պատշաճ ներգրավվածության ապահովումը

Մարդու իրավունքների պաշտպանների կողմից տարիներ շարունակ բարձրաձայնվում է շրջակա միջավայրի հարցերի վերաբերյալ հանրային իրազեկման և հանրության պատշաճ ներգրավվածության ապահովման խնդիր, որի մասին նշվել է Հայաստանի՝ Օրհուսի կոնվենցիայի պահանջներին համապատասխան լինելու վերաբերյալ կոմիտեի IV/9ա որոշմամբ: Մասնավորապես, արդարադատության արդյունավետ հասանելիության ապահովման ուղղությամբ պատշաճ միջոցներ ձեռնարկելով՝ որոշումների կայացման բոլոր մակարդակներում հանրային

[74] https://www.ecolur.org/files/uploads/pdf/RIO%2020%20hayecakarg/rio20hayetsakarg.pdf

մասնակցության ապահովման համար ընթացակարգերի մշակումը՝ որպես առաջարկ[75], և որոշումների կայացման տարբեր փուլերում թե՛ ներպետական, թե՛ կոնվենցիոն դրույթների պահպանմամբ հասարակության մասնակցության ապահովումը՝ որպես խնդիր, առանձնահատուկ կերպով բարձրաձայնվում է փորձագետների կողմից[76]: ՀՀ կառավարության 2014 թվականի զեկույցի[77] վերաբերյալ առաջընթացի գնահատման իր առաջին և երկրորդ եզրակացության մեջ կոմիտեն նշել է, որ կոնվենցիոն պարտավորությունների ուղղությամբ ձեռնարկված քայլերի հետ մեկտեղ, այնուամենայնիվ, Հայաստանը դեռևս չի կատարել կոմիտեի որոշման պահանջները[78]:

Խնդիրների լուծման ուղղությամբ ձեռնարկվել են մի շարք քայլեր: Այսպես, ըստ Բնապահպանության նախարարության տվյալների՝ Օրհուսի կոնվենցիայի կողմերի հանդիպման V/9ա որոշմամբ և դրանից բխող՝ Օրհուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեի կողմից շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում հանրության կողմից դիտողություններ և առաջարկություններ ներկայացնելու ժամկետները երկարաձգելու նպատակով ՀՀ կառավարության 2017 թվականի մարտի 9-ի թիվ 357-Ն որոշմամբ փոփոխություններ են կատարվել ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 1325-Ն որոշման մեջ, համաձայն որի՝ հանրության կողմից դիտողությունների և առաջարկությունների ներկայացման ժամկետը շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության փուլերում փոփոխվել են: Ավելին, որոշմամբ հանրությանն իրավունք է վերապահվել ներկայացնել ցանկացած դիտողություն և առաջարկություն, որը նրա կարծիքով առնչվում է հիմնադրույթային փաստաթղթին և նախատեսվող գործունեությանը: Վերացվել են նաև հանրության կողմից ներկայացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի առնելու օրենսդրական սահմանափակումները:

Վերոնշյալ գործողություններն ուղղված են եղել ի կատարումն «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 483-Ն որոշման հավելված 1-ով սահմանված՝ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագրի:

Միաժամանակ, նախկինում Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցներում եղել է անդրադարձ այն մասին, որ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության

---

[75] Հայաստանի՝ Կոնվենցիայի պահանջներին համապատասխան լինելու վերաբերյալ Կոմիտեի IV/9ա որոշում, կետ 4(բ), http://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/mop4/Documents/Excerpts/Decision_IV-9a_Compliance_by_Armenia_e.pdf, Հայաստանի համապատասխան լինելու վերաբերյալ Կոմիտեի V/9ա որոշում կետ 4, ենթակետ գ(i), http://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/mop5/Documents/Post_session_docs/Decision_excerpts_in_English/Decision_V_9a_on_compliance_by_Armenia.pdf

[76] Հայաստանի՝ Կոնվենցիայի պահանջներին համապատասխան լինելու վերաբերյալ Կոմիտեի IV/9ա որոշում, կետ 4, ենթակետ ա), http://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/mop4/Documents/Excerpts/Decision_IV-9a_Compliance_by_Armenia_e.pdf Հայաստանի համապատասխան լինելու վերաբերյալ Կոմիտեի V/9ա որոշում կետ 4, ենթակետ գ(i)) http://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/mop5/Documents/Post_session_docs/Decision_excerpts_in_English/Decision_V_9a_on_compliance_by_Armenia.pdf,Օրհուսի կոնվենցիայի (Կոնվենցիա) հոդված 3:

[77] Օրհուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեի՝ առաջընթացի գնահատման եզրակացություն http://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/compliance/MoP5decisions/V.9a_Armenia/frmParty9a_PROGRESS_REPORT_V9a_3_.pdf

[78] Հայաստանի կողմից Օրհուսի կոնվենցիայով ստանձնած պահանջների կատարման վերաբերյալ կոմիտեի V/9 որոշման իրականացման առաջընթացի կապակցությամբ առաջին դիտարկումը, http://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/mop5/Documents/Post_session_docs/Decision_excerpts_in_English/Decision_V_9a_on_compliance_by_Armenia.pdf

գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և Հայաստանի կողմից վավերացված Օրհուսի կոնվենցիայի պահանջների միջև առկա են բնապահպանական մի շարք խնդիրների լուծման համար խոչընդոտ հանդիսացող որոշակի հակասություններ, որոնք առկա են եղել նաև 2017 թվականին: Այսպես, մինչև 2014 թվականին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի ընդունումը ՀՀ-ում գործում էր 1995 թվականին ընդունված՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքը, որի վերաբերյալ Օրհուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեն իր կայացրած որոշումներում[79] ներկայացրել էր վերջինիս և կիրառվող պրակտիկայի անհամապատասխանությունը կոնվենցիային[80]:

1995 թվականի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ազդակիր համայնքի ղեկավարները և ձեռնարկողը ծանուցումը ստանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում, կազմակերպում են նախատեսվող գործունեության վերաբերյալ հասարակական լսումներ (որի արարողակարգը որոշում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը)՝ լրատվական միջոցներով տեղեկություններ հաղորդելով նախատեսվող գործունեության, լսումների տեղի և ժամկետի մասին[81]: Նույն օրենքի համաձայն՝ լիազորված մարմինը, ազդակիր համայնքի ղեկավարները և ձեռնարկողը 30 օրացուցային օրվա ընթացքում կազմակերպում ու ապահովում են հասարակայնության կողմից փաստաթղթերի ուսումնասիրությունը և լսումները[82]: 2014 թվականին կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում հանրության ծանուցումն իրականացնում է լիազոր մարմինը՝ ձեռնարկողի ներկայացրած հայտի, հաշվետվությունների և փորձաքննական եզրակացության նախագծի մասին լսումներից առնվազն 7 աշխատանքային օր առաջ[83]: Ինչպես տեսնում ենք, նոր օրենքում վերը նշված 30 օրը դարձել է 7 օր, և կարծիք հայտնելու համար ժամկետ ընդհանրապես չի սահմանվել: Մինչդեռ, նման ժամկետները Օրհուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեն խնդրահարույց էր համարել դեռևս 1995 թվականի օրենքի համապատասխան կարգավորումներում:

Ըստ Բնապահպանության նախարարության հայտնած տվյալների՝ 2017 թվականին մշակվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որտեղ քաղաքացիական հասարակության հետ քննարկելուց հետո հաշվի կառնվեն նաև V/9ա որոշմամբ նախատեսված նաև այլ հարցերը, մասնավորապես՝ Օրենքի 26-րդ հոդվածը կներկայացվի նոր խմբագրմամբ՝ կարգավորումները համապատասխանեցնելով Օրհուսի կոնվենցիայի դրույթներին և սահմանելով հանրությանը ծանուցելու առավել երկար ժամկետներ, ինչպես նաև կկարգավորվեն այլ հարցեր:

Սակայն 2017 թվականի ընթացքում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքում որևէ փոփոխություն կամ լրացում

[79] http://www.unece.org/env/pp/ccimplementation.html
[80] http://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/documents/cep43e.pdf
[81] «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենք (1995 թվական), հոդված 6:
[82] «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենք (1995 թվական), հոդված 8:
[83] «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014 թվական), հոդված 26, մաս 2, կետ 1:

չի իրականացվել, ինչի արդյունքում դեռևս շարունակում են խնդրահարույց մնալ սույն բաժնում ներկայացված խնդիրները:

Հայաստանի կողմից Օրհուսի կոնվենցիայի դրույթների ներդրման ու իրականացման կապակցությամբ ոլորտային մեծածավալ խնդիրների պատճառով և դրանց նկատմամբ առանձնահատուկ վերահսկողություն իրականացնելու նպատակով Օրհուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեն Հայաստանին վերցրել է ամենամյա հսկողության տակ:

Միևնույն ժամանակ հարկ է նշել նաև այն մասին, որ ՀՀ-ում առկա չէ Օրհուսի կոնվենցիայով նախատեսված հատուկ անկախ մարմին: Մինչդեռ, Օրհուսի կոնվենցիայի 4-րդ հոդվածով նախատեսվում է, որ պետական մարմինների կողմից, ի պատասխան շրջակա միջավայրին վերաբերող տեղեկատվության տրամադրման հարցման, հասարակայնությանը տրամադրվի այդպիսի տեղեկատվություն: Միաժամանակ, նույն կոնվենցիայի 9-րդ հոդվածի համաձայն՝ վավերացրած պետությունները պարտավորվում են դատարանից բացի ստեղծել նաև օրենքով նախատեսված այլ մարմին, որը կքննի/կվերանայի տեղեկատվության տրամադրման վերաբերյալ պետական մարմինների կողմից կայացված որոշումները: Ընդ որում, կոնվենցիան նախատեսում է նաև, որ այդ վերանայումը կատարվի վարձատրություն չպահանջող կամ նվազագույն վարձատրություն պահանջող արագ ընթացակարգերի միջոցով: Չնայած վերոգրյալ չափանիշներին, ինչպես նշվեց Հայաստանում առ այսօր նման մարմին ստեղծված չէ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ի կատարումն Կոմիտեի հանձնարարականների՝ անհրաժեշտ է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի ՀՀ օրենքում կատարել փոփոխություններ՝ վերջինիս 26-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի կարգավորումները համապատասխանեցնելով Օրհուսի կոնվենցիային և սահմանելով հանրային լսումների վերաբերյալ հանրությանը ծանուցելու առավել երկար ժամկետներ:

3. Ստուգումները «Թեղուտ» ՓԲԸ-ում

«Թեղուտ» ՓԲԸ-ում բնապահպանական ստուգումների իրականացման հարցը և դրա հետևանքով առաջացած խնդիրները մշտապես տեղ են գտել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցներում և հաղորդմամբ: Թեղուտի հանքավայրի շահագործման արդյունքում առաջացած խնդիրներին 2017 թվականի ընթացքում բազմիցս անդրադարձել են նաև բնապահպանները[84]:

Հանքաքարի արդյունահանումն ու հարստացումը ուղեկցվում է տարբեր տոքսիկ քիմիական նյութերով և ծանր մետաղներով աշխատանքային և շրջակա միջավայրի աղտոտմամբ, ինչն իր բացասական ազդեցությունն է թողնում շրջակա միջավայրի վրա: Այդ ամենի հետևանքով խաթարվում է նաև բնակչության առողջության պահպանումը, մասնավորապես՝ օդ-ջուր-հող-գյուղմթերք համակարգով ծանր մետաղների, այդ թվում՝ տոքսիկության առաջին դասի տարրերի, սնման շղթայի տարբեր օղակներ

[84] http://ecolur.org/hy/news/teghout/locals-beating-an-alarm-signal-shnogh-river-and-areas-irrigated-with-its-water-polluted-because-of-teghout-tailing-dump-leaks-photos/9451/ ,

ներթափանցման արդյունքում առաջ են գալիս էկոլոգիական և բնակչության առողջության հետ կապված ռիսկեր[85]:

Թեև բնապահպանության նախարարությունից տարիներ շարունակ ներկայացվում են տվյալներ առ այն, որ «Թեղուտ» ՓԲԸ-ն ընդգրկված է եղել ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության ստուգման ենթակա կազմակերպությունների՝ 2013, 2014 և 2015, ինչպես նաև 2017 թվականների ցանկերում, սակայն ինչպես այդ տարիների, այդպես էլ 2016 և 2017 թվականների ընթացքում տեսչական ստուգումներ չեն իրականացվել:

Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով բնապահպանների կողմից Թեղուտի պոչամբարի մասին պարբերաբար հրապարակվող խնդիրները՝ առաջարկվում է ապահովել «Թեղուտ» ՓԲԸ-ում անհրաժեշտ ստուգումների իրականացումը:

4. Փոքր ՀԷԿ-երի կառուցմանը զուգահեռ՝ ջրային ռեսուրսների գերօգտագործման, ինչպես նաև գետային էկոհամակարգերի հետ կապված խնդիրներ

Ջրային ռեսուրսների գերօգտագործման, գետային էկոհամակարգերի հետ կապված խնդիրները 2017 թվականին շարունակել են պահպանել իրենց արդիականությունը: Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցներում և հաղորդմամբ, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից բազմիցս բարձրաձայնվել են ՓՀԷԿ-երի շահագործման ժամանակ տեղ գտած խախտումների մասին, որոնք իրենց բացասական ազդեցությունն են թողնում շրջակա միջավայրի վրա: ՓՀԷԿ-ի շահագործման ընթացքում պատշաճ էկոլոգիական թողքի ապահովման բացակայությունը դասվում է այդ շարքին, ինչի արդյունքում առաջանում են ջրային ռեսուրսի էկոլոգիական հավասարակշռության և ինքնավերականգնման խաթարումներ[86]: Օրինակ, 2017 թվականին բարձրաձայնվել է Եղեգիս գետի վերաբերյալ խնդիր այն մասին, որ վերջինս, լինելով Հայաստանի երբեմնի վարարուն գետերից մեկը, սպառնում է վերածվել ճգնաժամային գետի՝ խիստ սակավաջրության պատճառով: Եղեգիսը, որի ջրային պաշարները կազմում էին 8 խմ/վ, այսօր չի գերազանցում 1,0 խմ/վ[87]: Միևնույն ժամանակ, «ecolur.org» բնապահպանական կայքում հրապարկվող տարբեր փոքր ՀԷԿ-երում իրականացված մշտադիտարկումների արդյունքներով ևս բարձրաձայնվում են ոլորտում առկա խնդիրների մասին[88]:

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ստացված տեղեկությունների համաձայն՝ 2017 թվականի ընթացքում սույն ոլորտում առկա վիճակի բարելավման և խնդիրների լուծման համար իրականացվել են որոշակի քայլեր: Այսպես, 2017 թվականի ընթացքում ՀՀ բնապահպանության նախարարության կողմից մշակվել է «ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի թիվ 927-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, համաձայն որի՝ բնապահպանական թողքի գնահատման ժամանակ հաշվի է առնվելու գետերի սնուցման և սեզոնային առանձնահատկությունները: Մշակվել է նաև «Փոքր

[85] https://www.ecolur.org/files/uploads/pdf/RIO%2020%20hayecakarg/rio20hayetsakarg.pdf
[86] ՀՀ ջրային օրենսգիրք, հոդված 1. Էկոլոգիական թողք՝ ջրի նվազագույն ելք, որն ապահովում է ջրային ռեսուրսի էկոլոգիական հավասարակշռությունը և ինքնավերականգնումը:
[87] http://www.aravot.am/2018/01/20/932288/
[88] http://ecolur.org/hy/news/energy/

հիդրոէլեկտրակայանների կառուցման և շահագործման համար շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման չափորոշիչներ հաստատելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծ: Միաժամանակ, Նախարարությունից հայտնել են, որ ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «ՀՀ ջրային օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որով ամրագրվել են ՓՀԷԿ-երի կառուցման և շահագործման համար արգելված գոտիները և ելնելով բնապահպանական առանձնահատկություններից՝ նոր կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայաններին տրամադրվող ջրօգտագործման թույլտվությունների հայտերի մերժման հիմքերը:

Օրենքի ընդունումից հետո նախատեսվում է մշակել նաև «Փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման և շահագործման համար արգելված գետերի ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

Գնահատելով Փոքր ՀԷԿ-երի կառուցմանը զուգահեռ՝ ջրային ռեսուրսների գերօգտագործման, ինչպես նաև գետային էկոհամակարգերի հետ կապված խնդիրների լուծմանն ուղղված վերը նշված օրենսդրական նախաձեռնությունները՝ այնուամենայնիվ, դրանք 2017 թվականի ընթացքում դրանք դեռևս գտնվել են մշակման կամ քննարկման փուլում, ուստի առկա խնդիրները շարունակում են մնալ չլուծված:

Հաշվի առնելով վերոգրյալն՝ առաջարկվում է ուժեղացնել փոքր ՀԷԿ-երի շահագործման նկատմամբ վերահսկողությունը, որպեսզի կանխվեն և վերացվեն դրանց շահագործման արդյունքում առաջացող ջրային ռեսուրսների գերօգտագործումն ու էկոհամակարգերի հետ կապված խնդիրները:

ԲԱԺԻՆ 5. ՊԱՏՇԱՃ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածն արձանագրում է, որ յուրաքանչյուր ոք ունի վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունք: Վարչական վարույթի ընթացքում յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող բոլոր փաստաթղթերին ծանոթանալու իրավունք, բացառությամբ օրենքով պահպանվող գաղտնիքների: Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են մինչև անձի համար միջամտող անհատական ակտն ընդունելը լսել նրան, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Չնայած նշված ամրագրմանը և օրենսդրական մի շարք երաշխիքների՝ 2017 թվականի ընթացքում շարունակվել են արձանագրվել պատշաճ վարչարարության իրավունքի սահմանափակման բազմաթիվ դեպքեր:

1. Վարչական ակտ կայացնելու մասին որոշումների՝ օրենքով սահմանված կարգով քաղաքացիներին չծանուցումը

2017 թվականի ընթացքում ստացված բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ վարչական ակտերի մասին վարույթի մասնակիցներին պատշաճ ծանուցման խնդիրը շարունակում է մնալ արդիական:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի (սույն բաժնում այսուհետ՝ Օրենք) 59-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը վարույթի մասնակիցներին վարչական ակտի ընդունման մասին իրազեկում է նույն հոդվածով նախատեսված հանձնման կամ հրապարակման եղանակով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գրավոր վարչական ակտն ընդունումից հետո՝ եռօրյա ժամկետում, պետք է հանձնվի վարույթի մասնակիցներին: Դա կարող է իրականացվել պատվիրված փոստով, այդ թվում՝ ստանալու մասին ծանուցմամբ, հասցեատիրոջը ստորագրությամբ առձեռն հանձնելու, ինչպես նաև օրենքով սահմանված այլ եղանակներով: ՀՀ սահմանադրական դատարանը 2015 թվականի մայիսի 26-ի թիվ ՍԴՈ-1210 որոշման մեջ արձանագրել է, որ պատշաճ ծանուցման ինստիտուտը, որը հնարավորություն է տալիս փաստացի իրազեկված լինել վարչական տուգանքների նշանակման մասին, կարևոր երաշխիք է անձի իրավունքների պաշտպանության հարցում, այդ թվում՝ ինչպես դատական, այնպես էլ պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության հարցերում:

ՀՀ վճռաբեկ դատարանը 2010 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ ՎԴ/5086/05/09 վարչական գործով կայացված որոշմամբ արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ վարչական մարմնի ծանուցման ձևը ընտրելու հայեցողությունը պետք է համապատասխանի «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին, որի համաձայն՝ հայեցողական լիազորություններ իրականացնելիս վարչական մարմինը պարտավոր է առաջնորդվել մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, վարչարարության իրականացման համաչափության և

կամայականության արգելքի սկզբունքով, ինչպես նաև հետապնդել օրենքով կանխորոշված այլ նպատակներ:

Ի հավելումն վերոգրյալի՝ Վճռաբեկ դատարանը 2010 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ ՎԴ/5086/05/09 վարչական գործով որոշմամբ արձանագրել է հետևյալը. «Վարչական մարմնի կողմից հարուցված վարչական վարույթի իրականացման մասին ծանուցումը վարույթին մասնակից անձին պետք է տրամադրվի այնպես, որ ողջամտորեն ապահովվի վերջինիս մասնակցությունը վարչական վարույթին»: Վճռաբեկ դատարանը նույն որոշմամբ արձանագրել է նաև, որ վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերի քննության մասին վարույթի մասնակիցներին ծանուցելը պետք է նպատակ հետապնդի ապահովել անձի լսելու հնարավորությունը, ինչը հնարավորություն կտա վերջինիս լիարժեք իրականացնել իր իրավունքների պաշտպանությունը: Հետևաբար, ընտրվող պատշաճ ծանուցման ձևը պետք է լինի այնպիսին, որ անձին հնարավորություն ընձեռի ապահովել վերոհիշյալ պահանջները:

Ծանուցման այս համակարգային խնդրին անդրադարձել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ արձանագրելով, որ անձը պարտավոր չէ վարչական ակտի ընդունման մասին տեղեկանալ պաշտոնական տեղեկագրից (էլեկտրոնային եղանակով), այլ պետք է անձամբ ծանուցվի իր նկատմամբ կայացված վարչական ակտի և հարուցված վարչական վարույթի մասին[89]:

Ըստ Պաշտպանին հասցեագրված դիմումի՝ ՀՀ ֆինանսների նախարարի հրամանով ՍՊ Ընկերության (սույն բաժնում այսուհետ՝ Ընկերություն) գործունեությունը կասեցվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաներ կիրառողների գործունեության կասեցման մասին» ՀՀ օրենքին համապատասխան: Կասեցման մասին որոշումը փոստով՝ պատվիրված նամակով, ուղարկվել է Ընկերության տնօրենին: Ըստ Ընկերության տնօրենի՝ ՀՀ ֆինանսների նախարարության տարածքային հարկային տեսչության (սույն բաժնում այսուհետ՝ ՏՀՏ) աշխատակիցները ներկայացել և փորձել են կասեցնել Ընկերության գործունեությունը՝ հաշվի չառնելով այն, որ ՏՀՏ աշխատակիցների ներկայանալու օրվա դրությամբ ինքը պատշաճ ծանուցված չի եղել Ընկերության գործունեության կասեցման որոշման մասին:

Դիմումում բարձրացված հարցի ուսումնասիրությունից պարզվել է, որ վարչական մարմինն Ընկերության գործունեությունը կասեցնելու օրվա դրությամբ չի ունեցել Ընկերության տնօրենին որոշման հանձնումը հավաստող որևէ ապացույց, ինչը նշանակում է, որ ՏՀՏ աշխատակիցները փորձել են կասեցնել Ընկերության գործունեությունը դեռևս ուժի մեջ չմտած վարչական ակտի հիման վրա: Նշված գործով Պաշտպանը կայացրել է «Մարդու իրավունքների և ազատությունների խախտման առկայության մասին» որոշում:

Արդյունքում, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից շրջանառության մեջ է դրվել և 2017 թվականի հուլիսի 24-ին ընդունվել «Հսկիչ-դրամարկղային մեքենաներ կիրառողների գործունեության կասեցման մասին որոշումների ծանուցման վերաբերյալ» ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի թիվ 236-Ա հրամանը, որով

[89] Տե՛ս Սերխիդեսը և Քրիստոֆորուն ընդդեմ Կիպրոսի (Serghides and Christoforou v. Cyprus) գործով 2002 թվականի նոյեմբերի 5-ի վճիռը, զանգատ թիվ 44730/98, կետ 69:

կարգավորվել է հսկիչ-դրամարկղային մեքենաներ կիրառողների գործունեության կասեցման մասին որոշումների ծանուցման հարցը:

Պաշտպանին հասցեագրված մեկ այլ դիմումով ներկայացվել է, որ անձն առանց փոխադրման կազմակերպման լիցենզիայի տրանսպորտային միջոցով փոխադրում իրականացնելու համար ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության ՀՀ տրանսպորտային տեսչության (սույն բաժնում այսուհետ՝ Տեսչություն) պետի հրամանով ենթարկվել է վարչական պատասխանատվության, որի մասին, սակայն, պատշաճ չի ծանուցվել: ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության պարզաբանումների համաձայն՝ անձին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին Տեսչության պետի որոշումն ուղարկվել է Տեսչությանը հայտնի՝ դիմումատուին պատկանող տրանսպորտային միջոցի հաշվառման հասցեով: Տեսչության պետի որոշումը վերադարձվել է «տեղափոխված» նշումով, որից հետո վարչական մարմինը որոշումը տեղադրել է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, որպիսի պայմաններում ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում չբողոքարկելու արդյունքում որոշումը դարձել է անբողոքարկելի:

Բողոքում բարձրացված հարցի ուսումնասիրությունից պարզվել է, որ Տեսչության պետի որոշումը «տեղափոխված» նշումով վերադարձվելուց հետո այլևս անձի հաշվառման հասցեով չուղարկելու արդյունքում իրականացվել է ոչ պատշաճ վարչարարություն, մասնավորապես՝ խախտվել է անձի պատշաճ ծանուցման իրավունքը: Նշված գործով Պաշտպանը կայացրել է «Մարդու իրավունքների և ազատությունների խախտման առկայության մասին» որոշում, որով ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությանն առաջարկվել է անվավեր ճանաչել Տեսչության պետի որոշումը՝ կիրառելով անվավերության հետևանքները: Նախարարության պարզաբանումների համաձայն՝ դիմողը Տեսչության աշխատակիցներին որևէ փաստաթուղթ չի ներկայացրել և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ 1251-Ն որոշման 2-րդ հավելվածի 5-րդ կետի պահանջներով, համաձայն որի՝ ֆիզիկական անձի անվամբ տրանսպորտային միջոցը հաշվառվում է ըստ նրա հաշվառման վայրի, իսկ դրա բացակայության դեպքում՝ ըստ ժամանակավոր հաշվառման վայրի, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ ըստ փաստացի բնակության վայրի, գործի քննության մասին ծանուցումը, այնուհետև որոշումը ուղարկվել են դիմողին պատկանող տրանսպորտային միջոցի հաշվառման հասցեով:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածի ուսումնասիրության և դրա՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված կարգով մեկնաբանության արդյունքում եզրահանգում ենք, որ նշված իրավիճակում այն փաստը, որ դիմողը Տեսչության աշխատակիցներին իր հաշվառման հասցեի վերաբերյալ տեղեկություններ չի ներկայացրել, վարչական մարմնին չի ազատում քաղաքացուն օրենսդրությամբ սահմանված կարգով պատշաճ ծանուցելու պարտականությունից:

Այսինքն՝ օրենքի նորմի ճիշտ գործադրումը պահանջում է, որպեսզի որոշումը հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրելու հետ միասին ուղարկվի կոնկրետ անձի հաշվառման հասցեով (եթե անձի հայտնած

հասցեն տարբերվում է նրա հաշվառման հասցեից): Ավելին՝ վարչական մարմինն ինքը պետք է միջոցներ ձեռնարկեր անձի հաշվառման հասցեն պարզելու ուղղությամբ, ինչը չի կատարել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է ապահովել վարչական ակտերի մասին պատշաճ ծանուցումը օրենսդրության դրույթներին համապատասխան:

1.1 ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության կայացրած որոշումների՝ օրենքով սահմանված կարգով քաղաքացիներին ծանուցելու խնդիր

2017 թվականի ընթացքում հասցեագրվել են բողոքներ ԴԱՀԿ ծառայության կողմից (սույն մասում այսուհետ՝ Ծառայություն) կողմից կայացված որոշումների մասին առանց քաղաքացիներին պատշաճ ծանուցելու նրանց գույքի և դրամական միջոցների վրա արգելանք դնելու վերաբերյալ:

Պետք է նշել, որ Պաշտպանին հասցեագրվող բողոքները ներկայացվել են Ծառայությանը և արժանացել պատշաճ ուշադրության: Ավելին, Ծառայության կողմից նշանակված հատուկ ներկայացուցիչը մշտական կապի մեջ է եղել Պաշտպանի աշխատակազմի հետ՝ աշխատանքային կարգով նպաստելու բարձրացվող հարցերի արագ ստուգմանն ու լուծմանը: Հարցերի լուծումները պարբերաբար քննարկվել են նաև Պաշտպանի և ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի միջև:

ՀՀ արդարադատության նախարարության պարզաբանումների համաձայն՝ նշվածի կապակցությամբ Ծառայությունը դատարանի կատարողական թերթի, վարչական ակտի կամ կատարողական մակագրության թերթի հիման վրա կատարողական վարույթ հարուցելիս օրենքով սահմանված ժամկետում և կարգով ծանուցում է կատարողական վարույթի կողմերին՝ փոստային առաքման միջոցով ուղարկելով կատարողական վարույթ հարուցելու և պարտապանի գույքի ու դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին որոշումները: Առանց հիշյալ կատարողական գործողությունների իրականացման որևէ արգելանք չի կիրառվում պարտապանի գույքի կամ դրամական միջոցների վրա:

Ավելին, օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենքով ամրագրված է քաղաքացիներին ծանուցելու հստակ ժամկետ: Այսպես, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հարկադիր կատարողի որոշման պատճենը, ոչ ուշ, քան որոշումը կայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, պատշաճ ձևով ուղարկվում է պահանջատիրոջը և պարտապանին, ինչպես նաև նույն օրենքով նախատեսված այլ անձանց և մարմիններ:

Չնայած վերոգրյալին՝ Պաշտպանի աշխատակազմ ստացված բողոքները ցույց են տալիս, որ գործնականում մի շարք դեպքերում իրենց գույքի և դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին քաղաքացիները շարունակում են պատշաճ չծանուցվել: Օրինակ, մի դեպքով անձը ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության կողմից պատշաճ չի ծանուցվել ճանապարհային երթևեկության կանոնների խախտման հետևանքով նշանակված վարչական տույժի մասին, իսկ նշվածի հիման վրա Ծառայության կողմից արգելանք է դրվել բանկային հաշիվներում ունեցած անձի դրամական միջոցների վրա, ինչի մասին ևս նա չի ծանուցվել: Հաշվի առնելով, որ վարչական տույժ նշանակելու մասին որոշումները սխալ հասցեով առաքվելու պատճառով դիմողը պատշաճ չի ծանուցվել՝ Պաշտպանի միջամտությամբ նշված որոշումները

բեկանվել են, իսկ վճարման հանձնարարագրերով արդեն իսկ բռնագանձված գումարը վերադարձվել է դիմումատուին:

Մեկ այլ դեպքում, անձի բնակարանը կատարողական վարույթի շրջանակներում հարկադիր էլեկտրոնային աճուրդով վաճառվել է, իսկ Ծառայությունից հեռախոսազանգով հայտնել են, որ օրեր անց այդ անձին տնից վտարելու են: Մինչդեռ դիմումատուի պնդմամբ՝ Ծառայության կողմից իր բնակարանից վտարելու վերաբերյալ որևէ ծանուցում չի ստացվել, իսկ վարչական ակտի մասին անձին հեռախոսազանգով հայտնելը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի իմաստով պատշաճ ծանուցում չի համարվում: Անձի պատշաճ ծանուցված չլինելու հանգամանքով պայմանավորված՝ Պաշտպանի աջակցությամբ վտարումը հետաձգվել է:

Պատշաճ ծանուցման խնդրի առնչությամբ ՀՀ արդարադատության նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ 2016 թվականի դեկտեմբերի վերջին Ծառայությունում ներդրվել է կատարողական վարույթի կողմերի ծանուցման նոր այլընտրանքային էլեկտրոնային մեխանիզմ՝ ծանուցում կարճ հաղորդագրություն (sms) ուղարկելու միջոցով: Այս առնչությամբ պարզաբանվել է նաև, որ մինչ այդ Ծառայության կողմից մշակվել և ներդրվել էր հատուկ ծրագրային հավելված՝ ինտերնետով ծանուցում ստանալու համար: Երկու դեպքում էլ այլընտրանքային ծանուցումն անվճար է, և համակարգերում գրանցվելու համար անհրաժեշտ է միայն քաղաքացու հանրային ծառայությունների համարանիշը (սոցիալական քարտի համարը): Ըստ Արդարադատության նախարարության՝ 2017 թվականի ընթացքում հիշյալ մեխանիզմները կիրառվել են ամբողջ ծավալով, որոնցից օգտվողների թիվը գնալով աճում է:

Բացի այդ, 2017 թվականի հոկտեմբերի 25-ին ընդունվել է ««Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասը լրացվելու է նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Պարտապանի գույքի վրա արգելանք դնելուց կամ սահմանափակում կիրառելուց հետո անհապաղ այդ մասին ծանուցում է ուղարկվում անձի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով, իսկ դրա բացակայության դեպքում՝ անձի համաձայնությամբ՝ վերջինիս մատնանշած էլեկտրոնային փոստի հասցեով կամ բջջային հեռախոսին կարճ հաղորդագրություն ուղարկելու միջոցով»: Հիշյալ կարգավորումն ուժի մեջ է մտնելու 2018 թվականի ապրիլի 1-ից:

2017 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բողոքների քննության պատշաճ ընթացքն ապահովելու և քաղաքացիների կողմից բարձրաձայնված հարցերին հնարավոր լուծումներ տալու նպատակով Պաշտպանը մշտապես համագործակցել է մի շարք պետական մարմինների, այդ թվում՝ Ծառայության հետ, ձևավորվել է համատեղ աշխատանքային խումբ, որի կողմից իրականացված աշխատանքների ընթացքում քննարկման առարկա են դարձել ոլորտին առնչվող բազմաթիվ համակարգային խնդիրներ (Ծառայության կողմից կայացված որոշումների մասին առանց քաղաքացիներին պատշաճ ծանուցելու նրանց գույքի և դրամական միջոցների վրա արգելանք դնելու, կատարողական թերթի շրջանակից դուրս գալու և այլ խնդիրներ):

Դրական է տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ նաև ծանուցումների այլընտրանքային համակարգի ներդնումը: Միաժամանակ անհրաժեշտ է փաստել, որ այդ համակարգերից օգտվելը դյուրին և մատչելի չէ հասարակության որոշ ներկայացուցիչների համար, ուստի անհրաժեշտ է նաև շարունակաբար կատարելագործել թղթային ծանուցման համակարգը: Ավելին, չնայած ձեռնարկված վերոնշյալ քայլերին, դիմումների ուսումնասիրման արդյունքում խախտումների արձանագրումը վկայում է այն մասին, որ հարցը համակարգային առումով մնում է չլուծված:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ծառայության կայացրած որոշումների՝ օրենքով սահմանված կարգով քաղաքացիներին պատշաճ ծանուցումն ապահովելու և այդ որոշումների մասին քաղաքացիների չծանուցման հնարավոր դեպքերը բացառելու նպատակով անհրաժեշտ է՝

1.ուժեղացնել վերահսկողությունը հարկադիր կատարողների կողմից օրենքի պահանջների կատարման նկատմամբ.

2.հարկադիր կատարողի կայացրած որոշումները կատարողական վարույթի կողմերին ուղարկելուց հետո հարկադիր կատարողի կողմից կատարողական վարույթի կողմերից համապատասխան կոնտակտային տվյալներ ունենալու դեպքում հեռախոսազանգի միջոցով հավաստիանալ այդ որոշումների մասին անձանց պատշաճ ծանուցման հարցում:

2. Հարուցված կատարողական վարույթի շրջանակներում ծնողի հետ երեխայի տեսակցության ապահովումը

Օրենսդրական և գործնական մեխանիզմների բացակայության պատճառով երեխայի խնամքի վերաբերյալ դատարանի որոշման պարագայում ծնողները հնարավորություն չեն ունենում իրացնելու իրենց երեխայի խնամքի իրավունքն ու պարտականությունը, ինչի արդյունքում տուժում է նաև երեխան:

Ընթացիկ տարում Պաշտպանին հասցեագրված բողոքների ընդհանուր վերլուծությունը թույլ է տալիս արձանագրելու դեպքեր, երբ հարուցված կատարողական վարույթի շրջանակներում ծնողների հետ երեխաների տեսակցությունը չի ապահովվել տարբեր պատճառներով: Մի դեպքում տեսակցության ապահովմանը խոչընդոտում են հենց ծնողները, ում մոտ փաստացի գտնվում է երեխան մյուս դեպքում տեսակցությունները չեն ապահովվում Ծառայության կողմից դրսևորվող անգործության պատճառով:

Մասնավորապես, դեպքերից մեկով չնայած երեխայի՝ հոր հետ բնակվելու որոշման առկայությանը, երեխան բնակվում է մոր հետ: Ծառայության համապատասխան բաժնի աշխատակիցների կողմից շուրջ 20 անգամ՝ յուրաքանչյուրը 2-4 ժամ տևողությամբ կատարողական գործողություններ են իրականացվել, սակայն երեխան ամեն անգամ հրաժարվել է տեղափոխվել հոր տուն: Գործի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կատարողական գործողությունների արդյունքում կազմված արձանագրություններում կատարողական գործողությունների ժամանակ տեղի ունեցածն ամբողջությամբ չի արտացոլվել: Մասնավորապես պարզվել է, որ կատարողական գործողությունների ժամանակ ԴԱՀԿ ծառայության աշխատակցի, խնամակալության և հոգաբարձության մարմնի ներկայացուցչի և հոգեբանի կողմից ցուցաբերվել է կողմնակալ վերաբերմունք,

մասնավորապես հաշվի չի առնվել երեխայի լավագույն շահը, հոգեբանի կողմից երեխան հոգեբանական բռնության է ենթարկվել, իսկ հոր կողմից՝ ֆիզիկական բռնության: Կատարողական գործողություններ են ձեռնարկվել նաև դպրոցում, որից հետո տևական ժամանակ երեխան դպրոց չի հաճախել և բացակայել է դասերից:

Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով կալանավորված անձը տևական ժամանակ չի կարողանում տեսակցել իր երեխայի հետ չնայած դատարանի որոշմանը: Անհրաժեշտ է նշել, որ տեսակցությունների ապահովումը որոշակի առանձնահատկություններ ունի այն դեպքում, երբ ծնողներից մեկը գտնվում է անազատության մեջ, և այս փաստով պայմանավորված՝ նոր խոչընդոտներ են առաջանում երեխաների հետ ծնողների տեսակցությունների ապահովման ճանապարհին: ՀՀ արդարադատության նախարարության պարզաբանումների համաձայն՝ դիմումատուի նախկին կինը հրաժարվել է երեխային տեսակցության ներկայացնել քրեակատարողական հիմնարկ՝ հաշվի առնելով երեխայի լավագույն շահը և հոգեհուզական վիճակը: Ստացվում է, որ անազատության մեջ գտնվող անձը զրկված է երեխայի տեսակցությանն ուղղված ակտիվ գործողություններ կատարելու հնարավորությունից, իսկ մյուս կողմն էլ հրաժարվում է երեխային տեսակցության ներկայացնել ազատությունից զրկման վայրեր՝ մտահոգվելով երեխայի լավագույն շահերով և հոգեհուզական վիճակով:

Տեսակցությունների ապահովման հարցի կապակցությամբ որոշակի բարդություններ են առաջանում նաև այն դեպքում, երբ պարտապանն ու պահանջատերը բնակվում են հանրապետության տարբեր մարզերում: Մասնավորապես երեխաների հետ ծնողի տեսակցությունները տեղի չեն ունենում, քանի որ նախկին կինը երեխայի հետ տեղափոխվել է այլ մարզ, որից հետո կատարողական վարույթը տարածքային կատարման է ուղարկվել Ծառայության համապատասխան մարզային բաժին: Ծառայության պարզաբանումների համաձայն՝ կատարողական թերթում նշված օրերին դիմումատուին առաջարկվում է ներկայանալ Ծառայության համապատասխան մարզային բաժին երեխաների հետ տեսակցելու համար, սակայն, քաղաքացին հրաժարվում է՝ պատճառաբանելով, որ չի աշխատում, չունի բավարար միջոցներ, որպեսզի ամեն անգամ տեսակցության համար Երևան քաղաքից մեկնի այլ մարզ (Սյունիք):

Նշված բոլոր դեպքերում, փաստորեն ծնողը զրկվել է երեխային տեսակցելու հնարավորությունից, ինչի արդյունքում նաև խախտվել է երեխայի իրավունքը: ՀՀ Սահմանադրության 36-րդ հոդվածն ամրագրում է իրենց երեխաների դաստիարակության, կրթության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման մասին հոգ տանել ծնողների իրավունքն ու պարտականությունը: Միաժամանակ, Սահմանադրության 37-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր երեխա ունի իր ծնողների հետ կանոնավոր անձնական փոխհարաբերություններ և անմիջական շփումներ պահպանելու իրավունք, բացառությամբ այն դեպքի, երբ դա, դատարանի որոշման համաձայն, հակասում է երեխայի շահերին: Երեխայի լավագույն շահի սկզբունքի ամրագրումը բխում է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայից և նախատեսված է նաև մի շարք այլ իրավական ակտերում՝ օրինակ՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքում: Դրա հետ մեկտեղ երեխայի՝ ծնողների հետ կանոնավոր անձնական հարաբերությունների իրավունքը ևս ամրագրում է ստացել օրենքներում՝ ՀՀ ընտանեկան օրենսգիրք, «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքում: Ուստի այն պարագայում, երբ առկա է ծնողների հետ երեխայի տեսակցության

վերաբերյալ դատարանի որոշումը, այդ որոշումը պետք է կատարվի հենց հաշվի առնելով երեխայի լավագույն շահը:

Չնայած վերոնշյալ իրավական ակտերով ամրագրված այս իրավունքների, գործնականում դրանց իրացման երաշխիքները բավարար և արդյունավետ չեն, քանզի սույն բաժնում նկարագրված դիմումների քննությունը ցույց է տալիս, որ անգամ դատարանի վճռի առկայության պայմաններում դրանց կատարումը չի ապահովվել:

Հաշվի առնելով վերոգրյալը և երեխայի՝ իր ծնողներին ճանաչելու, նրանց հոգատարությանն արժանանալու իրավունքների իրացման, ինչպես նաև երեխայի լավագույն շահերի ապահովման անհրաժեշտությունից ելնելով՝ անհրաժեշտ է սահմանել օրենսդրական և գործնական արդյունավետ կառուցակարգեր հարուցված կատարողական վարույթի շրջանակներում ծնողի հետ երեխայի տեսակցություններն ապահովելու ուղղությամբ:

3. Ճանապարհային վճարների գանձման գործընթացը

Ճանապարհային վճարների վերաբերյալ հարաբերությունները մինչև ՀՀ հարկային նոր օրենսգրքի ուժի մեջ մտնելը՝ 2017 թվականի ողջ ընթացքում, կարգավորվում էին «Ճանապարհային վճարի մասին» ՀՀ օրենքով[90]: Օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ճանապարհային վճարը Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման աշխատանքները կազմակերպելու և իրականացնելու համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով սույն օրենքով սահմանված կարգով և չափով պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է:

Օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ ճանապարհային վճարը վճարվում է տրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար նույն հոդվածով սահմանված դրույքաչափերով: Այս նորմի ընդհանուր տրամաբանությունից բխում է, որ եթե անձը տրանսպորտային միջոցով չի օգտվում ավտոմոբիլային ճանապարհներից, դրա համար չպետք է ճանապարհային վճար գանձվի: Սա նշանակում է, որ ճանապարհային վճարի գանձման համար պարտադիր պայման է անձի կողմից ավտոմոբիլային ճանապարհներից օգտված լինելը:

Այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար վճարից ազատվելու հիմքերը սահմանված են Օրենքի 18-րդ հոդվածում, որոնց թվում, սակայն, տրանսպորտային միջոց փաստացի չշահագործելու հետևանքով ճանապարհներից չօգտվելը նախատեսված չէ:

Պրակտիկայում հանդիպել են դեպքեր, երբ Հայաստանի Հանրապետությունում չգրանցված տրանսպորտային միջոցը մուտք է գործում ՀՀ և խափանման հետևանքով չի շահագործվում: Նման պայմաններում չշահագործման ողջ ժամանակահատվածի համար ևս անձը պարտավորվում է ճանապարհային հարկ վճարել այն դեպքում, երբ այդ հարկի գանձման համար պարտադիր պայման է անձի կողմից նշված տրանսպորտային միջոցով ավտոմոբիլային ճանապարհից օգտված լինելը:

Նշվածի կապակցությամբ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի (սույն բաժնում այսուհետ՝ ՊԵԿ) պարզաբանումների համաձայն՝ ճանապարհային հարկից ազատման

[90] Սույն բաժնում այսուհետ՝ Օրենք

հարցը պարզելուն ուղղված իրավակիրառ պրակտիկան պայմանավորված է եղել տարբեր անձանց կողմից ներկայացված՝ պետական մարմինների կողմից տրամադրված փաստաթղթերի առկայությամբ: Մասնավորապես, պրակտիկայում որպես տրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներից օգտված չլինելը հաստատող հիմքեր՝ ներկայացվում են ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության և ՀՀ քննչական կոմիտեի կողմից տրամադրված փաստաթղթերը (տեղեկանքները):

Բարձրացված հարցի կապակցությամբ ՊԵԿ-ից ստացված տեղեկությունների համաձայն՝ 2017 թվականին ՊԵԿ է մուտքագրվել ճանապարհային վճարի վճարումից ազատելու վերաբերյալ 70 դիմում, որոնց մի մասի կապակցությամբ մաքսային մարմինը ընդունել է բարենպաստ վարչական ակտ, քանի որ անձանց կողմից ներկայացվել են Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհներից չօգտվելու փաստը հաստատող համապատասխան ապացույցներ:

Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով՝ անձը Ռուսաստանի Դաշնությունում գրանցված մեքենայով 2016 թվականին մուտք է գործել Հայաստանի Հանրապետություն, մեքենան գտնվել է խափանված վիճակում, ինչի պատճառով տևական ժամանակ չի շահագործվել: Նշված փաստը հաշվի առնելով՝ դիմումատուն այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու վճարից իրեն ազատելու պահանջով դիմել է ՊԵԿ, սակայն արդյունքի չի հասել: Ճանապարհային վճարի վճարումից անձին չազատելը պատճառաբանվել է ՀՀ օրենսդրությամբ մեքենայի անսարքության վերաբերյալ տեղեկանքի հիման վրա ավտոտրանսպորտային միջոցի համար ճանապարհային վճարից ազատելու հիմքերի բացակայությամբ:

Դիմումում բարձրացված հարցի ուսումնասիրությունից պարզվել է, որ դիմումատուն վարչական վարույթ իրականացնելու պահանջով դիմել է ՊԵԿ և ներկայացրել համապատասխան ապացույցներ իրեն ճանապարհային վճարի վճարումից ազատելու համար: Վարչական վարույթ հարուցվելուց հետո ոչ պատշաճ վարչարարության արդյունքում իրավունքի տրամադրումը մերժվել է: Միայն հետագայում Պաշտպանի գրությանն ի պատասխան՝ վարչական մարմինը հայտնել է դիրքորոշում, որ դիմումում բարձրացված հարցը կարող է կրկին քննարկվել վարչական վարույթի շրջանակներում ներկայացված փաստական հանգամանքների ստուգման և գնահատման արդյունքում դրանց ապացուցման պարագայում: Այնուհետև, վերոգրյալով պայմանավորված՝ դիմումատուն վարչական վարույթ հարուցելու խնդրանքով կրկին դիմել է ՊԵԿ:

Վարչական վարույթ իրականացնելու և իրեն ճանապարհային վճարից ազատելու վերաբերյալ դիմումատուի երկրորդ դիմումի քննության արդյունքում վարչական մարմինը վերջինիս ազատել է ճանապարհային վճարի վճարումից՝ հիմք ընդունելով այն ապացույցները, որոնք արդեն ներկայացված են եղել նրա՝ ՊԵԿ-ին ուղղված առաջին դիմումին կից: Այսինքն, դիմումատուի առաջին դիմումի հիման վարչական մարմինը չի իրականացրել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ վարչական վարույթ, չի ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը:

Նշված գործով Պաշտպանը կայացրել է «Մարդու իրավունքների և ազատությունների խախտման առկայության մասին» որոշում, որով ՊԵԿ-ին առաջարկվել է դիմումատուին ազատել ճանապարհային վճարի վճարումից ավտոտրանսպորտային միջոցի չշահագործման ողջ ժամանակահատվածի համար, ինչպես նաև հանդես գալ «Ճանապարհային վճարի մասին» ՀՀ օրենքում ճանապարհային վճարից ազատելու համապատասխան արտոնությունների սահմանման մասին լրացումներ և փոփոխություններ կատարելու նախաձեռնությամբ՝ իր իրավասության սահմաններում:

ՊԵԿ-ի պարզաբանումների համաձայն՝ ՀՀ վարչական դատարանի վարույթում է գտնվում ՊԵԿ-ի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին քաղաքացու հայցը, որով պայմանավորված էլ վերջինիս ճանապարհային վճարի վճարումից ազատելու հարցին վարչական մարմինը կարող է անդրադառնալ վերջնական դատական ակտի առկայության դեպքում:

Անդրադառնալով «Ճանապարհային վճարի մասին» ՀՀ օրենքում ճանապարհային վճարից ազատելու համապատասխան արտոնությունների սահմանման մասին լրացումներ և փոփոխություններ կատարելու հարցին՝ ՊԵԿ-ից ընդամենը պարզաբանվել է, որ նշված օրենքն ուժը կորցրած է ճանաչվել: Սակայն հարկ է նկատել, որ ճանապարհային վճարին առնչվող հարաբերությունները կարգավորող նոր իրավական ակտը՝ ՀՀ հարկային օրենսգիրքը ևս չի անդրադառնում Պաշտպանի որոշման մեջ բարձրաձայնված խնդրին:

Մասնավորապես, ՀՀ հարկային օրենսգրքի 186-րդ հոդվածի ուժով մարդատար ավտոտրանսպորտային միջոցները ճանապարհային հարկով հարկման օբյեկտ չեն համարվում, այդպիսիք համարվում են միայն բեռնատար ավտոտրանսպորտային միջոցները: Նույն օրենսգրքի 191-րդ հոդվածով սահմանված ճանապարհային հարկի արտոնությունները ևս վերաբերում են միայն բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներին: Օրենսդրական նման կարգավորումների պայմաններում մարդատար ավտոտրանսպորտային միջոցների համար ճանապարհային հարկի գանձման հարցը կարելի է լուծված համարել: Մինչդեռ շարունակում է խնդրահարույց մնալ այն իրավիճակը, երբ Հայաստանի Հանրապետությունում չգրանցված (չհաշվառված) բեռնատար ավտոտրանսպորտային միջոցն է մուտք գործում Հայաստանի Հանրապետություն և տևական ժամանակ չի շահագործվում, արդյոք անձը պետք է բեռնատար ավտոտրանսպորտային միջոցի չշահագործման ամբողջ ժամանակահատվածի համար ևս ճանապարհային հարկ վճարի: ՀՀ հարկային օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասի տառացի մեկնաբանությունից բխում է, որ եթե անձը բեռնատար ավտոտրանսպորտային միջոցով չի օգտվում ավտոմոբիլային ճանապարհներից, դրա համար չպետք է ճանապարհային հարկ գանձվի: Սա նշանակում է, որ ճանապարհային հարկի գանձման համար պարտադիր պայման է անձի կողմից ավտոմոբիլային ճանապարհներից օգտված լինելը: Մինչդեռ, բեռնատար ավտոտրանսպորտային միջոցը չշահագործելը ճանապարհային հարկից ազատելու հիմք հանդիսացող պայմանների ցանկում ներառված չէ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է նոր իրավակարգավորումներում ևս նախատեսել ճանապարհային վճարից ազատելու հիմք՝ կապված ճանապարհները տվյալ տրանսպորտային միջոցների կողմից փաստացի չօգտվելու հետ:

4.Պատշաճ վարչարարությանն առնչվող այլ դեպքեր

Պաշտպանին հասցեագրված բողոքների ընդհանուր ուսումնասիրության արդյունքում արձանագրվել են վարչական մարմինների կողմից իրականացված ոչ պատշաճ վարչարարության այլ դեպքեր:

Այսպես, դեպքերից մեկով դատարանի որոշմամբ կիրառվել է հայցի ապահովում՝ անձի դրամական միջոցների վրա հայցագնի 5.000.000 ՀՀ դրամի չափով արգելանք է դրվել, այնուհետև դիմողը Ծառայություն է ներկայացրել դատարանի կողմից տրված նոր կատարողական թերթ, ըստ որի՝ պետք է վերացնել նախորդ կատարողական թերթով կիրառված հայցի ապահովումը: Դիմումատուին հաջողվել է հետ ստանալ միայն 1.000.000 ՀՀ դրամը, իսկ մնացած 4.000.000 ՀՀ դրամը վարչական մարմնի անգործության արդյունքում այդպես էլ չի վերադարձվել: Բարձրացված խնդիրն, իհարկե, Պաշտպանի աջակցությամբ լուծվել է, Ծառայության դեպոզիտ հաշվում մնացած 4 մլն ՀՀ դրամը վերադարձվել է դիմումատուին: Այսինքն, վարչական մարմնի կողմից իրականացված ոչ պատշաճ վարչարարության արդյունքում շատ դեպքերում քաղաքացիների խախտված իրավունքներն այդպես էլ չեն վերականգնվում:

Մեկ այլ գործով դիմողը տեղեկացրել է, որ կատարողական թերթի կատարումն ապահովելու նպատակով հարկադիր կատարողը արգելանք է դրել պարտապանի նույն անուն-ազգանունը կրող, սակայն այլ հայրանվամբ, պարտապան չհանդիսացող անձի գույքի վրա: ՀՀ արդարադատության նախարարության տեղեկությունների համաձայն՝ պարտապան չհանդիսացող անձի գույքի վրա դրված արգելանքը վերացվել է, իսկ ծառայողական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար վարույթն իրականացրած հարկադիր կատարողը և Ծառայության համապատասխան տարածքային բաժնի պետն ազատվել են աշխատանքից:

Հարկ է նկատել, որ ՀՀ արդարադատության նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ 2017 թվականի ընթացքում ոչ իրավաչափ կատարողական գործողություններ կատարելու կամ անգործություն դրսևորելու համար ՀՀ արդարադատության նախարարի և ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի կողմից Ծառայության 33 աշխատակիցներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության, 19 աշխատակից ստացել է նկատողություն, 11-ը՝ խիստ նկատողություն կարգապահական տույժեր, իսկ 3 աշխատակից ազատվել է Ծառայությունից: Նշված տվյալներն իրենց հերթին վկայում են այն մասին, որ 2017 թվականի ընթացքում շարունակվել են արձանագրվել ոչ իրավաչափ կատարողական գործողությունների դեպքեր:

Վարչական մարմինների կողմից իրականացված ոչ պատշաճ վարչարարության մասին են վկայում նաև դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը պետական մարմինների կողմից չկատարելու խնդրով ընթացիկ տարում Պաշտպանին հասցեագրված բազմաթիվ բողոքները: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, իրավաբանական անձանց և քաղաքացիների համար ու ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

Օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կատարման խնդրին անդրադարձել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ նշելով, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (սույն բաժնում այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության իրավունքն անիրական կլիներ, եթե պետության իրավական համակարգը թույլ տար, որ վերջնական և պարտադիր ուժ ունեցող դատական որոշումներն անկատար մնային: Ավելին, եթե Կոնվենցիայի 6-րդ հոդվածն առանց պաշտպանության թողներ դատական ակտերի կատարումը, ապա դա, հավանաբար, կհանգեցներ այնպիսի իրողության, որն անհամատեղելի կլիներ իրավունքի գերակայության սկզբունքների հետ, որը Պայմանավորվող պետությունները պարտավորվել են պահպանել Կոնվենցիան վավերացնելիս[91]: Մեկ այլ գործով կայացված որոշման մեջ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ ցանկացած դատարանի կայացրած վճռի կատարումը պետք է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով դիտվի որպես դատական քննության անբաժանելի մաս[92]:

Պետությունը պարտավոր է իր իրավական համակարգը կազմակերպել այնպես, որպեսզի դատական որոշումների կատարման համար պատասխանատու պետական իշխանության տարբեր մարմինների միջև ապահովի փոխհամագործակցություն և երաշխավորի ողջամիտ ժամկետում դատական որոշումների կատարումը[93]:

Միաժամանակ հասցեագրված բողոքները վկայում են այն մասին, որ չնայած առկա օրենսդրական պահանջի, գործնականում որոշ որոշումներ չեն կատարվում: Այսպես, Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով քաղաքացին հայտնել է, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն հրաժարվել է կատարել դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը՝ չվճարելով հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար նախատեսված իր միջին աշխատավարձը: Պաշտպանի միջամտությամբ աջակցությամբ՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը հասցեագրված գրության հիման վրա Նախարարությունը դիմողի անվամբ թողարկել է 12.940.853 (տասներկու միլիոն ինը հարյուր քառասուն հազար ութ հարյուր հիսուներեք) ՀՀ դրամ անվանական արժեքով փոխանցելի մուրհակ:

ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածով նախատեսված է անձի պատշաճ վարչարարության իրավունքը, որը ենթադրում է յուրաքանչյուրի՝ վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունքը: Վարչական մարմնի կողմից իրականացված ոչ պատշաճ վարչարարությունը կարող է արտահայտվել թե՛ գործողություններով, և թե՛ անգործությամբ: Անգործության արդյունքում ոչ պատշաճ վարչարարության առկայության մասին են վկայում Պաշտպանին հասցեագրված բողոքները: Օրինակ դեպքերից մեկով անձը կենսաթոշակի նշանակման համար դիմել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության տարածքային բաժին, սակայն իր դիմումի հիման վրա օրենքով սահմանված ժամկետում որևէ որոշում չի կայացվել: Ըստ քննվող բողոքի՝ դիմումատուն հաշվառված չի եղել ՀՀ բնակչության պետական

[91] Տե՛ս Հորնսբին ընդդեմ Հունաստանի (Hornsby v. Greece) գործով 1997 թվականի մարտի 19-ի վճիռը, գանգատ թիվ 18357/91, կետ 40:
[92] Տե՛ս Դի Պյեդեն ընդդեմ Իտալիայի (Di pede v. Italy) գործով 1996 թվականի սեպտեմբերի 26-ի վճիռը, գանգատ թիվ 15797/89, կետ 20:
[93] Տե՛ս Գլուշակովան ընդդեմ Ռուսաստանի Դաշնության (Glushakova v. Russia) գործով 2007 թվականի օգոստոսի 10-ի վճիռը, գանգատ թիվ 23287/05, կետ 17:

ռեգիստրում, որպիսի հանգամանքը հիմք է հանդիսացել կենսաթոշակի նշանակումը մերժելու համար, սակայն «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետում այդպիսի որոշում չի կայացվել: Դիմումատուն, համապատասխան դիմում ներկայացնելով կենսաթոշակի նշանակման հանձնաժողով և օրենքով սահմանված ժամկետում կենսաթոշակ նշանակելը մերժելու մասին որոշման մասին չծանուցվելով, լեգիտիմ ակնկալիք է ունեցել, որ իրեն կենսաթոշակ կնշանակվի:

Կենսաթոշակ նշանակելը մերժելու որոշումը տրամադրելու կապակցությամբ Պաշտպանի գրություններին ի պատասխան՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից պարզաբանվել է, որ դիմումատուի կենսաթոշակի էլեկտրոնային գործում բացակայում է սոցիալական ապահովության տարածքային բաժնի կողմից կայացված կենսաթոշակ նշանակելը մերժելու մասին որոշումը, իսկ այդ ենթադրյալ որոշման թղթային տարբերակը չի պահպանվել:

Ուստի, եթե անձի կենսաթոշակի էլեկտրոնային գործում բացակայում է կենսաթոշակ նշանակելը մերժելու մասին որոշումը, ապա գործում է այն կանխավարկածը, որ այդպիսի որոշում չի ընդունվել, ինչն էլ վկայում է իրականացված ոչ պատշաճ վարչարարության մասին:

Դիմումի քննության և դրա շրջանակներում «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի, ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» թիվ 665-Ն որոշման հավելված 1-ի 12.3 կետի, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ ՍԴՈ-723 որոշման համապատասխան դրույթների համապարփակ վերլուծության արդյունքում Պաշտպանի կայացրած որոշմամբ արձանագրվել է, որ վարչական մարմինը չի կատարել «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով իր վրա դրված պարտավորությունը, այն է՝ դիմումն ընդունելուց հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում օրենքով սահմանված որոշումներից որևէ մեկը չի ընդունել:

Հարկադիր կատարողի կողմից կատարողական վարույթի շրջանակներում կատարողական թերթի պահանջների շրջանակից դուրս գալու դեպքերը շարունակել են արդիական մնալ նաև 2017 թվականի ընթացքում, ավելին, վերջինիս առնչությամբ ՀՀ արդարադատության նախարարությունում առանձնացված վիճակագրություն չի վարվում, ինչը բարդացնում է նման դեպքերի իրական պատկերի վերհանումը և դրանց առաջացման կանխարգելումը:

Այսպես, Պաշտպանին են հասցեագրված բազմաթիվ բողոքներ՝2017 թվականի ընթացքում արձանագրված՝ անձանց սեփականությունը հանդիսացող գույքի, այդ թվում՝ դրամական միջոցների վրա Ծառայության կողմից անհիմն արգելանք դնելու վերաբերյալ:

Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Ծառայության հարկադիր կատարողը կատարողական վարույթի շրջանակներում դուրս է եկել կատարողական թերթի պահանջների շրջանակից և արգելանք է կիրառվել ինչպես իր անշարժ գույքի, այնպես էլ դրամական միջոցների նկատմամբ այն դեպքում, երբ դատարանի կողմից որոշում է կայացվել որպես հայցի ապահովում արգելանք դնել անձի միայն անշարժ գույքի վրա: Մինչդեռ, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկադիր կատարման

միջոցների կիրառման հիմքն օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթն է, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների պահպանմամբ ներկայացված դիմումը:

Արդյունքում, Պաշտպանի աջակցությամբ դրամական միջոցների վրա կիրառված արգելանքը վերացվել է:

2017 թվականին ստացվել են մի շարք դիմումներ այն մասին, որ Ծառայությունն արգելանք է տարածել օրենքի ուժով բռնագանձման ոչ ենթակա գումարների վրա: Վերջիններիս վրա բռնագանձում տարածելու դեպքերի առնչությամբ ՀՀ արդարադատության նախարարությունից պարզաբանվել է, որ Ծառայությունը բանկերին պարտապանի դրամական միջոցների վրա արգելանք դնելու վերաբերյալ էլեկտրոնային հաղորդագրություն ուղարկելիս որոշման համապատասխան դաշտում պարտադիր նշում է այն հաշվեհամարները, որոնցից փոխանցվող գումարները բռնագանձման ենթակա չեն: Սակայն պրակտիկայում բազմաթիվ են դեպքերը, երբ նշված գումարները փոխանցվում են փոփոխվող կամ անհատական հաշվեհամարներից, որոնց մասին հարկադիր կատարողը չէր կարող տեղեկություն ունենալ: Նման բնույթի դիմումներ ստանալու դեպքում դրանց սահմանված կարգով ընթացք է տրվում անհապաղ, և կիրառված արգելանքները մասնակի կամ ամբողջությամբ վերացվում են:

Վերջիններիս վերացման ուղղությամբ նախարարության կողմից իրականացվող քայլերի հետ մեկտեղ հարկ է նշել, որ խնդիրը շարունակում է համակարգային բնույթ կրել: Ասվածը հիմնավորում են 2017 թվականի ընթացքում քաղաքացիների կողմից իրենց աշխատավարձի, կենսաթոշակի, հաշմանդամության կենսաթոշակի կամ պետական նպաստների վրա կիրառված արգելանքները վերացնելու վերաբերյալ Ծառայություն ներկայացված շուրջ 776 դիմումները:

Ընթացիկ տարում անձանց հաշմանդամության զինվորական կենսաթոշակների, որպես պետական նպաստ և ալիմենտային պարտավորությունների համար վճարվող գումարների վրա Ծառայության կողմից բռնագանձում տարածելու խնդրով բազմաթիվ բողոքներ են հասցեագրվել նաև Պաշտպանին:

Մասնավորապես, բողոքներից մեկի քննությունից պարզ է դարձել, որ Ծառայության կողմից հարուցված կատարողական վարույթի շրջանակներում բռնագանձում է տարածվել դիմողի որդու հաշմանդամության զինվորական կենսաթոշակի վրա: Մինչդեռ, Դատական ակտերի հարկադիր կատարման մասին ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ կատարողական թերթով բռնագանձում չի կարող տարածվել այն դրամական գումարների վրա, որոնք վճարվում են հաշմանդամություն ունեցող անձանց: Պաշտպանի ուղղորդմամբ՝ դիմումատուն զինվորական հաշմանդամ լինելու փաստը հավաստող փաստաթղթեր է ներկայացրել Ծառայություն, որից հետո հաշմանդամության կենսաթոշակի հաշվեհամարի վրա դրված արգելանքը վերացվել է:

Մեկ այլ դեպքով, ըստ քննվող բողոքի՝ Ծառայության կողմից արգելանք է դրվել դիմողի երեխայի համար վճարվող ալիմենտի գումարի վրա: Օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ կատարողական թերթով բռնագանձում չի կարող տարածվել այն դրամական գումարների վրա, որոնք վճարվում են ալիմենտային պարտավորությունների համար: Պաշտպանի աջակցությամբ բանկում դիմումատուի

անվամբ առկա համապատասխան հաշվեհամարի նկատմամբ կիրառված արգելանքը վերացվել է:

Շարունակում է արդիական մնալ հարուցված կատարողական վարույթի շրջանակներում պարտապանների ամբողջ աշխատավարձի վրա արգելանք դնելու խնդիրն այն դեպքում, երբ Օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կատարողական թերթի (թերթերի) կատարման ընթացքում պարտապանի աշխատավարձից և դրան հավասարեցված վճարներից կարող է պահվել հիսուն տոկոսից ոչ ավելի՝ մինչև բռնագանձվող գումարների լրիվ մարումը: Նշված բոլոր դեպքերում Պաշտպանի միջամտության արդյունքում բռնագանձումը տարածվել է աշխատավարձի միայն 50 տոկոսի վրա:

Նշված իրավիճակներում իրավասու մարմինների գործողությունների արդյունքում անձինք զրկվել են իրենց սեփականության օգտագործման իրավունքից:

Պաշտպանին հասցեագրված բողոքներում բարձրացված հարցերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ որոշ դեպքերում անձանց բռնագանձման ոչ ենթակա դրամական միջոցների վրա Ծառայության կողմից անհիմն կերպով արգելանք է դրվում, որը ևս ոչ պատշաճ վարչարարության հետևանք է:

Շատ հաճախ հարկադիր կատարողների որոշումներով արգելանքներ են կիրառվում անձանց կենսաթոշակային հաշիվների վրա՝ պատճառաբանությամբ, որ տեղյակ չեն եղել, որ տվյալ հաշվեհամարի միջոցով անձը ստանում է իր կենսաթոշակը: Մինչդեռ, հարկ է նկատել, որ պարտապանների տարիքով պայմանավորված՝ հարկադիր կատարողը կարող է ենթադրել, որ պարտապանը կենսաթոշակային տարիքի հասած անձ է և ստանում է կենսաթոշակ, ինչով էլ պայմանավորված պետք է պարզել բանկերում տվյալ անձի անունով հայտնաբերված դրամական միջոցը հանդիսանում է այդ անձի կենսաթոշակը, թե ոչ, և արգելանք չդնել այդ հաշվեհամարի վրա:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները: Նշված դեպքերում հարկադիր կատարողը անգործություն է դրսևորում՝ չբացահայտելով վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

Նույն օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

ա) անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում,

բ) վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե սույն հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված դեպքում վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներին (տեղեկություններին) վարչական մարմինը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ անձի միջոցով, ապա ապացուցման պարտականությունը դրվում է այդ անձի վրա:

Հարկ է նկատել, որ հաշվեհամարի՝ կենսաթոշակային լինելու վերաբերյալ տեղեկությունը հարկադիր կատարողը կարող է ստանալ ոչ միայն անձի միջոցով, այլև համապատասխան պետական մարմնին հարցում կատարելու միջոցով: Ուստի նշված իրավիճակը վերոնշյալ նորմով սահմանված այն բացառիկ դեպքը չէ, երբ պահանջվող տեղեկությունը հարկադիր կատարողը կարող է ստանալ միայն կոնկրետ անձի միջոցով (տես Զեկույցի «Սեփականության իրավունք» բաժնի 1-ին կետը):

Հանդիպում են նաև իրավիճակներ, երբ անձինք իրենք են հարկադիր կատարողին տեղեկացնում վերջինիս կողմից «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի ուժով բռնագանձման ոչ ենթակա դրամական միջոցների վրա արգելանք դնելու փաստի մասին, ինչը սակայն, հարկադիր կատարողի կողմից անտեսվում է: Մասնավորապես հարկադիր կատարողները պարտապաններից պահանջում են նշված փաստը հիմնավորող ապացույցներ ներկայացնել:

Սակայն հարկ է նկատել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձանց ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ հիմնավոր կասկածներ ունենալու դեպքում, վարչական մարմինն ինքն է պարտավոր ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար:

Ուստի բոլոր այն դեպքերում, երբ անձի ներկայացրած տեղեկությունների վերաբերյալ հարկադիր կատարողը հիմնավոր կասկածներ ունի, ապա պարտավոր է ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար: Հակառակ դեպքում՝ անձի հաղորդած տվյալների հավաստի լինելու փաստի ուժով հարկադիր կատարողը պարտավոր է արգելանքը վերացնել անձի կենսաթոշակային հաշվի վրայից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է՝

1.ապահովել վարչական վարույթների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ իրականացումը, յուրաքանչյուր դեպքով ապահովել ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով անձանց պատճառված վնասի հատուցումը,

2.հարկադիր կատարողների կողմից կատարողական վարույթի պարտապանների անվամբ ՀՀ առևտրային բանկերում դրամական միջոցներ հայտնաբերելու դեպքում ձեռնարկել անհրաժեշտ բոլոր գործողություններն այդ դրամական միջոցների տեսակը (աշխատավարձ, կենսաթոշակ, պետական նպաստ և այլն) պարզելու ուղղությամբ՝ չբացառելով նաև այդ մասին անձամբ պարտապաններից հեռախոսազանգի միջոցով տեղեկանալու ընթացակարգը:

Պատշաճ վարչարարության խնդրի շրջանակներում հարկ է անդրադառնալ նաև ներխուժումը կանխելուն կամ վերացնելուն ուղղված ոստիկանության գործողությունների իրավաչափության հետ կապված մտահոգություններին: Բանն այն է, որ Մարդու իրավունքների պաշտպանին այդպիսի խնդրով բողոքները բազմաթիվ են: Ըստ դիմումատուների՝ հիմնական խնդիրն այն է, որ ոստիկանությունը ներխուժումը դադարեցնելու պահանջ է ներկայացնում նաև իրավական վեճի առկայության, այդ թվում՝ դատարանում գործի քննության պայմաններում:

Այս առումով խնդրահարույց են ոստիկանության գործողությունների իրավական հիմքի՝ ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 10-ի «Ներխուժումը կանխելու կամ վերացնելու նպատակով անշարժ գույքի օրինական տիրապետողի կողմից

ոստիկանությանը լիազորելու կարգն ու պայմանները սահմանելու մասին» թիվ 797-Ն որոշման կարգավորումները :

Այսպես, որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի համաձայն՝ ոստիկանն իրավունք չունի կողմերի նկատմամբ կիրառելու որևէ միջոց կամ պահանջ, եթե պարզում է, որ գույքի տարածք մուտք գործող կամ գործած՝

(…)

3) անշարժ գույքի օրինական տիրապետողի պահանջն օրենքով սահմանված կարգով կողմերի միջև կնքված և տվյալ պահին գործող քաղաքացիաիրավական կամ այլ պայմանագրից կամ ամուսնաընտանեկան հարաբերություններից ծագող վեճ է,

(…) :

Պաշտպանին ներկայացված բողոքները մեծամասամբ վերաբերում են հենց Կառավարության որոշման՝ խնդրո առարկա 7-րդ կետի կիրառության շրջանակներին: Մասնավորապես, բողոքների բովանդակությունների ընդհանուր ուսումնասիրությունից վեր են հանվել հետևյալ հիմնական խնդիրները՝

1. Ներխուժումը կանխելուն կամ վերացնելուն ուղղված գործողությունները հիմնավորվել են նրանով, որ *առկա չէ Կառավարության որոշման իմաստով «օրենքով սահմանված կարգով կողմերի միջև կնքված և տվյալ պահին գործող քաղաքացիաիրավական կամ այլ պայմանագրից կամ ամուսնաընտանեկան հարաբերություններից ծագող վեճ»:* Խոսքը, մասնավորապես, վերաբերում է այն դեպքերին, երբ առկա վեճը չի բխում «*տվյալ պահին գործող քաղաքացիաիրավական կամ այլ պայմանագրից*» կամ վեճի կողմերը «*օրենքով սահմանված կարգով կնքված կողմերը*» չեն:

2. Ներխուժումը կանխելուն կամ վերացնելուն ուղղված գործողությունները որոշ դեպքերում իրականացվել են՝ անկախ դատական վարույթի առկայությունից: Այս դեպքում, իբրև հիմնավորում՝ ներկայացվել է, որ անձը թեև գործին մասնակցող անձ է, սակայն պայմանագրի կողմ չէ կամ այլ անձի միջնորդությամբ դատարանի կիրառած հայցի ապահովման միջոցն այլոց նկատմամբ չի տարածվում:

Ասվածը նշանակում է, որ ոստիկանության կողմից իրականացվող այդ գործողությունների հետ կապված մտահոգությունները միայն իրավակիրառման խնդիր չեն, այլ առկա է նաև Կառավարության վերը նշված որոշման կարգավորումների հստակության և որոշակիության հարց:

6. Ճանապարհատրանսպորտային պատահարների դեպքերի առթիվ նախապատրաստվող նյութերը ծանոթացման չտրամադրելը

Ապահովագրական հատուցումների կարգավորման գործընթացում պատահարի հետևանքով պատճառված վնասի չափը որոշվում է փորձագետի կողմից կամ նախատեսված որոշակի սահմանաչափերի շրջանակներում գնահատվում է գործն ըստ էության լուծող և օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, իսկ այդպիսի գործ հարուցված չլինելու կամ այդպիսի գործն ըստ էության լուծող դատական ակտ չընդունվելու դեպքում՝ դարձյալ փորձագետի կողմից:

Բոլոր դեպքերում, Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոյի RL 1-001 կանոնների (ԱՊՊԱ ընդհանուր պայմաններ) համաձայն՝ փորձաքննության պատվերին կցվում են որոշակի փաստաթղթեր: Այսպես, պատահարի գծով հարուցված գործով օրինական ուժի մեջ մտած գործն ըստ էության լուծող դատական ակտի կամ քրեական

հետապնդման մարմնի կողմից ընդունված քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական գործի վարույթը կարճելու *և քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշման կամ վարչական վարույթ իրականացնող մարմնի կողմից ընդունված եզրակացության (կամ) որոշման առկայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել այդ որոշման (եզրակացության) հիմքում ընկած փաստաթղթերի պատճենները (լուսապատճենները)*: Փաստորեն, որպես այդպիսին Կանոններով հստակ պահանջ է դրված անձի կողմից ապահովագրական ընկերությանը ներկայացնել դեպքի վայրի սխեմա, բացատրություններ, փորձագիտական եզրակացություն:

Այս կապակցությամբ, բանավոր և գրավոր բողոքներ են ստացվել առ այն, որ վարույթն իրականացնող մարմինը հրաժարվում է տրամադրել անհրաժեշտ փաստաթղթերը, արդյունքում՝ անձը չի կարողանում ստանալ ապահովագրական հատուցումը:

Այսպես, մի դեպքում, օրինակ, քրեական հետապնդման մարմինները, կայացնելով քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշում, շահագրգիռ կողմի խնդրանքով անձին տրամադրել էին քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման պատճենը, սակայն հրաժարվում էին տրամադրել այլ անհրաժեշտ նյութերը: Մեկ այլ դեպքում՝ անձն անգամ չէր ստացել քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման պատճենը:

Նշված խնդրի կապակցությամբ թեև ՀՀ գլխավոր դատախազության պարզաբանմամբ 2017 թվականի ընթացքում քրեական գործի հարուցումը մերժելու դեպքում անձին մինչև քրեական գործի հարուցումը նախապատրաստված նյութերին ծանոթանալու իրավունքը չապահովելու վերաբերյալ ստացվել է առնվազն 2 բողոք, սակայն Պաշտպանի աշխատակազմում նմանօրինակ բողոքները եղել են բազմաթիվ:

Չնայած այն հանգամանքին, որ Դատախազության պաշտոնական դիրքորոշմամբ՝ գործում է ստացված բողոքները բավարարելու և մինչև քրեական գործի հարուցումը նախապատրաստված նյութերին ծանոթանալու անձի իրավունքը ապահովելու պրակտիկան, սակայն Պաշտպանին հասցեագրված դիմումների քանակը վկայում է այն մասին, որ առանձին դեպքերում խնդիրը շարունակում է մնալ չլուծված:

Ուստի, առաջարկվում է, որպեսզի վարույթն իրականացնող մարմինները պետք է ձեռնարկեն պատշաճ քայլեր՝ ապահովագրական հատուցում ստանալու գործընթացում արհեստական խոչընդոտներ չստեղծելու նպատակով:

ԲԱԺԻՆ 6. ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 21-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի անմիջականորեն կամ ազատորեն ընտրված ներկայացուցիչների միջոցով մասնակցել իր երկրի կառավարմանը: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 25-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր քաղաքացի ունի ընտրելու և ընտրվելու իրավունք, ինչպես նաև անմիջականորեն կամ ընտրված ներկայացուցչի միջոցով հանրային կառավարմանը մասնակցելու և հանրային ծառայության ընդունվելու իրավունք:

Միջազգային իրավական կարգավորումներում պետությունների համար որևէ ընտրական համակարգ չի կանխորոշվում[94]: Հակառակը՝ ընդունված է, որ գոյություն չունի մեկ միասնական ընտրական համակարգ, որը կիրառելի կլինի բոլոր պետությունների համար: Պետությունն ինքն է որոշում իր ընտրական համակարգը, որը պետք է հարգվի որպես ազգային մակարդակով որոշվող խնդիր[95]: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը 2012 թվականի մարտի 13-ի՝ Սակոմանոն և այլոք ընդդեմ Իտալիայի գործով վճռում ընտրական համակարգ որոշելու հարցում ճանաչում է պետության հայեցողական լիազորության բավականին լայն շրջանակները[96]:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2-րդ հոդվածով սահմանվում է, որ ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով: ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածով նախատեսվում են ընտրական իրավունքը և հանրաքվեին մասնակցելու իրավունքը:

Ընտրությունները՝ որպես ժողովրդաիշխանության իրացման անմիջական ձև, առանցքային դերակատարություն ունեն յուրաքանչյուր ժողովրդավարական պետության և հասարակության կյանքում: Քաղաքացիական հասարակության և իրավական պետության կազմավորման գործում շատ կարևոր է ժողովրդի՝ ընտրությունների միջոցով արտահայտված կամքը: Ընտրությունները համարվում են պետական և հասարակական կյանքի ժողովրդավարականության արտահայտումը: Ընտրությունների միջոցով ժողովուրդը հնարավորություն է ստանում անմիջականորեն մասնակցելու պետության կառավարման գործընթացին: Այս իսկ պատճառով էական նշանակություն ունի ներպետական օրենսդրությունում ոչ միայն միջազգային չափանիշներին համապատասխան իրավական կարգավորումներ ամրագրելը, այլև այդ կարգավորումներն անշեղորեն կյանքի կոչելը:

Հայաստանի Հանրապետությունում 2017 թվականի ընթացքում տեղի ունեցան ընտրական գործընթացներ: Թե՛ քվեարկության օրերին, թե՛ նախընտրական և հետընտրական գործընթացներում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմն աշխատել է արտակարգ ռեժիմով՝ հետևելով և արձագանքելով մարդու իրավունքների

---

[94] ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե, 1981-2014թթ. 25-րդ մեկնաբանություն, 21-րդ պարբերություն:

[95] Վենետիկի հանձնաժողով, 2002թ., Ուղենիշներ, բաժին 2.4-րդ:

[96] Տե՛ս Սակոմաննոն և այլք ընդդեմ Իտալիայի (Saccomanno and Others v. Italy) գործով 1999 թվականի մայիսի 12-ի վճիռը, գանգատ թիվ 36719/97, կետ 51:

ենթադրյալ խախտումների, իրավունքների իրացման խնդիրների առաջացման, լրագրողների աշխատանքային գործունեության խոչընդոտման դեպքերին: Իրականացվել է համագործակցություն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, ինչպես նաև իրավապահ մարմինների, մասնավորապես՝ ՀՀ դատախազության հետ:

Դատախազության հրավերով Ազգային ժողովի ընտրությունների շրջանակում տեղի ունեցած աշխատանքային հանդիպմանը մասնակցել է Պաշտպանի ներկայացուցիչը: Հանդիպմանը ներկայացվել են Պաշտպանին հասցեագրվող՝ քրեական վարույթի շրջանակներում ստուգման ենթակա բողոքներն ու տեղեկությունները:

Չնայած նրան, որ 2016 թվականին ընդունված նոր Ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքով լուծում են ստացել համապետական ընտրությունների նախապատրաստման, կազմակերպման, անցկացման և ամփոփման փուլերին առնչվող մի շարք խնդիրներ, ներդրվել են համապետական ընտրությունների վերաբերյալ դիտորդական առաքելություն իրականացրած ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի վերջնական զեկույցներում ներկայացված առաջարկությունները, հանձնարարականները, ինչպես նաև համապետական ընտրությունների արդյունքներով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումներն՝ ուղղված ընտրական օրենսգրքի բարելավմանը, այնուամենայնիվ հարկ է փաստել, որ ոլորտում դեռևս առկա են մի շարք խնդիրներ:

1. Ազգային ժողովի ընտրություններ

2017 թվականի ապրիլի 2-ի Ազգային ժողովի ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին օրենքով վերապահված լիազորությունների շրջանակներում ընտրական իրավունքների երաշխավորումն ու արդյունավետ պաշտպանությունն ապահովելու նպատակով Մարդու իրավունքների պաշտպանի որոշմամբ 2017 թվականի փետրվարի 27-ին ստեղծվել է աշխատանքային խումբ: Աշխատանքային խմբում ընդգրկվել են ինչպես Երևանի, այնպես էլ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի մարզային ստորաբաժանումների ներկայացուցիչները:

Աշխատանքային խմբի գործառույթներ են սահմանվել մշտադիտարկման սկզբունքով ընտրական իրավունքների ենթադրյալ խախտումների վերաբերյալ զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների ուսումնասիրումը, բանավոր և գրավոր բողոքների պատշաճ քննարկման ապահովումը, անհրաժեշտության դեպքում արագ արձագանքման իրականացումը, ինչպես նաև քաղաքացիների ընդունելության և իրավական խորհրդատվության տրամադրման աշխատանքների իրականացման ապահովումը: Աշխատանքային խմբին հանձնարարվել է նաև բողոքների և հրապարակումների քննարկման ընթացքում հատուկ և առանձին ուսումնասիրության ենթարկել դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների իրավունքների պաշտպանությանն առնչվող հարցերը, ինչպես նաև սերտ համագործակցել ընտրական գործընթացին ներգրավված՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների, ինչպես նաև դիտորդական առաքելություն իրականացնող տեղական ու միջազգային կազմակերպությունների հետ: Մասնավորապես, տեղի են ունեցել քննարկումներ

Հայաստանում ԵՄ պատվիրակության հատուկ ներկայացուցչի, ԵԱՀԿ ներկայացուցիչների և այլ գործընկերների հետ:

Պաշտպանի աշխատակազմի կողմից ընտրական գործընթացների դիտարկման արդյունքներով արձանագրվել են մտահոգիչ տեղեկություններ ու դեպքեր ընտրակաշառքի բաժանման, վարչական ռեսուրսի չարաշահման վերաբերյալ: Պաշտպանի աշխատակազմի ուսումնասիրություններով արձանագրվել են նաև հանրային ծառայողների, այդ թվում՝ հանրակրթական դպրոցների աշխատակիցների վրա ճնշումներ գործադրելու (այս մասին մանրամասն խոսվում է սույն բաժնի հետագա շարադրանքում), ինչպես նաև ընտրական գործընթացի մասնակցի օգտին քվեարկելու նպատակով ընտրողներին ահաբեկելու դեպքեր: Համապատասխան ահազանգեր են ստացվել Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի թեժ գծին: Այս մասին եղել են նաև հրապարակումներ զանգվածային լրատվության միջոցներով, քաղաքացիական հասարակության և ընտրական գործընթացի մասնակից ընդդիմադիր գործիչների կողմից:

Ընտրական գործընթացում արձանագրված այս իրողություններն բացասական ազդեցություն ունեցան ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության տեսանկյունից, ինչպես նաև առաջ բերեցին մտահոգություններ ընտրողների կողմից իրենց կամքի ազատ արտահայտման վերաբերյալ:

Պաշտպանի աշխատակազմն ուսումնասիրել է ընտրակաշառքի վերաբերյալ շուրջ 1000 հրապարակում, որոնցից ավելի քան 100 հրապարակում ուղարկվել է քրեական հետապնդման մարմիններին[97]:

Խորհրդարանական ընտրությունների հետ կապված խնդիրներ են արձանագրվել ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության համապատասխան զեկույցում[98]: Զեկույցը, մասնավորապես, անդրադարձել է ընտրակաշառքների դեպքերի վերաբերյալ ընտրողների հաղորդումներին: Ըստ զեկույցի՝ ողջ երկրի տարածքում եղել են որոշ կուսակցությունների օգտին ընտրակաշառք բաժանելու դեպքերի մասին համատարած պնդումներ, և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն բազմաթիվ արժանահավատ հաղորդումներ է ստացել անմիջապես ընտրողներից: Խնդիրը շարունակվել է նաև ընտրությունների օրը, երբ լրատվամիջոցները հաղորդեցին և ԸՄԴԱ-ն ականատես եղավ, թե ինչպես են քվեարկելուց առաջ ընտրողները մեծաթիվ խմբերով այցելում կուսակցությունների նախընտրական շտաբեր: Զեկույցում նշվում է, որ ընտրակաշառքի ինստիտուտի նկատմամբ թողտվությունը հակասում է ԵԱՀԿ Ստամբուլի փաստաթղթի 33-րդ պարբերությանը, ըստ որի «անդամ պետությունները պարտավորվում են կրկնապատկել կոռուպցիայի և դրան նպաստող պայմանների դեմ պայքարին ուղղված ջանքերը և խթանել լավ կառավարման պրակտիկայի ու հանրային արդարության համար դրական միջավայրի ստեղծումը»:

Ավելին, ըստ զեկույցի՝ որոշ ընդդիմադիր կուսակցություններ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին հայտնել են, որ իրենց աջակիցների վրա ճնշումներ են գործադրվել իրենց հավաքներին չհաճախելու համար:

Ըստ զեկույցի՝ ձայների առքուվաճառքի դեպքերի մասին հաղորդում տալուց համընդհանուր խուսափողականությունը շարունակվել է: Քաղաքացիների կողմից եղել է ընտրակաշառքի մասին միայն երկու հաղորդում իրավապահ մարմիններին: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ զրուցակիցներից շատերը նշեցին, որ հանրության մոտ առկա է ընտրախախտումների մասին հաղորդում տալու հարցում համընդհանուր

[97] https://www.aysor.am/am/news/2017/04/13/%D4%B8%D5%B6%D5%BF%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B7%D5%A1%D5%BC%D6%84-%D5%84%D4%BB%D5%8A/1244629

[98] https://www.osce.org/hy/odihr/elections/armenia/333491?download=true

խուսափողականություն՝ բողոքների քննման համակարգի արդյունավետության նկատմամբ անվստահության և դատական, ընտրական վարչարարության համակարգերի ու իրավապահ մարմինների ոչ լիարժեք անկախության պատճառով:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի գնահատմամբ՝ նշված և ընտրություններին նախորդող մի շարք իրադարձություններ բացասական ազդեցություն ունեցան ընտրական գործընթացների նկատմամբ հանրային վստահության ձևավորման վրա: Ըստ զեկույցի՝ ընտրակաշառքի, ընտրողների նկատմամբ ճնշումների և ահաբեկումների մասին լայնատարած հաղորդումները, միասին վերցված, բացասաբար անդրադարձան քարոզարշավի վրա՝ նպաստելով ընտրական գործընթացի նկատմամբ հանրային ցածր վստահության խորացմանը: Դա, քվեարկության գաղտնիության պահպանման վերաբերյալ ընտրությունների օրը և դրանից հետո հնչած զգալի մտահոգությունների հետ միասին (տե՛ս՝ Հետընտրական զարգացումներ), կասկածներ հարուցեցին առ այն, թե արդյոք ընտրողները կարողացել են իրենց կամքն արտահայտել ազատ և առանց հաշվեհարդարից վախենալու, ինչպես պահանջում է 1990թ.-ի ԵԱՀԿ Կոպենհագենի փաստաթղթի 7.7-րդ պարբերությունը:

Վերոգրյալից բացի, Պաշտպանի աշխատակազմն արձանագրել է լրագրողների մասնագիտական աշխատանքը խոչընդոտելու դեպքեր: Լրագրողները կատարում են անփոխարինելի հանրային գործառույթ հատկապես այնպիսի կարևորագույն իրադարձության շրջանակում, ինչպիսին խորհրդարանական ընտրություններն են, որի միջոցով ձևավորվում է երկրի բարձրագույն ներկայացուցչական մարմինը: ***Ուստի, լրագրողների աշխատանքը պետք է լինի լիարժեք պաշտպանված՝ հանրությանը ընտրական գործընթացի, այդ թվում՝ խախտումների կամ ապօրինի այլ գործողությունների վերաբերյալ լիարժեք տեղեկությունների փոխանցումը երաշխավորելու նպատակով:***

Պաշտպանվածությունն իր հերթին պահանջում է լրագրողի աշխատանքի ցանկացած խոչընդոտի արագ արձագանք իրավապահ մարմինների կողմից: Սակայն դա էլ բավարար չէ: Անհրաժեշտ է ապահովել քրեական պատասխանատվության խիստ միջոցների կիրառումը լրագրողի մասնագիտական աշխատանքը խոչընդոտած անձի նկատմամբ՝ անկախ վերջինիս կարգավիճակից կամ որևէ այլ հանգամանքից: Պաշտպանի ուսումնասիրությունները վկայում են, որ ***լրագրողների մոտ առկա է արդարացի ընկալում այն մասին, որ պատասխանատվության մեխանիզմի բացակայության պատճառով է, որ ստեղծվում է անպատժելիության տպավորություն, ինչն էլ իր հերթին չի ունենում որևէ կանխարգելիչ ազդեցություն նման ապօրինությունները հետագայում կանխելու տեսանկյունից:*** Այս ամենը խնդրահարույց է հատկապես ընտրական գործընթացների տեսանկյունից, քանի որ լրագրողի մասնագիտական պաշտպանված աշխատանքը ընտրությունների նկատմամբ հանրային վստահության ձևավորման կարևոր բաղադրիչ է:

Համակարգային առումով երկրում պետք է ձևավորվի այնպիսի մթնոլորտ, որպեսզի լրագրողն ինքը զգա, որ պետության կողմից պաշտպանված է իր մասնագիտական աշխատանքի հանդեպ ցակացած ոտնձգությունից:

Ընտրական գործընթացի շրջանակներում Պաշտպանի աշխատակազմում գործող աշխատանքային խմբի իրականացրած մշտադիտարկման արդյունքում պարզվել է, որ զանգվածային լրատվության միջոցներով տեղեկություններ են հրապարակվել այն մասին,

որ չնայած օրենքի արգելքին[99], ընտրությունների նախապատրաստման ընթացքում ներգրավված են հանրակրթության բնագավառում գործող ուսումնական հաստատությունների աշխատակիցները՝ աշակերտների ծնողներին ցուցակագրելու, աշխատավայրում քարոզչություն իրականացնելու, աշխատանքից հեռացվելու սպառնալիքներ ներկայացնելու և այլ եղանակներով[100]:

Այս կապակցությամբ զանգվածային լրատվության միջոցներով հրապարակված տեղեկություններն ամփոփվել և անհապաղ ներկայացվել են ՀՀ կրթության և գիտության նախարարություն: Ըստ Նախարարության տվյալների՝ 2017 թվականի փետրվարի 22-ին շրջաբերական գրություն է ուղարկվել Երևանի քաղաքապետարան, ՀՀ մարզպետարաններ և ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության դպրոցներ, որով հանձնարարվել է գործնականում բացառել ուսումնական հաստատություններում քաղաքական գործունեության կամ քարոզչության իրականացումը, ինչպես նաև ուսումնական հաստատությունների ղեկավար և մանկավարժական կազմին՝ իրենց լիազորություններն իրականացնելիս բացառել նախընտրական քարոզչությունը և ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածելը:

Չնայած նշյալի՝ մամուլում առկա տվյալները ցույց են տվել, որ խնդիրները այս ոլորտում շարունակվել են: Այսպես, 2017 թվականի մարտի 24-ին «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպությունը տարածել է «ՀՀԿ-ն չարաշահում է վարչական ռեսուրսը դպրոցներում ու մանկապարտեզներում (114 ձայնագրություններ)» վերտառությամբ հրապարակումը[101]: Նույն օրը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը հանդես է եկել հրապարակային հայտարարությամբ և նշել. «Անհանգստացնող է, որ քաղաքացիական հասարակության կառույցի հրապարակած ուսումնասիրությունը և ձայնագրությունները վերաբերում են հանրակրթական հաստատություններին ու դրանց տնօրեններին: Այս հանգամանքը հատկապես կարևոր է այն պայմաններում, երբ Հայաստանի Հանրապետությունում ընթանում է կարևորագույն ժողովրդավարական գործընթաց, որի նկատմամբ հանրային վստահությունն ունի հիմնարար նշանակություն: Սա առաջնահերթ նշանակում է, որ այդ բոլոր տվյալները պետք է դառնան մանրամասն ստուգման առարկա օրենքով նախատեսված ընթացակարգի շրջանակում՝ հնարավոր ամենասեղմ ժամկետներում: Այդ ընթացակարգը պետք է լինի թափանցիկ, իսկ արդյունքը՝ հրապարակային: Հատկապես հաշվի առնելով, որ հարցն առնչվում է դպրոցներին և մանկապարտեզներին՝ բոլոր գնահատականները պետք է հիմնված լինեն արդյունքի վրա:»[102]:

Նշված դեպքի կապակցությամբ ՀՀ կրթության և գիտության նախարարության ներկայացրած տեղեկությունների համաձայն՝ նշյալ նյութի հետ կապված 2017 թվականի մարտի 27-ի շրջաբերականով ուսումնական հաստատությունների ղեկավար և

---

[99] Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի համաձայն արգելվում է նախընտրական քարոզչություն կատարել և ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև պետական և համայնքային ծառայողներին, ուսումնական հաստատությունների մանկավարժական կազմի աշխատողներին՝ իրենց լիազորություններն իրականացնելիս:

[100] Նշված տեղեկություններն հրապարակվել են և հասանելի են հետևյալ հղումներով՝ http://www.aravot.am/2017/02/20/857401/,http://hayeli.am/article/990616,http://hraparak.am/?p=139408&l=am/:

[101] https://sut.am/archives/803

[102] Հանրակրթական դպրոցների ու մանկապարտեզների տնօրենների հետ կապվող հեռախոսային խոսակցությունների ձայնագրությունների վերաբերյալ հայտարարություն, http://pashtpan.am/media/tnorenner.html

մանկավարժական կազմից, հիմք ընդունելով ՀՀ ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 5-րդ մասի և «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջները, մեկ անգամ ևս պահանջվել է իրենց լիազորություններն իրականացնելիս բացառել նախընտրական քարոզչությունը և ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածելը: Բացի այդ, 2017 թվականի մարտի 27-ին ՀՀ կրթության և գիտության նախարարի պարտականությունները կատարող նախարարի տեղակալը հանդիպել է ավագ դպրոցների այն տնօրենների հետ, ում անունները հիշատակվել են «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ի հրապարակած նյութում: Նախարարի տեղակալը տեղեկացրել է, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում հարուցվել է վարչական վարույթ, որի շրջանակում ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության ավագ դպրոցների վերոնշյալ աշխատակիցներին առնչվող ձայնագրությունների կապակցությամբ նրանք պետք է բացատրություններ ներկայացնեն ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով:

Միաժամանակ, ըստ ՀՀ գլխավոր դատախազության տվյալների՝ ստեղծվել է աշխատանքային խումբ, որն ուսումնասիրել է «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ի կողմից հրապարակած 114 դպրոցների և մանկապարտեզների տնօրենների հեռախոսային խոսակցությունների ձայնագրությունները: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ միայն Գյումրու թիվ 37 ավագ դպրոցի տնօրենի հեռախոսային խոսակցության ձայնագրությունն է պարունակել առերևույթ հանցագործության հատկանիշներ:

Ընտրությունների նկատմամբ հանրային վստահության ձևավորման վրա բացասական ազդեցություն ունեցավ նաև գործատուների կողմից աշխատողների նկատմամբ ճնշումների վերաբերյալ տեղեկությունների առկայությունը: Այսպես, 2017 թվականի ապրիլի 14-ին մամուլում հրապարակել է ձայնագրություն, որտեղ «ՍԱՍ» գրուպի ղեկավարներից մեկը նախընտրական ժողովի էր հրավիրել ընկերության աշխատակիցներին, որի շրջանակներում աշխատանքից հեռացնելու սպառնալիքի և հարկադրանքի միջոցով ներգործում էր աշխատակիցների ընտրական իրավունքի իրացման վրա[103]:

Մարդու իրավունքների պաշտպանը, նշված դեպքին անհապաղ արձագանքելով, իր մտահոգությունն է հայտնել ձայնագրության մեջ առկա հարկադրանքի ու սպառնալիքի դրսևորումների վերաբերյալ, որոնք կապվում են քաղաքացիների ընտրական իրավունքների իրացման ու նրանց նկատմամբ ճնշման հետ: Հրապարակային հայտարարությամբ նշվել է, որ քրեական վարույթի շրջանակում պետք է այս հարցում երաշխավորել նաև ձայնագրության մեջ առկա անձանց պաշտպանությունը: Նշվել է նաև, որ այդ պաշտպանության հարցում հնարավոր ցանկացած խախտում բացառելու նպատակով Մարդու իրավունքների պաշտպանն իր իրավասության սահմաններում կձեռնարկի օրենքով նախատեսված համապատասխան միջոցներ՝ երաշխավորելով Պաշտպանին այդ հարցով հնարավոր դիմողների գաղտնիությունը:

ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարությամբ՝ հրապարակված ձայնագրությունն ուղարկվել է ՀՀ հատուկ քննչական ծառայություն՝ դրանում առկա հանգամանքները ստուգելու նպատակով[104]: Դեպքի առթիվ Հատուկ քննչական ծառայությունում քրեական

103 http://www.a1plus.am/1535829.html
[104] http://yerkirmedia.am/low/sas-hqc/

գործ է հարուցվել «Չորրորդ իշխանություն» թերթի հրապարակման հիման վրա նախապատրաստված նյութերով[105], որը հետագայում կարճվել է հանցակազմի բացակայության հիմքով[106]:

Ապրիլի 2-ին՝ ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների օրը, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը գործել է շուրջօրյա ռեժիմով և վաղ առավոտից աշխատանքային խմբի ներկայացուցիչներն աշխատել են Սյունիքի, Գեղարքունիքի, Լոռու և Շիրակի մարզերում, ինչպես նաև Երևան քաղաքում: Ամբողջ օրվա ընթացքում իրականացվել են քաղաքացիների ընդունելություններ, տրամադրվել են խորհրդատվություններ, իրականացվել են արագ արձագանքման աշխատանքներ: Աշխատակազմ ստացված ահազանգերը վերաբերել են ընտրատեղամասերում կուտակման, տեխնիկական միջոցների անսարքության, քվեարկության ընթացքի առցանց հեռարձակման խափանման, հաշմանդամություն ունեցող անձանց կողմից քվեարկությունը կատարելու հարմարությունների բացակայության, ընտրացուցակներում գրառումների, քվեաթերթիկների հաշվարկին պատգամավորության թեկնածուին և վստահված անձին չթույլատրելու, ընտրակաշառքների, ինչպես նաև քվեարկության վայրի հետ կապված հարցերին:

Մարդու իրավունքների պաշտպանի թեժ գծին ստացվել է հաշմանդամություն ունեցող անձանց քվեարկության համար անհրաժեշտ պայմանների բացակայության հետ կապված 5 կոնկրետ դեպքի վերաբերյալ ահազանգ, ինչպես նաև մեկ ընդհանուր բնույթի մտահոգություն: Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ հաշմանդամություն ունեցող անձինք ունեն հանրային կառավարմանը մասնակցելու, այդ թվում՝ ընտրելու և ընտրվելու իրավունք այնպես, ինչպես բոլոր քաղաքացիները[107]: Ըստ այդմ, Պաշտպանի աշխատակազմի և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համատեղ քննարկման արդյունքում ԿԸՀ-ի կողմից բոլոր տեղամասային ընտրական հանձնաժողովներին հանձնարարվել է հատուկ աջակցություն ցուցաբերել հաշմանդամություն ունեցող անձանց, որոնք այցելել են հարմարեցումներ չունեցող ընտրատեղամասեր: Բոլոր կոնկրետ դեպքերով քաղաքացիները տեղեկացվել են աջակցության հնարավորության մասին:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ուշադրության կենտրոնում է գտնվել նաև լրագրողների և դիտորդների աշխատանքի հնարավոր խոչընդոտների վերաբերյալ տեղեկատվությունը: Ողջ օրվա ընթացքում Պաշտպանի աշխատակազմն անընդհատ կապի մեջ է եղել Եվրոպական միության պատվիրակության ներկայացուցչի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական խմբի անդամների հետ, որոնց պարբերաբար ներկայացվել են վերը նշված տեղեկությունները:

Ուսումնասիրվել են ընտրական իրավունքի ենթադրյալ խախտումների վերաբերյալ՝ զանգվածային լրատվության միջոցներում, սոցիալական ցանցերում տեղ գտած շուրջ 850 հրապարակում, որոնցից 325-ով խախտման վերաբերյալ տվյալները չեն հաստատվել, իսկ 131-ը պարունակել է առերևույթ հանցագործության հատկանիշներ, որոնք ուղարկվել են քրեական հետապնդում իրականացնող մարմիններին: Շիրակի, Լոռու, Սյունիքի և Գեղարքունիքի մարզերին առնչվող 176 հրապարակման

[105] http://yerkirmedia.am/low/sas-zoxov-qreakan-gorc/
[106] http://www.yerkir.am/news/view/136082.html
[107] Մանրամասն տես սույն հաղորդման «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների» բաժնում

կապակցությամբ նախաձեռնվել են քննարկման ընթացակարգեր: Մասնավորապես, ուսումնասիրվել են Գեղարքունիքի մարզին վերաբերող 60, Շիրակի մարզին՝ 13, Սյունիքի մարզին՝ 53 և Լոռու մարզին առնչվող 50 հրապարակում և բանավոր բողոք: Համապատասխան աշխատանք է տարվել ընտրական հանձնաժողովների և ոստիկանության մարմինների հետ: Արդյունքում՝ արձանագրված խախտումներից 45-ով Գեղարքունիքում, 11-ով Շիրակում, 47-ով Սյունիքում և 21-ով Լոռիում բարձրացված հարցերը հաստատվել և ստացել են լուծում[108]:

Այսպես, «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության անդամը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ներկայացրել է տեղեկություն այն մասին, որ նույն նախաձեռնության մեկ այլ անդամի տարածքային ընտրական հանձնաժողովներից մեկում արգելում են ծանոթանալ հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող փաստաթղթերին: Օրենքը հստակ ամրագրում է այն բոլոր իրավունքները և պարտականությունները, որոնք ունեն դիտորդներն ընտրության ժամանակ: Այսպես, ՀՀ ընտրական օրենսգրքի 32-րդ հոդվածի համաձայն՝ դիտորդն ի թիվս այլնի իրավունք ունի նաև ծանոթանալ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, տարածքային ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին: Այս երաշխիքն իր հերթին միտված է ապահովել դիտորդի կողմից իր առաքելության անխափան իրականացումը: Ըստ այդմ, Պաշտպանի ներկայացուցիչների աջակցության արդյունքում դիտորդին հնարավորություն է տրվել ծանոթանալ համապատասխան փաստաթղթերին:

Մեկ այլ դեպքում, ՀՀ ԱԺ պատգամավորի թեկնածուն 2017 թվականի ապրիլի 2-ին զանգահարել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ և տեղեկացրել, տեղամասային կենտրոններից մեկի շուրջ կուտակումները վերացնելու համար դիմել է տեղում ծառայություն իրականացնող ոստիկաններին, սակայն վերջիններս իր բանավոր դիմումին ընթացք չեն տվել: Մինչդեռ, Ընտրական օրենսգրքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ արգելվում են քվեարկության օրը տեղամասային կենտրոնին հարող տարածքում մինչև 50 մետր շառավղով խմբերով հավաքվելը, տեղամասային կենտրոնի մուտքին հարող տարածքում մեքենաների կուտակումը: Ավելին, նախատեսվում է նաև, որ հոդվածի նշված մասի դրույթների կատարումը, ինչպես նաև այդ տարածքում հասարակական կարգի պահպանումն ապահովում են տեղամասային կենտրոնում ծառայություն իրականացնող ոստիկանության ծառայողները՝ անկախ ընտրական հանձնաժողովի պահանջից: Միաժամանակ, ըստ ոստիկանության ծառայողի՝ կուտակումները կապված են եղել նրա հետ, որ երկու տեղամասային կենտրոններ տեղակայված են նույն շենքում: Ոստիկանության լրացուցիչ ուժերի ներկայանալու արդյունքում խնդիրը կարգավորվել է:

Դեպքերից մեկով պատգամավորի թեկնածու առաջադրված անձը տեղեկացրել է, որ ձայների հաշվարկին ներկա գտնվելու համար ցանկանում է մուտք գործել ընտրատեղամասային կենտրոն, սակայն հանձնաժողովի անդամներն արգելել են: Մինչդեռ, Ընտրական օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քվեարկության արդյունքների ամփոփման նիստին, բացի ընտրական հանձնաժողովի նիստին ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանցից, իրավունք ունի ներկա գտնվելու նաև թեկնածուն:

[108] Ամփոփիչ հաղորդում ապրիլի 2-ին տեղի ունեցած քվեարկության ընթացքում Պաշտպանի աշխատակազմի կատարած աշխատանքի վերաբերյալ, http://pashtpan.am/media/ampopoich-haghordum.html

Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների աջակցության արդյունքում հարցը ստացել է դրական լուծում: Ընտրատեղամասային կենտրոն մուտք գործելու արգելքի վերաբերյալ ահազանգ է ստացվել նաև վստահված անձից, որի մուտքն արգելվել է այն պատճառաբանությամբ, որ նույն կուսակցության վստահված անձանցից մեկն արդեն տեղամասային կենտրոնում է, մինչդեռ օրենքը նման սահմանափակում չի նախատեսում: Ահազանգից հետո Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների աջակցության արդյունքում հարցը ստացել է դրական լուծում. վստահված անձը հնարավորություն է ունեցել գտնվել ընտրատեղամասային կենտրոնում:

Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ խախտումների վերաբերյալ հաղորդումներ են ստացվել նաև ՀՀ գլխավոր դատախազությունում, որի տրամադրած տեղեկությունների համաձայն՝ դատախազության աշխատանքային խմբի կողմից ստուգման առարկա է հանդիսացել Ազգային ժողովի ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում արձանագրված 923 ընտրական իրավախախտումների վերաբերյալ զանգվածային լրատվամիջոցների հրապարակումներ և ՀՀ ոստիկանության տարածքային բաժիններում ստացված նույն բնույթի ահազանգեր:

ՀՀ դատախազության պարզաբանմամբ, նշված բոլոր դեպքերի ուսումնասիրության ու դրանց առթիվ կատարված քննության արդյունքում 13 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ 12 քրեական գործ ուղարկվել է դատարան, որոնցից 10-ով արդեն կայացվել է մեղադրական դատավճիռ, 8-ով՝ անձի նկատմամբ որպես պատիժ նշանակվել է որոշակի ժամկետով ազատազրկում և ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ նշանակվել է որոշակի ժամկետներով փորձաշրջան: Նշված դատավճիռներից հինգի դեմ հսկող դատախազների կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման մասով բերվել է վերաքննիչ բողոք, որոնցից մեկը վերաքննիչ դատարանի կողմից մերժվել է, մեկով վերաքննիչ դատարանը կայացրել է արդարացման դատավճիռ: Երեք վերաքննիչ բողոք դեռևս գտնվում է քննության փուլում: Մեկ գործով մեկ անձի նկատմամբ նշանակվել է տուգանք, մեկ գործով մեկ անձ դատապարտվել է 2 տարի ազատազրկման, իսկ երկու քրեական գործով դատաքննությունը դեռևս շարունակվում է:

2. Երևանի ավագանու ընտրություններ

2017 թվականի մայիսի 14-ին տեղի ունեցան Երևանի ավագանու ընտրությունները: Այս անգամ ևս Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը հետևել է ընտրական ողջ գործընթացին: Ստացված ահազանգերի և հրապարակային աղբյուրներից ստացված տեղեկությունների հիման վրա իրականացվել են դեպքերի ուսումնասիրություններ և ըստ ուսումնասիրության արդյունքների ձեռք են առավել համապատասխան միջոցներ:

«Հայկական ժամանակ» օրաթերթի մայիսի 12-ի հրապարակման համաձայն՝ մայիսի 11-ին, երեկոյան, բռնություն է կիրառվել թերթի լրագրող Աննա Զախարյանի նկատմամբ: Ըստ հրապարակված տեղեկությունների՝ Արարատյան զանգվածի Կուրղինյան փողոցում գտնվող քաղաքապետի թեկնածուի նախընտրական շտաբում ընտրողներին ընտրակաշառք և նշումով քվեաթերթիկներ են բաժանվել, և տեղում տեսանկարահանում անելիս՝ խոչընդոտվել է իր մասնագիտական օրինական գործունեությունը. խլել են հեռախոսը, ջնջել դրա պարունակությունը: Ըստ Գլխավոր դատախազության ներկայացրած տվյալների՝ Երևան քաղաքի վարչության Մալաթիայի

բաժնում տրված հաղորդման հիման վրա ՀՀ ոստիկանության նույն բաժնում նախապատրաստվել են նյութեր, կատարվել են անհրաժեշտ անհետաձգելի քննչական, դատավարական գործողություններ: Նախապատրաստված նյութերի արդյունքում Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների դատախազության դատախազի կողմից ԶԼՄ-ի ներկայացուցչի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու և առերևույթ ընտրակաշառք տալու դեպքերի առթիվ 16.05.2017 թվականի ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածի 1-ին մասի և 154.2-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ, որի նախաքննությունը հանձնարարվել է ՀՀ հատուկ քննչական ծառայությանը:

Նույն նախընտրական շտաբում ընտրակաշառք բաժանելու և իր վստահված անձին մարմնական վնասվածք հասցնելու, հեռախոսը կոտրելու վերաբերյալ հրապարակային տեղեկություններ է տարածել նաև «Ելք» դաշինքի քաղաքապետի թեկնածու Ն. Փաշինյանը: Խնդրահարույց համարելով լրագրողի մասնագիտական պարտականությունների կատարմանը խոչընդոտելը կամ լրագրողի նկատմամբ բռնություն գործադրելը՝ հրապարակված տեղեկությունների հիման վրա ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում սկսվել է սեփական նախաձեռնությամբ հարցի քննարկման ընթացակարգ: Այդ տեղեկություններն ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազություն՝ քրեական վարույթ նախաձեռնելու հարցը քննարկելու և լուծելու նպատակով: Ըստ Գլխավոր դատախազության տվյալների՝ ՀՀ հատուկ քննչական ծառայությանը հանձնարարվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածների կարգով նախապատրաստել նյութեր: Հետագայում նյութերի առնչությամբ հարուցված քրեական գործը կարճվել է՝ հանցակազմի բացակայության պատճառով[109]:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում մանրամասն ուսումնասիրվել են «Հանրապետական» կուսակցության քաղաքապետի թեկնածուի՝ Երևանի Ավան վարչական շրջանում գտնվող նախընտրական շտաբում Ազգային ժողովի պատգամավոր, «Երկիր Ծիրանի» կուսակցության քաղաքապետի թեկնածու Զարուհի Փոստանջյանի մասնակցությամբ միջադեպն արձանագրած տեսանյութերը: Մանրամասն ուսումնասիրվել են հատկապես Ոստիկանության ծառայողների գործողությունները միջադեպի ընթացքում՝ կապված Զարուհի Փոստանջյանի նկատմամբ վերաբերմունքի, նրան բերման ենթարկելու փորձի հետ: Ոստիկանության ծառայողների գործողություններին վերաբերող բոլոր նյութերը Պաշտպանի աշխատակազմում ամփոփվել են և ուղարկվել Ոստիկանություն՝ համապատասխան վարույթ սկսելու պահանջով: Միաժամանակ, ըստ Ոստիկանության պատասխանի՝ ոստիկանության ծառայողների գործողությունների առնչությամբ կարգապահական խախտումների վերաբերյալ տեղեկություններ ձեռք չեն բերվել, ուստի ծառայողական քննության արդյունքները թողնվել են անհետևանք: Գրություն է հասցեագրվել նաև Հատուկ քննչական ծառայություն և ՀՀ Գլխավոր դատախազություն: Ըստ ծառայության տրամադրած տվյալների՝ դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ: Գլխավոր դատախազության տրամադրած տվյալների համաձայն՝ 2017 թվականի սեպտեմբերի 17-ին որոշում է կայացվել նշված քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին՝ հանցակազմերի բացակայության հիմքով:

[109] https://www.azatutyun.am/a/28656322.html, https://www.azatutyun.am/a/28656438.html, https://factor.am/11295.html,

Առհասարակ և այս դեպքում ևս ընտրական գործընթացների շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը մշտապես հայտարարել է, որ Ոստիկանության ծառայողները պարտավոր են հարգել մարդու իրավունքները, ցուցաբերել զսպվածություն ցանկացած քաղաքացու և հատկապես քաղաքական գործընթացի մասնակցի հետ շփման ընթացքում:

Քվեարկության օրվա ընթացքում ստացվել են նաև ահազանգեր՝ կապված քվեարկության կազմակերպման և անցկացման՝ օրենքով սահմանված ընթացակարգերին: Բոլոր դեպքերում քաղաքացիներին տրամադրվել է իրավաբանական խորհրդատվություն:

Միաժամանակ, ուսումնասիրվել է ընտրական իրավունքի ենթադրյալ խախտումների վերաբերյալ զանգվածային լրատվության միջոցներում, սոցիալական ցանցերում տեղ գտած 113 հրապարակում: Հրապարակումները վերաբերել են ընտրատեղամասերում և ընտրական շտաբերում կուտակումներին, տեխնիկական միջոցների անսարքության, քվեարկության ընթացքի առցանց հեռարձակման խափանման, ընտրացուցակներում գրառումների, ընտրատեղամասերի կահավորման, ընտրողներին կաշառք բաժանելու, քվեարկության գաղտնիության, ինչպես նաև դրա կազմակերպման և անցկացման հետ կապված հարցերին:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից այս դեպքում ևս հատկապես ուշադրությամբ ուսումնասիրել է լրագրողների և դիտորդների աշխատանքի հնարավոր խոչընդոտների վերաբերյալ տեղեկատվությունը:

Մասնավորապես՝ դիտորդ Վ. Գասպարիի նկատմամբ բռնություն գործադրելու, «www.azatutyun.am», «www.hraparak.am» լրատվամիջոցների լրագրողներ Տ. Խաչատրյանի, Ս. Գաբրիելյանի և Ս. Ադամյանի, ինչպես նաև լրագրողների և դիտորդների գործունեությանը խոչընդոտելու վերաբերյալ առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակող բոլոր տվյալներն ուղարկվել են քրեական հետապնդում իրականացնող մարմիններին: Ըստ Գլխավոր դատախազության տվյալների՝ մամուլի բոլոր 14 հրապարակումները ՀՀ գլխավոր դատախազության աշխատանքային խմբի կողմից ուսումնասիրվել և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածների կարգով նյութեր նախապատրաստելու հանձնարարությամբ ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության, ՀՀ քննչական կոմիտեի տարածքային բաժիններ և ՀՀ հատուկ քննչական ծառայություն են ուղարկվել 2017 թվականի մայիսի 14-ին:

3. Համայնքների ղեկավարների արտահերթ ընտրություններ

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների օրը Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կենտրոնական և մարզային ստորաբաժանումներն ուսումնասիրել են ընտրական իրավունքի ենթադրյալ խախտումների վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև աշխատանքային խմբեր են գործուղվել մարզեր:

Ուսումնասիրվել է զանգվածային լրատվության միջոցներում, սոցիալական ցանցերում տեղ գտած՝ ընտրություններին առնչվող 52 հրապարակում: Դրանք վերաբերել են տեղամասային կենտրոններին հարող տարածքում խմբերով հավաքվելուն, մեքենաների կուտակումներին, քվեարկության գաղտնիությանը, ընտրողներին կաշառք

բաժանելուն, քաղաքացիներին ուղղորդելու դեպքերին, ընտրատեղամասերի կահավորման, ինչպես նաև ընտրությունների կազմակերպման և անցկացման հետ կապված հարցերին:

Ընտրախախտումների վերաբերյալ արձանագրված դեպքերից 16-ով բարձրացված հարցերը հաստատվել են և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հետ համատեղ աշխատանքի արդյունքում արագացված ընթացակարգով ստացել են լուծում: Որոշ դեպքերում տեղամասային կենտրոններում վերացվել են նաև մարդկանց և մեքենաների կուտակումները:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմն առանձին ուսումնասիրել է նաև լրագրողների և դիտորդների աշխատանքի հնարավոր խոչընդոտների վերաբերյալ տեղեկությունները: Թեժ գծին ստացված 2 բանավոր բողոքներից 1-ը վերաբերել է լրագրողական տեղեկատվություն հայցելուն, մյուսը՝ լրագրողի մասնագիտական գործունեությանը խոչընդոտելուն:

Այդ առումով, մասնավորապես, «ՑԱՅԳ» հեռուստաընկերության «Այսօր» լրատվականի նկարահանող խմբի աշխատանքներին խոչընդոտելու վերաբերյալ[110] տվյալները քրեական դատավարության շրջանակում ստուգման համար ուղարկվել են քրեական հետապնդում իրականացնող մարմնին: Ի պատասխան՝ ՀՀ գլխավոր դատախազությունից հայտնել են, որ Շիրակի մարզի Մարմաշեն գյուղում տեղակայված թիվ 30/08 ընտրատեղամասի մոտ «ՑԱՅԳ» հեռուստաընկերության ներկայացուցիչների լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու դեպքի առթիվ 2017 թվականի նոյեմբերի 8-ին ՀՀ Շիրակի մարզի դատախազությունում ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է քրեական գործ, որով խոչընդոտող անձը ճանաչվել է մեղավոր և նշանակվել է պատիժ[111]:

Ընտրական ցանկացած գործընթացի հետ կապված՝ պետք է սկզբունքորեն ամրագրել, որ ցանկացած իրավախախտման վերաբերյալ տեղեկություն պետք է ստանա հնարավորինս արագ արձագանք: Պետք է նախաձեռնվի պատշաճ քննություն արագացման սկզբունքով այնպես, որ իրավախախտում կատարած ցանկացած անձ, օրենքին համապատասխան, ենթարկվի խիստ պատասխանատվության՝ անկախ կատարողի կարգավիճակից, իրավախախտումը կատարելու վայրից և այլն: Միայն այս սկզբունքով աշխատանքը կունենա կանխարգելիչ նշանակություն և կնպաստի նաև ընտրական գործընթացի հանդեպ հանրային վստահության ամրապնդմանը:

[110] http://tsayg.am/qaxaqakanutyun/21814-ss-gnc-bse-l-p.html
[111] http://www.datalex.am/?app=AppCaseSearch&page=default&tab=criminal

ԲԱԺԻՆ 7. ԿԱՐԾԻՔԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

1. Լրագրողի մասնագիտական գործունեության երաշխիքները

Կարծիքի արտահայտման ազատության երաշխավորումն ու լրագրողի գործունեության պաշտպանվածությունը ժողովրդավարական հասարակությունում ունի կարևորագույն նշանակություն:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2016 թվականի ապրիլի 13-ի «Լրագրողական գործունեության և լրագրողների ու մամուլի մասնակիցների ապահովության պաշտպանության մասին» թիվ CM/Rec(2016)4[1] հանձնարարականը սահմանում է, որ **խոսքի ազատության համար բարենպաստ միջավայրը պետք է ունենա մի շարք առանցքային հատկանիշներ, որոնք համակցության մեջ խոսքի և տեղեկատվության ազատության և ակտիվ հանրային բանավեճերի զարգացման պայմաններ կստեղծեն: Տեղեկություններ ստանալու իրավունքը ներառում է տեղեկությունների հասանելիության իրավունքը: Հասարակությունն իրավունք ունի ստանալու հանրային հետաքրքրություն ներկայացնող տեղեկություններ և գաղափարներ, որոնք լրատվական գործունեություն իրականացնողները խնդիր ունեն տարածելու:** Տեղեկությունների հավաքագրումը լրագրողական գործունեության կարևոր նախապատրաստական քայլ է և մամուլի ազատության պաշտպանության ենթակա բաղկացուցիչ մասը: **Լրագրողների և մամուլի այլ ներկայացուցիչների մասնակցությունը հանրային իրավաչափ մտահոգության հարցերով հանրային բանավեճերին չպետք է խոչընդոտվի, օրինակ, տեղեկությունը հասանելի դարձնելու միջոցները ծանրաբեռնելով կամ կամայական սահմանափակումներով, որոնք կարող են դառնալ անուղղակի գրաքննության եղանակներ:**

Հանձնարարականի՝ հանրային բանավեճին նպաստելու սկզբունքն ամրագրող 30-րդ կետի համաձայն՝ ժողովրդավարական հասարակությունում լրագրողների և լրատվական ոլորտի այլ ներկայացուցիչների անխոչընդոտ գործունեությունն ապահովելու տեսանկյունից Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ վերջիններիս խոսքի ազատությունը պետք է լայնորեն պաշտպանված լինի: Այսպիսի պաշտպանությունը պետք է ընդգրկի նրանց գործունեության հետ գործառութային կապ ունեցող երաշխիքներ, որոնց թվում առանձնացված են տեղեկատվության աղբյուրի գաղտնիությունը, **լուրերի և տեղեկությունների հավաքման գործընթացի պաշտպանվածությունը**, խմբագրման ու ներկայացման ինքնավարությունը և այլն: Այս սկզբունքը ենթադրում է նաև, որ լրագրողի գործառնական կամ գործառութային ազատությունները, որոնք ներառում են լուրերը, տեղեկությունների հավաքումը, մշակումն ու տարածումը, անհրաժեշտ են լրագրողի խոսքի ազատությունը գործնական և արդյունավետ դարձնելու համար:

Հանձնարարականի «Սկզբունքներ» բաժնի 2-րդ կետի համաձայն՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված **խոսքի և տեղեկատվության ազատության իրավունքը ժողովրդավարական հասարակության առանցքային հիմքերից է, դրա առաջընթացի և**

յուրաքանչյուր անհատի զարգացման պայմաններից մեկը: Խոսքի ազատությունը կիրառելի է ոչ միայն ընդունելի, անվնաս կամ չեզոք տեղեկությունների կամ գաղափարների, այլև այնպիսի տեղեկությունների նկատմամբ, որոնք վիրավորում, ցնցում կամ անհանգստացնում են պետությանը կամ հասարակության որոշակի խմբին: Այդպիսով, խոսքի ազատությունը նպաստում է ողջամիտ հանրային բանավեճին, որն իր հերթին բազմակարծության, հանդուրժողականության վրա հիմնված ժողովրդավարական հասարակության նախադրյալ է: Լրագրողների ու մամուլի մասնակիցների այդ իրավունքին ցանկացած միջամտություն ունենում է սոցիալական հետևանքներ, քանի որ նման սահմանափակումը միջամտում է նաև տեղեկություններ փնտրելու և ստանալու այլոց իրավունքին ու հանրային բանավեճին:

Միևնույն ժամանակ, Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ **խոսքի ազատության իրավունքի իրացումը ենթադրում է նաև պարտականություններ և պատասխանատվություն: Լրատվական գործունեության տեսանկյունից այդպիսի պարտականություն է բարեխիղճ գործելակերպը՝ ուղղված լրագրողական էթիկայի սկզբունքների պահպանմամբ հստակ և հավաստի տեղեկությունների տրամադրմանը**[112]:

Այսպիսով, միջազգային իրավաբանությունը վկայում է, որ լրագրողներն ու լրատվության ոլորտի ներկայացուցիչները կարևոր դեր ունեն ժողովրդավարական հասարակությունում հանրային բանավեճերի և որոշումների կայացման գործընթացներում՝ իբրև հանրային կամ սոցիալական դիտորդներ (watchdogs) հանդես գալու և տեղեկատվության ու գաղափարների փոխանակման, դրանց քննարկման ընդհանուր հարթակներ ստեղծելու միջոցով:

Հատկանշական է, որ կարծիքի արտահայտման ազատության և լրագրողի գործունեության կարևորության հաշվառմամբ՝Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակել է լրատավական գործունեություն իրականացնողի՝քրեակատարողական հիմնարկ մուտքի իրավունքի, ինչպես նաև անձնական տվյալներ պարունակող տեղեկություններ ստանալու իրավունքի և այդ առնչությամբ պետական մարմնի պարտականությունների իրավական չափանիշներ[113]:

Մասնավորապես, Մարդու իրավունքների պաշտպանն առաջ է քաշել այն ընդհանուր սկզբունքները, որոնք պետք է կիրառելի լինեն պետական մարմինների կողմից լրագրողական գործունեության շրջանակներում ներկայացված հարցերը քննարկելիս՝

- *լրագրողների ու լրատվության ոլորտի ներկայացուցիչների գործունեությունն ունի հանրային նշանակություն: Ժողովրդավարական հասարակությունում լրագրողն ունի կարևոր դերակատարություն հանրային բանավեճերին, տեղեկություններ փնտրելու և ստանալու հասարակության իրավունքին նպաստելու առումով.*
- *օրենքին համապատասխան և բարեխիղճ գործելու լրագրողի բարձր պատասխանատվությունն ու կոչումը պայմանավորում են պետության ներկայացուցչի պարտականությունն առաջնորդվելու լրագրողի օրինավորության, նրա բարեխղճության ու ազնվության կանխավարկածով.*
- *ցանկացած պետական գործառույթի իրականացման վերջնական հասցեատերը հասարակությունն է, որի յուրաքանչյուր անդամ պետք է հնարավորություն ունենա*

[112] https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectId=09000016806415d9#_ftn1
[113] http://pashtpan.am/images/Media_Personal_Data_30.03.2018.pdf
http://pashtpan.am/images/media_access_to_prison_13.03.2018_1_1.pdf

հետևելու այդ գործառույթի իրականացմանը՝ դրա վերաբերյալ սեփական պատկերացումները կամ գնահատականը ձևավորելու նպատակով.

- *հասարակական այդպիսի վերահսկողությունը կարող է արդյունավետ լինել, միայն եթե պետական մարմիններից յուրաքանչյուրը գործում է բավարար թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքների պահպանմամբ՝ իր առջև դրված խնդիրներին համապատասխան.*
- *պետական մարմնին հասցեագրված քաղաքացու ցանկացած դիմում կամ բողոք պետք է ստանա պատշաճ արձագանք: Հատկապես ուշադրության է արժանի, երբ պետական մարմնին դիմում է ներկայացվում լրագրողական մասնագիտական գործունեության շրջանակներում:*

Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ **լրագրողների գործունեությունը, որը նպատակ ունի նպաստելու հասարակության տեղեկացված լինելու իրավունքին և պետական մարմինների գործունեության հաշվետվողականությանը՝ դրանով իսկ ձեռք բերելով հանրային նշանակություն:**

Միևնույն ժամանակ, չափազանց կարևոր է հասարակությունում ընկալումների փոփոխությունը լրագրողի դերի, նրա գործունեության նշանակության, դրանով հետապնդվող նպատակի վերաբերյալ: Խոսքը վերաբերում է թե՛ հանրային ընկալմանն ու ակնկալիքներին, թե՛ պետական մարմինների՝ լրագրողների հետ աշխատանքի սկզբունքներին:

Այլ կերպ ասած, ***լրագրողի օրինական գործունեության վերջնանպատակը հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցող իրադարձությունների լուսաբանմամբ հանրային բանավեճերին ու երկրում առկա խնդիրների լուծմանը նպաստելն է: Այդ նպատակի ընդհանրությունն է, որ պետք է ընկած լինի պետական համակարգ-լրագրող-քաղաքացիական հասարակության փոխգործակցության հիմքում:***

Այս առումով էական նշանակություն ունեն նաև «պատասխանատու լրագրության» սկզբունքով և մասնագիտական մոտեցումներով առաջնորդվելու՝ լրատվական գործունեության ծավալման ներկա միտումները, որոնք կարևոր նախադրյալ են հանրային իշխանության կրողի հաշվետողականությունն ու լրագրողի բարեխղճության կանխավարկածով առաջնորդվելու պարտավորվածությունը բարձրացնելու առումով՝ դրանով իսկ երաշխավորելով լրագրողի անխոչընդոտ գործունեությունը:

Երկրում լրագրողական գործունեության ազատության և ըստ այդմ էլ **կարծիքի արտահայտման ազատության պաշտպանվածությունը ենթադրում է, որ պետք է առկա լինեն նաև լրագրողի անձնական անվտանգությունն ու տեղեկությունների պաշտպանվածությունն ապահովող բավարար օրենսդրական և գործնական երաշխիքներ:**

Լրագրողական գործունեությունը խոչընդոտելու ցանկացած դրսևորում անթույլատրելի է և պետք է պատշաճ իրավական գնահատական ստանա: Այդպիսի ցանկացած ոտնձգություն վտանգում է ոչ միայն լրագրողի իրավունքները, այլև իր բացասական ազդեցությունն է թողնում հասարակության տեղեկացվածության իրավունքի լիարժեք ապահովմանը:

Այս առումով, մտահոգիչ են 2017թ. ընթացքում զանգվածային լրատվության միջոցներով հրապարակված տեղեկությունները որոշ լրատվամիջոցների լրագրողների մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու վերաբերյալ:

Բոլոր դեպքերով Մարդու իրավունքների պաշտպանը սկսել է քննարկման ընթացակարգեր և բարձրացրել է յուրաքանչյուր դեպքի հանգամանքները քրեական վարույթի շրջանակներում ստուգելու անհրաժեշտության հարցը:

ՀՀ գլխավոր դատախազության ներկայացրած տվյալների համաձայն՝ 2017 թվականի ընթացքում լրագրողների մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելու դեպքերի վերաբերյալ ստացված 12 հաղորդումների և զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների հիման վրա հարուցվել է 6 քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածի հատկանիշներով (լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը) և 6 քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածի հատկանիշներով (ընտրական իրավունքի իրականացմանը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը): Նշված քրեական գործերից մեկով կայացվել է մեղադրական դատավճիռ, 2 քրեական գործով վարույթը կարճվել է՝ հանցակազմի բացակայության հիմքով, 1-ով՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ բացակայության հիմքերով և քրեական օրենսգրքի 72-րդ, 73-րդ և 74-րդ հոդվածներով նախատեսված հանգամանքների առկայության պայմաններով, իսկ 2 քրեական գործով նախաքննությունը շարունակվում է: Դեպքերից 5-ի քննությամբ որոշում է կայացվել քրեական գործի հարուցումը մերժելու մասին:

ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցված գործերից 3 քրեական գործ 4 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, որոնցից 3 անձի վերաբերյալ 2 քրեական գործի դատական քննությունն ընթացքի մեջ է, 1 քրեական գործով 1 անձ դատապարտվել է ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք կատարելու համար, իսկ 3 քրեական գործի վարույթը կարճվել է հանցակազմի բացակայության հիմքով:

Ասվածի հաշվառմամբ, Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ լրագրողների հետ փոխգործակցությունը պետք է լինի յուրաքանչյուր պետական մարմնի գործունեության սկզբունք, քանի որ դրանով ապահովվում է նաև հանրային իշխանության գործունեության հրապարակայնությունն ու թափանցիկությունը:

Միևնույն ժամանակ, լրագրողի գործունեությանը խոչընդոտելու դեպքերի բացառումը պետք է ապահովվի ինչպես կոնկրետ դեպքերի առնչությամբ պետության պատշաճ իրավական գնահատականով, այնպես էլ նույն պետական համակարգում լրագրողի բարեխղճության կանխավարկածի և վերջինիս գործունեության՝ իբրև հասարակական վերահսկողության կարևոր օղակի ընկալումների արմատացմամբ:

2. Էրոտիկ կադրերով կամ բռնություն պարունակող, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների ցուցադրումը ցերեկային ժամերին

Տարիներ շարունակ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի զեկույցներում բարձրաձայնվում է սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող, անչափահասների զարգացման վրա բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների՝ ցերեկային ժամերին հեռարձակման մասին: Խնդիրն այն է, որ նման հաղորդումները բացասաբար են

ազդում երեխաների զարգացման վրա՝ դրանով իսկ խախտելով երեխաների իրավունքները:

Այսպես, «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 17-րդ հոդվածն ամրագրում է, որ պետություններն ապահովում են երեխայի սոցիալական, հոգևոր և բարոյական բարեկեցությանն ու նրա ֆիզիկական և հոգեկան առողջ զարգացմանն ուղղված տեղեկատվության ու նյութերի մատչելիությունը և խրախուսում երեխայի բարեկեցությանը վնասող տեղեկատվությունից և նյութերից երեխային պաշտպանելու համապատասխան ուղենիշների զարգացումը: Այսինքն, կոնվենցիան վավերացրած պետությունները պետք է երեխաների զարգացմանն ուղղված քայլեր ձեռնարկեն՝ ըստ այդմ վերջիններիս ապահովագրելով իրենց հոգեկան առողջության վրա բացասաբար ազդող տեղեկություններից:

Վերոնշյալ բնույթի հաղորդումների՝ ցերեկային ժամերին ցուցադրման հնարավորությունն օրենսդրական բացի հետևանք է: «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ էրոտիկ բնույթի հեռուստառադիոհաղորդումները և սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերը, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումները կարող են եթեր հեռարձակվել ժամը 24.00-6.00-ն: Ըստ օրենքի՝ նման հաղորդումների որոշման չափորոշիչները սահմանվում են օրենքով: Ստացվում է, որ հենց օրենքով պետք է սահմանվեն այն չափորոշիչները, որոնցով պետք է գնահատվեն հեռարձակվող հաղորդումները և, ըստ այդմ, որոշվի դրանց՝ ցերեկային ժամերին ցուցադրության հնարավորությունը: Նշված չափորոշիչներն արդեն իսկ սահմանված են Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի (Հանձնաժողով) 2010 թվականի փետրվարի 15-ի որոշմամբ[114], սակայն անհրաժեշտ է վերջիններս ամրագրել համապատասխան օրենքում:

Անհրաժեշտ է ընդգծել, որ 2017 թվականին մշակվել է և ՀՀ կառավարության նոյեմբերի 16-ի նիստում հավանություն է տրվել «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» նոր օրենքի նախագծին և հարակից օրենսդրության մեջ լրացումներ կատարելու օրինագծերի փաթեթին ու դրանք ներկայացրել են Ազգային ժողով: Նախագծով, մասնավորապես օրենքի 22-րդ հոդվածով նախատեսվում է, որ էրոտիկ բնույթի հեռուստառադիոհաղորդումները և սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերը, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների որոշման չափորոշիչները սահմանվում են Հայաստանի Հանրապետության Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի որոշմամբ[115]:

Չնայած վերոնշյալ նախագծին՝ այնուամենայնիվ, 2017 թվականի ընթացքում այդպիսի հաղորդումները դեռևս ցուցադրվել են ցերեկային ժամերին:

Հաշվի առնելով հարցի կարևորությունը՝ անհրաժեշտ է հրատապ կերպով հարցին տալ օրենսդրական կարգավորում և մինչև «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ նոր օրենքի ընդունումը, գործող օրենքում կատարել համապատասխան փոփոխություն՝

[114] http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=56607
[115] https://www.e-gov.am/sessions/archive/2017/11/16/

կամ սահմանելով էրոտիկ բնույթի հեռուստառադիոհաղորդումների, սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերի, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների որոշման չափորոշիչները կամ նշված օրենքում ամրագրելով, որ վերջիններիս սահմանվում են իրավասու մարմնի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտով:

3. Հանրային ռադիոյով և հեռուստատեսությամբ հեռարձակումների եթերաժամը ազգային փոքրամասնությունների լեզուներով

2017 թվականին լուծում չի ստացել Հանրային ռադիոյով և հեռուստատեսությամբ ազգային փոքրամասնությունների լեզուներով հեռարձակումների եթերաժամի համար օրենսդրությամբ ամրագրված սահմանափակումների հարցը, որը բարձրաձայնվել է Մարդու իրավունքների պաշտպանի զեկույցներով և հաղորդմամբ: Խնդիրն այն է, որ ըստ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի «դ» ենթակետի՝ Հանրային հեռուստառադիոընկերությունը պարտավոր է եթերային ժամանակ տրամադրել ՀՀ ազգային փոքրամասնությունների լեզուներով հատուկ ծրագրերի և հաղորդումների հեռարձակման համար, ընդ որում՝ այդ հաղորդումների ընդհանուր ժամաքանակը չպետք է *գերազանցի* հեռուստատեսությամբ շաբաթական մինչև 2 ժամը, իսկ ռադիոյով՝ օրական մինչև 1 ժամը: Ստացվում է, որ հանրային ռադիոյով և հեռուստատեսությամբ ազգային փոքրամասնությունների լեզուներով հեռարձակումների եթերաժամի համար օրենսդրությամբ սահմանված են սահմանափակումներ: Նշվածը խնդրահարույց է միջազգային չափանիշների և փոքրամասնությունների համար լրատվամիջոցների համընդհանուր հասանելիության ապահովման տեսանկյունից և անհարկի սահմանափակում է նրանց մուտքը հանրային լրատվամիջոցներ:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի անդամ պետություններին ուղղված «Տեղեկատվական հասարակությունում հանրային լրատվամիջոցների նպատակի մասին» թիվ (2007)3 հանձնարարականի համաձայն՝ պետությունները պետք է տեխնոլոգիական տարաբնույթ միջոցներով ապահովեն հանրային լրատվամիջոցների համընդհանուր հասանելիությունը բոլոր անհատներին և հասարակության խմբերին, այդ թվում՝ փոքրամասնությունների և խոցելի խմբերի համար[116]: Ավելին, ՀՀ-ի կողմից վավերացված 1995 թվականի «Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին» շրջանակային կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա) նախատեսում է, որ ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձի՝ իր կարծիքն արտահայտելու իրավունքը ներառում է կարծիք ունենալու և փոքրամասնության լեզվով տեղեկատվություն և գաղափարներ ստանալու և հաղորդելու ազատությունը: Ավելին, համաձայն Կոնվենցիայի՝ լրատվական միջոցների մատչելիության հարցում ազգային փոքրամասնությունների պատկանող անձինք չպետք է ենթարկվեն խտրականության[117]:

Հարկ է նշել, որ տվյալ օրենսդրական խնդրին անդրադարձ է կատարվել նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից, որտեղ, մասնավորապես, նշվել է,

[116] Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին ուղղված Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2007)3 «Հանրային լրատվամիջոցների դերը տեղեկատվական հասարակությունում» հանձնարարական, կետ v, https://wcd.coe.int/ViewDoc.jsp?id=1089759
[117] http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=81178

որ օրենքի նշյալ դրույթը սահմանափակում է ազգային փոքրամասնությունների լեզուներով հանրային ռադիոյով և հեռուստատեսությամբ հեռարձակումները և անհրաժեշտ է երաշխավորել փոքրամասնության լեզվով հեռարձակման նվազագույն ժամանակահատվածը[118], ինչը ենթադրում է նաև գործող օրենսդրությամբ փոքրամասնությունների լեզվով հեռուստառադիոհաղորդումների ընդհանուր ժամաքանակից որոշակի ժամաքանակը չգերազանցելու պահանջի վերացում:

Անհրաժեշտ է ընդգծել, որ 2017 թվականին մշակվել և ՀՀ կառավարության նոյեմբերի 16-ի նիստում հավանություն է տրվել «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» նոր օրենքի նախագծին և հարակից օրենսդրության մեջ լրացումներ կատարելու օրինագծերի փաթեթին ու դրանք ներկայացվել են Ազգային ժողով: Նախագծով վերացվում է նշյալ սահմանափակումը:

Ուստի, անհրաժեշտ է

1. հնարավորին արագ ընդունել «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ նոր օրենքը, կամ

2. մինչ դրա ընդունումը «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի «դ» ենթակետում կատարել համապատասխան փոփոխություններ՝ վերացնելով Հանրային ռադիոյով և հեռուստատեսությամբ ազգային փոքրամասնությունների լեզուներով հեռարձակումների եթերաժամի սահմանափակումները՝ սահմանելով նվազագույն եթերաժամանակ:

4. Տեղեկատվության ազատությունը. օրենսդրություն և իրավակիրառ պրակտիկա

2017 թվականին շրջանառվել և Մարդու իրավունքների պաշտպանին կարծիքի է ներկայացվել «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը: Հաշվի առնելով «Տեղեկատվություն ազատության մասին» ՀՀ օրենքի նախագծի կարևոր նշանակությունը թափանցիկ ու հրապարակային գործունեության և հանրային հաշվետվողականության ապահովման համար՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմն իր ակտիվ մասնակցությունն է ունեցել նախագծի հանրային քննարկումներին, ինչպես նաև աշխատանքային կարգով առաջարկություններ է ներկայացրել Նախագծում համապատասխան փոփոխություններ կատարելու համար:

Ներկայացվել են մի շարք նկատառումներ և առաջարկներ: Մասնավորապես, նախագծով սահմանվում էր, որ ՀՀ քաղաքացիները, ՀՀ օրինական հիմքերով գտնվող ֆիզիկական անձինք, անկախ կազմակերպաիրավական ձևից՝ ՀՀ գրանցված իրավաբանական անձինք, օտարերկրյա իրավաբանական անձանց մասնաճյուղերը, ներկայացուցչությունները, որոնք հաշվառված են ՀՀ՝ բացառությամբ 100 տոկոս պետական մասնակցությամբ կազմակերպությունների, իրավունք ունեն ծանոթանալ իրենց փնտրած տեղեկությանը կամ այն ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմել տեղեկությունը տնօրինողին և ստանալ այդ տեղեկությունը: Սակայն ստացվում էր, որ վերոնշյալ հոդվածը տեղեկություն ստանալու իրավունքը սահմանում էր Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով գտնվող

[118] «Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին» շրջանակային կոնվենցիայի իրականացման վերաբերյալ ԵԽ 2012 թվականի բանաձև, http://www.gov.am/u_files/file/kron/Resolution.pdf, http://www.gov.am/u_files/file/kron/Opinion.pdf

ֆիզիկական անձանց համար, մինչդեռ հնարավոր էին դեպքեր, երբ Հայաստանի Հանրապետությունում ոչ օրինական հիմքերով գտնվող անձին հարկավոր լիներ ստանալ, օրինակ՝ իր ազատ տեղաշարժվելու իրավունքի իրականացման համար անհրաժեշտ տեղեկություն: Մասնավորապես, «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածը նախատեսում է այն դեպքերը, երբ օտարերկրացին պարտավոր է կամավոր հեռանալ Հայաստանի Հանրապետության տարածքից (օրինակ՝ եթե լրացել է նրա մուտքի վիզայի կամ կացության կարգավիճակի վավերականության ժամկետը): Սակայն, կամավոր չհեռանալու դեպքում օտարերկրացուն արտաքսելու համար նշված օրենքի 38-րդ հոդվածի իմաստով կարող են ձերբակալել և պահել մինչև 90 օր ժամկետով: Այսպիսով, Նախագծի վերոնշյալ կարգավորումների արդյունքում անձը կզրկվեր այդ ընթացքում տեղեկություններ ստանալու իրավունքից, քանի որ ՀՀ-ում գտնվելու հիմքը չէր համարվի օրինական:

Ելնելով վերոգրյալից՝ Պաշտպանի կողմից առաջարկվել էր վերանայել Նախագծով Հայաստանի Հանրապետությունում միայն օրինական հիմքերով գտնվող ֆիզիկական անձանց համար սահմանելու կարգավորումը: Արդյունքում, այժմ Նախագծով ամրագրված է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի ծանոթանալ իր փնտրած տեղեկությանը կամ այն ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմել տեղեկություն տնօրինողին և ստանալ այդ տեղեկությունը:

Բացի այդ, Նախագծով նախատեսված չեն հաշմանդամություն ունեցող անձանց տեղեկատվություն ստանալու իրավունքի իրացման վերաբերյալ համապատասխան կարգավորումներ (վերոնշյալ հարցի մասին մանրամասն խոսվում է տարեկան հաղորդման «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներ» բաժնում):

2017 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմ ստացվել են նաև տեղեկություն ստանալու իրավունքի խախտումների վերաբերյալ դիմում-բողոքներ: Մասնավորապես, վերջիններիս ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ առկա են այնպիսի դեպքեր, երբ պետական մարմինները քաղաքացիների տեղեկություն ստանալու հարցումներին պատասխանում են օրենքով սահմանված ժամկետների խախտմամբ: Արդյունքում, խախտվում է անձի՝ սահմանված ժամկետներում պատշաճ պատասխան ստանալու իրավունքը:

Պաշտպանին ուղղված դիմում-բողոքներում քաղաքացիները բարձրաձայնել են նաև այն խնդիրը, որ տեղեկությունների տրամադրումը հաճախ մերժվում է այն պատճառաբանությամբ, որ պահանջվող տեղեկատվության մեջ առկա են մարդու անձնական կյանքին վերաբերող տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն: Այսինքն, տեղեկություն տնօրինողը տեղյակ չէ, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե պահանջվող տեղեկատվության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն է տրամադրվում մնացած մասի վերաբերյալ: Հետևաբար, տեղեկություն տնօրինողը պետք է տրամադրի այն տեղեկությունները, որոնց տրամադրումը արգելված չէ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով (տվյալ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված տվյալները պարունակող հատվածները ծածկելու միջոցով): Ստեղծված իրավիճակի պատճառներից մեկն այն է, որ տեղեկատվություն տնօրինողները

տեղեկատվություն չեն տրամադրում օրենքով իրենց վրա դրված պարտականությունների մասին բավարար չափով տեղեկացված չլինելու և օրենքը կիրառելու համար անհրաժեշտ գիտելիք և հմտություններ չունենալու պատճառով:

Տեղեկատվության ազատության իրավունքի խախտումներին բազմիցս անդրադառնում են նաև ոլորտում ակտիվ գործունեություն ծավալող հասարակական կազմակերպությունները, որոնք ևս բարձրացնում են իրենց և քաղաքացիների հարցումներին պետական մարմինների կողմից չպատասխանելու կամ օրենքի պահանջների խախտմամբ պատասխանելու խնդիրների մասին:

Այսպիսով, ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է՝

1. կազմակերպել վերապատրաստման դասընթացներ պետական մարմինների աշխատակազմերի տեղեկատվության հարցերով պատասխանատու անձանց համար, որի արդյունքը կլինի տեղեկատվություն յուրաքանչյուր տնօրինողի՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի ու վերջինիս կիրարկման մեխանիզմների վերաբերյալ բավարար գիտելիքների ստացումը.

2. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում մանրամասն կառուցակարգեր նախատեսել հաշմանդամություն ունեցող անձանց կողմից տեղեկությունների հայցման և ստացման կարգի վերաբերյալ:

ԲԱԺԻՆ 8. ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Քրեական արդարադատության ոլորտում մարդու իրավունքների և ազատությունների ապահովման խնդիրների վերհանումն ու դրանց լուծումը արդյունավետ է, երբ առկա է համագործակցություն ոլորտի մարմինների հետ: Այս առումով, 2017 թվականի ընթացքում դատական ու իրավապահ համակարգի մարմինների՝ Դատախազության, Քննչական կոմիտեի, Հատուկ քննչական ծառայության, Ոստիկանության, Ազգային անվտանգության ծառայության, ինչպես նաև Արդարադատության նախարարության և Դատական դեպարտամենտի հետ փոխգործակցությունն ընդհանուր առմամբ եղել է արդյունավետ: Խոսքը վերաբերում է ինչպես կոնկրետ բողոքների շրջանակներում անձանց իրավունքների վերականգնմանը, այնպես էլ Մարդու իրավունքների պաշտպանի բարձրաձայնած համակարգային խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների իրականացմանը:

Կարևոր է նշել, որ ոլորտի պատասխանատու պետական մարմինների կողմից տրամադրվել է Մարդու իրավունքների պաշտպանի պահանջած տեղեկությունների լիարժեք ծավալ: ՀՀ գլխավոր դատախազությունն, օրինակ, նախնական կալանքներին վերաբերող վիճակագրության ու անհրաժեշտ այլ տվյալների ներկայացման նպատակով իրականացրել է հաշվետու տարում քննված բոլոր քրեական գործերի ուսումնասիրություններ: Արդյունքում, ստացած տվյալները Պաշտպանի աշխատակազմին հնարավորություն են տվել առավել հիմնավոր անդրադառնալ կալանքների կիրառության պրակտիկային ու զարգացման միտումներին, ձևավորել օրենսդրության ու պրակտիկայի բարելավմանն ուղղված առավել ճշգրիտ առաջարկներ:

Ըստ այդմ, սույն տարեկան հաղորդմամբ քրեական արդարադատության խնդիրների վերլուծությունն ըստ այդմ արտացոլում է ինչպես ոլորտի դրական զարգացումները, այնպես էլ առկա օրենսդրական և իրավակիրառմանն առնչվող խնդիրներն ու դրանց լուծման տարբերակները:

1. Բացատրություն տալիս անձի իրավունքների երաշխավորման և գործնական ապահովումը

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 65-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ, եթե ողջամտորեն ենթադրելի է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ: Լռություն պահպանելու և իր դեմ ցուցմունք չտալու իրավունքները Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի անկյունաքարն են հանդիսանում:

Անձի հիմնական իրավունքները և ազատություններն օրենքով սահմանափակելիս սահմանադրահիրավական սկզբունքների հետևողական կենսագործման հրամայականը հատկապես կարևորվում է քրեական արդարադատության ոլորտում, որտեղ անձի իրավունքների խախտման վտանգն ավելի մեծ է:

Այս առումով, հարկ է անդրադառնալ քրեական գործով վարույթի շրջանակներում բացատրություններ տալիս համապատասխան դատավարական երաշխիքների ապահովման խնդրին:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի համաձայն՝ նախքան քրեական գործ հարուցելը վարույթն իրականացնող մարմինը կարող է պահանջել լրացուցիչ փաստաթղթեր, բացատրություններ, այլ նյութեր, ինչպես նաև կարող է կատարվել դեպքի վայրի զննություն, հանցագործություն կատարելու կասկածանքի բավարար հիմքերի առկայության դեպքում կարող են բերման և անձնական խուզարկության ենթարկվել անձինք, հետազոտման համար վերցվել նմուշներ, նշանակվել փորձաքննություն:

Մեջբերված նորմից բխում է, որ հանցագործության մասին ներկայացված հաղորդման հիման վրա քրեական գործ հարուցելու հարցը լուծելիս վարույթն իրականացնող մարմինը կարող է, ի թիվս այլնի, պահանջել նաև բացատրություններ: Այլ կերպ՝ քրեական գործ հարուցելու առիթն օրինական և հիմքերը բավարար լինելու հարցը որոշելու տեսանկյունից վերցված բացատրությունը կարող է էական նշանակություն ունենալ և հիմք հանդիսանալ քրեական գործ հարուցելու համար: Շատ հաճախ նյութերի նախապատրաստման փուլում բացատրություն տված անձինք էլ հետագայում՝ արդեն իսկ հարուցված վարույթի շրջանակներում, հայտնվում են կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակում:

Ակնհայտ է, որ բացատրությունները վերցվում են հարուցված քրեական գործի շրջանակներից դուրս և այն անձանցից, ովքեր դեռևս չունեն որևէ դատավարական կարգավիճակ, իսկ քրեական դատավարության օրենսդրությամբ բացատրություն վերցնելու ընթացակարգ նախատեսված չէ: Բացակայում են անհրաժեշտ օրենսդրական լծակները, որոնք կպարտավորեցնեն վարույթն իրականացնող մարմնին անձին տեղեկացնելու իր իրավունքների և պարտականությունների (հատկապես՝ լռություն պահպանելու, բացատրություն չտալու իրավունքի), համապատասխան գործողության արդյունքում վրա հասնող հնարավոր հետևանքների վերաբերյալ:

Ուստի, այս առումով, **համապատասխան կանոնակարգումների բացակայությունը կարող է հանգեցնել բացատրություն տված անձի իրավունքների անհամաչափ սահմանափակման, քանի դեռ օրենսդրորեն անձին իր նվազագույն իրավունքների մասին իրազեկելու և դրանց իրացումն ապահովելու անհրաժեշտ երաշխիքներ չեն նախատեսվել:**

Անհրաժեշտ է նկատել, որ թեև նյութերի նախապատրաստության ընթացքում անձի տված բացատրությունը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով ապացույցի ինքնուրույն տեսակ չէ, այնուամենայնիվ Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված բողոքների քննարկումը վկայում է, որ առկա են դեպքեր, երբ բացատրությունը ճանաչվում է որպես այլ փաստաթուղթ և օգտագործվում որպես ապացույց, ինչն անթույլատրելի է: Այդ մասին են վկայում նաև դատական պրակտիկայի ուսումնասիրության արդյունքները: Այսպես, օրինակ, 2013 թվականին կայացված դատավճիռներից մեկով առաջին ատյանի դատարանն արդարացիորեն այն ճանաչել է անթույլատրելի ապացույց՝ ընդգծելով. «(…) Դատարանը հարկ է համարում նշել, որ նման պրակտիկայի դեպքում մեղադրյալի կողմից ցուցմունքներ չտալու իրավունքը կամ «լռություն պահպանելու» իրավունքը՝ երաշխավորված ՀՀ

Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով, դառնում է վերացական ու ոչ իրական, քանի որ համանման հանգամանքներում անձի կողմից տրված բացատրությունը տվյալ դեպքում առանց որևէ պատճառաբանության օգտագործվում է նրա դեմ՝ մասնավորապես՝ առանց վերջինիս պարզաբանելու բացատրություններ տալուց հրաժարվելու իրավունքի և նրա կողմից տրված բացատրությունը նրա դեմ օգտագործելու հնարավորության մասին»[119]:

Խնդրի կապակցությամբ 2017 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված բողոքներից մեկում, օրինակ, փաստաբանը տեղեկացրել էր, որ իր վստահորդը բացատրություն է տվել առանց իր իրավունքների, այդ թվում՝ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականի դեմ չվկայելու իրավունքի մասին ծանուցման: Արդյունքում, վերջինս բացատրություն է տվել իր որդու դեմ, ինչն էլ, ըստ անձի, քրեական գործի հարուցման հիմք է հանդիսացել:

ՀՀ դատախազության կոլեգիան, 2016 թվականի դեկտեմբերի 16-ի նիստում անդրադառնալով անձից բացատրություն վերցնելու արձանագրությունն այլ փաստաթուղթ ճանաչելու վերաբերյալ առկա պրակտիկայի թույլատրելիության հարցին, արձանագրել է, որ բացատրության արձանագրությունը որպես այլ փաստաթուղթ, այլ ապացույցների թվում կարող է դրվել մեղադրանքի հիմքում, եթե բացատրություն տված անձի հարցաքննությունը հնարավոր չի եղել իրականացնել այնպիսի պատճառներով, որոնք բացառել են նրա՝ նախաքննական մարմին ներկայանալու հնարավորությունը:

Ստացվում է, որ գործնականում ըստ էության չեն բացառվում նյութերի նախապատրաստման ժամանակ անձի տված բացատրությունն այլ փաստաթուղթ ճանաչելը և որպես ապացույց մեղադրանքի հիմքում դնելը: Կարծում ենք՝ **քրեադատավարական օրենսդրությամբ համապատասխան կարգավորումներ, հստակ ընթացակարգեր ու անհրաժեշտ իրավական երաշխիքներ նախատեսված չլինելու պայմաններում նման պրակտիկան անթույլատրելի է, քանի որ անխուսափելիորեն հանգեցնելու է անձի հիմնարար իրավունքների, մասնավորապես՝ պաշտպանության իրավունքի խախտման:**

Պետք է նկատել նաև, որ եթե նույնիսկ բացատրությունները չդրվեն մեղադրանքի և կայացվող դատական ակտերի հիմքում, այնուամենայնիվ դրանք վարույթի համար ունեն առանցքային նշանակություն, քանի որ շատ հաճախ հենց անձի տված բացատրությունն է քրեական գործ հարուցելու հիմք հանդիսանում, երբեմն նաև քրեական հետապնդում իրականացնելու համար: Ստացվում է, որ առանց հիմնական իրավունքների վերաբերյալ պատշաճ կերպով ծանուցվելու, պաշտպանի բացակայությամբ տրված բացատրությունը կարող է հետագայում օգտագործվել հենց բացատրություն տված անձի դեմ: Բացի այդ, քրեական գործի նյութերում անձի տված բացատրության առկայությունն ինքնին անձի մեղավորության հարցը լուծելիս կարող է որոշակի ազդեցություն ունենալ վարույթն իրականացնող մարմնի մոտ համապատասխան ներքին համոզմունք ձևավորելու հարցում, թեպետ ֆորմալ առումով այն որպես ապացույց չի կարող օգտագործվել: Հետևաբար անձի իրավունքների անհամաչափ սահմանափակումները բացառելու համար

[119] Տե՛ս Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ թիվ ԵԱՆԴ/0092/01/12 գործով 2013 թվականի մայիսի 15-ին կայացված դատավճիռը:

անհրաժեշտ է օրենսդրորեն նախատեսել նյութերի նախապատրաստության ընթացքում անձից բացատրություն վերցնելու համապատասխան կառուցակարգ, որը կապահովի վերջինիս՝ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով ամրագրված իրավունքների իրացումը ու կսահմանի համարժեք դատավարական երաշխիքներ:

Միևնույն ժամանակ, բացատրության արձանագրությունը կարող է օգտագործվել քրեական վարույթի ընթացքում, եթե այն տրվել է քրեադատավարական համապատասխան երաշխիքների պահպանմամբ: Համանման դիրքորոշում է արտահայտել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Հովհաննեսյանն ընդդեմ Բուլղարիայի գործով կայացրած վճռում[120]: Դատարանը, մասնավորապես նշել է, որ երբ քրեական վարույթն իրականացնող մարմինը բացատրություն վերցնելիս կասկածյալի հնարավոր կարգավիճակ ունեցող անձի համար ապահովել է արդար դատաքննության իրավունքի բաղադրիչը կազմող երաշխիքների կենսագործման իրական հնարավորություն, ապա բովանդակային առումով այդ ապացույցը չի կարող արժեզրկվել, որպիսի պարագայում այն այլ փաստաթղթի ձևով ապացույցի տեսակ ճանաչելը չի կարող հանգեցնել քրեական վարույթի արդարացիության ապահովման սկզբունքի խախտմանը:

ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի ուսումնասիրությունից երևում է, որ բացատրություն վերցնելու ընթացակարգ նախագծով չի սահմանվում: Դա առաջին հերթին պայմանավորված է այն հանգամանքով, որ, ի տարբերություն գործող օրենսդրության, նախագծում քրեական գործի հարուցման փուլ առանձնացված չէ, և հանցագործության մասին հաղորդում ստանալու պահից նախաձեռնվում է քրեական վարույթ՝ դրանով իսկ վարույթն իրականացնող մարմնին հնարավորություն ընձեռելով գործի դնել քրեադատավարական ողջ գործիքակազմը, իրականացնել բոլոր այն անհրաժեշտ քննչական և դատավարական գործողությունները, որոնց զգալի մասն այսօր կարող են իրականացվել բացառապես հարուցված քրեական գործի պայմաններում՝ միևնույն ժամանակ անձի իրավունքների ապահովման տեսանկյունից նախատեսելով գործուն դատավարական երաշխիքներ:

Վերը նշվածի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ՝

1. որպես հարցի արագ լուծում՝ անհրաժեշտ է քրեական դատավարության օրենսգրքում կատարել համապատասխան փոփոխություններ՝ ուղղված բացատրություն վերցնելու այնպիսի հստակ ընթացակարգ սահմանելուն, որը կապահովի անձի՝ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված իր իրավունքների և պարտականությունների վերաբերյալ պատշաճ կերպով իրազեկված լինելու, բացատրության հնարավոր բացասական հետևանքների մասին տեղեկացվելու իրավունքի կենսագործումը.

2. որպես խնդրի երկարաժամկետ լուծում՝ օրենսդրական կարգավորումները պետք է տրվեն ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքով որդեգրված՝ դատավարության փուլերի հայեցակարգային նոր մոտեցումներին համահունչ՝ քրեական գործի հարուցման նախապատրաստման փուլի և դրանով հանդերձ բացատրություն վերցնելու ինստիտուտի վերացմամբ:

---

[120] Տե՛ս Հովհաննեսյան ընդդեմ Բուլղարիայի գործով գործով 2010 թվականի դեկտեմբերի 21-ի վճիռը, գանգատ թիվ 31814/03, կետեր 36-44:

2. «Փաստացի քրեական հետապնդումից» անձի պաշտպանության օրենսդրական և գործնական երաշխիքները

Քրեական գործերի քննության ու լուծման գործընթացը պետք է ընթանա հանրային և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանությամբ: Այս կարևորագույն սկզբունքի կիրառությունը ենթադրում է, որ քրեական վարույթի շրջանակներում անձի դատավարական կարգավիճակով պայմանավորված՝ վերջինս պետք է ապահովվի համարժեք իրավունքներով ու երաշխիքներով: Ընդ որում, որքան անձի դատավարական կարգավիճակի բովանդակությունը կանխորոշում է վերջինիս իրավունքներին առավել մեծ միջամտություն, այնքան անձի իրավունքների լայն շրջանակ պետք է երաշխավորվի: Ասվածի համատեքստում Մարդու իրավունքների պաշտպանը հարկ է համարում անդրադառնալ, այսպես կոչված, «փաստացի քրեական հետապնդման» ոչ իրավաչափ պրակտիկային:

2016 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդման մեջ խնդիրը ներկայացվել է թե՛ սահմանադրաիրավական և միջազգային իրավական մոտեցումների վերլուծությամբ, թե՛ քրեադատավարական կարգավորումների լիարժեքության տեսանկյունից[121]:

2017 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին շարունակվել են հասցեագրվել բողոքներ, որ, օրինակ, անձինք, հարցաքննվելով որպես վկա, այնուհետև միևնույն գործով վարույթի շրջանակներում ներգրավվում են որպես մեղադրյալ:

Սրա հետ կապված, Մարդու իրավունքների պաշտպանը վերահաստատում է, որ անձի՝ միևնույն քրեական գործով վարույթի շրջանակներում կարգավիճակի փոփոխությունն ինքնին խնդրահարույց չէ, եթե վարույթն իրականացնող մարմնի կողմից քննչական և այլ դատավարական գործողությունների իրականացման, այդ թվում՝ անձին հարցաքննելու ընթացքում ապահովվել են վերջինիս՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքներն ու համարժեք դատավարական երաշխիքները:

Այլ է իրավիճակը, երբ օրինակ՝ անձը հարցաքննության է կանչվում վկայի դատավարական կարգավիճակով՝ դրանից բխող իրավունքների և պարտականությունների համապատասխան ծավալով, սակայն վարույթն իրականացնող մարմնի մոտ արդեն իսկ առկա է քրեական օրենքով չթույլատրված արարքի կատարմանն անձի առնչության վերաբերյալ կասկած: Խնդրահարույց է, երբ այդպիսի «կասկածի» առկայությամբ անձի՝ վկայի դատավարական կարգավիճակով մասնակցությամբ իրականացվում են քննչական և այլ դատավարական գործողություններ, որոնք նպատակ ունեն ձեռք բերելու այդ անձի կողմից հանցանքի կատարումը վկայող բավարար ապացույցներ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանության համաձայն՝ «մեղադրվող» և «քրեական մեղադրանք» եզրույթներն ունեն ինքնավար հասկացություն և պետք է մեկնաբանվեն ոչ այնքան ֆորմալ, որքան օբյեկտիվ իրականության հաշվառմամբ:

[121] Առավել մանրամասն տե՛ս 2016 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 122-125:

Այս համատեքստում մեղադրանքը ենթադրում է ոչ միայն հանցագործություն կատարած լինելու կասկածանքի առկայության մասին պաշտոնական հայտարարություն, այլև ցանկացած միջոց, որն էականորեն ազդում է կասկածյալի կարգավիճակի վրա[122]:

Ընդ որում, «քրեական մեղադրանքի» սկզբնական պահի որոշումը սկզբունքային նշանակություն ունի, քանի որ այն կանխորոշում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի ծագման պահը՝ «քրեական մեղադրանքի» առնչությամբ:

Ի տարբերություն 2005 թվականի Սահմանադրությամբ *«ձերբակալման, խափանման միջոցի ընտրման կամ մեղադրանքի առաջադրման պահից իր ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունքի»* երաշխավորմանը՝ 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության 67-րդ հոդվածն ամրագրում է «հանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուրի»՝ մեղադրանքից պաշտպանվելու իրավունքը՝ դրա առանձին տարրերի մատնանշմամբ (այդ թվում՝ անձամբ կամ իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունքը): Սահմանադրական այս դրույթը, կրկնելով Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի երաշխիքները, ըստ էության ելնում է *անձի՝ «հանցագործության համար մեղադրվողի» կարգավիճակի ինքնավարության գաղափարից:*

Մինչդեռ, ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգիրքը «քրեական մեղադրանքի» բնորոշման ոչ ֆորմալ մեկնաբանության իրավական կառուցակարգեր չի նախատեսում: Բանն այն է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 62-րդ և 64-րդ հոդվածներով ամրագրված՝ կասկածյալի և մեղադրյալի օրենսդրական բնորոշումներից բխում է, որ անձը համապատասխան դատավարական կարգավիճակ, հետևաբար նաև օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանությունն իրականացնելու իրավունք է ձեռք բերում քրեական հետապնդման մարմնի կողմից դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու կամ անձին մեղադրանք առաջադրելու դեպքերում: Այլ կերպ ասած, անձի՝ կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակի ձեռքբերումը կախվածության մեջ է դրվում անձին ներկայացված պաշտոնական մեղադրանքից կամ վերջինիս համար ակնհայտ՝ իրավունքների սահմանափակում ենթադրող հարկադրանքի միջոցների կիրառումից:

Սրա հետ կապված, դեռևս 2016 թվականի տարեկան հաղորդման մեջ Մարդու իրավունքների պաշտպանը եզրակացրել էր, որ խնդրի օրենսդրական կարգավորմանն ուղղված հայեցակարգային փոփոխություններ են նախատեսված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծով[123]:

Ասվածի կապակցությամբ՝ հարկ է անդրադառնալ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ նախատեսող օրենսդրական

---

[122] Տե՛ս Էկլեն ընդդեմ Գերմանիայի (Eckle v. Germany) գործով 1982 թվականի հուլիսի 15-ի վճիռը,
Քասսն ընդդեմ Լյուքսեմբուրգի (Casse v. Luxembourg) գործով 2006 թվականի ապրիլի 27-ի վճիռը, գանգատ թիվ 40327/02, կետ 71,
Գեստոսոն ընդդեմ Իսպանիայի (Gestoso v. Spain) գործով որոշումը, գանգատ թիվ 39519/98:

[123] Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի 110-րդ հոդվածն ամրագրում է, որ ձերբակալված անձը ձերբակալման որոշումը ստանալու պահից, իսկ եթե օրենքով սահմանված ժամկետում այն չի հանձնվել, ապա իրեն ազատությունից փաստացի զրկելուց հետո վեց ժամը լրանալու պահից ձեռք է բերում սույն օրենսգրքով մեղադրյալի համար նախատեսված բոլոր վերաբերելի իրավունքները և պարտականությունները: Մինչև մեղադրյալի վերաբերելի իրավունքները ձեռք բերելը ձերբակալված անձն ունի նվազագույն իրավունքներ, այդ թվում՝ լռություն պահպանելու իրավունք, http://www.parliament.am/draft_docs5/K-084lr_19102016.pdf

փոփոխությունների նախաձեռնմանը[124], որոնցով ամրագրվեցին ազատությունից զրկված անձի իրավունքների ապահովման հետ կապված կառուցակարգերը՝ անձին արգելանքի վերցնելու պահից: Նախ, օրենսդրորեն ամրագրվեցին «արգելանքի վերցված անձի» իրավունքները՝ այդպիսով կարգավորելով ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքով լրացվող օրենսդրական բացը[125]: Բացի այդ, օրենսդրորեն ամրագրվել է փաստի ուժով անձի իրավունքների ձեռքբերման՝ Քրեական դատավարության օրենսգրքի նախագծով որդեգրված մոտեցումը: Մասնավորապես, օրենսդրական փոփոխություններով ամրագրվում է *մինչև ձերբակալման արձանագրությունը նրան հայտարարելն արգելանքի վերցված անձի իրավունքները, այդ թվում՝ լռություն պահպանելու իրավունքը: Նույն դրույթի համաձայն՝ անկախ ձերբակալման արձանագրությունն անձին հայտարարելու հանգամանքից՝ փաստացի արգելանքի վերցվելուց չորս ժամ հետո անձը ձեռք է բերում կասկածյալի վերաբերելի իրավունքները և պարտականությունները:*

Օրենսդրական այս փոփոխություններն, իհարկե, դրական քայլ են՝ ազատությունից զրկված անձի՝ այդպիսի սահմանափակման սկզբնական փուլից սկսած իրավունքների ամրագրման տեսանկյունից: Միևնույն ժամանակ, «փաստացի քրեական հետապնդման» դեմ արդյունավետ իրավական կառուցակարգերը պետք է ենթադրեն նաև դրա հետևանքները չեզոքացնելուն ուղղված օրենսդրական հնարավորություն:

Այս առումով, հատկանշական է, որ ՀՀ դատախազության կոլեգիայի 2017 թվականի օգոստոսի 4-ի նիստում որոշում է կայացվել քրեական գործով դատավարական ղեկավարում իրականացնելիս ձեռնարկել օրենքով նախատեսված բոլոր միջոցները, որպեսզի բացառվեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում անձին կասկածյալի և մեղադրյալի դատավարական կարգավիճակ տալու հապաղումներն ու այդ անձանց որպես վկա հարցաքննությունը: Նշված նիստի ընթացքում կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու հետ կապված գործնական խնդիրների քննարկման շրջանակներում հանձնարարվել է նաև *բացառել այն իրավիճակները, երբ հանցագործության կատարման մեջ փաստացի կասկածվող անձի հետ վկայի կարգավիճակում տնական ժամանակ դատավարական գործողություններ կատարելուց հետո վերջինիս կալանավորման միջնորդություն է ներկայացվում դատարան՝ պայմանավորված բացառապես նրան մեղադրանք առաջադրելու հանգամանքով:*

ՀՀ քննչական կոմիտեից ստացված տեղեկությունների համաձայն՝ 2017 թվականի ընթացքում Կոմիտեում վարույթն իրականացնող մարմնի՝ «փաստացի քրեական հետապնդում» ենթադրող ոչ իրավաչափ գործողությունների 4 դեպք է արձանագրվել: Որպես կանխարգելիչ միջոց՝ քննիչների նկատմամբ կիրառվել են «նկատողություն» և «զգուշացում» կարգապահական տույժերը:

Չնայած նշված միջոցառումներին, այդուհանդերձ, «փաստացի քրեական հետապնդման» ոչ իրավաչափ պրակտիկան այնքանով, որքանով այդպիսի հետապնդման ենթարկվող անձի մասնակցությամբ դատավարական գործողության իրականացումը

[124] Հարկ է նկատել, որ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից նշված նախագծի վերաբերյալ ներկայացվել են մի շարք սկզբունքային նկատառումներ, այդ թվում՝ անձի անձնական ազատության սահմանադրական իրավունքի երաշխավորման դատավարական կառուցակարգերի լիարժեքության տեսանկյունից:

[125] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Գ. Միքայելյանի գործով 2009 թվականի դեկտեմբերի 18-ի որոշումը:

միջամտություն է վերջինիս իրավունքներին, պետք է առաջ բերի ոչ միայն պաշտոնատար անձի պատասխանատվության հարց, այլև կոնկրետ դատավարական հետևանքներ՝ «փաստացի քրեական հետապնդման» շրջանակներում ձեռք բերված ապացույցների անթույլատրելիություն: Սրա հետ կապված, կարծում ենք, որ յուրաքանչյուր դեպքում, երբ բարձրացվում է «փաստացի քրեական հետապնդման» խնդիր, քննարկման առարկա պետք է հանդիսանա նաև դրա շրջանակներում ձեռք բերված ապացույցների թույլատրելիության հարցը: Ասվածի օրենսդրական ուղղակի ամրագրման մոտեցում դրսևորվել է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով, որի 97-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է, որ *օրենքի էական խախտմամբ ստացված են համարվում այն տվյալները, որոնք inter alia ձեռք են բերվել մեղադրյալի կարգավիճակ չունեցող անձից, ում նկատմամբ փաստացի իրականացվել է քրեական հետապնդում՝ առանց այդ մասին նրան պատշաճ ծանուցելու:*

Գործող քրեադատավարական օրենսդրությունը «փաստացի քրեական հետապնդման» հետևանքով ձեռք բերված ապացույցի անթույլատրելիության մասին ուղղակի դրույթ չի պարունակում: Փոխարենը, վերոնշյալ օրենսդրական փոփոխությունների համաձայն՝ *որպես ապացույց չեն կարող օգտագործվել այն նյութերը, որոնք, մասնավորապես, ձեռք են բերվել քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական՝ քրեական դատավարության մասնակիցների հիմնական իրավունքների և ազատությունների կամ քրեական դատավարության սկզբունքների խախտմամբ:*

Վերը նշվածի հաշվառմամբ՝ *Մարդու իրավունքների պաշտպանը վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ անկախ անձի՝ քրեադատավարական օրենքի իմաստով կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ ձեռք բերելուց՝ վերջինս պետք է օգտվի քրեական հետապնդման ենթարկվող անձի վերաբերելի բոլոր իրավունքներից այն դեպքում, երբ վարույթն իրականացնող մարմնի գործողությունները (որոշումները) հիմք են տալիս ողջամտորեն ենթադրելու, որ առկա է տվյալ անձի կողմից հանցանք կատարած լինելու կասկածանք:*

Ավելին, «փաստացի քրեական հետապնդման» պրակտիկայի կանխարգելումը պետք է իրականացվի ոչ միայն գերատեսչական վերահսկողության շրջանակներում, այլև պետք է քննարկման առարկա դառնա կոնկրետ քրեական գործով վարույթի շրջանակներում դրա բացասական հետևանքների չեզոքացումը:

3. Ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառման շրջանակներում կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը վերցնելը և նրա ազատ տեղաշարժման իրավունքի սահմանափակման ոչ իրավաչափ պրակտիկան

Քրեական գործով վարույթի շրջանակներում անձի իրավունքների ապահովման տեսանկյունից շարունակում է սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգի կիրառմամբ անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի ոչ համաչափ սահմանափակման խնդրահարույց պրակտիկան:

Խնդիրն այն է, որ քրեական գործով վարույթի շրջանակներում կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ «ստորագրություն չհեռանալու մասին» խափանման միջոցի կիրառման հիմքով սահմանային անցման կետերում սահմանափակվում է անձի՝ հանրապետությունից դուրս գալու իրավունքը, որը, սակայն, պահպանվում է այդ

խափանման միջոցի վերացված լինելու պայմաններում: Ընդ որում, անձն այդ մասին տեղեկացվում է միայն այն ժամանակ, երբ փաստացի առնչվում է կիրառված արգելքի հետ, այսինքն՝ երբ ցանկանում է դուրս գալ երկրից:

2017 թվականի ընթացքում ևս Մարդու իրավունքների պաշտպանի կողմից քննության առնված դեպքերում չնայած անձինք կրած են եղել դատարանի կողմից նշանակված պատիժը (անկախ պատժի տեսակից՝ տուգանք, ազատազրկում), սակայն վերջիններիս՝ ՍԷԿՏ համակարգով հանրապետությունից դուրս գալու իրավունքի սահմանափակումը չէր հանվել՝ դեռևս նախաքննության փուլում կիրառված արգելանքի հիման վրա:

Օրինակ՝ անձը Պաշտպանին տեղեկացրել է, որ իր նկատմամբ դատավճռով նշանակված տուգանքն ամբողջությամբ մուծվել է, անդորրագիրը՝ ներկայացվել դատարան, սակայն հանրապետությունից դուրս գալու իրավունքի սահմանափակումը չի հանվել:

Մեկ այլ դեպքում խնդրի մասին ահազանգել է փաստաբանը՝ տեղեկացնելով, որ իր վստահորդին ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունում մերժում են ելքի վիզա տրամադրել՝ պատճառաբանելով, որ ՀՀ տարածքից նրա ելքն արգելափակված է: Փաստաբանը տեղեկացրել է նաև, որ նախկինում իր պաշտպանյալի նկատմամբ իրականացված քրեական հետապնդումը շուրջ մեկ տարի առաջ դադարեցվել է:

Ներկայացված բողոքների շարունակականության, ինչպես նաև խնդրի համակարգային բնույթի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանը համակողմանի ուսումնասիրության առարկա է դարձրել անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի ապահովման սահմանադրաիրավական հիմքերն ու միջազգային իրավական սկզբունքները, արտասահմանյան երկրների օրենսդրական փորձը, ոլորտի ներպետական օրենսդրական կարգավորումների որոշակիությունն ու կանխատեսելիությունը: Արդյունքում, Պաշտպանը խնդիրը ներկայացրել է օրենսդրության և իրավակիրառման սահմանադրականության տեսանկյունից՝ ՀՀ սահմանադրական դատարան դիմելու գործառույթի իրացմամբ: Արդյունքում, ՀՀ սահմանադրական դատարանը 2017 թվականի ապրիլի 4-ի ՍԴՈ – 1360 որոշմամբ արտահայտել է իրավակիրառ պրակտիկայի իրավաչափությունը կանխորոշող պայմաններ՝ նշելով, որ «նման կանոնակարգման առկայության պայմաններում և նման կառուցակարգի միջոցով անձի տեղաշարժման ազատությունը սահմանափակելու պարագայում այն պետք է իրացվի բացառապես խափանման միջոցի վերացման մասին որոշում ընդունելու վերաբերյալ տեղեկատվությունը ևս նույն համակարգում տեղադրելու՝ իրավասու մարմնի հստակ պարտականության իրացման և անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի խոչընդոտները վերացնելու պայմանով»՝ միաժամանակ արձանագրելով օրենսդրության մեջ այս պահանջի՝ վարույթն իրականացնող մարմնի վրա դրված հստակ պարտականության տեսքով ուղղակի ամրագրման բացակայությունը:

Ավելին, Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված բողոքների բովանդակության[126] ուսումնասիրության արդյունքում Սահմանադրական դատարանը եզրահանգել է, որ ՀՀ կառավարության խնդրո առարկա որոշման[127] մեջ խափանման

[126] Բողոքների նկարագրությունը Սահմանադրական դատարան է ներկայացվել առանց անհատականացնող տվյալների մատնանշման:

[127] Տե՛ս ՀՀ կառավարության 2006 թվականի 22 հունիսի «Հայաստանի Հանրապետության սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգ ստեղծելու, դրա շահագործման կարգը և համակարգից օգտվողների ցանկը սահմանելու մասին» N 884-Ն որոշումը:

միջոցի վերացման մասին որոշման վերաբերյալ տեղեկատվությունը ՍԷԿՏ համակարգ ուղարկելու ուղղակի պարտականության բացակայությունը հարցականի տակ է դնում այդ ընթացակարգի որոշակիությունը, քանի որ կոնկրետ իրավասու մարմնի վրա դրված այդպիսի պարտականություն չկա:

Ասվածի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ իրավակիրառ պրակտիկան պետք է ընթանա այն սկզբունքով, որ խափանման միջոցի կիրառմամբ տեղեկություններ տրամադրելու պարտականությանը զուգահեռ ապահովվի հակառակի՝ խափանման միջոցի վերացման վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու պարտականությունը:

Խնդրի կապակցությամբ ՀՀ դատախազությունը տեղեկացրել է, որ նմանատիպ խախտումները հետագայում բացառելու և դրանց կանխարգելման նպատակով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալները, ըստ իրենց համակարգման շրջանակի, դեռևս 2016 թվականի հոկտեմբերի 3-ին հանձնարարական են տվել ՀՀ դատախազության կառուցվածքային ստորաբաժանումներին՝

1) կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ «ստորագրություն չհեռանալու մասին» խափանման միջոցը վերացվելու դեպքում հետևել, որ որոշումը կայացրած մարմինն այդ մասին, անհապաղ, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության համապատասխան ստորաբաժանման (Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության) միջոցով, գրավոր տեղեկացնել Հայաստանի Հանրապետության սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգին կասկածյալի կամ մեղադրյալի ազատ տեղաշարժվելու արգելքը վերացնելու համար:

2) դատական քննության փուլում ամբաստանյալի նկատմամբ տվյալ խափանման միջոցը դատարանի կողմից վերացվելու դեպքում, դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո, անձի ազատ տեղաշարժվելու արգելքը վերացնելու նպատակով ՀՀ ոստիկանության համապատասխան ստորաբաժանման միջոցով ապահովել տվյալ անձի վերաբերյալ տեղեկության գրավոր տրամադրումը ՍԷԿՏ համակարգին:

Ի գիտություն ընդունելով խնդրի լուծման նպատակով ՀՀ դատախազության՝ գերատեսչական մակարդակում այդպիսի պարտականությունների ամրագրումը թե՛ նախաքննության, թե՛ դատական քննության փուլերում գտնվող գործերով՝ այդուհանդերձ, պետք է արձանագրել, որ Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված նույնաբովանդակ բողոքների շարունակականությունն ինքնին վկայում է ոչ միասնական իրավակիրառ պրակտիկայի մասին: Սա իր հերթին պայմանավորում է անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումները վերացվելու դեպքում ՍԷԿՏ համակարգում տեղեկատվությունը տեղադրելու կառուցակարգերի՝ օրենսդրական մակարդակում նորմատիվ իրավական կարգավորման ենթարկելու անհրաժեշտությունը:

«Ստորագրություն չհեռանալու մասին» խափանման միջոցի կիրառման շրջանակներում կասկածյալի կամ մեղադրյալի իրավունքների ապահովման մեկ այլ խնդիր է վերջինիս անձնագիրը վերցնելու իրավաչափության շրջանակները, որը ևս քննարկման առարկա է դարձել Սահմանադրական դատարան ներկայացված դիմումի շրջանակներում: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և

«Քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի[128] համադրության մեջ դիտարկման արդյունքներով Մարդու իրավունքների պաշտպանը եզրակացրել է, որ քրեական դատավարության կամ դրա առանձին փուլերի խնդիրների իրագործմանն ուղղված վարույթն իրականացնող մարմնի ցանկացած գործողություն, այդ թվում՝ դատավարական կարգավիճակ ունեցող անձի անձնագիրը վերցնելը, պետք է իրավական հիմք ունենա հենց քրեական դատավարության օրենսգրքում:

Ավելին, «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» օրենքի խնդրո առարկա հոդվածի կարգավորումը, համաձայն որի՝ կասկածյալի և մեղադրյալի անձնագիրը վերադարձվում է հարուցված քրեական հետապնդումը դադարեցվելուց հետո անմիջապես, ևս վկայում է, որ անձի անձնագիրը վերցնելու՝ օրենքով ամրագրված այդպիսի կառուցակարգը չի համապատասխանում ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի քրեադատավարական կարգավորումներին:

Բանն այն է, որ Քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝ քրեական հետապնդման դադարեցումը քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի որոշումն է առաջադրված մեղադրանքը վերացնելու կամ մեղադրանքից հրաժարվելու մասին:

Օրենսգրքի 151-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է, որ խափանման միջոցը վերացվում է, երբ վերանում է դրա անհրաժեշտությունը: Դատավարական այս կարգավորումները հիմք են տալիս եզրակացնելու, որ ընտրված խափանման միջոցը կարող է վերացվել նաև քրեական հետապնդման իրականացման պայմաններում: Ստացվում է, որ «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորմամբ անձի անձնագիրը կարող է հետ չվերադարձվել անգամ այն ժամանակ, երբ վերացվել է վերջինիս նկատմամբ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը:

Քննարկելով կասկածյալի, մեղադրյալի նկատմամբ «Ստորագրություն չհեռանալու մասին» խափանման միջոց կիրառելու դեպքում անձնագիրը վերցնելու կանոնակարգման սահմանադրականության հարցը՝ Սահմանադրական դատարանը հստակ դիրքորոշում է արտահայտել, որ այն դեպքերում, երբ քրեական հետապնդում իրականացնող մարմնի կողմից, առանց խափանման միջոցի (ստորագրություն չհեռանալու մասին) կիրառման, վերցվում է կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը, բացակայում է նաև կասկածյալի կամ մեղադրյալի կողմից ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու, նրանց կողմից դատավճռի կատարմանը խոչընդոտելու վերաբերյալ ողջամիտ կասկածը: Հետևաբար՝ բացակայում է նաև հանցագործությունները կանխելու կամ բացահայտելու, այլոց և, մասնավորապես, տվյալ քրեական գործով տուժողների իրավունքները և ազատությունները պաշտպանելու նպատակով անձնագիրը վերցնելու միջոցով կասկածյալի կամ մեղադրյալի իրավունքների սահմանափակման անհրաժեշտությունը:

Արդյունքում, Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ **անձնագիրը կասկածյալից կամ մեղադրյալից կարող է վերցվել բացառապես խափանման միջոցի**

---

[128] «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է.

«4. Կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը ժամանակավորապես վերցնում է հետաքննության կամ նախաքննության մարմինը: (…) Կասկածյալի և մեղադրյալի անձնագիրը պահվում է վարույթ իրականացնող պաշտոնատար անձանց մոտ և վերադարձվում է հարուցված քրեական հետապնդումը դադարեցվելուց հետո անմիջապես»:

կիրառման դեպքում: Եվ խափանման միջոցի վերացման պահին անձի անձնագիրը ենթակա է անհապաղ վերադարձման:

Վերահաստատելով Մարդու իրավունքների պաշտպանի դիրքորոշումը՝ Սահմանադրական դատարանը նշել է, որ **«Ներկայումս ձևավորված պրակտիկան, երբ անձի անձնագիրը պահվում է իրավասու մարմնի մոտ «ստորագրություն՝ չհեռանալու մասին» խափանման միջոցը վերացնելու դեպքում, խախտում է ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ անձի ազատ տեղաշարժվելու իրավունքը»:**

Բացի այդ, քրեական գործով վարույթի շրջանակներում կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիր վերցնելը դիտարկվել է անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքին միջամտության համաչափության տեսանկյունից:

Մինչդեռ, հարկ է նշել, որ Պաշտպանի դիմումը Սահմանադրական դատարանում քննության ընդունվելուց հետո անձնագիրը վերցնելիս փոխարինող փաստաթղթի տրամադրման վերաբերյալ բարձրացված խնդրի օրենսդրական կարգավորումները փոփոխվեցին: Կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին» թիվ 821-Ն որոշման 19-րդ կետի 3-րդ պարբերությունը ՀՀ կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի թիվ 4-Ն որոշմամբ ուժը կորցրած ճանաչվեց:

Մինչ փոփոխությունները՝ ուժը կորցրած դրույթը սահմանում էր, որ *կալանքի տակ չգտնվող կասկածյալներին և մեղադրյալներին հետաքննության կամ նախաքննության մարմիններն անձնագրի փոխարեն տալիս են անձը հաստատող փաստաթուղթ՝ առանց Հայաստանի Հանրապետությունից մեկնելու թույլտվության, որի ձևը մշակում և հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը:*

Խնդիրը Մարդու իրավունքների պաշտպանը ներկայացրել էր քաղաքացու անձնագիրը վերցնելիս անձը հաստատող ժամանակավոր փաստաթղթի տրամադրման վերաբերյալ այս դրույթի գործնական կիրարկումն ապահովող օրենսդրական կառուցակարգերի ոչ լիարժեքության տեսանկյունից:

Այսպես, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետի 2012 թվականի փետրվարի 13-ի թիվ 2-Ն հրամանով հաստատվել են Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիրը և նույնականացման քարտը վերցնելու փաստը հավաստող տեղեկանքների ձևերը, որոնք, պարունակելով անձի անձնագիրը վերցնելու փաստի, դրա հիմքերի, ժամանակի, անձնագիրը վերցրած պաշտոնատար անձի մասին տվյալներ, այդուհանդերձ, չեն կարող հանդես գալ որպես անձը հաստատող փոխարինող փաստաթուղթ՝ անձն անհատականացնող բավարար տվյալներ չպարունակելու պատճառով (օրինակ, լուսանկարի բացակայությունը): Բացի այդ, հրամանի ընդունման իրավական հիմքը «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին և «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասերի՝ անձնագիրը կամ նույնականացման քարտն անվավեր ճանաչելու վերաբերյալ դրույթներն են: Հետևաբար,

հրամանի կարգավորման շրջանակները ևս սահմանափակվում են այդ դեպքերով՝ չանդրադառնալով խնդրո առարկա հարցին:

Անձի անձնագիրը վերցնելու դեպքում տրամադրվող ժամանակավոր փաստաթղթի նմուշը սահմանող՝ ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշմամբ նախատեսված անձնագիրը կորցնելու կամ փոխանակման ներկայացնելու դեպքում քաղաքացու ցանկությամբ ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթի տրամադրման կարգը և ձևը սահմանելու մասին» թիվ 1660-Ն որոշման կարգավորումները տարածվում են միայն այն դեպքերի վրա, երբ քաղաքացին ինքը դիմում է ներկայացնում այդպիսի փաստաթուղթ ստանալու խնդրանքով՝ անձնագիրը կորցնելու կամ փոխանակման ներկայացնելու դեպքերում:

Մինչդեռ, կատարված փոփոխությունների արդյունքում, փաստորեն, կասկածյալին կամ մեղադրյալին անձնագրի փոխարեն անձը հաստատող փաստաթուղթ տրամադրելու վերաբերյալ դրույթն ուղղակի հանվեց՝ առանց փոխարենը նոր կառուցակարգերի ամրագրման: Քննարկվող դրույթի գործողության դադարեցման պայմաններում Սահմանադրական դատարանն, այդուհանդերձ, որոշման եզրափակիչ մասում արձանագրել է, որ *Կառավարության որոշման 19-րդ կետի 3-րդ պարբերությունը (Կառավարության 2008 թվականի հուլիսի 31-ի թիվ 823-Ն որոշման խմբագրությամբ) «համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը սահմանադրաիրավական այնպիսի բովանդակության շրջանակներում, համաձայն որի՝ հետաքննության կամ նախաքննության մարմինների կողմից անձնագրի փոխարեն անձը հաստատող փաստաթուղթ պետք է տրվի կալանքի տակ չգտնվող այն կասկածյալներին և մեղադրյալներին, ում նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն՝ չհեռանալու մասին»:*

Ստացվում է, որ քննարկվող դեպքերում կասկածյալին կամ մեղադրյալին անձը հաստատող փաստաթուղթ տրամադրելու օրենսդրական կարգավորումների բացակայությունն այնքանով, որքանով արդեն իսկ չկան որևէ սահմանադրաիրավական ընկալման և մեկնաբանության հիմքեր, խնդիրներ կարող է առաջացնել Սահմանադրական դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների կատարման տեսանկյունից: Ուստի, խնդրի լուծումը պետք է տրվի օրենսդրական բացի հաղթահարման ճանապարհով՝ համապատասխան ընթացակարգերի ամրագրմամբ:

Հետևաբար, հաշվի առնելով քրեական վարույթի շրջանակներում անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի ապահովման կարևորությունը, մտահոգված լինելով ներկայացված խնդիրների շարունակականությամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ *անհրաժեշտ է՝*

1. ապահովել ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի վերացման պահին այդպիսի սահմանափակման վերացման վերաբերյալ տեղեկությունների պարտադիր տրամադրումը ՍԷԿՏ համակարգին.

2. օրենսդրական մակարդակում նորմատիվ իրավական կարգավորման ենթարկել անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումները վերացվելու դեպքում ՍԷԿՏ համակարգում տեղեկատվությունը տեղադրելու կառուցակարգերը՝ հստակ ամրագրելով իրավասու մարմնի կոնկրետ պարտականությունը.

3. բացառել քրեական գործով վարույթի ընթացքում խափանման միջոցի կիրառման շրջանակներից դուրս կասկածյալի և մեղադրյալի անձնագիր վերցնելու կամ պահելու պրակտիկան.

4. ամրագրել ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառման շրջանակներում կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը վերցնելիս դրա փոխարեն անձը հաստատող փաստաթուղթ տրամադրելու օրենսդրական պահանջ և դրա ապահովմանն ուղղված ընթացակարգեր:

4. Քրեական վարույթի շրջանակներում վկայի և տուժողի, ինչպես նաև դատավարության մասնակից չհանդիսացող անձանց անձնագրերը վերցնելը և նրանց նկատմամբ հանրապետությունից դուրս գալու արգելք սահմանելու ոչ իրավակիրառ պրակտիկան

Քրեական գործով վարույթի շրջանակներում անձի անձնագիրը վերցնելու և ՍԷԿՏ համակարգի կիրառմամբ ազատ տեղաշարժվելու իրավունքին միջամտելու պրակտիկան ոչ իրավաչափ դրսևորումներ է ունեցել նաև այն առումով, որ այդպիսի սահմանափակումները կիրառվել են քրեական գործով վարույթին որպես վկա կամ տուժող հանդես եկող, դատավարական կարգավիճակ չունեցող անձանց նկատմամբ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ այդպիսի գործողության իրավական հիմքերի բացակայության պայմաններում:

2017 թվականի ընթացքում խնդրի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանին բողոքների հասցեագրումը շարունակական է եղել: Այսպես, օրինակ, քրեական գործով որպես տուժող ճանաչված անձը Պաշտպանին ներկայացված բողոքում տեղեկացրել է, որ ինքը ցանկացել է մեկնել այլ երկիր, սակայն «Զվարթնոց» օդանավակայանում իրեն տեղեկացրել են, որ սահմանափակված է ՀՀ-ից դուրս գալու իր իրավունքը: Ըստ ՀՀ ոստիկանության պարզաբանման՝ տեղի ունեցածը թյուրիմացության արդյունք էր, և կիրառված արգելանքը վերացվել է: Մեկ այլ դեպքում, փաստաբանը տեղեկացրել է, որ իր վստահորդները քրեական գործով հրավիրվել և հարցաքննվել են որպես վկաներ: Վերջիններիս նկատմամբ, սակայն, կիրառվել է ՀՀ պետական սահմանը հատելու արգելք:

Այս առումով, իրավակիրառ պրակտիկայի այսպիսի ոչ իրավաչափ դրսևորումներ արձանագրվել են նաև ՀՀ գլխավոր դատախազության կողմից: Ըստ ներկայացված տվյալների՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատախազական հսկողության կամ ստացված բողոքների քննարկման շրջանակներում 2017 թվականի ընթացքում գրանցվել է որպես վկա կամ տուժող հանդես եկող կամ դատավարության մասնակից չհանդիսացող անձանց նկատմամբ ՍԷԿՏ համակարգի կիրառմամբ հանրապետությունից դուրս գալու իրավունքի սահմանափակման 3 դեպք, որոնցով ձեռնարկվել են դատախազական ներգործության միջոցներ:

Թեև խնդրի կապակցությամբ ներկայացված բողոքները Պաշտպանի միջամտության արդյունքում ստացել են դրական լուծում՝ անձի նկատմամբ այդպիսի սահմանափակումների վերացմամբ, այդուհանդերձ, մտահոգիչ է, որ խնդիրը համակարգային առումով մնում է չլուծված:

Այս առումով, Մարդու իրավունքների պաշտպանը վերահաստատում է իր եզրահանգումն առ այն, որ քրեական գործով որպես վկա կամ տուժող հանդես եկող անձանց ազատ տեղաշարժվելու իրավունքը ՍԷԿՏ համակարգի կիրառմամբ առանց որևէ

իրավական հիմքերի սահմանափակելու արատավոր պրակտիկան կրում է շարունակական բնույթ, ինչն անընդունելի է:

Քրեական գործով որպես վկա կամ տուժող հանդես եկող անձանց նկատմամբ այդպիսի սահմանափակումների կիրառման պրակտիկան, անգամ եթե այն վարույթի մասնակցի դատավարական պարտականությունների ապահովման իրավաչափ նպատակ է հետապնդում, օրինական և հիմնավորված կարող է լինել միայն, եթե այդ նպատակի իրագործմանն ուղղված ընթացակարգն ունի քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված հիմքեր:

Հարցի կապակցությամբ ՀՀ Սահմանադրական դատարանը 2017 թվականի ապրիլի 4-ի ՍԴՈ-1360 որոշմամբ արձանագրել է, որ Հայաստանի Հանրապետությունում որևէ իրավական ակտով վկայից, տուժողից անձնագիր վերցնելու կամ այդ անձի վերաբերյալ տեղեկությունները ՍԷԿՏ համակարգ տեղադրելու պահանջ չի նախատեսվում: Սահմանադրական դատարանը նշել է նաև, որ «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից ներկայացված տեղեկատվությունը՝ Հայաստանի Հանրապետությունում առկա նման պրակտիկայի առնչությամբ, վերաբերում է իրավասու մարմինների՝ օրենքով չնախատեսված գործողություններին, որը պետք է ստանա համապատասխան գնահատական ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության տեսքով:»: Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ այդպիսի իրավակիրառական պրակտիկան անհարիր է իրավական պետության սահմանադրական սկզբունքի և անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի երաշխավորման համատեքստում:

Ասվածը հիմք ընդունելով՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է՝

1. քրեական գործով վարույթին որպես վկա կամ տուժող հանդես եկող կամ դատավարական կարգավիճակ չունեցող անձի ազատ տեղաշարժվելու իրավունքը որևէ դեպքում չի կարող սահմանափակվել՝ վերջինիս անձնագիրը վերցնելու կամ ՍԷԿՏ համակարգով հանրապետությունից դուրս գալու արգելքի հիման վրա. դրա օրենսդրական հիմքերը բացակայում են.

2. անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի նմանատիպ ցանկացած խախտում պետք է օրենսդրությամբ սահմանված կարգով առաջ բերի պատասխանատու պաշտոնատար անձի պատասխանատվության հարց:

5. Հանցագործությունների վերաբերյալ ֆիզիկական անձանց հաղորդումները չքննարկելու և հաղորդումն ընդունող մարմնի հայեցողության պրակտիկան

2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է, որ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են:

Հանցագործություններից մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության պետության պարտականությունը ենթադրում է քրեադատավարական օրենքով նախատեսված ընթացակարգի նախաձեռնում ենթադրվող հանցավոր արարքի յուրաքանչյուր դեպքի առնչությամբ:

Ասվածի համատեքստում անհրաժեշտ է անդրադառնալ հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման՝ օրենքով նախատեսված ընթացակարգերի գործնական ապահովման խնդիրներին: Մասնավորապես, Մարդու իրավունքների

պաշտպանի ներկայացված բողոքների (որոնք շարունակվել են նաև 2017 թվականին) ուսումնասիրության շրջանակներում իրավակիրառ պրակտիկայի դիտարկումը թույլ է տալիս վեր հանել հանցագործության մասին հաղորդումների քննարկման հետ կապված հետևյալ խնդիրները՝

• հանցագործության մասին հաղորդումները չընդունելը և դրանց ընթացք չտալը

Այսպես, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ստացվել են բանավոր բողոքներ, որ իրավապահ մարմինները հրաժարվում են հանցագործության մասին հաղորդումն ընդունել և գրանցել: Նման դեպքերում անձին ներկայացվում են նույնաբովանդակ պատճառաբանություններ, որ ենթադրյալ կոնկրետ հանցագործության քննությունը ենթակա չէ տվյալ մարմնին կամ, օրինակ, ընդդատյա չէ այդ մարմնի տարածքային այս կամ այն բաժնին:

Բողոքներից մեկով, օրինակ, փաստաբանը տեղեկացրել էր, որ հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել ՀՀ ոստիկանություն, սակայն օրենքով սահմանված կարգով որևէ որոշում չի ստացել: Փաստաբանը տեղեկացրել է նաև, որ հաղորդման կապակցությամբ կայացված որոշման պատճենն իրեն չուղարկելու պատճառների վերաբերյալ պարզաբանում ստանալու և այն իրենց տրամադրելու պահանջով գրավոր դիմել է ՀՀ ոստիկանություն, սակայն նշված դիմումի կապակցությամբ ևս պատասխան չի ստացել: Խնդրի կապակցությամբ ՀՀ ոստիկանության կողմից հաստատվել է իր ծառայողների պարտականությունների չկատարման փաստը, և վերջիններս ենթարկվել են կարգապահական պատասխանատվության: Բացի այդ, փաստաբանի ներկայացրած հաղորդումը քննարկվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգին համապատասխան:

• հանցագործության մասին հաղորդումները «ստուգման» ընթացակարգի շրջանակներում քննարկելը, այն եզրակացությամբ ավարտելը և անձին գրությամբ պատասխանելը՝ առանց քրեադատավարական օրենքով նախատեսված որոշումներից որևէ մեկի կայացման:

2017 թվականին ևս հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման վերաբերյալ բողոքներ (ահազանգեր) են ստացվել, որ Ոստիկանության ծառայողների կողմից հանցագործության մասին հաղորդումները քննարկելիս ոչ բոլոր դեպքերում է կայացվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածի ուժով կայացման ենթակա որոշումներից որևէ մեկը, ինչը հանգեցրել է քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի ոտնահարմանը:

Արձանագրվել է նաև դեպք, երբ քննչական մարմինն անձին գրությամբ պարզաբանել է, որ վերջինիս հաղորդումը նախկինում արդեն քննարկված հաղորդմանը նույնաբովանդակ է, մինչդեռ Պաշտպանի միջնորդությամբ իրականացված դատախազական հսկողության արդյունքում պարզվել է հակառակը:

Հանցագործության մասին հաղորդումների քննարկման քրեադատավարական պահանջների չպահպանման խնդիրն արձանագրվել է նաև իրավասու մարմինների կողմից:

Այսպես, խնդրի լուծմանն ուղղված քայլերի կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազության տրամադրած տվյալների համաձայն՝ 2017 թվականի ընթացքում արձանագրվել է հանցագործության մասին հաղորդումները քրեադատավարական

կարգավորումներին համապատասխան չքննարկելու և որոշում չկայացնելու 15 դեպք: Դատախազություն ստացված բողոքների քննարկման արդյունքում արձանագրված 11 դեպքով հանձնարարվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածներով սահմանված կարգով նախապատրաստել նյութեր և կայացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված որոշումներից որևէ մեկը:

ՀՀ ոստիկանության ներկայացրած տեղեկությունների համաձայն՝ 2017 թվականի ընթացքում Ոստիկանության ծառայողների կողմից հանցագործության հատկանիշներ պարունակող հաղորդումներ չընդունելու և դրանց սահմանված կարգով ընթացք չտալու վերաբերյալ ստացված դիմումների կապակցությամբ կատարվել են 11 ուսումնասիրություններ, որոնց արդյունքները թողնվել են անհետևանք և 14 ծառայողական քննություններ, որոնց արդյունքներով ոստիկանության 19 ծառայողներ ենթարկվել են կարգապահական տույժերի (9-ին հայտարարվել է «Նկատողություն», 7-ին՝ «Խիստ նկատողություն», 3-ի կոչումն իջեցվել է մեկ աստիճանով): Ըստ պարզաբանման՝ ծառայողական քննությունների բոլոր դեպքերով անձանց իրավունքները վերականգնելու նպատակով հաղորդումները Ոստիկանության կողմից ընդունվել են: Միևնույն ժամանակ, տրամադրված տեղեկությունների համադրումից ստացվում է, որ նշված 14 ծառայողական քննություններից 11-ը նախաձեռնվել է անձանց բողոքների հիման վրա՝ Դատախազության միջնորդությամբ:

Չնայած առանձին դեպքերով հաղորդում ներկայացրած անձանց իրավունքների վերականգնմանն ու խախտում թույլ տված պաշտոնատար անձանց պատասխանատվության կիրառմանը՝ Պաշտպանին ներկայացված բողոքները փաստում են, որ հանցագործության մասին հաղորդումը չընդունելու կամ այն որպես ահազանգ դիտարկելու, ստուգման ընթացակարգը եզրակացությամբ ավարտելու, հաղորդում ներկայացրած անձին չպատասխանելու կամ գրությամբ պատասխանելու ոչ իրավաչափ դեպքերը շարունակվում են:

Հանցագործության մասին հաղորդումներին ընթացք տալու օրենսդրական կարգավորվածության առումով հարկ է առանձնացնել ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից հանցագործությունների, վարչական իրավախախտումների, պատահարների վերաբերյալ հաղորդումներն ընդունելու, գրանցելու, հաշվառելու և դրանց ընթացք տալու կարգը սահմանելու մասին» թիվ 1495-Ն որոշման ընդունումը[129]: Մասնավորապես, որոշման 5-րդ կետի համաձայն՝ հաղորդումները, անկախ իրավախախտումների կատարման կամ պատահարների առաջացման վայրից և ժամանակից, ինչպես նաև դրանցում պարունակվող տեղեկությունների ամբողջականությունից, պարտադիր ենթակա են ընդունման ոստիկանության տարածքային մարմիններում և գրանցման ոստիկանության՝ հերթապահ մաս ունեցող տարածքային մարմիններում:

Որոշման 62-րդ կետն ամրագրում է, որ հանցագործության մասին հաղորդումների ստուգումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի պահանջների պահպանմամբ, որի արդյունքում ընդունվում է նույն օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված որոշումներից մեկը:

[129] Որոշումն ուժի մեջ է մտել 2018 թվականի հունվարի 1-ից:

Որպես խնդրի լուծմանն ուղղված կարգավորում՝ Կառավարության որոշմամբ նախատեսվում է նաև քաղաքացիների իրավունքների պարզաբանմամբ կտրոն-ծանուցագրերի տրամադրում՝ անձանց իրազեկվածությանը նպաստելու նպատակով:

Կառավարության վերը նշված որոշման ընդունումն ինքնին դրական է այն առումով, որ այդպիսով ամրագրվեցին իրավախախտումների ընդունման, գրանցման, հաշվառման և ստուգման ոչ դատավարական հարցերի կարգավորման իրավական հիմքերը[130]:

Միևնույն ժամանակ, հարկ է նկատել, որ Կառավարության որոշմամբ ամրագրված՝ քրեական դատավարության օրենսգրքի պահանջների պահպանմամբ ստուգում իրականացնելու պահանջը վերաբերում է հանցագործության մասին հաղորդմանը:

Մինչդեռ, Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված բողոքներում բարձրացված բուն խնդիրն էլ այն է, որ անձանց հաղորդումները, որպես այդպիսին, չեն դիտարկվել իբրև հանցագործության մասին հաղորդում:

Ասվածի հետ կապված, Կառավարության որոշման՝ հասկացությունները սահմանող 3-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործության մասին հաղորդումները՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 177-179-րդ հոդվածներով նախատեսված քրեական գործ հարուցելու առիթներն են:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածը սահմանում է, որ. «Քրեական գործ հարուցելու առիթներն են՝

1) հանցագործությունների մասին ֆիզիկական և իրավաբանական անձանց հաղորդումները՝ ուղղված հետաքննության մարմնին, քննիչին, դատախազին.

2) հանցագործությունների մասին լրատվության միջոցների հաղորդումները.

3) հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի, դատավորի կողմից հանցագործության մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի և հետևանքների հայտնաբերումը՝ իրենց լիազորություններն իրականացնելիս:»:

Իսկ օրենսգրքի 177-179-րդ հոդվածներով կարգավորվում են քրեական գործ հարուցելու վերը նշված առիթներին ներկայացվող առավելապես տեխնիկական պահանջները (ռեկվիզիտները):

Ասվածը նշանակում է, որ հանցագործության մասին հաղորդմանը, որպես այդպիսին, ներկայացվող բովանդակային պահանջ օրենսդրորեն նախատեսված չէ:

Այդ բովանդակային պահանջները հստակեցված են ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային դիրքորոշումներով: Մասնավորապես՝

• քրեական գործ հարուցելու առիթ կարող է հանդիսանալ ոչ թե ցանկացած, այլ միայն հանցագործության մասին արված հաղորդումը.

• առիթը պայման է, որի առկայության դեպքում օրենքը լիազորում է իրավասու մարմիններին և պաշտոնատար անձանց մտնել իրավահարաբերությունների մեջ, կատարել գործողություններ, որոնք իրենց միասնությամբ ներկայացնում են քրեական դատավարության սկզբնական փուլի գործունեություն.

• կոնկրետ հանցագործության մասին տվյալներ բովանդակելու պահանջը, սակայն, չի նշանակում, որ անձն իր հաղորդման մեջ պետք է ներկայացնի այնպիսի փաստական

[130] Բանն այն է, որ մինչև Կառավարության վերոնշյալ որոշման ընդունումը՝ այդպիսի իրավական հիմք էին ծառայում ՀՀ գլխավոր դատախազի և Ներքին գործերի նախարարի 1999 թվականի թիվ 12/354 համատեղ հրամանի պահանջները: Մինչդեռ, այդ հրամանի՝ որպես նորմատիվ իրավական ակտի պետական գրանցումն ապահովված չէր «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

տվյալներ, որոնք իրենց բնույթով բավարար լինեն հանցագործության հատկանիշների առկայությունն առերևույթ հաստատված համարելու համար.

• հաղորդման մեջ պարունակվող տեղեկությունները կարող են բավարար լինել այն քննարկելուն, ստուգելուն և լուծելուն ուղղված օրենսդրական կարգավորումները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածներ) գործողության մեջ դնելու համար, եթե ողջամիտ հավանականություն կա, որ դրանց ստուգման արդյունքում կարող են հայտնաբերվել, այլ ոչ թե հաստատապես հայտնաբերվելու են քրեական գործ հարուցելու բավարար հիմքեր.

• այդ չափանիշին համապատասխանող յուրաքանչյուր հաղորդում առաջացնում է վարույթ իրականացնող մարմնի պարտականությունը դրա կապակցությամբ կայացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված որոշումներից մեկը[131]:

Ասվածի հաշվառմամբ, Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ **հաղորդումների քննարկման և լուծման դատավարական ընթացակարգի նախաձեռնումը պայմանավորված է ոչ թե հանցագործության մասին ներկայացված տեղեկության արժանահավատության և հավաստիության գնահատման արդյունքներով, այլ դրա վերաբերելիության նախնական ստուգմամբ, այսինքն՝ այն եզրահանգմամբ, որ ներկայացված հաղորդման մեջ առկա են տվյալներ, որոնք կարող են որևէ կերպ առնչվել քրեական օրենքով արգելված արարքին:**

Այս առումով, կարծում ենք, որ հաղորդումն ընդունող մարմնի հայեցողությունը, դրա հիման վրա ընթացակարգ նախաձեռնելու առումով, պետք է սահմանափակվի միայն ներկայացված տեղեկության՝ ենթադրյալ հանցագործության հետ հնարավոր կապի ստուգմամբ՝ առանց իրավական գնահատական տալու դրանց ճշմարտացիությանն ու հիմնավորվածությանը:

Հատկանշական է, որ հանցագործության մասին հաղորդմամբ բովանդակվող տեղեկությունների օրենսդրական կարգավորման մոտեցում է որդեգրվել Քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով, որի 173-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ համապատասխան հաղորդումը համարվում է առերևույթ հանցանքի մասին, եթե դրանով փաստվում է այնպիսի գործողություն կամ անգործություն, որին ողջամտորեն կարող է տրվել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված որևէ հանցավոր արարքին համապատասխանելու նախնական իրավական գնահատական:

Խնդրի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական գնահատականներն ու գործող քրեադատավարական օրենքի պահանջները, կարծում ենք, ապահովում են բավարար որոշակիություն՝ հանցագործության մասին հաղորդման ստուգման և քրեադատավարական ընթացակարգերի կիրառման առումով: Այդուհանդերձ, «հանցագործության մասին հաղորդման» հասկացության օրենսդրական ամրագրումը՝ Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքով սահմանված տարրերի ու հատկանիշների արտացոլմամբ, կարող է նպաստել իրավակիրառ պրակտիկայում բարձրացված խնդիրների բացառմանը:

Վերը նշվածի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է՝

---

[131] Հանցագործությունների մասին հաղորդումների ընդունման և քննարկման՝ քրեադատավարական կարգավորումների, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի վերլուծությունն տե՛ս նաև 2016 թվականի տարեկան զեկույցի էջեր 137-140:

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում ամրագրել «հանցագործության մասին հաղորդման» հասկացությունը՝ օրենսդրական մակարդակում հստակեցնելով հաղորդման բովանդակությանը ներկայացվող պահանջները՝ իբրև քրեական գործ հարուցելու առիթ դիտարկելու առումով.

2. հանցագործությունների վերաբերյալ քաղաքացիների հաղորդումները քննարկելիս գործնականում ապահովել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջները՝ Վճռաբեկ դատարանի կողմից տրված իրավամեկնաբանման հաշվառմամբ: Քրեադատավարական օրենքի դրույթները պետք է անվերապահորեն կիրառվեն հանցագործությունների վերաբերյալ հաղորդումների ընդունման հենց սկզբնական փուլից:

6. Մեղադրյալի համաձայնության՝ նոտարական կարգով հաստատումը՝ որպես վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով քրեական գործով վարույթի կարճման նախապայման դիտարկելու ոչ իրավաչափությունը

Դեռևս 2016 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված բողոքների ուսումնասիրության արդյունքներով Պաշտպանն արձանագրել է ոչ իրավաչափ պրակտիկա, երբ քրեական գործով վարույթը կարճելու համար վարույթն իրականացնող մարմինը պահանջել է մեղադրյալի՝ նոտարական կարգով հաստատված համաձայնություն: Նման պահանջ ներկայացվել է այն պատճառաբանությամբ, որ մեղադրյալը պետք է անձամբ հայտնի նման դիրքորոշում, ինչը քրեական վարույթն իրականացնող մարմին վերջինիս չներկայանալու դեպքում կարող է հավաստվել միայն նոտարական կարգով հաստատված համաձայնությամբ:

Հարցի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը 2017 թվականին կայացրել է մարդու իրավունքների և ազատությունների խախտման մասին որոշում՝ ներկայացնելով հետևյալ հիմնական փաստարկներն ու եզրահանգումները՝

- քրեական գործով վարույթի շրջանակներում անձի համաձայնությունը՝ որպես վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով վարույթի կարճման անհրաժեշտ նախապայման դիտարկելն ու վարույթն իրականացնող մարմնի՝ անձի դիրքորոշումը պարզելու պարտականության սահմանումը կոչված են ապահովելու վերջինիս արդար դատաքննության իրավունքն ու անմեղության կանխավարկածի անշեղ պահպանումը.
- անձի իրավունքների պաշտպանության նույն տրամաբանությունն է ամրագրվել նաև «եթե դրա դեմ առարկում է մեղադրյալը» քրեադատավարական դրույթի բովանդակային ապահովման վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներում: Մասնավորապես, քննարկվող հիմքով քրեական գործով վարույթը կարճելուց ենթադրվում է վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը՝ հավաստիանալու, որ հենց այն անձն է տվել իր համաձայնությունը, ում նկատմամբ վարույթը կարճելու մասին որոշում պետք է կայացվի, և այդպիսի համաձայնությունը տրվել է կամովին՝ դրա բոլոր իրավական հետևանքների գիտակցմամբ: Միևնույն ժամանակ, այդպիսի համաձայնությունը ստանալու օրենսդրական պահանջը չի կանխորոշում դրա իրավաչափության ապահովման կոնկրետ եղանակները.
- այս առումով, ընդունելի է, որ անձի կողմից վարույթն իրականացնող մարմին անձամբ ներկայանալն ու այդպիսի համաձայնության գրավոր ձևակերպումը կարող են

հանդես գալ իբրև անձի կամաարտահայտության պատշաճ ամրագրում: Նույն կերպ, օրինակ, հետախուզման մեջ գտնվող անձի տված համաձայնությունը՝ անձի ինքնության մեջ հավաստիանալու առումով, կարող է ապահովվել նոտարական վավերացմամբ.

• այդուհանդերձ, անձի դիրքորոշումը ճշտելու և ըստ այդմ գործով վարույթը կարճելու մասին որոշում կայացնելու իրավաչափությունը կարող է ապահովվել նաև կոնկրետ գործի հանգամանքներից բխող այլ պայմանների առկայությամբ, ասենք, երբ անձը իր պաշտպանության իրավունքն իրացնում է միջնորդավորված ձևով՝ պաշտպանի միջոցով ներկայացված լինելու և իր դիրքորոշումն այդպիսով արտահայտելու եղանակով.

• նման դեպքերում, պաշտպանի՝ որպես իր պաշտպանյալի իրավունքներն ու օրինական շահերը ներկայացնող և ըստ այդմ էլ վերջինիս դիրքորոշմամբ կաշկանդված դատավարության սուբյեկտի գործողությունները պետք է դիտարկվեն իբրև անձի՝ իր իրավունքների և օրինական շահերի միջնորդավորված պաշտպանություն՝ նաև խնդրո առարկա հարցի կապակցությամբ համաձայնություն տալու առումով.

• գործնականում վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով վարույթը կարճելու մասին որոշում կայացնելու համար անձի համաձայնության նոտարական վավերացման պարտադիրությունը կարող է ոչ միայն չհանդիսանալ անձի իրավունքների ապահովման երաշխիք, այլև վերածվել լրացուցիչ դժվարություններ առաջացնող պահանջի՝ խոչընդոտելով վերջինիս նկատմամբ քրեական հետապնդման դադարեցմանը՝ օրենքով նախատեսված այդպիսի հիմքերի առկայության պայմաններում:

Որպես դրական զարգացում՝ պետք է նշել, որ Պաշտպանի՝ մարդու իրավունքների և ազատությունների խախտման մասին որոշմանն ի պատասխան՝ ՀՀ դատախազությունը տեղեկացրել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի (վաղեմության ժամկետները անցնելու) հիմքով անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշում է կայացվել:

ՀՀ գլխավոր դատախազության ներկայացրած տեղեկությունների համաձայն՝ 2017 թվականի ընթացքում քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից քրեական գործով ներգրավված պաշտպանի ներկայացրած՝ մեղադրյալի ստորագրությամբ վավերացված համաձայնությունն իբրև քրեական գործով վարույթը կարճելու և մեղադրյալի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցնելու՝ քրեադատավարական օրենքի պահանջներին բավարարող հիմք չդիտելու վերաբերյալ ստացվել է 2 բողոք:

Միաժամանակ, նշված հարցի կապակցությամբ ՀՀ դատախազությունը դիրքորոշում է արտահայտել, որ պաշտպանի կողմից ներկայացված՝ մեղադրյալի ստորագրությամբ վավերացված համաձայնությունը դիտվում է որպես քրեական գործով վարույթը կարճելու և մեղադրյալի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցնելու՝ քրեադատավարական օրենքի պահանջներին համապատասխանող հիմք, քանի որ այդ դեպքում պաշտպանն է կրում կեղծ փաստաթուղթ ներկայացնելու համար օրենքով նախատեսված անբարենպաստ հետևանքները:

ՀՀ դատախազության՝ իբրև մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության սահմանադրական գործառույթ իրականացնող մարմնի այդպիսի

պաշտոնական դիրքորոշման արտահայտումը պրակտիկայում բարձրացված խնդիրը բացառելուն ուղղված առաջընթաց քայլ է:

Չնայած դրան՝ Մարդու իրավունքների պաշտպանին նույն խնդրով բողոքներ են ներկայացվել նաև 2017 թվականին: Օրինակ՝ դեպքերից մեկում արտասահմանում բնակվող հետախուզման մեջ գտնվող մեղադրյալը նոտարական վավերացմամբ լիազորագրով համաձայնություն է տվել իր նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցնելու ու քրեական գործով վարույթը կարճելու վերաբերյալ՝ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով:

Վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով քրեական հետապնդման չենթարկվելու ինստիտուտի կարևորությանն անդրադարձել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, մասնավորապես նշելով, որ վաղեմությունը կարող է բնորոշվել իբրև հանցանք կատարելուց որոշակի ժամանակահատված անց անձի՝ քրեական հետապնդման չենթարկվելու կամ չդատապարտվելու իրավունք: Վաղեմության ժամկետների կիրառությունը՝ որպես անդամ պետությունների իրավական համակարգերին բնորոշ ինստիտուտ, որոշակի նպատակներ է հետապնդում. այն կոչված է ապահովելու իրավական որոշակիությունն ու վերջնականությունը և կանխելու անձի իրավունքների հնարավոր խախտումներն այն դեպքերում, երբ դատարանները պետք է որոշում կայացնեն ժամկետները բաց թողնելու արդյունքում ոչ հավաստի ապացույցների հիման վրա[132]:

Մինչդեռ, վարույթն իրականացնող մարմնի կողմից միջնորդության քննարկումը հետաձգվել է մինչև գործի համար էական հանգամանքների պարզումը՝ օտարերկրյա իրավասու մարմիններին իրավական օգնություն ցույց տալու մասին հարցման հիման վրա (լիազորագիրը համապատասխան նոտարի կողմից հաստատված լինելու և անձի դատվածություն ունենալու հանգամանքները): Արդյունքում, անձի նկատմամբ քրեական հետապնդումը մեկ տարուց ավելի չի դադարեցվել՝ օրենքով նախատեսված այդպիսի հիմքերի առկայության դեպքում:

Ստացվում է, որ թեև վարույթն իրականացնող մարմինը մեղադրյալի համաձայնության նոտարական վավերացման պահանջ չի ներկայացրել, սակայն պաշտպանության կողմի նախաձեռնությամբ է այդպիսի փաստաթուղթ տրամադրվել, ինչն ըստ էության հիմք է ծառայել դրա հավաստիության ստուգմանն ուղղված գործողությունների իրականացման համար:

Այլ կերպ ասած, վարույթն իրականացնող մարմինը փաստորեն նախկինի պես չի ծանրաբեռնում անձին լրացուցիչ՝ քրեադատավարական կարգավորումներից չբխող պարտավորություններով, սակայն ինքն է նախաձեռնում տրված համաձայնության իսկության մեջ հավաստիանալու միջոցառումներ՝ անձի՝ քրեական հետապնդման ներքո գտնվելու ժամկետների ձգձգմամբ: Խնդիր է առաջանում նաև այն առումով, որ վարույթն իրականացնող մարմնի գործողություններով հետապնդվող նպատակն ի վերջո վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով քրեական հետապնդման դադարեցման իրավական և փաստական հիմքերի հավաստումն է, որոնք, անկախ այդպիսի ստուգման

---

[132] Տե՛ս Կոեմը և այլք ընդդեմ Բելգիայի (Coeme and others v. Belgium) գործով 2000 թվականի հոկտեմբերի 18-ի վճիռը, գանգատներ 32492/96, 32547/96 և այլն, կետ 146,
Սթաբբինգսը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության (Stubbings and Others v. the United Kingdom) գործով 1996 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատներ 22083/93; 22095/93, կետ 51:

արդյունքներից (փաստաթղթի ձևական պահանջների պահպանման առումով), արդեն իսկ առկա են՝ վարույթն իրականացնող մարմին անձի գրավոր համաձայնությունը ներկայացնելու պահից:

Թեև «ստուգողական միջոցառումներն» ինքնին կարող են չհանգեցնել անձի իրավունքների խախտման, սակայն դրանց տևականությունն անմիջականորեն շոշափում է քրեական հետապնդման ենթարկվող անձի շահերը, անհամաչափորեն կարող է սահմանափակել նրա իրավունքները և ի վերջո հանգեցնել դրանց խախտման:

Ասվածի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է, որ՝

1. խնդրի լուծումը պետք է տրվի իրավակիրառ պրակտիկայում դրա բացառման միջոցով.

2. վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով անձի նկատմամբ քրեական հետապնդումը պետք է դադարեցվի բոլոր այն դեպքերում, երբ առկա է անձի գրավոր համաձայնությունը: Վերջինի հավաստիության ստուգմանն ուղղված վարույթն իրականացնող մարմնի գործողությունները պետք է իրականացվեն այնպիսի ծավալով և տևողությամբ, որոնք արդարացված կլինեն օրենքով նախատեսված իրավական և փաստական հիմքերի հավաստման տեսանկյունից:

7. Քրեական գործով վարույթի շրջանակներում անձի ոչ պատշաճ ծանուցված լինելու և դրանով պայմանավորված՝ բերման ենթարկելու ոչ իրավաչափությունը

Քրեական դատավարությանը մասնակցող անձինք քրեադատավարական օրենքին համապատասխան կրում են քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով ներկայանալու պարտականություն: Միևնույն ժամանակ, անձի բարեխղճության պարագայում անգամ այդ պարտավորությունը չի ապահովվի, եթե անձը պատշաճ ծանուցված չէ:

Խնդրի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված բողոքների ուսումնասիրության արդյունքներով վեր են հանվել հետևյալ խնդիրները՝

- անձին՝ որպես առանց հարգելի պատճառի քննության չներկայացող դատավարության մասնակցին բերման ենթարկելն այն դեպքում, երբ ծանուցագիրը սահմանված ժամկետում վերջինիս հանձնված չի եղել.
- հարցաքննության կանչելու մասին ծանուցագրի ձևին և բովանդակությանը ներկայացվող օրենսդրական պահանջները չպահպանելը:

Մասնավորապես, 2017 թվականի ընթացքում ևս Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացվել են մի շարք գրավոր և բանավոր բողոքներ, որ հարցաքննության կանչելու մասին ծանուցագիրն անձին չհանձնած՝ վերջինս՝ որպես առանց հարգելի պատճառի քննության չներկայացող դատավարության մասնակից, բերման է ենթարկվել քրեական վարույթն իրականացնող մարմին:

Բողոքները նաև վերաբերել են անձանց հարցաքննության կանչելուն՝ պատշաճ չտեղեկացնելով կոնկրետ գործի, իրենց կարգավիճակի, ինչպես նաև իրենց կարգավիճակից բխող իրավունքների և պարտականությունների մասին: Բանավոր բողոքներով անձինք ցանկացել են տեղեկանալ, թե արդյոք այդ եղանակով հարցաքննության կանչելն իրավաչափ է, և արդյոք իրենք այդպիսի դեպքերում պարտավոր են ներկայանալ վարույթն իրականացնող մարմին: Մի շարք դեպքերում

անձանց ներկայացված ծանուցագրերում նշված չեն եղել, թե ինչ դատավարական կարգավիճակով են վերջիններս կանչվել հարցաքննության:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ հարցաքննության կանչելու կարգն ամրագրող 205-րդ հոդվածի համաձայն.

«1. Վկան, տուժողը, կասկածյալը և մեղադրյալը քննիչի մոտ կանչվում են ծանուցագրով: Ծանուցագրում նշվում է, թե ով է կանչում, ում, դատավարական ինչպիսի կարգավիճակով, ուր և երբ (օրն ու ժամը) պետք է ներկայանա կանչվողը, ինչպես նաև անհարգելի պատճառներով չներկայանալու հետևանքները:

(…)

3. Հարցաքննության կանչված անձը պարտավոր է քննիչին ներկայանալ նշանակված ժամկետում կամ նրան նախապես իրազեկել չներկայանալու պատճառները: Անհարգելի պատճառով չներկայանալու դեպքում հարցաքննության կանչված անձը կարող է բերման ենթարկվել սույն օրենսգրքի 153-րդ հոդվածով նախատեսված հիմքով, իսկ կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ կարող են կիրառվել նաև սույն օրենսգրքով նախատեսված դատավարական հարկադրանքի այլ միջոցներ(…)»:

Օրենսգրքի 153-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ բերման ենթարկելն առանց հարգելի պատճառի քննության չներկայացող կասկածյալին, մեղադրյալին, ամբաստանյալին, դատապարտյալին, վկային և տուժողին հարկադրաբար քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայացնելն է՝ նրա նկատմամբ սույն օրենսգրքով նախատեսված համապատասխան դատավարական գործողություններ կատարելու համար, որը կարող է զուգորդվել բերման ենթարկվող անձի իրավունքների և ազատությունների ժամանակավոր սահմանափակմամբ:

Քրեական դատավարությանը մասնակցող անձանց պատշաճ ծանուցման և դրանով պայմանավորված բերման ենթարկելու քրեադատավարական կարգավորումների վերլուծությունը հիմք է տվել եզրակացնելու, որ՝

• վարույթն իրականացնող մարմին ծանուցագրով կանչելու պահանջը, ինչպես նաև ծանուցագրի բովանդակությանը ներկայացվող պահանջները, անձանց շրջանակը, ում կարող է հանձնվել ծանուցագիրը, ամրագրված են միայն հարցաքննության կանչելու դատավարական կարգի շրջանակներում.

• «ծանուցագիր» եզրույթի գործածումն ու դրա բովանդակությանը ներկայացվող օրենսդրական պահանջները կանխորոշում են դրա գրավոր ձևի պարտադիրությունը, իսկ անձին բանավոր ծանուցելու պրակտիկան հակասում է քրեադատավարական օրենքի պահանջներին.

• վարույթն իրականացնող մարմին ներկայանալու ծանուցագիրն անձին ժամանակին հանձնելու, վերջինիս կողմից այդ ծանուցագիրը ստացած լինելու և հետևաբար նաև չներկայանալու պատճառների մեջ հավաստիանալու դատավարական որևէ կարգավորում նախատեսված չէ.

• վարույթն իրականացնող մարմին ծանուցագրով կանչելու պահանջը, ինչպես նաև ծանուցագրի բովանդակությանը ներկայացվող պահանջները, անձանց շրջանակը, ում կարող է հանձնվել ծանուցագիրը, թերևս ամրագրված են միայն հարցաքննության կանչելու դատավարական կարգի շրջանակներում.

• մինչդեռ, բերման ենթարկելը՝ որպես անձի իրավունքների և ազատությունների սահմանափակմամբ զուգորդվող դատավարական հարկադրանքի միջոց, կարող է ուղղված լինել նաև բերման ենթարկվողի՝ օրենսգրքով նախատեսված այլ դատավարական գործողությունների մասնակցության ապահովմանը.

• անձին բերման ենթարկելու վարույթն իրականացնող մարմնի որոշման պատճառաբանվածության պահանջը ենթադրում է, որ այդպիսի որոշում կարող է կայացվել միայն անձի պատշաճ ծանուցման և նշանակված ժամկետում ներկայանալուն խոչընդոտող հարգելի պատճառների առկայության մասին անձի կողմից չտեղեկացնելու դեպքում.

• վարույթն իրականացնող մարմին ներկայանալու անհրաժեշտության մասին անձին ծանուցելու պատշաճությունն իր հերթին պետք է կանխորոշվի ոչ միայն ծանուցագիրն անձին հանձնելու փաստով, այլև դրա ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջների պահպանմամբ, ինչպես նաև ծանուցագիրն այնպիսի ողջամիտ ժամկետում հանձնելով, որ անձը ժամանակին ներկայանալու կամ չներկայանալու պատճառների մասին հայտնելու հնարավորություն ունենա:

Արդյունքում, Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրել է, որ անձի պատշաճ ծանուցման և վերջինիս բերման ենթարկելու որոշման իրավաչափության ապահովման նպատակով քրեական գործով վարույթի շրջանակներում ծանուցման հետ կապված հարաբերությունները պետք է հստակ կանոնակարգման ենթարկվեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով[133]:

Սրա հետ կապված, հարկ է արձանագրել, որ վերոնշյալ խնդրի օրենսդրական կանոնակարգումների ամրագրման նպատակով 2017 թվականին նախաձեռնվել է «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ: Նախագծով առաջարկվող լուծումներով նպատակ է հետապնդվում կանոնակարգելու քրեական գործով վարույթի շրջանակներում դատավարությանը մասնակցող անձանց ծանուցման հետ կապված հարաբերությունները՝ մասնավորապես ամրագրելով դատավարական գործողության կամ դատական նիստի մասին ծանուցման եղանակները, ծանուցագրի բովանդակությունը և այն հանձնելու կարգը: Եվ այս առումով, նախագծով առաջարկվող լուծումները սկզբունքորեն ընդունելի են: Միևնույն ժամանակ, Մարդու իրավունքների պաշտպանի կարծիքին ներկայացված նշված նախագծի կապակցությամբ մի շարք առանցքային նկատառումներ են ներկայացվել, որոնք հանգում են հետևյալին՝

• ծանուցագրի բովանդակությունը վարույթն իրականացնող մարմնին ներկայանալու պարտականություն ունեցող անձի համար որոշակիության ապահովման տեսանկյունից, կարծում ենք, պետք է ներառի նաև տեղեկություններ հարուցված քրեական գործով վարույթի վերաբերյալ.

• պետք է օրենսդրորեն ամրագրվի կոնկրետ գործի շրջանակներում տվյալ կարգավիճակով առաջին անգամ ծանուցվող անձին վերջինիս դատավարական իրավունքների և պարտականությունների ցանկն ուղարկելու պահանջ.

• օրենքով նախատեսված դեպքերում անձին սահմանված ժամկետից ուշ ծանուցելը չի կարող բացառել անձի դատավարական իրավունքների իրացումը, այդ թվում՝

[133] Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2016 թվականի տարեկան հաղորդման էջեր 146-149:

կատարման ենթակա դատավարական գործողության շրջանակներում, ինչպես նաև վերջինիս՝ չներկայանալու հարգելի պատճառների մասին վարույթն իրականացնող մարմնին հայտնելու հնարավորության իրացումը.

• պետք է օրենսդրորեն ամրագրվեն ծանուցման պատշաճության առարկայական չափանիշները, այսինքն՝ կոնկրետ ծանուցման եղանակով պայմանավորված՝ այն գործողությունները (փաստերը), որոնց իրականացմամբ (առկայությամբ) ծանուցումը համարվում է պատշաճ:

Ասվածի հաշվառմամբ՝ *Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ.*

1. Քրեական դատավարության օրենսգրքում անհրաժեշտ է ամրագրել վարույթն իրականացնող մարմին ներկայանալու վերաբերյալ անձին ծանուցելու ընթացակարգերը՝ ծանուցման ժամկետների, եղանակների, ծանուցագրի բովանդակության և դրանց առնչվող անձի իրավունքների ու երաշխիքների հետ կապված հարցերի կարգավորմամբ.

2. գործնականում բացառել դեպքերը, երբ անձը բերման է ենթարկվում առանց վարույթն իրականացնող մարմին ներկայանալու պատշաճ ծանուցման.

3. քրեական հետապնդման մարմինների համապատասխան ներկայացուցիչների համար կազմակերպել հատուկ դասընթացներ՝ ուղղված նշված խնդիրների լուծմանը:

8. Ազատությունից զրկելիս անձի իրավունքների երաշխավորումը և գործնական ապահովումը

Անձնական ազատության իրավունքի երաշխավորման հետ կապված համակարգային խնդիրներին մանրամասն անդրադարձ է կատարվել ինչպես Մարդու իրավունքների պաշտպանի 2016 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդման, այնպես էլ 2016 թվականի հուլիսյան իրադարձությունների վերաբերյալ արտահերթ հրապարակային զեկույցի շրջանակներում[134]:

Մասնավորապես, անձի անձնական ազատության իրավունքի պաշտպանության միջազգային իրավական մոտեցումների և սահմանադրահիրավական երաշխիքների հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից առաջ են քաշվել հետևյալ իրավական չափանիշները՝

• անձի անձնական ազատության իրավունքին միջամտության՝ «ազատությունից զրկման» փաստը որոշելիս որոշիչ գործոններ են ազատությունից զրկելու բնույթը, ազատությունից զրկելու օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերը: Օբյեկտիվ կողմը ներառում է ազատությունից զրկման վայրը և պահման ժամանակը, սուբյեկտիվ կողմը՝ անձի համաձայնությունը[135].

• ազատությունից զրկել է համարվում, երբ իրավապահ մարմինը, ուժի գործադրմամբ կամ առանց դրա, անձին արգելում է լքել իր գտնվելու վայրը կամ պահանջում է իր հետ գնալ մեկ այլ վայր կամ անձը ստիպված է հետևել ոստիկանի կամքին: «Ազատությունից զրկել» է համարվում նաև անձին փողոցում մի քանի ժամով

---

[134] Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2016 թվականի տարեկան հաղորդման էջեր 149-154, ինչպես նաև 2016 թվականի հուլիսյան իրադարձությունների վերաբերյալ արտահերթ հրապարակային զեկույցի էջեր 41-59:

[135] Տե՛ս Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի վերաբերյալ ուղեցույցի 5-ից 7-րդ էջերը՝ http://www.echr.coe.int/Documents/Guide_Art_5_ENG.pdf:

կանգնեցնելը և հեռանալն արգելելը[136] կամ օրինակ, ոստիկանության բաժնից դուրս գալն արգելելը, նույնիսկ, եթե անձն այնտեղ է գնացել իր կամքով՝ առանց իրավապահ մարմինների կողմից ուժի գործադրման[137].

- ազատությունից զրկված լինելու փաստի գիտակցումն այս հարցում որոշիչ չէ: Որոշիչ է միայն այն հանգամանքը, որ անձն այլևս չի կարող լքել իր գտնվելու վայրը[138], որը կարող է լինել ոչ միայն իր նպատակային նշանակությամբ որպես այդպիսին օգտագործվող տարածքը (օրինակ՝ խուցը), այլև ցանկացած վայր, այդ թվում՝ տրանսպորտային միջոց[139].
- անձն ազատությունից զրկվածի կարգավիճակ է ձեռք բերում անգամ այն դեպքերում, երբ կամովին ներկայանալով ոստիկանություն՝ հնարավորություն չի ունենում լքել այն.
- անձի անձնական ազատության իրավունքին ցանկացած միջամտություն, անկախ դրա իրականացման՝ օրենքով նախատեսված հիմքերից և ընթացակարգերից, պետք է ենթադրի իրավունքի սահմանափակման բնույթին ու աստիճանին համարժեք իրավական երաշխիքների տրամադրում.
- իրավասու պետական մարմինների գործունեության հիմքում պետք է ընկած լինի այն սկզբունքային մոտեցումը, ըստ որի՝ անձն ազատությունից զրկվելու փաստի ուժով՝ անկախ վարութային առանձնահատկություններից (քրեական, վարչական), ֆորմալ ընթացակարգերի առկայությունից կամ բացակայությունից, օպերատիվ միջոցառումների իրականացումից, պետք է ապահովվի իրավունքների՝ սահմանադրությամբ և միջազգային իրավական նորմերով երաշխավորված իրավունքների նվազագույն ծավալով.
- այլ կերպ ասած, անձին ազատությունից զրկելը՝ անկախ նրանից, թե դա իրականացվել է, ասենք, վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի կամ քրեական դատավարության շրջանակներում, ձերբակալման կամ բերման ենթարկելու ինստիտուտների շրջանակներում, պետք է ապահովվի անձին որոշակի նվազագույն իրավունքներ տրամադրելով և միասնական երաշխիքներ ամրագրելով:

Ընդ որում, նվազագույն իրավունքների ապահովման պահանջն ուղղված է ոչ միայն անձի անձնական ազատության իրավունքի, այլև վատ վերաբերմունքի չենթարկվելու բացարձակ իրավունքի ապահովմանը: Այս պահանջից ելնելով՝ Եվրոպայի խորհրդի խոշտանգումների կանխարգելման կոմիտեի (ԽԿԿ) չափանիշներում ամրագրված են ոստիկանության կողմից ձերբակալված անձանց երեք իրավունքները. փաստաբանի և բժշկի մատչելիության իրավունքները և ձերբակալության մասին ազգականին կամ իր ընտրությամբ երրորդ անձին տեղեկացնելու իրավունքը.

---

[136] Տե՛ս Գիլլանն ու Քուինթոնն ընդդեմ Միացյալ Թագավորության (Gillan & Quinton v. the United Kingdom) գործով 2010 թվականի հունվարի 12-ի վճիռը, գանգատ թիվ 4158/05, կետ 57:

[137] Տե՛ս Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ ուղեցույցի 17-ից 18-րդ էջերը՝ http://www.echr.coe.int/LibraryDocs/DG2/HRHAND/DG2-EN-HRHAND-05(2004).pdf,
Շիմովոլոսն ընդդեմ Ռուսաստանի (Shimovolos v. Russia) գործով 2011 թվականի նոյեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 30194/09, կետ 49:

[138] Տե՛ս Դե Ուալդը, Ումսը և Վերսիպն ընդդեմ Բելգիայի (De Wilde, Ooms and Versyp v. Belgium) գործով 1971 թվականի հունիսի 18-ի վճիռը, գանգատներ թիվ 2832/66, 2835/66, 2899/66, կետ 65:

[139] Տե՛ս Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ ուղեցույցի էջ 18՝ http://www.echr.coe.int/LibraryDocs/DG2/HRHAND/DG2-EN-HRHAND-05(2004).pdf:

- ներպետական օրենսդրությամբ սահմանված ցանկացած ընթացակարգի շրջանակներում ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք, միջազգային պահանջների ձևակերպմամբ, պետք է ունենա առնվազն հետևյալ իրավունքները.

1. անհապաղ տեղեկացվել ազատությունից զրկվելու պատճառների մասին՝ իրեն հասկանալի լեզվով.
2. պահպանել լռություն,
3. իրեն ազատությունից զրկելու մասին անհապաղ տեղեկացվի իր ընտրած անձը,
4. հրավիրել փաստաբան,
5. իր պահանջով ենթարկվել բժշկական զննման, այդ թվում՝ իր նախընտրած բժշկի կողմից,
6. իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկել և դատարանի կողմից ազատ արձակվել, եթե ազատությունից զրկելը ոչ իրավաչափ է:

Մինչդեռ, վարչական իրավախախտման վերաբերյալ գործով վարույթի շրջանակներում անձին ազատությունից զրկելու՝ օրենքով ամրագրված հստակ կառուցակարգերը և ընթացակարգերը բացակայում են: Իսկ ոստիկանության կողմից ազատության իրավունքի սահմանափակմամբ պայմանավորված՝ անձի իրավունքների ցանկն ու դրանց ծանուցման կարգն իրենց ամրագրումն են ստացել ենթաօրենսդրական ակտով՝ ՀՀ կառավարության 2007 թվականի հունիսի 14-ի «Մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակումից բխող՝ ծանուցման ենթակա իրավունքների ցանկը և ծանուցման կարգը հաստատելու մասին» թիվ 818-Ն որոշմամբ:

Մինչդեռ, ինչպես ցույց է տալիս պրակտիկան, գործնականում չեն ապահովվում անգամ Կառավարության վերը նշված որոշման պահանջները:

Խնդրի համակարգային բնույթի, ինչպես նաև օրենսդրական կարգավորումների անկատարության հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանը բարձրացրել էր վարչական իրավախախտման վարույթի շրջանակներում անձին ազատությունից զրկելու ոչ լիարժեք կանոնակարգումների և դրանով պայմանավորված՝ իրավակիրառ պրակտիկայի սահմանադրականության հարց: Արդյունքում, Սահմանադրական դատարանի 2017 թվականի հունվարի 24-ի որոշմամբ տրվեցին անձի անձնական ազատության երաշխավորման վերոնշյալ չափանիշներին համահունչ իրավական հստակ գնահատականներ: Մասնավորապես, Սահմանադրական դատարանն արձանագրեց, որ ներպետական իրավական կարգավորումները համապատասխանում են ՀՀ սահմանադրությանը սահմանադրաիրավական այնպիսի բովանդակությամբ, համաձայն որի՝ «խախտողի բերում», «վարչական ձերբակալում», «բերման ենթարկում» միջոցառումների դեպքում անձնական ազատությունից փաստացի զրկելու պահից սկսած ազատությունից զրկված անձի համար ապահովվում են ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով և 64-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավունքները՝ որպես անմիջականորեն գործող իրավունքներ, և ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի ծանուցման ենթակա իրավունքների ցանկում միշտ պետք է ներառված լինեն առնվազն ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով (Անձնական ազատությունը) և 64-րդ հոդվածի 1-ին մասով (իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը) սահմանված իրավունքները:

Ավելին, Սահմանադրական դատարանը, անդրադառնալով վարչական իրավախախտման վարույթի շրջանակներում անձին ազատությունից զրկելու

ընթացակարգերի օրենսդրական կանոնակարգման անկատարությանը, ընդգծել է, որ «անձի ազատության իրավունքի ապահովման բնագավառում ձևավորվել է ոչ իրավաչափ իրավակիրառ պրակտիկա՝ հնարավոր դարձնելով անգամ Սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված իրավադրույթի՝ ոստիկանության կողմից շարունակական կիրառումը, ինչն իր հերթին երկրում սահմանադրական օրինականությանն ուղղված լուրջ սպառնալիք է»՝ ըստ այդմ երկրում սահմանադրական օրինականության հաստատման տեսանկյունից անհետաձգելի համարելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ նոր օրենսգրքի ընդունումը[140]:

Նման պրակտիկայի շարունակականությունը փաստվում է նաև 2017 թվականի ընթացքում արձանագրված խնդիրներով[141]:

Մասնավորապես, Պաշտպանին ներկայացված բողոքները վերաբերել են Ոստիկանության բաժիններ առանց հիմքերի պարզաբանման անձանց բերման ենթարկելուն: Արձանագրվել են դեպքեր, երբ ոստիկանության բաժին կամովին կամ ոստիկանի «հրավերով» ներկայացած քաղաքացիները ժամեր շարունակ պահվել են այնտեղ և դուրս գալու հնարավորություն չեն ունեցել:

Բացի այդ, բողոքների ուսումնասիրությունը հիմք է տալիս արձանագրելու, որ անձանց ոստիկանության բաժին «հրավիրելու» և վերջիններիս՝ ազատությունից փաստացի զրկմամբ պայմանավորված իրավունքները չապահովելու պրակտիկան իրավապահ մարմինների կողմից որոշ դեպքերում արդարացվում է այն հիմնավորմամբ, որ անձին բերման ենթարկելու մասին որոշում չի կայացվել, քանի որ նրան հրավիրել են բաժին օպերատիվ միջոցառում իրականացնելու շրջանակներում:

Մարդու իրավունքների պաշտպանն այս կապակցությամբ վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ **նման դեպքերը նույնպես պետք է համարվեն ազատությունից զրկում, և այդ անձինք պետք է օժտվեն անհրաժեշտ իրավունքներով ու դրանք ապահովող երաշխիքներով: Սա պետք է դառնա իրավապահ մարմինների գործունեության սկզբունք:**

Ինչ վերաբերում է **«օպերատիվ միջոցառումներ իրականացնելու» պետական մարմնի արդարացումներին, դրանք չեն կարող ընդունելի լինել, իսկ նման պրակտիկան պետք է պարզապես բացառել:**

Ոստիկանություն «հրավիրելու» ընթացակարգի կիրառության հետ կապված՝ ՀՀ ոստիկանության կողմից տեղեկություն է ներկայացվել, որ մշակվել է «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որով նախատեսվել է «հրավիրման» կամավորությունը, ինչպես նաև ծանուցման կարգը:

Սրա հետ կապված, կարևոր է նկատել, որ «հրավիրելու»՝ որպես ոստիկանություն կամավոր ներկայանալու գործընթացի՝ օրենքով ամրագրումը որևէ կերպ չի կարող ընդգրկել փաստացի ազատությունից զրկման վերը նշված և ոչ մի դեպք:

---

[140] Առավել մանրամասն տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ – 1339 որոշումը: http://concourt.am/armenian/decisions/common/2017/pdf/sdv-1339.pdf

[141] Քրեական գործով վարույթի շրջանակներում ազատությունից զրկման ընթացակարգերի (արգելանքի վերցվելու պահից իրավունքների երաշխավորում, բերման ենթարկվածի կարգավիճակ և այլն) հստակեցմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների մասին խոսվել է սույն զեկույցի՝ «Փաստացի քրեական հետապնդումից» անձի պաշտպանության՝ օրենսդրական երաշխիքների և գործնական միջոցառումների բավարարությունը:

Այսպիսով, **ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության արդյունքում իրականացրած անմիջական դիտարկումների և կատարված իրավական վերլուծության արդյունքները փաստում են վարչական ձերբակալման, բերման ենթարկելու և խախտողի բերման՝ ազատությունից զրկում ենթադրող ընթացակարգերի՝ օրենքով հստակ կանոնակարգման անհրաժեշտությունը:**

Ուստի, ազատությունից զրկված անձանց իրավունքների երաշխավորման առաջնահերթությամբ պայմանավորված՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ *անհրաժեշտ է՝*

1. ապահովել ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներին համապատասխան իրավակիրառում: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել վարչական իրավախախտման վերաբերյալ գործով վարույթի շրջանակներում անձին ազատությունից զրկելու հստակ և որոշակի ընթացակարգեր.

2. անհրաժեշտ է նաև համապատասխան փոփոխություններ կատարել Ոստիկանության գործունեության ներքին կանոնակարգման ակտերում, ինչպես նաև Ոստիկանության՝ քաղաքացիների հետ անմիջականորեն շփվող ծառայողների վերապատրաստումն իրականացնել այնպես, որ յուրաքանչյուր ոստիկան տիրապետի քաղաքացիների նվազագույն իրավունքներին ու դրանց թղթակցող իր պարտականություններին:

9. Ազատությունից զրկված անձի՝ փաստաբանի մատչելիության իրավունքի ապահովումը և փաստաբանների մասնագիտական գործունեության երաշխիքները

Փաստաբանի գործունեությունն արդարադատության համակարգում և իրավունքի գերակայության ապահովման գործում ունի առանցքային կարևորություն: Փաստաբանի ազատ մուտքն ազատությունից զրկման վայր և այնտեղ անխոչընդոտ աշխատանքը չափազանց կարևոր երաշխիք են անձի նկատմամբ անհիմն քրեական հետապնդում չիրականացնելու, ինչպես նաև ազատությունից զրկված անձին հնարավոր ճնշումներից և բռնություններից պաշտպանելու տեսանկյունից:

Ինչպես նշել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, առանց անհարկի խոչընդոտների իրենց մասնագիտական գործունեությամբ զբաղվելու փաստաբանների ազատությունը ժողովրդավարական հասարակության էական բաղադրիչ է և անհրաժեշտ նախապայման Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի պահանջների իրագործման համար[142]:

Փաստաբանի մատչելիության իրավունքի ապահովման հարցին անդրադարձ է կատարվել նաև ՀՀ վճռաբեկ դատարանի դատական պրակտիկայում: Մասնավորապես, Գ. Միքայելյանի վերաբերյալ գործով 2009 թվականի դեկտեմբերի 18-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է ձերբակալման սկզբնական փուլում գտնվող անձի կոնկրետ իրավունքների ծավալը, որն այլ իրավունքների թվում ներառում է նաև իր փաստաբանին հրավիրելու իրավունքը:

[142] Տե՛ս Էլչին ու ուրիշներն ընդդեմ Թուրքիայի (Elci and others v. Turkey) գործով 2004 թվականի ապրիլի 24-ի վճիռը, գանգատներ թիվ 23145/93 և 25091/94, կետ 669:

Մինչդեռ, Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության ընթացքում իրականացված դիտարկումներն ու բողոքների շարունակականությունը վկայում են, որ իրավակիրառ պրակտիկայում դեռևս առկա են իր վստահորդին տեսակցելու նպատակով ազատությունից զրկման վայր փաստաբանի մուտքը խոչընդոտելու դեպքեր:

Այսպես, Մարդու իրավունքների պաշտպանի 2017 թվականի գործունեության ընթացքում արձանագրվել են դեպքեր, երբ փաստաբանին թույլ չի տրվել մուտք գործել ազատությունից զրկման վայր, այդ թվում՝ Ոստիկանության համապատասխան բաժին: Վստահորդների իրավունքների պաշտպանությունը ստանձնելու նպատակով Ոստիկանության բաժիններ այցելած փաստաբանների մուտքը արգելելու վերաբերյալ իրավապահ մարմնի ներկայացուցիչները ներկայացրել են տարաբնույթ պատճառաբանություններ: Մասնավորապես, մի շարք դեպքերում մուտք գործելը թույլատրելու հապաղումը պատճառաբանվել է Ոստիկանության բաժնի պետի՝ բաժնում չգտնվելու հետ:

Արձանագրվել են խնդիրներ՝ կապված նախաքննության մարմնի և ոստիկանության բաժնի՝ նույն վարչական շենքում գտնվելու հետ: Բանն այն է, որ որոշ դեպքերում փաստաբանի մուտքը չթույլատրելը պատճառաբանվել է նախաքննական մարմնի թույլտվության բացակայությամբ, մինչդեռ նախաքննության մարմինը պարզաբանել է, որ տեղեկացված չի եղել փաստաբանի այցի վերաբերյալ:

Փաստաբանի մասնագիտական աշխատանքի նման խոչընդոտները մտահոգիչ են և անթույլատրելի:

2017 թվականին ներկայացված մեկ այլ գործով փաստաբանը տեղեկացրել է, որ ոստիկանության բաժին ներկայանալուց հետո հանցագործության մեջ կասկածվող իր անչափահաս պաշտպանյալին չեն պարզաբանվել իր իրավունքները, առանց փաստաբանի և օրինական ներկայացուցչի մասնակցության կատարվել են դատավարական գործողություններ, կորզվել են ցուցմունքներ, որոնք հետագայում օգտագործվել են վերջինիս դեմ:

Հաշվի առնելով, որ փաստաբանի մուտքը խոչընդոտելը կարող է հանգեցնել բացասական հետևանքների, այդ թվում՝ անազատության մեջ նրա հետագա մնալու կամ քրեական հետապնդման հետ կապված՝ նմանատիպ ոչ իրավաչափ դրսևորումների ժամանակին կանխարգելումը չափազանց կարևոր է:

Ասվածի հաշվառմամբ Պաշտպանին ներկայացված այդ խնդիրներին անհապաղ միջամտություն է իրականացվում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում արագ արձագանքման ծառայության միջոցով:

Չնայած դրան՝ որոշ դեպքերում, անգամ երբ Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչների միջամտության արդյունքում փաստաբանները մուտք են գործել և ներկայացել են վարույթն իրականացնող մարմնին, պարզվել է, որ փաստաբանների վստահորդների մասնակցությամբ իրականացվող գործողություններն արդեն իսկ ավարտված են եղել:

Դեռևս 2016 թվականի տարեկան հաղորդման շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանը, անդրադառնալով նշված խնդրին, դիրքորոշում է արտահայտել, որ անհրաժեշտ է **փաստաբանական անխոչընդոտ գործունեության**

ապահովման նպատակով վերջինիս կողմից իր լիազորությունների իրականացմանը խոչընդոտող վարքագծի քրեականացում:

Բանն այն է, որ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 332[3] -րդ հոդվածի առաջին մասը հանցագործություն է համարում պաշտոնատար անձի կողմից փաստաբանի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը:

Մեջբերված նորմի այսպիսի կարգավորումը սուբյեկտային առումով քրեաիրավական ազդեցության նեղ շրջանակ է սահմանում: Մինչդեռ, փաստաբանի գործունեությունը խոչընդոտող սուբյեկտների շրջանակը գործնականում կարող է շատ ավելի լայն լինել: Առկա օրենսդրական կարգավորումը չի ընդգրկում այն իրավիճակները, երբ, օրինակ, ոչ թե պաշտոնատար անձն է ուղղակիորեն խոչընդոտում փաստաբանի աշխատանքը, այլ պաշտոնատար անձ չհանդիսացող անձինք՝ վերջիններիս դրդմամբ կամ հրահրմամբ:

ՀՀ քրեական օրենսգրքի համանման կարգավորումների համեմատական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ խնդրահարույց է նաև 332[3]-րդ հոդվածով նախատեսված սանկցիան: Մասնավորապես, կարծում ենք, փաստաբանների կողմից իրենց գործունեության պատշաճ իրականացման համար առկա է անհրաժեշտություն ավելի բարձր մակարդակի պաշտպանություն ապահովել նշված հոդվածի սանկցիայի շրջանակներում:

Առկա խնդիրների օրենսդրական կանոնակարգման անհրաժեշտության հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից արդեն 2017 թվականի ընթացքում մշակվել և շրջանառության է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ նախատեսող օրենքի նախագիծ[143]: Նշված նախագծով առաջարկվում է՝

- ՀՀ քրեական օրենսգրքի 332[3]-րդ հոդվածի 1-ին մասը ենթարկել այնպիսի փոփոխության, որով այս հանցակազմի սուբյեկտ պաշտոնատար անձից բացի կհամարվի ցանկացած այլ այնպիսի անձ, ով խոչընդոտել է փաստաբանի օրինական գործունեությանը.
- ՀՀ քրեական օրենսգրքի 332[3]-րդ հոդվածով պաշտոնատար անձի կողմից փաստաբանի կամ նոտարի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու համար նախատեսված պատժաչափը համապատասխանեցնել ՀՀ քրեական օրենսգրքի 164-րդ և 319-րդ հոդվածներին՝ խստացնելով փաստաբանի գործունեությանը խոչընդոտելու համար նախատեսված սանկցիան.
- նշված հոդվածը լրացնել նոր մասով, որը պատասխանատվություն կնախատեսի փաստաբանի գործունեությունը խոչընդոտելու համար, եթե դա դրսևորվել է իր վստահորդին տեսակցելու նպատակով՝ ազատությունից զրկման ցանկացած վայր փաստաբանի մուտքն ապօրինի չթույլատրելով:

Հարկ է նկատել, որ ՀՀ նոր քրեական օրենսգրքի նախագծով փորձ է արվել ամրապնդել ազատությունից զրկված անձի՝ փաստաբանի մատչելիության իրավունքի ապահովման քրեաիրավական երաշխիքները: Մասնավորապես, նախագծի 447-րդ հոդվածով քրեական պատասխանատվություն է սահմանվել իրավասու անձի կողմից՝ քրեական հետապնդման ենթարկված անձի պաշտպանության իրավունքի

[143] Առավել մանրամասն տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայքէջում՝ http://pashtpan.am/media/nakhagcer-pastaban.html:

իրականացմանը խոչընդոտելու՝ իր դատավարական իրավունքների, իրեն առաջադրվող մեղադրանքի, ձերբակալման կամ կալանավորման պատճառների մասին վերջինիս հասանելի եղանակով չտեղեկացնելու, իրավաբանական օգնություն ստանալու, պաշտպան ունենալու կամ վերջինիս հետ հանդիպելու իրավունքի իրականացմանը խոչընդոտելու համար: Նախագծով նշված արարքի կատարման համար սահմանվել է նաև առավելագույնը չորս տարի ժամկետով ազատազրկման ձևով պատիժ[144]:

Խնդրի քննարկման շրջանակներում հարկ է անդրադառնալ նաև 2017 թվականի ընթացքում տեղեկատվության հրապարակային աղբյուրներով, ինչպես նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված դիմումներով մի շարք փաստաբանների մտահոգություններին, որոնք վերաբերում են իրենց մասնագիտական աշխատանքը խոչընդոտնելուն՝ քրեակատարողական հիմնարկ կամ դատարան վերջիններիս մուտք գործելու և իրենց վստահորդների շահերի պաշտպանությունն իրականացնելու, այդ թվում՝ նրանց իրավաբանական օգնություն ցուցաբերելու հետ կապված:

Փաստաբանների մտահոգությունները հիմնականում վերաբերել են նրան, որ քրեաատարողական հիմնարկ կամ դատարան մուտք գործելիս քրեակատարողական ծառայողները կամ դատական կարգադրիչները, չարաշահելով դիրքը, փորձում են իրենց նկատմամբ կատարել անձնական խուզարկություն ենթադրող գործողություններ: Խոսքը վերաբերում է, օրինակ, փաստաբանի մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ նյութեր պարունակող պայուսակը բացելու կամ իրենց մոտ առկա փաստաթղթերը ծանոթացման ներկայացնելու պահանջներին: Ընդ որում, դատարանների դեպքում դա տեղի է ունենում ցանկացած դատական նիստից առաջ՝ առանց որևէ հիմքի: Արդյունքում, խախտվում են իրենց վստահորդների իրավունքները, քանի որ իրենք հնարավորություն չեն ունենում մուտք գործել համապատասխան հաստատություն: Բացի այդ, փաստաբանների կողմից բարձրացվել է իրենց նկատմամբ խտրական մոտեցում դրսևորելու խնդիրն այն առումով, որ վերջիններիս հավաստմամբ՝ դատավարության մյուս մասնակիցները, այդ թվում՝ դատախազները զննության չեն ենթարկվում:

Փաստաբանների բարձրացրած հարցերն, ըստ էության, առնչվում են թե՛ հենց իրենց՝ փաստաբանների, թե՛ իրենց վստահորդների իրավունքների ապահովմանն ու պաշտպանությանը: Ըստ այդմ, դրանք ուղղակիորեն կապված են նշված հաստատություններում փաստաբանի մասնագիտական գործունեության երաշխիքների հետ:

Այս կապակցությամբ Պաշտպանի աշխատակազմում իրականացվել է նշված խնդրի համակողմանի իրավական վերլուծություն[145]:

Վերլուծության շրջանակներում Պաշտպանը, մասնավորապես ընդգծել է, որ քննության առնված գրեթե բոլոր իրավիճակներում փաստաբանները կանգնեցվում էին այնպիսի երկընտրանքի առջև, երբ **վերջիններիս հնարավոր վարքագծի ցանկացած տարբերակ կարող էր հանգեցնել իրենց պաշտպանյալների իրավունքների ոչ համաչափ սահմանափակման:** Այլ կերպ ասած, քրեակատարողական ծառայողի կամ դատական կարգադրիչի՝ **փաստաբանին ուղղված պահանջը կամ առաջարկը ստուգողական այս կամ**

[144] ՀՀ քրեական օրենսգրքի նախագիծ, https://www.e-draft.am/projects/496:

[145] Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ Փաստաբանի մասնագիտական գործունեության մի շարք երաշխիքների վերաբերյալ իրավական վերլուծությունը՝ http://www.ombuds.am/media/iravakan-verlucutyun.html:

այն գործողությունն անցնելու վերաբերյալ, նման պահանջի հիմքում ընկած բավարար փաստերի կամ տեղեկության կամ օրենքով պաշտպանվող իրավաչափ շահերի պաշտպանության անհրաժեշտության բացակայության պայմաններում, կարող է ստեղծել «փակուղային» իրավիճակ այն առումով, որ փաստաբանը ստիպված է հակակշռելու մի կողմից իր վստահորդի՝ փաստաբանի մատչելիության և իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, մյուս կողմից՝ փաստաբանական գաղտնիքի պաշտպանվածությունը: Ավելին, առանձին դեպքերում կարող ենք գործ ունենալ նաև արդար դատաքննության մյուս երաշխիքների, ինչպես նաև անձնական ազատության իրավունքի հետ:

Վերլուծության արդյունքներով իրավասու պետական մարմիններին ներկայացվել են Մարդու իրավունքների պաշտպանի հետևյալ իրավական եզրահանգումներն ու առաջարկությունները՝

• Փաստաբանի մասնագիտական աշխատանքն արդարադատության իրականացման գործընթացի անբաժան մասն է և ենթակա է հատուկ երաշխավորման.

• Փաստաբանի հանրային հեղինակությունը նրա վստահորդի իրավունքների արդյունավետ պաշտպանության կարևոր երաշխիք է և երկրում իրավապաշտպան աշխատանքի զարգացման անհրաժեշտ գրավականներից:

• Օրենքին համապատասխան և բարեխիղճ գործելու փաստաբանի բարձր պատասխանատվությունն ու կոչումը պայմանավորում են պետության ցանկացած ներկայացուցչի, այդ թվում՝ քրեակատարողական ծառայողի և դատական կարգադրիչի պարտականությունն առաջնորդվելու փաստաբանի օրինավորության, նրա բարեխղճության ու ազնվության կանխավարկածով:

• Անհրաժեշտ է իրականացնել «զննություն» և «խուզարկություն» հասկացությունների հստակ տարանջատում՝ բացահայտելով դրանցից յուրաքանչյուրի բովանդակությունը կազմող գործողությունների շրջանակը՝ հաշվի առնելով կոնկրետ ոլորտում դրա նշանակության իրավական առանձնահատկությունները:

• Քննարկվող ընթացակարգերը սահմանող ակտերում պետք է հստակ ամրագրվեն ստուգողական գործողության իրավական ռեժիմները՝ յուրաքանչյուրը համապատասխան հիմքերով և ընթացակարգերով, երբ այդ գործողությունը հանդես է գալիս որպես՝

- կոնկրետ իրավիճակում վերաբերելի փաստերի վրա հիմնված՝ «հիմնավոր կասկածի» առկայությամբ պայմանավորված անհրաժեշտ ստուգողական գործողություն.

- տվյալ պետական մարմին մուտք գործելու պարտադիր պայման, այսինքն՝ ոչ ընտրողական կիրառության սկզբունքով: Օրինակ՝ իրավախախտման կանխման, կոնկրետ պետական մարմնի անվտանգության ապահովման կամ այլոց իրավունքների պաշտպանության նպատակով:

• Զննության տեխնիկական միջոցների բացակայությունը որևէ կերպ չի կարող նվազեցնել փաստաբան-վստահորդ արտոնյալ հաղորդակցության և փաստաբանական գաղտնիքի պաշտպանվածությունը:

• Իրավախախտումների կանխման, անվտանգության ապահովման կամ այլոց իրավունքների պաշտպանության նկատառումով գործադրվող ստուգողական ցանկացած գործողություն պետք է իրականացվի փաստաբանի և նրա վստահորդի շահերի հետ հավասարակշռման և հիմքերի պատշաճ առկայության պայմաններում:

• 2017 թվականի ընթացքում ի հայտ եկած պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ դատարան մուտքի դեպքում զննության ենթարկվելուց հրաժարվելու մասին փաստաբանների պատճառաբանություններն առանձին դեպքերում դատական կարգադրիչների կողմից որոշումներ կայացնելիս համաչափության տեսանկյունից հաշվի չեն առնվել այն առումով, որ զննության՝ գործողությունների որոշակի շրջանակով չսահմանափակված ընթացակարգից հրաժարումն անկախ ամեն ինչից առաջացրել է խիստ հետևանք. դատական նիստերի դահլիճ մուտքն արգելելը:

• Պետք է նախատեսել առանձին կարգավորումներ մասնագիտական աշխատանք կատարող անձանց նկատմամբ ստուգողական գործողության, իսկ կոնկրետ դեպքում՝ փաստաբանի նկատմամբ զննության հիմքերի ու իրավաչափ շրջանակների վերաբերյալ՝ բացառելով մյուս սուբյեկտների (օրինակ՝ դատախազների) համեմատությամբ խտրականության որևէ դրսևորում: Դրանցում պետք է պատշաճ արտացոլել մասնագիտական պարտականություններն անմիջականորեն կատարելիս փաստաբանին խուզարկելու անթույլատրելիության օրենսդրական արգելքը:

• Սկզբունքային է, որ իրավաչափ նպատակին ուղղված գործողություններով չստեղծվեն պայմաններ, որոնք կառաջացնեն այդ նպատակից շեղվող, օրինակ, փաստաբանական գաղտնիք կազմող փաստաթղթերին հասանելիության վտանգ:

• Անհրաժեշտ է ամրագրել իրավական կանոն այն մասին, որ փաստաբանը, ելնելով փաստաբանական գաղտնիքի պաշտպանության պահանջից, հնարավորություն ունենա սեփական գործողություններով՝ առանց քրեակատարողական ծառայողի կամ դատական կարգադրիչի միջամտության, հեռացնելու իր մուտքը ենթադրաբար խոչընդոտող առարկաները: Դրանք կարող են ի պահ հանձնվել նաև պահպանվող հաստատությունում:

• Անհրաժեշտ է անհետաձգելիորեն հստակեցնել արգելված առարկաների շրջանակը կանխորոշող օբյեկտիվ հիմքը: Դրանից հետո, արգելված առարկաների ցանկը պետք է նախատեսվի այն տրամաբանությամբ, որ այդ արգելքը սահմանվի իրավախախտումների կանխման, անվտանգության կամ այլոց իրավունքների ապահովման նկատառումով: Այստեղ, պետք է հաշվի առնել նաև անձի պատշաճ իրավաբանական օգնության իրավունքի ապահովման պահանջը՝ ընդհանուր արգելքից բացառություններ նախատեսելով այն առարկաների դեպքում, որոնք փաստաբանին ողջամտորեն անհրաժեշտ են մասնագիտական պարտականությունների կատարման համար:

• Անհրաժեշտ է մշակել պետական հաստատություն, իսկ կոնկրետ դեպքում՝ քրեակատարողական հիմնարկ կամ դատարան մուտք գործելիս ստուգողական գործողությունների (զննություն կամ խուզարկություն) իրականացման մեթոդական ուղեցույցներ, որոնք կապահովեն որոշակիություն թե' իրավակիրառողի, թե' քաղաքացու համար:

Իրավական պատշաճ պրակտիկայի ձևավորման նպատակով անհրաժեշտ է՝

• ապահովել դատարաններում և քրեակատարողական հիմնարկներում անհրաժեշտ տեխնիկական սարքավորումների առկայությունը.

• կազմակերպել ստուգողական գործողություն իրականացնող աշխատակիցների պարբերական վերապատրաստումներ՝ համապատասխան մեթոդական ուղեցույցների գործնական կիրառության, նաև տեխնիկական սարքավորումների գործադրման անհրաժեշտ գիտելիքներ ու հմտություններ ձևավորելու նպատակով.

• **ապահովել այդ ուղեցույցների հասանելիությունը դատարան կամ քրեակատարողական հիմնարկ այցելողների համար՝ դրանք տարածելով զանգվածային լրատվության միջոցներով և հանրությանը մատչելի այլ եղանակներով, այդ թվում՝ փակցնելով համապատասխան շենք մուտք գործողին տեսանելի վայրերում.**

• **ստուգողական գործողություններ իրականացնելիս անշեղորեն ապահովել միասնական պրակտիկա համապատասխան հաստատությունում մասնագիտական աշխատանք կատարող բոլոր սուբյեկտների համար (փաստաբան, դատախազ և այլն):**

Մարդու իրավունքների պաշտպանի իրավական ուսումնասիրությամբ վեր հանված խնդիրների և դրանց լուծմանն ուղղված առաջարկությունների կենսագործման հետ կապված՝ ՀՀ դատական դեպարտամենտի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 02Ն որոշմամբ ամրագրում են ստացել ինչպես դատարանի շենք արգելված իրերի ցանկը, այնպես էլ զննության տեխնիկական միջոցների գործադրման, գաղտնիք պարունակող փաստաթղթերի բովանդակությանը ծանոթանալու արգելքի հետ կապված դրույթներ[146]: Կազմակերպական միջոցառումների իրականացման առումով՝ Դեպարտամենտը տեղեկացրել է, որ զննության գործընթացն առավել արդյունավետ դարձնելու նպատակով ձեռք են բերվել ռենտգեն հսկողության սարքեր, իսկ արգելված առարկաների ցանկը փակցված է տեսանելի վայրերում:

ՀՀ դատարանների շենք մուտք գործելիս զննության ընթացակարգի, արգելված իրերի հետ կապված կարգավորումների նախատեսումն ու տեխնիկական միջոցների ձեռքբերումը, իհարկե, պետք է դիտարկել իբրև խնդրի լուծմանը միտված դրական քայլեր: Միևնույն ժամանակ, հարկ է նկատել, որ Դատարանների նախագահների խորհրդի կողմից արգելված իրերի ցանկի ուսումնասիրությունից առերևույթ ստացվում է, թե հստակ թվարկմամբ սահմանված է այդպիսի իրերի սպառիչ ցանկ: Միևնույն ժամանակ, վերոնշյալ որոշման հավելվածի 3.1.8-րդ կետի համաձայն՝ պահպանվող տարածք ներս բերելն արգելվող իրեր են, ի թիվս այլնի, *փակ տուփերը, արկղերը, փաթեթները և պայուսակները, բացառությամբ անձնական օգտագործման համար նախատեսված թղթապանակների, պայուսակների և այլն:*

Արգելված իրերի ցանկի այսպիսի «եզրափակումը» չի բխում կոնկրետ առարկաների սպառիչ թվարկման ընդհանուր տրամաբանությունից. այն տարաբնույթ մեկնաբանության և ըստ այդմ պետական ծառայողի հայեցողության տեղիք է տալիս: Բանն այն է, որ արգելված այլ առարկաների՝ ցանկում ընդգրկված լինելը պայմանավորված է վերջիններիս բնույթով (զենք, կտրող, ծակող զենք և սուր առարկաներ, պայթուցիկ և քիմիական նյութեր, թմրանյութեր և թմրադեղեր և այլն): Դրան հակառակ, «փակ» տարաների և պայուսակների արգելքը թերևս ելնում է այն սկզբունքից, որ առարկան արգելված է, քանի դեռ դրա պարունակությունը չի բացահայտվել, իսկ «անձնական օգտագործման համար նախատեսված լինելու» բացառությունն ինքնին տարակերպ մեկնաբանության տեղիք է տալիս: Իրականում պետք է լինեն հստակ չափանիշներ, ինչպես նաև որոշում կայացնելու հարցում իրավասու մարմնին ու ստուգման ենթարկվող

[146] Տե՛ս Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդի «Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2011 թվականի հուլիսի 21-ի թիվ 04-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» 2017 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ N 02-Ն որոշումը՝ http://www.irtek.am/views/act.aspx?aid=91590

անձի, կոնկրետ դեպքում՝ փաստաբանի համար կանխատեսելիություն ապահովող կոնկրետ կարգավորումներ:

Այսպիսի պայմաններում, Մարդու իրավունքների պաշտպանը վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ պետական մարմնի գործողությունները չեն կարող խախտել փաստաբան-վստահորդ արտոնյալ հաղորդակցության և փաստաբանական գաղտնիքի պաշտպանվածությունը կամ այդպիսի վտանգ ստեղծել:

Ինչ վերաբերում է քրեակատարողական հիմնարկներ մուտք գործելիս զննության ընթացակարգի կարգավորումներին, Պաշտպանն արձանագրել է, որ «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի N 1543-Ն որոշման կարգավորումները պետք է ապահովեն բավարար որոշակիություն՝ այդ ընթացակարգերի բովանդակությունը բացահայտելիս էությամբ կրկնվող ձևակերպումներ ամրագրելով: Բանն այն է, որ Կանոնակարգով քրեակատարողական հիմնարկ մուտք գործող անձանց նկատմամբ կարող է իրականացվել թե՛ զննություն, թե՛ խուզարկություն: Ընդ որում, չկա որևէ տարբերակում զննության կամ խուզարկության ենթակա անձանց շրջանակի հարցում, ինչը վկայում է Կանոնակարգի՝ օրենքի պահանջներից շեղվող իրավակարգավորումների մասին[147]:

Ասվածի հաշվառմամբ՝ *անհրաժեշտ է՝*

1. որպես առաջնահերթ լուծում՝ դատական իշխանության մարմնի հատուկ ակտի, իսկ քրեակատարողական հիմնարկների դեպքում՝ Կանոնակարգի դրույթները հստակեցնել՝ Մարդու իրավունքների պաշտպանի առաջ քաշած սկզբունքների հաշվառմամբ.

2. որպես հիմնարար լուծում՝ անհրաժեշտ է քննարկել այնպիսի ակտի ընդունման հարց, որը կսահմանի բոլոր հաստատությունների (օրինակ՝ իրավապահ մարմիններ, հատուկ պահպանվող տարածքներ և այլն) նկատմամբ ստուգողական գործողությունների դեպքում կիրառելի միասնական մոտեցումներ:

10. Պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացումը

2017 թվականի ընթացքում իրավակիրառ պրակտիկայում արձանագրվել են խնդիրներ՝ կապված քրեական գործով վարույթի շրջանակներում կասկածյալի կամ մեղադրյալի՝ պաշտպանի միջոցով իր պաշտպանության իրավունքի լիարժեք իրացման հետ: Ասվածը փաստվում է Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված բողոքներով, որոնց համաձայն՝ մեղադրյալի մասնակցությամբ իրականացված դատավարական գործողություններին չի ապահովվել վերջինիս պաշտպանի մասնակցությունը:

Այսպես, արձանագրվել է դեպք, երբ փաստաբանն այցելել է իր վստահորդի աշխատասենյակ՝ մասնակցելու այնտեղ իրականացվող քննչական գործողությանը, սակայն նրան թույլ չի տրվել մուտք գործել քննչական գործողության կատարման վայր՝

[147] Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ Փաստաբանի մասնագիտական գործունեության մի շարք երաշխիքների վերաբերյալ իրավական վերլուծությունը, էջեր 19-23՝ http://www.ombuds.am/media/iravakan-verlucutyun.html:

այն պատճառաբանությամբ, որ փաստաբանն առնվազն պետք է ներկայանար գործողությունը սկսելուց առաջ, իսկ առկա պայմաններում այն չի կարող ընդհատվել:

Մեկ այլ դեպքում փաստաբանը տեղեկացրել է, որ չնայած մեղադրանք առաջադրելիս նշանակված պաշտպանի մասնակցության վերաբերյալ իր պաշտպանյալի պահանջին՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից անձին մեղադրանք է առաջադրվել, և վերջինս հարցաքննվել է պաշտպանի բացակայությամբ: Խնդրի ուսումնասիրությամբ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից կայացվել է մարդու իրավունքների և ազատությունների խախտման մասին որոշում, որում, մասնավորապես ներկայացվել են հետևյալ իրավական եզրահանգումները՝

• Մեղադրանքից պաշտպանվելու հիմնարար իրավունքի բովանդակությունն են կազմում, ի թիվս այլնի, անձամբ իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանության, պաշտպանությունը նախապատրաստելու համար բավարար ժամանակ ու հնարավորություններ ունենալու իրավունքները[148].

• քրեական գործով վարույթի ընթացքում կասկածյալին և մեղադրյալին պաշտպան ընտրելու, հրավիրելու իրավունքի ընձեռումն ամենից առաջ նպատակ է հետապնդում ապահովել վերջիններիս պաշտպանության իրավունքի իրացումը[149]՝ այդպիսով երաշխավորելով «զենքերի հավասարության» և ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ ամրագրված մրցակցության սկզբունքների ապահովումը[150]:

• Քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ուժով՝ քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, երբ այդպիսի ցանկություն հայտնել է կասկածյալը կամ մեղադրյալը: Իսկ օրենսգրքի 69-րդ հոդվածի 4-րդ մասի՝ քրեական գործով վարույթին պաշտպանի պարտադիր մասնակցությունն ապահովում է քրեական վարույթն իրականացնող մարմինը: Ավելին, 19-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է կասկածյալին և մեղադրյալին բացատրել նրանց իրավունքները և ապահովել օրենքով չարգելված բոլոր միջոցներով մեղադրանքից նրանց պաշտպանվելու փաստացի հնարավորությունը:

• հանցագործության համար մեղադրվող անձի պաշտպանության իրավունքը երաշխավորող քրեադատավարական դրույթներից միանշանակ է, որ պաշտպան ունենալու մասին կասկածյալի կամ մեղադրյալի ցանկությունն այն հայտնելու պահից

---

[148] ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածն ամրագրում է, որ յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք, իսկ ըստ 67-րդ հոդվածի՝ հանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի անձամբ կամ իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունք:

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ յուրաքանչյուր ոք իրեն ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի քննության ժամանակ ունի առնվազն հետևյալ երաշխիքների իրավունքը՝ լիակատար հավասարության հիման վրա. (...)

բ) բավարար չափով ժամանակ ու հնարավորություններ ունենա իր պաշտպանությունը նախապատրաստելու և իր իսկ ընտրած պաշտպանի հետ հարաբերությունների մեջ մտնելու համար. (...)

դ) դատվի իր ներկայությամբ և պաշտպանի իրեն անձամբ կամ իր իսկ ընտրած պաշտպանի միջոցով. եթե նա չունի պաշտպան՝ տեղեկացված լինի այդ իրավունքի մասին և ունենա իր համար նշանակված պաշտպան ցանկացած դեպքում, երբ դա պահանջում են արդարադատության շահերը, նրա համար անհատույց բոլոր այն դեպքերում, եթե նա բավականաչափ միջոցներ չունի այդ պաշտպանին վճարելու համար:

Նմանատիպ ձևակերպում է տրված «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասում:

[149] Տե՛ս ԵԿԴ/0209/01/10 գործով Վճռաբեկ դատարանի 2011թ. փետրվարի 24-ի որոշումը:

[150] Տե՛ս ՀՅՔՐԴ2/0153/01/08 գործով Վճռաբեկ դատարանի 2010թ. մարտի 26-ի որոշումը:

առաջացնում է վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը՝ ապահովելու պաշտպանի պարտադիր մասնակցությունը վարույթին:

Այսպիսով, քրեական հետապնդումից պաշտպանության իրավունքն անձի հիմնարար իրավունքներից է, որի ապահովումն անհրաժեշտ պայման է ժողովրդավարական հասարակության մեջ: Պաշտպանության իրավունքի անքակտելի բաղադրատարր է իր իրավունքների պաշտպանությունը պաշտպանի (փաստաբանի) միջոցով իրականացնելու անձի հնարավորությունը: Այդ հնարավորության ապահովման պարտականությունը կրում է պետությունը: Այն երաշխավորում է վարույթի մրցակցային բնույթը, իսկ նշված պահանջների չապահովումը կարող է հանգեցնել անձի պաշտպանության իրավունքի, ըստ այդմ՝ արդար դատաքննության իրավունքի խախտման:

Ներկայացված բողոքների շրջանակներում քննարկման առարկա են դարձել պաշտպանի մասնակցությունն ապահովելու վարույթն իրականացնող մարմնի պարտականության շրջանակներն անձին մեղադրանք առաջադրելիս և վերջինիս հարցաքննելիս:

Այս առումով, հարկ է նկատել, որ ՀՀ սահմանադրական դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 8-ի ՍԴՈ-1119 որոշմամբ քննարկման առարկա է դարձել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածով ամրագրված՝ պաշտպանի՝ քննչական և դատավարական այլ գործողություններին մասնակցությունը խնդրո առարկա հոդվածով նախատեսված դեպքերում և պայմաններում ապահովելու վարույթն իրականացնող մարմնի պարտականության իրավաչափությունը:

Այսպես, օրենսգրքի՝ Սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշմամբ անվավեր ճանաչված 73-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ պաշտպանը (...) իրավունք ունի քրեական հետապնդման մարմնի առաջարկով մասնակցել իրականացվող քննչական կամ այլ դատավարական գործողություններին, քրեական հետապնդման մարմնի թույլտվությամբ մասնակցել քրեական հետապնդման մարմնի կողմից իր միջնորդությամբ իրականացվող բոլոր քննչական և այլ դատավարական գործողություններին, մասնակցել իր պաշտպանյալի մասնակցությամբ իրականացվող ցանկացած քննչական կամ այլ դատավարական գործողությանը, եթե դա պահանջում է կասկածյալը կամ մեղադրյալը, կամ գործողությունը սկսելիս դրա մասին միջնորդում է ինքը՝ պաշտպանը:

Դատարանը, մասնավորապես, արձանագրել է, որ օրենսգրքի վիճարկվող նորմում պաշտպանյալի մասնակցությամբ իրականացվող քննչական և այլ դատավարական գործողություններին պաշտպանի մասնակցությունը դրա վերաբերյալ կասկածյալի կամ մեղադրյալի պահանջի առկայությամբ, ինչպես նաև գործողությունը սկսելիս միջնորդության ներկայացմամբ պայմանավորելու վերաբերյալ դրույթները, ի խախտումն Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 43-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների, հանդես են գալիս որպես պետական մարմինների առջև իրավական պաշտպանության և իրավաբանական օգնություն ստանալու սահմանադրական իրավունքները սահմանափակող և դրա արդյունքում՝ պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի սահմանադրական իրավունքը սահմանափակող դրույթներ: Ավելին, այդպիսի սահմանափակումը չի հետապնդում որևէ իրավաչափ նպատակ:

Արդյունքում, Դատարանը եզրահանգել է. «բոլոր դեպքերում պաշտպանը պետք է իրավունք ունենա մասնակցելու պաշտպանյալի մասնակցությամբ իրականացվող քննչական և այլ դատավարական գործողություններին՝ առանց որևէ միջնորդության ներկայացման, և անկախ նրանից, թե այդպիսի մասնակցության վերաբերյալ առկա է կասկածյալի կամ մեղադրյալի պահանջ, թե՝ ոչ»:

Բացի այդ, օրենսգրքի 212-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ մեղադրյալն իրավունք ունի հարցաքննվել պաշտպանի մասնակցությամբ: Սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում պաշտպանի մասնակցությունը պարտադիր է:

Ըստ այդմ, ասվածը հիմք է տալիս պնդելու, որ վարույթն իրականացնող մարմինը կրում է քրեական հետապնդման ենթարկվող անձի պաշտպանի՝ քննչական կամ այլ դատավարական գործողությանը, այդ թվում՝ վերջինիս հարցաքննությանը մասնակցությունն ապահովելու պարտականությունը՝ անկախ այդպիսի պահանջ կամ միջնորդություն ներկայացնելու հանգամանքից:

Հետևաբար, Մարդու իրավունքների պաշտպանն անթույլատերլի է համարում, երբ վարույթն իրականացնող մարմինը, կաշկանդված լինելով կասկածյալի (մեղադրյալի) պաշտպան ունենալու իրավունքով, քննչական կամ այլ դատավարական գործողություններին վերջինիս մասնակցությունն ապահովելու, ինչպես նաև մեղադրանք առաջադրելու դատավարական կարգը պահպանելու պահանջներով, այնուամենայնիվ, անձի՝ պաշտպան ունենալու պայմաններում իրականացնում է դատավարական գործողություններ՝ առանց վերջինիս մասնակցության: Արդյունքում, այդ անձի պաշտպանը զրկվում է օրենսգրքի 73-րդ հոդվածով սահմանված իր մի շարք իրավունքների իրացման, հետևաբար՝ նաև իր պաշտպանյալի արդյունավետ պաշտպանությունն իրականացնելու հնարավորությունից: Ընդ որում, պաշտպանի՝դատավարական գործողություններին մասնակցության ցանկացած նախապայման կամ սահմանափակում, որը չի բխում քրեադատավարական օրենքից և չի հետապնդում իրավաչափ նպատակ, խախտում է մեղադրանքից պաշտպանվելու անձի սահմանադրական իրավունքը:

Քրեական գործով վարույթի շրջանակներում անձի արդյունավետ պաշտպանության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից քննարկման առարկա են դարձել իր նախընտրությամբ պաշտպան ունենալու ազատության հետ կապված հարցերը: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է պարտադիր իրավաբանական ներկայացուցչության ինստիտուտի և մեղադրյալի՝ իր ընտրած պաշտպանի միջոցով կամ անձամբ պաշտպանվելու ինստիտուտի հետ դրա փոխհարաբերակցության իրավակարգավորումների անհստակությանը:

Սրա հետ կապված՝ Սահմանադրական դատարանում խնդիրը ներկայացնելու հարցով Պաշտպանին է դիմել ՀՀ փաստաբանների պալատը: Դիմումի քննարկման արդյունքում, Պաշտպանի կողմից Սահմանադրական դատարան է ներկայացվել դիմում, որով բարձրացվել է ՀՀ քրեադատավարական գործող կարգավորումների սահմանադրականության հարցը:

Հարցի կապակցությամբ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությամբ վեր են հանվել հետևյալ ընդհանուր սկզբունքները՝

• մեղադրյալի՝ իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունքը թեև, որպես ընդհանուր կանոն, պետք է հարգել, սակայն ընտրություն կատարելու այդ իրավունքը դատարանի կողմից կարող է անտեսվել կամ ստորադասվել, եթե դրա համար առկա են վերաբերելի և բավարար հիմքեր՝ պայմանավորված արդարադատության գերակա շահով[151].

• չնայած փաստաբանի և հաճախորդի միջև վստահության վրա հիմնված փոխհարաբերության կարևորությանը՝ պաշտպան ընտրելու իրավունքը չի կարող համարվել բացարձակ: Այն ենթակա է որոշակի սահմանափակումների այն դեպքերում, երբ անձին տրամադրվում է անվճար իրավաբանական օգնություն, ինչպես նաև երբ դատարանը որոշում է, թե արդյոք արդարադատության շահը պահանջում է, որ մեղադրյալը ներկայացվի իր կողմից նշանակված պաշտպանի կողմից: Պաշտպանին նշանակելիս, ազգային դատարանները, անշուշտ, պետք է հաշվի առնեն մեղադրյալի ցանկությունը: Այնուամենայնիվ, այս ցանկությունը կարող է անտեսվել, երբ առկա են համապատասխան և բավարար հիմքեր առ այն, որ այն անհրաժեշտ է արդարադատության շահի համար[152].

• Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված «արդյունավետ մասնակցությունը» ենթադրում է, որ մեղադրյալը ընդհանուր առմամբ հասկանում է դատավարության բնույթը, այդ թվում՝ իր նկատմամբ հնարավոր կիրառվելիք պատժի տեսակը: Մեղադրյալը պետք է նաև կարողանա իր փաստաբաններին բացատրել տեղի ունեցած դեպքերի իր տարբերակը, մատնանշել այնպիսի պնդումներ, որոնց հետ ինքը համաձայն չէ և տեղեկացնել այնպիսի փաստերի մասին, որոնք պետք է դրվեն իր պաշտպանության հիմքում:

• Կոնվենցիայով երաշխավորված՝ պաշտպան ունենալու իրավունքից հրաժարվելը այնքանով, որքանով դա թույլատրելի է, չպետք է հակասի հանրային շահին, պետք է լինի միանշանակ և պետք է ուղեկցվի իրավունքից հրաժարվելու կարևորությանը համարժեք նվազագույն երաշխիքներով: Ավելին, մեղադրյալը Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված իրավունքներից հրաժարվելու դեպքում պետք է ցույց տա, որ ինքը ողջամտորեն գիտակցում է իրավունքից հրաժարվելու դեպքում առաջ եկող հետևանքները[153]:

Ասվածի հաշվառմամբ, Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ որ պաշտպան ունենալու իրավունքը բացարձակ չէ: Մեղադրյալի կողմից պաշտպանի ընտրություն կատարելու իրավունքը դատարանի կողմից կարող է անտեսվել կամ ստորադասվել, եթե դրա համար առկա են արդարադատության գերակա շահով պայմանավորված վերաբերելի և բավարար հիմքեր: Միևնույն ժամանակ մեղադրյալի կողմից պաշտպանից հրաժարումը պետք է արտահայտվի աներկիմաստ՝ ուղեկցվելով դատավարական նվազագույն երաշխիքներով, այդ թվում՝ իրավունքից հրաժարվելու դեպքում մեղադրյալի համար առաջանալիք հետևանքների գիտակցմամբ:

Միևնույն ժամանակ, պաշտպան ընտրելու և պաշտպանի պարտադիր մասնակցության, պաշտպանից հրաժարվելու անթույլատրելիության՝

---

[151] Տե՛ս Մեֆտահն ու այլք ընդդեմ Ֆրանսիայի (ՄՊ) (Meftah and others v. France) գործով 2002 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 32911/96, 35237/97, 34595/97, կետ 45:

[152] Տե՛ս Մայզիթն ընդդեմ Ռուսաստանի (Mayzit v. Russia) գործով 2005 թվականի հունվարի 20-ի վճիռը, գանգատ թիվ . 63378/00, կետ 66:

[153] Տե՛ս Պանովիցն ընդդեմ Կիպրոսի (Panovits v. Cyprus) գործով 2008 թվականի դեկտեմբերի 11-ի վճիռը, գանգատ թիվ 4268/04, կետ 68, Թալաթ Թունցն ընդդեմ Թուրքիայի (Talat Tunç v. Turkey) գործով 2007 թվականի մարտի 27-ի վճիռը, գանգատ թիվ 32432/96, կետ 59, Ջոնսն ընդդեմ Միացյալ Թագավորության (Jones v. the United Kingdom (dec.) գործով 2003 թվականի սեպտեմբերի 9-ի վճիռը, գանգատ թիվ 30900/02:

քրեադատավարական կարգավորումների[154] բովանդակային համադրված վերլուծությունից բխում է, որ ստեղծվում է իրավիճակ, երբ հակադրվում են մի կողմից կասկածյալի կամ մեղադրյալի՝ իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու հիմնարար իրավունքը, մյուս կողմից՝ դատարանի՝ արդյունավետ իրավաբանական ներկայացուցչություն ապահովելու (որպես արդար դատական քննության իրավունքի բաղկացուցիչ մաս) պարտականությունը, որի շրջանակներում վարույթն իրականացնող մարմինն իրավունք ունի չընդունել (իսկ սանկցիայի կիրառության դեպքում դատարանը չի ընդունում) պաշտպանից կասկածյալի կամ մեղադրյալի հրաժարումը: Իր հերթին, այս երկուսը հակադրվում են կասկածյալի կամ մեղադրյալի իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունքին:

Այլ կերպ ասած, օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասը փաստաբանի կողմից պաշտպանի իրավավիճակ ձեռք բերելու միակ պայման է դիտարկում կասկածյալի կամ մեղադրյալի համաձայնությունը: Մինչդեռ, երբ դատարանն օրենսգրքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի ուժով առանց ամբաստանյալի համաձայնության հանրային պաշտպանին ներգրավում է որպես ամբաստանյալի պաշտպան՝ այդպիսով կիրառելով պարտադիր իրավաբանական ներկայացուցչության ինստիտուտը, դրանով ստեղծվում է հակասություն 68-րդ հոդվածի 2-րդ մասի հետ:

Ստացվում է, որ որպես ընդհանուր պայման պաշտպանն իր լիազորությունները ստանձնում է մեղադրյալի համաձայնությամբ, մինչդեռ մեղադրյալի նկատմամբ սանկցիայի կիրառության դեպքում այդ համաձայնության ստացումն էական չէ, քանի որ գործում է վարույթին պարտադիր մասնակցության կանոնը՝ անկախ մեղադրյալի համաձայնության առկայությունից: Հասկանալի է, որ այս իրավիճակը երկու տարբեր ինստիտուտների բախում է, որի փոխհարաբերակցումն օրենսգիրքը պետք է հստակորեն կարգավորի՝ իրավական անորոշությունից խուսափելու համար:

Մինչդեռ, Օրենսգիրքը չի սահմանում, թե որ գերակա շահի կամ իրավունքի առկայության դեպքում է հնարավոր մեղադրյալի՝ իր ընտրած պաշտպանի միջոցով պաշտպանվելու իրավունքը ստորադասել պարտադիր իրավաբանական ներկայացուցչություն ապահովելու դատարանի պարտականությանը:

Ասվածի հաշվառմամբ, Քրեական դատավարության օրենսգիրքը պետք է կանխորոշի հստակ և որոշակի չափանիշներ՝ յուրաքանչյուր դեպքում հավաստելու արդարադատության գերակա շահի առկայությունն ու ապահովելու անձի՝ անձամբ կամ իր ընտրած պաշտպանի միջոցով պաշտպանվելու իրավունքի և արդարադատության շահի հավասարակշռությունը:

11. Քրեական գործով վարույթի շրջանակներում որպես իրեղեն ապացույց ճանաչված անձի սեփականությանն անհամաչափ միջամտությունը

մարդու իրավունքների պաշտպանի 2016 թվականի տարեկան հաղորդմամբ մանրամասն անդրադարձ է կատարվել անձի սեփականության իրավունքի և հանրային շահի ողջամիտ հավասարակշռության ապահովման, սեփականության իրավունքին միջամտության համաչափության խնդիրներին: Մասնավորապես, իրականացնելով սահմանադրական, կոնվենցիոն և ներպետական օրենսդրական համապատասխան նորմերի համակարգված վերլուծություն, այդ հաղորդման մեջ արձանագրվել է. «(...)

[154] Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը, նույն հոդվածի 5-րդ մասը և 72-րդ հոդվածի 2-րդ մասը:

[Ը]նդհանուր կանոնի համաձայն՝ որպես իրեղեն ապացույց ճանաչված առարկաները պահվում են քրեական վարույթն իրականացնող մարմնի մոտ մինչև գործով վերջնական դատական ակտի կամ որոշման կայացումը:

Միևնույն ժամանակ, սեփականության օբյեկտ հանդիսացող որոշակի առարկաների դեպքում օրենսդիրը նախատեսել է իրեղեն ապացույցների պահպանման նշված կանոնից բացառություն, համաձայն որի՝ գույքը սեփականատիրոջը կամ օրինական տիրապետողին վերադարձվում է քրեական գործի քննության ընթացքում:

Կարծում ենք, որ օրենսդրական այսպիսի կարգավորումը պայմանավորված է հենց հանրային և մասնավոր շահերի, մասնավորապես՝ ապացուցման՝ որպես գործի օրինական, հիմնավորված և արդարացի լուծմանն ուղղված գործընթացի պատշաճ իրականացման և անձի՝ որպես սեփականատիրոջ իրավունքների հարգման միջև արդարացի հավասարակշռության ապահովման պահանջով:

Սրա հետ կապված, հարկ ենք համարում նշել, որ թեև քրեադատավարական օրենքը վարույթն իրականացնող մարմնի՝ իրեղեն ապացույցները նախքան քրեական գործով վարույթի ավարտը վերադարձնելու պարտականության որևէ կոնկրետ դատավարական ժամկետ չի սահմանում, այդուհանդերձ, օրենսդրական այս պահանջի՝ սեփականության իրավունքի պաշտպանությանն ուղղված նորմատիվ արժեքը ենթադրում է, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից բավարար ջանասիրություն և բարեխղճություն պետք է ցուցաբերվի՝ որպես իրեղեն ապացույց ճանաչված անձի սեփականության հետ կապված քննչական և այլ դատավարական գործողությունները ողջամիտ ժամկետներում իրականացնելու և գույքը սեփականատիրոջ տիրապետմանը վերադարձնելու պարտականության ապահովման ուղղությամբ:

Ուստի, անհրաժեշտ է գործնականում ապահովել որպես իրեղեն ապացույց ճանաչված անձի սեփականության հետ կապված քննչական և այլ դատավարական գործողությունների իրականացման ողջամիտ ժամկետները՝ քրեադատավարական օրենքի պահանջներին համապատասխան գույքը սեփականատիրոջ տիրապետմանը վերադարձնելով»:

Իրավասու պետական մարմնից ստացված տեղեկությունների համաձայն՝ 2017 թվականի ընթացքում վարույթն իրականացնող մարմինների կողմից քրեական գործով իրեղեն ապացույց ճանաչված 25 տրանսպորտային միջոց փորձաքննության ավարտից հետո մինչև նախաքննության ավարտն ի պահ են հանձնվել սեփականատերերին: Բացի այդ, ՀՀ քննչական կոմիտեի պարզաբանմամբ քննվող քրեական գործերով իրեղեն ապացույց հանդիսացող 11 տրանսպորտային միջոց մինչև նախաքննության ավարտը վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ ի պահ են հանձնվել սեփականատերերին՝ համապատասխան պահպանվող տարածք չունենալու պատճառով:

Այնուամենայնիվ, հարկ է նկատել, որ անձի սեփականության իրավունքի անհամաչափ սահմանափակման, որպես իրեղեն ապացույց ճանաչված անձի սեփականության հետ կապված քննչական և այլ դատավարական գործողությունները ողջամիտ ժամկետներում իրականացնելու ու գույքը սեփականատիրոջ տիրապետմանը վերադարձնելու պարտականության ապահովման խնդիրը դեռևս պահպանվում է: Մասնավորապես 2017 թվականի ընթացքում բողոքներ են ստացվել առ այն, որ քրեական վարույթի շրջանակներում իրեղեն ապացույց ճանաչված անձի սեփականության

նկատմամբ քննչական կամ այլ դատավարական գործողություններ կատարելու պատճառաբանությամբ դրանք սեփականատիրոջը կամ օրինական տիրապետողին ի պահ չեն հանձնվել: Բողոքների ուսումնասիրությունից երևում է, որ քաղաքացիներն ու իրավապահ մարմինները հաճախ են բախվում նշված խնդրին գլխավորապես այն պատճառով, որ փորձաքննության նշանակման դեպքում դրանց եզրակացությունները սովորաբար ստացվում են տևական ժամանակ հետո:

Այսպես՝ բողոքներից մեկում անձը նշել է, որ քրեական գործով իրեղեն ապացույց ճանաչված և փորձաքննության ուղարկված ավտոմեքենան իր ապրուստի միակ միջոցն է, քանի որ աշխատում է որպես վարորդ: Մեկ այլ դեպքում՝ քաղաքացին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով տեղեկացրել է, որ որդուն մեղադրանք է առաջադրվել ակնհայտ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքն իրացնելու համար, սակայն նախաքննության ընթացքում քննիչի որոշմամբ առգրավվել է սեփականության իրավունքով իրեն պատկանող ավտոմեքենան և ավտոպահեստամասերը, որոնցից միայն մի մասն է հանցավոր ճանապարհով ձեռք բերվել:

Վերոնշյալի կապակցությամբ ՀՀ քննչական կոմիտեից ստացվել է պարզաբանում, որ երկու դեպքում էլ իրեղեն ապացույց ճանաչված իրերը (այդ թվում՝ ավտոմեքենաները) չեն կարող վերադարձվել, քանի որ դրանցով փորձաքննություններ են նշանակվել: Ի պատասխան Պաշտպանի լրացուցիչ գրության՝ հայտնել են նաև, որ գործերը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարան, հետևաբար իրեղեն ապացույցների տնօրինման հարցը կարող է լուծվել բացառապես դատարանի օրինական ուժի մեջ մտած ակտով:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների քննարկման արդյունքում պարզվել է, որ քրեական գործով վարույթի շրջանակներում քաղաքացիներին պատկանող ավտոմեքենաները ճանաչվել են իրեղեն ապացույց և փորձաքննություն կատարելու նպատակով պահվել ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության հատուկ պահպանվող տարածքում: Նշված բողոքներից առաջինի դեպքում քննիչի կողմից հետաքննության մարմնին տրանսպորտային միջոցը հատուկ պահպանվող տարածք տեղափոխելու վերաբերյալ հանձնարարություն առհասարակ չի տրվել, և անձը Պաշտպանի միջամտությամբ հետ է ստացել իր ավտոմեքենան: Մյուս բողոքի պարագայում վարույթն իրականացնող մարմինը ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական վարչությունում նշանակել է դատաձգաբանական, դատաքիմիական, դատահետքաբանական համալիր փորձաքննություն, և ավտոմեքենան տրամադրվել է փորձագետներին: Այնուհետև ՀՀ գլխավոր դատախազությունից տեղեկացրել են, որ նշանակված փորձաքննության եզրակացությունը ստանալուն պես ավտոմեքենան վերադարձվել է սեփականատիրոջը:

Քրեական գործով վարույթի շրջանակներում անձի սեփականության իրավունքին անհամաչափ միջամտության մեկ այլ դեպք է արձանագրվել, երբ անձին պատկանող տրանսպորտային միջոցի նկատմամբ կիրառված արգելանքը պահպանվել է՝ չնայած քրեական գործով վարույթի ավարտված լինելուն և այդպիսի սահմանափակման իրավական հիմքերի բացակայությանը: Տվյալ դեպքում անձի՝ որպես սեփականատիրոջ իրավունքներին անհամաչափ միջամտության խնդիր էր առաջ եկել այն առումով, որ

վերջինս, թեև փաստացի տիրապետել էր իր գույքը, սակայն զրկված էր եղել այն ազատորեն տնօրինելու հնարավորությունից:

Այս առումով, Մարդու իրավունքների պաշտպանն ընդգծում է, որ քրեական գործով վարույթի շրջանակներում անձանց իրավունքների սահմանափակման վարույթն իրականացնող մարմնի ցանկացած գործողություն պետք է ունենա քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված հիմքեր: Ընդ որում, թեև այդպիսի սահմանափակումը «օրենքով նախատեսված լինելու» և «իրավաչափ նպատակ հետապնդելու» պահանջներին բավարարելու ուժով սկզբնապես կարող է իրավաչափ լինել, այդուհանդերձ, դրա շարունակականությունը կարող է առաջ բերել այդ իրավունքին միջամտության համաչափության խնդիր: Ավելին, անթույլատրելի և օրենքին հակասող է իրավակիրառ պրակտիկայի ցանկացած դրսևորում, երբ անձի սեփականության իրավունքի սահմանափակումը պահպանվում է՝ դրա փաստական և իրավական հիմքերի բացակայության պայմաններում:

Այսպիսով, վերը նշվածի հաշվառմամբ, կարելի է պնդել, որ՝

1. քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված՝ իրեղեն ապացույցները քրեական գործի հետ պահելու ընդհանուր կանոնից բացառության առկայության դեպքում վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է քննարկել այդ գույքը սեփականատիրոջ կամ օրինական տիրապետողի պահպանմանը թողնելու հարցը, իսկ չթողնելու պարագայում պետք է ներկայացնի պատշաճ հիմնավորում.

2. վարույթն իրականացնող մարմնի կողմից պետք է ցուցաբերվի բավարար ջանասիրություն և բարեխղճություն՝ իրեղեն ապացույց ճանաչված՝ անձի սեփականության հետ կապված քննչական և այլ դատավարական գործողությունները ողջամիտ ժամկետներում իրականացնելու և գույքը սեփականատիրոջ տիրապետմանը վերադարձնելու պարտականության ապահովման ուղղությամբ.

3. *պետք է բացառվի քրեական գործով վարույթի շրջանակներում գույքի վրա կալանքի կիրառությամբ անձանց սեփականության իրավունքին ցանկացած միջամտություն, որը հիմնված չէ փաստական և իրավական հիմքերի վրա:*

12. Քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշման պատճենը վարույթն իրականացնող մարմնի կողմից չտրամադրելը

Քրեական գործի վարույթը կասեցնելու մասին որոշման պատճենը շահագրգիռ անձանց չտրամադրելու խնդրին Մարդու իրավունքների պաշտպանն անդրադարձել է նաև նախորդ տարիների գործունեության ամփոփման ընթացքում [155]:

Խոսքը, մասնավորապես, վերաբերում է, քրեական գործի ելքով շահագրգռված վարույթի մասնակիցներին վարույթը կասեցնելու մասին գրավոր տեղեկացնելու նախաքննական մարմնի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պարտականությանը պրակտիկայում տրված նեղ մեկնաբանությանը:

---

[155] 2013 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին տարեկան զեկույց, էջեր 85-87
http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/afe1e423a8f465a4fba32ccc27ef913a.pdf
2016 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 161-163:
http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/28731eccde752a30c70feae24a4a7de7.pdf

Նման մեկնաբանությունը, ըստ էության, հանգում է նրան, որ «գրավոր տեղեկացնելը» չի ենթադրում որոշման տրամադրման հնարավորություն: Արդյունքում, նշված անձանց նույնիսկ իրենց միջնորդությամբ չի տրամադրվում որոշման պատճենը՝ չնայած քրեական գործի վարույթը կասեցնելու մասին որոշումը բողոքարկելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նրանց իրավունքին:

Այս առումով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասի կիրառման միասնական պրակտիկան ապահովելու նպատակով դեռևս 2013 թվականին ՀՀ գլխավոր դատախազը հանձնարարել էր կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումները ղեկավարող դատախազներին ապահովել տուժողին, նրա ներկայացուցչին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին կամ նրանց ներկայացուցիչներին քրեական գործով վարույթը կասեցնելու մասին իրազեկումը: Ըստ հանձնարարականի՝ իրազեկումը պետք է լինի գրավոր, որում միաժամանակ պետք է պարզաբանվի, որ վերոնշյալ անձանց կողմից գրավոր պահանջի դեպքում նրանց կարող է տրամադրվել քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշումը՝ այն ՀՀ քրեական դատավարության կարգով բողոքարկելու նպատակով:

Չնայած դրան, 2016 թվականի ընթացքում ևս խնդիրը բարձրացվել էր այն առումով, որ ըստ քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշումը տուժողին չտրամադրելու վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության պարզաբանման՝ քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշման պատճենը տուժողին ուղարկելու լիազորություն դատավարական օրենքը քննիչին չի վերապահում, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով քննիչը պարտավոր է, այդ թվում՝ տուժողին, տեղեկացնել քրեական գործով վարույթը կասեցնելու մասին, ինչն ապահովվել է քննիչի գրությամբ[156]:

Նման պայմաններում, կարծում ենք, խնդիրը պետք է լուծվի օրենսդրական կարգավորումների հստակեցման ճանապարհով: Բանն այն է, որ ի տարբերություն քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն ուղղակիորեն չի նախատեսում քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշման պատճենը հոդվածում նշված վարույթի մասնակիցներին ուղարկելու պարտականություն:

Նման իրավիճակը, երբ օրենսդրությամբ ամրագրվել է անձի բողոքարկման իրավունքը, սակայն բացակայում են դրա իրացման համար անհրաժեշտ երաշխիքները, կարող է հանգեցնել ՀՀ սահմանադրությամբ և միջազգային իրավական փաստաթղթերով հռչակված՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի անհամաչափ սահմանափակման:

Ըստ այդմ, Մարդու իրավունքների պաշտպանը վերահաստատում է այն դիրքորոշումը, որ համապատասխան դատավարական ակտի բողոքարկման իրավունքը կարող է կյանքի կոչվել միայն այդ որոշման պատճենը բողոքարկման իրավունք ունեցող անձին տրամադրվելու դեպքում:

Օրենսգրքի 258-րդ հոդվածի իրավակարգավորմանը պետք է տալ համակարգային մեկնաբանություն, և հոդվածով նախատեսված քննիչի՝ քրեական գործով վարույթը կասեցնելու մասին տեղեկացնելու պարտականությունը պետք է ենթադրի առնվազն

[156] Տե՛ս 2016 թվականի տարեկան հաղորդման էջեր 161-162:

շահագրգիռ անձի պահանջով այդ որոշման պատճենը նրան տրամադրելու պարտականություն:

Այսպիսով, ասվածի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է.

1. գործնականում ապահովել շահագրգիռ անձի պահանջով քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշման պատճենի տրամադրումը՝ Օրենսգրքի 258-րդ հոդվածի իրավակարգավորումը դիտարկելով գործող քրեադատավարական կարգավորումների համակարգային մեկնաբանության հիման վրա.

2. միասնական իրավակիրառ պրակտիկայի ապահովման տեսանկյունից խնդրո առարկա որոշման պատճենը տրամադրելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականությունն ուղղակիորեն ամրագրել Քրեական դատավարության օրենսգրքում:

13. Քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի գործողությունների հետևանքով առանց հսկողության մնացած անչափահասների կամ անաշխատունակ անձանց խնամքի պատշաճ կազմակերպումը

Քրեական գործով վարույթի շրջանակներում անձին արգելանքի վերցնելու արդյունքում վերջինիս հոգածության ներքո գտնվող անչափահասների և անաշխատունակ անձանց խնամքի իրավունքի լիարժեք ապահովման հետ կապված խնդիրները մշտապես գտնվում են Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության կենտրոնում:

Խնդրին համակողմանիորեն անդրադարձ է կատարվել նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ նախորդ տարիների գործունեությունն ամփոփող զեկույցներում[157]:

ՀՀ սահմանադրության 37-րդ հոդվածը հռչակում է, որ առանց ծնողական խնամքի մնացած երեխաները պետության հոգածության և պաշտպանության ներքո են:

Արգելանքի վերցված անձի հոգածության ներքո գտնվող անչափահասների և անաշխատունակ անձանց խնամքի իրավունքի ապահովմանն է կոչված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի կարգավորումները, որոնց ուժով նշված իրավունքի ապահովման պարտականությունը կրում է վարույթն իրականացնող մարմինը:

Չնայած Սահմանադրությամբ և օրենքով սահմանված պետության պոզիտիվ պարտականությանը՝ այնուամենայնիվ նշված դրույթի կիրառությունը գործնականում ոչ միշտ է լիարժեք ապահովվել: Ավելին, նախորդ տարիներին արձանագրվել են դեպքեր, երբ նկարագրված իրավիճակում հայտնված երեխաների անհրաժեշտ խնամքն ու սոցիալական աջակցությունն ապահովվել են հասարակական, այդ թվում՝ միջազգային կազմակերպությունների օժանդակության արդյունքում, այնինչ առանց ծնողական խնամքի մնացած երեխաները պետության հոգածության և պաշտպանության ներքո են:

Չնայած առանձին դեպքերով տրված իրավիճակային դրական արդյունքներին՝ խնդրի լուծումը պետք է տրվի ընդհանուր քաղաքականության և մոտեցումների համակարգային փոփոխությամբ:

Մարդու իրավունքների պաշտպանը վերահաստատում է քրեական գործով վարույթի շրջանակներում անձի անձնական ազատության իրավունքի սահմանափակմամբ

[157] Տե՛ս 2015 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 12-13, 2016 թվականի տարեկան հաղորդումը, էջեր 130-136:

պայմանավորված՝ անչափահաս երեխաների և անաշխատունակ անձանց խնամքի ապահովման վերաբերյալ միջազգային մի շարք փաստաթղթերի և ներպետական իրավական ընթացակարգերի վերլուծության արդյունքում արտահայտած դիրքորոշումը, որ խնամքի ապահովման՝ որպես պետության պոզիտիվ պարտականության լիարժեք իրացումը նախևառաջ ենթադրում է ոլորտը կարգավորող՝ բավարար որոշակիություն ունեցող օրենսդրական ընթացակարգերի նախատեսում, ինչպես նաև պատասխանատու մարմինների փոխհամաձայնեցված գործողությունների և պատասխանատվության հստակության ապահովում:

Ու թեև ներպետական օրենսդրական կարգավորումների համակարգային ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ քրեական գործով վարույթի շրջանակներում անչափահասների և անաշխատունակ անձանց խնամքի ապահովմանն ուղղված ընթացակարգերը սահմանված են, ինստիտուցիոնալ առումով որոշակիորեն հստակեցված են խնամքի կազմակերպման գործընթացին ներգրավված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պատասխանատվության շրջանակները[158], այդուհանդերձ նշված անձանց սոցիալական ապահովության՝ պետության առջև դրված խնդրի լիարժեք իրագործման նպատակով պետք է ապահովվի՝

- գործընթացին մասնակցող բոլոր մարմինների (սոցիալական պաշտպանության հաստատությունների, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով ստորաբաժանումների, սոցիալական աջակցության տարածքային ստորաբաժանումների, օրենսդրությամբ սահմանված այդ գործընթացում ներգրավված այլ մարմինների ու կազմակերպությունների, ինչպես նաև քրեական հետապնդման մարմինների) արդյունավետ և հետևողական փոխգործակցությունը՝ հիմնված բարեխղճության սկզբունքի վրա:

14. Կալանքի՝ որպես խափանման միջոցի կիրառման դատական պրակտիկան Հայաստանի Հանրապետությունում

Քրեական գործով վարույթի ընթացքում կալանքի կիրառության պրակտիկայի շարժընթացն ու ընդհանուր միտումները յուրաքանչյուր տարվա կտրվածքով քննարկման առարկա դարձնելու անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով՝

- կալանքը քրեական գործով վարույթի շրջանակներում կիրառվող ամենախիստ խափանման միջոցն է, որն ուղեկցվում է անձի անձնական ազատությունից զրկմամբ և դրանից բխող այլ իրավունքների սահմանափակմամբ (մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության, աշխատանքային և կրթական գործընթացների վրա անխուսափելի ազդեցություն և այլն).
- կալանքը որպես խափանման միջոց կիրառվում է մեղադրյալի նկատմամբ՝ անձի, ում մեղավորությունը դեռևս ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:
- շարունակական կալանքը կարող է արդարացվել միայն այն դեպքում, եթե առկա են կոնկրետ ցուցումներ հանրային շահի իրական պահանջի վերաբերյալ, որը,

[158] ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2015 թվականի տարեկան հաղորդման մեջ ներկայացվել էր առաջարկ՝ օրենսդրորեն սահմանել հստակ մեխանիզմներ, որոնց առկայության դեպքում վարույթն իրականացնող մարմինը կարող է արդյունավետ ապահովել անձի խնամքը և գոյատևման միջոցների տրամադրումը:

չնայած անմեղության կանխավարկածին, գերակայում է անձի ազատության հանդեպ հարգանքի կանոնի նկատմամբ.

- կալանքի կիրառության դատական պրակտիկայի ընդհանուր օրինաչափությունները դատական համակարգում «ազատության կանխավարկածի» սկզբունքի իրացման կարևոր ցուցիչ են: Դրանք կանխորոշում են պետության քրեական քաղաքականությունը՝ ազատությունից զրկելու հետ կապված ներգործության միջոցների կիրառման առումով.
- կալանքի կիրառության դատական պրակտիկան շարունակում է մնալ հասարակական մտահոգության կարևորագույն հարցերից մեկը՝ որպես դատական համակարգի նկատմամբ վստահության ձևավորման գործոն.
- վերջապես, 2017 թվականի ընթացքում ևս Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված բողոքները կալանավորման կամ կալանքի տևական ժամկետների վերաբերյալ շարունակական են եղել:

Մարդու իրավունքների պաշտպանի կողմից սույն տարեկան հաղորդմամբ երկրում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակին անդրադարձը չէր կարող ամբողջական լինել, եթե դրանում չլիներ անդրադարձ ՀՀ-ում կալանքի կիրառությանը: Սույն հաղորդման շրջանակներում կատարվել է խորքային օրենսդրական և գործնական վերլուծություն:

Խնդիրն ունի շարունակական արդիականության: Այս մասին է վկայում նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի (ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի) վերաբերյալ նախադեպային վճիռների, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների պրակտիկ կենսագործման հրամայականը:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքներում նույնպես բարձրացվել են կալանքի կիրառության հետ կապված խնդիրներ: Այդպիսի բողոքներ ստացվել են հիմնականում կալանավորված անձանցից և նրանց պաշտպաններից ու հարազատներից: Խնդիրը վեր է հանվել նաև քրեակատարողական հիմնարկներ այցելությունների ընթացքում՝ կալանավորված անձանց հետ անմիջական շփման արդյունքում:

Մասնավորապես, այդ բողոքների գերակշռող մասը վերաբերում է դատարանների կողմից կալանքի կիրառության միջնորդությունները բավարարելու ոչ իրավաչափությանը՝ անձի կողմից հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայությունը, ինչպես նաև խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության հարցը լուծելիս նշանակություն ունեցող հանգամանքները պատշաճ քննարկման առարկա չդարձնելուն: Բացի այդ, մի շարք դեպքերում կալանավորված անձինք իրենց բողոքներում նշել են, որ կալանքը կիրառելիս դատարանների կողմից հաշվի չեն առնվել իրենց առողջական վիճակը, այդ թվում՝ հաշմանդամությունը, մեծահասակ լինելը, ընտանեկան դրությունը, ինչպես նաև իրենց խնամքին մանկահասակ երեխաներ և տարեց ծնողներ ունենալու հանգամանքները:

Այս ամենի հաշվառմամբ՝ կալանքի կիրառության դատական պրակտիկայի ուսումնասիրությունն իրականացվել է՝ իբրև ելակետ ընդունելով կալանավորման

վերաբերյալ պաշտոնական վիճակագրության համեմատահիրավական վերլուծության արդյունքները, միջազգային իրավական մոտեցումներին ու ցուցանիշներին դրանց համապատասխանությունը, օրենսդրական կարգավորումների լիարժեքությունը:

Այսպես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի՝ անձի անձնական ազատության իրավունքը երաշխավորող 5-րդ հոդվածի նպատակն է կանխել անձին անձնական ազատությունից կամայական և չարդարացված զրկելու դեպքերը: Անձի անձնական ազատության և անվտանգության իրավունքը ժողովրդավարական հասարակությունում ունի կարևորագույն նշանակություն[159]:

Ըստ Եվրոպական դատարանի իրավական չափանիշների՝ իրավունքին միջամտության օրինականությունը չի կարող ապահովվել զուտ ներպետական օրենսդրությանը համապատասխանությամբ: Ներպետական օրենքն իր հերթին պետք է բավարարի կոնվենցիոն պահանջներին և ընդհանուր սկզբունքներին: Կոնվենցիայի 5-րդ հոդվածի շրջանակներում այդ ընդհանուր սկզբունքներն են՝ իրավունքի գերակայության, դրա հետ փոխկապված՝ իրավական որոշակիության, համաչափության և կամայականությունից պաշտպանության սկզբունքները: Վերջինն էլ հենց Կոնվենցիայի 5-րդ հոդվածով հետապնդվող իրական նպատակն է[160]:

Միևնույն ժամանակ, Եվրոպական դատարանի իրավաբանության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անձի իրավունքին, մասնավորապես՝ անձնական ազատության իրավունքին միջամտության իրավաչափությունը կարող է որոշվել՝ կոնկրետ գործի փաստական հանգամանքների հաշվառմամբ: Ինչպես նշում է Դատարանը, անձին ազատ արձակելու կողմ կամ դեմ փաստարկները չեն կարող լինել «ընդհանուր և վերացական»[161]. դրանք պետք է պարունակեն անձի կալանավորումն արդարացնող վերջինիս անձնային հատկանիշներին և առանձնահատուկ փաստերին վկայակոչումներ[162]:

Մասնավորապես, իբրև այդպիսի իրավական ելակետեր պետք է կիրառելի լինեն հետևյալ սկզբունքները՝

1. կալանքի հարցը քննարկելիս «ազատության կանխավարկածով» առաջնորդվելը[163].

2. կալանքը՝ որպես անձի ազատության իրավունքի սահմանափակման վերջին կամ ծայրահեղ միջոց (last resort) կիրառելը[164].

3. կալանքի կիրառությունը միայն այդ դեպքում, երբ ներգործության ուժով նվազ միջոցները չեն կարող ապահովել հետապնդվող իրավաչափ նպատակը[165]:

---

[159] Տե՛ս Մեդվեդևն և ուրիշներն ընդդեմ ֆրանսիայի (Medvedyev and Others v. France) 2010 թվականի մարտի 29-ի վճիռը, գանգատ թիվ 3394/03, կետ 76,
Լադենտն ընդդեմ Լեհաստանի (Ladent v. Poland) գործով 2008 թվականի մարտի 18-ի վճիռը, գանգատ թիվ 11036/03, կետ 45, բավարար թափանցիկություն այն առավելագույն սահմաններում, որ չխոչընդոտի այդ մարմնի առջև դրված խնդիրների լուծմանը:

[160] Տե՛ս Սիմոնսն ընդդեմ Բելգիայի (Simons v. Belgium) գործով 2012 թվականի օգոստոսի 28-ի վճիռը, գանգատ թիվ 71407/10, կետ 32:

[161] Տե՛ս Բոիցենկոն ընդդեմ Մոլովայի (Boicenco v. Moldova) գործով 2006 թվականի հուլիսի 11-ի վճիռը, գանգատ թիվ 41088/05, կետ 142; Խուդոյորովն ընդդեմ Ռուսաստանի (Khudoyorov v. Russia) գործով 2005 թվականի նոյեմբերի 8-ի վճիռը, գանգատ թիվ 6847/02, կետ 173:

[162] Տե՛ս Ալեքսանյանն ընդդեմ Ռուսաստանի (Aleksanyan v. Russia) գործով 2008 թվականի դեկտեմբերի 22-ի վճիռը, գանգատ թիվ 46468/06, կետ 179:

[163] Տե՛ս Կորնիյչուկն ընդդեմ Ուկրաինայի (Korniychuk v. Ukraine) գործով 2018 թվականի հունվարի 30-ի վճիռը, գանգատ թիվ 10042/11, կետ 59:

[164] Տե՛ս Մեհմետ Հասան Ալտանն ընդդեմ Թուրքիայի (Mehmet Hasan Altan v Turkey) գործով 2018 թվականի մարտի 20-ի վճիռը, գանգատ թիվ 13237/17, կետ 211,

[165] Տե՛ս Ջունդիկսն ընդդեմ Լատվիայի (Djundiks v Latvia) գործով 2014 թվականի կոկտեմբերի 13-ի վճիռը, գանգատ թիվ 14920/05, կետ 89,

Կալանքի կիրառության դատական պրակտիկայի ընդհանուր միտումների բացահայտման նպատակով համեմատական ուսումնասիրության են ենթարկվել ՀՀ դատարանների գործունեության վերաբերյալ 2017 թվականի հաշվետվության պաշտոնական վիճակագրական տվյալները 2011-ից 2016 թվականների հաշվետվություններում արտացոլված տվյալների հետ[166]: Համեմատական կարգով վերլուծվել են ինչպես կալանքը՝ որպես խափանման միջոց կիրառելու կամ կալանքի ժամկետը երկարացնելու միջնորդությունների քանակը, դատարանների կողմից բավարարված միջնորդությունների տեսակարար կշիռը, այնպես էլ գրավը՝ որպես այլընտրանքային խափանման միջոց ընտրելու միտումները:

Այսպես, դատարան ներկայացված՝ կալանքը կիրառելու միջնորդությունների բացարձակ ցուցանիշների ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրել վերջին տարիներին վարույթն իրականացնող մարմինների կողմից այդպիսի միջնորդություններ ներկայացնելու նվազման որոշակի միտում, որը պահպանվել է նաև 2017 թվականի ընթացքում: Օրինակ, եթե 2011 թվականին կալանավորման վերաբերյալ միջնորդությունների ընդհանուր թիվը կազմել է 3262, 2013 թվականին այդ ցուցանիշը կազմել է 3172, 2016 թվականին՝ 2563 միջնորդություն, ապա 2017 թվականին նշված միջնորդությունների քանակը նվազել է մինչև 2363:

Միևնույն ժամանակ, հարկ է արձանագրել, որ դատարանների կողմից այդ միջնորդությունների բավարարման ցուցանիշները ուսումնասիրված տարիներին կազմել են դատարան ներկայացված կալանավորման միջնորդությունների 90%-ից ավելին (ըստ տարիների՝ դրանք տատանվել են 92-95% միջակայքում): Այդ առումով բացառություն չէ նաև 2017 թվականը, որի ընթացքում բավարարված և մասնակի բավարարված միջնորդությունների տեսակարար կշիռը կալանավորման միջնորդությունների ընդհանուր թվաքանակում կազմել է 94%-ից ավելի (բավարարվածները՝ 2220 կամ 93.9%, մասնակի բավարարվածները՝ 12 կամ 0.5%):

Ի տարբերություն նախորդ տարիների՝ վերջին երեք տարիներին արձանագրվել են նաև կալանավորման վերաբերյալ միջնորդությունների մասնակի բավարարման դեպքեր (2015 թվականին՝ 11, 2016 թվականին՝ 13, իսկ 2017 թվականին՝ 12 դեպք): Այս ցուցանիշները, սակայն բավական ցածր են՝ կալանքի կիրառության պրակտիկայի ընդհանուր պատկերը փոփոխելու առումով:

Բացի այդ, շարունակում է մտահոգության տեղիք տալ կալանքի ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունների և դրանց բավարարման քանակական ցուցանիշները: Այսպես, 2017 թվականին ներկայացված նման 1438 միջնորդություններից բավարարվել կամ մասնակի բավարարվել է 95%-ից ավելին (բավարարվել է 1339, մասնակի՝ 36): Հարկ է նշել, որ նման պատկերը հատուկ է քննարկվող բոլոր տարիների համար: Մյուս կողմից հարկ է նշել, որ նման միջնորդությունների քանակը 2016 թվականի համեմատ որոշակիորեն նվազել է (2016թ.՝ 1795), իսկ մերժման դեպքերը ավելացել (2016թ.՝

Լուտսենկոն ընդդեմ Ուկրաինայի (Lutsenko v Ukraine) գործով 2012 թվականի նոյեմբերի 19-ի վճիռը, գանգատ թիվ 6492/11, կետ 66,
Նավալնիին և Յաշինն ընդդեմ Ռուսաստանի (Navalnyy and Yashin v Russia) գործով 2014 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 76204/11, կետ 96,
Լադենտն ընդդեմ Լեհաստանի (Ladent v. Poland) գործով 2008 թվականի մարտի 18-ի վճիռը, գանգատ թիվ 11036/03, կետ 55:

[166] Տե՛ս ՀՀ դատարանների գործունեության վերաբերյալ հաշվետվությունները՝ «Հայաստանի Դատական Համակարգ» պաշտոնական կայքէջում՝ http://www.court.am/:

36 դեպք): Վերջին ցուցանիշների փոփոխությունը, սակայն, ևս բավականին ցածր է՝ կալանքի կիրառության պրակտիկայի ընդհանուր պատկերը փոփոխելու առումով:

Կալանավորման վերաբերյալ միջնորդությունների բավարարման բարձր ցուցանիշները որոշակիորեն պայմանավորված են նաև օրենքի մակարդակում այլընտրանքային միջոցների կիրառության ճկուն կառուցակարգերի բացակայությամբ: Այսպես, գործող քրեադատավարական կարգավորումների համաձայն՝ գրավը կարող է կիրառվել իբրև կալանքին այլընտրանք, այսինքն՝ գրավը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ դատարանը բավարարում է անձին կալանավորելու վերաբերյալ միջնորդությունը:

Մտահոգիչ են գրավի՝ որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոցի կիրառման ցածր ցուցանիշները: Այսպես, կալանավորումը՝ որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունների մասնակի կամ ամբողջությամբ բավարարման դեպքերի և անձին կալանքից գրավով ազատելու դեպքերի քանակական հարաբերակցությունը 2011 թվականից մինչև 2017 թվականներին շարունակել է տատանվել 4-7% միջակայքում: Բացի այդ, որոշակի բացասական միտում է նկատվում գրավ կիրառելու միջնորդությունների և դրանք բավարարելու կամ մասնակի բավարարելու հարաբերակցության հարցում: Այսպես, եթե 2011 թվականին գրավի կիրառումը բավարարվել է (այդ թվում՝ մասնակի) 131 դեպքում՝ կազմելով միջնորդությունների ընդհանուր թվի 29.2%, 2012 թվականին՝ 134 դեպքում՝ միջնորդությունների ընդհանուր թվի 30.3%, 2016 թվականին՝ 161 դեպքով՝ միջնորդությունների ընդհանուր թվի 20.9%, ապա 2017 թվականին և՛ նվազել է բավարարված միջնորդությունների քանակը՝ 125 միջնորդություն, և՛ դրանց տեսակարար կշիռը նվազել է մինչև 15.9%[167]:

Կալանքի կիրառության դատական պրակտիկայի ընդհանուր դիտարկման տեսանկյունից որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև 2017 թվականին արդարացված անձանց նկատմամբ կիրառված խափանման միջոցների, այդ թվում՝ կալանքի վիճակագրական տվյալները: Այսպես, ՀՀ դատական դեպարտամենտի՝ 2017 թվականի ամփոփիչ տվյալների համաձայն՝ լրիվ կամ մասնակի արդարացված 180 անձանցից 112-ի (62.2%) նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված է եղել ստորագրություն չհեռանալու մասին, 5-ի (2.8%) նկատմամբ՝ հրամանատարության հսկողության հանձնելը, 4-ի (2.2%) նկատմամբ՝ ծնողների հսկողության հանձնելը, 1-ի (0.6%) նկատմամբ՝ անձնական երաշխավորությունը, 3-ի (1.7%) նկատմամբ խափանման միջոց չի ընտրվել, 55-ի (30.5%) նկատմամբ՝ կալանքը, որից 12-ի (արդարացվածների ընդհանուր քանակի 6.7%, կալանավորվածների 21.8%) նկատմամբ կիրառվել է գրավ:

Ստացվում է, որ լրիվ արդարացված 142 անձանցից ընդամենը 19-ի (13.4%) նկատմամբ է որպես խափանման միջոց ընտրված եղել կալանավորումը[168]:

Հատկանշական է, որ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի անդամ պետություններում նախնական կալանքի կիրառման չարաշահումների վերաբերյալ 2077 (2015) բանաձևում նշել է, որ 2013

---

[167] Տե՛ս Համեմատական վիճակագրական վերլուծությունը ՀՀ դատարանների 2016-2017թթ. գործունեության վերաբերյալ՝ http://www.court.am/files/news/4630_am.pdf:

[168] Տե՛ս ՀՀ դատական դեպարտամենտի կողմից հրապարակված վիճակագրական տվյալները՝ http://www.court.am/?l=lo&id=11&item_id=4620:

թվականի դրությամբ Եվրոպայում կալանավորված անձանց մեծ թվաքանակը (ինչպես բացարձակ ցուցանիշներով, այնպես էլ ազատությունից զրկված անձանց ընդհանուր թվաքանակում տեսակարար կշիռը), որը կազմում է 425 000 (ազատությունից զրկված բոլոր անձանց 25%-ը), ինքնին վկայում է, որ նախնական կալանքի հիմքերը, մասնավորապես՝ անձի փախուստը կանխելու կամ վկաների նկատմամբ ազդեցության կամ ապացուցման գործընթացին խոչընդոտելու վերաբերյալ, ընդհանուր առմամբ տարածական մեկնաբանության են ենթարկվում կամ կիրառվում են ձևականորեն (pro forma)՝ նպատակ ունենալով կալանավորումն արդարացնել այլ՝ ոչ իրավաչափ նպատակներին (abusive purposes) հասնելու համար[169]:

Միջազգային իրավական մոտեցումներին համահունչ՝ կալանքի կիրառության պրակտիկայի ընդհանրական պատկերը ձևավորվում է՝ հաշվի առնելով կալանավորված անձանց թվաքանակի տեսակարար կշիռն ինչպես ազատությունից զրկված անձանց, այնպես էլ բնակչության ընդհանուր քանակի հետ հարաբերակցությամբ:

Այսպես, ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական տվյալների համաձայն՝ 2018 թվականի հունվարի 8-ի դրությամբ ՀՀ քրեակատարողական հիմնարկներում պահվում են 1326 կալանավորված անձինք, իսկ ազատությունից զրկված անձանց ընդհանուր քանակը (կալանավորված անձինք և դատապարտյալներ) կազմում է 3549: Ստացվում է, որ կալանավորված անձանց տեսակարար կշիռը՝ մոտավորապես 37.4%-ը գերազանցում է Խորհրդարանական վեհաժողովի կողմից մտահոգիչ համարվող 25%-ը:

Բացի այդ, իբրև կալանքի կիրառության տարածվածության գնահատման բանաձև՝ միջազգային իրավական փաստաթղթերում նշվում է կալանավորված անձանց քանակը յուրաքանչյուր 100.000 բնակչություն հաշվով, որը եվրոպական երկրներում միջինացված կազմում է 31[170]:

Հայաստանում բնակչության թվաքանակի[171] (2017 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ՝ 2.979.600 մարդ) և կալանավորված անձանց ընդհանուր թվաքանակի այդպիսի համադրությունը կազմում է մոտավորապես 44.5, որը ևս գերազանցում է եվրոպական միջին ցուցանիշը:

Կարծում ենք, որ միջնորդությունների բավարարման այսպիսի բարձր շեմը, ինչպես նաև եվրոպական միջին (որոնք ևս գնահատվել են իբրև մտահոգիչ) ցուցանիշների գերազանցումը վկայում է դատարանների կողմից կալանքի կիրառության դեպքում «ազատության կանխավարկածով» առաջնորդվելու և կալանքը բացառիկ դեպքերում, այսինքն՝ որպես «վերջին միջոց» կիրառելու սկզբունքների դեռևս ոչ բավարար կենսագործման մասին:

---

[169] Տե՛ս Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 2015 թվականի հոկտեմբերի 1-ի «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի անդամ պետություններում նախնական կալանքի կիրառման չարաշահումների վերաբերյալ» թիվ 2077 (2015) բանաձևը՝ http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=22206&lang=en

[170] Տե՛ս Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 2015 թվականի հոկտեմբերի 1-ի «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի անդամ պետություններում նախնական կալանքի կիրառման չարաշահումների վերաբերյալ» թիվ 2077 (2015) բանաձևի նախագծի վերաբերյալ 2015 թվականի սեպտեմբերի 7-ին Իրավական հարցերի և մարդու իրավունքների հանձնաժողովի ընդունված կարծիքը http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=21992&lang=en

[171] Տե՛ս ՀՀ ազգային վիճակագրական ծառայության հրապարակած «Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը 2017 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ» վիճակագրական տեղեկագիրը՝ http://armstat.am/file/article/nasel_01.10.2017.pdf

Դրական զարգացում պետք է համարել 2017 թվականի ընթացքում ՀՀ դատախազության կողմից ձեռնարկված որոշակի քայլերը: Մասնավորապես, ՀՀ գլխավոր դատախազության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ քննարկվող հարցերի առնչությամբ ՀՀ դատախազությունում 2017 թվականի օգոստոսի 4-ին տեղի է ունեցել կոլեգիայի նիստ: Նիստում քննարկվել է «Կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու և կալանքի ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունների հիմնավորվածության՝ գործնականում հանդիպող թերացումների վերացման նպատակով օրենսդրական և նախադեպային չափորոշիչների արդյունավետ կիրառման» հարցը: Դատախազության ներկայացրած տեղեկությունների և սահմանված չափորոշիչների ուսումնասիրությունը վկայում է, որ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու և կալանավորման ժամկետը երկարացնելու վերաբերյալ միջնորդությունների հիմնավորվածության ապահովման նվազագույն պահանջները վերաբերում են ինչպես միջնորդությունների պատճառաբանվածությանը, այնպես էլ անհրաժեշտ դատավարական և օպերատիվ միջոցառումների իրականացմանը՝ ներկայացվող միջնորդությունների փաստական հիմնավորվածությունն ապահովելու համար:

Ընդ որում, Մարդու իրավունքների պաշտպանն ընդունում է, որ Դատախազության կոլեգիայի նիստում քննարկված չափորոշիչներն ընդհանուր առմամբ արտացոլում են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները:

Այդպիսի հանձնարարականների ապահովումն, իհարկե, կարևոր է Եվրոպական դատարանի, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներն իրավակիրառման ոլորտ ներմուծելու և պրակտիկան ուղղորդելու տեսանկյունից: Ուստի, ընդունելով հանդերձ քրեական հետապնդման մարմնի՝ կալանավորման միջնորդությունների որակը բարձրացնելուն ուղղված քայլերը՝ այդուհանդերձ, կարծում ենք, որ տարբեր տարիների ընթացքում դատարանների կողմից կալանքի միջնորդությունների 90%-ից ավելի բավարարման բարձր ցուցանիշն ինքնին վկայում է կալանքը՝ որպես ծայրահեղ կամ վերջին միջոց կիրառելու՝ դատական պրակտիկայում ընդհանուր մոտեցումները դեռ լիարժեք ներդրված չեն: Ամեն դեպքում, պետք է նկատի ունենալ, որ քրեական հետապնդման մարմնի դատավարական կարգավիճակն արդեն իսկ ենթադրում է վերջինիս գործողությունների մեղադրական ուղղվածությունը, ինչը պետք է բացառվի ինստիտուցիոնալ և գործառութային անկախություն ունեցող դատական մարմնի դեպքում:

Դատարանը կալանքի հարցը քննարկելիս պետք է կիրառի դատական ակտի պատճառաբանվածության ավելի բարձր չափանիշ և հիմնավորի, որ տվյալ դեպքում առկա են այնպիսի ծանրակշիռ փաստական տվյալներ, որոնք բացառում են ազատության մեջ մնալու դեպքում մեղադրյալի պատշաճ վարքագծի ապահովման հնարավորությունը[172]:

Այլ կերպ ասած, թեև քրեական հետապնդման մարմինը քրեադատավարական օրենքով կրում է պարտականություն՝ փաստական տվյալների հիման վրա կառուցելու կալանավորման անհրաժեշտության վերաբերյալ իր ողջամիտ ենթադրությունները, այդուհանդերձ, դատական մարմինն է, որ կայացնում է անձին անձնական ազատությունից զրկելու մասին որոշումը:

[172] Տե՛ս նաև Ա.Հովսեփյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2015 թվականի հունիսի 18-ի թիվ ԵԱՔԴ/0386/06/15 որոշումը:

Հատկանշական են նաև դատական համակարգում արձանագրված դրական զարգացումները՝ կապված ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից ներդրված նոր պրակտիկայի հետ:

Մասնավորապես, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2017 թվականի հուլիսի 28-ի թիվ ԵԱՔԴ/0189/01/14 գործով որոշմամբ հաշվի է առել, որ քրեական գործը դատարանի վարույթում է գտնվում 2014 թվականի դեկտեմբերի 8-ից, իսկ ամբաստանյալը կալանավորված է 3 տարի 4 ամսից: Արդյունքում, դատարանը եզրակացրել է, որ տվյալ դեպքում առկա չէ այնպիսի շահ, որն արդարացնում է անձին տևական ժամանակ անազատության մեջ պահելը, ուստի տվյալ փուլում առաջին ատյանի դատարանը միջնորդության քննարկման ժամանակ բավարար տվյալներ ունեցել է եզրահանգելու, որ գրավի կիրառումը կարող է ապահովել ամբաստանյալի պատշաճ վարքագիծը:

Միևնույն ժամանակ, կալանքի կիրառության հարցում դատական պրակտիկայի բարելավման առարկայական և շոշափելի արդյունքների արձանագրումը, կարծում ենք, պետք է ապահովվի հենց կալանքի կիրառման հարցը որոշող դատական մարմնի կողմից անձի անձնական ազատությանը միջամտությունն արդարացնող ապացուցողական բարձր շեմի պահպանման դեպքում, ինչն իր հերթին պայմանավորում է հայեցակարգային օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտությունը:

Գործող օրենսդրական կանոնակարգումներն այդ առումով բավարար ճկուն չեն: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է այլընտրանքային խափանման միջոցների գործուն համակարգի, մեղադրյալի պատշաճ վարքագիծն ապահովելու նպատակով այդպիսի այլընտրանքային միջոցների կիրառման առաջնահերթության ուղղակի պահանջի բացակայությանը[173]:

Վերը շարադրվածը նշանակում է նաև, որ հատկապես դատական համակարգում անհրաժեշտ են սկզբունքային բնույթի փոփոխություններ, որոնք պետք է ունենան շարունակական բնույթ և լինեն հետևողական: Խոսքը վերաբերում է ինչպես օրենսդրական փոփոխություններին, այնպես էլ իրավակիրառ պրակտիկային: Իհարկե, ներկայում գործող պրակտիկայի պայմաններում օրենսդրական փոփոխություններն առավել, քան պահանջված են, քանի որ կարող են ուղղակի ազդեցություն ունենալ իրավակիրառ պրակտիկայի վրա: Խոսքը նախևառաջ վերաբերում է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի ընդունմանը: Օրենսդրորեն կալանքի իրավաչափության գլխավոր պայմաններից պետք է համարվի դրա կիրառությունը բացառապես այն դեպքում, երբ ազատությունից զրկելու հետ չկապված խափանման միջոցներով հնարավոր չէ ապահովել հանցագործության մեջ մեղադրվող անձի պատշաճ վարքագիծը:

Կարևորագույն հարց է նաև դատավորների իրավական ընկալումների փոփոխությունը՝ կապված ազատության կանխավարկածի ու կալանքի՝ որպես ներգործության բացառիկ միջոց լինելու հետ:

---

[173] Այս առումով, պետք է արձանագրել, օրինակ, ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով տրված լուծումներով նոր խափանման միջոցների (ոստիկանությունում հաշվառվելը, տնային կալանքը և այն) սահմանումը, ինչպես նաև գրավը որպես ինքնուրույն խափանման միջոց նախատեսելը, որոնք պետք է նպաստեն իրավակիրառ պրակտիկայում անհիմն կամ հարկադրված կալանավորումների թվի կրճատմանը:
Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգը՝ https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/Mar9-6_1.pdf

Այս բոլոր հարցերում հատկապես կարևոր դեր կարող է ունենալ Սահմանադրությամբ նորաստեղծ Բարձրագույն դատական խորհուրդը:

Այսպիսով, կալանքի կիրառության դատական պրակտիկայի ընդհանուր դիտարկման արդյունքներով՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ.

2017 թվականին կալանքի կիրառության ընդհանուր դատական պրակտիկան չի փոխվել: *Ուստի, Պաշտպանը վերահաստատում է, որ խնդրի լուծումը թերևս պետք է ապահովվի նոր հայեցակարգային մոտեցումներ պարունակող օրենսդրական դաշտի վերանայման, մասնավորապես՝ այլընտրանքային խափանման միջոցների կիրառման ճկուն օրենսդրական կառուցակարգերի հնարավորինս արագ ներդրման և դրանց համապատասխան՝ կայուն դատական պրակտիկայի ձևավորման ճանապարհով:*

15. Քրեական գործերի քննության ողջամիտ ժամկետի պահպանումը: Դատարանակազմական և դատավարական կանոնակարգումների լիարժեքությունը

2017 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված բողոքների շրջանակներում բարձրացվել են քրեական գործերի քննության ձգձգման հետ կապված խնդիրները:

Այդ բողոքների հիմնական բովանդակությունն այն է, որ քրեական գործերի նախաքննությունը կամ դատաքննությունը անընդհատ անհիմն պատճառներով ձգձգվում են: Օրինակ, բողոքներից մեկով կալանավորված անձը տեղեկացրել է, որ դեռևս 2014 թվականից քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, իսկ առ այսօր վերջնական դատական ակտ չի կայացվել: Կալանավորված անձանց հետ առանձնազրույցների և իրականացված դիտարկման արդյունքները վկայում են, որ դատական պրակտիկայում նմանօրինակ դեպքերը բացառիկ չեն և անխուսափելիորեն անդրադառնում են դատական պրակտիկայի ընդհանուր պատկերի վրա:

Կոնկրետ դատական վարույթին և դատավորի լիազորությունների իրականացմանը չմիջամտելու օրենքի պահանջից ելնելով՝ առանձին գործերով ողջամիտ ժամկետում դատական քննության իրավունքի ենթադրյալ խախտման հարցերը Պաշտպանի կողմից քննության առարկա չեն դարձել: Այդուհանդերձ, երկրում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակին ընդհանուր անդրադարձը պայմանավորում է նաև քրեական գործի քննության ողջամիտ ժամկետների պահպանման խնդրի ուսումնասիրություն՝ միջազգային իրավական չափանիշների, դատարանակազմական և դատավարական օրենսդրական կանոնակարգումների վերլուծություն:

ՀՀ սահմանադրության 63-րդ հոդվածը երաշխավորում է, որ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Սահմանադրական այս իրավունքի բովանդակության անքակտելի և կարևորագույն տարր է գործի քննության և եզրափակիչ ակտի կայացման ողջամիտ տևողության պահպանումը:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 6-րդ հոդվածի ուժով՝ «Յուրաքանչյուր ոք, (…) իրեն ներկայացված

ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի (…) դատարանի կողմից ողջամիտ ժամկետում (…) դատաքննության իրավունք»:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ 1987 թվականի սեպտեմբերի 17-ի քրեական արդարադատության պարզեցմանն ուղղված թիվ R(87)18 հանձնարարականը նշում է, որ հանցագործությունների բացահայտման հապաղումը վարկաբեկում է քրեական դատավարությունը և ընդհանուր առմամբ բացասաբար է անդրադառնում արդարադատության պատշաճ իրականացման վրա[174]:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն DH (97) հանձնարարականում, որն ընդունվել է Իտալիայում ձևավորված քաղաքացիական գործերի քննության ողջամիտ ժամկետների խախտման պրակտիկայի կապակցությամբ, ընդգծել է, որ «արդարադատության իրականացման չափազանց ձգձգումը լուրջ վտանգ է ներկայացնում իրավունքի գերակայության համար»: Ներպետական մարմիններում դատաքննության կամ այլ իրավական վարույթի տևողության ժամկետը գնահատելիս Եվրոպական դատարանն առաջնորդվում է նաև այն սկզբունքով, որ ողջամիտ ժամկետի պահանջի խախտումը կարող է կատարվել միայն պետության մեղքով տեղի ունեցած ձգձգումներով:

Ողջամիտ ժամկետում գործի քննության երաշխիքի նպատակը դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանությունն է քննության չափից ավելի ձգձգումներից, որոնք կարող են խաթարել արդարադատության իրականացման արդյունավետությունը կամ դրա նկատմամբ վստահությունը[175]:

Եվրոպական դատարանը, խոսելով պատշաճ քննության մասին, սահմանում է նաև գործը ողջամիտ ժամկետում քննելու պետության պարտականությունը[176]՝ այն դիտարկելով իբրև պետական մարմինների գործողությունների նկատմամբ հասարակական վստահության կարևոր պայման[177]:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Էկլեն ընդդեմ Գերմանիայի Դաշնային Հանրապետության գործով փաստում է, որ քրեական գործով «ողջամիտ ժամկետը» սկսում է հաշվվել այն պահից, երբ առաջադրվում է մեղադրանքը: Դա կարող է տեղի ունենալ ավելի շուտ, քան գործն ուղարկվում է դատարան: Այդ ժամկետը կարող է հաշվվել անձին ձերբակալելու պահից, կամ այն պահից, երբ տվյալ անձը պաշտոնապես տեղեկացվել է, որ իր նկատմամբ քրեական գործ է հարուցվել, կամ նախնական քննությունը սկսելու պահից:

Ժամկետի հաշվարկն ավարտվում է, երբ ավարտվում է քննությունն ամենաբարձր ատյանի դատարանում, այն է՝ երբ կայացվում է վերջնական որոշում: Այսինքն՝ գործի քննության ընդհանուր տևողության ողջամտությունը գնահատելիս պետք է հաշվի առնվի նաև վարույթների տևողությունը վերաքննիչ և վճռաբեկ ատյաններում[178]:

---

[174] Տե՛ս Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ 1987 թվականի սեպտեմբերի 17-ի քրեական արդարադատության պարզեցմանն ուղղված թիվ R(87)18 հանձնարարականը՝ http://www.barobirlik.org.tr/dosyalar/duyurular/hsykkanunteklifi/recR(87)18e.pdf:

[175] Տե՛ս ՄԻԵԴ նախադեպային իրավունքի հիմնահարցերը քրեական գործերով, դասավանդման նյութ, Դ. Մելքոնյան:

[176] Տե՛ս Յասան ընդդեմ Թուրքիայի (Yasa v. Turkey) գործով 1998 թվականի սեպտեմբերի 2-ի վճիռը, գանգատ թիվ 22495/93, կետեր 102-104:

[177] Տե՛ս Մահմուտ Կայան ընդդեմ Թուրքիայի (Mahmut Kaya v. Turkey) գործով 2000 թվականի մարտի 28-ի վճիռը, գանգատ թիվ 22535/93, կետեր 106-107:

[178] Տե՛ս Ողջամիտ ժամկետում արդար դատաքննության և դատավարություններում դատավորի դերի վերաբերյալ (հաշվի առնելով վեճերի լուծման այլընտրանքային միջոցները) Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդի (CCJE) կողմից Նախարարների կոմիտեի ուշադրությանը ներկայացնելու համար 2004 թվականի Նոյեմբերի 22-ից 24-ն ընդունված թիվ 6 (2004) կարծիքը, կետ 98:

Գործի քննության ողջամիտ ժամկետի պահանջի խախտումը չի կարող արդարացվել, անգամ եթե համապատասխան դատավարական որոշումներն ընդունվել են անձի օգտին (քրեական գործի վարույթի կարճում, պատժի մեղմացում, հայցադիմումի (դիմումի) բավարարում և այլն)[179]:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի շրջանակներում Եվրոպական դատարանը ներպետական վարույթի տևողության ողջամտությունը յուրաքանչյուր դեպքում գնահատում է՝ ելնելով քննության առարկա գործի կոնկրետ հանգամանքներից: Չնայած դրան՝ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը ողջամիտ ժամկետի վիճարկմանը վերաբերող մի շարք գործերի քննության արդյունքում ձևավորել է որոշակի չափանիշներ, որոնք դատաքննության ողջամտությունը գնահատելիս կիրառելի են բոլոր գործերի նկատմամբ:

Ըստ այդմ, ողջամիտ ժամկետի հետ կապված՝ Եվրոպական դատարանը ելնում է հետևյալ չափանիշներից՝

1. <u>գործի բարդությունը.</u>

Գործի բարդությունը որոշելիս՝ Եվրոպական դատարանը ելակետային է համարում մի շարք չափանիշներ, նշելով, որ բարդությունը կարող է կապված լինել ինչպես փաստի, այնպես էլ իրավական տեսակետների հետ: Դատարանը մեծ նշանակություն է տալիս հետևյալ գործոններին՝ հաստատման ենթակա փաստերի բնույթը, մեղադրյալների և վկաների թվաքանակը, միջազգային գործոնները, դատավարությանը նոր անձանց ներգրավումը, հաշվարկները, փորձագետների անհրաժեշտությունը և այլն:

2. <u>դիմողի համար ողջամիտ ժամկետի չպահպանման հետևանքները.</u>

Դիմողի համար այդպիսի հետևանքները վերջինիս իրավունքների ապահովման այն հնարավոր ռիսկերն են, որոնք կարող են վրա հասնել դատավարական ժամկետների ձգձգման պատճառով:

3. <u>համապատասխան մարմինների աշխատանքի օպերատիվությունը.</u>

Համապատասխան մարմինների աշխատանքի օպերատիվություն ասելով ի նկատի է առնվում վարույթն իրականացնող մարմնի կողմից գործի բոլոր հանգամանքների լրիվ, բազմակողմանի և ժամանակին ուսումնասիրումը: Ընդ որում, միջազգային իրավական մոտեցումների համաձայն՝ պետք է արձանագրել, որ գործի քննության ձգձգումը հանգեցնում է ողջամիտ ժամկետների խախտման, եթե դա պայմանավորված է սուբյեկտիվ պատճառներով, ինչպիսիք են, օրինակ, դատարանների գերծանրաբեռնվածությունը, դատավորների ոչ արհեստավարժությունը և այլն. նման դեպքերում պետությունն է կրում որակյալ և արագ արդարադատություն ապահովելու պարտականությունը:

4. <u>դիմողի սեփական վարքագիծը.</u>

Դիմողի սեփական վարքագծի հետ կապված՝ Եվրոպական դատարանն արձանագրում է, որ վերջինս պետք է «ցուցադրի քննության՝ իրեն անմիջականորեն վերաբերող բոլոր փուլերին մասնակցելու պատրաստակամություն, ձեռնպահ մնա դատավարությունը ձգձգող հնարքներից, ինչպես նաև դատավարությունն արագացնելու նպատակով առավելագույնս օգտագործի ներպետական օրենսդրությամբ նախատեսված

[179] Տե՛ս Էկլեն ընդդեմ Գերմանիայի (Eckle v. Germany) գործով 1982 թվականի հուլիսի 15 վճիռը, գանգատ թիվ 8130/78, կետ 73:

բոլոր միջոցները[180]: Եթե գործի քննության ձգձգումը տեղի է ունենում դիմողի մեղքով, ապա դա, անկասկած, վերջինիս բողոքի արդյունավետությունը նվազեցնող գործոն է[181]:

Արդար դատաքննության իրավունքի, մասնավորապես՝ ողջամիտ ժամկետների երաշխավորումն առաջին հերթին կանխորոշվում է դատարանակազմական և դատավարական լիարժեք կառուցակարգերով և դրանց պատշաճ գործադրմամբ: Հետևաբար, դատավարական ողջամիտ ժամկետների պահպանումն իր հերթին փոխպայմանավորված է մի շարք ինստիտուցիոնալ և ֆունկցիոնալ գործոններով, ինչպիսիք են, օրինակ, դատարանների ծանրաբեռնվածության համաչափությունը, գործի քննության անխոչընդոտ ընթացքն ապահովելու դատավարական հստակ կառուցակարգերը, դատավարությանը մասնակցող անձանց պատշաճ վարքագիծը և այն ապահովող օրենսդրական լծակները, դատավարական ժամկետների սահմանումը:

Միևնույն ժամանակ, հարկ է նկատել, որ ողջամիտ ժամկետը վերացական հասկացություն չէ. այն մեծապես կախված է կոնկրետ գործի առանձնահատկություններից, և տևողության միևնույն թվային ցուցանիշը կարող է մի դեպքում համարվել ողջամիտ, մյուս դեպքում՝ ոչ:

Հարցի առնչությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատավարական ժամկետների պահպանումը կարևոր նշանակություն ունի նաև դատավարության տևողության ողջամտության ապահովման համար, իսկ ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունքը Մարդու իրավունքների միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներից է[182]:

Գործի քննության ողջամիտ ժամկետների միջազգային իրավական մոտեցումների տրամաբանությամբ՝ ՀՀ դատարանների նախագահների խորհուրդն իր հերթին արձանագրել է, որ գործի քննությունը պետք է իրականացվի հնարավորին սեղմ ժամկետում: Խորհուրդը արձանագրել է, որ գործի քննության ժամկետները որոշելիս գործի քննության ժամկետի սկիզբ քրեական գործերով պետք է համարել այն պահը, երբ առաջադրվում է մեղադրանքը, որը կարող է տեղի ունենալ ավելի շուտ քան գործն ուղարկվում է դատարան, այդ ժամկետը կարող է հաշվվել անձին ձերբակալելու պահից, կամ այն պահից, երբ տվյալ անձը պաշտոնապես տեղեկացվել է, որ իր դեմ քրեական գործ է հարուցվել, կամ նախնական քննություն սկսելու պահից[183]:

Օրենսդրական մակարդակում դատավարական ողջամիտ ժամկետների պահպանման խնդիրն անհրաժեշտ ենք համարում դիտարկել երկու հարթությունում՝

1. <u>դատական իշխանության կազմակերպման և գործունեության հիմունքների ու սկզբունքների տեսանկյունից</u>

Գործերի քննության ողջամիտ ժամկետների պահպանումն ուղղակիորեն կապված է դատական համակարգի կառուցվածքից, դատավորների թվաքանակից, դատարանների նստավայրերի, դրանց սպասարկման տարածքների և դատավորների բաշխման ու

---

[180] Տե՛ս Ալիմենտարիա Սանդերս ընդդեմ Իսպանիայի (Alimentaria Sanders S. A. V. Spain) գործով 1989 թվականի հուլիսի 7-ի վճիռը, գանգատ թիվ 11681/85, կետ 35:

[181] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Երևան, 2010թ., էջ 232-233՝ https://www.osce.org/hy/yerevan/74940?download=true:

[182] Տե՛ս Վճռաբեկ դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ԳԴ1/0012/13/09 և ԼԴ/0082/13/09 որոշումները:

[183] Տե՛ս ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2006 թվականի հունիսի 13-ի թիվ 98 որոշում. http://www.court.am/files/news/101_am.pdf:

թվակազմի սահմանումից և այլն: Այս առումով, 2017 թվականի դրությամբ, հարկ է նկատել, որ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի մշակմամբ նախատեսվում են գործերի քննության ողջամիտ ժամկետների պահպանման ինստիտուցիոնալ նոր լուծումներ, որոնք հիմնականում հանգում են հետևյալին.

1. Երևան քաղաքում առաջին ատյանի ընդհանուր իրավասության մեկ դատարանի ստեղծումը, որի դատական տարածքը Երևան քաղաքի տարածքն է.

2. առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների դատավորների ոչ ֆիքսված թվակազմը (23-րդ հոդված), Բարձրագույն դատական խորհրդի՝ առանձին դատարանների դատավորների թվակազմը ավելացնելու լիազորության ամրագրումը.

3. դատարանում գործի քննության տևողության ողջամտությունը որոշելու չափանիշների ամրագրումը՝ Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների հաշվառմամբ[184].

4. Բարձրագույն դատական խորհրդի կողմից գործի քննության միջին ուղենիշային տևողության սահմանումը՝ ըստ գործերի առանձին տեսակների և բարդության:

Բացի այդ, հարկ է նշել, որ գործող Դատական օրենսգրքի[185] «Դատական վիճակագրության վարումը և հրապարակայնության ապահովումը» վերտառությամբ 21.1-րդ հոդվածի 9-րդ մասն ամրագրում է, որ առաջին ատյանի յուրաքանչյուր դատարանի և դատավորի վերաբերյալ՝ ըստ քրեական, քաղաքացիական և վարչական գործերի, հրապարակվում են, մասնավորապես, հետևյալ տվյալները (տեղեկությունները)՝

1. գործի քննության միջին տևողությունը՝ ըստ նիստերի քանակի.

2. գործի քննության միջին տևողությունը՝ ըստ ժամանակի (հաշվարկի միավոր՝ ժամ) (այդ թվում՝ ըստ դատաքննության նախապատրաստության, դատաքննության և դատական ակտի կայացման փուլերի միջին տևողության):

Չնայած օրենսդրական պահանջին՝ դատարանների գործունեության վերաբերյալ հրապարակային տվյալների ուսումնասիրությունը վկայում է, որ այդպիսի վիճակագրություն ներկայում չի վարվում, ինչը հնարավորություն չի տալիս վեր հանել դատական ատյանների կողմից գործերի քննության միջին տևողությունը: Ուստի, կարծում ենք, որ այդպիսի վիճակագրական տվյալների մշակումն ու վերլուծությունը, դրանց արդյունքների հրապարակումն ուղղորդող նշանակություն կարող են ունենալ գործերի քննության ողջամիտ ժամկետների չպահպանման պատճառները վեր հանելու, ըստ այդմ դատական պրակտիկայի կատարելագործմանն ուղղված ընդհանուր միջոցառումներ իրականացնելու առումով:

---

[184] ՀՀ դատական օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն. «1. Գործի քննությունը և լուծումը պետք է իրականացվեն ողջամիտ ժամկետում:
2. Դատարանում գործի քննության տևողության ողջամտությունը որոշելիս հաշվի են առնվում՝
1) գործի հանգամանքները, ներառյալ՝ իրավական և փաստական բարդությունը, վարույթի մասնակիցների վարքագիծը և վարույթի մասնակցի համար գործի տևական քննության հետևանքները,
2) հնարավոր սեղմ ժամկետում գործի քննությունն ու լուծումն իրականացնելու նպատակով դատարանի կատարած գործողությունները և դրանց արդյունավետությունը,
3) գործի քննության ընդհանուր տևողությունը,
4) Բարձրագույն դատական խորհրդի սահմանած՝ գործի քննության միջին ուղենիշային տևողությունը:
3. Եթե գործի քննության և լուծման համար օրենքով սահմանված է հատուկ ժամկետ, ապա այն պետք է քննվի և լուծվի այդ ժամկետում: Նման ժամկետի երկարաձգումը թույլատրվում է բացառապես օրենքով սահմանված դեպքերում և կարգով:»

[185] Օրենքն ուժը կորցնում է նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնը ստանձնելու օրը՝ համաձայն 2018 թվականի փետրվարի 7-ի ՀՕ-95-Ն օրենքի 166-րդ հոդվածի 2-րդ մասի:

Միևնույն ժամանակ, ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում քրեական գործերի քննության վերաբերյալ՝ 2015-2017 թվականների հաշվետվությունների ուսումնասիրությունը վկայում է, որ տվյալ տարում անավարտ գործերի քանակի ավելացման և դրանով պայմանավորված՝ հաջորդ տարում դատարանների ծանրաբեռնվածության աճի միտում կա: Այսպես, 2015 թվականի սկզբում նախորդ տարվանից փոխանցված գործերի թիվը կազմել է 1087, իսկ տարեվերջում անավարտ գործերի թիվը դարձել է 1295: Նույն տրամաբանությամբ՝ 2016 թվականի սկզբում փոխանցված՝ 1295 անավարտ գործերի թիվն աճել է մինչև 1602-ի, իսկ 2017 թվականին անավարտ գործերի թիվը կազմել է 1935:

Կարծում ենք, որ վերը նշված ցուցանիշները՝ յուրաքանչյուր հաջորդ տարում անավարտ գործերի թվաքանակի աճի պայմաններում, ինքնին հիմք են տալիս դատարանների ծանրաբեռնվածության և ըստ այդմ՝ գործի քննության ողջամիտ ժամկետների չպահպանման մասին հետևությունների:

2. <u>քրեադատավարական ընթացակարգերի օրենսդրական կարգավորումների տեսանկյունից.</u>

Գործող քրեադատավարական կառուցակարգերը քրեական գործերի քննության ժամկետների պահպանման առումով լիարժեք չեն: Այսպես, օրենսգրքի՝ դատավարական ժամկետներ ամրագրող կարգավորումները հանգում են հետևյալին՝

1. հետաքննությունն ավարտվում է քրեական գործ հարուցելու պահից 10 օրվա ընթացքում,

2. քրեական գործով նախաքննությունը պետք է ավարտվի ոչ ուշ, քան երկամսյա ժամկետում: Այդ ժամկետը հաշվվում է քրեական գործ հարուցելու մասին որոշում կայացնելու օրվանից և ավարտվում է գործը դատարան ուղարկելու մասին կամ գործով վարույթի կարճման մասին որոշման կայացման օրը.

3. միևնույն ժամանակ, նախաքննության ժամկետը քննիչի պատճառաբանված միջնորդության հիման վրա կարող է երկարացնել հսկող դատախազը՝ միջնորդությունը լրիվ կամ մասնակիորեն բավարարելու վերաբերյալ որոշում կայացնելով: Նախաքննության ժամկետի մասնակի երկարացումը ենթակա է պատճառաբանման: Նախաքննության ժամկետը յուրաքանչյուր դեպքում կարող է երկարացվել մինչև երկու ամիս ժամանակով.

Ստացվում է, որ թեև մինչդատական վարույթի փուլերի՝ հետաքննության և նախաքննության առավելագույն ժամկետներն օրենքով ամրագրված են, այդուհանդերձ, վարույթն իրականացնող մարմինն իրավասու է նախաքննության երկամսյա ժամկետը երկարացնել՝ ընդ որում առանց օրենսդրական սահմանափակման: Չնայած յուրաքանչյուր դեպքում նախաքննության ժամկետը երկարացնելու պատճառաբանվածության պահանջին՝ օրենսդրական այդպիսի կառուցակարգը կարող է խնդրահարույց լինել քրեական հետապնդման ենթարկվող անձի իրավունքների, այդ թվում՝ իր գործի քննության ողջամիտ ժամկետների երաշխավորման տեսանկյունից:

4. գործի դատական քննության նախապատրաստման փուլի հետ կապված օրենսգրքի 292-րդ հոդվածն ամրագրում է, որ քրեական գործն իր վարույթ ընդունած դատավորը հետազոտում է գործում եղած նյութերը և քրեական գործն իր վարույթն ընդունելու պահից 15 օրվա ընթացքում կայացնում է որոշում.

5. օրենսգրքի 293-րդ հոդվածի համաձայն՝ դատական քննությունը պետք է նշանակվի դատական քննություն նշանակելու մասին որոշում կայացնելու պահից 10 օրվա ընթացքում.

6. քրեադատավարական օրենքը գործի դատական քննության առավելագույն ժամկետներ չի նախատեսում՝ միաժամանակ ամրագրելով անձի՝ ողջամիտ ժամկետում

Ի տարբերություն գործող օրենսգրքի՝ Քրեական դատավարության օրենսգրքի նախագծի 194-րդ հոդվածի առաջին մասն ամրագրում է, որ մինչդատական վարույթում հանրային քրեական հետապնդումն այն հարուցելու պահից չի կարող տևել ավելի, քան՝

– երկու ամիս՝ ոչ մեծ ծանրության հանցանքի վերաբերյալ վարույթով.
– չորս ամիս՝ միջին ծանրության հանցանքի վերաբերյալ վարույթով.
– ութ ամիս՝ ծանր հանցանքի վերաբերյալ վարույթով.
– տասը ամիս՝ առանձնապես ծանր հանցանքի վերաբերյալ վարույթով:

Իսկ երկրորդ մասով՝ բացառիկ դեպքերում, երբ դա է պահանջում արդարադատության շահը, նախատեսված ժամկետները վերադաս դատախազի կողմից կարող են երկարացվել առավելագույնը երկու ամսով:

Նախագծի վերոնշյալ լուծումները, փաստորեն, ամրագրում են անձի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու առավելագույն ժամկետները:

Վերը նշվածի հաշվառմամբ՝ կարծում ենք, որ քրեական գործերի քննության ողջամիտ ժամկետների ապահովման հարցում դատական պրակտիկայի կատարելագործման նպատակով *անհրաժեշտ է՝*

1. քրեական դատավարության օրենսգրքի մոտեցումներին համահունչ՝ ամրագրել քրեական հետապնդման առավելագույն ժամկետներ.

2. ապահովել «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի՝ գործի քննության տևողության ողջամտության ապահովմանն առնչվող պահանջների պատշաճ կենսագործումը:

16. Հանրային վստահության հատուկ բաղադրիչ ունեցող քրեական գործերով վարույթը

Ինչպես իրավապահ, այնպես էլ դատական մարմիններից յուրաքանչյուրի կողմից իրենց իրավասության սահմաններում պատշաճ արձագանքը ցանկացած իրավախախտման առնչությամբ հանդիսանում է այդ մարմինների հանդեպ քաղաքացու վստահության ապահովման կարևորագույն գրավական: Այդ վստահությունն առավել ամրապնդվում է, երբ արագացման սկզբունքին համապատասխան տեղի է ունենում բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն:

Երբ խոսքը վերաբերում է հասարակական նշանակության գործերի քննությանը, ապա անխուսափելիորեն առաջ է գալիս իրավասու մարմնի (դատախազական կամ քննչական մարմին և այլն) կողմից այդ գործերի ընթացքի մասին հանրությանը պարբերաբար տեղեկություններ տրամադրելու լեգիտիմ անհրաժեշտություն: Այս գործերի արագ քննությունն ու դրանց ընթացքի մասին հանրությանը պատշաճ իրազեկելը դառնում են այդ գործերի, իսկ առանձին դեպքերում նաև երկրի ողջ իրավապահ ու դատական համակարգերի նկատմամբ հանրության վստահության ապահովման հատուկ բաղադրիչ:

Այդպիսին պետք է համարել *2016 թվականի հուլիսյան իրադարձությունների ընթացքում Ոստիկանության թույլ տված խախտումների առնչությամբ հարուցված քրեական գործերի քննությունը:*

2016 թվականի հուլիսյան իրադարձություններն, իհարկե, մարդու իրավունքների տեսանկյունից լուրջ մարտահրավերների առաջ կանգնեցրին մեր երկիրը: Դրա հետ միասին, այդ իրադարձությունները հնարավորություն տվեցին հասկանալ երկրում առկա համակարգային խնդիրները, դրանց նպաստող պատճառներն ու պայմանները: Հնարավորություն տվեցին նաև հասկանալու՝ կանխարգելիչ ինչ միջոցներ պետք է ձեռնարկել՝ հետագայում այդպիսի իրավիճակներից խուսափելու համար: Այդ նպատակով էր նաև, որ 2017 թվականին հրապարակվեց միջազգային գործընկերների կողմից բարձր գնահատականի արժանացած՝ «2016 թվականի հուլիսյան իրադարձությունների վերաբերյալ» Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը[186]: Զեկույցում հանգամանորեն քննարկվեցին հուլիսյան դեպքերը, ինչպես նաև դրանց առնչությամբ ներկայացվեցին մանրամասն գնահատականներ: Արձանագրվեցին նաև հուլիսի 17-ից 31-ի իրադարձությունների ընթացքում տեղի ունեցած՝ մարդու իրավունքներին և ազատություններին առնչվող խնդիրներ, որոնց կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը ստացել էր հաղորդումներ, արձանագրել էր խախտումներ, ներկայացրել էր դրանց վերացմանն ուղղված առաջարկություններ ու պահանջներ կամ ձեռնարկել օրենքով սահմանված այլ քայլեր: Այդ օրերին նկատվում էր նաև ատելության խոսքի և բռնության քարոզչության աննախադեպ բռնկում, որին արտահերթ զեկույցում կատարված է մանրամասն անդրադարձ:

Հավաքագրված տեղեկությունների ուսումնասիրման ընթացքում, առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակող արարքների վերաբերյալ նյութերը Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ներկայացվել են քրեական հետապնդման մարմնին: Դրանք վերաբերել են դեպքերը լուսաբանող լրագրողների նկատմամբ բռնություն գործադրելու և այլ եղանակներով նրանց մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելուն, ոստիկանության մի շարք ծառայողների կողմից անհամաչափ ուժ գործադրելուն, ինչպես նաև այլ դեպքերին:

Ինչպես արձանագրված է 2016 թվականի հուլիսյան իրադարձությունների վերաբերյալ արտահերթ զեկույցում՝ «Հուլիսի 23-ին և դրան հաջորդող օրերին ՀՀ հատուկ քննչական ծառայությունը տարածեց հայտարարություններ՝ կապված քրեական գործ հարուցելու և նախաքննություն իրականացնելու հետ: Մարդու իրավունքների պաշտպանին Հատուկ քննչական ծառայության կողմից ներկայացվել են պարզաբանումներ առ այն, որ հարուցվել է քրեական գործ այն դեպքի առթիվ, որ Մարդու իրավունքների պաշտպանի, ինչպես նաև մի շարք քաղաքացիների, նրանց փաստաբանների հաղորդումների, ԶԼՄ- ների հրապարակումների հիման վրա հարուցվել է քրեական գործ: Այդ հաղորդումներն ու հրապարակումները վերաբերել են նրան, որ հուլիսյան իրադարձությունների շրջանակում Ոստիկանության ծառայողները, դուրս գալով իրենց լիազորությունների շրջանակից, իրենց պաշտոնեական դիրքը ենթադրաբար

[186] Տե՛ս «2016 թվականի հուլիսյան իրադարձությունների վերաբերյալ» ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը,
http://pashtpan.am/resources/ombudsman/uploads/files/publications/e014052ce8bdca5513f5a7d68deb6224.pdf:
Այսուհետև սույն բաժնում՝ Արտահերթ զեկույց:

ծառայության շահերին հակառակ օգտագործելով, հատուկ միջոցների գործադրման հետևանքով մարմնական վնասվածքներ են պատճառել տարբեր անձանց, բռնություն են գործադրել, ինչպես նաև խոչընդոտել են լրագրողների մասնագիտական օրինական գործունեությունը և փաստաբանների լիազորությունների իրականացումը: Ըստ Հատուկ քննչական ծառայության՝ քրեական գործ էր հարուցվել նաև հուլիսի 29-ին Սարի թաղում ցուցարարների երթի հանգամանքները լուսաբանող լրագրողների նկատմամբ բռնություն գործադրելու և այլ եղանակներով լրագրողի մասնագիտական օրինական գործունեությունը խոչընդոտելու առերևույթ հատկանիշների մասին վկայող տեղեկությունների հիման վրա:»:

Սույն հաղորդման մշակման շրջանակներում իրավասու պետական մարմիններից տեղեկություններ են պահանջվել հուլիսյան իրադարձությունների առնչությամբ հարուցված քրեական գործերի քննության ընթացքի վերաբերյալ: Հաշվի առնելով քննարկվող իրադարձությունների հանրային նշանակությունը և դրանց՝ որպես հասարակության մտահոգության առարկա հանդիսացող դեպքերի առնչությամբ ձեռնարկված և ձեռնարկվող միջոցների վերաբերյալ ժողովրդի բավարար իրազեկվածության մակարդակի ապահովման անհրաժեշտությունը՝ սույն հաղորդմամբ, օբյեկտիվությունից ելնելով, ներկայացվում են նաև պետական մարմինների տրամադրած տվյալները:

Հատուկ քննչական ծառայության կողմից առանձին հաղորդագրություն է տարածվել նաև 2016 թվականի օգոստոսի 31-ին, որի համաձայն՝ հուլիսի 29-ի լույս 30-ի գիշերը Սարի թաղում տեղի ունեցած դեպքերից տուժած ենթադրաբար 99 քաղաքացիներից 23-ը լրագրողներ են, որոնցից 19-ը ճանաչվել են տուժող: 2016 թվականի հոկտեմբերի 31-ի դրությամբ, ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննվող քրեական գործով առերևույթ հանցագործություններ կատարելու, այդ թվում՝ լրագրողների մասնագիտական օրինական գործունեությունը խոչընդոտելու համար մեղադրանքներ են առաջադրվել 8 անձանց, որոնցից 7-ի՝ «Ազատություն» ռադիոկայանի, «Արմենիա» հեռուստաընկերության և «news.am» կայքի աշխատակիցների մասնագիտական օրինական գործունեությունը խոչընդոտած անձանց վերաբերյալ քրեական գործից անջատված մասերի նախաքննությունն ավարտվել է և մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Ծառայության վարույթում է գտնվում ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից Մ. Խորենացու փողոցում և Սարի թաղում 2016 թվականի հուլիսի 29-ից 30-ն ընկած ժամանակահատվածում հատուկ միջոցների գործադրմամբ տարբեր անձանց մարմնական վնասվածքներ պատճառելու, ՀՀ ոստիկանության ստորաբաժանումներ անձանց բերման ենթարկելիս և դրանից հետո նրանց նկատմամբ բռնություն գործադրելու, մարմնական վնասվածքներ պատճառելու դեպքի առնչությամբ հարուցված քրեական գործը, որով տուժող է ճանաչվել 60 քաղաքացի: Տվյալ գործով հարցաքննվել են տարբեր ԶԼՄ-ների թվով 24 լրագրող, որից 21-ը ճանաչվել է տուժող: Հարցաքննվել են նաև ոստիկանության թվով 60 ծառայող: Նախաքննությամբ թվով 8 քաղաքացու մեղադրանք է առաջադրվել:

Նրանցից չորսին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 164-րդ (լրագրողի մասնագիտկան օրինական գործունեությանը խոչընդոտելը) և 258-րդ (խուլիգանություն) հոդվածներով: Արդյունքում, մեղադրական դատավճիռը մտել է

օրինական ուժի մեջ: Նրանցից յուրաքանչյուրի նկատմամբ նշանակվել է պատիժ՝ ազատազրկում՝ 1 տարի ժամկետով և տուգանք՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով (200,000 ՀՀ դրամ): Մեկ այլ անձին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 164-րդ (լրագրողի մասնագիտկան օրինական գործունեությանը խոչընդոտելը) հոդվածով: Մեղադրական դատավճիռը ստացել է օրինական ուժ: Նշանակվել է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով (200,000 ՀՀ դրամ):

Մեկ այլ քրեական գործի շրջանակներում, քաղաքացիներից մեկին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 164-րդ (լրագրողի մասնագիտկան օրինական գործունեությանը խոչընդոտելը) և 185-րդ (գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը) հոդվածներով, իսկ մյուսին 185-րդ հոդվածով: Նրանց վերաբերյալ մեղադրական դատավճիռը ստացել է օրինական ուժ՝ նախատեսելով առաջինի համար պատիժ՝ տուգանք՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրհիսունապատիկի (250,000 ՀՀ դրամ), իսկ մյուսի համար երկուհարյուրապատիկի չափով (200,000 ՀՀ դրամ):

Մյուս քաղաքացուն մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 164-րդ (լրագրողի մասնագիտկան օրինական գործունեությանը խոչընդոտելը) և 185-րդ (գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը) հոդվածներով: Արդյունքում մեղադրական դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ և նախատեսվել է պատիժ՝ ազատազրկում՝ 1 տարի ժամկետով, որը պայմանականորեն չի կիրառվել, ինչպես նաև տուգանք՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով (200,000 ՀՀ դրամ): Դատարանը բավարարել է սույն գործի շրջանակներում ներկայացված քաղաքացիական հայցը:

Ծառայության կողմից ներկայացրած տեղեկության համաձայն՝ քրեական գործով ոստիկանների գործողությունների իրավաչափությունը, նրանց կողմից անձանց բերման ենթարկելու հիմքերը, կիրառված հատուկ միջոցները և այլ հանգամանքները պարզելու ուղղությամբ քննչական և օպերատիվ-հետախուզական գործողությունները շարունակվում են:

Հատուկ քննչական ծառայության վարույթում գտնվող մեկ այլ քրեական գործ վերաբերում է ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից Մ. Խորենացու փողոցում և հարակից տարածքներում 2016 թվականի հուլիսի 17-ից 27-ն ընկած ժամանակահատվածում հատուկ միջոցների գործադրմամբ տարբեր անձանց մարմնական վնասվածքներ պատճառելուն, ինչպես նաև ՀՀ ոստիկանության ստորաբաժանումներ անձանց բերման ենթարկելիս և դրանից հետո նրանց նկատմամբ բռնություն գործադրելուն: Պաշտպանին տրամադրված տեղեկության համաձայն՝ տվյալ գործով քննության առարկա է հանդիսանում նաև ոստիկանության ծառայողների կողմից, իրենց պաշտոնեական դիրքն օգտագործելով, լրագրողների մասնագիտական օրինական գործունեությանը և բերման ենթարկվածներին իրավաբանական օգնություն ցույց տալու նպատակով ներկայացած փաստաբանների լիազորությունների իրականացմանը ենթադրաբար խոչընդոտելու դեպքերը:

Հաշվի առնելով հուլիսյան իրադարձությունների շրջանակում տեղի ունեցած գործողությունների հանրային մեծ հետաքրքրվածությունը և դրանց մասին հասարակության տեղեկացված լինելու կարևորությունը՝ անհրաժեշտ է ընդգծել, որ

յուրաքանչյուր պետական իրավասու մարմնի ձեռնարկած կամ ձեռնարկվելիք միջոցների մասին հանրությանը պարբերաբար և համակարգված բնույթի հրապարակային հաշվետվություն (ովքեր էին ցուցարարների ու լրագրողների նկատմամբ բռնություն գործադրած, լրագրողների մասնագիտական աշխատանքը խոչընդոտած անձինք, պատասխանատվության ինչ միջոցների կարող են նրանք ենթարկվել և այլն) ներկայացնելն ունի հիմնարար նշանակություն: Դա կարևոր է նաև հետագայում նմանօրինակ խախտումները կանխարգելելու տեսանկյունից: Ավելին, իրավապահ մարմինների կատարած կամ կատարվելիք աշխատանքների վերաբերյալ հասարակության իրազեկվածության մակարդակի պարբերական բարձրացումը կարող է դրական անդրադառնալ նաև այդ պետական մարմինների նկատմամբ հանրային վստահության տեսանկյունից:

Հասարակության համար կարևոր նշանակություն ունեցող իրադարձությունների վերաբերյալ հանրությանն իրազեկելու անհրաժեշտությունն ընդգծվում է նաև համապատասխան միջազգային պահանջներով: Մասնավորապես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Տոնսբեռգս Բլանդ Աս և Հաուկոմն ընդդեմ Նորվեգիայի գործով վճիռը վկայում է, որ նմանօրինակ դեպքերում պետության հայցողությունը սահմանափակվում է ժողովրդավար հասարակության շահերով, ապահովելու համար լրատվության՝ որպես «հասարակական դիտորդների» (“public watchdog”) դերը հասարակության լուրջ մտահոգության առարկա հանդիսացող գործերի վերաբերյալ տեղեկության տարածելու հարցում[187]:

Հասարակության հետաքրքրության առարկա հանդիսացող և հանրային հնչեղություն ունեցող դեպքերի առկայության դեպքում դրանց վերաբերյալ քրեական վարույթների ընթացքի մասին հանրության տեղեկացված լինելու անհրաժեշտության մասին ամրագրված է նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի տարբեր հանձնարարականներում: Այսպես, «Տեղեկության աղբյուրը չբացահայտելու լրագրողների իրավունքի մասին» 2000 թվականի մարտի 8-ի թիվ No. R (2000) 7 հանձնարարականով ընդունվում է, որ լրագրության ազատ և անխոչընդոտ իրականացումը սահմանված է արտահայտվելու ազատության իրավունքի մեջ և հիմնարար նախապայման է մտահոգության առարկա հանդիսացող հարցերի վերաբերյալ հանրության իրազեկվածությունն ապահովելու համար[188]:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Մամուլի միջոցով քրեական վարույթին վերաբերող տեղեկությունների տրամադրման վերաբերյալ» 2003 թվականի հուլիսի 10-ի թիվ Rec(2003)13 հանձնարարականի հիմնական սկզբունքների մեջ առանձնացվում է հանրային հնչեղություն ունեցող քրեական վարույթների վերաբերյալ հասարակության իրազեկվածությունը և դրա ապահովման տեսանկյունից զանգվածային լրատվության միջոցների կարևորությունը: Մասնավորապես, հանձնարարականի 5-րդ սկզբունքի համաձայն՝ «Ընդգծվում է զանգվածային լրատվության միջոցների կողմից արձանագրման կարևորությունը՝ հանրությանը քրեական վարույթի ընթացքի վերաբերյալ

[187] Տե՛ս Տոնսբեռգս Բլանդ Աս և Հաուկոմն ընդդեմ Նորվեգիայի (TØNSBERGS BLAD AS AND HAUKOM v. NORWAY) գործով 2007 թվականի մարտի 1-ի վճիռը, գանգատ թիվ 510/04, կետեր 82:

[188] Տե՛ս Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ Տեղեկության աղբյուրը չբացահայտելու լրագրողների իրավունքի մասին 2000 թվականի մարտի 8-ի թիվ No. R (2000) 7 հանձնարարականը, https://rm.coe.int/16805e2c13:

տեղեկություններ հաղորդելու, քրեական օրենքի կանխարգելիչ նշանակության տեսանելիության, ինչպես նաև քրեական արդարադատության համակարգի նկատմամբ հասարակական վերահսկողությունն ապահովելու տեսանկյունից:»[189]:

Ավելին, նույն հանձնարարականի հավելվածով սահմանված 6-րդ սկզբունքով ամրագրվում է քրական վարույթի ընթացքի վերաբերյալ պարբերաբար տեղեկություններ հաղորդելու անհրաժեշտությունը: Դրանում, մասնավորապես, նշվում է, որ «Հանրային հնչեղություն ունեցող քրեական վարույթի կամ այնպիսի քրեական վարույթի համատեքստում, որի վերաբերյալ առկա է հասարակության հատուկ ուշադրություն, դատական իշխանությունները և ոստիկանության ծառայությունները պետք է տեղեկացնեն զանգվածային լրատվության միջոցներին իրենց հիմնական գործողությունների մասին, քանի դեռ սա չի վնասում քննության գաղտնիությունը և խոչընդոտում ոստիկանության կողմից իրականացվող հետաքննությունը կամ նպաստում վարույթի արդյունքների ապահովմանը: Այն քրեական վարույթների ընթացքում, որոնք շարունակվում են տևական ժամանակ, այս տեղեկությունը պետք է տրամադրվի պարբերաբար:»[190]:

Մեջբերված կարգավորումները վկայում են, որ կոնկրետ դեպքերի, դրանց վերաբերյալ քրեական վարույթի կամ հանրային հնչեղություն ունեցող այլ իրավիճակների մասով պետական իրավասու մարմինների կողմից ձեռնարկվող կամ ձեռնարկվելիք քայլերի մասին հասարակությունը պետք է պարբերաբար իրազեկվի: Ավելին, նույն ձևակերպումներից ակնհայտ է դառնում, որ այդ քայլերի վերաբերյալ հասարակությանը տեղեկացնելու ամենահիմնական ճանապարհը լրատվության միջոցներն են: Ինչպես նշվեց, դա ունի մի քանի հիմնարար նպատակ, որոնցից են՝ հետագա նմանօրինակ դեպքերի կանխարգելումը, իրավապահ մարմինների նկատմամբ վստահության ապահովումը, ինչպես նաև գործնական համապատասխան օրենսդրական կարգավորումների կիրառության վերաբերյալ տեղեկության տրամադրումը: Հենց դրանով է պայմանավորված զանգվածային լրատվության միջոցների բարձր դերակատարությունը նմանօրինակ դեպքերում: Հետևաբար, այդ իրավիճակներում իրավասու պետական մարմինները չպետք է խոչընդոտեն լրատվական գործունեություն իրականացնող անձանց իրականացնել իրենց օրինական գործողությունները, առավել ևս, նրանց նկատմամբ բռնություն գործադրելու միջոցով:

Հաշվի առնելով հասարակության շրջանում հուլիսյան իրադարձությունների վերաբերյալ հետաքրքրվածության աստիճանը՝ դրանք, իհարկե, հանրային նշանակություն ունեցող են՝ որքան էլ դրանցից յուրաքանչյուրն իր հերթին բաղկացած է տարբեր դրվագներից: Հետևաբար, անհրաժեշտ է պարբերաբար և համակարգված ապահովել իրավասու պետական մարմինների կողմից կատարված և կատարվելիք գործողությունների վերաբերյալ հասարակության իրազեկվածությունը և ստեղծել նպաստավոր պայմաններ այդ ուղղությամբ լրագրողների անխոչընդոտ աշխատանքի համար:

---

[189] Տե՛ս Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ Մամուլի միջոցով քրեական վարույթին վերաբերող տեղեկությունների տրամադրման վերաբերյալ թիվ (2003)13 հանձնարարականը, սկզբունք 5, https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectId=09000016805df617

[190] Տե՛ս Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ Մամուլի միջոցով քրեական վարույթին վերաբերող տեղեկությունների տրամադրման վերաբերյալ թիվ (2003)13 հանձնարարականի հավելված, սկզբունք 6, https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectId=09000016805df617

Հուլիսյան իրադարձությունների քննարկման համատեքստում անհրաժեշտ է անդրադարձ կատարել մեկ այլ հանրային նշանակության գործի, որը կապված է 2017 թվականի հունիսի 28-ին Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վարչական շենքում Ոստիկանության ծառայողների կողմից ամբաստանյալների ծեծի ենթարկելու տեղեկությունների առնչությամբ հարուցված քրեական գործի քննությանը:

Այսպես, 2017 թվականի հունիսի 28-ին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի թեժ գծին կատարված զանգի միջոցով փաստաբաններ Արա Ղարագյոզյանը և Արայիկ Պապիկյանը տեղեկություն են տրամադրել այն մասին, որ Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վարչական շենքի նկուղում՝ խցերի մոտակայքում Ոստիկանության ծառայողները բռնություն են գործադրում Արայիկ Խանդոյանի, Արեգ Կյուրեղյանի, Մխիթար Ավետիսյանի, Սմբատ Բարսեղյանի և Գագիկ Եղիազարյանի նկատմամբ: Հետագայում այս մասին եղել են նաև հրապարակային հայտարարություններ:

Նշված անձանց հանդիպելու նպատակով՝ գիշերով Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներն այցելել են ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն», «Վարդաշեն» և «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկներ: Այցերի ընթացքում տեղի են ունեցել առանձնազրույցներ: Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների կողմից իրականացվել է նշված անձանց մարմնի արտաքին զննություն, ուսումնասիրվել և արձանագրվել են նաև նրանց մարմնական զննության ենթարկելու վերաբերյալ քրեակատարողական հիմնարկում առկա արձանագրությունները: Ավելին, վերը նշված անձանց, նրանց վերաբերյալ բժշկական փաստաթղթերը ենթարկվել են մանրամասն ուսումնասիրության:

Առանձնազրույցների ընթացքում նշված կալանավորված անձինք տեղեկացրել են, որ ֆիզիկական ուժի կիրառման հետքերը Ոստիկանության ծառայողների կողմից գործադրված բռնությունների հետևանք են:

Հավաքագրված նյութերի և տեղեկությունների հիման վրա 2017 թվականի հունիսի 29-ին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից սկսվել է քննարկման ընթացակարգ՝ սեփական նախաձեռնությամբ: Պաշտպանի իրավասության սահմաններում ձեռք բերված բոլոր տվյալները, բժշկական մանրամասն նկարագրությամբ, սահմանված կարգով ամփոփվել և ուղարկվել են ՀՀ դատախազություն՝ քրեական վարույթի շրջանակներում դրանք ստուգելու և անհրաժեշտ իրավական գնահատական տալու հարցը լուծելու նպատակով: Համապատասխան գրություն է ուղարկվել նաև ՀՀ ոստիկանություն՝ իրավասության շրջանակներում տեղեկությունը ստուգել նպատակով:

Այս ամենը ներկայացվել է նաև հրապարակային հաղորդագրությամբ: Դրանից բացի, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը նույն օրը հանդես է եկել քրեական վարույթ անհապաղ նախաձեռնելու անհրաժեշտության վերաբերյալ հրապարակային հայտարարությամբ, որում ասվում է՝ «Նշված բոլոր տեղեկությունները պարունակում են հանցագործության առերևույթ հատկանիշներ, որոնց հիման վրա պետք է անհապաղ նախաձեռնվի քրեական դատավարության օրենսրքով նախատեսված ընթացակարգ:»[191]:

[191] Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաղորդագրությունը «Հայտարարություն քրեական վարույթ անհապաղ նախաձեռնելու անհրաժեշտության վերաբերյալ», http://www.ombuds.am/media/statement-on-the-necessity.html:

Հետագայում, սեփական նախաձեռնությամբ քննարկման ընթացակարգի շրջանակներում, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից Դատախազությունից, Հատուկ քննչական ծառայությունից և Ոստիկանությունից պարբերաբար տեղեկություններ են պահանջել նշված դեպքի առնչությամբ նրանցից յուրաքանչյուր կողմից իրենց իրավասությունների շրջանակներում ձեռնարկված միջոցների մասին:

ՀՀ գլխավոր դատախազության կողմից Պաշտպանին ներկայացված տեղեկության համաձայն՝ պաշտոնատար անձանց կողմից բռնություն գործադրելով զուգորդված պաշտոնեական լիազորություններն անցնելու ենթադրաբար տեղի ունեցած վերոնշված դեպքի առթիվ 2017 թվականի հուլիսի 3-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել է քրեական գործ: Նախաքննության ընթացքում Արեգ Կյուրեղյանը, Սմբատ Բարսեղյանը, Արայիկ Խանդոյանը, Մխիթար Ավետիսյանը և Գագիկ Եղիազարյանը ճանաչվել են տուժող: Արեգ Կյուրեղյանն ու Մխիթար Ավետիսյանը հրաժարվել են ցուցմունք տալ, իսկ Սմբատ Բարսեղյանը, Արայիկ Խանդոյանն ու Գագիկ Եղիազարյանը հարցաքննվել են և դեպքի վերաբերյալ տվել ցուցմունքներ:

Տրամադրված տեղեկության համաձայն՝ Ա. Խանդոյանի, Ա. Կյուրեղյանի, Գ. Եղիազարյանի, Մ. Ավետիսյանի և Ս. Բարսեղյանի մարմնական վնասվածքների հետ կապված մի շարք հարցերի պարզաբանման նպատակով նշանակվել են դատաբժշկական փորձաքննություններ: Քննությամբ պարզվել և հարցաքննվել են ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ուղեկցող գումարտակի այն ծառայողները, ովքեր միջադեպի օրը ծառայություն են իրականացրել դատարանի շենքում, այդ թվում՝ այն ոստիկանները, ովքեր ծառայություն են իրականացրել անմիջապես կալանավորված անձանց համար նախատեսված խցերի հարկաբաժնում: Հարցաքննվել են նաև 2017 թվականի հունիսի 28-ին Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատական նիստերի թիվ 1 դահլիճում ծառայություն իրականացրած դատական կարգադրիչները: Գործով տուժող է ճանաչվել 5 անձ՝ Արայիկ Խանդոյանը, Գագիկ Եղիազարյանը, Սմբատ Բարսեղյանը, Մխիթար Ավետիսյանը և Արեգ Կյուրեղյանը, քրեական գործով նախաքննությունն ընթացքի մեջ է:

Նշված իրադարձությունների կապակցությամբ անհրաժեշտ է ընդգծել, որ հենց դատարանի շենքում բռնության ենթարկվելու վերաբերյալ տեղեկությունները մտահոգիչ են այն առումով, որ հանրային ընկալման տեսանկյունից կարող են բացասական ազդեցություն ունենալ, հատկապես դատարանների՝ որպես արդարադատություն իրականացնող մարմնի նկատմամբ: Նմանօրինակ քայլերը կարող են բացասաբար անդրադառնալ քրեական արդարադատության համակարգի նկատմամբ հասարակության վստահության տեսանկյունից նաև այն պատճառով, որ հարուցված քրեական գործերով տուժող ճանաչված անձինք եղել են պետության պատասխանատու հսկողության տակ:

Ուստի, հետագայում նման դեպքերը բացառելու և դրանց վերաբերյալ բացասական հանրային ընկալումը թուլ չտալու նպատակով՝ պետք է ապահովվի պետության պատշաճ քրեաիրավական արձագանքը, հանրային պատշաճ իրազեկումը գործի քննության ընթացքի մասին, ինչպես նաև հնարավոր սեղմ ժամկետում քննության իրականացումը:

Հանրային վստահության հատուկ բաղադրիչ ունեցող պետք է համարել նաև հանրային ճանաչում ունեցող՝ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի

գրասենյակի ղեկավար Արթուր Սաքունցի նկատմամբ սպառնալիքների առնչությամբ գործի քննությունը:

Մասնավորապես, 2017 թվականի հունիսի 6-ին Ա.Սաքունցը տեղեկություններ էր հրապարակել իրեն կյանքից զրկելու սպառնալիքների վերաբերյալ[192]: Հրապարակված տեղեկությունների համաձայն՝ «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի էջում կատարած գրառման կապակցությամբ ցանցի մեկ այլ օգտատեր մեկնաբանություն է տեղադրել դիմահար կրակոցով Ա.Սաքունցին կյանքից զրկելու վերաբերյալ:

Նշված հրապարակումների հիման վրա՝ հաշվի առնելով իրավապաշտպան գործունեության հանրային նշանակությունն ու նման ցանկացած դեպքի անթույլատրելիությունը՝ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից սեփական նախաձեռնությամբ սկսվել է քննարկման ընթացակարգ: Պաշտպանի կողմից անձամբ հարցը քննարկվել է Ա.Սաքունցի հետ:

Կատարված ուսումնասիրության արդյունքներով Պաշտպանը նույնպես անմիջապես դիմել է ՀՀ գլխավոր դատախազին՝ առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակող վերոնշյալ դեպքերով վարույթ նախաձեռնելու խնդրով: Հարուցված քրեական գործով իրավապաշտպանը ճանաչվել է տուժող: Դրանից հետո, Ա.Սաքունցը Պաշտպանին է ներկայացրել մտահոգություններ՝ կապված քրեական գործի դանդաղ ընթացքի, ինչպես նաև գործի շրջանակներում քննչական գործողությունների հարցի հետ:

Հետագայում Պաշտպանին տրամադրած պարզաբանումների համաձայն՝ քրեական գործի վարույթը կասեցվել է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձը հայտնի չլինելու հիմքով:

Մեղավորների քրեական պատասխանատվության անխուսափելիությունն ապահովելու և հետագայում այդպիսի ոտնձգությունները կանխարգելելու պահանջը ենթադրում է, որ իրավասու մարմինների կողմից պետք է ձեռնարկվեն օրենքով նախատեսված բոլոր միջոցները՝ դեպքի հանգամանքները պարզելու և ոտնձգություն կատարած անձանց հայտնաբերելու ուղղությամբ:

17. 2008 թվականի մարտի 1-ի 10 զոհերի մահվան վերաբերյալ քրեական գործերի քննությունը

2008 թվականի մարտի 1-ի տասը զոհերի մահվան փաստով կատարվող նախաքննության և դրա վերաբերյալ հասարակության իրազեկվածությանն առնչող հարցին անդրադարձ է կատարվել Մարդու իրավունքների պաշտպանի 2011, 2012, 2013, 2014, 2015 և 2016 թվականների տարեկան հաղորդումներում: Նշվածի կապակցությամբ բազմիցս իրենց մտահոգությունն ու դժգոհությունն են հայտնել մարտի 1-ի 10 զոհերի ընտանիքների անդամները, հարազատները, տարբեր քաղաքական գործիչներ, քաղաքացիական հասարակությունը, ինչպես նաև միջազգային կառույցները: Հաշվի առնելով 2008 թվականի մարտի 1-ին առնչվող իրադարձությունների հանրային լայն հնչեղությունը՝ Պաշտպանը հարկ է համարում քննարկել հարուցված քրեական գործերի բացահայտմանն ուղղված իրավասու մարմնի կողմից ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ հասարակության իրազեկվածության մակարդակը, ինչպես նաև ներկայացնել

[192]Տե՛ս մամուլի հրապարակումները՝ http://www.armtimes.com/hy/article/114198, http://www.1in.am/2153667.html

և քննարկել ձեռնարկված քայլերի մասին Մարդու իրավունքների պաշտպանին տրամադրված տեղեկությունները՝ չխախտելով նախաքննության գաղտնիության սկզբունքը:

Այսպես, 2008 թվականի մարտի 1-ի 10 զոհերի մահվան վերաբերյալ քրեական գործերի քննության ընթացքի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանին նորից տեղեկություն է տրամադրվել Հատուկ քննչական ծառայության կողմից: Դրա համաձայն՝ 2008 թվականի մարտի 1-ին և 2-ին տեղի ունեցած դեպքերի վերաբերյալ քննվող քրեական գործից 10 անձի մահվան և 3 անձի մարմնական վնասվածքներ ստանալու փաստերով 10 առանձին վարույթներ են անջատվել, որոնցից յուրաքանչյուրով նախաքննությունը շարունակվում է: Տրամադրած տեղեկության համաձայն՝ ձեռնարկվում են քննչական գործողություններ, օպերատիվ-հետախուզական միջոցառումներ՝ հանցագործություն կատարած անձանց բացահայտելու, հայտնաբերելու և պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

Հատուկ քննչական ծառայության կողմից Մարդու իրավունքների պաշտպանին տրամադրված տեղեկությունների համաձայն՝ 2008 թվականի մարտի 1-ին և 2-ին տեղի ունեցած դեպքերի վերաբերյալ քննվող քրեական գործից 10 անձի մահվան և 3 անձի մարմնական վնասվածքներ ստանալու փաստով 10 առանձին գործեր են անջատվել, որոնցից յուրաքանչյուրով նախաքննությունը շարունակվում է, կատարվում են համապատասխան քննչական գործողություններ: Մասնավորապես, տրամադրված տեղեկության համաձայն՝ բոլոր գործերով հարցաքննվել են շուրջ 200 անձինք, տրվել են հանձնարարություններ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու ուղղությամբ, կատարվել են հարցումներ:»:

Հատուկ քննչական ծառայության ներկայացրած տեղեկությունները վկայում են, որ թեև Ծառայությունն իրականացրել է դատավարական որոշակի գործողություններ, այդուհանդերձ քննարկվող քրեական գործերի քննության շրջանակներում 2017 թվականի ընթացքում կրկին չի ապահովվել ձեռնարկված քայլերի վերաբերյալ հանրային իրազեկվածության պատշաճ մակարդակ:

Հետևաբար, անհրաժեշտ է ապահովել 2008 թվականի մարտի 1-ի 10 զոհերի մահվան վերաբերյալ քրեական գործերի քննության շրջանակներում Հատուկ քննչական ծառայության կողմից իրականացված գործողությունների վերաբերյալ զոհերի հարազատների և հանրության պատշաճ իրազեկում: Մեղմ ժամկետներում՝ արագացման սկզբունքով ապահովել հարուցված քրեական գործերի լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննությունը:

ԲԱԺԻՆ 9. ԱՅԼ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

1. Աղմուկի հետևանքով հարակից տարածքների բնակչությանն անհանգստություն պատճառելը

2017 թվականի ընթացքում շարունակվել են բողոքներ ստացվել երեկոյան և գիշերային ժամերին պարի ստուդիաների, գիշերային ակումբների, զվարճանքի այլ վայրերում ստեղծված աղմուկի հետևանքով հարակից տարածքների բնակչությանն անհանգստություն պատճառելու խնդրի վերաբերյալ:

Թեև ներպետական օրենսդրությամբ հանգստի իրավունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրության «Աշխատանքային պայմանները» վերտառությամբ 82-րդ հոդվածով, այնուամենայնիվ, ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններում նշվում է, որ մարդու հանգստի իրավունքն ավելի լայն բովանդակություն ունի. այն ոչ թե աշխատանքային ոլորտի կամ աշխատանքի իրավունքին հարակից իրավունք է, այլ սոցիալական իրավունք է, քանի որ ապահովում է հասարակության ու նրա անդամների սոցիալ-կենսաբանական, բնական պահանջմունքները:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային որոշումներից մեկում նշել է, որ թեև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան ուղղակիորեն չի նախատեսում խաղաղ շրջակա միջավայր ունենալու իրավունքը, այնուամենայնիվ, այն դեպքերում, երբ աղմուկը լուրջ ներգործություն է ունենում անհատի վրա, կարող է առաջանալ Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի խախտման վտանգ[193]:

Պաշտպանին ուղղված բողոքներից մեկով անձը հայտնել է, որ բազմաբնակարան շենքի նկուղում՝ անմիջապես իրենց բնակարանի ներքևի հարկում, գործում է պարի ստուդիա, որտեղ պարի դասընթացներն ընթանում են բարձր երաժշտության ներքո, ինչն էլ անհանգստություն է պատճառում իրեն և ընտանիքի անդամներին: ՀՀ առողջապահության նախարարությունից ստացված պարզաբանումների համաձայն՝ ՀՀ ԱՆ Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձագետների կողմից պարի ստուդիայում ստուգումներ են իրականացվել, ինչի արդյունքում արձանագրվել է, որ ստուդիայից հնչող աղմուկը գերազանցել է ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի մարտի 6-ի թիվ 138 հրամանով հաստատված Աղմուկն աշխատատեղում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» թիվ 2-III-11.3 սանիտարական նորմերի պահանջները: Ստուդիայի սեփականատերը ենթարկվել է վարչական պատասխանատվության, որից հետո քաղաքացու տեղեկացմամբ՝ պարի ստուդիայից հնչող աղմուկը նվազել է:

Պաշտպանին հասցեագրված մեկ այլ դիմումի քննությունից պարզ է դարձել, որ գիշերային ակումբներից մեկի հարակից տարածքի բնակիչները դժգոհել են գիշերային ժամերին ակումբից հնչող բարձր երաժշտությունից և աղմուկից: ՀՀ առողջապահության նախարարությունից ստացված պարզաբանումների համաձայն՝ նշված գիշերային

[193] Տե՛ս Օլուիցն ընդդեմ Խորվաթիայի (Oluic v. Croatia) գործով 2010 թվականի մայիսի 20-ի վճիռը, գանգատ թիվ 61260/08, կետ 45:

ակումբում ՀՀ ԱՆ առողջապահական պետական տեսչության փորձագետների կողմից իրականացվել են համապատասխան ստուգումներ, որից հետո՝ բնակիչների հաղորդմամբ՝ գիշերային ակումբից հնչող աղմուկը դադարել է:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. պարբերաբար ստուգումներ անցկացնել գիշերային ակումբներում, պարի ստուդիաներում և զվարճանքի այն վայրերում, որտեղից հնչող աղմուկի մակարդակը ողջամտորեն կարող է գերազանցել ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի մարտի 6-ի թիվ 138 հրամանով հաստատված «Աղմուկն աշխատատեղում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» թիվ 2-III-11.3 սանիտարական նորմերի պահանջները,

2. հետևողական լինել նշված նորմերի պահպանման նկատմամբ:

2. Ճանապարհների անբարեկարգությունը

2017 թվականին ներքաղաքային և մարզային նշանակության ճանապարհների անբարեկարգ վիճակը և դրա արդյունքում՝ մի շարք դեպքերում ազատ տեղաշարժման, ինչպես նաև բեռնափոխադրումների կազմակերպման առումով ստեղծված դժվարությունները շարունակել են մնալ խնդրահարույց:

Մասնավորապես, 2017 թվականին Տավուշի մարզի բնակիչները փակել էին մարզկենտրոն Իջևանով անցնող Մ4 միջպետական ճանապարհը: Ակցիայի մասնակիցները բողոքում էին ճանապարհի անբարեկարգ վիճակից՝ պնդելով, որ փոսառատ ճանապարհի պատճառով մեքենաներին պատճառվում են վնասներ[194]: Մեկ այլ դեպքում՝ Վայոց ձորի մարզի Հերհեր գյուղի բնակիչների կողմից բարձրացվել է դեպի գյուղ տանող ճանապարհի դժվարանցանելի և անբարեկարգ լինելու հարցը: Գյուղի բնակիչների պնդմամբ՝ ճանապարհի անբարեկարգության պատճառով գյուղի բազմաթիվ բնակիչներ ունենում են տեղաշարժի խնդիր, քանի որ տաքսի ծառայություն մատուցող մեքենաները հրաժարվում են սպասարկել՝ մատնանշելով ճանապարհային ոչ բարվոք վիճակը: Գյուղի բնակիչների հավաստմամբ՝ ճանապարհի բացակայությունը բացասաբար է անդրադառնում նաև տուրիզմի զարգացման վրա[195]:

Վերոնշյալի արդյունքում կարող ենք փաստել, որ ճանապարհների անբարեկարգությունը ուղիղ համեմատական է տրանսպորտի առկայության հարցի հետ: Ինչպես նշվեց վերևում, օրինակ՝ տաքսի ծառայություն մատուցողները հրաժարվում են երթևեկել դժվարանցանելի ճանապարհներով: Տվյալ դեպքում հիշատակման է արժանի Շիրակի մարզի մոտ 500 բնակիչ ունեցող Նոր Ախուրյան թաղամասի դեպքը: Այսպես, Նոր Ախուրյանի երթուղին շահագործած կազմակերպությունը անբարեկարգ ճանապարհների պատճառով պայմանագրի ժամկետի ավարտից հետո հրաժարվել է մասնակցել մրցույթներին, իսկ տաքսի ծառայություն մատուցողները ճանապարհների վատ վիճակի պատճառով ծառայությունից օգտվողներից գանձում են ավելի շատ գումար[196]: Նույն

[194] https://www.azatutyun.am/a/28478712.html , http://hetq.am/arm/news/78584/ijevancinery-pakel-en-mijpetakan-tchanaparhy-lracvox.html
[195] https://www.azatutyun.am/a/28886101.html
[196] https://hetq.am/arm/news/83001/21-tari-xekavarox-hamaynqapety-chi-karoxanum-lutsel-nor-akhuryan-taxamasi-tariner-dzgvox-khndirnery.html

պատկերը նաև Արագածոտնի մարզի Լեռնարոտ գյուղում է, որտեղ ևս վատ ճանապարհները պատճառ են հանրային տրանսպորտի բացակայության համար[197]:

2017 թվականին տեղեկություններ հրապարակվեցին այն մասին, որ Վանաձորի մի շարք երթուղային տաքսիների վարորդներ գործադուլ են հայտարարել՝ բողոքելով ճանապարհների վատ վիճակից: Մասնավորապես, վարորդները, պնդելով Վանաձորի բոլոր փողոցների անբարեկարգ լինելու հանգամանքը, միաժամանակ բարձրաձայնում էին դրա պատճառով ավտոմեքենաներին պատճառվող վնասների մասին[198]: Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի բնակիչները բարձրացրել են «Սոճուտ» դենդրոայգի տանող ճանապարհի ոչ բարվոք լինելու խնդիրը[199]:

Միևնույն ժամանակ հարկ է նշել նաև, որ խնդիրների լուծման ուղղությամբ 2017 թվականին շարունակվել են ձեռնարկվել քայլեր: Այսպես, Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական (Մ-6) ճանապարհի շուրջ 90 կմ երկարությամբ հիմնական տարանցիկ մայրուղու հիմնանորոգման և վերակառուցման ծրագրի շրջանակներում 2017 թվականին ընթացել են Ալավերդի–Վանաձոր միջպետական ճանապարհի Ձորագետ–Փամբակ ճանապարհահատվածում գտնվող երեք թունելների հիմնանորոգման և վերակառուցման աշխատանքները[200]: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է Վանաձոր քաղաքի տարածքում հիմնանորոգել 6.7 կմ, Վանաձոր-Ալավերդի հատվածում՝ մոտ 43.9 կմ, Ալավերդի քաղաքի տարածքում՝ 3.4 կմ, Ալավերդի-Վրաստանի սահման հատվածում՝ մոտ 36.3 կմ ճանապարհ: Սակայն ըստ առկա տվյալների՝ շինարարական աշխատանքների արդյունքում առաջ է եկել մեկ այլ խնդիր: Այսպես, վերակառուցման ընթացքում տրանսպորտային միջոցները Ալավերդուց Վանաձոր են մեկնում Ալավերդի-Օձուն-Ստեփանավան ճանապարհով: Վերջինս ժամանակային առումով երկարացնում է ճանապարհը: Օգտվելով դրանից՝ Ալավերդի-Ստեփանավան-Վանաձոր ճանապարհով երթևեկելիս և երթուղային տաքսիների և ավտոբուսի վարորդներն ուղևորներից նախկինում սահմանված գումարի փոխարեն պահանջում են ավելի բարձր ճանապարհավարձ[201]:

Վերոնշյալ փաստերի և տեղեկությունների ուսումնասիրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ չնայած կատարած աշխատանքների՝ այնուամենայնիվ, համակարգային առումով 2017 թվականին ճանապարհների անբարեկարգ վիճակի խնդիրը մնացել է չլուծված:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ավելացնել ներքաղաքային և մարզային նշանակություն ունեցող ճանապարհների բարեկարգման համար ֆինանսավորումը:

3.Տրանսպորտի գերբեռնվածությունը, սպասարկման որակ

Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցներում և հաղորդմամբ տարիներ շարունակ բարձրաձայնվել է հանրային տրանսպորտի գերծանրաբեռնվածության, տրանսպորտի սպասարկման որակի և այլ խնդիրների վերաբերյալ: Հասարակական տրանսպորտի սպասարկման ընդհանուր որակի

---

197 http://hetq.am/arm/news/84180/ereq-tari-aranc-ertuxayin-transporti-lernarot-gyuxi-bnakichnery-dzhvarutyamb-en-ashtarak-kam-erevan-hasnum.html

198 http://www.aravot.am/2017/05/31/889153/

199 https://www.youtube.com/watch?v=Rh_xr_z4P0U

200 http://hetq.am/arm/news/76604/mijpetakan-tchanaparhi-vtangavor-tuneli-verakarucman-ashkhatanqery-motenum-en-avartin.html

201 http://hetq.am/arm/news/76604/mijpetakan-tchanaparhi-vtangavor-tuneli-verakarucman-ashkhatanqery-motenum-en-avartin.html

անբավարարության խնդիրները 2017 թվականին շարունակվում են պահպանվել և՛ Երևան քաղաքում, և՛ մարզերում:

Այսպես, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից ստացված տվյալների համաձայն՝ 2017 թվականին միջմարզային երթուղիներում շահագործվող տրանսպորտային միջոցների թվաքանակի էական փոփոխություն տեղի չի ունեցել: 2017 թվականի ընթացքում՝ 2016 թվականի համեմատությամբ, միջմարզային երթուղային ցանցում տրանսպորտային միջոցներ չեն ավելացել, սակայն ձևավորվել են 2 միջմարզային երթուղիներ՝ Երևան-Զվարթնոց օդանավակայան՝ 3 տրանսպորտային միջոցներով, և Երևան-Արաքս՝ 2 տրանսպորտային միջոցներով: Ըստ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության տվյալների՝ 2017 թվականի ընթացքում ուղևորահոսքի էական փոփոխություն տեղի չի ունեցել, ավելին՝ 2017 թվականի միջմարզային երթուղիներում նորացվել են 30 տրանսպորտային միջոցներ:

Պետք է նշել, սակայն, որ չնայած այս պարզաբանմանը՝ քաղաքացիները շարունակում են ահազանգել խնդիրների առկայության մասին: Ավելին՝ ինչպես նախորդ տարիների, այնպես 2017 թվականի ընթացքում, քաղաքացիների կողմից բազմիցս արտահայտվել են դժգոհություններ Երևանի հասարակական տրանսպորտի, հատկապես՝ ավտոբուսների ու միկրոավտոբուսների ոչ պատշաճ աշխատանքի վերաբերյալ: Ըստ Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված տեղեկությունների՝ 2017 թվականի ընթացքում քաղաքացիների կողմից գրավոր և քաղաքապետարանի «թեժ գծի» հեռախոսահամարով ստացված բանավոր դիմումներով ստացվել է հասարակական տրանսպորտի աշխատանքի վերաբերյալ 317 բողոք: Բողոքները հիմնականում վերաբերել են ավտոբուսների և միկրոավտոբուսների շարժման մեծ միջակայքերին, վարորդների կողմից ուղեսրահում ծխելու, հեռախոսով խոսելու ուղևորների նկատմամբ ոչ պատշաճ վերաբերմունքի դեպքերին, ինչպես նաև շաբաթ և կիրակի օրերին, երեկոյան ժամերին որոշ թաղամասերում ոչ բավարար սպասարկմանը:

Առկա են նաև մի շարք համայնքներ, որտեղ տրանսպորտի բացակայությունը գործնական բազմաթիվ խնդիրների կարող է հանգեցնել այդ համայնքների բնակիչների համար (օրինակ՝ կրթական և առողջապահական հաստատությունների մատչելիության տեսանկյունից): Այսպես, Տարածքային կառավարման և զարգացման նախարարությունից ստացված տեղեկությունների ուսումնասիրությամբ վեր են հանվել խնդիրներ՝ կապված հանրային տրանսպորտի բացակայության հետ: Որպես օրինակ, հարկ է նշել, որ Սյունիքի մարզի 105 բնակավայրում հանրային տրանսպորտ չի գործում: Հանրային տրանսպորտ չի գործում նաև, օրինակ՝ Արագածոտնի մարզի 22 համայնքում (39 բնակավայր), Լոռու մարզի 6 համայնքում և այլն, իսկ Տավուշի մարզի 24 բնակավայրում կանոնավոր ռեժիմով գործող հանրային տրանսպորտի բացակայության խնդիրը կարգավորվում է մասնավոր հիմունքներով գործող տրանսպորտային միջոցների հաշվին:

Միևնույն ժամանակ հարկ է նշել նաև, որ 2017 թվականի ընթացքում ոլորտում առկա են եղել մի շարք դրական տեղաշարժեր: Այսպես, օրինակ, ըստ Տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության՝ 2017 թվականի սկզբին Շիրակի մարզի 3 համայնքում (21 բնակավայր), որտեղ հասարակական տրանսպորտ չի գործել ՀՀ Շիրակի մարզպետարանի կողմից բացվել են

նոր ներմարզային կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղիներ՝ ներգրավելով հասարակական տրանսպորտով չսպասարկվող բնակավայրերը: Արդյունքում, տարեվերջին հասարակական տրանսպորտով չսպասարկվող համայնքների թիվը նվազել է՝ հասնելով մեկի՝ Արփի համայնք (9 բնակավայր):

Սակայն այս ամենի հետ մեկտեղ ակնհայտ է, որ դեռևս բազմաթիվ բնակավայրերում առկա չէ հասարակական տրանսպորտի հասանելիություն, և խնդիրը կրում է համակարգային բնույթ հատկապես մարզերում և մարզային համայնքներում:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք՝

1. բարձրացնել հասարակական տրանսպորտի սպասարկման որակը՝ սահմանելով վերահսկողության մեխանիզմներ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների մատուցած ծառայությունների որակի նկատմամբ,

2. ավելացնել միջհամայնքային հանրային տրանսպորտային միջոցների քանակը, ինչպես նաև ապահովել տրանսպորտի առկայությունը մարզային բոլոր համայնքներում:

4. Հայցի ապահովման միջոցի հետ կապված օրենսդրական խնդիր

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն իր տարեկան զեկույցներում բազմիցս բարձրացրել է օրենսդրական թերի կարգավորումների արդյունքում որոշ դեպքերում հայցի ապահովման միջնորդություն դատարան ներկայացնելիս պարտապանի՝ այլևս գույք չունենալու պատճառով անձի գույքի և (կամ) դրամական միջոցների վրա արգելանք տարածելու անհնարինության հարցը:

Այսպես, քաղաքացիական գործի քննության ընթացքում պարտատերը հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությամբ հանդես գալու իրավունք ունի: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությամբ սահմանվում է, որ դատարանը, գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ, միջոցներ է ձեռնարկում հայցի ապահովման համար, եթե նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը կամ հանգեցնել վեճի առարկա հանդիսացող գույքի վիճակի վատթարացմանը: Միաժամանակ, գործին մասնակցող անձի միջնորդությամբ դատարանն իրավունք ունի հայցի ապահովման մեկ միջոցը փոխարինել մեկ այլ միջոցով կամ ձևափոխել այն[202]: Հարկ է նշել նաև, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ հայցի ապահովումը նույնպես վերացնում է դատարանը: Միաժամանակ, հայցը բավարարելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի կատարումը[203]:

Հայցի ապահովման միջոցի միջնորդությունը դատարանի կողմից բավարարվելու պարագայում, հայցի ապահովման մասին դատարանի որոշումը կատարվում է անհապաղ՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով

[202] ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, հոդված 100:
[203] ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, հոդված 101:

սահմանված կարգով[204], և կատարողական թերթը փոխանցվում է ՀՀ արդարադատության նախարարության Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություն, ինչի հիման վրա էլ պարտապանի գույքի վրա արգելանք է տարածվում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 44.3-րդ հոդվածի 12-րդ մասի համաձայն՝ պարտապանի անվամբ բացված բանկային կամ ավանդային հաշվում առկա դրամական միջոցների վրա հայցագնի չափով արգելանք դրվելու կամ հարկադիր կատարման դեպոզիտ հաշվին հայցագնի չափով պարտապանի կողմից գումար մուծված լինելու դեպքում հարկադիր կատարողը որոշում է կայացնում նախկինում արգելադրված գույքն արգելանքից հանելու և կատարողական վարույթն ավարտելու մասին: Միևնույն ժամանակ հիմք ընդունելով վերոգրյալը և առաջնորդվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով՝ գույքի և դրամական միջոցների վրա դրված արգելանքը հարկադիր կատարողի կողմից վերացվում է, իսկ կատարողական վարույթն՝ ավարտվում: Արդյունքում, Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից գույքի և դրամական միջոցների վրա դրված արգելանքը հանվելուց հետո պարտապանը հնարավորություն է ունենում վաճառել իր գույքը, և երբ որոշ ժամանակ անց պարտատերը պարտապանի գույքի և (կամ) դրամական միջոցների նկատմամբ լրացուցիչ գումարի չափով արգելանք դնելու վերաբերյալ հայցի ապահովման միջնորդություն է ներկայացնում դատարան, պարզ է դառնում, որ պարտապանն այլևս գույք չունի: Ստացվում է, որ օրենսդրական թերի կարգավորումների արդյունքում, պարտատերերը զրկվում են իրենց հայցապահանջի ապահովման հնարավորությունից:

Այսպիսով, վերոնշյալ հարցը հստակ կանոնակարգված չէ և 2017 թվականի ընթացքում շարունակել է մնալ խնդրահարույց:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք մշակել օրենսդրական փոփոխություններ՝ հստակ կարգավորելով հայցի ապահովման միջոցի փոփոխման մեխանիզմները:

5. Խտրականություն՝ սեռական կողմնորոշման հիմքով

Խտրականության արգելքն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածով, համաձայն որի՝ խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնության պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթից այլ հանգամանքներից, արգելվում է:

Օրենսդրական դաշտի ուսումնասիրության ցույց է տալիս, որ առանձին կարգավորման առարկա ունեցող իրավական ակտեր խտրականություն սահմանող դրույթներ չեն պարունակում: Ավելին, ՀՀ օրենսդրությամբ սահմանվում է խտրականության արգելքը, այնուամենայնիվ, հստակ իրավական մեխանիզմների բացակայության հետևանքով անձինք զրկված են իրենց իրավունքների արդյունավետ պաշտպանության միջոցներից: Քննարկվող խնդրի շրջանակներում անձանց իրավունքների լիարժեք իրականացման ապահովման նպատակով կարևոր է օրենսդրական հստակ կարգավորումների սահմանումը, որտեղ հստակ ամրագրում

[204] ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, հոդված 99:

կստանան ինչպես խտրականության հասկացությունը, տեսակները, այնպես էլ խտրականությունը կանխարգելող հստակ մեխանիզմները:

Խտրականությունը սահմանող համապարփակ օրենսդրություն խնդրի մասին դեռևս 2015 թվականին մատնանշվել է ՄԱԿ-ի Համընդհանուր պարբերական դիտարկման աշխատանքային խմբի կողմից, երբ Հայաստանին առաջարկվել է ընդունել խտրականությունը սահմանող համապարփակ օրենսդրություն և խտրականության դեմ պայքարի արդյունավետ մեխանիզմներ՝ ուղղված հասարակության խոցելի խմբերի դեմ ատելության քարոզչության և հրահրման բացառմանը[205]:

2017 թվականին Հայաստանում սեռական փոքրամասնությունների դեմ խտրականության դրսևորումներին է անդրադարձել «Հյուման Ռայթս Ուոթչ» (Human Rights Watch) միջազգային իրավապաշտպան կազմակերպությունն իր զեկույցում՝ բարձրաձայնելով սեռական փոքրամասնությունների ներկայացուցիչների խտրականության, ոտնձգությունների և ֆիզիկական բռնության դեպքերի մասին, մասնավորապես՝ նշվել է սեռական փոքրամասնությունների ներկայացուցիչների արդարադատության մատչելիության խնդիրները: Զեկույցում նշվում է, որ հաղորդում չեն ներկայացնում, քանի որ մտավախություն ունեն, որ խտրականության կենթարկվեն:[206]

Հայաստանի Հելսինկյան կոմիտեի «Մարդու իրավունքների պաշտպանությունը 2017 թվականին» տարեկան զեկույցի տվյալների համաձայն՝ 2017 թվականին դեկտեմբերի 7-ի դրությամբ արձանագրվել են ԼԳԲՏ անձանց նկատմամբ ոտնձգության 26 դեպք: Նշված դեպքերից 5-ը տրանսգենդեր անձանց նկատմամբ ֆիզիկական բռնության դեպքեր են եղել, որից մեկը հանգեցրել է մահվան:

Քննարկվող խնդրի առնչությամբ պետք է ընդգծել, որ անձի սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը՝ որպես ատելության հիմքով կատարված հանցագործության որակյալ հատկանիշ, ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի նորմերով նախատեսված չէ, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի «Պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքները» վերտառությամբ 63-րդ հոդվածով արարքն ատելության հիմքով կատարված լինելու շարժառիթ նախատեսված է միայն ազգային, ռասայական կամ կրոնական ատելությունը, որի արդյունքում՝ օրենսդրական բացի հետևանքով, անձի սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ պայմանավորված ատելության հիմքով կատարված հանցագործությունները չեն ազդում հանցագործության որակման և պատժի չափի որոշման վրա[207]: Մինչդեռ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, անդրադառնալով անձի սեռական կողմնորոշման հիմքով խտրականության դրսևորմանը, նշել է, որ խտրականությունն անձի սեռական կողմնորոշման հիմքով նույնքան խնդրահարույց է, որքան «սեռի, ռասայի, մաշկի գույնի» հիմքով խտրականությունը[208]:

---

[205] ՄԱԿ-ի Համընդհանուր պարբերական դիտարկման աշխատանքային խումբ, 2015, http://www.upr-info.org/sites/default/files/document/armenia/session_21_-_january_2015/a_hrc_wg.6_21_l.8.pdf

[206] https://www.hrw.org/world-report/2018/country-chapters/armenia

[207] Հայաստանի Հելսինկյան կոմիտե «Մարդու իրավունքները Հայաստանում 2016» զեկույց, Դիտորդ # 1, Հունվար 2017, http://armhels.com/wp-content/uploads/2017/01/Ditord-2017-01arm-Web.pdf

[208] Տե՛ս Վեյդելանդն և այլոք ընդդեմ Շվեդիայի (Vejdeland and Others v. Sweden) 2012 թվականի փետրվարի 9-ի գործով վճիռ, գանգատ թիվ 1813/07, կետ 55:

6. Խաղալիքների որակի և անվտանգության նկատմամբ վերահսկողություն

Թեև տարեցտարի խաղալիքների շուկայում ավելանում է դրանց թիվը, այնուամենայնիվ խաղալիքների որակի և անվտանգության նկատմամբ պատշաճ վերահսկողություն չի իրականացվում: Խնդիրը բարձրաձայնել է նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն իր տարեկան զեկույցներում:

ՀՀ առողջապահության նախարարի 2007 թվականի մարտի 26-ի «Մանկական խաղալիքների, խաղերի արտադրության և իրացման» սանիտարական կանոնները հաստատելու մասին N 539-Ն հրամանով սահմանված է մինչև 14 տարեկան երեխաների խաղալիքների (խաղերի) և դրանց պատրաստման համար օգտագործվող հումքի և նյութերի հիգիենիկ պահանջների սանիտարական կանոնները: Նշված կանոնների պահանջները տարածվում են ինչպես երեխաների համար արտադրող և իրացնող, այնպես էլ Հանրապետության տարածք ներկրվող խաղալիքների (խաղերի) վրա:

Մինչդեռ, 2017 թվականին Հայաստանում իրականացվել է հետազոտություն 5 երկրների 16 տեսակ խաղալիքների շրջանում, որից 9-ը չինական արտադրության են եղել, 3-ը՝ ռուսական արտադրության, 1-ը՝ վիետնամական, 2-ը՝ անհայտ ծագման երկրի: Հետազոտված բոլոր խաղալիքների մեջ հայտնաբերվել են ֆտալատներ[209,210]:

Մեկ այլ խնդիր է խաղալիքների սերտիֆիկացման հարցը: Մասնավորապես, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կողմից 2017 թվականին իրականացված ստուգումների արդյունքում պարզվել է, որ խաղալիքների շուկայում ստուգման ենթարկված ընկերությունների 70 տոկոսը չի ունեցել սերտիֆիկատ[211]:

Հաշվի առնելով հարցի կարևորությունը՝ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության Շուկայի վերահսկողության տեսչական մարմինը պետք է պատշաճ վերահսկողություն իրականացնի շուկայում առկա խաղալիքների որակի և անվտանգության նկատմամբ:

7. «Օդից փող» հաղորդմամբ քաղաքացիներին պատճառված վնասների խնդիր

2017 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ հեռուստատեսությամբ հեռարձակվող «Օդից փող» հաղորդմամբ քաղաքացիներին պատճառված վնասների վերաբերյալ: Պարզվել է, որ «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» և «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքներով, ինչպես նաև հարակից այլ օրենքներով բացակայում է հեռուստատեսությամբ և ռադիոյով հեռարձակվող շահումով խաղերի հեռարձակման իրավական կարգավորումը, մինչդեռ այդ իրավական բացը գործնականում կարող է դառնալ քաղաքացիների իրավունքների խախտման պատճառ:

---

[209] http://www.a1plus.am/1581353.html

[210] Ֆտալատները կիրառվում են նաեւ պլաստիկ խաղալիքների արտադրության ժամանակ՝ խաղալիքներին տալով փափկություն եւ ճկունություն: Ներթափանցելով օրգանիզմ՝ ֆտալատները հանգեցնում են օրգանիզմի դիմադրողականության եւ պաշտպանիչ հատկությունների անկմանը, ախտահարում են լյարդը, երիկամները, առաջացնում անպտղություն եւ քաղցկեղ, նյութափոխանակության խանգարումներ, ճարպակալում, դիաբետ, գլխուղեղի զարգացման ընթացքում՝ նեյրոտոքսիկ փոխազդեցություններ: Տղամարդկանց մոտ ճնշում են սպերմատազոիդների զարգացումը եւ առաջացնում ամորձիների հետաճ, հետեւաբար՝ անպտղություն: Ավելի խոցելի են համարվում դեռահաս կանայք եւ երեխաները https://hetq.am/arm/news/83203/haykakan-shukayum-vatcharvox-khaxaliqnerum-haytnabervel-en-hormonal-khangarum-arajacnox-nyuter.html

[211] http://www.a1plus.am/1579450.html

Այսպես, «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով սահմանվում է շահումով խաղի հասկացությունը: Միևնույն ժամանակ, «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի գործողությունը չի տարածվում հեռահաղորդակցության որևէ կապի միջոցով շահումով խաղերի կազմակերպման գործունեության վրա, բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի:

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է եզրակացնել, որ սահմանելով «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենքի կարգավորումները չեն կարող տարածվել «Օդից փող» հաղորդման վրա:

Ավելին, հեռահաղորդակցության ոլորտը կարգավորող օրենսդրության, «Վիճակախաղերի մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքների համապատասխան դրույթների համապարփակ ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ հեռուստատեսությամբ և ռադիոյով հեռարձակվող շահումով խաղերի հեռարձակման և կազմակերպման գործունեությունը ՀՀ օրենսդրությամբ ներկայումս չի կարգավորվում:

2017 թվականին «Օդից փող» հեռուստատեսային վիկտորինա հեռուստահաղորդման վերաբերյալ 14 բողոք բողոք է հասցեագրվել (վերահասցեագրվել) նաև ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով: Ըստ Հանձնաժողովի՝ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հեռուստառադիոընկերություններն իրենք են մշակում և իրականացնում հաղորդումների ծրագրային քաղաքականությունը և Հանձնաժողովին հեռուստառադիոընկերությունների ծրագրային քաղաքականությանը միջամտելու գործառույթ օրենքով վերապահված չէ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է՝ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքը փոփոխել այնպես, որ նման խաղերը հեռարձակել հնարավոր լինի միայն գիշերային ժամերին՝ 24:00-ից մինչև 06:00-ը: Դրանից բացի՝ առաջարկվում է սահմանել, որ հեռուստատեսությամբ կամ ռադիոյով հեռարձակողը պարտավոր է հրապարակել առկա զանգերի ծավալի և միացման հնարավորությունների վերաբերյալ տեղեկություններ, ողջ եթերի ընթացքում տեղյակ պահել զանգի վճարովի լինելու մասին և, դրա հետ մեկտեղ, սակագնի վերաբերյալ հավաստի ինֆորմացիան պետք է լինի տեսանելի կամ լսելի: Առաջարկվում է սահմանել նաև նախազգուշացում անչափահասների մասնակցության արգելքի վերաբերյալ: Անհրաժեշտ է նշել նաև, որ Պաշտպանի աշխատակազմի կողմից մշակվել և իրավասու գերատեսչություններին է ներկայացվել համապատասխան օրինագիծը:

8. Ինտերնետ շահումով խաղերի և վիճակախաղերի գովազդի արդյունքում առաջացած խնդիրներ

2017 թվականի Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքներով, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներով բարձրաձայնվել է ինտերնետ շահումով խաղերի և վիճակախաղերի գովազդի արդյունքում առաջացած մի շարք խնդիրների մասին: Այսպես, ՀՀ օրենսդրության ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ բացակայում է ինտերնետ շահումով խաղերի և վիճակախաղերի գովազդի մանրամասն իրավական կարգավորում՝ հանդիսանալով մարդկանց, այդ թվում նաև անչափահասների իրավունքների խախտման պատճառ:

Պաշտպանի կողմից ՀՀ ֆինանսների նախարարություն 2017 թվականին Նախարարության կողմից մերժված գովազդի թույլտվությունների քանակի և մերժման հիմքերի վերաբերյալ հարցադրում է հասցեագրվել:

Ըստ ՀՀ ֆինանսների նախարարության՝ գովազդներում անչափահասներին դիմելու հարցի մասով առանձին հաշվառում չի իրականացվել: Միաժամանակ նախարարությունից հայտնել են, որ «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2.1-րդ մասի «ժ» կետի համաձայն՝ ինտերնետ շահումով խաղերի գործունեության կազմակերպիչն ապահովում է «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների կատարումը: Նշված օրենքով ինտերնետ շահումով խաղերի կազմակերպիչների գովազդի՝ լիազոր մարմնի հետ համաձայնեցման պահանջ սահմանված չէ, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը իրավասություն չի ունեցել արձանագրել ինտերնետ շահումով խաղերի գովազդի խախտման դեպքեր:

Սպառողների իրավունքների և շահերի պաշտպանության, ինտերնետ շահումով խաղերի գովազդի միջոցով անչափահասներին և քաղաքացիներին մոլեխաղերով հրապուրելու, անձանց բարոյական կամ նյութական վնաս պատճառելու գործունեության կանխարգելման նպատակով առաջարկվում է՝ *հեռուստահաղորդակցության ալիքով վիճակախաղի և ինտերնետ շահումով խաղի, ինչպես նաև դրանց կազմակերպիչների գովազդի հեռարձակումը թույլատրել ժամը 24.00-ից մինչև 06.00-ն ներառյալ: Վիճակախաղի և ինտերնետ շահումով խաղի գովազդի ժամանակ արգելել որևէ կերպ դիմել անչափահասներին, մարդկանց կերպարների տեսաձայնային կամ այլ ձևով օգտագործելը, տպավորություն ստեղծել, թե խաղին մասնակցելն ապահովում է պարբերաբար եկամուտ (շահույթ) ստանալու հնարավորությունը կամ աշխատանքի այլընտրանք է, տպավորություն ստեղծել, թե եկամուտ (շահույթ) ստանալը երաշխավորված է, ներշնչել, որ խաղի միջոցով հնարավոր է հասնել հասարակական, մասնագիտական, սպորտային կամ անձնական հաջողության, քննադատել վիճակախաղին կամ ինտերնետ շահումով խաղին չմասնակցելը: Առաջարկվում է նաև օրենքում ամրագրել, որ վիճակախաղի և ինտերնետ շահումով խաղի գովազդը պետք է պարունակի ոչ սթափ կամ հոգեձնշող վիճակում խաղալու անթույլատրելիության վերաբերյալ նախազգուշացնող տեղեկատվություն:*

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը համատեղ մշակել են «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ:

ԲԱԺԻՆ 10. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ

2015 թվականի սահմանադրական փոփոխություններով սահմանվեց կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը հետևելու Պաշտպանի լիազորությունը, ինչը մանրամասն կարգավորվեց «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքում: Մասնավորապես՝ փոփոխությունների լույսի ներքո Պաշտպանին իրավունք է վերապահվեց քննարկել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պատվիրակած լիազորություններն իրականացնող կազմակերպությունների, հանրային ծառայության ոլորտում գործող կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ հարցերը, եթե դրանք կրում են զանգվածային բնույթ կամ ունեն հանրային նշանակություն կամ կապված են այնպիսի անձանց շահերի պաշտպանության անհրաժեշտության հետ, որոնք չեն կարող ինքնուրույն օգտագործել իրենց իրավունքների և ազատությունների պաշտպանության իրավական միջոցները:

«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի իմաստով՝ հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտն իր մեջ ներառում է՝ էներգետիկայի բնագավառը, ջրային ոլորտը, հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառը, փոստային կապի բնագավառը, երկաթուղային տրանսպորտի բնագավառը՝ ենթակառուցվածքի օգտագործման վճարների հաշվարկման մեթոդաբանության, օգտագործման վճարի հաշվարկի իրականացման և օգտագործման վճարի հաստատման մասով, տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման բնագավառ՝ միայն սակագների մասով:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ներկայացված բողոքներում բարձրացված խնդիրների առավել արդյունավետ լուծման նպատակով սերտ համագործակցություն է ձևավորվել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի և Պաշտպանի աշխատակազմի միջև, ինչի արդյունքում ձևավորվել է աշխատանքային խումբ, որտեղ արդեն իսկ քննարկվել են ջրամատակարարաման, ջրի սակագնի բարձրացման, գազամատակարարման, էներգամատակարարման, առևտրային հաշվառքի սարքերի ստուգաչափումների արդյունքներում իրականացված վերահաշվարկների արդյունքների վերաբերյալ դիմումատուների անհամաձայնության հետ կապված խնդիրները: Նշված համագործակցության շնորհիվ է, որ քաղաքացիների ներկայացրած խնդիրներին հիմնականում տրվել է դրական լուծում:

Օրինակ՝ վերականգնվել է Պաշտպանին դիմած անձանց բնակարանների էներգամատակարարումը, գազամատակարարումը և ջրամատակարարումը: Բացի այդ, գազամատակարարում ապահովող ընկերությունը սեփական միջոցներով իրականացրել է գազամատակարարման խողովակի տեղափոխման աշխատանքները, ինչպես նաև քաղաքացու բնակարանում տեղադրել է գազի ազդանշանային սարք, որը մինչ այդ չէր տեղադրում:

2017 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ այն մասին, որ բնակելի տների առևտրային հաշվառքի սարքերի (գազահաշվիչ) աշխատանքը ճշտելու

նպատակով անձինք դիմել են «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերությանը, ինչի արդյունքում իրականացվել է առևտրային հաշվառքի սարքերի փոխարինում: Հետագայում գազամատակարարումն ապահովող ընկերության ծանուցման մեջ նշվել է, որ չափագիտական մարմնի փորձագիտական եզրակացության համաձայն՝ առևտրային հաշվառքի սարքերի վրա որևէ անձի ներգործությամբ իրականացվել է արտաքին միջամտություն, ինչի հետևանքով ընկերության կողմից իրականացվել է գազի ծախսի վերահաշվարկ: Ներկայացված արդյունքների վերաբերյալ քաղաքացիները հայտնել են իրենց անհամաձայնությունը:

Հաշվի առնելով, որ խնդիրը զանգվածային նշանակության է՝ Պաշտպանի կողմից սկսվել է քննարկման ընթացակարգ: Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի պարզաբանումների համաձայն՝ ընկերության կատարած բնական գազի քանակի և արժեքի վերահաշվարկը կատարվել է առևտրային հաշվառքի սարքերի խախտման պատճառով (որը փաստվել է չափագիտական մարմնի փորձագիտական եզրակացությամբ) բաժանորդների կողմից ծախսված, բայց չհաշվառված գազի քանակի համար: Ըստ հանձնաժողովի՝ իրականացված գործողությունները համապատասխանում են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի հուլիսի 8-ի №95Ն որոշմամբ հաստատված բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների 4.9. կետի և 4.13 կետի «ա» ենթակետով սահմանված պահանջներին:

Հարկ է նշել, որ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» 2005 թվականի հուլիսի 8-ի N95 Ն որոշման 4.1 կետի համաձայն՝ բազմաբնակարան շենքերի բնակիչների գազամատակարարման համար առևտրային հաշվառքի սարքերը տեղակայվում են նրանց բնակարաններից դուրս: Առանձնատների և կենցաղային սպառում ունեցող կազմակերպությունների գազամատակարարման համար առևտրային հաշվառքի սարքերը տեղակայվում են նրանց սեփականության տարածքից դուրս: Ոչ կենցաղային սպառում ունեցող կազմակերպությունների առևտրային հաշվառքի սարքերի տեղակայման կետը սահմանվում է միացման պայմանագրով, որը ամրագրվում է նաև պայմանագրում:

Առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում, երբ առկա չէ հսկիչ հաշվառքի սարք, չափագիտական մարմնի փորձագիտական եզրակացությամբ փաստվել է, որ բացակայում են կամ կեղծված են, կամ վնասված են առևտրային հաշվառքի սարքի կնիքները, կամ առևտրային հաշվառքի սարքի խախտումը պայմանավորված է եղել առևտրային հաշվառքի սարքի առանձին դետալների այնպիսի խափանումներով կամ վնասվածքներով, որոնք կարող էին պայմանավորված լինել միայն որևէ անձի ներգործությամբ, միևնույն ժամանակ, մատակարարի գնահատմամբ՝ հաշվի առնելով չափագիտական մարմնի փորձագիտական եզրակացությունը, այն հանգեցրել է բաժանորդի ծախսած բնական գազի քանակի սխալ հաշվառման, ապա առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում, երբ չափագիտական մարմնի եզրակացությամբ փաստված առևտրային հաշվառքի սարքի խախտումը ըստ մատակարարի պայմանավորված է բաժանորդի միտումնավոր գործողություններով, և դա առևտրային հաշվառքի սարքի խախտման առաջին դեպքն է վերջին երկու տարիների ընթացքում, *մատակարարն իրավունք ունի բաժանորդից պահանջել վճարել տույժ՝ վերահաշվարկված գազի արժեքի չափով:* Բաժանորդի կողմից մատակարարի տույժ վճարելու պահանջին

համաձայնելու դեպքում մատակարարը հաշվարկված տույժը հաշվի է առնում վերահաշվարկի կատարմանը հաջորդող հաշվարկային ամսվա համար բաժանորդին ներկայացվող հաշվարկային (վճարման) փաստաթղթում: Բաժանորդի կողմից մատակարարի տույժ վճարելու պահանջին չհամաձայնելու դեպքում մատակարարը վեճը լուծում է դատական կարգով: Մատակարարն իրավունք չունի տույժի չվճարման համար դադարեցնել բաժանորդի գազամատակարարումը մինչև վեճի վերջնական լուծումը:

Միևնույն բաժանորդի մոտ երկու տարվա ընթացքում առևտրային հաշվառքի սարքի 1-ից ավելի խախտում հայտնաբերելու դեպքում, երբ չափագիտական մարմնի եզրակացությամբ փաստված առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքերը ըստ մատակարարի՝ պայմանավորված են եղել բաժանորդի միտումնավոր գործողություններով, մատակարարն իրավունք ունի վերահաշվարկված գազի արժեքի կրկնապատիկի չափով հաշվարկելու տույժ և այն հաշվի առնել վերահաշվարկի կատարմանը հաջորդող հաշվարկային ամսվա համար բաժանորդին ներկայացվող հաշվարկային (վճարման) փաստաթղթում: Այդ դեպքում մատակարարն իրավունք ունի դադարեցնել բաժանորդի գազամատակարարումը՝ հաշվարկած տույժը՝ կազմակերպությունների դեպքում սույն կանոնների 6-րդ գլխով, իսկ բնակչության դեպքում՝ սույն կանոնների 8-րդ գլխով սահմանված կարգով չվճարելու համար: Մատակարարի հաշվարկած տույժին չհամաձայնելու դեպքում բաժանորդը վեճը լուծում է դատական կարգով:

Քննարկվող հարցի կապակցությամբ հանձնաժողովից ստացվել են տեղեկություններ այն մասին, որ մարդկային գործոնով պայմանավորված՝ բնական գազի առևտրային հաշվառքի սարքի խախտման վերաբերյալ, որը հանգեցրել է բաժանորդի ծախսած բնական գազի քանակի սխալ հաշվառման, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովում 2017 թվականին մուտքագրվել է 49 գրավոր բողոք, որից 5-ի դեպքում մատակարարը ճշգրտելով՝ նվազեցրել կամ հրաժարվել է վերահաշվարկված գազի արժեքի պահանջից, իսկ մեկ դեպքում վերահաշվարկված գազի արժեքը կազմող գումարի բռնագանձման պահանջով գազամատակարարումն ապահովող ընկերությունը դիմել է դատարան: Մնացած 43 դեպքերում ընկերության կողմից կատարված բնական գազի քանակի և արժեքի վերահաշվարկը կատարվել է առևտրային հաշվառքի սարքի խախտման պատճառով (որը փաստվել է չափագիտական մարմնի փորձագիտական եզրակացությամբ) սպառողի կողմից ծախսված, բայց չհաշվառված գազի քանակի համար, ինչի մասին հանձնաժողովը հավաստիացել է իր իրավասության շրջանակներում մատակարարի կողմից ներկայացված պարզաբանումների ուսումնասիրման արդյունքում և հայտնել իր դիրքորոշումն առ այն, որ կատարված վերահաշվարկները համապատասխանում են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի հուլիսի 8-ի № 95Ն որոշմամբ հաստատված բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների 4.9 կետի և 4.13 կետի «ա» ենթակետով սահմանված պահանջներին:

Սակայն անհրաժեշտ է արձանագրել, որ գործող իրավակարգավորումների համաձայն՝ բազմաբնակարան շենքերի և առանձնատների գազամատակարարման համար առևտրային հաշվառքի սարքերը տեղակայվում են բաժանորդի սեփականության տարածքից դուրս: Արդյունքում՝ ֆիզիկական ներգործության միջոցով գազահաշվիչի խափանման կամ

վնասման դեպքում պատասխանատվությունն առանց մեղքի ապացուցման դրվում է միայն բաժանորդի վրա:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է փոփոխության ենթարկել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի հուլիսի 8-ի թիվ 95-Ն որոշումը, ապահովելու համար առևտրային հաշվառքի սարքերը բաժանորդների սեփականության և վերահսկողության տարածք տեղափոխելու հարցը:

2017 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրվել են աղբահանության ոլորտում պետության պատվիրակված լիազորություններն իրականացնող կազմակերպությունների ոչ պատշաճ գործունեության վերաբերյալ դիմումներ: Մասնավորապես, դիմումներում բարձրաձայնվել է աղբամանները և կոնտեյներները օրենքով չնախատեսված վայրերում տեղադրելու և աղբահանությունը սահմանված ժամանակացույցի խախտմամբ իրականացնելու վերաբերյալ:

Նշվածը բացասական ազդեցություն է ունենում մարդուն շրջապատող միջավայրի սանիտարահիգիենիկ վիճակի վրա և կարող է բացասաբար անդրադառնալ անձանց առողջությանը: «Բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանմանը, սպառման թափոնների հավաքմանը, պահմանը, փոխադրմանը, մշակմանը, վերամշակմանը, օգտահանմանը, վնասազերծմանը և թաղմանը, բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանման, սպառման թափոնների գործածության ոլորտում աշխատանքներ իրականացնող անձնակազմի աշխատանքային անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.002-09 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի N 25-Ն հրամանով նախատեսվում են կոնտեյներների տեղադրության հստակ չափանիշներ: Սակայն Պաշտպանին ուղղված որոշ դիմումներ վկայել են այն մասին, որ կոնտեյներները տեղադրված են եղել իրավական ակտով չնախատեսված վայրում (օրինակ՝ չնայած օրենքի պահանջին, որ դրանք չեն կարող տեղադրված լինել փողոցների և սիզամարգերի վրա, բողոքներ են եղել նաև նման դեպքերի մասին):

Երևանի քաղաքապետարանից խնդրի վերաբերյալ հայտնել են, որ 2017 թվականի ընթացքում մայրաքաղաքում կառուցվել են աղբամանների տեղադրման համար նախատեսված հարթակներ, ինչի շրջանակներում աղբամանների մեծ մասը դուրս է բերվել երթևեկելի գոտիներից: Նշված աշխատանքները շարունակվել են նաև 2018 թվականի ընթացքում:

Աղբահանության ոլորտում պատվիրակելով իր լիազորությունները պետությունը միևնույն է կրում է ոլորտի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու պարտավորություն: Հարկ է նշել, որ Երևանի փողոցներում տեղադրված աղբամանները հաճախ տեղադրված են ոչ պատշաճ վայրերում, նրանց շրջակայքը մշտապես լիքն է թափթփված և ցրված աղբով, որը հաճախ չի մաքրվում աղբահանության ծառայություն մատուցող ծառայության աշխատողների կողմից:

Բացի այդ, Երևան քաղաքում հաճախ աղբահանությունն իրականացվում է աշխատանքային թեժ ժամերին՝ պատճառ հանդիսանալով ավտոմեքենաների խցանումների համար, ինչն էլ առաջացնում է քաղաքացիների դժգոհությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է՝

1. սահմանել աղբահանության իրականացման հստակ ժամանակացույց, միաժամանակ աշխատանքները կազմակերպելով օրվա այնպիսի ժամերի, որ չխոչընդոտվի երթևեկությունը,

2. պատշաճ վերահսկողություն իրականացնել աղբահանություն իրականացնող կազմակերպության կողմից սահմանված ժամանակացույցի պահպանման նկատմամբ:

ԲԱԺԻՆ 11. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

Յուրաքանչյուր ժողովրդավարական երկրի անվտանգությունն ապահովելու հիմնարար գործոններից է մարդու իրավունքների և ազատությունների հուսալի պաշտպանությունը, իսկ անվտանգության, այդ թվում՝ իրավական ու ռազմական երաշխիքներից է իրավունքների պաշտպանությունն երաշխավորող համակարգի արդյունավետությունը:

«Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը կազմակերպվում և իրականացվում է օրինականության, մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների հարգման, զինված ուժերի գործունեության նկատմամբ ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության, պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ֆիզիկական և իրավաբանական անձանց ընդգրկվածության սկզբունքների հիման վրա:

Անվտանգության ռազմաքաղաքական ասպեկտների ԵԱՀԿ 1994 թվականի դեկտեմբերի 3-ի վարքագծի կանոնները առաջին անգամ միջազգայնորեն ամրագրեցին, որ զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողությունը կայունության և անվտանգության անբաժանելի մասն է և ժողովրդավարության կարևոր արտահայտություններից մեկը (կետ 20)[212]:

Վարքագծի այդ կանոններն ամրագրում են չորս հիմնական սկզբունք. սահմանադրական քաղաքացիական իշխանության գերակայությունը զինվորական իշխանությունների նկատմամբ, զինված ուժերի ենթարկվելը միջազգային մարդասիրական իրավունքին, զինծառայողների մարդու իրավունքների պահպանումը և պետության ներսում ուժի կիրառման սահմանափակումը, ընդհուպ մինչև այն մակարդակը, որը համապատասխանում է դրա իրավական նպատակին, և միջամտության սահմանափակումը մարդու իրավունքների խաղաղ ու օրինական իրականացմանը[213]:

Յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավորվում է ապահովել, որ ռազմական, ռազմականացված և անվտանգության ուժերում ծառայելու համար հավաքագրման և զորակոչի պրակտիկան համապատասխանի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ոլորտում ստանձնած պարտավորություններին: Մասնակից պետություններն իրենց օրենքներում և այլ առնչվող փաստաթղթերում պարտավորվում են արտացոլել զինված ուժերի անձնակազմի մարդու իրավունքները և պարտականությունները:

Վարքագծի կանոններով ամրագրվում է *«համազգեստով քաղաքացիներ»* գաղափարը: Դրա էությունն այն է, որ յուրաքանչյուր մասնակից պետություն ապահովելու է, որ ռազմական, ռազմականացված և անվտանգության ուժերի անձնակազմը կարողանա

[212] Code of Conduct on Politico-Military Aspects of Security, http://www.osce.org/fsc/41355.

[213] Զեռնարկ զինված ուժերի անձնակազմի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին, http://www.osce.org/hy/odihr/88572, էջ 31:

օգտվել ԵԱՀԿ փաստաթղթերով և միջազգային իրավունքում ամրագրված մարդու իրավունքներից և հիմնարար ազատություններից և իրացնել դրանք սահմանադրական և օրենսդրական նորմերին և ծառայության պահանջներին համապատասխան:

Այդ կերպ հաստատվում է, որ «համազգեստով քաղաքացիները»՝ պարտադիր և պայմանագրային զինվորական ծառայություն անցնող անձինք օժտված են նույն իրավունքներով, ինչ մնացած բոլոր քաղաքացիները: Իհարկե, ինչպես այս, այնպես էլ ոլորտի այլ միջազգային փաստաթղթերով ամրագրված է, որ «համազգեստով քաղաքացիների» իրավունքների իրացման գործընթացում պետք է հաշվի առնվի զինվորական կյանքի առանձնահատկությունները և առանձին զինծառայողների համար դրա ունեցած ազդեցությունը:

Սույն տարեկան հաղորդման մեջ արտացոլված են զինապարտության փուլերում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության հետ կապված հարցերը, իրավակարգավորումների բացակայությամբ կամ թերի իրավակարգավորմամբ պայմանավորված Հայաստանի Հանրապետության զինապարտ քաղաքացիների իրավունքների պաշտպանության ապահովման հիմնական խնդիրները, ինչպես նաև դրանց լուծմանն ուղղված առաջարկներ:

Սույն հաղորդմամբ ներկայացված խնդիրները վեր են հանվել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքների, դրանց հիման վրա զինվորական հաստատություններ այցերի, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների՝ զինապարտների իրավունքների և ազատությունների պաշտպանությանն առնչվող հրապարակումների հիման վրա:

Համագործակցությունը հանրային մարմինների և քաղաքացիական հասարակության հետ

Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների և ազատությունների պաշտպանությունը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության առանցքային ուղղություններից է:

Ակնհայտ է, որ գործունեության այդ ուղղությունն առանձնահատուկ է և պահանջում է հատուկ ու սրտացավ մոտեցում: Այստեղ չի կարող աշխատանքն արդյունավետ լինել, եթե այն մասնագիտացված չէ:

Այդ նպատակով 2017 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստեղծվեց Քրեական արդարադատության ոլորտում և զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության դեպարտամենտ: Դեպարտամենտի կազմում առանձնացվեց զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների մասնագիտացված ստորաբաժանումը: Ստորաբաժանումն իրականացնում է զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների խախտումների վերաբերյալ դիմում-բողոքների ուսումնասիրության և քննարկման ընթացակարգը, նրանց տրամադրում է իրավաբանական խորհրդատվության, իրականացնում է քաղաքացիների ընդունելություն:

Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների և

ազատությունների պաշտպանության նպատակով Մարդու իրավունքների պաշտպանը համագործակցում է միջազգային կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, ինչպես նաև ՀՀ պաշտպանության նախարարության հետ:

Միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության ակնառու օրինակ է 2016 թվականից մեկնարկված Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող «Մարդու իրավունքների եվրոպական չափանիշների կիրառման ամրապնդումը Հայաստանի զինված ուժերում» ծրագիրը:

Ծրագրով նախատեսվում է ՀՀ զինված ուժերում ներդնել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2010 թվականի զինված ուժերի անդամների մարդու իրավունքների վերաբերյալ առաջարկությամբ և այլ միջազգային-իրավական փաստաթղթերով ամրագրված մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության եվրոպական չափանիշները: Ծրագրի կարևորությունը նրանում է, որ այն նոր հնարավորություններ է ստեղծում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և Պաշտպանության նախարարության համագործակցության ուժեղացում, ինչպես նաև ոլորտի հասարակական կազմակերպությունների հետ աշխատանքի համար:

Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր գործում է Զինծառայողների իրավունքների հարցերով փորձագիտական խորհուրդը: Խորհրդում ընդգրկված են հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ և հոգեբանության, սոցիոլոգիայի ոլորտի անկախ մասնագետներ, ինչպես նաև կապիտան, ապրիլյան պատերազմի հերոսներից Արմենակ Ուրֆանյանի մայրը: Խորհրդի նիստերին հրավիրվել և մասնակցել են նաև ՀՀ պաշտպանության նախարարության իրավասու ներկայացուցիչներ:

Զինծառայողների իրավունքների պաշտպանության ոլորտում Պաշտպանի գործունեությանն աջակցելու նպատակով կազմակերպվել են խորհրդի նիստեր, որոնց ընթացքում կատարվել են զինծառայողների իրավունքների պաշտպանության արդյունավետության բարձրացմանն ուղղված ուսումնասիրություններ, վերլուծություններ, վեր են հանվել համակարգային խնդիրներ և դրանց հիման վրա մշակվել են համապատասխան առաջարկներ: Խորհրդի աշխատանքների արդյունավետությունն ապահովող կարևոր գործոն է նաև այն, որ դրան մասնակցում են քաղաքացիական հասարակության և Պաշտպանության նախարարության իրավասու ներկայացուցիչներ: Խորհրդի նիստում բարձրացվում են ոլորտում առկա խնդիրներ, դրանք համատեղ քննարկվում են, և առաջարկվում խնդրի լուծման տարբերակներ: Արդյունքում, այդ առաջարկները Պաշտպանի աշխատակազմում մշակվում են և ներկայացվում իրավասու գերատեսչություններին:

Մասնավորապես, Խորհրդի նիստերի ընթացքում քննարկվել են նախազորակոչային, զորակոչային տարիքի հասած զինապարտ քաղաքացիների հոգեբանական պատրաստության, զինվորական հաշվառման գործընթացի իրավական կարգավորման, պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ընթացքում զինապարտների իրավունքների և ազատությունների պաշտպանության, զինծառայողների բնակարանային ապահովության հետ կապված գործնական բնույթի և օրենսդրական

խնդիրները: Խորհրդի նիստերում առանձին քննարկման առարկա են հանդիսացել Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում մշակված զինված ուժերի կարգապահական կանոնագրքում և ծառայողական քննության անցկացման կարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու օրենսդրական փաթեթը, ինչպես նաև զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին ոչ ֆինանսական բնույթի արտոնություններ տրամադրելու առաջարկները:

2017 թվականի ընթացքում զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից հատկապես կարևոր է եղել ՀՀ պաշտպանության նախարարության հետ արդյունավետ համագործակցությունը:

Մասնավորապես, պարբերաբար կազմակերպվել են համատեղ քննարկումներ ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչների հետ: 2017 թվականի ընթացքում համատեղ այցեր են կատարվել նաև կայազորային զինվորական հոսպիտալներ, որտեղ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների շրջանակներում ուսումնասիրվել են զինծառայողների բուժման ընթացքը, արդյունքները և զինծառայողների բժշկական փաստաթղթերը: 2017 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները ներկա են գտնվել նաև Կենտրոնական բժշկական հանձնաժողովի նիստերին, ստացված բողոքների շրջանակներում համատեղ քննարկվել են զորակոչիկների առողջական վիճակին առնչվող հարցերը:

ՀՀ պաշտպանության նախարարության հետ համատեղ քննարկումների և այցերի արդյունքում նշանակվել են զորակոչիկների առողջական վիճակի բժշկական, զինծառայողների՝ կրկնակի ռազմաբժշկական փորձաքննություններ, զորակոչիկները ստացել են տարկետման իրավունք, զինծառայողները ուղեգրվել են զինվորական հոսպիտալներ և ստացել են համապատասխան բուժում:

Այս առումով, կարևոր նշանակություն ունի Պաշտպանության նախարարության հանձնառությունն առավել ուժեղացնելու ուշադրությունը ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների վիճակի նկատմամբ, ինչպես նաև համագործակցությունը Պաշտպանի աշխատակազմի հետ:

Խորհրդարանական կառավարման համակարգի անցման փուլում կարևոր է նաև համագործակցությունը Ազգային ժողովի հետ՝ զինծառայողների և նրանց ընտանիքների իրավունքների պաշտպանության արդյունավետության ապահովման տեսանկյունից: Այս համագործակցությունը 2017 թվականի ընթացքում իրականացվել է նոր ձևաչափով՝ ՀՀ խորհրդարանի Պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի հետ քննարկումների և տեղեկությունների փոխանակման, հանձնաժողովի կազմակերպած լսումներին մասնակցելու միջոցով: Այս առումով, մշտապես կապ է պահպանվել հանձնաժողովի ղեկավարի հետ:

2017 թվականի հոկտեմբեր ամսին ԱԺ Պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախաձեռնությամբ Ազգային ժողովի նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Զինապարտության և զինվորական ծառայության մասին օրենսդրական նոր կարգավորումների վերաբերյալ» թեմայով խորհրդարանական լսումներ: Այս լսումները կարևոր էին նրանով, որ դրանց մասնակցում էին միջազգային կառույցների, իրավասու մարմինների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ: Պետք է նշել նաև, որ նման ձևաչափով խորհրդարանական լսումները

նոր պրակտիկայի դրսևորումներ են և բխում են մասնակցային քննարկումների հիմնարար գաղափարից: Հանձնաժողովի ղեկավարի հրավերով, խորհրդարանական լսումներին առանձին ելույթով հանդես եկավ նաև Մարդու իրավունքների պաշտպանը: Այս ելույթը կարևոր էր, քանի որ հնարավորություն տվեց խորհրդարանական բարձր ամբիոնից լայն հանրությանը ներկայացնել Պաշտպանի արձանագրած խնդիրները, ոլորտի դրական զարգացումներն ու գործընկերների հետ համագործակցության մասին պատկերացումները:

Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների արդյունավետ պաշտպանության տեսանկյունից կարևոր է նաև համագործակցությունը լրատվամիջոցների և փաստաբանների հետ:

Լրատվամիջոցներում հրապարակված՝ զինծառայողների կամ նրանց ընտանիքների անդամների իրավունքների ենթադրյալ խախտումների վերաբերյալ տեղեկությունները 2017 թվականին ևս դարձել են Մարդու իրավունքների պաշտպանի կողմից քննարկման ընթացակարգ սկսելու առիթ: Մի շարք դեպքերում լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա սկսված ընթացակարգերով վերականգնվել են զինծառայողների իրավունքները և ազատությունները:

Փաստաբանների հետ համագործակցությունը կրել է պարբերական և մասնագիտական բնույթ: Իրենց վստահորդներ հանդիսացող զինծառայողների իրավունքների համատեղ պաշտպանությունը դարձել է ամենօրյա աշխատանքի բաղկացուցիչ մասը:

ԳԼՈՒԽ 1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԶՈՐԱԿՈՉԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիների զինապարտությունն ընդգրկում է զինվորական հաշվառումը, զինվորական ծառայության նախապատրաստությունը, զորակոչի միջոցով պարտադիր զինվորական ծառայությունը և պահեստազորում գտնվելը: Պարտադիր զինվորական ծառայության են զորակոչվում 18-ից մինչև 27 տարեկան արական սեռի զորակոչիկները:

1. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու մասին ծանուցելու գործընթացում ՀՀ զինապարտ քաղաքացիների (զորակոչիկների) իրավունքները

Զինվորական ծառայության զորակոչված քաղաքացիների համար զինվորական ծառայության սկիզբ է համարվում ծառայության վայր մեկնելու համար զինվորական կոմիսարիատ ներկայանալու օրը:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչին քաղաքացու ներկայությունն ապահովելու նպատակով համապատասխան զինվորական կոմիսարիատը քաղաքացուն փաստաթղթային կամ էլեկտրոնային եղանակով ծանուցում են զինվորական կոմիսարիատ ներկայանալու պարտավորության մասին՝ ծանուցման մեջ նշելով զինվորական կոմիսարիատ ներկայանալու ժամկետը:

Նշված օրենքով առաջին անգամ սահմանվել է, որ պարտադիր զինվորական ծառայության զորակոչվող քաղաքացին համապատասխան զինվորական կոմիսարիատ ներկայանալու պարտավորության մասին կարող է տեղեկացվել նաև *էլեկտրոնային եղանակով* ծանուցվելու միջոցով: Զորակոչի մասին էլեկտրոնային եղանակով ծանուցելու ընթացակարգեր գործում են նաև մի շարք օտարերկրյա պետություններում:

Օրինակ, Ֆինլանդիայում պարտադիր զինվորական ծառայության զորակոչը կազմակերպվում է յուրաքանչյուր տարվա օգոստոս-դեկտեմբեր ամիսներին: Զորակոչի ենթակա 18 տարին լրացած քաղաքացիներին փոստային առաքմամբ ուղարկվում է պարտադիր զինվորական ծառայության վերաբերյալ *տեղեկատվական ուղեցույցից*[214], *հարցաթերթիկներից*[215] *և ծանուցագրից բաղկացած փաթեթ*:

Փաթեթը հաշվառման կամ բնակության հասցեն փոխելու հետևանքով չստանալը զինապարտին չի ազատում զորակոչի ընթացքում ներկայանալու պարտականությունից: Բնակության վայրը փոխելու դեպքում քաղաքացին պարտավոր է տեղեկություններ տրամադրել հաշվառման տարածքային գրասենյակին: *Նշված տեղեկությունները կարող են տրամադրվել նաև համացանցի միջոցով (www.muuttoilmoitus.fi)*:

Զորակոչի վերաբերյալ տեղեկություններ են հրապարակվում նաև Ֆինլանդիայի Պաշտպանական ուժերի համացանցի կայքում (www.puolustusvoimat.fi) և տեղական ինքնակառավարման մարմնի պաշտոնական հայտարարությունների հարթակում[216]: Հայտարարությունը պետք է հասանելի լինի զորակոչը սկսվելուց առնվազն երկու շաբաթ առաջ և ներառի տեղեկություններ զորակոչի տեղի և ժամանակի վերաբերյալ: Ընդ որում, «Պաշտպանական ուժերի մասին» Ֆինլանդիայի օրենքի համաձայն՝ հայտարարությունների հասանելիությունը կարող է ապահովվել նաև այլ եղանակներով (հոդված 15), որը սակայն, օրենքը չի մանրամասնում[217]:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների հիման վրա իրականացվել է զորակոչի ընթացքում ՀՀ զինապարտ քաղաքացիներին ներկայացվող ծանուցագրերի ձևի և բովանդակության ուսումնասիրություն:

Ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ պետք է առկա լինեն զորակոչիկներին պատշաճ ծանուցելու գործընթացը կանոնակարգող, այդ ընթացքում պաշտոնատար անձանց իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը սահմանող, ծանուցագրի ձևը և դրանում ներառվող տեղեկությունների շրջանակը հստակեցնող իրավական կարգավորումներ: Ներկայում այս պահանջները չեն պահպանվում:

Իրականում, Ծանուցագրի բովանդակությունն ունի հոգեբանական կարևոր նշանակություն: Դրանում ներառված յուրաքանչյուր բառ կամ նախադասություն ձևավորում է բանակի, այնտեղ տիրող բարոյահոգեբանական մթնոլորտի վերաբերյալ զորակոչիկի և նրա ծնողների՝ հոգեբանական դրական կամ բացասական դիրքորոշում: Զինվորական ծառայության զորակոչվելն անձի կյանքում շրջադարձային իրողություն է,

---

[214] Ուղեցույցը ներառում է զինվորական հաշվառման, զորակոչի և զինվորական ծառայության հիմնական ընթացակարգերի և պահանջների վերաբերյալ տեղեկատվությունը:

[215] Հարցաթերթիկներում զինվորական ծառայության վաղյրի և զորակոչի կոնկրետ օրվա վերաբերյալ զինծառայողների լրացրած ցանկությունները, ըստ հնարավորության, հաշվի են առնվում իրավասու պետական մարմնի կողմից:

[216] Զորակոչի մասին էլեկտրոնային եղանակով տեղեկություններ տարածելու միջոցով զինապարտներին զինվորական կոմիսարիատներ հրավիրելու կարգ գործում է նաև Ալժիրում, Բոլիվիայում, Էկվադորում, Իրանում և Իրաքում:

[217] Տե՛ս <<Պաշտպանական ուժերի մասին>> Ֆինլանդիայի օրենքը, https://www.finlex.fi/fi/laki/kaannokset/2007/en20070551.pdf

սովորական և անվտանգ կենսակերպի էական փոփոխություն, որը զորակոչիկին կանգնեցնում է նորովի հարմարվելու և ինքնադրսևորվելու անհրաժեշտության առջև: Մինչև զորակոչվելը բացասական դիրքորոշումներ ձևավորելը կամ դրան նպաստելը (այդ թվում՝ ծանուցագրի ձևի և բովանդակության միջոցով) պայմանավորում են անձի վերաբերմունքը բանակի նկատմամբ՝ անկախ այնտեղ տիրող օբյեկտիվ իրավիճակից: Սա նշանակում է, որ բանակ զորակոչված անձը կարող է սթրես ապրել բանակի նկատմամբ նախապես ունեցած բացասական դիրքորոշման հետևանքով:

Նշված խնդրի լուծման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում մշակվել է «Հայրենիքի պաշտպանությանը մասնակցելու» ծանուցագրի ձևանմուշ, որը քննարկվել է նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին առընթեր զինծառայողների իրավունքների հարցերով փորձագիտական խորհրդի՝ 2017 թվականի մարտի 2-ին տեղի ունեցած նիստում՝ խորհրդի անդամ հոգեբանների մասնակցությամբ[218]:

Այսպիսով՝ բացակայում է զինապարտ քաղաքացիներին պատշաճ ծանուցելու գործընթացը կանոնակարգող, այդ ընթացքում պաշտոնատար անձանց իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը սահմանող, ծանուցագրի ձևը և դրանում ներառվող տեղեկությունների շրջանակը հստակեցնող իրավական ակտ: Արդյունքում՝ զինապարտների համար որոշակի չէ ծանուցվելու գործընթացը, պատշաճ ծանուցված լինելու կամ չլինելու հանգամանքը, իսկ զինվորական կոմիսարիատներում ծանուցագրերը կազմվում են տարբեր ձևերով, բացակայում է միատեսակ իրավակիրառ պրակտիկան:

Անհրաժեշտ է կանոնակարգել զինապարտ քաղաքացիներին պատշաճ ծանուցելու գործընթացը, այդ թվում՝ սահմանել պաշտոնատար անձանց իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը, ծանուցագրի ձևը և դրանում ներառվող տեղեկությունների շրջանակը:

Անհրաժեշտ է նաև պարտադիր զինվորական ծառայության զորակոչվող քաղաքացուն փաստաթղթային կամ էլեկտրոնային եղանակով ծանուցելիս նրան տրամադրել նաև զինվորական հաշվառման և զինվորական ծառայության ընթացքում զինապարտի իրավունքների և պարտականությունների մասին տեղեկատվական ուղեցույց:

2. Զինվորական գրքույկի, զինապարտի կցագրման վկայականի ձևերն ու դրանք լրացնելու, դրանց տրամադրման հարցերի իրավակարգավորման բացակայությունը

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ զինված ուժերի անդամների մարդու իրավունքների մասին թիվ (2010)4 հանձնարարականի 7-րդ կետի համաձայն 18 տարին չլրացած քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանությունը պետք է լինի անդամ պետությունների հատուկ ուշադրության կենտրոնում:

Այս առումով նախազորակոչային տարիքի զինապարտների կցագրման, ինչպես նաև զինվորական ծառայություն անցնող և պահեստազոր արձակված քաղաքացիներին զինվորական հաշվառման վերցնելու, զինվորական հաշվառումից հանելու և դրանց հետ

[218] Ծանուցագրի ձևանմուշը ներկայացվել է ՀՀ պաշտպանության նախարարությանը:

կապված այլ իրավահարաբերությունների պատշաճ կարգավորումն ունի կարևոր նշանակություն:

2017 թվականի ընթացքում զինվորական հաշվառման գործընթացի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը ստացել է գրավոր բողոքներ՝ զինվորական ծառայության մեջ գտնված զինծառայողների զինվորական գրքույկներում մարտական գործողություններին մասնակցած լինելու մասին գրառումներ չկատարելու, կատարված գրառումներում «անվավեր» նշում կատարելու կամ այդ գրառումները ջնջելու վերաբերյալ: Խնդրին անմիջական ծանոթանալու նպատակով Մարդու իրավունքների պաշտպանն անձամբ ընդունել է զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին, լսել նրանց մտահոգությունները: Ստացված բողոքներով Մարդու իրավունքների պաշտպանը սկսել է նաև քննարկման ընթացակարգ:

Նշված խնդրի վերաբերյալ տեղեկություններ են տարածվել նաև զանգվածային լրատվության միջոցներով[219]: Մասնավորապես, հրապարակված տեղեկությունների համաձայն մարտական գործողությունների մասնակից բազմաթիվ զինծառայողներ զորացրվում են զինգրքույկներում մարտական գործողություններին իրենց մասնակցության մասին գրառումները կա՛մ ջնջված, կա՛մ փոփոխված՝ անվավեր նշումներով, մի շարք դեպքերում էլ ուղղակի առանց համապատասխան գրառման:

ՀՀ պաշտպանության նախարարության պարզաբանումների համաձայն՝ զինվորական հաշվառման փաստաթղթերում և զինվորական գրքույկներում մարտական գործողություններին մասնակցելու վերաբերյալ գրառումներ չկատարելու մասին 2017 թվականի ընթացքում ՀՀ զինվորական կոմիսարիատ բողոք է ներկայացրել 67 քաղաքացի, իսկ ՀՀ պաշտպանության նախարարության թեժ գծին ստացվել է 285 բանավոր բողոք:

Նշված խնդրի կարգավորման համար իրավասու պետական մարմինը ձևավորել է հանձնաժողովներ, հանձնարարվել է հստակեցնել մարտական հերթապահություն իրականացրած և մարտական գործողություններին մասնակցած պարտադիր ժամկետային զինծառայողների անվանացուցակը:

ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած տեղեկությունների համաձայն՝ նշված գործընթացը նախատեսվում է կարգավորել 2017 թվականին ընդունված «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ նոր օրենքի կիրարկումն ապահովելու շրջանակներում՝ զինվորական հաշվառման նոր իրավակարգավորումների շրջանակներում:

Անհրաժեշտ է նշել նաև, որ «Պաշտպանության մասին» ՀՀ նոր օրենքով առաջին անգամ նախատեսվել է ստեղծել զինվորական հաշվառման էլեկտրոնային կառավարման համակարգ, որը վարելու է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը:

Կարծում ենք, որ զինվորական հաշվառման էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրմամբ կբարձրանա զինվորական հաշվառման գործընթացի արդյունավետությունը:

---

[219] Հոդվածները հասանելի են հետևյալ հղումներով՝ www.azatutyun.am/a/28269835.html, www.tert.am/am/news/2017/01/27/zingrquyk/2261168, www.aravot.am/2017/01/18/846327/, www.a1plus.am/1517936.html, http://razm.info/95742, www.aysor.am/am/news/2017/02/02/ՄԻՊ/1205248 և այլն:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է ՀՀ պաշտպանության նախարարի նորմատիվ հրամանով սահմանել զինապարտի կցագրման վկայականի, զինվորական գրքույկի ձևերն ու դրանք լրացնելու կարգը, ինչպես նաև կարգավորել դրանց տրամադրման հետ կապված հարաբերությունները, որը կապահովի զինվորական հաշվառման փաստաթղթերի միատեսակությունը, կսահմանի զինվորական հաշվառման փաստաթղթերում ներառվող տեղեկությունների հստակ շրջանակ և դրանք լրացնելու կարգ և իրավակիրառ պրակտիկան կդարձնի առավել հստակ և կանխատեսելի։

3. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ընթացքում զինապարտների առողջության պահպանումը և պատշաճ բժշկական քննությունը

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ զինված ուժերի անդամների մարդու իրավունքների մասին թիվ (2010)4 հանձնարարականի համաձայն զինված ուժերի անդամներն ունեն առողջության պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի առողջության պահպանման իրավունք:

Մարդու առողջության պահպանման սահմանադրական իրավունքի իրականացումն ապահովող բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման, իրավական, տնտեսական և ֆինանսական հիմունքները սահմանված են «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքով:

2017 թվականի ընթացքում՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների գերակշիռ մասն առնչվել է զորակոչի ընթացքում զինապարտներին պատշաճ բժշկական հետազոտության ենթարկելու, բժշկական և ռազմաբժշկական փորձաքննություն իրականացնող հանձնաժողովների որոշումների (եզրակացության) արդյունքների հիմնավորվածությամբ պայմանավորված այդ որոշումների բողոքարկման և պարտադիր զինվորական ծառայության զորակոչից առողջական վիճակի պատճառով տարկետման իրավունքների տրամադրման խնդիրներին:

Բողոքների քննարկման ընթացքում գրավոր պարզաբանումներ են պահանջվել ՀՀ պաշտպանության նախարարությունից, իրականացվել են այցելություններ զինվորական հոսպիտալներ, Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչները ներկա են գտնվել Կենտրոնական բժշկական հանձնաժողովի և Պաշտպանության նախարարության Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի նիստերին:

Բողոքներով արձանագրված յուրաքանչյուր դեպքում զորակոչի ընթացքում պարտադիր է ստուգել զինապարտ քաղաքացու առողջական փաստացի վիճակը և հավաստիանալ նրա մոտ զինվորական ծառայության հետ անհամատեղելի հիվանդության առկայության կամ բացակայության մասին:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ չնայած այն հանգամանքին, որ պետությունն է որոշում զորակոչիկների առողջության և պիտանելիության չափանիշները, սակայն զորակոչիկները պետք է ֆիզիկապես և հոգեպես պատրաստ լինեն զինվորական ծառայության առանձնահատկություններով պայմանավորված փոփոխությունների մարտահրավերներին, ինչպես նաև զինված ուժերի անդամներին բնորոշ պարտականությունների և պատասխանատվության բարձրացմանը: Երիտասարդ առողջ մարդու համար զինվորական ծառայությունը կարող է որևէ խնդիր

չառաջացնել, մինչդեռ այն կարող է լուրջ բեռ դառնալ անձի համար, ով առողջական խնդիրների պատճառով չունի բավարար ֆիզիկական տոկունություն: Հետևաբար, հաշվի առնելով զինվորական ծառայության պահանջները, **պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն ներդնելու զորակոչիկի փաստացի առողջական վիճակը բժշկական փորձաքննությամբ ստուգելու չափանիշներ**, որպեսզի նրանց առողջությունը զինվորական ծառայության ընթացքում վտանգի չենթարկվի: Զինվորական բժշկական հանձնաժողովներն իրենց գործունեությունը պետք է այնպես կազմակերպեն, որպեսզի պարտադիր զինվորական ծառայության համար առողջական խնդիրների պատճառով ոչ պիտանի անձինք չզորակոչվեն զինվորական ծառայության:[220]

2017 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքների ուսումնասիրության և քննարկման արդյունքում արձանագրվել են դեպքեր, երբ նշանակված բժշկական հետազոտության միջոցով հնարավոր չի եղել մանրամասն օբյեկտիվ տեղեկություն ստանալ զորակոչիկի առողջական վիճակի մասին:

Օրինակ՝ զորակոչիկը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով տեղեկացրել է, որ ունի ողնաշարի ճողվածքներ, զինկոմիսարիատից ստացել է ուղեգիր և ռենտգեն հետազոտություններ անցել բժշկական կենտրոններում, սակայն այդ հետազոտությունների արդյունքում իր մոտ ողնաշարի ճողվածք չի հայտնաբերվել:

Բողոքի քննարկման և ուսումնասիրության, այդ թվում՝ Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների կողմից Կենտրոնական բժշկական հանձնաժողով կատարած այցելության արդյունքում պարզվել է՝

1. Զինվորական ծառայության համար պիտանելիությունը որոշելու նպատակով զինվորական կոմիսարիատի բժշկական հանձնաժողովի կողմից զորակոչիկն ուղեգրվել է բժշկական կենտրոն՝ ստացիոնար հետազոտման: Ռենտգեն հետազոտությունների արդյունքում դիմումատուի մոտ ախտորոշվել է Ողնաշարի գոտկասրբանային հատվածի դեգեներատիվ դիստրոֆիկ փոփոխությունների սկզբնական նշաններ՝ ձախակողմյան արմատիկային թեթև համախտանիշով:

2. 2017 թվականի հունվարի 19-ին դիմումատուն երկրորդ անգամ ներկայացվել է Կենտրոնական բժշկական հանձնաժողովի փորձաքննությանը: Փորձաքննության ընթացքում հանձնաժողովի անդամներն ու Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներն ուսումնասիրել են դիմումատուի անձնական գործը, ինչպես նաև դիմումատուի կողմից ներկայացված՝ այլ բժշկական կենտրոնում իր նախաձեռնությամբ անցած մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիկ (ՄՌՏ) հետազոտության ընթացքում հայտնաբերված ողնաշարային ճողվածքների լուսանկարները:

Արդյունքում՝ զորակոչիկը, ՀՀ պաշտպանության նախարարի 2013 թվականի ապրիլի 8-ի թիվ 410-ն հրամանի 1-ին հավելվածի 16-րդ հոդվածի «բ» կետի 1-ին սյունակի պահանջների համաձայն, ճանաչվել է ժամանակավորապես ոչ պիտանի զինվորական ծառայությանը, որի համար հիմք է ընդունվել այլ բժշկական կենտրոնում անցած մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիկ (ՄՌՏ) հետազոտության արդյունքները, քանի որ ռենտգեն հետազոտությամբ հնարավոր չէր հստակ պարզել ողնաշարի ճողվածքների առկայությունը, դիրքը և չափերը:

---

[220] Տե՛ս Կայանկինն ընդդեմ Ռուսաստանի վճիռը, 2010 թվականի մայիսի 11, գանգատ թիվ 24427/02, կետ 87, https://hudoc.echr.coe.int/eng#{"itemid":["001-97214"]}

Հետևաբար՝ անհրաժեշտ է բժշկական փորձաքննությունն անցկացնել առավել թիրախային գործիքակազմով՝ ապահովելով բժշկական հետազոտությունների միջոցով զորակոչիկի առողջական վիճակի վերաբերյալ մանրամասն և հստակ տեղեկություններ ստանալու գործընթացի արդյունավետությունը:

2017 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքների քննարկման արդյունքում *արձանագրվել են նաև դեպքեր*, երբ զինծառայողը զինվորական ծառայության ընթացքում վաղաժամկետ արձակվել է ծառայությունից այնպիսի հիվանդությամբ, որն ախտորոշվել էր նաև մինչև զորակոչվելը կամ զորակոչի ընթացքում:

ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած տեղեկությունների համաձայն՝ 2017 թվականի ընթացքում 24 պարտադիր ժամկետային զինծառայողներ ժամկետից շուտ արձակվել են զինվորական ծառայությունից հիվանդության (դրա զարգացման, սրացման) պատճառով, որն ախտորոշվել էր զորակոչելու ժամանակ:

Օրինակ՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով զինծառայողի ծնողը տեղեկացրել է, որ որդին 2017 թվականի մայիսի 21-ին «մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիա (ՄՌՏ)» հետազոտություն է անցել մի քաղաքացիական բժշկական կենտրոնում, իսկ մայիսի 23-ին՝ քաղաքացիական մեկ այլ բժշկական կենտրոնում: Դիմումատուն տեղեկացրել է նաև, որ 2017 թվականի հունիսի 1-ին որդին «Համակարգչային տոմոգրաֆիա» հետազոտություն է անցել Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալում: Բժշկական հետազոտությունների արդյունքում զինապարտի մոտ հայտնաբերվել է գլխուղեղի ծավալային գոյացություն:

Դիմումատուն խնդրել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունն իր որդուն պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից ազատելու և պահեստազոր արձակելու հարցում:

Բողոքի քննարկման ընթացքում զինծառայողը 2017 թվականի հուլիսի 7-ին ընդունվել է ստացիոնար հետազոտման և բուժման համապատասխան զինվորական հոսպիտալ, կատարվել են անհրաժեշտ հետազոտությունները և բժիշկ-մասնագետների կոնսուլտացիաները, որոնց արդյունքում զինծառայողի մոտ ախտորոշվել է «Ռատկենի գրպանի կիստա՝ հորմոնալ խանգարումներով, վիճակ հեմոռագիկ պրոկտիտից՝ բարակ և հաստ աղիների հիպերմոտոր դիսկինեզիայից հետո՝ մոտոր-էվակուատոր ֆունկցիայի արագացմամբ:

2017 թվականի հուլիսի 12-ին ՀՀ պաշտպանության նախարարության կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի որոշմամբ, համաձայն ՀՀ պաշտպանության նախարարի 2013 թվականի ապրիլի 8-ի թիվ 410-Ն հրամանի 14-րդ հոդվածի «բ» և 30-րդ հոդվածի «գ» կետերի, ճանաչվել է ոչ պիտանի զինվորական ծառայությանը:

Քննարկվող իրավիճակում զինծառայողի մոտ առողջական խնդիրն առկա էր նաև զորակոչի ընթացքում:

Այս կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մատնանշելով նաև ձևավորված կայուն պրակտիկան Կայանկինն ընդդեմ Ռուսաստանի գործով դիրքորոշում է հայտնել, որ որպես ընդհանուր կանոն՝ պետությունը պարտավոր է զորակոչիկների համար սահմանել առողջական վիճակի չափորոշիչներ: Այնուամենայնիվ,

զորակոչիկների ֆիզիկական և մտավոր առողջությունը պետք է բավարարեն զինված ուժերի անդամներին ներկայացվող պահանջներին և զինվորական կյանքի առանձնահատկություններին: Պետությունները պարտավոր են ստեղծել զորակոչիկների առողջական վիճակի բժշկական քննության արդյունավետ համակարգ, որը վտանգի չի ենթարկի զինապարտների առողջությունը և արժանապատվությունը զինվորական ծառայության ընթացքում: Հետևապես, պետությունում գործող ռազմաբժշկական հանձնաժողովները պետք է իրենց գործունեությունն ու լիազորություններն իրականացնեն այնպես, որ առողջական խնդիրների պատճառով ոչ պիտանի որևէ զորակոչիկ չզորակոչվի զինված ուժեր[221]:

2017 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմ ներկայացված դիմումների քննարկման արդյունքում արձանագրվել են դեպքեր, երբ զորակոչի ընթացքում զորակոչիկն անցել է մի քանի բժշկական հետազոտություն, որոնց արդյունքներն էականորեն տարբերվել են միմյանցից, և Կենտրոնական բժշկական հանձնաժողովը զորակոչիկի պիտանելիության վերաբերյալ որոշում չի կայացրել: Այս պրակտիկան իրավաչափ համարվել չի կարող:

2017 թվականին դեռևս գործող «Զինապարտության մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև արդեն իսկ ուժի մեջ մտած «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» նոր օրենքով զորակոչիկի՝ առողջական վիճակի փորձաքննության արդյունքում զինվորական ծառայության պիտանելիության վերաբերյալ որոշում չկայացնելու հնարավորություն նախատեսված չէ:

Բացի այդ, ՀՀ պաշտպանության նախարարի 2013 թվականի ապրիլի 8-ի թիվ 410-Ն հրամանի (այսուհետ՝ Հրաման) հավելվածի 26-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանվում են Կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից զորակոչիկների առողջական վիճակի մասին գրավոր եզրակացության սպառիչ տեսակները: Յուրաքանչյուր դեպքում Կենտրոնական բժշկական հանձնաժողովը պետք է տրամադրի հետևյալ եզրակացություններից մեկը՝ ա) պիտանի է զինվորական ծառայությանը (կամ պիտանի զինվորական ծառայության՝ սահմանափակումով), բ) կարիք ունի տարկետում ստանալու առողջական վիճակի պատճառով՝ բուժման նպատակով, գ) ժամանակավորապես ոչ պիտանի է պարտադիր զինվորական ծառայության համար՝ առողջական վիճակի պատճառով, դ) ոչ պիտանի է խաղաղ ժամանակ զինծառայության համար, ե) ոչ պիտանի են զինծառայության համար՝ հանելով զինվորական հաշվառումից:

Հետևաբար, մինչև զորակոչի ավարտը զորակոչիկի առողջական վիճակի փորձաքննության արդյունքում պետք է կայացվի նրա պիտանելիության վերաբերյալ համապատասխան որոշում: Այն դեպքերում, երբ մինչև զորակոչի ավարտը հնարավոր չի լինում որոշել զորակոչիկի պիտանելիությունը զինվորական ծառայությանը, Կենտրոնական բժշկական հանձնաժողովը, կարծում ենք, պետք է եզրակացություն ներկայացնի Հանրապետական զորակոչային հանձնաժողով՝ առաջարկելով վերջինիս տրամադրել տարկետում:

Միևնույն ժամանակ հարկ է նկատի ունենալ, որ ո՛չ օրենքով, ո՛չ ՀՀ պաշտպանության նախարարի 2013 թվականի ապրիլի 8-ի թիվ 410-Ն հրամանով

[221] Տե՛ս Կայանկինն ընդդեմ Ռուսաստանի գործը, 87-րդ կետ, https://hudoc.echr.coe.int/eng#{"fulltext":["\"CASE OF KAYANKIN v. RUSSIA\""],"itemid":["001-97214"]}

հաստատված «Զինապարտների և զինծառայողների առողջական վիճակի փորձաքննության» կարգում նմանատիպ դեպքերի համար կարգավորումներ նախատեսված չեն:

Առաջարկվում է «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով սահմանված քաղաքացու առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության, հետազոտման և փորձաքննության ուղեգրման կարգերով հստակ կանոնակարգել նշված խնդիրը:

2017 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումների ուսումնասիրության արդյունքում արձանագրվել են դեպքեր, երբ մասնավոր բժշկական կենտրոնները հրաժարվում են հետազոտության ենթարկել զորակոչային տարիքի հասած անձանց կամ տրամադրել նրանց հետազոտության արդյունքները:

Օրինակ՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով զինծառայողի ծնողը տեղեկացրել է, որ որդին ունի տեսողության խնդիրներ: Ըստ դիմումատուի՝ 2017 թվականի սեպտեմբերի 19-ին որդին հետազոտություն է անցել պոլիկլինիկայում, որտեղ նրա մոտ ախտորոշվել է Աջ աչքի ցածր ճնշման գլաուկոմա, ձախ աչքի ցածր ճնշման գլաուկոմայի կասկած, և լրացուցիչ հետազոտություն և բուժում է նշանակվել:

Նույն օրը սեփական նախաձեռնությամբ տեսադաշտերի համակարգչային հետազոտություն անցնելու նպատակով քաղաքացին դիմել է մեկ այլ քաղաքացիական ակնաբուժական կլինիկա, սակայն կլինիկայում հրաժարվել են հետազոտություն իրականացնել:

2017 թվականի նոյեմբերի 8-ին սեփական նախաձեռնությամբ գործիքային հետազոտություն անցնելու նպատակով քաղաքացին դիմել է ակնաբուժական կենտրոն, որտեղ իրականացվել է «Աչքի ցանցաթաղանթի նյարդաթելերի տոմոգրաֆիա» հետազոտություն: Դիմումատուի պնդմամբ՝ հետազոտության արդյունքում որդու մոտ ախտորոշվել է «Աջ աչքի վերին նյարդաթելերի դեպրեսիա (օրգանական փոփոխություն)», սակայն վերջինիս մոտ «Աջ աչքի գլաուկոմա» հիվանդության առկայության մասին քաղվածք ամբուլատոր հսկման քարտից հրաժարվել են տրամադրել:

Նշված և նմանատիպ դեպքերի կապակցությամբ Պաշտպանի աշխատակազմում քննարկման ընթացակարգերի շրջանակներում գրավոր պարզաբանումներ են պահանջվել ՀՀ առողջապահության նախարարությունից և ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմնից:

Առողջապահական տեսչական մարմինը Առողջապահության նախարարին ուղղված՝ Պաշտպանի գրությամբ բարձրացված հարցերի կապակցությամբ նախաձեռնել է վարչական վարույթ և բժշկական հիմնարկներում հայտնաբերել է հետևյալ խախտումները՝

ա) Ընկերության կողմից զորակոչիկին մատչելի ձևով չի տրամադրվել տեղեկություն՝ ընկերության տնօրենի 2017 թվականի հուլիսի 17-ի թիվ 184 հրամանով սահմանված գնացուցակի 1-ին տողի համաձայն 2017 թվականի նոյեմբերի 8-ին վճարված 30000 ՀՀ դրամի դիմաց իրականացված ցանցաթաղանթային շերտային համակարգչային ախտորոշման վերաբերյալ (OST) վերաբերյալ.

բ) Ընկերությունում զորակոչիկի բժշկական օգնության և սպասարկման դիմելու վերաբերյալ լիարժեք չեն լրացվել, վարվել և շրջանառվել բժշկական փաստաթղթեր.

գ) Ցանցաթաղանթային շերտային համակարգչային ախտորոշման (OST) կաբինետի բժշկի կողմից չի վարվել սահմանված կարգով հաստատված գրանցամատյան:

դ) Զորակոչիկի վերաբերյալ Ընկերությունում վարվող բժշկական քարտը չի համապատասխանել սահմանված կարգով հաստատված երեխայի (տղա) բժշկական հսկողության ամբուլատոր քարտի ձևաչափին:

Արդյունքում՝ Առողջապահական տեսչական մարմինը եզրահանգել է, որ չեն պահպանվել առողջական վիճակի մասին տեղեկություն ստանալու, բուժաշխատողի կողմից պացիենտի վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր վարելու անձի իրավունքները:

4. Մի շարք հիվանդություններով զինվորական ծառայությանը սահմանափակումով պիտանի ճանաչված զորակոչիկներին առողջական վիճակի պատճառով տարկետման իրավունքը

Մի շարք հիվանդություններով զինվորական ծառայությանը սահմանափակումով պիտանի ճանաչված զորակոչիկներին առողջական վիճակի պատճառով տարկետման իրավունքի պաշտպանության խնդրին մանրամասն անդրադարձ է կատարվել նաև Մարդու իրավունքների պաշտպանի 2016 թվականի տարեկան հաղորդմամբ:

Մասնավորապես նշվել է, որ բացակայում է «հիվանդությունների որակական փունջ» (այլ ոչ թե որոշակի քանակի հիվանդություններ) ունենալու դեպքում անձին զինվորական ծառայության զորակոչելու գնահատման մեխանիզմը և իրավական հիմքերը: Բժշկական հանձնաժողովը «հիվանդությունների որակական փունջ» չունենալու դեպքում այդ հիվանդությունները գնահատում է առանձին-առանձին՝ այլ ոչ թե ընդհանուր վերցրած և արդյունքում ստացվում է, որ անձն ենթակա է զինվորական ծառայության: Սակայն, փաստացի, զինապարտը պիտանի չէ, և նույնիսկ մեծ հավանականություն կա, որ ծառայության ընթացքում ձեռք կբերի հաշմանդամություն կամ ավելի կխորանան առկա հիվանդությունները:

ՀՀ պաշտպանության նախարարության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ 2017 թվականի ընթացքում զինվորական ծառայության համար ոչ պիտանի զորակոչիկների զինվորական ծառայության զորակոչելու դեպքեր չեն արձանագրվել, սակայն այդ տեղեկությունների համաձայն, ինչպես արդեն նշվել է, 24 պարտադիր ժամկետային զինծառայողներ արձակվել են զինվորական ծառայությունից հիվանդության (դրա զարգացման, սրացման) պատճառով, որն ախտորոշվել էրկառավարության զինվորական ծառայության ընթացքում:

Այս կապակցությամբ առաջարկվում է քաղաքացու առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության, հետազոտման և փորձաքննության ուղեգրման կարգերը սահմանելու մասին ՀՀ կառավարության որոշմամբ՝

1. կանոնակարգել զինվորական ծառայության ընթացքում մի շարք հիվանդությունների (սահմանափակումով) առկայության դեպքում զինծառայողի պիտանելիության որոշման հիմքերը և կարգը,

2. սահմանել «հիվանդությունների որակական փունջ» (այլ ոչ թե որոշակի հիվանդությունների քանակ) ունենալու դեպքում անձին զինվորական ծառայության զորակոչելու գնահատման մեխանիզմը և իրավական հիմքերը,

3. վերանայել և հստակեցնել հիվանդությունների սահմանված ցանկը,

4. խստացնել հսկողությունը բժշկական և ռազմաբժշկական փորձաքննությունների իրականացման նկատմամբ:

5. Բժշկական ու ռազմաբժշկական փորձաքննություն իրականացնող հանձնաժողովները

2017 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված բողոքների շրջանակներում ռազմաբժշկական և բժշկական փորձաքննություն իրականացնող հանձնաժողովների որոշումների, եզրակացությունների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 2017 թվականին գործող իրավակարգավորումներով հստակ սահմանված չեն եղել հանձնաժողովների կողմից կայացվող որոշումներին (եզրակացություններին) ներկայացվող պահանջները և դրանցում պարտադիր ներառվող տեղեկությունների շրջանակը:

Մինչդեռ՝ ՀՀ զինապարտ քաղաքացիների վերաբերյալ ռազմաբժշկական և բժշկական փորձաքննության արդյունքներով կայացված որոշումների հիմնավորվածության, նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ մասերի, բողոքարկման կարգի և ժամկետների ու այլ պարտադիր նշումների, ինչպես նաև հստակ կառուցվածքի առկայությունն անհրաժեշտ և կարևոր են զինապարտների իրավունքների պաշտպանության ապահովման տեսանկյունից:

Նշված խնդրին լուծում տալու նպատակով Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացրած օրենսդրական առաջարկի հիման վրա «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրվել է, որ. «Քաղաքացու բժշկական փորձաքննության արդյունքներով տրվում է քաղաքացու առողջական վիճակի վերաբերյալ եզրակացություն, որը կազմված է ներածական, նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ մասերից: Եզրակացությունն առնվազն ներառում է քաղաքացու առողջական վիճակի ամփոփ նկարագրությունը, քաղաքացու պիտանիության աստիճանը զինվորական ծառայությանը, նրա առողջական վիճակին հակացուցված զինվորական ծառայության պայմանները, եզրակացության բողոքարկման կարգն ու ժամկետները:»:

ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած տեղեկությունների համաձայն՝ 2017 թվականի ընթացքում ՀՀ ՊՆ իրավաբանական վարչությունում ստացվել է Կենտրոնական բժշկական հանձնաժողովի որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին մեկ հայցադիմում և ընդդեմ ՀՀ ՊՆ ու Հանրապետական զորակոչային հանձնաժողովի՝ տարկետում տրամադրելուն և առողջական վիճակով պայմանավորված բժշկական փորձաքննություն իրականացնելուն պարտավորեցնելու պահանջի մասին 7 հայցադիմում, որոնց քննությունն ընթացքի մեջ է:

6. Բժշկական փաստաթղթերը ստանալու իրավունքը

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ զինված ուժերի անդամների մարդու իրավունքների մասին թիվ (2010)4 հանձնարարականի 50-րդ կետի համաձայն

զինված ուժերի յուրաքանչյուր գործող կամ նախկին անդամ իրավունք ունի հարցմամբ ստանալ իրեն առնչվող տեղեկատվությունը, անձնական տվյալները, այդ թվում՝ բժշկական բնույթի տեղեկությունները:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի մատչելի ձևով ստանալ տեղեկություն իր առողջական վիճակի, հետազոտությունների արդյունքների, հիվանդության ախտորոշման և բուժման մեթոդների, դրանց հետ կապված ռիսկի, բժշկական միջամտության հնարավոր տարբերակների, հետևանքների և բուժման արդյունքների մասին (7-րդ հոդված):

2017 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին են հասցեագրվել բողոքներ առողջական վիճակի, բժշկական հետազոտությունների արդյունքների, հիվանդության ախտորոշման և բուժման մեթոդների, արդյունքների վերաբերյալ տեղեկություն, ինչպես նաև ռազմաբժշկական ու բժշկական փորձաքննության արդյունքներով կայացված որոշումները և այլ բժշկական փաստաթղթերը չտրամադրելու վերաբերյալ:

Այս խնդրին անդրադարձ է կատարվել նաև Մարդու իրավունքների պաշտպանի 2016 թվականի տարեկան հաղորդմամբ:

Առաջարկվել էր օրենքով սահմանել, որ զինապարտն իրավունք ունի ծանոթանալ իր առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության ընթացքին և ստանալ դրանց արդյունքներով տրված եզրակացություններն ու այլ փաստաթղթերը, ներկայացնել առաջարկություններ, բացատրություններ կամ առարկություններ, օրենքով սահմանված կարգով բողոքարկել իր առողջական վիճակի վերաբերյալ տրված եզրակացությունը:

Մարդու իրավունքների պաշտպանի առաջարկի հիման վրա «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանվել է. «Քաղաքացին իրավունք ունի ծանոթանալու իր առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության ընթացքին և ստանալու դրանց արդյունքներով տրված եզրակացություններն ու այլ փաստաթղթերը, ներկայացնելու առաջարկություններ, բացատրություններ կամ առարկություններ, սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված կարգով բողոքարկելու իր առողջական վիճակի վերաբերյալ տրված եզրակացությունը:»:

ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած տեղեկությունների համաձայն՝ զորակոչիկներին կամ նրանց օրինական ներկայացուցիչներին բժշկական հետազոտությունների արդյունքներն ամրագրող փաստաթղթերը չտրամադրելու վերաբերյալ 2017 թվականին ՀՀ ՊՆ թեժ գիծ է դիմել 18 քաղաքացի, որոնք լուծվել են աշխատանքային կարգով:

7. Միևնույն զորամասում ծառայելու արտոնությունը

2017 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են դիմումներ՝ տարբեր ժամանակահատվածներում զորակոչվող եղբայրներին միևնույն զորամաս զորակոչելու վերաբերյալ: Զորակոչիկների ընտանիքների անդամները մտահոգություն են հայտնել այն մասին, որ սոցիալական ծանր վիճակի պատճառով կամ

առողջական խնդիրներից ելնելով (հաշմանդամություն ունեցող ընտանիքների անդամներ)՝ հնարավորություն չեն ունենա այցելելու տարբեր զորամասեր զորակոչված իրենց որդիներին:

2017 թվականին գործող «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված էր, որ զինված ուժեր կամ այլ զորքեր *միաժամանակ զորակոչվող* եղբայրները, իրենց ցանկությամբ, ծառայության են զորակոչվում միևնույն զորամաս: Նշված կարգավորման համաձայն՝ եթե եղբայրները ծառայության էին զորակոչվում տարբեր զորակոչերի ընթացքում, ապա նրանք չէին կարող օգտվել միևնույն զորամասում ծառայության անցնելու արտոնությունից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ կարծիք ներկայացնելիս Մարդու իրավունքների պաշտպանն առաջարկել էր միևնույն զորամասում ծառայելու արտոնություն տրամադրել նաև տարբեր զորակոչերի ընթացքում զորակոչվող եղբայրներին, եթե պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող եղբոր ծառայության ժամկետը չի գերազանցում 18 ամիսը:

Պաշտպանի առաջարկի հիման վրա «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» 26-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրվել է, որ. «Հայտարարված զորակոչի ընթացքում շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչված եղբայրներն իրենց ցանկությամբ ծառայության են նշանակվում միևնույն զորամասում: Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող եղբայր ունեցող շարքային կազմի պարտադիր զինծառայողն իր ցանկությամբ ծառայության է նշանակվում եղբոր ծառայության վայրի զորամասում, եթե շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող եղբոր ծառայության ժամկետը չի գերազանցում 17 ամիսը:»:

ԳԼՈՒԽ 2. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԸՆԹԱՑՔՈՒՄ

1. Զինվորական ծառայության անցնելու իրավունքը

Միջազգային մի շարք փաստաթղթեր կարևորել են անձի՝ պետական ծառայության մեջ մտնելու հավասար հնարավորության իրավունքի ապահովման անհրաժեշտությունը:

Այսպես, 1948 թվականի դեկտեմբերի 12-ի ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր երկրում պետական ծառայության մտնելու հավասար հնարավորության իրավունք[222]:

1966 թվականի դեկտեմբերի 16-ի Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագրի (ուժի մեջ է մտել 1976 թվականի մարտի 3-ին) 25-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր քաղաքացի, առանց 2-րդ հոդվածում հիշատակվող որևէ խտրականության և անհիմն սահմանափակումների, պետք է իրավունք և հնարավորություն ունենա իր երկրում հավասարության ընդհանուր պայմաններով անցնել պետական ծառայության[223]:

[222] Universal Declaration of Human Rights, http://www.un.org/en/universal-declaration-human-rights/
[223] International Covenant on Civil and Political Rights, https://treaties.un.org/doc/Treaties/1976/03/1976 0323%2006-17%20AM/Ch_IV_04.pdf

«Զինված ուժերի անձնակազմի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի կողմից 2008 թվականին տպագրված ձեռնարկի՝ «Մարդու իրավունքների կարևորությունը զինված ուժերի անձնակազմի համար» գլխում (2-րդ գլուխ) նշված է, որ պայմանագրային հիմունքներով զինվորական ծառայության անցնող քաղաքացին՝ որպես հանրային ծառայության ընդունվող քաղաքացի, պետք է հնարավորություն ունենա օգտվելու հանրային ծառայության անցնող քաղաքացիների իրավունքներից[224]:

2017 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը բողոքներ է ստացել քաղաքացիներին զինվորական ծառայության ընդունելը մերժելու, ինչպես նաև զինվորական ծառայության անցնելու մասին պայմանագիր կնքելը մերժելու մասին որոշման օրինակը չտրամադրելու վերաբերյալ:

Օրինակ՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով քաղաքացին տեղեկացրել է, որ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարության համապատասխան տարածքային զինվորական կոմիսարիատ՝ պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու համար: Ըստ դիմումատուի՝ զորամասի հրամանատարությունը հրաժարվել է իր հետ զինվորական ծառայություն անցնելու մասին պայմանագիր կնքել, քանի որ ինքը նախկինում դատվածություն է ունեցել:

Քաղաքացին նշել է նաև, որ իրեն չի տրամադրվել զինվորական ծառայության անցնելու մասին պայմանագիր կնքելը մերժելու մասին որոշման օրինակը:

Այս հարցին Մարդու իրավունքների պաշտպանը անդրադարձել է նաև 2016 թվականի տարեկան հաղորդմամբ[225]:

Ըստ իրավասու մարմնի՝ քաղաքացու հետ պայմանագիր չի կնքվել ոչ նպատակահարմար լինելու պատճառով: Զինվորական ծառայություն անցնելու մասին պայմանագիր կնքելը մերժելու մասին որոշման օրինակը չտրամադրելու վերաբերյալ ՀՀ պաշտպանության նախարարությունը պատճառաբանել է նրանով, որ քաղաքացին զինվորական ծառայության անցնելու դիմում ներկայացնելուց առաջ 2009-2014 թվականներին արդեն իսկ պայմանագրային հիմունքներով ծառայել է ՀՀ զինված ուժերում, իսկ «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ միայն զինվորական ծառայություն անցնելու մասին առաջին պայմանագիրը կնքելը մերժելու մասին որոշումն է հանձնվում քաղաքացուն:

Նշված խնդրի կապակցությամբ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացրած կարծիքով առաջարկել է վերացնել վերը նշված սահմանափակումը, և օրենքով սահմանել, որ պայմանագիր կնքելը մերժելու դեպքում պետական լիազոր մարմինը պարտավոր է այդ մասին եռօրյա ժամկետում գրավոր ծանուցել քաղաքացուն՝ նշելով մերժման հիմքերը և պատճառները:

---

[224] Ձեռնարկ զինված ուժերի անձնակազմի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին, http://www.osce.org/hy/odihr/88572

[225] Տարեկան հաղորդում 2016թ. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին, 218-221 էջեր

Վերը նշված առաջարկն ամբողջությամբ ընդունվել է Պաշտպանության նախարարության կողմից, և ամրագրվել է «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում:

ՀՀ պաշտպանության նախարարության տրամադրած տեղեկությունների համաձայն 2017 թվականի ընթացքում պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունն ավարտելուց հետո պայմանագրային զինվորական ծառայության անցնելու համար դիմել են 168 պահեստազորայիններ, որոնցից 157-ը ներկայումս գտնվում են ծառայության մեջ, իսկ 11 պահեստազորայինի ընդունելությունն ընթացքի մեջ է: 2017 թվականի ընթացքում պայմանագրային զինվորական ծառայության վերականգնվելու խնդրանքով դիմել է 108 նախկին զինծառայող և 1 քաղաքացիական հատուկ ծառայող: ՀՀ պաշտպանության նախարարությունում 37-ի խնդրանքը բավարարվել է, 12-ը գտնվել են առավելագույն սահմանային տարիքում: 9 քաղաքացու դիմումները մերժվել են, քանի որ ԿՌԲՀ-ի կողմից ճանաչվել են զինվորական ծառայության համար ոչ պիտանի:

Առաջարկվում է խստացնել հսկողությունը «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով քաղաքացիներին զինվորական ծառայության ընդունելու և զինվորական ծառայություն անցնելու պայմանագիրը կնքելը մերժելու գործընթացի նկատմամբ:

2. Զինվորական ծառայությունից արձակվելու իրավունքը

2017 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են նաև դիմումներ պայմանագրային զինվորական ծառայությունից արձակվելու վերաբերյալ:

Օրինակ՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով զինապարտ քաղաքացին տեղեկացրել է, որ 2009 թվականին կնքել է զինվորական ծառայություն անցնելու մասին պայմանագիր և ուսումն ավարտելուց հետո ՀՀ զինված ուժերում անցել է պայմանագրային զինվորական ծառայության: 2017 թվականին զեկուցագիր է ներկայացրել զորամասի հրամանատարին՝ խնդրելով իրեն զինվորական ծառայությունից արձակել ՀՀ զինված ուժերի պահեստազոր՝ միաժամանակ հայտնելով իր պատրաստակամությունն ուսման հետ կապված ծախսերը փոխհատուցելու հարցում, սակայն զեկուցագրին ընթացք չի տրվել: Բողոքի քննարկման շրջանակներում իրավասու մարմինը կատարել է ուսման հետ կապված ծախսերի փոխհատուցման ենթակա գումարի հաշվարկ, զինծառայողի կողմից նշված գումարը սահմանված կարգով վճարելուց հետո վերջինս արձակվել է զինվորական ծառայությունից:

ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած տեղեկատվության համաձայն՝ 2017 թվականի ընթացքում մինչև պայմանագրի ժամկետի լրանալը ՀՀ ԶՈՒ պահեստազոր արձակվելու վերաբերյալ զեկուցագիր է ներկայացրել 54 պայմանագրային զինծառայող (ռազմաուսումնական հաստատությունների շրջանավարտներ):

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ պայմանագրային զինծառայողը զինվորական ծառայությունից արձակվում է մինչև պայմանագրի ժամկետը լրանալը զինվորական ծառայությունից արձակվելու զեկուցագիր ներկայացնելիս, եթե չունի սույն օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության չծառայած ժամկետ:

Նախարարների կոմիտեի Զինված ուժերի անդամների մարդու իրավունքների վերաբերյալ թիվ (2010)4 հանձնարարականի 16-րդ կետի բովանդակության համաձայն՝ զինված ուժերի անդամներն ունեն զինված ուժերից դուրս գալու իրավունք:

Եվրոպայի խորհրդի սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն Իռլանդիայի վերաբերյալ 2012 թվականի իր եզրակացություններում նշել է, որ անձն ունի աշխատանքը դադարեցնելու ազատություն (XIV-1 եզրակացություն, 435-րդ և 436-րդ էջեր):

Անհրաժեշտ է խստացնել հսկողությունը պայմանագրային զինծառայողների կողմից ծառայությունից արձակվելու գործընթացի նկատմամբ:

3. Զինծառայողների պատշաճ բժշկական օգնություն ստանալու իրավունքը

Հայաստանի Հանրապետությունում պետք է լիարժեք երաշխավորված լինի յուրաքանչյուրի, այդ թվում՝ զինծառայողների առողջության պահպանման իրավունքը Սա բխում է թե՛ Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններից[226], թե՛ ՀՀ Սահմանադրությունից և օրենքներից: Այս իրավունքն ունի այնպիսի հիմնարար նշանակություն, որ ենթադրում է պետության հիմնարար պարտականությունը՝ ուղղված զինծառայողների առողջության պահպանմանը: Դա պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ զորակոչված զինծառայողները գտնվում են պետության հատուկ հոգածության ներքո:2017 թվականի ընթացքում զինծառայողների, այդ թվում՝ նախկին զինծառայողների կողմից Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների ու դիմումների զգալի մասը վերաբերել են զինծառայողների պատշաճ բժշկական օգնություն և սպասարկում ստանալուն:

Սույն հաղորդման նախապատրաստական աշխատանքների իրականացման շրջանակում Պաշտպանության նախարարությունից տեղեկություններ են պահանջվել այն մասին, թե զորակոչված քանի զինծառայողի մոտ է մինչև զորակոչվելն առողջական վիճակի բժշկական հետազոտությունների արդյունքներով արձանագրվել վիրահատական միջամտության անհրաժեշտություն և նրանցից քանի՞սն են զինվորական ծառայության ընթացքում ստացել վիրահատական բժշկական օգնություն: ՀՀ պաշտպանության նախարարությունից հայտնել են, որ. Մինչև զորակոչվելն առողջական վիճակի բժշկական հետազոտությունների արդյունքներով արձանագրված վիրհատական միջամտության անհրաժեշտության դեպքում վիրահատությունը և բուժումն արվում է մինչև զորակոչվելը:

Հարկ է նկատի ունենալ, որ 2017 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին ևս բողոքներ չեն հասցեագրվել նախազորակոչիկներին անվճար և որակյալ բժշկական օգնության տրամադրելու վերաբերյալ, ***սակայն Պաշտպանին հասցեագրված որոշ բողոքների ուսումնասիրության և վերլուծության արդյունքում արձանագրվել է, որ նախազորակոչային և զորակոչային տարիքում համապատասխան բժշկական օգնություն և բուժում չտրամադրելու դեպքեր:*** Այդ զինծառայողներին Պաշտպանի աշխատակազմի և Պաշտպանության նախարարության աշխատակազմի հետ համագործակցության

[226] Օրինակ՝ «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» ՄԱԿ-ի միջազգային դաշնագրի 12-րդ հոդված, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի անդամ պետություններին ուղղված զինված ուժերի անդամների մարդու իրավունքների մասին թիվ (2010)4 հանձնարարական, որի «ԺԷ» կետի համաձայն՝ զինծառայողներն ունեն արժանապատիվ, անվտանգ և առողջության համար անվնաս աշխատանքային պայմանների իրավունք:

արդյունքում համապատասխան բժշկական օգնություն, այդ թվում՝ վիրահատական, տրամադրվել է զինվորական ծառայության ընթացքում:

Օրինակ՝ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են բողոքներ այն մասին, որ պարտադիր ժամկետային զինծառայողներն ունեն «քթի միջնապատի ծռվածություն» հիվանդությունը և համապատասխան վիրահատություն չի իրականացվել: Ակնհայտ է, որ նշված հիվանդությունն առաջացել է մինչև զինվորական ծառայության մեկնելը, և համապատասխան վիրահատական բուժումը առաջին հերթին պետք է կազմակերպվեր զինվորական կոմիսարիատների միջոցով:

Հարկ է նկատի ունենալ, որ ՀՀ պաշտպանության նախարարի 2013 թվականի ապրիլի 8-ի թիվ 410-Ն հրամանի 2-րդ հավելվածի 70-րդ հոդվածի 4-րդ պարբերության համաձայն՝ քթի միջնապատի ծռվածություն ունեցող զորակոչիկները, որոնց մոտ դիտվում է քթային շնչառության խանգարում փորձաքննվում են նույն հրամանի 1-ին հավելվածի 70-րդ հոդվածի «բ» կետով: Հրամանի 2-րդ հավելվածի 70-րդ հոդվածի 6-րդ պարբերության համաձայն՝ նման հիվանդություն ունեցող զորակոչիկներին զորակոչային տեղամասերին կցագրելիս նշանակվում է վիրաբուժական բուժում, իսկ զորակոչվելու ժամանակ, վիրահատությունից հրաժարվելու դեպքում, որոշում է ընդունվում զինվորական ծառայության համար պիտանիության մասին:

Առաջարկվում է բարձրացնել հսկողությունը բուժման կարիք ունեցող նախազորակոչիկների անվճար բժշկական օգնություն ստանալու իրավունքի ապահովման ուղղությամբ: Մասնավորապես, անհրաժեշտ է անձնական գործում նշագրումներ կատարել համապատասխան բուժման վերաբերյալ ուղեգիր տրամադրելու մասին:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ երկարամյա ծառայության կամ հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստացող նախկին զինծառայողները, զինվորական ծառայության ընթացքում ձեռք բերած հիվանդության կամ ստացած խեղման կամ վնասվածքի պատճառով զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամները բժշկական օգնությամբ ապահովվում են օրենքով սահմանված կարգով:

Պաշտպանին հասցեագրած բողոքների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ որոշակի դեպքերում ծառայության ընթացքում հիվանդություն ձեռքբերած նախկին զինծառայողները չեն օգտվում անվճար բժշկական սպասարկման իրավունքից: Մասնավորապես՝

1) Պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած այն քաղաքացիները, ովքեր զինվորական ծառայության ընթացքում ձեռք են բերել հիվանդություն, որը հիմք չի հանդիսացել նրանց ոչ պիտանի ճանաչելու համար, սակայն զորացրվել են ժամկետը լրանալու կապակցությամբ, չեն օգտվում անվճար բժշկական օգնություն ստանալու իրավունքից.

2) այն պայմանագրային զինծառայողները, ովքեր զինվորական ծառայությունից արձակվել են պահեստազոր ոչ թե երկարամյա ծառայության կամ ստացած խեղման, վնասվածքի, հիվանդության պատճառով, այլ կադրերի տրամադրության տակ գտնվելու ժամկետը լրանալու կապակցությամբ, չեն օգտվում անվճար բժշկական օգնությունից անգամ այն դեպքում, երբ հիվանդությունը ձեռք են բերել ծառայության ընթացքում:

ՀՀ Պաշտպանության նախարարի 2013 թվականի ապրիլի 8-ի թիվ 410-Ն հրամանի մեջ 2016 թվականին լրացվել է 72.1-րդ կետը, որի համաձայն՝ առողջական վիճակի վերաբերյալ գանգատի առկայության դեպքում բժշկական զննության ենթակա են նաև պարտադիր զինվորական ծառայության ժամկետը լրանալու կապակցությամբ զինվորական ծառայությունից արձակվող ժամկետային զինծառայողները:

Կարծում ենք, որ այս կարգավորումը բավարար չէ, քանի որ անորոշ է, թե այդ հետազոտությունից հետո, ինչ ընթացք է տրվում հայտնաբերված հիվանդությունը բուժելու համար, կամ ինչու՞ պայմանագրային զինծառայողները չպետք է օգտվեն այդ իրավունքից:

Ուստի առաջարկվում է Կառավարության որոշմամբ սահմանել, որ պարտադիր ժամկետային զինծառայողները ժամկետը լրանալու կապակցությամբ զինվորական ծառայությունից արձակվելու դեպքում իրավունք ունեն պահանջել հետազոտություն անցնել զորամասի բուժկետում կամ զինվորական հոսպիտալում: Բուժման կարիք պահանջող հիվանդության հայտնաբերման դեպքում նրանց տրվում է ուղեգիր անվճար բուժում ստանալու համար:

Անհրաժեշտ է ամրագրել նաև, որ եթե զինվորական ծառայության ժամկետում չի իրականացվում պլանային վիրահատության կարիք ունեցող զինծառայողների վիրահատությունը, ապա նրանց տրամադրում է ուղեգիր անվճար հիմունքներով այն իրականացնելու համար:

Համանման կարգավորում անհրաժեշտ է սահմանել նաև պայմանագրային զինծառայողների համար:

ԳԼՈՒԽ 3. ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Հայաստանի Հանրապետության զինված ուժերում մահվան և ինքնավնասման դեպքերը

Կյանքի իրավունքը, որպես հիմնարար արժեք, նախատեսված թե՛ ՀՀ կողմից վավերացված միջազգային փաստաթղթերով, թե ՀՀ Սահմանադրությամբ, բնական և անօտարելի է:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում պաշտպանական ոլորտի գերատեսչության կողմից ներկայացված տվյալների հիման վրա ուսումնասիրվել է 2017 թվականի ընթացքում զինծառայողների կյանքի իրավունքի պաշտպանության վիճակը:

Մասնավորապես՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված տվյալների համաձայն՝ 2017 թվականի ընթացքում գրանցվել է 75 զինծառայողի մահվան ելքով դեպք: Ընդ որում, մարտական հերթապահության ընթացքում զոհվել (մահացել) է 41 զինծառայող, այլ պայմաններում՝ 34:

Նշված դեպքերը տեղի են ունեցել հակառակորդի հարձակողական և դիվերսիոն հետախուզական խմբերի գործողությունների, դիպուկահարների կողմից արձակված կրակոցների հրետակոծության, մարտական հերթապահության կրման և զինվորական ծառայության անվտանգության ապահովման, զինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնների խախտումների, հիվանդությունների, ճանապարհատրանսպորտային ու դժբախտ պատահարների հետևանքով, ինչպես նաև անձնական (ընտանեկան խնդիրների պատճառով):

2017 թվականի ընթացքում գրանցվել է զինծառայողների կողմից ինքնավնասման 69 դեպք, որոնցից 85%-ը կատարվել են զինվորական ծառայության պարտականությունների իրականացման հետ կապված հանգամանքներում:

ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած տեղեկությունների համաձայն՝ մահացության և ինքնավնասման դեպքերի առնչությամբ անցկացվել են ծառայողական քննություններ, հետաքննություններ՝ պարզելու ծառայության կազմակերպման և իրականացման ժամանակ տեղ գտած թերություններն ու բացթողումները, դրանց նպաստող պայմանները, ինքնավնասում կատարած զինծառայողների հետ իրականացվել են անհատական դաստիարակչական աշխատանքներ, արձակվել են հրամաններ և նման դեպքերի կրկնությունը բացառելու նպատակով զորամասերի հրամանատարական կազմին կոնկրետ հանձնարարականներ են տրվել:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ զինված ուժերի անդամների մարդու իրավունքների մասին թիվ (2010)4 հանձնարարականի 7-րդ կետը սահմանում է, որ անդամ պետությունները պետք է ստեղծեն անկախ և արդյունավետ մեխանիզմներ զինծառայողների մահվան կամ նրանց կյանքի իրավունքի դեմ կատարված ոտնձգությունների պատշաճ քննության համար:

Հանձնարարականի համաձայն զինված ուժերի յուրաքանչյուր անդամի համար պետք է երաշխավորվի արդար դատաքննության իրավունքը:

Արձանագրված մահվան և ինքնավնասման դեպքերը պետք է դառնան դրանց պատճառների և նպաստող պայմանների խորը ուսումնասիրության ու համապատասխան կանխարգելիչ միջոցառումներ ձեռնարկելու հիմք:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել նշված դեպքերի կանխարգելման և ընդհանուր իրազեկվածության բարձրացման ուղղությամբ:

ԳԼՈՒԽ 4. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության զինված ուժերում, որպես կանոն, իրավական նորմերը կատարվում են կամավոր: Սակայն օրինական վարքագիծը հատուկ է ոչ բոլորին և մի շարք դեպքերում անհրաժեշտ է կիրառել հարկադրանքի միջոցներ: Դրանց կիրառումն անհրաժեշտ է զինված ուժերում օրինականության, կարգապահության և իրավակարգի ապահովման, բոլոր զինծառայողների իրավունքների և օրինական շահերի պահպանման նպատակով:

Զինվորական կարգապահության ամրապնդման հիմնական ուղղություններից է իրավազանց զինծառայողի նկատմամբ արդար և համարժեք կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառումը: Դրանք իրավաբանական պատասխանատվության միջոցներ են, որոնք ըստ էության, պետական հարկադրանքի դրսևորումներ են:

Զինծառայողների իրավաբանական պատասխանատվությունն ունի հետևյալ առանձնահատկությունները՝

1) իրավաբանական պատասխանատվություն ծնող իրավախախտումների կազմի ավելի լայն շրջանակը, որը պայմանավորված է զինվորական ծառայության առանձնահատկություններով և խիստ ու հստակ իրավական կարգադրագրերով.

2) քաղաքացիական անձանց կողմից կատարվող համանման իրավախախտումների համեմատ զինծառայողների խստացված պատասխանատվությունը.

3) զինծառայողներին իրավաբանական պատասխանատվության ենթարկելու հրամանատարների (պետերի) օրենքով սահմանված լայն իրավազորությունները.

4) նշված լիազորությունների իրականացման և իրավաբանական պատասխանատվության ենթարկելու հատուկ պայմանները.

5) իրավաբանական պատասխանատվության կիրառման հատուկ միջոցների առկայությունը:

Զինվորական կարգապահությունն ենթադրում է ոչ միայն Հայաստանի Հանրապետության զինված ուժերում բոլոր զինծառայողների կողմից օրենքներով, զինվորական կանոնագրքերով և հրամանատարների հրամաններով սահմանված կարգուկանոնի խստիվ ու ճշգրիտ պահպանումը, այլև այդ կարգուկանոնը խախտելու համար նրանց նկատմամբ օրենքով սահմանված ներգործության միջոցների կիրառում:

Միաժամանակ, զինծառայողի նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառումը պետք է բացառապես իրականացվի օրինականության, մարդու իրավունքների և ազատությունների հարգման և դրանց խստիվ պահպանմամբ:

2017 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքները վերաբերել են նաև կարգապահական զանցանքի մեջ մեղադրվող զինծառայողների իրավունքների պաշտպանությանը:

Օրինակ՝ զինծառայողը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքով հայտնել է, որ զորամասի հրամանատարի 2017 թվականի մարտի 27-ի հրամանով նշանակվել է ծառայողական քննություն: Ծառայողական քննության արդյունքների հիման վրա զորամասի հրամանատարի՝ «Կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ» 2017 թվականի ապրիլի 1-ի հրամանով իր նկատմամբ նշանակվել է կարգապահական տույժ՝ «Նախազգուշացում՝ պաշտոնին ոչ լրիվ համապատասխանության մասին»:

Զինծառայողի պնդմամբ՝ ինքը կարգապահական իրավախախտում չի կատարել, ծառայողական քննության ընթացքում չի տեղեկացվել կարգապահական իրավախախտում կատարելու համար մեղադրվելու մեջ, ծառայողական քննության ամփոփիչ եզրակացությանը չի ծանոթացվել, իսկ կիրառված տույժի մասին տեղեկացել է 2017 թվականի ապրիլի 21-ին: Ըստ զինծառայողի՝ ծառայողական քննությունն անցկացվել է «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի, ինչպես նաև ՀՀ պաշտպանության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 991-Ն հրամանի պահանջների խախտմամբ:

Տույժի ենթարկելու վերաբերյալ հրամանը բողոքարկելու նպատակով զինծառայողը զեկուցագրեր է ներկայացրել զորամասի հրամանատարին, սակայն պատասխան չի ստացել:

Զինծառայողը խնդրել է Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունն իր խախտված իրավունքների վերականգնման հարցում:

2017 թվականի հունիսի 8-ին Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության բաժնի աշխատակիցներն այցելել են զորամաս և առանձնազրույց ունեցել զինծառայողի հետ: Այցի ընթացքում ուսումնասիրվել են ծառայողական քննության նյութերը, պարզաբանումներ են ստացվել զորամասի իրավասու ծառայողներից:

Արդյունքում՝ արձանագրվել է, որ.

1) առկա չեն հավաստող փաստաթղթեր առ այն, որ զինծառայողը ծառայողական քննության ընթացքում գրավոր ծանոթացվել է իր իրավունքներին և պարտականություններին, տեղեկացվել է, թե ինչ գործողության կամ անգործության համար է իրեն վերագրվում կարգապահական զանցանքը, ծառայողական քննության ավարտին ծանոթացվել է ծառայողական քննության նյութերին, այդ թվում՝ ծառայողական քննության արդյունքներով կազմված ամփոփիչ եզրակացությանը,

2) ծառայողական քննության ամփոփիչ եզրակացությունում և զորամասի հրամանատարի 2017 թվականի ապրիլի 1-ի հրամանում բացակայել են զինծառայողի պատասխանատվությունը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքների, նրա կողմից իրավախախտումը կատարելու նպատակի կամ շարժառիթների, մեղքի ձևի, իրավախախտմանը նպաստող պատճառների ու պայմանների, ինչպես նաև դրանց վերացմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումների վերաբերյալ տեղեկությունները.

3) զորամասի հրամանատարի հրամանում բացակայել է «Նախազգուշացում՝ պաշտոնին ոչ լրիվ համապատասխանության մասին» տույժը կիրառելու և կոնկրետ տույժի այդ տեսակը ընտրելու հիմնավորումը:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքի քննարկման արդյունքում 2017 թվականի սեպտեմբերի 15-ին Պաշտպանը կայացրել է որոշում՝ Մարդու իրավունքների և ազատությունների խախտումները վերացնելու առաջարկ ներկայացնելու մասին:

Պաշտպանի կողմից կայացված որոշման արդյունքում Պաշտպանության նախարարի հրամանով ուժը կորցրած է ճանաչվել զինծառայողին կարգապահական տույժի ենթարկելու մասին զորամասի հրամանատարի հրամանը: ՀՀ պաշտպանության նախարարության իրավաբանական վարչությանը հանձնարարվել է՝ համագործակցելով Պաշտպանության նախարարության անձնակազմի հետ տարվող աշխատանքների վարչության և Պաշտպանության նախարարության Մարդու իրավունքների բարեվարքության կենտրոնի հետ կազմել և զորամասեր առաքել ծառայողական քննության անցկացման մեթոդական ուղեցույց:

Զինծառայողների կարգապահական իրավունքների արդյունավետ պաշտպանության նպատակով Պաշտպանի աշխատակազմում մշակվել է նաև ««Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի և «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 20-ի N 991-Ն հրամանում լրացումներ կատարելու մասին» հրամանի նախագծերը:

Մասնավորապես, «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» Հայաստանի Հանրապետության օրենքում՝

1. Առաջարկվել է իրավախախտումը համարել ծանրացող միայն այն դեպքերում, երբ դատվածությունը հանված կամ մարված չէ.

2. Կարգապահական տույժի ենթարկվելու մասին հրամանին ծանոթանալու պատշաճ ընթացակարգ և զինծառայողի կողմից այն բողոքարկելու իրավունքի ապահովման նպատակով առաջարկվել է սահմանել, որ կարգապահական տույժ տալու մասին գրավոր հրամանը և զինծառայողի հաշվառման (ծառայողական) քարտում կատարված գրառումը ստորագրությամբ ներկայացվում է զինծառայողի ծանոթացմանը: Զինծառայողի պահանջի դեպքում նրան տրամադրվում է նաև կարգապահական տույժ տալու մասին գրավոր հրամանի և զինծառայողի հաշվառման (ծառայողական) քարտում կատարված գրառման՝ հրամանատարի կողմից հաստատված պատճենները:

3. Ծառայողական քննության ընթացքում զինծառայողների ընթացակարգային իրավունքների պաշտպանության նպատակով առաջարկվել է սահմանել, որ ծառայողական քննություն իրականացնող անձը կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող զինծառայողին գրավոր բացատրում է օրենքով նրան վերապահված իրավունքները և պարտականությունները:

4. Բողոքարկման արդյունքում զինծառայողին տրված կարգապահական տույժը հանելու կառուցակարգի հստակեցման նպատակով առաջարկվել է սահմանել, որ բողոքարկման արդյունքներով վերադաս հրամանատարը (պետը) իրավունք ունի գրավոր հրաման ընդունել զինծառայողին տրված կարգապահական տույժը չեղյալ ճանաչելու կամ ուժի մեջ թողնելու մասին:

«Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 20-ի N 991-Ն հրամանում լրացումներ կատարելու մասին» հրամանում առաջարկվել է զինծառայողների կողմից իրավախախտում կատարելու մասին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գրավոր հաղորդումը նախատեսել որպես ծառայողական քննության անցկացնելու հիմք: Առաջարկվել է նաև նշված հրամանով սահմանել ծառայողական քննությունը դադարեցնելու, ծառայողական քննությունը կասեցնելու և վերսկսելու հիմքերը և ընթացակարգը:

ԳԼՈՒԽ 5. ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների բնակարանային ապահովությունը

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ամենախոցելի սոցիալական հիմնախնդիրներից է զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների բնակարանային ապահովության իրավունքի իրացումը:

ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում զինծառայողների բնակարանային ապահովման հենքը կազմում են դեռևս ԽՍՀՄ զինված ուժերից մնացած բնակարանային ֆոնդը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից ձեռք բերված բնակարանները:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ զինված ուժերի անդամների մարդու իրավունքների մասին թիվ (2010)4 հանձնարարականի 62-րդ կետը սահմանում է, որ

զինված ուժերի յուրաքանչյուր անդամ ունի համարժեք ստանդարտներին համապատասխանող, առողջության և հիգիենայի հիմնական պահանջները բավարարող բնակության վայր ունենալու իրավունք:

ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած տեղեկությունների համաձայն՝ 2017 թվականի ընթացքում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից թվով 5152 զինծառայողի տրվել է վարձակալած բնակարանների դիմաց դրամական փոխհատուցում, ինչը գործող կարգի համաձայն համարժեք է ծառայողական բնակարան ապահովելուն: Ըստ պատասխանատու գերատեսչության՝ 2017 թվականի ընթացքում բնակմակերեսի կարիք ունեցող անհատույց օգտագործման իրավունքով ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի 93 զինծառայող, ինչպես նաև 1-ին խմբի զինվորական հաշմանդամություն ունեցող 34 նախկին զինծառայողներ և զոհված (մահացած) զինծառայողների 131 անօթևան ընտանիքներ ապահովվել են բնակարաններով:

Զինծառայողները և նրանց ընտանիքների անդամները 2017 թվականի ընթացքում բնակարանային ապահովման խնդիրների վերաբերյալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրել են մի շարք բողոքներ: Բողոքները հիմնականում վերաբերել են բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող զինծառայողների բնակարանային հաշվառման ցուցակներում հաշվառված լինելու, սակայն հերթում տարիների ընթացքում էական առաջխաղացում չլինելուն, ինչպես նաև զինվորական կենսաթոշակի անցած նախկին զինծառայողներին բնակարան չտրամադրելուն:

Օրինակ՝ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի անցած նախկին զինծառայողը Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով նշել է, որ զինվորական ծառայության ընթացքում ընդգրկվել է բնակարանային հաշվառման, սակայն զինվորական ծառայության ընթացքում բնակարան կամ այն ձեռք բերելու համար պետական ֆինանսական աջակցություն չի ստացել: Նախկին զինծառայողն իր դժգոհությունն է հայտնել առ այն, որ զինվորական կենսաթոշակի անցնելուց հետո տեղափոխվել է զինվորական կենսաթոշակի անցած նախկին զինծառայողների բնակարանային ապահովման հերթացուցակ, սակայն իր բնակարանային պայմանները չեն բարելավվել:

Պաշտպանության նախարարությունից ստացվել է տեղեկություն, որ տվյալ դեպքում նախկին զինծառայողը ՀՀ պաշտպանության նախարարությունում բնակարանային հաշվառման մեջ է գտնվում 2002 թվականից, ծառայության ընթացքում բնակարանային ապահովման հերթը չի հասել, որից հետո տեղափոխվել է զինվորական կենսաթոշակի անցած նախկին զինծառայողների բնակարանային ապահովման հերթացուցակ:

Ըստ Պաշտպանության նախարարությունից ստացված պարզաբանման՝ զինվորական ծառայության ընթացքում մշտական բնակարանային ապահովման իրավունք ստացած և սահմանված կարգով զինվորական ծառայությունից արձակված զինվորական կենսաթոշակառուների և քաղաքացիական հատուկ ծառայողների ընտանիքների բնակարանային պայմանները բարելավելու նպատակով 2017 թվականին Պաշտպանության նախարարության զինծառայողների սոցիալական պաշտպանության վարչությունը 2018-2020 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրերի շրջանակներում կրկին քննարկման է ներկայացրել համապատասխան ծրագրի նախագիծ:

Ուստի նախկին զինծառայողների մշտական բնակարանային ապահովման հարցը ենթակա կլինի քննարկման, երբ գործողության մեջ կդրվի ՀՀ պաշտպանության նախարարության բնակարանային հաշվառման մեջ գտնվող զինվորական թոշակի անցած նախկին զինծառայողների բնակարանային ապահովման ծրագիրը:

2015 և 2016 թվականների ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումների մեջ նույնպես անդրադարձ է կատարվել այս խնդրին:

ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 7-ի «ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողների բնակարանային բարելավման մասին» թիվ 384-Ն որոշման համաձայն՝ բնակարանային հաշվառման մեջ գտնվող և երկարամյա ծառայության կենսաթոշակի անցած, առողջության, տարիքի կապակցությամբ զինված ուժերից արձակված և առնվազն 12 տարի 6 ամիս ժամկետով զինվորական ստաժ ունեցող անձինք պահպանում են հաշվառման մեջ գտնվելու իրավունքը, իսկ հաշվառումից հանվում են բնակարանային պայմանների բարելավման դեպքում:

Այս կապակցությամբ հարկ է նկատել, որ 2017 թվականի նոյեմբերի 30-ին ՀՀ կառավարության նշված որոշման մեջ կատարված լրացմամբ ամրագրվել է, որ զինծառայողներին կամ երկարամյա ծառայության կենսաթոշակի անցած, առողջության, տարիքի կապակցությամբ զինված ուժերից արձակված և առնվազն 12 տարի 6 ամիս ժամկետով զինվորական ստաժ ունեցող անձանց սեփականության իրավունքով անհատույց տրամադրվում են նվիրատվության պայմանագրի հիման վրա[227]:

Պաշտպանության նախարարությունից ստացված պարզաբանման համաձայն՝ որպես մշտական բնակմակերեսի կարիքավոր անհատույց օգտագործման իրավունքով բնակարաններ ստացած զինծառայողներին և երկարամյա ծառայություն անցած նախկին զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին ՀՀ պաշտպանության նախարարության հաշվեկշռում գտնվող բնակարանները սեփականության իրավունքով անհատույց տրամադրելու գործընթացն իրականացվելու է 2018 թվականի փետրվարից:

2016 թվականի հաղորդման մեջ առաջարկվել էր նաև վերանայել զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների բնակարանային ապահովման իրավունքի իրացման մեխանիզմները և արտասահմանյան երկրների փորձի ուսումնասիրության հիման վրա քննարկել Հայաստանի Հանրապետության զինված ուժերում բնակարանային ապահովության կուտակային-հիփոթեքային համակարգ ներդնելու հնարավորության հարցը[228]:

Նշված առաջարկը նույնպես ընդունվել է Պաշտպանության նախարարության կողմից, և ամրագրվել «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 65-րդ հոդվածի 2-րդ մասում, համաձայն որի՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով և պայմաններով սպայական կազմի պայմանագրային զինծառայողները կարող են բնակարան կամ բնակելի տուն ձեռք բերելու կամ բնակելի

[227] ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 7-ի թիվ 384-Ն որոշումը «ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողների բնակարանային բարելավման մասին», հավելված, բաժին IV, կետ 14

[228] Տարեկան հաղորդում 2016թ. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին, 229-230 էջեր

տուն կառուցելու նպատակով օգտվել մատչելի և արտոնյալ պայմաններով երկարաժամկետ հիփոթեկային վարկավորման պետական նպատակային ծրագրերից:

Ըստ պատասխանատու գերատեսչության՝ մշակվում և 2018 թվականի մայիսի 31-ից ներդրվելու է արտոնյալ պայմաններով երկարաժամկետ հիփոթեքային վարկավորման «Մատչելի բնակարան զինծառայողին» պետական աջակցության նպատակային ծրագիրը, որի արդյունքում կլուծվի տարեկան շուրջ 500 զինծառայողների բնակարանային խնդիր:

2017 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են նաև բողոքներ ՀՀ ոստիկանության համակարգ պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչված և ծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների կամ ստացած վնասվածի կամ հիվանդության պատճառով հաշմանդամության խումբ ձեռք բերած անձանց բնակարանային հաշվառման իրավունքի վերաբերյալ:

Օրինակ՝ նախկին զինծառայողը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով տեղեկացրել է, որ հանդիսանում է առաջին խմբի հաշմանդամ: Ըստ դիմումատուի՝ 1996 թվականին պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչվելու նպատակով ներկայացել է համապատասխան տարածքային զինվորական կոմիսարիատ, որտեղից իրեն ծառայության են ուղարկել Ներքին զորքերի զորամաս: Այնուհետև, դիմումատուի պնդմամբ, որպես շարքային կազմի պարտադիր զինծառայող, Պաշտպանության նախարարության կողմից զինվորական ծառայությունը շարունակելու նպատակով տեղափոխվել է առաջնագիծ և իրականացրել մարտական հերթապահություն: Ծառայության ավարտին՝ 1998 թվականին ծառայողական պարտականությունները կատարելիս ականի պայթյունի հետևանքով զրկվել է տեսողությունից, աջ ձեռքից, ստացել կոնտուզիա և բազմաբեկորային այլ վնասվածքներ: Ստացված վնասվածքների հետևանքով իր նկատմամբ սահմանվել է 1-ին խմբի հաշմանդամություն: Նախկին զինծառայողը նշել է, որ 2006 թվականից Պաշտպանության նախարարությունում հաշվառված է եղել որպես բնակարանի կարիք ունեցող, և հերթացուցակում իր հերթական համարի վերաբերյալ պարբերաբար Պաշտպանության նախարարությունից ստացել է տեղեկատվություն: Այնուհետև՝ 2017 թվականի մարտի 3-ի դիմումի կապակցությամբ Պաշտպանության նախարարությունից ստացել է պարզաբանում, որ իր բնակարանային պայմանների բարելավման հարցը չի կարող քննարկվել, քանի որ ՀՀ պաշտպանության նախարարությունում որպես զինհաշմանդամ հաշվառված չէ, և բնակարանային հաշվառման հերթացուցակում ընգրկվել է գործող կարգի խախտմամբ: Հետևաբար, բնակարանային պայմանների բարելավման հարցով պետք է դիմի ՀՀ ոստիկանություն:

Դիմումատուն նշել է, որ բնակարանային պայմանների բարելավման հարցով դիմել է ՀՀ ոստիկանություն, սակայն մերժում է ստացել, քանի որ ՀՀ ոստիկանությունը չի տիրապետում բնակարանային ֆոնդերի և նպատակային միջոցների:

Բարձրացված խնդրի կապակցությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունից ստացված պարզաբանումների համաձայն՝ ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի «Անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին» թիվ 947-Ն որոշմամբ հաստատված կարգը սահմանում է բնակարան ձեռք բերելու համար պետական ֆինանսական աջակցության ստանալու իրավունք ունեն ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) կամ զինվորական

ծառայության ժամանակ վնասվածքներից, խեղումներից և առաջացած հիվանդություններից հաշմանդամ դարձած զինծառայողների (ազատամարտիկների) ընտանիքները, որոնց ՀՀ պաշտպանության նախարարության սոցիալական ապահովության խնդիրներ իրականացնող ստորաբաժանման (ՀՀ ՊՆ ԶՍՊ վարչություն) կողմից տրվել է կարգավիճակը հավաստող համապատասխան տեղեկանք: Հետևաբար, տվյալ դեպքում բողոք ներկայացրած անձի վրա չեն տարածվում վերոնշյալ կարգի դրույթները: Միաժամանակ նշվել է, որ ՀՀ ոստիկանության համակարգի հաշմանդամ դարձած զինծառայողների բնակարանային ապահովման հարցերը կարգավորվում են ՀՀ կառավարության 2008 թվականի հուլիսի 24-ի՝ «ՀՀ ոստիկանության, ազգային անվտանգության, ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության համակարգի զինծառայողների բնակարանային ապահովության մասին» թիվ 805-Ն որոշմամբ:

Ընդհանրապես տարբերակված մոտեցումը պետք է պայմանավորված լինի օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով, հակառակ դեպքում այն կհանգեցնի անհավասար մոտեցման նույն իրավիճակում հայտնված անձանց նկատմամբ այն հիմքով, որ անկախ իրենց ցանկության՝ զորակոչվել են կամ ՀՀ զինված ուժեր կամ այլ զորքեր՝ պարտադիր ժամկետային զինվորական ծառայության:

Առաջարկվում է միջոցներ ձեռնարկել այլ զորքերում պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած և ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) կամ զինվորական ծառայության ժամանակ վնասվածքներից, խեղումներից և առաջացած հիվանդություններից հաշմանդամ դարձած զինծառայողների (ազատամարտիկների) ընտանիքների բնակարանային ապահովման ուղղությամբ:

Անհրաժեշտ է նաև հնարավորին սեղմ ժամկետներում ապահովել սպայական կազմի պայմանագրային զինծառայողների բնակարան կամ բնակելի տուն ձեռք բերելու կամ բնակելի տուն կառուցելու նպատակով մատչելի և արտոնյալ պայմաններով երկարաժամկետ հիփոթեքային վարկավորման պետական նպատակային ծրագրերի գործնական կիրառությունը:

2. Զինվորական ծառայությունից արձակված քաղաքացիների զբաղվածության ապահովման իրավունքը

Հայաստանի Հանրապետության զինված ուժերից երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունքով արձակված քաղաքացիների և զինվորական հաշմանդամների մեծամասնության առջև ծառացած են կենսակերպի նոր պայմաններին հարմարվելու խնդիրները:

Օրինակ՝ ԱՄՆ-ում գործում են զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների խնամքի և աղապտացման կենտրոններ: Այդ կենտրոնները զբաղվում են ինչպես զինվորական ծառայություն անցնող քաղաքացիների՝ զինվորական ծառայության վայրի փոփոխությամբ պայմանավորված հարմարեցման, այնպես էլ պահեստազոր արձակված քաղաքացիների զբաղվածության խնդիրներով: Կենտրոններն աջակցում են

նաև զինծառայողներին՝ երեխաների խնամքի, նրանց ընտանիքներին իրավաբանական օգնության տրամադրման, ֆինանսական խորհրդատվության և այլ հարցերում[229]:

Զինվորական ծառայությունից հետո զրկվելով համեմատաբար բարձր աշխատավարձից, բոլոր տեսակի բավարարումներից և արտոնություններից՝ նախկին զինծառայողներն արդեն հասուն տարիքում ստիպված են լինում լուծել սոցիալ-կենցաղային բազմաթիվ խնդիրներ, բախվում են անհաղթահարելի դժվարությունների:

Նախկին զինծառայողների համար զբաղվածության աջակցությանը նպատակաուղղված պետական ծրագրեր նախատեսված չեն, ինչի հետևանքով նրանց մեծամասնությունը չեն կարողանում ինքնուրույն լուծել զբաղվածության խնդիրը, հայտնվում են սոցիալ-հոգեբանական դժվարին իրավիճակում և ստիպված մեկնում են արտագնա աշխատանքի, ինչը ժողովրդագրական, ընտանեկան և այլ խնդիրներից բացի՝ հանգեցնում է որակյալ զորահավաքային ռեսուրսների նվազեցմանը և զինված ուժերի մարտունակության անկմանը:

Հայաստանի Հանրապետության զինված ուժերից երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունքով զինվորական ծառայությունից արձակված նախկին զինծառայողները, որպես կանոն, բարձրագույն կրթությամբ և կազմակերպչական հմտություններով օժտված աշխատունակ անձինք են, ովքեր ծառայության ընթացքում ձեռք բերած ղեկավարման հարուստ փորձի, կատարողական բարձր կարգապահության, սկզբունքայնության և նախաձեռնողականության շնորհիվ կարող են նշանակալի ներդրում ունենալ երկրի հասարակական-քաղաքական բնագավառում և տնտեսության տարբեր ոլորտներում:

3. Զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին ոչ ֆինանսական բնույթի արտոնությունների տրամադրման առաջարկներ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ուսումնասիրվել են Ռուսաստանի Դաշնության, ԱՊՀ անդամ այլ պետություններում զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների համար արտոնություններ և սոցիալական երաշխիքներ սահմանող իրավական ակտերը:

Ուսումնասիրությամբ առանձնացվել են նշված երկրներում զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին վերապահված ոչ ֆինանսական և այլ արտոնությունները, որոնք համեմատական-իրավական վերլուծության են ենթարկվել ՀՀ գործող օրենսդրության իրավակարգավորումների հետ և արդյունքում մշակվել են զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին ոչ ֆինանսական արտոնություններ տրամադրելու առաջարկներ:

Ուսումնասիրության և ներկայացված առաջարկների խնդիրներն են ազգ-բանակ գաղափարի շրջանակներում՝

1. ստեղծել օրենսդրական հիմքեր, որպեսզի հասարակության բոլոր անդամները ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի հիման վրա իրենց գործունեության շրջանակներում ներգրավված լինեն, նպաստեն կամ օժանդակեն Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովման համակարգի խնդիրների լուծմանը

2. սահմանել հասարակական բոլոր ոլորտներում զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների համար ոչ ֆինանսական բնույթի արտոնություններ, որոնք

[229] Benefits, http://www.goarmy.com/benefits/soldier-and-family-services.html

իրենց համակցության մեջ կբարձրացնեն Հայաստանի Հանրապետության զինված ուժերում զինվորական ծառայություն անցնող կամ անցած զինծառայողների, հատկապես սպայական կազմի զինծառայողների կարգավիճակը և զինվորական ծառայության հեղինակությունը

3. մշակել իրավական ակտեր կամ գործող իրավական ակտերում կատարել փոփոխություններ և լրացումներ, որոնք կսահմանեն ՀՀ զինված ուժերում զինվորական ծառայություն անցած կամ անցնող սպայական կազմի, ինչպես նաև Հայրենիքի պաշտպանության ժամանակ հաշմանդամություն ձեռք բերած, մահացած կամ զոհված զինծառայողների ընտանիքների անդամների *առաջնահերթության իրավունքը* ՝պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների կողմից սահմանված բոլոր ընթացակարգերում:

Ուսումնասիրության արդյունքում առաջարկվում է զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին տրամադրել հետևյալ ոչ ֆինանսական արտոնությունները ՝

1) Աշխատանքի պահպանման նախապատվության իրավունք

2) Չվճարվող արձակուրդի տրամադրման պարտադիր կարգ

3) Ամենամյա արձակուրդի ժամանակի ընտրության արտոնություն

4) Առաջին աշխատատեղի իրավունք

5) Զբաղվածության պետական ծրագրերում ընդգրկվելու առաջնահերթության իրավունք

6) Ուսումնական հաստատությունը փոխելու իրավունք

1. ՌԴ աշխատանքային օրենսգրքի 179-րդ հոդվածի համաձայն գործատու ընկերությունում աշխատողների թվաքանակի և հաստիքների կրճատման դեպքերում աշխատանքի պահպանման նախապատվության իրավունքը տրվում է առավել աշխատունակ կամ բարձր որակավորում ունեցող անձանց: Աշխատունակության և որակավորման չափորոշիչների հավասարության դեպքում ի թիվս այլ անձանց աշխատանքի պահպանման նախապատվության իրավունքը վերապահված է նաև Հայրենիքի պաշտպանության ժամանակ հաշմանդամություն ձեռք բերած անձանց:

Նմանատիպ մոտեցում է ամրագրվել նաև Մոլդովայի աշխատանքային օրենսգրքում: Մասնավորապես, օրենսգրքի 183-րդ հոդվածի համաձայն աշխատունակության և որակավորման չափորոշիչների հավասարության դեպքում ի թիվս այլ անձանց աշխատանքի պահպանման նախապատվության իրավունքը վերապահված է պատերազմի հետևանքով սահմանափակ կարողություններ ունեցող անձանց և *զոհված (մահացած), անհայտ կորած զինծառայողների ընտանիքների անդամներին*:

«Զինծառայողների կարգավիճակի մասին» ՌԴ օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն պարտադիր զինվորական ծառայության զորակոչված զինծառայողների մեկ երեխա ունեցող ամուսինները (կանայք) աշխատողների թվաքանակի և հաստիքների կրճատման դեպքերում ունեն աշխատանքի պահպանման նախապատվության իրավունք:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գործատուն իրավունք ունի աշխատողի հետ լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը

արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և (կամ) արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների քանակի և (կամ) հաստիքների կրճատման դեպքում:

ՀՀ աշխատանքային օրենսգրքով աշխատանքի պահպանման նախապատվության իրավունք նախատեսված չէ:

Առաջարկվում է աշխատանքի պահպանման նախապատվության իրավունք վերապահել ժամկետային պայմանագրային զինվորական ծառայություն անցած կամ անցնող շարքային, ենթասպայական, սպայական կազմի (այդ թվում՝ ռազմաուսումնական հաստատություններ կամ համապատասխան սպայական կամ սերժանտական դասընթացներ ավարտած) զինծառայողների, պարտադիր ժամկետային զինծառայություն անցնող զինծառայողների ընտանիքների անդամներին (զինվորական ծառայության ժամկետում), Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակիցների, Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին, ինչպես նաև պաշտպանության ժամանակ կամ զինվորական պարտականությունների կատարման ընթացքում զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամներին:

2. ՌԴ աշխատանքային օրենսգրքի 128-րդ հոդվածի համաձայն գործատուն *պարտավոր է* գրավոր դիմումի հիման վրա տրամադրել չվճարվող արձակուրդ՝

1) Հայրենական Մեծ պատերազմի մասնակիցներին՝ տարեկան մինչև 35 օր տևողությամբ

2) զինվորական պարտականությունների կատարման ժամանակակ զոհված (մահացած) զինծառայողների ծնողներին և ամուսնուն՝ տարեկան մինչև 14 օր տևողությամբ:

Տաջիկստանի աշխատանքային օրենսգրքի 99-րդ հոդվածի համաձայն աշխատողի դիմումի հիման վրա պարտադիր կարգով տարեկան մինչև 14 օր տևողությամբ չվճարվող արձակուրդ է տրամադրվում՝

1) Հայրենական Մեծ պատերազմի մասնակիցներին և նրանց հավասարեցված անձանց.

2) Հայրենիքի պաշտպանության ժամանակ զոհված (մահացած), հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների ծնողներին և ամուսիններին:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի համաձայն աշխատողի պահանջով չվճարվող արձակուրդի պարտադիր տրամադրման առանձին կատեգորիաների անձանց ցանկում նախատեսված չեն Հայաստանի պաշտպանության ժամանակ զոհված (մահացած), հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների ծնողները և ամուսինները: Այնուամենայնիվ՝ նշված հոդվածի 3-րդ մասի համաձայն Կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրերով կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերում աշխատողին կարող է տրամադրվել չվճարվող արձակուրդ՝ մեկ տարվա ընթացքում ոչ ավելի, քան 60 օր տևողությամբ: Քաղաքացիական, օրենքով սահմանված այլ պետական

(հատուկ) ծառայությունների և տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողներին կարող է մեկ տարվա ընթացքում տրամադրվել չվճարվող արձակուրդ ոչ ավելի, քան երեսուն օր:

Սակայն նշված իրավանորմի վերլուծությունը ցույց է տալիս, որ աշխատանքային պայմանագրերով սահմանված դեպքերում կամ կողմերի համաձայնությամբ աշխատողին *կարող է* տրամադրվել չվճարվող արձակուրդ: Նույն կերպ՝ հայեցողական և կողմերի համաձայնությամբ չվճարվող արձակուրդ տրամադրվում է նաև քաղաքացիական, օրենքով սահմանված այլ պետական (հատուկ) ծառայությունների և տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողներին: Մինչդեռ՝ վերը նշված երկրներում չվճարվող արձակուրդ պարտադիր կարգով՝ գրավոր դիմումի հիման վրա տրամադրվում է նաև Հայրենիքի պաշտպանության ժամանակ զոհված (մահացած), հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների ծնողներին և ամուսիններին:

Առաջարկվում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասում՝ ի թիվս պարտադիր կարգով չվճարվող արձակուրդ ստացող այլ անձանց, ներառել նաև պաշտպանության ժամանակ զոհված (մահացած), հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների ծնողներին և ամուսիններին:

3. Բելառուսի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 168-րդ հոդվածը նվիրված է արձակուրդների տրամադրման առաջնահերթությանը: Համաձայն այդ հոդվածի արձակուրդների տրամադրման հերթականությունը որոշվում է գործատուի կողմից հաստատված գրաֆիկով: Միաժամանակ, գործատուն պարտավոր է արձակուրդների տրամադրման գրաֆիկը կազմելիս հաշվի առնել նշված հոդվածում թվարկված առանձին կատեգորիայի անձանց ցանկությունը: Այդ անձինք են՝ Հայրենական Մեծ պատերազմի, այլ երկրներում մարտական գործողությունների մասնակիցները, ինչպես նաև զինծառայողների կանայք (ամուսինները), որոնց ցանկության դեպքում արձակուրդ է տրվում իրենց զինծառայող ամուսինների արձակուրդի ժամանակահատվածում:

Թուրքմենստանի աշխատանքային օրենսգրքի 87-րդ հոդվածի համաձայն ամենամյա հիմնական արձակուրդը աշխատողի ցանկությամբ պարտադիր տրամադրվում է պարտադիր զինվորական ծառայության զորակոչված զինծառայողի կնոջը, ով ունի մեկ երեխա:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 164-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ամենամյա արձակուրդի տրամադրման հերթականության կարգը սահմանվում է կոլեկտիվ պայմանագրով, իսկ նման պայմանագրի բացակայության դեպքում՝ կողմերի համաձայնությամբ: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն *մինչև անընդմեջ աշխատանքի վեց ամիսը լրանալը* աշխատողի խնդրանքով ամենամյա արձակուրդ տրամադրվում է կանանց հղիության ու ծննդաբերության արձակուրդից առաջ կամ հետո կամ կոլեկտիվ պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

Այստեղ հարկ է նշել, որ օրինակ՝ Տաջիկստանի աշխատանքային օրենսգրքի 92-րդ հոդվածի համաձայն ամենամյա արձակուրդը տրամադրվում է գործատուի մոտ առաջին տարում ոչ պակաս, քան 11 ամիս աշխատելուց հետո: Սակայն նույն հոդվածի 2-րդ մասի

համաձայն պարտադիր ժամկետային զինվորական ծառայողների համար սահմանված է այլ՝ 3-ամսյա ժամկետ։

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 164-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն *անընդմեջ աշխատանքի վեց ամիսը լրանալուց հետո* ամենամյա արձակուրդի ժամանակի ընտրության իրավունք ունեն՝ մինչև տասնութ տարեկան աշխատողները, ինչպես նաև հղի կանայք և մինչև 14 տարեկան երեխա խնամող աշխատողը։

Առաջարկվում է սահմանել մինչև անընդմեջ աշխատանքի վեց ամիսը լրանալը և դրա լրանալուց հետո ամենամյա արձակուրդի ժամանակի ընտրության առաջնահերթության իրավունք, ինչպես նաև մինչև անընդմեջ աշխատանքի վեց ամիսը լրանալը արձակուրդի իրավունք՝ ժամկետային պայմանագրային զինվորական ծառայություն անցած կամ անցնող շարքային, ենթասպայական, սպայական կազմի (այդ թվում՝ ռազմաուսումնական հաստատություններ կամ համապատասխան սպայական կամ սերժանտական դասընթացներ ավարտած) զինծառայողների, պարտադիր ժամկետային զինծառայություն անցնող զինծառայողների ընտանիքների անդամներին (զինվորական ծառայության ժամկետում), Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակիցների ընտանիքների անդամների, Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների, ինչպես նաև պաշտպանության ժամանակ կամ զինվորական պարտականությունների կատարման ընթացքում զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամների համար։

4. Բելառուսի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 281-րդ և 342-րդ հոդվածների համաձայն Բելառուսի զինված ուժերից և այլ զորքերից սահմանված կարգով արձակված պարտադիր ժամկետային զինծառայողների համար պետությունը երաշխավորվում է առաջին աշխատատեղի իրավունք։

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն առաջին աշխատատեղ է համարվում այն աշխատատեղը, որը տրամադրվում է պետական ուսումնական հաստատությունների շրջանավարտներին, հոգեֆիզիոլոգիական զարգացման առանձնահատկություններ ունեցող անձանց, ինչպես նաև զինված ուժերից և այլ զորքերից սահմանված կարգով արձակված պարտադիր ժամկետային զինծառայողներին, ովքեր մինչև զորակոչվելը աշխատանքային հարաբերությունների մեջ չեն գտնվել։

2006 թվականի դեկտեմբերի 19-ի «Առաջին աշխատատեղի տրամադրման կարգը և պայմանները հաստատելու մասին» Բելառուսի Հանրապետության նախարարների խորհրդի որոշմամբ կարգավորվում են առաջին աշխատատեղի իրավունքի տրամադրման կարգն ու պայմանները։

Առաջին աշխատատեղի իրավունքի իմաստը կայանում է նրանում, որ պետությունը իրականացնում է մասնավոր կազմակերպություններում և պետական մարմիններում առկա թափուր աշխատատեղերի կամ նախատեսվող՝ նոր աշխատատեղերի հաշվառում։ Հաշվառումից հետո կատարում է աշխատատեղի «ամրագրում» և հետագայում ըստ մասնագիտությունների բաշխում է կատարում՝ ապահովելով առաջին աշխատատեղի իրավունք ունեցող անձանց աշխատանքը։ «Աշխատատեղի ամրագրումը» ենթադրում է

պետական մարմինների կամ մասնավոր կազմակերպությունների կողմից որոշակի քանակով պարտադիր զինվորական ծառայությունից նոր զորացրված անձանց աշխատանքով ապահովելու պարտականություն:

Առաջարկվում է պատասխանատու գերատեսչությունների մասնակցությամբ մշակել մեխանիզմ, որով յուրաքանչյուր պետական մարմին թափուր աշխատատեղերի առկայության կամ նոր աշխատատեղերի ստեղծման դեպքում այդ աշխատատեղերից մի մասը կառանձնացնի և կնախատեսի համապատասխան մասնագիտություն ունեցող և պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակված անձանց համար:

Նմանատիպ «աշխատատեղի ամրագրման» մեխանիզմ անհրաժեշտ է մշակել նաև բոլոր մասնավոր կազմակերպությունների համար՝ ապահովելով ազգ-բանակ գաղափարի շուրջ բոլորի համախմբման և ներգրավվածության՝ սույն ծրագրի խնդիրը:

Բացի այդ, իրավասու պետական մարմինները և ուսումնական հաստատությունները պետք է մինչև զորացրված զինվորական ծառայողի աշխատանքի ընդունվելը՝ անհրաժեշտության դեպքում ապահովեն նրա վերապատրաստման գործընթացը:

Նշված մեխանիզմի ներդրումը կնպաստի պարտադիր զինվորական ծառայությունից նոր արձակված երիտասարդների զբաղվածության ապահովմանը, նոր ընտանիք ստեղծելուն և այլն: Բացի այդ, նոր զորացրված երիտասարդին աշխատանքով ապահովելը կնվազեցնի նրա՝ Հայաստանի Հանրապետությունից հեռանալու կամ արտագաղթելու հավանականությունը:

5. «Զինծառայողների կարգավիճակի մասին» ՌԴ օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն զինծառայողների ամուսիններն իրավունք ունեն զբաղվածության պետական ծրագրերում ընդգրկվելու առաջնահերթության իրավունք:

«Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի համաձայն աշխատաշուկայում գործազուրկի անմրցունակության որոշարկման չափանիշ է անձի հաշմանդամություն ունենալու հանգամանքը, անձի տարիքը, անձի արտագնա աշխատանքի մեկնելու ռիսկը, անձի ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից վերադառնալուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, լիազորված մարմնում հաշվառվելու հանգամանքը և այլն: Նշված հոդվածով սահմանված հիմքերով և ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի ««Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող մի շարք իրավական ակտեր հաստատելու մասին» N 534-Ն որոշմամբ սահմանված անմրցունակության որոշարկման կարգով աշխատաշուկայում գործազուրկին անմրցունակ ճանաչելու դեպքում անձը ձեռք է բերում «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով սահմանված լրացուցիչ իրավունքներ:

Այդ հոդվածի համաձայն աշխատաշուկայում անմրցունակ ճանաչված գործազուրկը ձեռք է բերում հետևյալ լրացուցիչ իրավունքները՝

1) լիազորված մարմնի կողմից զբաղվածության պետական ծրագրերում ընդգրկվելու առաջնահերթության իրավունք.

2) փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության իրավունք

3) լիազորված մարմնի հետ համագործակցող ոչ պետական կազմակերպության կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու համար աջակցության իրավունք.

4) սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության իրավունք:

Նշված հոդվածով սահմանված են նաև դրամական կամ ֆինանսական արտոնություններ:

Առաջարկվում է սահմանել, որ պաշտպանության ժամանակ զոհված կամ մահացած զինծառայողների գործազուրկ ամուսին կամ ընտանիքի անդամ (որոշակի լրացուցիչ պայմաններով) լինելը աշխատաշուկայում անմրցունակ ճանաչելու չափանիշ է՝ դրանով իսկ ապահովելով նրանց՝ վերը նշված 23-րդ հոդվածի առաջին մասի 1-ին, 4-րդ, 5-րդ և 7-րդ կետերով սահմանված լրացուցիչ իրավունքներից օգտվելը:

6. «Զինծառայողների կարգավիճակի մասին» ՌԴ օրենքի 19-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն զինվորական ծառայության վայրի փոփոխությամբ պայմանավորված բնակության վայրը փոխելու դեպքում զինծառայողի ամուսինը և ընտանիքի անդամները, ովքեր մինչև նոր բնակավայր տեղափոխվելը ուսումնառություն են անցնում պետական ուսումնական հաստատություններում իրավունք ունեն զինվորական ծառայության նոր վայրում գործող ուսումնական հաստատություններում ընդունելության իրավունք:

Առաջարկվում է նշված նորմը տարածել նաև ժամկետային պայմանագրային և պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվելու ժամանակահատվածում զինծառայողի ծառայության վայրի փոփոխությամբ պայմանավորված ընտանիքի բնակության վայրը փոխելու դեպքում զինծառայողի ամուսնու (կնոջ) կամ ընտանիքի անդամի վրա, ով մինչև բնակության նոր վայր տեղափոխվելը սովորել է պետական կամ ոչ պետական՝ հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատություններում:

ԲԱԺԻՆ 12. ԱՌԱՆՁԻՆ ԽՈՒՄԲ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Կանանց և տղամարդկանց՝ պատմականորեն արմատավորված անհավասարության վերացման, կանանց իրավունքների ճանաչման, դրանց պաշտպանության և հավելյալ երաշխիքների սահմանման համար Հայաստանը ձեռնարկել է տարաբնույթ քայլեր և իրականացրել միջոցառումներ: Այսպես, 1993 թվականին վավերացվել է «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան և կանանց իրավունքներն ամրագրող մի շարք միջազգային պայմանագրեր և կոնվենցիաներ:

Ավելին, բոլորի՝ օրենքի առջև հավասարությունն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածով: Միաժամանակ, կարևորելով կանանց և տղամարդկանց հավասարությունը, այս սկզբունքն ամրագրումն է ստացել 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 30-րդ հոդվածով: Բացի այդ, ըստ Սահմանադրության՝ պետության քաղաքականության հիմնական նպատակներից է կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանումը (ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդված): Կանանց և տղամարդկանց իրավահավասարության ապահովման երաշխիքներ են նախատեսված նաև «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին» 2013 թվականի ՀՀ օրենքում: Այս օրենքի կիրարկման համար, սակայն բացակայում են գործուն մեխանիզմներ:

ՀՀ օրենսդրության ընդհանուր ուսումնասիրության արդյունքում կանանց նկատմամբ խտրականություն պարունակող իրավական նորմեր չեն հայտնաբերվել: Չնայած սրան՝ կանանց և տղամարդկանց իրավահավասարության փաստացի իրագործման համար դեռևս առկա չեն բավարար երաշխիքներ, ինչի արդյունքում 2017 թվականի ընթացքում Հայաստանում շարունակվել են արձանագրվել կանանց իրավունքների ոտնահարման և նրանց նկատմամբ խտրականության դրսևորման դեպքեր:

«Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» № 483-Ն որոշմամբ ամրագրված՝ 2017 թվականին կատարման համար նախատեսված գործողություններից է եղել նաև «ՀՀ-ում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման քաղաքականության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրի» նախագծի մշակումը, որը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից կատարվել և սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ կառավարություն, սակայն 2017 թվականին չի ընդունվել:

Ըստ այդմ, կանանց իրավահավասարության և կանանց իրավունքների պաշտպանության ոլորտում առկա հիմնախնդիրները ներկայացվում են ստորև:

1. Կանանց նկատմամբ բռնություն

Կանանց նկատմամբ բռնությունը վերջիններիս նկատմամբ խտրականության դրսևորման առավել տարածված ձևերից է, որը միջազգային պահանջներին[230] համապատասխան գնահատվում է որպես մարդու հիմնական իրավունքների և ազատությունների խախտում: Ավելին, կանանց նկատմամբ բռնությունը հիմնականում տեղի է ունենում ընտանեկան միջավայրում և դրսևորվում է ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական, սեռական և տնտեսական ձևերով: Կանանց նկատմամբ բռնությունը և ընտանեկան բռնությունն ունեն ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի ազդեցություն կնոջ՝ տվյալ հասարակության մեջ հարմարվելու, ինքնադրսևորվելու և ինքնահաստատվելու, պաշտպանված լինելու հնարավորությունների վրա: Այս երևույթը տարածված է ամբողջ աշխարհում, ունի տարբեր դրսևորումներ և տարածվածության մակարդակ: Այն նաև Հայաստանում տարածում ունեցող երևույթ է, որի մասին արձագանքում է թե՛ ՀՀ կառավարությունը, թե՛ հասարակական ու միջազգային կազմակերպությունները և թե՛ հասարակությունը: Միևնույն ժամանակ, հայաստանյան հասարակության մեջ կնոջ հանդեպ բռնությունն ու այդ երևույթի անգամ ներկայացումը՝ որպես «ազգային ավանդույթ» հաճախ տղամարդու կողմից սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման անկարողության, ինչպես նաև բռնություն գործադրող տղամարդկանց և բռնության ենթարկվող կանանց իրավագիտակցության ցածր մակարդակի հետևանք է:

Չնայած խնդրի լուծմանն ուղղությամբ վերջին տարիներին ձեռնարկվել են բազմաթիվ քայլեր՝ այնուամենայնիվ համակարգային առումով հարցը մնում է չլուծված: Բռնության ենթարկված կանանց պաշտպանության համակարգը՝ լինելով թույլ, իր հերթին առաջ է բերում մի շարք խնդիրներ:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը 2017 թվականին ստացել է ահազանգեր կանանց նկատմամբ բռնության, հատկապես ընտանեկան բռնության դեպքերի մասին: Անհատական դեպքերի ուսումնասիրությունն իրականացվել է այնպես, որ հնարավոր է եղել վերհանել խնդիրներ, որոնք իրենց բնույթով համակարգային են և դրանք պայմանականորեն կարելի է բաժանել մի քանի մասի՝

- ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ ճշգրիտ վիճակագրական տվյալների բացակայություն,
- նման դեպքերի դեմ պայքարի և կանխարգելման հարցում օրենսդրական թերի կարգավորումներ կամ կարգավորումների բացակայություն,
- տուժողներին պետության կողմից տրամադրվող ծառայությունների բացակայություն,
- իրավագիտակցության անհամարժեք մակարդակ և հատկապես ընտանեկան հարցերին պետության միջամտության հանդեպ անվստահություն, ինչպես նաև վերջինի հետ կապված պետական իրավասու մարմինների ոչ բավարար մասնագիտական պատրաստվածության աստիճան,
- հասարակությունում առկա կարծրատիպեր և մասնագետների կարողությունների զարգացման անհրաժեշտություն:

[230] Տե՛ս, օրինակ, «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, հոդված 3, Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի թիվ 19 Ընդհանուր հանձնարարական, http://www.un.org/womenwatch/daw/cedaw/recommendations/recomm.htm

Այս բոլոր խնդիրներն, ըստ էության, ազդում են նաև կանանց՝ արդարադատության մատչելիության իրավունքի իրացման վրա, որն էլ իր հերթին բերում է մի շարք իրավունքների խախտման և այդ խախտված իրավունքների վերականգնման դժվարությունների:

Կանանց նկատմամբ բռնության խնդրի մանրամասն վերլուծության նպատակով 2017 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը հրապարակել է հատուկ վերլուծություն, որը կատարվել է Եվրոպայի խորհրդի աջակցությամբ: ««Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայով սահմանված չափանիշների տեսանկյունից ՀՀ քրեական օրենսդրության վերլուծություն» զեկույցը քննարկում է կանանց նկատմամբ բռնությունը, ընտանեկան բռնությունը, դրա դեմ պայքարում քրեական օրենսդրության արձագանքի համար անհրաժեշտ իրավական կարգավորումները և իրավակիրառ պրակտիկան: Զեկույցը նպատակ ունի նաև աջակցել «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» ԵԽ-ի կոնվենցիայի վավերացմանը, որը, հաշվի առնելով «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» № 483-Ն որոշումը, ստորագրվել է 2018 թվականի հունվարի 18-ին: Զեկույցը բարձր է գնահատվել գործընկեր միջազգային կազմակերպությունների կողմից և հրապարակվել է նաև Եվրոպայի խորհրդի կայքում[231]:

Ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ ճշգրիտ վիճակագրական տվյալների բացակայություն

Ընտանեկան բռնությունը հայտնի է՝ որպես լատենտային բնույթ ունեցող բռնության տեսակ, ինչը նշանակում է, որ բռնության այս տեսակի վերաբերյալ տեղեկությունները և վիճակագրական ցուցանիշները ամբողջությամբ չեն արտացոլում բռնության իրավիճակի իրական պատկերը: Միաժամանակ, իրավասու մարմինների կողմից տրամադրված տվյալները վկայում են ընտանեկան բռնության տարբեր տեսակների առկայության մասին, որոնք ցույց են տալիս նաև այն, որ ընտանեկան բռնությունն անհամամասնորեն ազդում է հատկապես կանանց վրա: Այսպես, ՀՀ ոստիկանության տվյալների համաձայն՝ 2017 թվականի 12 ամիսների ընթացքում քննված քրեական գործերով և նյութերով գրանցվել է ընտանեկան բռնության ոլորտի 793 հանցագործություն, որից 740-ը՝ ֆիզիկական, իսկ 53-ը՝ այլ բռնությամբ կատարված հանցագործություն (սեռական բռնության դեպքեր չեն արձանագրվել): Նշված 793 ընտանեկան բռնության դեպքերից կենակցի կողմից իրականացվել է 1 դեպք, ամուսնու կողմից կնոջ նկատմամբ՝ 480 դեպք, կնոջ կողմից ամուսնու նկատմամբ՝ 18 դեպք, ծնողը զավակի նկատմամբ՝ 67 դեպք, զավակը ծնողի նկատմամբ՝ 116 դեպք, ընտանիքի այլ անդամի կողմից՝ 111 դեպք:

Միաժամանակ, 2017 թվականի ընթացքում ՀՀ քննչական կոմիտեի մարմինների և ստորաբաժանումների կողմից ընտանեկան բռնության վերաբերյալ հարուցվել են 258

[231]Անգլերեն լեզվով հասանելի է հետևյալ հղումով ԵԽ կայքում. https://www.coe.int/en/web/istanbul-convention/newsroom/-/asset_publisher/anlInZ5mw6yX/content/seminar-to-present-the-gap-anamysis-of-armenian-criminal-law-in-the-light-of-the-standards-espablished-by-the-council-of-europe-convention-on-preventi?inheritRedirect=false&redirect=https://www.coe.int/en/web/istanbul-convention/newsroom%3Fp_p_id%3D101_INSTANCE_anlInZ5mw6yX%26p_p_lifecycle%3D0%26p_p_state%3Dnormal%26p_p_mode%3Dview%26p_p_col_id%3Dcolumn-1%26p_p_col_count%3D2%26p_r_p_564233524_resetCur%3Dfalse

քրեական գործեր, իսկ ընդհանուր առմամբ 2017 թվականին ՀՀ ՔԿ մարմինների և ստորաբաժանումների վարույթում եղել են ընտանեկան բռնությունների վերաբերյալ 458 քրեական գործեր: Նշված 458 քրեական գործերից 8-ը հարուցված են եղել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածով, 1-ը՝ 109-րդ հոդվածով, 3-ը՝ 110-րդ հոդվածով, 1-ը՝ 111-րդ հոդվածով, 15-ը՝ 112-րդ հոդվածով, 13-ը՝ 113-րդ հոդվածով, 40-ը՝ 117-րդ հոդվածով, 285-ը՝ 118-րդ հոդվածով, 7-ը՝ 119-րդ հոդվածով, 1-ը՝ 120-րդ հոդվածով, 1-ը՝ 124-րդ հոդվածով, 2-ը՝ 131-րդ հոդվածով, 1-ը՝ 133-րդ հոդվածով, 39-ը՝ 137-րդ հոդվածով, 2-ը՝ 138-րդ հոդվածով, 1-ը՝ 139-րդ հոդվածով, 12-ը՝ 141-րդ հոդվածով, 2-ը՝ 142-րդ հոդվածով, 1-ը՝ 170-րդ հոդվածով, 8-ը՝ 173-րդ հոդվածով, 4-ը՝ 185-րդ հոդվածով, 11-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի այլ հոդվածներով: Միաժամանակ, ըստ Ոստիկանության տվյալների՝ 2017 թվականի ընթացքում ընտանեկան բռնության առիթով Ոստիկանությունում 593 դեպքով նախապատրաստվել են նյութեր, 168 դեպքով հարուցվել է քրեական գործ: Նախապատրաստված 593 նյութերից 592-ով քրեական գործի հարուցումը մերժվել է՝ դիմողի բողոքի բացակայության հիմքով:

Վերը նշված 458 քրեական գործերից մեղադրական եզրակացությամբ դատարան են ուղարկվել 86 քրեական գործեր: 281 քրեական գործերով վարույթը կարճվել է, որից 69-ը՝ արդարացման հիմքով, իսկ 212-ը՝ ոչ արդարացման հիմքով: Վարույթը կասեցվել է 28 քրեական գործերով, 12-ը՝ անձի հետախուզման մեջ գտնվելու հիմքով, 16-ը՝ այլ հիմքերով:

Ավելին, անհրաժեշտ է ընդգծել, որ վերոնշյալ վիճակագրական տվյալները չեն արտացոլում կանանց նկատմամբ և ընտանեկան բռնության ամբողջական և իրական պատկերը նաև այն պատճառով, որ Հայաստանում ընտանեկան բռնության դեպքերի միասնական վիճակագրություն չի վարվում, ինչի արդյունքում բացակայում են բռնության դեպքերի, դրանց առաջացման պատճառների ու հատկապես խոցելի խմբերի նկատմամբ բռնության ներգործության վերաբերյալ պաշտոնական տվյալներ[232]: Ավելին, առկա պաշտոնական տվյալները տարբերվում են ոչ պաշտոնական տվյալներից: Մասնավորապես, «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիայի տվյալներով՝ 2017 թվականի առաջին 7 ամիսներին ստացվել է ընտանեկան բռնության 4500 ահազանգ[233]:

Խնդիրը նախևառաջ այն է, որ մինչև 2017 թվականի դեկտեմբերի օրենսդրական փոփոխություններն օրենսդրությամբ տրված չէր «ընտանեկան բռնություն» միասնական հասկացությունը: Արդյունքում՝ յուրաքանչյուր իրավասու մարմին տվյալները հավաքագրում է՝ հաշվի առնելով իր կողմից ընդունելի կարգավորումները, չափանիշները, դասակարգիչները: Բացի այդ, կանանց նկատմամբ և ընտանեկան բռնության որոշ դրսևորումներ նախքան վերոնշյալ օրենսդրական փոփոխություններն առհասարակ կարգավորված չեն եղել ՀՀ օրենսդրությամբ, և բռնության այդ տեսակից տուժած անձանց կողմից առհասարակ դիմում չի ներկայացվել: Վիճակագրական ճշգրտության վրա ազդում է նաև այն, որ այս երևույթը հասարակության կողմից ընկալվում է որպես մասնավոր դեպք, որի մասին բարձրաձայնելն ամոթալի է, ուստի հասարակության շատ անդամներ խուսափում են բռնության՝ իրենց հայտնի դեպքերի վերաբերյալ հաղորդում ներկայացնելուց:

---

[232] Այս մասին նշվել է նաև Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի կողմից Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի եզրափակիչ դիտարկումներ (CEDAW/C/ARM/CO/5-6), կետ 37:

[233] http://coalitionagainstviolence.org/en/home/, տեղեկատվությունը 12.02.2017թվականի դրությամբ:

Ընտանեկան բռնության դեմ պայքարի ոլորտի օրենսդրական կարգավորման խնդիրներ

2017 թվականի դեկտեմբերի 13-ին ընդունվեց «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքը և դրան հարակից մի շարք օրենքներ:

Օրենքի ընդունմանը նախորդեցին լայնածավալ հանրային քննարկումներ հասարակության տարբեր ներկայացուցիչների մասնակցությամբ: Այս ընթացքում կարևոր էր նաև Մարդու իրավունքների պաշտպանի դերը: Մասնավորապես, Պաշտպանը՝ որպես մարդու իրավունքների պաշտպանության ազգային ինստիտուտ, օրենսդրական նախագծերի քննարկման ընթացքում մշտապես աշխատանքներ է տարել օրենքի նախագիծը մշակողների, նախագծի վերաբերյալ դրական և բացասական դիրքորոշում ունեցող անձանց ու հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև միջազգային գործընկերների հետ: Մարդու իրավունքների պաշտպանի կողմից քանիցս ընդգծվել է հասարակության տարբեր ներկայացուցիչների, հասարակական կազմակերպությունների մասնակցության կարևորությունն օրենսդրական գործընթացներում: Այս առումով կարևոր դեր ստանձնեց Արդարադատության նախարարությունը հանրային քննարկումների կազմակերպման ու ղեկավարման հարցում: Կարևոր էր նաև Պաշտպանի դերը, որը հանդես եկավ կապող օղակի դերում՝ հնարավորություն ունենալով տարբեր շահառուների հետ համատեղ աշխատանքի ընթացքում նախագիծը մշակողներին փոխանցել նախագծի շուրջ առկա բոլոր կարծիքները, որոնք ուղղված էին օրինագծի կատարելագործմանը: Օրինագծի քննարկման փուլում կարևոր դերակատարում և հնարավորություններ ստեղծեց «https://www.e-draft.am/» կայքը[234], որը հնարավորություն տվեց քննարկման առարկա դարձնել նախագիծը հանրության լայն շերտի շրջանակներում: Օրինագիծը բազմաթիվ քննարկումներից հետո ընդունվեց 2017 թվականի դեկտեմբերի 13-ին:

Այնուամենայնիվ, 2017 թվականին ընտանեկան բռնության որոշ տեսակների պարագայում օրենսդրական համապարփակ կարգավորումների բացակայության արդյունքում բռնության ենթարկված մի շարք անձինք զրկվել են համապատասխան պաշտպանություն և ծառայություններ ստանալու հնարավորությունից:

Խնդիրն առաջին հերթին այն է, որ ընտանեկան բռնության ոչ բոլոր տեսակներն են ներպետական օրենսդրությամբ որակվել որպես այդպիսին և, ըստ այդմ, իրավասու մարմինները չեն կարողանում համապատասխան արձագանք տալ այդ դեպքերին: ՀՀ քրեական օրենսդրությամբ քրեորեն պատժելի արարքներ են համարվում ֆիզիկական բռնության որոշ տեսակները, ինչպես նաև սեռական բռնությունը, (օրինակ՝ ծեծ, բռնաբարություն և այլն): ՀՀ օրենսդրությունը որոշ առումով կարգավորում է նաև հոգեբանական բռնությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածը սահմանում է ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը): Այնուամենայնիվ, ՀՀ օրենսդրությամբ կարգավորված չէ, օրինակ, հետամտումը («պարբերաբար մեկ այլ անձի հետապնդելը, մեկ այլ անձի հետ անցանկալի հաղորդակցության մեջ ներգրավվելը

[234] Կայքը հնարավորություն է տալիս նախագիծը ներբեռնողին համապատասխան նշում կատարել այն մասին, որ նախագծի վերաբերյալ իրականացվելու են նաև հանրային լսումներ: Այս հնարավորությունը թույլ է տալիս ընդգծել, որ կայքը չի կարող փոխարինել հանրային քննարկումները: Անհրաժեշտ է նշել, որ կայքի այս հնարավորությունը հաճախ չի օգտագործվում տարբեր իրավական ակտերի նախագծերի հեղինակների կողմից:

կամ անձին հետևելու մասին իմաց տալը». խոսքը տուժողին ֆիզիկապես հետևելու, նրա աշխատանքի վայր, սպորտային կամ կրթական հաստատություն այցելելու, ինչպես նաև տուժողին վիրտուալ աշխարհում հետևելու, (...) մեկ այլ անձի գույքը վնասելու, անձի անձնական իրերի վրա աննշան հետքեր թողնելու, անձի տվյալներով առցանց կեղծ անուններով հաշիվներ բացելու կամ սուտ տեղեկություններ տարածելու մասին է), հարկադիր ամուսնությունը, հղիության արհեստական ընդհատումը հարկադիր կատարելը և այլն: Մինչդեռ, ընտանեկան բռնությունից տուժած անձանց ծառայություն մատուցող մի շարք հասարակական կազմակերպություններ, ինչպես նաև իրավապահ մարմինների և դատական համակարգի մի շարք ներկայացուցիչներ նշել են, որ իրենք ականատես են եղել նաև բռնության այս տեսակներին:

Միջազգային փաստաթղթերի և մի շարք երկրների օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ընտանեկան բռնության դեմ պայքարի արդյունավետ միջոց է դրա քրեականացումը: Ընդ որում, դա կարող է դրսևորվել կամ մեկ հանցակազմի նախատեսմամբ, կամ ընդհանուր հանցակազմերով գործը քննելիս որպես պատիժը և պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք՝ տուժողի և բռնություն գործադրած անձի միջև ընտանեկան կապը նախատեսելը[235]:

Ընտանեկան բռնության դեպքերին արդյունավետ արձագանքելուն կարող է խոչընդոտել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով նախատեսված՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքը, այն է՝ տուժողի վարքագծի հակաօրինականությունը կամ հակաբարոյականությունը, որով պայմանավորվել է հանցագործությունը: Ընտանեկան բռնության դեպքում նման մեղմացնող հանգամանք նախատեսելը համահունչ չէ միջազգային չափանիշներին: Մասնավորապես, «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 42-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործությունների անընդունելի արդարացումներ են համարվում՝ հանուն, այսպես կոչված, «պատվի» կատարվող հանցագործությունները: Սա վերաբերում է, մասնավորապես, այն պնդումներին, որ տուժողի կողմից խախտվել են պատշաճ վարքագծի մշակութային, կրոնական, սոցիալական կամ ավանդույթային նորմերը կամ սովորույթները, որոնք արդարացումներ են հանդիսանում բռնության գործադրման համար:

Մեկ այլ խնդիր է ընտանեկան բռնության դեպքերում հանրային և մասնավոր մեղադրանքի կարգով քննվող գործերի իրավական կարգավորումները: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածը սահմանում է, որ կատարված հանցագործության ծանրությունից և բնույթից ելնելով՝ քրեական դատավարությունում հետապնդումն իրականացվում է հանրային և մասնավոր կարգով: Մասնավոր հետապնդման գործեր են համարվում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերը: Մնացած բոլոր հանցագործությունների վերաբերյալ գործերը համարվում են հանրային հետապնդման գործեր: Խնդիրն այն է, որ մասնավոր մեղադրանքի պարագայում, երբ տուժողը հաշտվում է իրավախախտում կատարելու մեջ կասկածվող անձի հետ կամ հետ է վերցնում իր

[235] «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, հոդված 46:

դիմումը, քրեական հետապնդումն այդ անձի նկատմամբ դադարեցվում է: Այս առումով, բռնություն գործադրած անձին պատասխանատվության ենթարկելու բեռը կարող է ընկնել տուժողի վրա, ինչը կարող է նրանց հետ պահել իրավապահ մարմիններին դիմելուց: Ավելին, հաշվի առնելով տուժողի հոգեբանական խոցելի իրավիճակը, ինչպես նաև բռնություն գործադրած անձանց կողմից տուժողների նկատմամբ ճնշումներ գործադրելու բարձր ռիսկը՝ այս գործերը մասնավոր մեղադրանքով քննելու պարագայում ամենայն հավանականությամբ դիմումը տուժողի կողմից հետ կվերցվի:

Միջազգային փորձի և մի շարք միջազգային փաստաթղթերի ուսումնասիրությունը ևս ցույց է տալիս, որ վիճահարույց է մասնավոր մեղադրանքի կարգով գործերի քննությունը: Այսպես, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից ներկայացված հանձնարարականի համաձայն՝ անդամ պետությունները պետք է քաջալերեն դատախազությանը, որպեսզի վերջինս կանանց և երեխաների նկատմամբ բռնության դեպքերը համարի ծանրակշիռ հանգամանք այդ դեպքերը հանրային մեղադրանքի կարգով քննելու համար[236]: Համանման դիրքորոշում է ներկայացված նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի «Օփուզն ընդդեմ Թուրքիայի» գործով, որը ընտանեկան բռնության վերաբերյալ դատարանի կողմից քննված հիմնարար գործերից է, որի շրջանակներում է հենց դատարանն է ձևավորել կարևորագույն դիրքորոշումներ: Մասնավորապես, դատարանը նշել է, որ հաշվի առնելով բռնություն կիրառած անձի կողմից նախկինում կատարված իրավախախտումների լրջությունն ու ծանրությունը՝ քրեական հետապնդում իրականացնող մարմինները պետք է հնարավորություն ունենան շարունակել գործի քննությունը՝ որպես հանրային մեղադրանքի գործ, անկախ նրանից՝ տուժողը հետ է վերցրել իր բողոքը, թե՝ ոչ[237]:

Նշված խնդրի լուծման կապակցությամբ 2017 թվականի օրենսդրական փոփոխությունների արդյունքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածը լրացվեց 4-րդ մասով՝ նախատեսելով, որ անկախ տուժողի կողմից բողոք ներկայացնելուց՝ դատախազն իրավասու է սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություններով հարուցել քրեական գործ ընտանիքում բռնության դեպքերում, եթե անձն իր անօգնական վիճակի կամ ենթադրյալ հանցանք կատարողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով չի կարող պաշտպանել իր իրավաչափ շահերը: Այս դեպքում քրեական գործը հարուցվում և քննվում է սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով, և տուժողի ու մեղադրյալի հաշտության դեպքում քրեական հետապնդումը չի դադարեցվում[238]:

Ընտանեկան բռնության դեմ արդյունավետ պայքարին խոչընդոտում է նաև տուժողների համար պաշտպանական բավարար միջոցների բացակայությունը: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական դատավարությանը մասնակցող յուրաքանչյուր անձ, ով կարող է հաղորդել տվյալներ, որոնք նշանակություն ունեն հանցագործությունը բացահայտելու և դրա կատարողին հայտնաբերելու համար, ինչի հետևանքով կարող են վտանգվել նրա, նրա

[236] Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեից թիվ (2002)5 հանձնարարական:
[237] Տե՛ս Օփուզն ընդդեմ Թուրքիայի (Opuz v. Turkey) գործով 2009 թվականի սեպտեմբերի 9-ի վճիռը, գանգատ թիվ 33401/02, կետեր 128, 145:
[238] Նշված կարգավորումը ուժի մեջ է մտել 2018 թվականից

ընտանիքի անդամի, մերձավոր ազգականի կամ մերձավորի կյանքը, առողջությունը, գույքը, իրավունքներն ու օրինական շահերը, ունի պաշտպանության իրավունք:

Նույն օրենսգրքի 98-րդ հոդվածի համաձայն՝ պաշտպանության միջոցներն են, օրինակ՝ անձին պաշտոնապես նախազգուշացնելը, ումից սպասվում է պաշտպանվող անձի նկատմամբ բռնության վտանգ կամ այլ հանցանքի կատարում, պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալները պաշտպանելը, պաշտպանվող անձի անձնական անվտանգությունն ապահովելը, բնակարանը և այլ գույքը պահպանելը և այլն: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, սակայն, որ օրենքով սահմանված այս միջոցները և դրանց ապահովման համար անհրաժեշտ իրավական կարգավորումները բավարար չեն և ընտանեկան բռնության դեպքերում չեն կիրառվում: Նոր օրենքով արդեն իսկ նախատեսվել են պաշտպանական որոշումներ, որոնք սակայն, կիրառություն կստանան միայն 2018 թվականից:

Ծառայությունների տրամադրման բացակայություն

Ընտանեկան բռնության ենթարկված անձինք հաճախ են ունենում հատուկ ծառայությունների կարիք: Աջակցության կարիք են ունենում նաև ընտանիքի այն անդամները, ովքեր բռնության ուղղակի տուժողներ չեն, ինչպես նաև բռնություն գործադրած անձը:

Այսպես, մի շարք դեպքերում ընտանեկան բռնությունից տուժած անձանց, այդ թվում նաև կանանց անհրաժեշտ է հոգեբանական, սոցիալական և տնտեսական աջակցություն, որը նրանց 2017 թվականին պետության կողմից չի տրամադրվել: Մասնավորապես, 2017 թվականի ողջ ընթացքում Հայաստանում չեն գործել պետության կողմից շահագործվող կացարաններ, հատուկ թեժ գծեր, որոնք մատչելի կլինեն յուրաքանչյուրի համար (այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար), որոնք շուրջօրյա աջակցություն և խորհրդատվություն կտրամադրեն դրա կարիքն ունեցող անձանց: Հայաստանում նշված և այլ ծառայություններն ընտանեկան բռնությունից տուժած անձանց համար 2017 թվականին շարունակվել են տրամադրվել հասարակական կազմակերպությունների կողմից:

Ընտանեկան բռնության դեպքերում իրավապահ մարմիններին դիմելու հարցում խոչընդոտ կարող է լինել նաև իրավաբանի ծառայությունների ոչ մատչելիությունը: Այսպես, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածով (նշյալ ձևակերպմամբ գործել է ողջ 2017 թվականին)՝ անվճար իրավաբանական օգնությունից, այսինքն՝ ընտանեկան բռնության ենթարկված անձանց համար հանրային պաշտպանի ծառայություններից օգտվելու հատուկ կարգավորում նախատեսված չի եղել: Արդյունքում, 2017 թվականի ընթացքում Հայաստանում ընտանեկան բռնության զոհերին անվճար իրավաբանական օգնություն տրամադրվել է միայն հասարակական կազմակերպությունների կողմից:

2017 թվականի դեկտեմբերի օրենսդրական փոփոխությունների արդյունքում նախատեսվել է պետության կողմից ապաստարանների, աջակցման կենտրոնների ստեղծման, ինչպես նաև այլ ծառայությունների մատուցման հնարավորությունը: Ավելին, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքին համապատասխան՝ 2018 թվականի երկրորդ կիսամյակից անվճար իրավաբանական օգնություն կտրամադրվի նաև «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց

պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ընտանիքում բռնության ենթարկված անձանց:

Իրավագիտակցության ցածր մակարդակ և անվստահություն պետական մարմինների նկատմամբ՝ հատկապես ընտանեկան հարցերին միջամտության առումով

Հայաստանյան հասարակության մի մասը, ընդ որում՝ անկախ կրթական մակարդակից, դեռևս ունի իրավագիտակցության ցածր մակարդակ և չի գիտակցում իր ամենօրյա վարքի բացասական ազդեցությունը երկրի և հասարակության զարգացման, հասարակության մեջ մարդու պաշտպանվածության մակարդակի վրա: Մի կողմից, պետական մարմինների կողմից նման վարքագծերի հանդեպ անուշադրությունն ու անտարբերությունը և, մյուս կողմից, բնակչության ստվար զանգվածի վարքի ինքնակարգավորումը բերում են հասարակության խոցելի օղակների, մասնավորապես՝ կանանց իրավունքների խախտումների պրակտիկայի կենցաղայնացմանը, ամենօրյա և սովորական դառնալուն: Այս պարագայում օրենսդրական բարենպաստ փոփոխություններն ու դրանցով նախատեսված սանկցավորումը նման քաղաքացիների կողմից ընկալվում է որպես միջամտություն իրենց ամենօրյա կյանքին, գործերին, ավանդույթներին, ուստի և հանդիպում հասարակության որոշակի դիմադրության:

Հայաստանյան հասարակության մեջ դեռևս տարածված է նաև հասարակական կարծիքի՝ բռնության ենթարկված անձին մեղադրելու, և ոչ թե պաշտպանելու հակվածությունը: Այս երևույթի դրսևորումներից է բռնության զոհի՝ իրավապահ մարմիններին դիմելու փորձերի որակումը որպես «գործ տալը», «աղբն ընտանիքից դուրս բերելը», ինչը հատկապես բռնության ենթարկված կնոջ պարագայում կարող է կարծրատիպորեն դառնալ կնոջ բարոյականության աստիճանը համայնքում քննարկելու առիթ: Սա հատկապես վերաբերում է գյուղական համայնքներին, որտեղ պատմականորեն ձևավորվել է հարաբերականորեն փակ սոցիալական միջավայր, և հիմնահարցերի քննարկումը կրում է ներընտանեկան բնույթ: Այս պարագայում ընտանեկան բռնության ենթարկման դեպքերը կարող են մնալ ընտանիքի ներսում և մշտական բնույթ կրել:

Հասարակությունում առկա կարծրատիպեր և մասնագետների կարողությունների զարգացման անհրաժեշտություն

Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի գործնական խնդիրներից են հասարակությունում առկա կարծրատիպերը, որոնց պատճառով բազմաթիվ դեպքեր մնում են առանց քննության: Ընտանեկան բռնության վերաբերյալ թե՛ զանգվածային լրատվության միջոցներում, թե՛ հասարակության մեջ, թե՛ իրավասու պետական մարմինների ներկայացուցիչների մոտ առկա են կարծրատիպային մոտեցումներ, որոնք ավելի են դժվարացնում բռնության դեպքերի բացահայտումը և դրա դեմ պայքարը: Հատկապես հայրենական արտադրության հեռուստասերիալներում հայկական ընտանիքների մոդելների ցուցադրումը՝ բռնության անպատժելի առօրյայով և հատկապես կանանց՝ որպես բռնության զոհերի թիրախավորմամբ, գործում է որպես ընտանեկան բռնությունը քարոզող և լեգիտիմացնող մեխանիզմ:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հարցվածների 35.7 տոկոսը, որից 44.6 տոկոսը տղամարդ են և 27.8 տոկոսը՝ կանայք, համաձայն են, որ կինը պետք է հանդուրժի բռնությունը՝ հանուն ընտանիքի միասնության[239]: Որոշ դեպքերում «կինը ծեծի է արժանի»

[239] http://www.unfpa.am/sites/default/files/IMAGES-executive%20summary-Arm.pdf

պնդման հետ համաձայն է հարցվածների 27.7 տոկոսը, որից 35.2 տոկոսը՝ տղամարդ և 21 տոկոսը կին են[240]:

Կարծրատիպային մոտեցումն իրավասու պետական մարմինների ներկայացուցիչների կողմից շատ հաճախ բերում է կրկնակի զոհացման, ինչը կարող է հանդիսանալ խոչընդոտ հետագայում նման դեպքերի բացահայտման համար, քանզի մի շարք դեպքերում տուժողները չեն ցանկանա կրկին դիմել իրավասու մարմիններին[241,242]:

Այս առումով կարևոր դերակատարում ունեն նաև լրատվության միջոցները, քանի որ նրանց կարող են ազդել հասարակությունում առկա պատկերացումների փոփոխմանը: Հենց այդ տրամաբանությամբ է, որ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և Հայաստանում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանատան համագործակցության արդյունքում դեկտեմբերի 3-9-ը Բեռլին քաղաքում Պաշտպանի աշխատակազմի և լրատվության ներկայացուցիչների համար կազմակերպվել է «Մարդու իրավունքները և ընտանեկան բռնությունը» թեմայով տեղեկատվական այցելություն: Այցի ընթացքում լրագրողները հանդիպումներ են ունեցել ընտանիքում բռնության կանխարգելման ուղղությամբ պետական ֆինանսավորմամբ աշխատող կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, եղել ընտանեկան հարցերով մասնագիտացված դատարանում, հանդիպել ընդդեմ բռնության հանդես եկող հասարակական կազմակերպությունների ղեկավարների հետ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. փոփոխություններ կատարել ՀՀ քրեական օրենսգրքում՝ այն համապատասխանեցնելով կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության վերաբերյալ միջազգային չափանիշներին,

2. *կազմակերպել համապատասխան մասնագետների (քննիչներ, դատախազներ, դատավորներ և այլն) պարտադիր և շարունակական դասընթացներ՝ ՀՀ նոր օրենսդրական կարգավորումների, ինչպես նաև միջազգային չափանիշների վերաբերյալ, որոնք նաև ուղղված կլինեն կանանց նկատմամբ բռնության մասին կարծրատիպերի վերացմանը,*

3. *բարձրացնել կանանց իրազեկվածությունն իրենց իրավունքների և դրանց պաշտպանության առկա մեխանիզմների վերաբերյալ,*

4. *մշակել և իրականացնել քարոզչական ծրագրեր (սոցիալական գովազդներ, պաստառներ, կարճամետրաժ ֆիլմեր), որոնք ուղղված կլինեն ընտանեկան բռնության կանխարգելմանը*:

---

[240] Տես նույն տեղում

[241] Հասարակական կազմակերպությունների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ արձանագրվել է նաև դատարանի ու նախաքննության մարմինների կողմից երկակի ստանդարտների կիրառման դեպքեր, որի հիմքով էլ խախտվել է տուժողի արդյունավետ իրավական պաշտպանության միջոցների իրավունքը http://coalitionagainstviolence.org/wp-content/uploads/2017/01/Report-short.pdf?x24321

[242] Խնդրի մասին բարձրաձայնել է նաև Խոշտանգումների դեմ ՄԱԿ-ի կոմիտեն, որը նշել է, որ բռնության դեպքերի մասին բարձրաձայնման խոչընդոտ է հանդիսանում իրավապահ մարմինների կողմից կարծրատիպերի պատճառով բռնությունն արդարացնելը: Խոշտանգումների դեմ ՄԱԿ-ի կոմիտեի՝ Հայաստանի 4-րդ պարբերական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ,
http://tbinternet.ohchr.org/Treaties/CAT/Shared%20Documents/ARM/INT_CAT_COC_ARM_25977_E.pdf

2. Թրաֆիքինգ և շահագործում

Կանանց նկատմամբ բռնության ձև է նաև թրաֆիքինգը[243]: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը ՀՀ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի հարցերով խորհրդի անդամ է, որին կից աշխատանքային խմբում ներկայացված են նաև աշխատակազմի համապատասխան ներկայացուցիչները:

Առկա տվյալները վկայում են այն մասին, որ թրաֆիքինգի և շահագործման ենթարկվող անձանց մեծամասնությունը կանայք են: Այսպես, 2017 թվականի ընթացքում ներկայացվել է մարդկանց թրաֆիկինգի և շահագործման 5 միջնորդություն 16 անձի վերաբերյալ, որի արդյունքում նույնացվել և աջակցության իրավունք է ստացել 13 անձ: 13 անձից 10-ը եղել են կանայք: Ընդ որում՝ այդ դեպքերից 8-ը եղել են սեռական շահագործման դեպքեր[244]: Ուստի բռնության այս տեսակը ևս համամասնորեն է ազդում հենց կանանց վրա: Թրաֆիքինգի դեմ պայքարի արդյունավետությունը կապված է երևույթի վերաբերյալ իրազեկման մակարդակից: Այդ իսկ պատճառով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը պարբերաբար կազմակերպում է տեղեկացվածության բարձրացմանն ուղղված արշավներ և քննարկումներ մարդու իրավունքներին և հիմնարար ազատություններին վերաբերող տարբեր թեմաներով, որոնք ընդգրկում են նաև տեղեկությունների փոխանցում թրաֆիքինգի և դրանից խուսափելու մասին: 2017 թվականի ընթացքում ճանաչողական այցով Պաշտպանի աշխատակազմ են այցելել մի շարք հանրակրթական ուսումնական հաստատությունների և երեխաների խնամք իրականացնող կենտրոնների սաներ ինչպես Երևանից, այնպես էլ հանրապետության մի շարք մարզերից: Մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված մի շարք հարցերի ներկայացման և դրանց շուրջ կազմակերպված քննարկումների ընթացքում ներկայացվել են նաև մարդկանց թրաֆիքինգի խնդիրները և վերջիններիս կանխարգելմանն ուղղված արդյունավետ պայքարի հիմնահարցերը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը 2017 թվականի ընթացքում մասնակցել է նաև մարդու իրավունքների և ազատությունների տարբեր հարցերին վերաբերող իրազեկվածության բարձրացմանն ուղղված քննարկումներին, սեմինարներին և այլ միջոցառումներին: Այսպես, «Մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ երիտասարդների իրազեկության բարձրացում» ծրագրի շրջանակներում 2017 թվականին Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը ներկայացրել է մարդու իրավունքների տեսանկյունից մարդկանց թրաֆիքինգի հիմնահարցերը, թրաֆիքինգի դեմ պայքարի միջազգային չափանիշները, թրաֆիքինգից տուժողների իրավունքներն ու մարդու իրավունքների և ազատություններին վերաբերող այլ թեմաներ:

Ուստի անհրաժեշտ է շարունակել իրազեկման արշավները մարդկանց թրաֆիքինգի և շահագործման երևույթի, դրանից զերծ մնալու ուղիների և այդ դեպքերում առկա պաշտպանության մեխանիզմների վերաբերյալ:

[243] ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 132:
[244] http://www.mlsa.am/?page_id=1345

3. Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումներ

Թեև վերջին տարիներին կանանց և տղամարդկանց հավասար դերի խրախուսման, ինչպես նաև սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելման ուղղությամբ իրականացվել են մի շարք ծրագրեր, այնուամենայնիվ, առ այսօր առկա է սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների խնդիրը: Այն կանանց նկատմամբ խտրականության դրսևորում է և պայմանավորված է ինչպես հասարակությունում ավանդաբար հաստատված պատկերացումներով (օրինակ՝ արու զավակ ունենալու նախապատվությունը), այնպես էլ՝ կանանց դերի վերաբերյալ առկա կարծրատիպային մոտեցումներով:

Հաշվի առնելով հարցի կարևորությունը՝ մի շարք միջազգային կազմակերպություններ կոչ են արել հրատապ միջոցներ ձեռնարկել խնդրի լուծման ուղղությամբ[245]: Հայաստանում կանանց և տղամարդկանց սեռերի հարաբերակցության նորմայից շեղումը սկսել է նկատվել դեռևս 1991 թվականից, իսկ 2000 թվականին այն հասել է մինչև 120 տղա - 100 աղջիկ հարաբերակցության այն դեպքում, երբ նման հարաբերակցության համար սահմանված նորման կազմում է 102-103 տղա - 100 աղջիկ հարաբերակցությունը[246]: Դեռևս 2011 թվականի ԵԽԽՎ-ի թիվ 1829 հանձնարարականով Հայաստանին հանձնարարվել է, ի թիվս այլ գործողությունների, առաջին հերթին ուսումնասիրել սեռով պայմանավորված հղիությունների ընդհատման պատճառները, քայլեր ձեռնարկել կանանց դերի բարձրացման ուղղությամբ, ապահովել կանանց նկատմամբ խտրականությունն արգելող իրավական նորմերի կիրառումը, աշխատանքներ իրականացնել համապատասխան բուժաշխատողների հետ՝ ներկայացնելով խնդիրը և վերջինիս հնարավոր հետևանքները[247]:

Խնդրի իրական պատկերը վերհանելու նպատակով մի շարք ուսումնասիրություններ են իրականացվել հասարակական կազմակերպությունների կողմից: Այսպես, 2017 թվականին հրապարակված հետազոտություններից մեկի շրջանակներում հարցված կանանց 56.3%-ի շրջապատում և 82%-ի ընտանիքում տղա-աղջիկ երեխաների նախապատվությունը բաշխված է հավասարապես: Կանանց մյուս մասը նշում է, թե իր շրջապատում տղա երեխան աղջկանից վեցապատիկ ավելի նախապատվելի է (36.7%՝ 6.2%-ի համեմատ), և կրկնակի ավելի՝ ընտանիքում (12.9%՝ 5.2%-ի համեմատ): Ավելին, ընտանիքում երեխայի սեռի նախապատվության վերաբերյալ տվյալները՝ ըստ բնակավայրի, վկայում են, որ գյուղական բնակավայրերում տղա երեխային նախապատվություն տվող ընտանիքները եռապատիկ ավելի են աղջիկ երեխային նախապատվություն տվողներից (16.1%՝ 5.2%-ի համեմատ), մինչդեռ քաղաքային բնակավայրերում այս հարաբերակցությունը ընդամենը կրկնապատիկ է ավելի (11.2%՝ 5.2%-ի համեմատ): Քաղաքային և գյուղական բնակավայրերում բնակվող կանանց, համապատասխանաբար, 84%-ը և 79%-ը նշել են, որ իրենց ընտանիքում երեխայի սեռը նշանակություն չունի: Ավելին, պարզվել է նաև, որ Հայաստանի բոլոր մարզերում հստակ

[245] 1995 թվականին Պեկինում անցկացված «Կանանց մասին» 4-րդ համաշխարհային գիտաժողովի ժամանակ սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումը նկարագրվել է որպես կանանց դեմ բռնության դրսևորում: Երեք տարի անց ՄԱԿ-ի Գլխավոր գագաթաժողովում «Աղջիկ երեխաների մասին» բանաձևը հավանության արժանացավ և Պետություններին կոչ արվեց «ընդունել և կիրառել օրենսդրություն»:

[246] http://unfpa.am/sites/default/files/Sex-selective_abortions_report_Arm.pdf

[247] http://assembly.coe.int/Main.asp?link=/Documents/AdoptedText/ta11/ERES1829.htm#P7_28

արտահայտված է տղա առաջնեկ ունենալու նախապատվությունը: Նման նախապատվությունն առավել արտահայտված է Վայոց ձորի, Արարատի, Շիրակի և Լոռու մարզերում, մինչդեռ Երևանի և Սյունիքի կանանց մեծամասնությունը (համապատասխանաբար՝ 61.6% և 62.,4%) առաջին հղիության ժամանակ առաջնեկի սեռը չի կարևորել[248]:

Վերոնշյալ և այլ տվյալները վկայում են հասարակությունում դեռևս առկա կարծրատիպերի մասին, որոնք պատճառ են սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման: Բացի այդ, խնդիրը նաև այն է, որ բուժաշխատողների կողմից հղիության 12 շաբաթից հետո իրականացվող արհեստական ընդհատումների համար օրենքով անհրաժեշտ բժշկասոցիալական ցուցիչների պահպանման նկատմամբ բավարար վերահսկողություն առկա չէ: ՀՀ առողջապահության նախարարության տեղեկությունների համաձայն՝ 2017 թվականին ևս 12-րդ շաբաթը լրանալուց հետո հղիության արհեստական ընդհատում իրականացնելիս բուժաշխատողի կողմից հղիության բժշկասոցիալական ցուցումների դիտավորյալ կեղծ կիրառման դեպքեր չեն արձանագրվել: Այս պարագայում հարց է առաջանում, թե ինչպես են կատարվել սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումները՝ հաշվի առնելով այն, որ երեխայի սեռը հիմնականում հնարավոր է նշել հղիության 12-րդ շաբաթից հետո: Ուստի՝ կարելի է եզրակացնել, որ որոշ դեպքերում արհեստական ընդհատումը կատարվում է հղիության 12-րդ շաբաթից հետո:

«Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» № 483-Ն որոշմամբ, ըստ այդմ ամրագրված է պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելմանն ուղղված արդյունավետ պայքարի համար քայլերի ձեռնարկումը: Ի կատարումը վերոնշյալի՝ պտղի սեռով պայմանավորված հղիությունների ընդհատման կանխարգելման նպատակով շարունակվել են միջոցառումները հանրության մեջ հղիության արհեստական ընդհատումների, այդ թվում՝ պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների նկատմամբ մերժողական վերաբերմունքի ձևավորման ու կանխարգելման միջոցով:

Տարվել են իրազեկման աշխատանքներ, ինչպես նաև շարունակվել է ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի աջակցությամբ մշակված և ՀՀ առողջապահության նախարարի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի համատեղ հրամանով հաստատված՝ «Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելման 2015-2017 թվականների ծրագրի» միջոցառումների իրականացումը, որի շրջանակներում կատարվել են հանրային իրազեկմանն ուղղված լայնածավալ քարոզչական աշխատանքներ՝ պետական կառույցների, միջազգային կազմակերպությունների (ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ, «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն», «Փրկեցեք երեխաներին», «Վորլդ Վիժն» և այլն) և տեղական հասարակական ու համայնքային կազմակերպությունների հետ համագործակցությամբ: Մշակվել է «Առանց բժշկական ցուցման երեխայի սեռի խտրական ընտրության երևույթի տարածվածության, հետևանքների և պատճառների վերաբերյալ որակական և

[248] Զեկույց. սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների տարածվածությունն ու պատճառները Հայաստանում, https://ichd.org/?laid=2&com=module&module=menu&id=8

քանակական հետազոտությունների և տվյալների վերլուծության» մեթոդական ուղեցույցը: ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հետ ՀՀ առողջապահության նախարարության համագործակցության շրջանակներում 2017 թվականի 2-րդ կիսամյակում նույնպես շարունակվել են ծննդօգնության հիվանդանոցային ծառայություններ մատուցող հաստատությունների աշխատակիցների, այդ թվում՝ նշված ոլորտի ղեկավարության, երեխայի սեռը որոշելու նպատակով ուլտրաձայնային հետազոտություն կատարող անձնակազմի և գինեկոլոգների համար ուսուցողական ծրագրեր:

Ըստ ՀՀ առողջապահության նախարարության տվյալների՝ իրականացված միջոցառումների արդյունքում արձանագրվել են որոշակի դրական միտումներ սելեկտիվ աբորտների հիմնախնդրի հաղթահարման գործընթացում: Այսպես, եթե սելեկտիվ աբորտների դեմ պայքարին ուղղված միջոցառումներին նախորդող՝ 2008-2012 թվականների ժամանակահատվածում ծնվածների մեջ աղջիկ-տղա հարաբերակցության միջին ցուցանիշը կազմել է 100/115, ապա 2014 թվականին՝ 100/113.4: 2015 թվականին՝ 100/112.7, 2016 թվականին՝ 100/111.9, իսկ 2017 թվականի 6 ամիսներին՝ 100/110.3:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով այն, որ խնդիրը կրում է համակարգային բնույթ, անհրաժեշտ է այն կանխարգելել շարունակական բնույթ կրող միջոցառումների իրականացման միջոցով՝ կանանց կարողությունների զարգացման, որոշումների կայացման ազատության և այլ իրավունքների մասին իրազեկելու, ինչպես նաև բուժաշխատողների նկատմամբ վերահսկողության ուժեղացման միջոցով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է՝

1. ուսումնասիրել բնակչության տարբեր շերտերի՝ պտղի սեռով պայմանավորված հղիությունների ընդհատման վերաբերյալ դրական վերաբերմունքի պատճառաբանումները, այդ թվում՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները, ինչը թույլ կտա այդ երևույթի դեմ պայքարն ավելի հասցեական դարձնել,

2. զանգվածային լրատվության միջոցներով, կրթական ծրագրերում համապատասխան ուղղություններ ներառելով, ինչպես նաև այլ միջոցներով նպաստել սեռային սկզբունքով խտրականությունների կանխարգելմանը,

3. ՀՀ առողջապահության նախարարության հետ համատեղ մշակել և կիրառել պարտադիր բնույթ կրող մեխանիզմներ՝ վերահսկելու բուժաշխատողների կողմից հղիության 12-րդ շաբաթից հետո արհեստական ընդհատման ժամանակ բժշկասոցիալական ցուցիչների պահպանումը:

4. Կանանց մասնակցությունը քաղաքական կյանքին

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցներով և հաղորդմամբ, ինչպես նաև մի շարք միջազգային և հասարակական կազմակերպությունների կողմից տարիներ շարունակ բարձրաձայնվում է կանանց՝ հասարակական և քաղաքական կյանքում լիարժեք ներգրավման անհրաժեշտության հարցը: Թեև առկա ուսումնասիրությունները վկայում են, որ Հայաստանում կանայք իրենց կրթությամբ չեն զիջում տղամարդկանց[249], այնուամենայնիվ, դեռևս առկա է քաղաքական կյանքին կանանց ցածր ներգրավվածության խնդիրը:

[249] ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ, «Գենդերային ճեղքվածք. կանանց նկատմամբ խտրական դրսևորումների ախտորոշիչ ուսումնասիրություն», 2016 թվական, http://www.unfpa.am/sites/default/files/2016_Gender-Gap-factsheet_Arm.pdf

Խնդիրն այն է, որ հասարակությունում կանանց դերի մասին առկա պատկերացումների պատճառով կանայք հաճախ չեն դիտարկվում որպես որոշում կայացնողներ, ինչի արդյունքում չեն կարողանում ակտիվորեն ներգրավված լինեն հասարակական և քաղաքական մի շարք գործընթացներում: Բացի այդ, Հայաստանում քաղաքական իշխանությունն ուղղակիորեն առնչվում է տնտեսական իշխանության և ռեսուրսների վերահսկման հետ, ուստի և իշխանություն ունեցողները շահագրգռված չեն նորեկների, այդ թվում կանանց ակտիվ քաղաքական ներգրավվածության մեջ: Բացի այդ, քաղաքականության ոլորտում ընդունված ոչ բոլոր «խաղի կանոններն» են ծանոթ և ընդունելի կանանց համար, ուստի և անգամ քաղաքականապես ակտիվ կանայք հաճախ նախընտրում են ստանձնել երկրորդական դերեր: Ստացվում է մի իրավիճակ, երբ կանանց ներգրավվածությունը որոշակի ոլորտներում բավականին ցածր է, կանայք ունեն նաև ցածր ներգրավվածություն բարձրաստիճան պաշտոն զբաղեցնող անձանց շարքում:

Նշված իրավիճակը նաև ակներև է թվային ցուցանիշների ուսումնասիրման արդյունքում: Մասնավորապես, ՀՀ կառավարությունում 18 նախարարից միայն մեկ պաշտոնում է ներկայացված կին[250], նախարարների 57 տեղակալից միայն 3-ն է կին[251], իսկ ՀՀ կառավարությանն առընթեր 7 մարմինների ղեկավարի կամ ղեկավարների տեղակալների շարքում կանայք ներկայացված չեն[252]: Կառավարության համակարգում մեկ նախարարությունում է միայն աշխատակազմի ղեկավարի պաշտոնում ներկայացված կին[253]: Ավելին, ՀՀ ազգային ժողովի պատգամավորների թվում 131 պատգամավորից միայն 19-ն են կին[254], իսկ 9 հանձնաժողովներից միայն 1-ի նախագահն է կին[255]:

Դեռևս 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա տվյալները վկայում են, որ քաղաքացիական ծառայության համակարգում բարձրագույն պաշտոններ զբաղեցնող կանանց թիվը ևս կտրուկ նվազ է տղամարդկանց թվի համեմատ: Քաղաքացիական ծառայություն իրականացնող անձանց բարձրագույն պաշտոն է զբաղեցնում 107 արական և 20 իգական սեռի ներկայացուցիչ[256]: Այսպիսի ցուցանիշներ ներկայացված են նույնիսկ այն պարագայում, երբ կանայք կազմում են ՀՀ ընդհանուր բնակչության մոտ 51.9 տոկոսը[257]:

Ցածր է նաև կանանց ներկայացվածությունը տեղական ինքնակառավարման մարմիններում: Ըստ Երևանի քաղաքապետարանի տվյալների՝ Երևանի ավագանու 2017 թվականի ընտրություններից հետո 65 անդամից միայն 18-ն են կանայք: Երևան քաղաքն անկախությունից ի վեր կին քաղաքապետ չի ունեցել, իսկ քաղաքապետի 4 տեղակալների պաշտոններում կանայք ներկայացված չեն եղել նաև 2017 թվականին: Ավելին, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ համայնքների խոշորացման գործընթացում նկատվել է նաև կանանց ներգրավվածության նվազում: Օրինակ՝ Արագածավանում, որը խոշորացվել է, ավագանու անդամի 24 թեկնածուից միայն մեկն էր կին: Համայնքի կազմում

[250] http://gov.am/am/structure/
[251] http://www.gov.am/am/structure/
[252] http://gov.am/am/adjunct-bodies/
[253] http://moj.am/staff/structure_of_the_ministry
[254] http://www.parliament.am/deputies.php?lang=arm
[255] http://www.parliament.am/committees.php?lang=arm
[256] http://www.csc.am/documents/statistics/13.pdf
[257] 2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ-ում բնակչությունն ըստ սեռի կազմում են տղամարդիկ՝ 1.439.148, կանայք՝ 1.571.450, տե՛ս մանրամասն, http://armstat.am/

ընդգրկվել է չորս գյուղ: Նրանցից որևէ մեկի ավագանու կազմում կին չի եղել: Այս դեպքում իրավիճակն անփոփոխ է մնացել[258]:

Ուսումնասիրությունը փաստում է, որ 2016 թվականին խոշորացման ընտրությունների ընթացքում արձանագրված կանանց թվի առնվազն 2-3 անգամ նվազման միտումը պահպանվել է նաև 2017 թվականին[259]: Այսպես, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքների ամփոփումը ցույց է տվել, որ 2017 թվականի նոյեմբերի 5-ին ավագանու անդամի ընտրություններին 54 համայնքում մասնակցել են 983 թեկնածու, որոնցից 49-ը կամ 5%-ը կին էին: Ընտրությունների արդյունքում ընտրվածներից միայն 4.4%-ն է կին: Անհրաժեշտ է ընդգծել, որ ըստ նույն ուսումնասիրության՝ 2016 թվականի ՏԻՄ ընտրությունների արդյունքներով ավագանիներում կանանց ներկայացվածությունը 11.7 տոկոս էր, և այս առումով, նոյեմբերի 5-ի ընտրություններում լուրջ հետընթաց է արձանագրվել[260]:

Գեղարքունիքի մարզպետարանի տվյալների համաձայն՝ մինչև 2017 թվականի նոյեմբերի 5-ի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունը, մարզի համայնքների ավագանիների 610 անդամից 566-ը տղամարդ էին, 44-ը՝ կին, իսկ 92 համայնքների ղեկավարներից 89-ը՝ տղամարդ, 3-ը՝ կին: 2017 թվականի նոյեմբերի 5-ի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններից հետո՝ մարզում համայնքների ավագանիների 456 անդամից 441-ը տղամարդ է, 15-ը՝ կին, իսկ 57 համայնքների ղեկավարներից 56-ը՝ տղամարդ, 1-ը՝ կին:

Վերոնշյալ տվյալները վկայում են այն մասին, որ կանայք դեռևս բավարար կերպով ներկայացված չեն բարձր պաշտոններում և հասարակությունում առկա են կարծրատիպեր կանանց՝ որպես որոշում կայացնողների դիտարկման հարցում[261]:

Ուստի անհրաժեշտ է ձեռնարկել համակարգային քայլեր՝

1. հասարակությանը կանանց դերի, կանանց քաղաքական ներգրավվածության և հասարակական կյանքին կանանց մասնակցության կարևորության ընդգծման ուղղությամբ,

2. բարձրացնել կանանց քաղաքական և իրավական գիտակցության մակարդակը, նպաստել երիտասարդ կանանց մոտ քաղաքական համակարգի, գործընթացների և արդյունավետ որոշումների ընդունման մեթոդաբանության վերաբերյալ մասնագիտական գիտելիքների և հմտությունների զարգացմանը, երաշխավորել քաղաքական մրցակցության հավասար պայմաններ,

3. զանգվածային լրատվության, տարբեր քննարկումների և սեմինարների պարբերական իրականացման միջոցով կանանց իրազեկել իրենց իրավունքների վերաբերյալ:

5. Առողջության պահպանման իրավունք

Կանանց առողջության պահպանման իրավունքի հիմնական խնդիրը, որը Մարդու իրավունքների բոլոր պաշտպանների կողմից բարձրաձայնվել է դեռևս 2015 թվականից,

---

[258] http://womennet.am/tim-16/
[259] http://womennet.am/tim-16/
[260] http://womennet.am/tim-5nov/
[261] Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի եզրափակիչ դիտարկումներ (CEDAW/C/ARM/CO/5-6), կետեր 20, 21:

շարունակում է մնալ բժշկական ծառայությունների անմատչելիությունը: Խնդիրը հատկապես արդիական է մարզերում և մի շարք գյուղական համայնքներում: Որպես հետևանք, կանայք հնարավորություն չեն ունենում լիարժեք կերպով հետազոտվել և ստանալ համապատասխան բուժօգնություն: Ավելին, մի շարք բժշկական կազմակերպությունների ներկայացուցիչները կարծիք են հայտնել, որ շտապօգնության կայանների տեղաբաշխումը ճիշտ չէ կատարված[262]: Բացի այդ, որպես խնդիր բարձրաձայնվել է նաև շտապօգնության բրիգադների քանակի հարցը: Հարցմանը մասնակցած որոշ բուժաշխատողներ նշել են, որ մեկ բրիգադը սպասարկում է 60 կմ շառավղով տարածք, ինչը եղած ռեսուրսներով հնարավոր չէ ապահովել[263]: Արդյունքում, հնարավոր է շտապօգնության ուշացում մինչև երկու ժամ և ավել ժամկետով: Նշված խնդրին անդրադարձ է կատարվել «Երեխաների իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի կատարման մշտադիտարկման նպատակով Մարդու իրավունքների պաշտպանի հատուկ զեկույցով:

Բացի այդ, բժշկական ծառայությունների անմատչելիության, բժշկական անձնակազմերի ոչ լիարժեք պատրաստվածության և կարծրատիպային կամ ոչ պատշաճ վերաբերմունքի, վերարտադրողական ծառայություններից օգտվելիս հաշմանդամություն ունեցող կանայք հաճախ ենթարկվում են խտրականության[264]:

6.Աշխատանքային իրավունքներ

Թեև օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տվել, որ աշխատանքային իրավահարաբերությունների հարցում կանանց և տղամարդկանց միջև խտրական նորմեր առկա չեն, այնուամենայնիվ 2017 թվականին շարունակվել է համակարգային առումով չլուծված մնալ աշխատաշուկայում կանանց և տղամարդկանց անհավասարության խնդիրը, որը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից բարձրաձայնվում է տարիներ շարունակ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային օրենսդրության հիմնական սկզբունքներն են աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավահավասարությունը, այդ թվում՝ անկախ նրանց սեռից: Նույն օրենսգրքի 180-րդ հոդվածով սահմանվում է, որ աշխատանքների որակավորման համակարգի կիրառման դեպքում միևնույն չափանիշները պետք է կիրառվեն ինչպես տղամարդկանց, այնպես էլ՝ կանանց նկատմամբ, և այդ համակարգը պետք է մշակված լինի այնպես, որ բացառի սեռային հատկանիշներով ցանկացած խտրականություն: Չնայած առկա օրենսդրական կարգավորումների՝ փաստացի գոյություն ունի կանանց նկատմամբ ուղղահայաց (կարիերայի աստիճանների ոչ հավասար մատչելիություն) և հորիզոնական (ըստ մասնագիտությունների և հատվածների) խտրականություն: Սա վկայում է այն մասին, որ նախ առկա են որոշակի կարծրատիպեր կանանց աշխատանքային ներգրավվածության հարցում, ինչպես նաև կա կանանց աշխատանքային իրավունքների իրացման հարցում հավելյալ երաշխիքներ անհրաժեշտություն:

---

[262] https://transparency.am/files/publications/1515577747-0-615102.pdf
[263] https://transparency.am/files/publications/1515577747-0-615102.pdf
[264] Մանրամասն տես Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներ բաժնում

Խնդիրն այն է, որ կանայք բարդություններ են ունենում թե՛ աշխատանքի ընդունվելիս, թե՛ աշխատանքը երեխայի ծննդյան պարագայում պահպանելիս, թե՛ աշխատավայրում առաջխաղացման տեսանկյունից: Այսպես, աշխատանքի թափուր տեղերի համար տրվող հայտարարությունների և այդ թափուր հաստիքների համալրման գործընթացի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք շատ հաճախ պարունակում են խտրական դրսևորումներ: Մասնավորապես, հաճախ հանդիպում են աշխատանքի հայտարարություններ, որտեղ աշխատանքի ընդունման հիմնական նախապայմանն է, օրինակ, կնոջ տարիքը կամ բարետես արտաքինը: Միաժամանակ, որոշ դեպքերում խտրականության դրսևորման հետևանքով կնոջն աշխատանքի չեն ընդունում, և նախապատվություն է տրվում ավելի ցածր որակավորում ունեցող տղամարդ դիմորդին (նման խնդիրը հատկապես նկատելի է երիտասարդ կանանց պարագայում, ում դեպքում գործատուները վախենում են կնոջ՝ մայրության արձակուրդի գնալու հավանականությունից):

Աշխատանքի ընդունվելու պարագայում մայրության արձակուրդից վերադառնալու հարցը ևս համակարգային խնդիր է: Նախ, կանայք իրենց երեխաների խնամքի կազմակերպման հարցում ունենում են բարդություններ: Մասնավորապես, նախադպրոցական կրթական հաստատությունները երեխաների ընդունելությունը հազվադեպ դեպքերում են կազմակերպում մինչև երեխայի 2-3 տարեկան լրանալը, իսկ աջակցության այլ ծրագրեր առկա չեն: Նշվածի հետևանքում կինը շատ հաճախ կանգնում է մայրանալու կամ աշխատելու ընտրության առջև, ինչը կարող է նաև բացասական ազդեցություն ունենալ ծնելիության ցուցանիշի վրա: Ավելին, գաղտնիք չէ, որ նախադպրոցական կրթական հաստատություններում երեխաների նախադպրոցական կրթությունը իրականացվում է մինչև ժամը 17:00-ը, իսկ աշխատանքային ժամերը Հայաստանում մինչև 18:00-ն են: Նշվածը հավելյալ բարդություններ է ստեղծում աշխատող ծնողների, հատկապես աշխատող մայրերի համար: Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ աշխատանքային օրենսգիրքը որևէ արտոնություն չի նախատեսում նման դեպքերի համար:

Դրական է, որ 2017 թվականին «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 4.2-րդ մասով ամրագրվել է, որ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող աշխատանք փնտրող անձը մինչև երեխայի երկու տարին լրանալը աշխատանքի վերադառնալու դեպքում ունի երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցության իրավունք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Սակայն 2017 թվականին այդպիսի աջակցություն չի տրամադրվել:

Առկա չեն նաև աջակցության ծրագրեր այն կանանց համար (ինչպիսին կարող է լինել, օրինակ՝ վերապատրաստման դասընթացներ), որոնք երեխայի խնամքի արձակուրդից հետո վերադառնում են աշխատավայր և հաճախ մրցունակ չլինելով՝ կորցնում են իրենց աշխատանքը:

Բացի այդ, դեռևս առկա են կնոջը «հարիր» և «հարմար» աշխատատեղերի մասին հանրային կարծրատիպեր: Այսպես, կանանց թվաքանակը հատկապես մեծ է կրթության, առողջապահության, բնակչության սոցիալական ապահովության, առևտրի, մշակող արդյունաբերության, իսկ տղամարդկանցը՝ պետական կառավարման և

պաշտպանության, առևտրի, մշակող արդյունաբերության և շինարարության ոլորտներում[265]:

Ավելին, դեռևս 2016 թվականին իրականացված ուսումնասիրությունները վկայում են այն մասին, որ Հայաստանում կանանց ամսեկան միջին աշխատավարձը տնտեսության բոլոր հատվածներում զիջում է տղամարդկանց միջին աշխատավարձին, և այդ ճեղքվածքը կազմում է 35.9 տոկոս[266]: Ըստ նույն ուսումնասիրության՝ կանանց աշխատավարձի ճեղքվածքը տարբերվում է ըստ տնտեսության ոլորտների: Գյուղատնտեսությունում կանանց միջին աշխատավարձը կազմում է տղամարդկանց աշխատավարձի 83.8 տոկոսը, կրթությունում՝ 81.3, առողջապահությունում և սոցիալական ծառայությունների ոլորտում՝ 75.1, հանրային կառավարման հատվածում՝ 67.9 և ֆինանսական ու ապահովագրական հատվածում՝ 54.9 տոկոսը: Նման պրակտիկան բխում է ոչ միայն աշխատաշուկայի կառուցվածքից, այլ առաջին հերթին հասարակությունում կնոջ դերի վերաբերյալ առկա կարծրատիպերից (օրինակ՝ փոքր քաղաքներում և գյուղական համայնքներում ընդունված է կարծել, որ տղամարդը պետք է աշխատի, կինը՝ խնամի երեխաներին և զբաղվի տնտեսությամբ):

Դրա հետ մեկտեղ աշխատանքային իրավունքների և աշխատող-գործատու հարաբերությունների ստուգման և համակարգման համար պատասխանատու պետական իրավասու մարմնի բացակայության պարագայում խնդրի վերհանումն էլ ավելի է բարդանում[267]:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է.

1. խթանել կանանց հնարավորությունները՝ հաշվարկելով վերջիններիս կրթական, տնտեսական, սոցիալական ներուժը և կիրառելիությունն աշխատաշուկայի համապատասխան հատվածներում,

2. մշակել և ներդնել աշխատաշուկայում տղամարդկանց և կանանց միջև մրցակցության ապահովման բաց և արդյունավետ մեխանիզմներ,

3. նախատեսել ծրագրեր մայրության արձակուրդից վերադարձող կանանց՝ աշխատավայրում վերաինտեգրելու ուղղությամբ,

4. նախատեսել մեխանիզմներ երեխաների խնամքը նախադպրոցական ուսումնական հաստատություններում մինչև ծնողի աշխատանքային ժամի ավարտը կազմակերպելու համար,

5. *զանգվածային լրատվական միջոցներով նպաստել աշխատաշուկայում կանանց դերի վերաբերյալ գոյություն ունեցող կարծրատիպերի վերացմանը:*

---

[265] http://ampop.am/unemployment-in-armenia/#imageclose-2735

[266] ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ, «Գենդերային ճեղքվածք. կանանց նկատմամբ խտրական դրսևորումների ախտորոշիչ ուսումնասիրություն», 2016 թվական, http://www.unfpa.am/sites/default/files/2016_Gender-Gap-factsheet_Arm.pdf

[267] Տե՛ս մանրամասն Աշխատանքային իրավունքներ բաժնում:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

2010 թվականին Հայաստանը վավերացրել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան[268], որով պարտավորվել է ձեռնարկել միջոցներ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց համար մյուսների հետ հավասար հիմունքներով իրենց իրավունքների իրացմանը: Այս միջոցների ձեռնարկման համար Հայաստանում ընդունվել են մի շարք իրավական ակտեր, որոնք միտված են հաշմանդամություն ունեցող անձանց կողմից իրենց իրավունքների ինքնուրույն իրացման համար միջավայրի ստեղծմանը: Չնայած նշյալի՝ դեռևս մի շարք ոլորտներում նկատելի է թե՛ օրենսդրության, թե՛ իրավակիրառ պրակտիկայի կատարելագործման և իրավունքների մասին իրազեկման անհրաժեշտություն: Հաշմանդամություն ունեցող անձինք առօրյայում հաճախ են բախվում խտրականության և իրենց իրավունքների իրականացման խոչընդոտների, որի արդյունքում խախտվում են վերջիններիս կրթության, աշխատանքային, սպորտային և մշակութային կյանքին մասնակցելու, ազատ տեղաշարժի, ընտրելու, առողջության պահպանման և այլ իրավունքներ, որոնք ներկայացվում են սույն բաժնում:

Մարդու իրավունքների պաշտպանը, կարևորելով հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հարցը, 2017 թվականին այցեր է իրականացրել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպություններ, որտեղ տեղի ունեցած հանդիպումների ժամանակ քննարկվել են հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրները, ինչպես նաև այդ կազմակերպությունների գործունեության հիմնական ուղիները և համագործակցության հնարավորությունները: Ավելին, 2017 թվականին Արգենտինայի դեսպանատան հետ համագործակցության արդյունքում իրականացվել է միջոցառում՝ նվիրված հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքային իրավունքներին: Միջոցառմանը մասնակցել են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև միջազգային և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Ներկայացվել է Արգենտինայի և Հայաստանի փորձը հաշմանդամություն ունեցող անձանց աշխատաշուկայում ներգրավման վերաբերյալ, ինչպես նաև քննարկվել են համագործակցության ուղիները:

Ավելին, 2017 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի կողմից Կոմիտեին է ներկայացվել հատուկ զեկույց Կոնվենցիայով ամրագրված իրավունքների վիճակի վերաբերյալ: Զեկույցը զետեղել է տվյալներ թե՛ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հարցում վերհանված խնդիրների, թե՛ դրանց լուծման ուղղությամբ ձեռնարկված քայլերի մասին:

2016 թվականի տարեկան հաղորդմամբ բարձրաձայնված և 2017 թվականին դրական լուծում ստացած համակարգային բնույթի խնդիրներ

- 2016 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան

[268] Սույն բաժնում այսուհետ՝ Կոնվենցիա

հաղորդման մեջ բարձրացվել էր Երևանի լսողության խանգարում ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրում բացի ռուսերենից այլ օտար լեզու չդասավանդելու խնդիրը: 2017 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի կողմից համապատասխան առաջարկի ներկայացման արդյունքում նախատեսվել է անգլերենի ուսուցում 5-րդ դասարանից՝ շաբաթական 1.5 ժամ ծանրաբեռնվածությամբ:

- 2014 թվականից սկսած ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը տարեկան զեկույցներում և հաղորդմամբ անդրադարձել է տրանսպորտային միջոցների հարմարեցման համար անհրաժեշտ օրենսդրական հստակ չափանիշներ նախատեսված չլինելու պատճառով ֆիզիկական հաշմանդամություն ունեցող որոշ անձանց վարորդական իրավունքի տրամադրումը մերժելու խնդրին: Արդյունքում՝ ՀՀ առողջապահության նախարարության կողմից՝ ՀՀ ոստիկանության և մարդու իրավունքների պաշտպանի հետ համագործակցությամբ 2015 թվականի ընթացքում մշակվել և ընդունվել է Կառավարության 2017 թվականի օգոստոսի 31-ի նիստում: Այն ամրագրում է լուծումներ, որոնք անհրաժեշտ են տրանսպորտային միջոցն անձի հնարավորություններին հարմարեցված համարելու և, ըստ այդմ, նրան վարորդական իրավունքի վկայական տրամադրելու համար (օրինակ՝ մեկ աչքի բացակայության դեպքում հարմարեցված է համարվում կայանման ձայնային ազդանշանային համակարգով կահավորված տրանսպորտային միջոցը):

1. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության իրավական համակարգ

2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշմանդամություն ունեցող անձանց հաշվառման հանրապետական շտեմարանում հաշվառված է հաշմանդամություն ունեցող 193302 անձ, որից 8231-ը՝ հաշմանդամություն ունեցող երեխա[269]: Այս անձանց իրավունքների պաշտպանության հարցում առաջնահերթ է օրենսդրության կատարելագործումը:

2013 թվականից մշակվել և բազմիցս շրջանառվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» նոր օրենքի նախագիծը, որի ընդունմամբ նախադրյալներ կստեղծվեն հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման համար մատչելի պայմանների և հավասար հնարավորությունների ապահովման, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության մոնիթորինգային մեխանիզմների ստեղծման համար, ինչպես նաև կտեղայնացվեն Կոնվենցիայի դրույթները[270]: Չնայած վերոնշյալի, ինչպես նաև այն փաստի, որ դրա ընդունումը պայմանավորված է կոնվենցիայի պահանջով՝ օրինագիծը 2017 թվականին չի ընդունվել: Նախագծի ընդունումը կարևոր է, քանզի այն կլինի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հարցում նվազագույն օրենսդրական այն երաշխիքը, որի հիման վրա կիրականացվի իրավունքների հետագա պաշտպանությունը և սոցիալական ներառումը: Ավելին, կարևոր է այն, որ նախագծի քննարկման փուլում ներգրավված են եղել նաև ոլորտի հասարակական կազմակերպությունները: Անհրաժեշտ է հատուկ ընդգծել որոշումների կայացմանը

[269] ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2017 թվականի գործունեության հաշվետվություն
[270] http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=44106

ոլորտի հասարակական կազմակերպությունների ներգրավման կարևորությունը և շարունակականությունը, ինչն օրենսդրական գործընթացը դարձնում է լիակատար և ներառական: Առանց հասարակական կազմակերպությունների մասնակցության հնարավոր չէ արձանագրել արդյունքներ: Ուստի կարևոր են ՀԿ-ների հետ անցկացվող քննարկումները, նրանց մասնակցությամբ հանրային և խորհրդարանական լսումները:

Միաժամանակ, չնայած Հայաստանը դեռևս 2010 թվականից վավերացրել է Կոնվենցիան, սակայն Հայաստանը չի վավերացրել անհատական հաղորդումների և հետաքննության ընթացակարգեր նախատեսող և ներդնող՝ Կոնվենցիայի Կամընտիր արձանագրությունը: Հարցի վերաբերյալ մտահոգություն է հայտնել նաև ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեն՝ 2017 թվականի Հայաստանի նախնական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում[271]:

ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի 2016 թվականի հարցադրումներին[272] ի պատասխան՝ Հայաստանի Հանրապետությունը նշել է, որ կանդրադառնա Կոնվենցիայի Կամընտիր արձանագրության վավերացման հարցին, երբ հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների ապահովման վերաբերյալ օրենսդրությունը լիովին զարգացած լինի, և համապատասխան միջոցառումներն իմպլեմենտացված լինեն[273]:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. հրատապ կերպով ընդունել «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» նոր օրենքի նախագիծը,

2. աշխատանքներ իրականացնել Կոնվենցիայի Կամընտիր արձանագրության վավերացման ուղղությամբ:

2. Ֆիզիկական միջավայրի մատչելիություն

Ֆիզիկական միջավայրի անմատչելիության խնդիրը, որը տեղ է գտել Մարդու իրավունքների բոլոր պաշտպանների տարեկան զեկույցներում և հաղորդմամբ, համակարգային առումով լուծում չի ստացել նաև 2017 թվականի ընթացքում: Նշյալ խնդրի մասին նշվել է նաև Կոմիտե ներկայացված՝ Մարդու իրավունքների պաշտպանի 2017 թվականի հատուկ զեկույցում: Չնայած առկա օրենսդրական պահանջներին՝ դրանք մի շարք դեպքերում կյանքի չեն կոչվում, ինչի արդյունքում հաշմանդամություն ունեցող անձինք զրկվում են ազատ տեղաշարժի հնարավորությունից: Ազատ տեղաշարժի հնարավորությունը չապահովելը հիմնարար խնդիր է, որի արդյունքում սահմանափակվում է հաշմանդամություն ունեցող անձանց մյուս իրավունքների, այդ թվում՝ կրթության, աշխատանքային գործունեությամբ զբաղվելու, առողջության պահպանման և այլ ինքնուրույն իրականացումը: Ընդ որում, մի շարք հասարակական կազմակերպություններ նշում են, որ անմատչելի են ինչպես պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, այնպես էլ մասնավոր ֆիզիկական և իրավաբանական անձանց պատկանող շինությունները: Ավելին, վերջիններս նշում են նաև, որ թեև

[271] http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRPD%2fC%2fARM%2fCO%2f1&Lang=en
[272] http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRPD%2fC%2fARM%2fQ%2f1&Lang=en
[273] http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRPD%2fC%2fARM%2fQ%2f1%2fAdd.1&Lang=en

ֆիզիկական միջավայրը հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցնելու ուղղությամբ ձեռնարկվում են քայլեր, այնուամենայնիվ, ըստ ոլորտի մասնագետների, շատ հաճախ մատչելի միջավայրի ապահովումը սահմանափակվում է միայն թեքահարթակների առկայությամբ[274]: Նշվածը բնականաբար լիարժեք չի լուծում տեղաշարժման խոչընդոտների հարցը շինության ներսում կամ հաշմանդամության բոլոր տեսակների պարագայում:

Մատչելի միջավայրի ապահովումը բխում է թե՛ Կոնվենցիայի և թե՛ գործող օրենսդրության պահանջներից: Այսպես, Կոնվենցիայի համաձայն՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար պետք է ապահովվի կառույցների, ճանապարհների, բացօթյա և փակ հաստատությունների, դպրոցների, բնակելի տարածքների, ինչպես նաև բժշկական հաստատությունների մատչելիությունը[275]: Կոնվենցիայում կիրառվող «մատչելիություն» տերմինի վերաբերյալ ուղենիշերում նշվում է, որ մատչելի ֆիզիկական միջավայրն օգտակար է ոչ միայն հաշմանդամություն ունեցող անձի, այլ բոլորի համար[276], և այն ենթադրում է ոչ միայն շինությունների մատչելիությունը, այլ նաև մայթեզրերի հարմարեցումը և հետիոտների շարժը սահմանափակող այլ խոչընդոտների վերացումը[277]: Ընդ որում, միջավայրը մատչելի պետք է լինի ոչ միայն տեղաշարժման, այլ նաև տեսողական, լսողական, և այլ խնդիրներ ունեցող մարդկանց համար:

ՀՀ օրենսդրությունը ևս նախատեսում է որոշ երաշխիքներ ֆիզիկական միջավայրի՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի լինելու վերաբերյալ: Այսպես, «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը արգելում է բնակավայրերի նախագծումն ու կառուցապատումը, բնակելի շրջանների ձևավորումը, նախագծային լուծումների մշակումը, շենքերի, կառուցվածքների շինարարությունն ու վերակառուցումը, եթե դրանք հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձանց մատչելիության և օգտագործման համար: Ավելին, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի համակարգը սահմանում է հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժման մատչելիությունն ապահովող և այլ անհրաժեշտ նորմեր, կանոններ, ցուցանիշներ, որոնց կատարումը պարտադիր է քաղաքաշինական գործունեության սուբյեկտների, այդ թվում՝ տեղական ինքնակառավարման մարմինների համար[278]: Վերջիններս (մասնավորապես՝ համայնքի ղեկավարը[279]) տալիս են քաղաքաշինական գործունեություն իրականացնելու համար ճարտարապետահատակագծային առաջադրանք[280] (ՃՀԱ), որում նշվում են նաև հաշմանդամություն ունեցող անձանց ու բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության և այլ նորմատիվ ակտերով սահմանված պահանջներ[281]: Դրա հետ միասին, համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ՃՀԱ-ի պահանջների կատարումը[282], ինչպես նաև փաստագրում[283] ավարտված շինարարության

[274] http://yerkirmedia.am/social/teqahartak-hashmandamner-ardyunq/
[275] «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա, հոդված 9, կետ 1, ենթակետ ա):
[276] http://www.un.org/esa/socdev/enable/disacc.htm
[277] http://www.un.org/esa/socdev/enable/disacc.htm
[278] «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 4:
[279] «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 22.1, կետ 6:
[280] «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 6:
[281]«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 22.1, կետ 2:
[282] «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 26, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 37:

շահագործման ընդունումը[284]: Այնուամենայնիվ, վերոնշյալ պահանջները մի շարք դեպքերում հաշվի չեն առնվում: Խնդրին անդրադարձել է նաև Կոմիտեն՝ 2017 թվականի ապրիլի 12-ի Հայաստանի սկզբնական զեկույցի վերաբերյալ իր եզրափակիչ դիտարկումներում[285]:

2017 թվականին ֆիզիկական միջավայրի մատչելիության ապահովման համար ձեռնարկվել են մի շարք քայլեր: Այսպես, Երևանի քաղաքապետարանի տեղեկությունների համաձայն՝ 2017 թվականի նախատեսված աշխատանքային ծրագրով կառուցվել է 336 թեքահարթակ: Միևնույն ժամանակ, 2017 թվականի ընթացքում 468 օբյեկտի համար տրված նախագծման թույլտվություններում, որպես պարտադիր պայման, պահանջվել է ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժուն խմբերի կենսագործունեության ապահովմանն ուղղված միջոցառումներ՝ նախագծումը շինարարական նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Նույն ժամանակահատվածում նշված պայմանների ապահովմամբ համաձայնեցվել և վերահամաձայնեցվել են 447 օբյեկտի նախագծեր: Միևնույն ժամանակ, տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար փողոցների խաչմերուկներում, հետիոտնային անցումներում, որպես ազդանշան, 24 թեքահարթակի եզրերին տեղադրվել են հատուկ դեղին գույնի գոգավոր սալիկներ՝ Կենտրոն, Արաբկիր, Նոր Նորք և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների փողոցներում: Երևան քաղաքի 10 խաչմերուկում առկա հետիոտնային լուսացույցների հետ միասին տեղադրվել են նաև ձայնաազդանշանային սարքեր:

ՀՀ կառավարության 3-րդ մասնաշենքում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության նախաձեռնությամբ տեղադրվել են տաքացվող թեքահարթակներ, հարմարեցված սանհանգույցներ, աստիճանով բարձրանալու համար նախատեսված էլեկտրական վերամբարձ սարք, ձայնային ազդանշանով վերելակներ և հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված մուտքի դուռ[286]:

Չնայած Երևան քաղաքում, հատկապես՝ Կենտրոն վարչական շրջանում, կատարվում են ֆիզիկական միջավայրի մատչելիության ապահովմանն ուղղված քայլեր՝ որոշ մարզերում ֆիզիկական մատչելիության հարցն առավել խնդրահարույց է: Օրինակ՝ ՀՀ Վայոց ձորի մարզում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող կառուցապատման օբյեկտների մուտքի և կառույցի ներսում ազատ տեղաշարժի ապահովման համար 2017 թվականին աշխատանքներ չեն իրականացվել: Լոռու մարզում 2017 թվականին կառուցվել է միայն Օձուն համայնքի Հագվի գյուղի հանդիսությունների սրահը, որը կահավորված է հաշմանդամություն ունեցող անձանց համար թեքահարթակով:

Որոշ քայլեր ձեռնարկվում են նաև համակարգային առումով ոլորտի բարելավման ուղղությամբ: Ըստ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական

---

[283] Ավարտված շինարարության (շենքերի, շինությունների, դրանց վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման, ընդլայնման և բարեկարգման) շահագործման ընդունումը փաստագրվում է շահագործման ակտով՝ տվյալ օբյեկտի շինարարության թույլտվության համար հիմք հանդիսացող հաստատված ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված բոլոր աշխատանքներն իրականացնելուց հետո: Ավարտված շինարարական օբյեկտի շահագործումը թույլատրվում է միմիայն շահագործման ակտը ձևակերպելուց հետո: («Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 25):

[284] «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 25, պարբերություն 2:

[285] ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի 2017 թվականի Հայաստանի նախնական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ

[286] https://armenpress.am/arm/news/876928/karavarutyan-3-rd-masnashenqum-hashmandamutyun-unecox.html

կոմիտեի՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար քաղաքաշինական անարգել միջավայր ապահովելու ուղղությամբ տարվող աշխատանքների շրջանակներում Կոմիտեն 2017 թվականին շրջաբերական է ուղարկել ՀՀ մարզպետարաններ:

Չնայած վերոնշյալ ձեռնարկված քայլերին՝ այնուամենայնիվ, սույն բաժնում տեղ գտած տվյալները վկայում են, որ առ այսօր արձանագրվում են ֆիզիկական մատչելիության ոչ բավարար ապահովման համակարգային բնույթի խնդիրներ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. հնարավորինս սեղմ ժամկետներում ապահովել հանրային՝ այդ թվում՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության, տեղական ինքնակառավարման ու բոլոր մյուս մարմինների սեփականություն հանդիսացող շինությունների մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար,

2. ապահովել շարունակական վերահսկողություն նոր կառուցվող կամ հիմնովին վերանորոգվող քաղաքաշինական օբյեկտների մատչելիության ապահովման նպատակով:

3. Փոխադրամիջոցների մատչելիություն

2017 թվականի ընթացքում ՀՀ-ում հաշմանդամություն ունեցող անձանց համար տրանսպորտային միջոցների մատչելիության խնդիրն ամբողջական լուծում չի ստացել: Խնդրի մասին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը բարձրաձայնել է դեռևս 2013 թվականից: Այս մասին նշվել է նաև 2017 թվականին Կոմիտեին ներկայացված՝ Մարդու իրավունքների պաշտպանի հատուկ զեկույցում: Ավելին, 2017 թվականին ընթացքում արձանագրվել են դեպքեր, երբ տրանսպորտային միջոցների վարորդները ցուցաբերել են ոչ պատշաճ վերաբերմունք հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ:

Այսպես, ըստ հասարակական կազմակերպությունների՝ 2017 թվականին արձանագրված դեպքերից մեկով շնչառական հիվանդություններ ունեցող անձինք հանրային տրանսպորտից օգտվելիս հանդիպել են խոչընդոտների ծխախոտի ծխի կամ մեքենայում հոտավետ կախազարդի օգտագործման պատճառով[287]: Մեկ այլ դեպքում, հասարակական տրանսպորտի վարորդը հրաժարվել է սպասարկել հաշմանդամություն ունեցող անձին[288]:

Տրանսպորտային միջոցների մատչելիության հարցը ևս հիմնարար է, քանզի այն նույնպես կարող է հանգեցնել այլ իրավունքների իրացման սահմանափակումների: Ֆիզիկական միջավայրի մատչելիության նման այն ստեղծում է միջավայր, որպեսզի հաշմանդամություն ունեցող անձինք ինքնուրույն և այլ անձանց հետ հավասար հնարավորություն ունենան իրացնելու իրենց իրավունքները: Հաշմանդամություն ունեցող անձանց համար տրանսպորտի մատչելիության հարցը նախատեսված է թե՛ Կոնվենցիայով, թե՛ ՀՀ օրենսդրությամբ: Այսպես, Կոնվենցիան սահմանում է, որ մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն համապատասխան միջոցներ, որպեսզի ապահովվի փոխադրամիջոցների մատչելիությունը[289]: Նման դրույթ է նախատեսված նաև

[287] «Դիսաբիլիթի ինֆո» ՀԿ-ի կողմից տրամադրված տեղեկություն
[288] https://www.azatutyun.am/a/28588613.html
[289] «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա, հոդված 9, կետ 1:

«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածով:

Փոխադրամիջոցների մատչելիության ապահովման նպատակով տրանսպորտային միջոցների ուղեսրահներում պետք է տեղադրված լինեն, օրինակ, ավտոբուսի կանգառման անհրաժեշտության մասին նախազգուշացնող սեղմվող կոճակներ, որոնք կարող են օգտակար լինել խոսքի դժվարություն ունեցող անձանց համար: Ինչ վերաբերում է տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար տրանսպորտային միջոցների մատչելիության ապահովմանը, ապա նման դեպքերում տրանսպորտային միջոցներում պետք է տեղադրվեն ձայնային ազդանշաններ, որոնք ուղևորներին կնախազգուշացնեն յուրաքանչյուր հաջորդ կանգառի մասին: Իսկ հասարակական տրանսպորտի կայանների կողքին հաշմանդամություն ունեցող անձանց համար անհրաժեշտ է նախատեսել ծածկած հարթակներ, պետք է տեղակայված լինեն նաև թիկնակով նստարաններ և ազատ տարածություն՝ սայլակների համար: Հաշմանդամություն ունեցող անձանց կողմից օգտագործվող հետիոտն ուղիների վերնածածկույթը պետք է լինի կոշտ, ամուր՝ բացառելով սայթաքումները[290]:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ 2017 թվականին Երևան քաղաքում ձեռնարկվել են որոշ քայլեր: Մասնավորապես, ըստ Երևանի քաղաքապետարանի՝ տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար քաղաքային հասարակական տրանսպորտից օգտվելու մատչելիության և հարմարավետության ապահովման նպատակով «Հիգեր» մակնիշի 37 ավտոբուսների (երթուղիներ հ. 10, 22, 28) ուղեսրահներում տեղադրվել են կանգառների անվանումների հայտարարման (հայերեն և անգլերեն լեզուներով) ավտոմատ սարքեր:

Սակայն 2017 թվականի ընթացքում չի լուծվել Երևանի մետրոպոլիտենի մատչելիության հարցը: Թեև մետրոպոլիտենի մուտքերը կահավորված են թեքահարթակներով, սակայն հաշմանդամություն ունեցող (հենաշարժական համակարգի, տեսողության կամ լսողության հետ խնդիրներ ունեցող) անձը չի կարող օգտվել Երևանի մետրոպոլիտենից, քանի որ չկան, օրինակ, հաշմանդամություն ունեցող անձանց համար հատուկ նախատեսված վերելակներ, պլատֆորմի վրա չկան ռելիեֆային ուղեցուցիչներ, չկան երթուղու մասին վիզուալ տեսատախտակներ և այլն: Երևանի քաղաքապետարանի տրամադրած տեղեկությունների համաձայն՝ Երևանի մետրոպոլիտենն իր նախագծային լուծումներով ի սկզբանե հարմարեցված չի եղել հաշմանդամություն ունեցող անձանց համար: 2017 թվականի ընթացքում այս ուղղությամբ միջոցառումներ չեն ձեռնարկվել, քանի որ մետրոպոլիտենի հարմարեցումը հաշմանդամություն ունեցող անձանց սպասարկման համար կպահանջի զգալի ֆինանսական ներդրումներ, ինչի հնարավորությունը ներկայումս չկա:

Խնդիրն առավել վառ արտահայտված է ՀՀ մարզերում: ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության տվյալների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ՀՀ մարզերում հաշմանդամություն ունեցող անձանց կարիքների համար հարմարեցված հասարակական տրանսպորտային միջոցներ չկան, և 2017 թվականին վերոնշյալ խնդրի լուծման նպատակով քայլեր չեն ձեռնարկվել:

[290] https://fulllife.am/wp-content/uploads/2017/07/DPO-Zekuyc.pdf

Խնդրի համակարգային լուծման նպատակով դեռևս 2016 թվականին ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից մշակվել է «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքում և ՀՀ կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կարգը հաստատելու մասին» թիվ 762 որոշմամբ հաստատված կարգում լրացում կատարելու նախագծեր, որոնք, սակայն, 2018 թվականի մարտի 4-ի դրությամբ ընդունված չեն եղել:

Ուստի, չնայած իրականացված որոշ քայլերին՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար տրանսպորտի մատչելիության ապահովման խնդիրը շարունակում է մնալ չլուծված, ինչը հասարակության մեջ այդ անձանց ներգրավման համար ստեղծում է բազմաթիվ խոչընդոտներ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է հրատապ կարգով ընդունել «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքում և ՀՀ կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կարգը հաստատելու մասին» թիվ 762 որոշմամբ հաստատված կարգում լրացում կատարելու նախագծերը:

4. Տեղեկությունների և հաղորդակցության մատչելիություն

Տեղեկությունների մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար չափազանց կարևոր է, քանի որ այն նպաստում է ինքնուրույն որոշումների կայացմանը, իրավունքների և հնարավորությունների մասին իրազեկմանը և հասարակությունում լիարժեք ինտեգրմանը:

Կոնվենցիայի 21-րդ հոդվածով ամրագրվում է, որ մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ հաշմանդամություն ունեցող անձինք կարողանան իրականացնել խոսքի ու կարծիքի ազատության իրավունքը, ինչպես նաև փնտրել, ստանալ և տարածել տեղեկություններ ու գաղափարներ մյուսների հետ հավասար հիմունքներով և հաղորդակցության իրենց նախընտրած բոլոր միջոցներով: Ընդ որում, այդ ամենն անհրաժեշտ է ապահովել առանց հավելյալ ծախսերի հաշմանդամություն ունեցող անձանց համար: Ավելին, «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածը սահմանում է, որ ՀՀ պետական իշխանության և կառավարման մարմինները, ՀՀ տարածքում գործող բոլոր գործատուները հաշմանդամություն ունեցող անձանց համար ապահովում են կապի և տեղեկատվության միջոցներից անարգել կերպով օգտվելու պայմանների ստեղծումը:

Այսինքն, տեղեկություններ ստանալը ենթադրում է առկա ցանկացած տեղեկության անկախ և առանց այլ անձի օգնության ծանոթանալը: Այն ենթադրում է այնպիսի գործողություններ, ինչպիսիք են գնապիտակներ և հայտարարություններ, առողջապահական տեղեկատվություն պարունակող բուկլետներ կարդալը, կայքէջերից

օգտվելը, հեռուստացույց դիտելը և այլն: Խնդիրը Հայաստանում բավարար կերպով մատչելի տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների և մատչելի ձևաչափերի, այդ թվում՝ հեշտ ընթերցվող ձևաչափերի և ինտերնետային կայքերի բացակայությունն է, ինչպես նաև բրայլյան գրերի կիրառման սահմանափակումը հատուկ առանձնացված հաստատություններում: Սա նաև պայմանավորված է օրենսդրական բացով: Օրինակ՝ «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում հաշմանդամություն ունեցող անձանց համար տեղեկությունների մատչելիության վերաբերյալ կարգավորումներ առկա չեն: Ավելին, «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքն ամրագրում է յուրաքանչյուրի՝ մատչելի ձևով իր առողջական վիճակի, հետազոտությունների արդյունքների, հիվանդության ախտորոշման և բուժման մեթոդների, դրանց հետ կապված ռիսկի, բժշկական միջամտության հնարավոր տարբերակների, հետևանքների և բուժման արդյունքների մասին տեղեկություն ստանալու իրավունքը, սակայն դրանում բացակայում են գործուն մեխանիզմներ հենց տեղեկատվական նյութերի մատչելիության վերաբերյալ:

Միևնույն ժամանակ, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը հատուկ կարգավորումներ չի նախատեսել հաշմանդամություն ունեցող անձանց համար տեղեկատվության ազատության իրավունքի լիարժեք իրացումն ապահովելու համար: Այդպիսի կարգավորումներ նախատեսված չեն նաև «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով, որը 2017 թվականին դրվել է շրջանառության: Այսպես, եթե տեսողական խնդիր ունեցող անձն օրենքի համաձայն հարցում է կատարում իրավասու մարմնին, ապա հստակ չէ, թե ինչպես պետք է ապահովվի տրամադրվող տեղեկատվության մատչելիությունը նրա համար: Ավելին, ըստ «Դիսըբիլիթի ինֆո» ՀԿ-ի՝ հարցումների արդյունքում հայցվող տեղեկությունը չի տրամադրվում էլեկտրոնային փոստի միջոցով, թեև այդ պահանջի մասին նշվում է հարցմամբ:

Ավելին, «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 5.1-րդ հոդվածը նախատեսում է, որ հանրային հեռուստառադիոընկերությունը և ՀՀ-ում գործող այլ մասնավոր հեռուստաընկերություններ, որոնք հեռարձակում են մանկական և (կամ) լրատվական հեռուստահաղորդումներ, պարտավոր են իրենց ծրագրերում ապահովել լսողական խնդիրներ ունեցող անձանց համար տեղեկատվության ստացման մատչելիությունը, ինչպես նաև օրվա եթերաժամում առնվազն մեկական մանկական և լրատվական հեռուստահաղորդում հեռարձակել ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն լուսագրերով: Մինչդեռ, «Դիսըբիլիթի ինֆո» ՀԿ-ի կողմից տրամադրած տեղեկությունների համաձայն՝ հեռուստատեսություններն օրվա եթերաժամում չեն ապահովում հայերեն ժեստերի լեզվի պարտադիր հասանելիությունը: Ավելին, մի շարք քաղաքացիներ, հասարակական կազմակերպություններ և ոլորտի մասնագետներ նշում են, որ լսողական խնդիրներ ունեցող անձինք օգտվում են բացառապես համակարգչից, որտեղ տեղեկատվություն ստանալու հնարավորությունն ավելի մեծ է[291]: Վերոնշյալ խնդիրների մասին մտահոգություն է հայտնել նաև Կոմիտեն[292]:

[291] http://champord.am/xuleri-mayreni-lezun-jesteri-ashxarh-2/

[292] ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի 2017 թվականի Հայաստանի նախնական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է փաստել, որ բավարար կերպով չի ապահովվում հաշմանդամություն ունեցող անձանց համար տեղեկատվության մատչելիությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. համապատասխան փոփոխություններ կատարելով ոլորտային իրավական ակտերում՝ նախատեսել գործուն մեխանիզմներ (օրինակ՝ խանութներում բրայլյան գրերով կամ մատչելի ձևով տպագրված գնապիտակների առկայության պարտադիր պահանջ, առողջապահական հաստատություններում մատչելի տեղեկատվական նյութերի պարտադիր պահանջ, ինտերնետային կայքերի մատչելիության պարտադիր պահանջ,) տեղեկատվության մատչելիության ապահովման համար՝ օրինակ՝

- «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում,

- «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքում:

2. «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով ամրագրել հատուկ կարգավորումներ՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար ճիշտ ժամանակին, մատչելի ձևով և առանց հավելյալ ֆինանսական բեռի տեղեկատվության տրամադրումն ապահովելու վերաբերյալ:

5. Մասնակցությունը մշակութային կյանքին, հանգստին, ժամանցային ու սպորտային միջոցառումներին

ՀՀ-ում 2017 թվականին շարունակվել է չլուծված մնալ մշակութային հիմնարկների և մարզական կառույցների մատչելիության խնդիրը, որը տարիներ շարունակ բարձրացվում է Մարդու իրավունքների պաշտպանի կողմից:

Մշակույթ. Մշակութային կյանքին հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությանը առաջին հերթին խոչընդոտում է մշակութային օբյեկտների անմատչելիությունը: Դեռևս առկա են մշակութային հաստատություններ, որոնք մատչելի չեն հաշմանդամություն ունեցող անձանց մուտքի և ելքի, ինչպես նաև նշված շինությունների ներսում նրանց ազատ տեղաշարժի համար: Ընդ որում, հենաշարժողական, ինչպես նաև լսողական և տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար հատուկ հարմարեցված տարածքներ ընդհանրապես նախատեսված չեն մի շարք կինոթատրոնների, թատրոնների և այլ մշակութային կառույցների դահլիճներում: Ավելին, ոլորտի հասարակական կազմակերպությունները նշում են, որ Երևան քաղաքում գործող կինոթատրոններից միայն «Կինոպարկում» է, որ ընդհանուր թվից մի քանի նստատեղեր հարմարեցվել են հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Բացի այդ, միայն թեքահարթակները, հարմարեցված սանհանգույցներն ու շարժական նստատեղերը բավարար չեն հաշմանդամություն ունեցող անձանց լիարժեք մասնակցությունը տարբեր միջոցառումներին ապահովելու համար: Առկա է խնդիր նաև տեսողության և լսողության խնդիրներ ունեցող անձանց համար, օրինակ, ֆիլմի հասանելիությունն ապահովելու հարցում. ցուցադրությունների ժամանակ նրանց համար չկան ո՛չ լուսագրեր, ո՛չ ձայնային նկարագրություն[293]: Լուծված չէ նաև հաշմանդամություն

[293] http://www.aravot.am/2016/10/18/817426/

ունեցող անձին ուղեկցողի համար նախատեսված արտոնությունների հարցը: Խնդրի վերաբերյալ մտահոգություն է հայտնել նաև Կոմիտեն[294]:

Կոնվենցիայի 30-րդ հոդվածն ամրագրում է հաշմանդամություն ունեցող անձանց՝ մյուսների հետ հավասար հիմունքներով մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը: Միաժամանակ, Կոմիտեի 2014 թվականի թիվ 2 Ընդհանուր մեկնաբանությամբ նշվում է, որ դրա համար անհրաժեշտ են այնպիսի հարմարեցումներ, ինչպիսիք են, օրինակ, պատկերասրահներում՝ ցուցադրվող նկարի նկարագրությունը, ֆիլմերի համար՝ տիտրերը, թատրոնների համար՝ ժեստերի լեզվով թարգմանությունը, մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ այլընտրանքային գրքերը[295]: «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ պետական իշխանության և կառավարման տեղական մարմինները պետք է ապահովեն հաշմանդամություն ունեցող անձանց համար մշակութային հիմնարկների և մարզական կառույցների մատչելիությունը և դրանցից օգտվելու համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը և հատուկ մարզական գույքի տրամադրումը:

Վերոնշյալ խնդիրների լուծման ուղղությամբ ձեռնարկվել են որոշակի քայլեր: Ըստ ՀՀ մշակույթի նախարարության՝ խնդիրն ամբողջությամբ (ազատ տեղաշարժ և սանհանգույցներ) լուծված է Հայոց ցեղասպանության և Կոմիտասի թանգարան-ինստիտուտներում, Մ. Սարյանի տուն-թանգարանում, Երևանի Պ. Չայկովսկու անվան միջնակարգ երաժշտական մասնագիտական դպրոցում: 29 մշակութային կազմակերպություններից 7-ը գտնվում են առաջին հարկում. օրինակ՝ Հ. Թումանյանի անվան տիկնիկային թատրոն (ամբողջությամբ ապահովված է՝ ներառյալ սանհանգույցը), Կամերային երաժշտության ազգային կենտրոն, Վ. Պետրոսյանի անվան Գեղարքունիքի, Տավուշի, Լոռու, Արմավիրի մարզային գրադարաններ և այլն: Կազմակերպություններից 11-ն ունեն թեքահարթակ, իսկ 11-ը տեղում ստեղծում է բոլոր հնարավորությունները: Ավելին, ՀՀ մշակույթի նախարարության կողմից տրամադրած տեղեկությունների համաձայն՝ 2017 թվականին նախարարության ենթակայության Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում մասնակիորեն ապահովվել են հենաշարժական խնդիրներ ունեցող անձանց մուտքի, ելքի, ազատ տեղաշարժի համար համապատասխան պայմաններ, բացառությամբ սանհանգույցների, իսկ Երևանի կամերային թատրոնի նոր մասնաշենքի կառուցման աշխատանքներում վերոհիշյալ խնդիրները իրականացման փուլում են: Բացի այդ, 2017 թվականին նախապատրաստվել են «Վանաձորի Հ. Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոն», «Հայ և ռուս ժողովուրդների բարեկամության թանգարան», «Երևանի մնջախաղի պետական թատրոն» ՊՈԱԿ-ների շենքերի վերանորոգման փաթեթները (վերանորոգումը կատարվելու է 2018 թվականին):

ՀՀ մշակույթի նախարարի 2017 թվականի հուլիսի 6-ի թիվ 368-Ա հրամանով սահմանվել են նախարարության ենթակայության թանգարանների մշտական ցուցադրության այցելության և բացատրության (էքսկուրսիա) տոմսերի գները և արտոնությունները: Մասնավորապես, թանգարանի մշտական ցուցադրության անվճար այցելության արտոնություններ են սահմանվել հաշմանդամություն ունեցող անձանց՝ 1-ին

[294] ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի 2017 թվականի Հայաստանի նախնական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ

[295] https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G14/033/13/PDF/G1403313.pdf?OpenElement

խմբի (ուղեկցողի հետ), հաշմանդամություն ունեցող անձանց՝ 2-րդ և 3-րդ խմբերի (առանց ուղեկցողի) համար՝ աշխատանքային բոլոր օրերին: Մինչդեռ, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ տարբեր հանրային քննարկումների ժամանակ բազմիցս նշել են, որ արտոնության տրամադրումը չպետք է պայմանավորված լինի անձի մոտ բացառապես հաշմանդամության փաստով: Այն, կարող է պայմանավորված լինել, օրինակ, սոցիալ-տնտեսական վիճակի և հաշմանդամության փաստի համակցությամբ: Ավելին, առ այսօր հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցող անձի համար սահմանված չեն արտոնություններ, ինչն ըստ ոլորտի մասնագետների՝ համահունչ չէ միջազգային չափանիշներին:

Սպորտ. Կոնվենցիայի 30-րդ հոդվածի համաձայն՝ մասնակից պետությունն ապահովում է հատուկ սպորտային միջոցառումներին հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության հնարավորությունը, ինչպես նաև խրախուսում է անհրաժեշտ ուսուցման, վերապատրաստման և այլ միջոցների ապահովումը՝ մյուսների հետ հավասար հիմունքներով: Չնայած նշված պահանջի՝ ըստ Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված դիմումների ու բողոքների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ներկայացրած տվյալների՝ մարզադպրոցների շենքերում, մասնավորապես, բացակայում են թեքահարթակները, ինչպես նաև շենքերի ներսում ազատ տեղաշարժի համար անհրաժեշտ հարմարանքները[296]: Նշվածի հետևանքով, հաշմանդամություն ունեցող մարզիկները զրկվում են պարալիմպիկ, սուրդլիմպիկ ու հատուկ օլիմպիադաների և այլ մրցաշարերին մասնակցելու համար արդյունավետ, շարունակական և լիարժեք նախապատրաստման հնարավորությունից: Այս առումով «Դիսըբիլիթի ինֆո» ՀԿ-ն վեր է հանել մարզադպրոցներ կամ մարզասրահներ, որոնք լիարժեք մատչելիություն չեն ապահովել[297]:

Սպորտային այնպիսի կառույցներ, ինչպիսին լողավազաններն են, որոնք հատկապես կարող են առողջարար և օգտակար լինել որոշ տեսակի հաշմանդամություն ունեցող երեխաների համար, ֆիզիկապես մատչելի չեն հաշմանդամություն ունեցող անձանց և երեխաների համար, առկա չեն իրենց տարածքներում, կամ անհասանելի են որևէ այլ պատճառով: «Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ»-ի հայաստանյան ներկայացուցչության տեղեկությունների համաձայն՝ երբեմն ծնողները ստիպված են համայնքի մարզիչներին կրկնակի գին վճարել՝ իրենց հաշմանդամություն ունեցող երեխային լողալ սովորեցնելու համար[298]: Մինչդեռ, Կոնվենցիայի համաձայն՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացումը, այդ թվում՝ սպորտային կյանքին ներգրավման միջոցով, ենթադրում է մյուսների հետ հավասար հիմունքներով սպորտային վայրերի մատչելիության ապահովում՝ խտրականության ու մեկուսացման բացառման, հաշմանդամություն ունեցող անձանց սպորտային կյանքի ներառման խթանման սկզբունքների հիման վրա[299]: Հետևաբար, մարզադպրոցը պետք է

[296] Օրինակ՝ վերելակ և (կամ) ամբարձիչ, տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց համար սանհանգույցների և դռների մատչելիություն և այլն:
[297] Մանրամասն տե՛ս «Դիսըբիլիթի ինֆո» ՀԿ-ի տվյալներ
[298] https://www.hrw.org/hy/report/2017/02/22/300330
[299]Կոնվենցիա 3-րդ, 4-րդ, 5-րդ, 30-րդ հոդվածներ:

հավասարապես մատչելի լինի բոլորի համար՝ անկախ վերջիններիս մոտ հաշմանդամության առկայությունից:

Խնդրի լուծման կապակցությամբ 2017 թվականին ձեռնարկվել են որոշակի քայլեր: Այսպես, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից տրամադրված տեղեկությունների համաձայն՝ Նախարարության ենթակայության տակ գտնվող 24 մարզադպրոցից միայն երկու մարզադպրոցի մուտքի մոտ կան թեքահարթակներ («Երևանի հրաձգության մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ և «Գյումրու սուսերամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ), մյուսները հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի մուտքի, ելքի, հաստատություններում ազատ տեղաշարժի և սանհանգույցներից օգտվելու համար:

Միաժամանակ, ըստ նախարարության տրամադրած տեղեկությունների՝ ՀՀ պետական բյուջեից 2017 թվականին «Հաշմանդամային սպորտին առնչվող ծառայություններ» ծրագրով պետական աջակցություն է տրամադրվել «Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտե», «Հայաստանի կույրերի միավորում», «Խուլերի հայկական սպորտային կոմիտե», «Հայկական հատուկ օլիմպիադաներ» հասարակական կազմակերպություններին, որոնք իրենց տրամադրվող պետական աջակցության գումարը օգտագործում են հանրապետությունում տարբեր մարզական միջոցառումների անցկացման, ինչպես նաև միջազգային հաշմանդամային տարբեր ֆեդերացիաների կողմից անցկացվող մրցաշարերին մասնակցելու նպատակով: Ավելին, Հայաստանի հավաքական թիմերի կազմում պարալիմպիկ, սուրդլիմպիկ խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում բարձր արդյունքների հասած 17 մարզիկ, 11 անձնական մարզիչներ և 9 հավաքական թիմի մարզիչներ ցուցաբերած արդյունքների համար 2017 թվականի ընթացքում ստացել են Հայաստանի Հանրապետության Նախագահի անվանական թոշակ:

Չնայած վերոնշյալի՝ սույն բաժնում տեղ գտած տվյալները վկայում են, որ դեռևս համակարգային առումով լուծում չի ստացել մշակութային կյանքին, հանգստին, ժամանցային ու սպորտային միջոցառումներին հաշմանդամություն ունեցող անձանց լիարժեք մասնակցության հարցը: Այս խնդիրները ներկայացվել են նաև 2017 թվականին Կոմիտե ներկայացված Մարդու իրավունքների պաշտպանի հատուկ զեկույցում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեին, ՀՀ մշակույթի, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություններին, ինչպես նաև ՀՀ տեղական կառավարման մարմիններին առաջարկվում է քայլեր ձեռնարկել, անհրաժեշտության դեպքում նախատեսելով նաև ժամանակավոր լուծումներ (թեքահարթակներ կամ այլ անհրաժեշտ հարմարանքներ)՝ մշակութային շենքերը, վայրերը, միջոցառումները, ինչպես նաև մարզադպրոցներն ու սպորտային միջոցառումները հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի դարձնելու ուղղությամբ: Անհրաժեշտ է նաև մատչելի դարձնել ֆիլմերը, ներկայացումները, ցուցահանդեսները՝ ապահովելով դրանց ձայնային կամ տիտրային լուծումները:

6. Կրթության իրավունք

Նախադպրոցական կրթություն

ՀՀ-ում շարունակում է խնդրահարույց մնալ հաշմանդամություն ունեցող երեխաների համար նախադպրոցական ուսումնական հաստատությունների (ՆՈՒՀ) մատչելիությունը: Խնդրին բազմիցս անդրադարձել է թե՛ Մարդու իրավունքների պաշտպանը, թե՛ Կոմիտեն[300]: Խնդիրը այստեղ ևս նախևառաջ ֆիզիկական միջավայրի մատչելիություն է, որը հատկապես ընդգծված է որոշ մարզերում: Այսպես, ըստ Տարածքային կառավարման նախարարության՝ ՀՀ Արմավիրի մարզում 2017 թվականին գործել է 64 նախադպրոցական ուսումնական հաստատություն, որոնք դեռևս հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող երեխաների մատչելի մուտքի և ելքի համար: ՀՀ Սյունիքի մարզում գործում է 50 մանկապարտեզ, որոնցից 2-ը ապահովված է հաշմանդամություն ունեցող երեխաների մուտքի և ելքի մատչելիության համար (ունեն թեքահարթակներ, լայնացվել են շենքի մոտքի դռները), իսկ մանկապարտեզների ներսում լայնացվել են սանհանգույցների դռները, տեղադրվել են զուգարաններից օգտվելու հարմարանքներ: Մինչդեռ, 2017 թվականի ընթացքում ՀՀ Սյունիքի մարզում նախադպրոցական ուսումնական հաստատություններում հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի դարձնելու ուղղությամբ աշխատանքներ չեն իրականացվել:

Ավելին, խնդիրը նաև այն է, որ որևէ փաստաթղթով կամ իրավական ակտով կարգավորված չեն հաշմանդամություն ունեցող և/կամ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխայի նախադպրոցական ուսումնական հաստատություն ընդգրկման և հաստատությունում ուսուցման կազմակերպման մեխանիզմները:

Ըստ այդմ, ՀՀ կրթության և գիտության նախարարությունը 2017 թվականին հանրային քննարկման է ներկայացրել նոր խմբագրությամբ «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք միջազգային փաստաթղթերով, որոնց միանալով՝ Հայաստանը պարտավորվել է ապահովել կրթության հավասար հնարավորություն բոլորի, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար: Նախագծով նախատեսվում են որոշակի երաշխիքներ հաշմանդամություն ունեցող երեխաների համար, օրինակ՝ հաշմանդամություն ունեցող երեխաների՝ նախադպրոցական ուսումնական հաստատություններ ընդունվելու առաջնահերթ իրավունքից օգտվելու հնարավորություն[301]: Վերոնշյալ նախագիծը, սակայն, 2018 թվականի մարտի 4-ի դրությամբ ընդունված չի եղել:

ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի նիստում հաստատվել է «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրին և երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» թիվ 30 արձանագրային որոշումը, որի 2-րդ հավելվածի՝ հաշմանդամություն ունեցող երեխաների ներառում հասարակություն գերակայության 1.3.2 կետի համաձայն՝ միայն 2018-2020 թվականներին է նախատեսվում

[300] Տե՛ս, օրինակ՝ ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի 2016 թվականի Եզրափակիչ դիտարկումներ թիվ CRPD/C/SVK/CO/1 և թիվ CRPD/C/LTU/CO/1:
[301] https://www.e-draft.am/projects/504/justification

հաշմանդամություն ունեցող երեխաներին ինտեգրացված ծառայությունների տրամադրում նախադպրոցական հաստատություններում[302]:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տարբեր են նաև ներառական նախադպրոցական կրթության վերաբերյալ ընկալումները: Մասնավորապես, «Հայաստանում նախադպրոցական կրթության մատչելիության» հետազոտության մեջ նշվում է, որ գյուղական համայնքներում հարցվողների 92.6%-ը նշում է, որ այն մանկապարտեզում, ուր հաճախում է իրենց երեխան, ԿԱՊԿՈՒ երեխաներ ընդգրկված չեն, այդ ցուցանիշը քաղաքային համայնքներում կազմել է 83.7%: Հարցվողների 14.5%-ը պնդում է, որ բացասաբար կվերաբերվեին, եթե իրենց երեխայի խումբ կամ մանկապարտեզ հաճախեին ԿԱՊԿՈՒ կամ հաշմանդամություն ունեցող երեխաներ: Գյուղական համայնքների բնակիչներն ավելի հանդուրժող են ներառական նախադպրոցական կրթության հարցում, քան քաղաքային բնակչությունը: Մանկապարտեզներում ԿԱՊԿՈՒ երեխաների ընդգրկվածության վերաբերյալ դրական ընկալման ամենացածր ցուցանիշն ու չեզոք ընկալման ամենաբարձր ցուցանիշը գրանցվել են Երևանում: Այն հարցվողները, ում երեխան հաճախում է մանկապարտեզ, որտեղ կան ԿԱՊԿՈՒ երեխաներ, ավելի դրական են տրամադրված նրանց ներառվածության հարցում[303]: Բացի այդ, ուսումնասիրությունները ցույց են տալիս, ծնողները նախաձեռնող չեն իրենց ԿԱՊԿՈՒ երեխաներին նախադպրոցական ուսումնական հաստատություն տանելու հարցում՝ նախընտրելով հատուկ վերականգնողական կամ զարգացման կենտրոնները, մյուս կողմից՝ նաև նախակրթարանների տնօրենները ցանկություն չունեն ներգրավել ԿԱՊԿՈՒ երեխաներին՝ հիմնականում պատճառաբանելով, որ մանկապարտեզում չկան համապատասխան պարագաներ, մասնագետներ և հատուկ խնամքի պայմաններ[304]:

Արդյունքում, երեխաները զրկվում են ներառական սկզբունքով նախադպրոցական կրթություն ստանալու հնարավորությունից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. ֆինանսական միջոցներ հատկացնել նախադպրոցական ուսումնական հաստատությունները մատչելի դարձնելու համար (ֆիզիկական մատչելիություն),

2. նախատեսել հաշմանդամություն ունեցող և/կամ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի նախադպրոցական ուսումնական հաստատություն ընդգրկման և հաստատությունում ուսուցման կազմակերպման հստակ մեխանիզմներ,

3. ծնողների, երեխաների, ինչպես նաև մասնագետների շրջանում շարունակել ներառական կրթության վերաբերյալ իրազեկման աշխատանքները:

Հանրակրթություն

Ըստ Կրթության և գիտության նախարարության տվյալների՝ 2017-2018 ուսումնական տարում Հայաստանում գործում են 201 ներառական կրթություն իրականացնող դպրոց: Ընդ որում, Հայաստանում ներառական կրթություն իրականացնող

[302] https://www.e-gov.am/u_files/file/decrees/30-1_2ardz_voroshum.pdf

[303] https://armenia.savethechildren.net/sites/armenia.savethechildren.net/files/library/Assessment%20on%20Access%20to%20Pre-school%20Education%20Services_ARM.pdf

[304] https://armenia.savethechildren.net/sites/armenia.savethechildren.net/files/library/Assessment%20on%20Access%20to%20Pre-school%20Education%20Services_ARM.pdf

դպրոցների թիվը 2017-ի մարտի 1-ի դրությամբ ավելացել է 81-ով[305]: Ըստ Կրթության և գիտության նախարարության՝ 2016-2017թթ. ուսումնական տարվա ընթացքում «հատուկ կրթական կարիքներ» ունեցող 6700 երեխա սովորում է ներառական կրթություն ապահովող հանրակրթական դպրոցներում:[306] Արդյունքում, հաշմանդամություն ունեցող բազմաթիվ երեխաներ սովորում են տարանջատված կրթական համակարգերում և չեն ստանում այն աջակցությունը, որն անհրաժեշտ է ներառական կրթության մեջ ընդգրկվելու համար: Չնայած նրա, որ Հայաստանը որդեգրել է ներառական կրթության աստիճանական անցման քաղաքականություն և նախատեսում է 2025 թվականին անցնել համընդհանուր ներառման՝ այնուամենայնիվ, ոլորտում առկա են համակարգային բնույթի մի շարք խնդիրներ:

Մարդու իրավունքների պաշտպանին ուղղված բողոքների ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ հաշմանդամություն ունեցող երեխաներն, այդ թվում՝ ներառական համարվող հանրակրթական դպրոցներում, հաճախ չեն ստանում որակյալ կրթություն՝ մյուսների հետ հավասար հիմունքներով: Մասնավորապես, ողջամիտ հարմարեցումների բացակայությունն, այդ թվում՝ շենքերի տարրական ֆիզիկական մատչելիությունը, բավարար թվով վերապատրաստված աշխատակիցների, երեխաների կրթության նկատմամբ անհատականացված մոտեցման և իրազեկման պակասը խոչընդոտում են հաշմանդամություն ունեցող շատ երեխաների որակյալ կրթություն ստանալուն: Բացի այդ, ներառական դպրոցների շենքերի ֆիզիկական մատչելիությունը հաշմանդամություն ունեցող երեխաների համար սահմանափակվում է հիմնականում դպրոցների մուտքի մոտ կառուցված թեքահարթակով: Միաժամանակ, առկա է նաև ծրագրերի մատչելիության հարցը[307]: Այս խնդիրների մասին Մարդու իրավունքների պաշտպանը մշտապես բարձրաձայնել է տարեկան զեկույցներով և հաղորդմամբ, ինչպես նաև խնդիրների մասին նշում են մի շարք հասարակական և միջազգային կազմակերպություններ և Կոմիտեն[308]:

Ավելին, հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների հետ աշխատող մի շարք ՀԿ-ներ մտահոգություններ են հայտնել առ այն, թե ինչպես է իրականացվում ներառական կրթությունն իրենց համայնքներում: Օրինակ, ըստ «Ունիսոն» հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպության տնօրենի՝ դպրոցները մատչելի չեն ցանկացած հաշմանդամություն ունեցող երեխայի համար, այլ միայն թեթև հաշմանդամություն ունեցող երեխաների համար: Վերջինս նշել է նաև, որ երեխաները հաճախում են ծնողների հետ և միայն շփվում իրենց ծնողների, այլ ոչ ուսուցիչների կամ երեխաների հետ: Դպրոցների ներսում առկա չեն մատչելի հարմարեցումներ, օրինակ՝ սանհանգույցներում կամ մարզասրահներում[309]:

---

[305] http://yerkirmedia.am/social/nerarakan-dproc-krtutyun-hashmandamutyun/
[306] https://www.hrw.org/hy/report/2017/02/22/300330
[307] Մանրամասն տես՝ Կրթության իրավունք բաժնում

[308] ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի 2017 թվականի Հայաստանի նախնական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ,
http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=INT%2fCRPD%2fGEC%2f8631&Lang=en,
https://www.hrw.org/hy/report/2017/02/22/300330
[309] https://www.hrw.org/hy/report/2017/02/22/300330

«Սովորել միասին, ապրել միասին» ծրագրի շրջանակում 2017 թվականին «Հույսի կամուրջ» ՀԿ-ի նախաձեռնությամբ հրապարակվել է քաղաքացիական հասարակության մասնակցությամբ իրականացված Տավուշի մարզի դպրոցների ներառականության գնահատման ուղղված հետազոտություն, որի համաձայն՝ Տավուշի մարզի բոլոր դպրոցները ներառական են: Հետազոտությունը ցույց է տալիս ռեսուրսների՝ հատկապես հոգեբանամանկավարժական թիմերի գործունեության ոլորտում առկա որոշակի մարտահրավերներ[310]:

Վերոնշյալ խնդիրների լուծման կապակցությամբ ձեռնարկվել են որոշակի քայլեր: Այսպես, 2017 թվականին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի կողմից իրականացվել է «Հաշմանդամ երեխաների սոցիալական ներառումը», «Անչափահասների շրջանում մուրացկանության և թափառաշրջիկության հիմնախնդիրները» թեմաներով վերապատրաստումներ, որին մասնակցել է 130 ունկնդիր:

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության 2017 թվականի տվյալների համաձայն՝ Կոտայքի մարզի ներառական կրթություն իրականացնող բոլոր դպրոցներում հաշմանդամություն ունեցող անձանց մուտքի և ազատ տեղաշարժի համար կառուցվել են թեքահարթակներ: Արագածոտնի մարզի ներառական կրթություն իրականացնող 6 հանրակրթական ուսումնական հաստատություններում կառուցվել են թեքահարթակներ: Սյունիքի մարզի Գորայք համայնքի Սպանդարյան գյուղի դպրոցի մուտքում կառուցվել է թեքահարթակ, ինչպես նաև իրականացվել են աշխատանքներ՝ առաջին հարկում հաշմանդամություն ունեցող անձանց ազատ տեղաշարժվելու հնարավորության համար: Մինչդեռ, 2017 թվականի ընթացքում օրինակ՝ ՀՀ Վայոց ձորի մարզում ներառական կրթություն իրականացնող դպրոցներում հաշմանդամություն ունեցող անձանց մուտքի և դրանցում ազատ տեղաշարժի համար միջոցառումներ չեն իրականացվել:

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության տրամադրված տվյալները վկայում են, որ միայն Արագածոտնի մարզի ներառական կրթություն իրականացնող 2 (Թալինի թիվ 1, Թալինի թիվ 2) հանրակրթական ուսումնական հաստատություններում և Լոռու մարզի Վանաձորի թիվ 16 դպրոցում 2017 թվականին կառուցվել են հարմարեցված սանհանգույցներ:

Ավելին, ըստ ՀՀ կրթության և գիտության նախարարության՝ 2017 թվականին «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար նախատեսված ծրագրերի, ձեռնարկների, ուսումնական այլ նյութերի մշակում, հրատարակում և ձեռքբերում» ծրագրի շրջանակներում ձեռք են բերվել 2000 բրայլյան տետրեր: Տպագրվել են 4000 Ներառական կրթության կազմակերպման մեթոդական ուղեցույց-ձեռնարկներ, որոնք տրամադրվել են հանրապետության բոլոր մարզերին՝ հանրակրթական դպրոցներին բաշխելու նպատակով: Ձեռք են բերվել և հանրապետության հատուկ հանրակրթական դպրոցներին և մանկավարժահոգեբանական

[310] http://bridgeofhope.am/wp-content/uploads/2018/01/%D5%8F%D5%A1%D5%BE%D5%B8%D6%82%D5%B7%D5%AB-%D5%B4%D5%A1%D6%80%D5%A6%D5%B8%D6%82%D5%B4-%D5%A4%D5%BA%D6%80%D5%B8%D6%81%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%B6%D5%A5%D6%80%D5%A1%D5%BC%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%A3%D5%B6%D5%A1%D5%B0%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D5%B4.pdf

աջակցության կենտրոններին (26 հաստատություն) տրամադրվել կրթական խաղերի փաթեթներ (9 անուն փաթեթներ):

Սույն բաժնում ներկայացված տվյալների հետ մեկտեղ, այնուամենայնիվ, պարզ է դառնում, որ իրականացված քայլերը բավարար չեն հանրակրթական ուսումնական կրթություն իրականացնող հաստատություններում հաշմանդամություն ունեցող երեխաների համար լիարժեք ներառական կրթության ապահովելու համար: Չնայած ձեռնարկված որոշ քայլերին՝ հանրակրթական ուսումնական հաստատություններում տեղաշարժման դժվարություն ունեցող անձանց համար բացակայում են վերելակները, դռները դժվար են հրվում, ունեն շեմեր, չկան բռնակներ, բացակայում են հարմար սանհանգույցներ, իսկ կահույքը երբեմն մատչելի է դառնում ծնողների ջանքերի շնորհիվ: Շենքերը նաև հարմարեցված չեն տեսողության և լսողության խնդիրներ, մտավոր առանձնահատկություններ և այլ դժվարություններ ունեցող անձանց համար (բացակայում են, օրինակ, գունային գծանշումներ և այլն): Առկա է նաև դասագրքերի մատչելիության խնդիրը[311]:

Ուստի անհրաժեշտ է, որպեսզի ՀՀ կրթության և գիտության նախարարության, ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի, ինչպես նաև ՀՀ տեղական կառավարման մարմինների կողմից ներառական կրթություն իրականացնող դպրոցներում իրականացվեն շարունակական համակարգային միջոցառումներ՝

- *դպրոցների ֆիզիկական մատչելիության,*
- *կրթության և ուսումնական ծրագրերի բովանդակային մատչելիության*
- *ուսուցիչների շարունակական վերապատրաստման ապահովման ուղղությամբ:*

Բարձրագույն կրթություն

Ըստ Կոնվենցիայի 24-րդ հոդվածի՝ մասնակից պետություններն ապահովում են հաշմանդամություն ունեցող անձանց համար առանց խտրականության ու մյուսների հետ հավասար հիմունքներով մատչելի բարձրագույն կրթությունը: Ընդհանուր առմամբ, ՀՀ-ում բարձրագույն ուսումնական հաստատությունների (ԲՈՒՀ) ֆիզիկական մատչելիությունն ապահովված չէ: Ինչպես հանրակրթական ուսումնական հաստատություններում, ԲՈՒՀ-երում ևս մատչելիությունը սահմանափակվում է մուտքի թեքահարթակի և վերելակի առկայությամբ: Դրա պատճառներից են ոչ միայն Խորհրդային միության տարիներին կառուցված շենքերը և հարմարեցումները կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների սակավությունը, այլև՝ հիմնախնդրի վերաբերյալ իրազեկվածության պակասը և որպես հետևանք՝ հիմնախնդիրը չկարևորելը:

Ըստ ՀՀ կրթության և գիտության նախարարության՝ Հայաստանի Հանրապետությունում գործող բարձրագույն ուսումնական հաստատություններից հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին ամբողջովին հարմարեցված է միայն Հայաստանի ամերիկյան համալսարանը: Միաժամանակ, «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2017-2021 թվականների» համալիր ծրագրով նախատեսվում է մինչև 2021 թվականը բարձրագույն, նախնական և միջին

[311] Մանրամասն տես Կրթության իրավունք բաժնում

մասնագիտական ուսումնական հաստատություններում ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց համար ուսուցման մատչելի պայմաններ:

Ավելին, 2014-2016 թվականներին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցներում և հաղորդմամբ նշվել է նաև հաշմանդամություն ունեցող անձանց՝ Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ ընդունվելու և սովորելու հնարավորությունից զրկված լինելու խնդիրը: Մասնավորապես, ՀՀ կառավարության որոշմամբ, որով կարգավորվում է ՀՀ պետական և ոչ պետական ԲՈՒՀ-եր ընդունելության գործընթացը, նախատեսվում է, որ ինստիտուտի մասնագիտական առարկաների քննությունները ներբուհական քննություններ են և անցկացվում են տվյալ մասնագիտության առանձնահատկություններին և ծրագրերի պահանջներին համապատասխան[312]: ԲՈՒՀ-ի ընդունման կարգից, սակայն, բխում է, որ անկախ ընտրած մասնագիտությունից՝ բոլոր դիմորդները պարտավոր են հանձնել «Ընդհանուր ֆիզիկական պատրաստություն» առարկան[313], ինչպես նաև ներկայացնել բժշկական զննության եզրակացություն[314]: Ըստ այդմ, հաշվի չեն առնվում հաշմանդամություն ունեցող անձանց առանձնահատուկ կարիքները, և հենաշարժողական խնդիրներ ունեցող անձինք զրկվում են տվյալ ԲՈՒՀ-ում կրթություն ստանալու հնարավորությունից՝ վերոնշյալ առարկայից քննություն հանձնելու հնարավորություն չունենալու պատճառով:

ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ԲՈՒՀ-ին տրվել է հանձնարարական՝ հաշմանդամություն ունեցող անձանց լիարժեք կրթությունն ապահովելու նպատակով մշակել համապատասխան ծրագրեր և մեթոդական փաստաթղթեր: Համակողմանի ուսումնասիրությունների արդյունքում պարզ է դարձել, որ հարցի լուծման համար անհրաժեշտ է կատարել խոշոր ֆինանսական ներդրումներ, քանի որ Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտը չունի հարմարեցումների ապահովմամբ համապատասխան ենթակառուցվածքներ՝ հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց կրթությունը կազմակերպելու համար[315]: ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից տրամադրած տվյալների համաձայն՝ 2017 թվականի ընթացքում Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում հաշմանդամություն ունեցող անձանց լիարժեք կրթությունն ապահովելու նպատակով ֆինանսավորում չի հատկացվել:

Ավելին, 2017 թվականին քննարկման է ներկայացվել «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որտեղ բարձրագույն կրթության բնագավառում պետական քաղաքականության հիմնական սկզբունքների, նպատակների և խնդիրների ցանկում ներառված է նաև ԿԱՊԿՈՒ և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց համար բարձրագույն կրթություն ստանալու պայմանների հավասարությունը: Նախագծով սահմանված է, որ ուսումնական նշանակության համար նախագծվող բուհերի շենքերը, շինությունները և այլ տարածքները պետք է նախագծվեն՝ հաշվի առնելով ԿԱՊԿՈՒ անձանց պահանջմունքները: Առկա շենքերը, շինությունները և այլ տարածքները պետք է հարմարեցվեն վերոնշյալ անձանց համար: Հաշմանդամություն ունեցող անձանց համար

[312] ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի N 597-Ն որոշում:
[313] Ներառում է վազք, եռացատկ, ձգումներ և այլն:
[314] «Ֆիզիկական Կուլտուրա և Սպորտ» մասնագիտության ընդունելության քննության ծրագիրը և գնահատման չափանիշները Ընդհանուր ֆիզիկական պատրաստություն» առարկայից հաստատվել են ՀՀ կրթության և գիտության նախարարի կողմից 2009 թվականին, http://www.asipc.am/index.php?lng=am&p=page53
[315] http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/28731eccde752a30c70feae24a4a7de7.pdf

ծառայությունների մատչելիության ապահովման համար հավելյալ վճարների գանձումը արգելվում է[316], ինչը համահունչ է նաև կողմից նախագծի վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացրած կարծիքին:

Չնայած նրան, որ 2017 թվականին իրականացվել են որոշ գործողություններ՝ այնուամենայնիվ, ոլորտում անհրաժեշտ է կատարել համակարգային անհետաձգելի բարեփոխումներ՝ հաշմանդամություն ունեցող անձանց բարձրագույն և մասնագիտական կրթությունն ապահովելու ուղղությամբ:

Հաշվի առնելով վերոգրյալն՝ առաջարկում ենք

1. ՀՀ կրթության և գիտության նախարարությանը, ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեին, ինչպես նաև ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններին՝ ապահովել ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ֆիզիկական միջավայրի և կրթական ծրագրերի մատչելիությունը,

2. նախատեսել համապատասխան ֆինանսական միջոցներ Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում հաշմանդամություն ունեցող անձանց կրթությունը կազմակերպելու համար:

7. Առողջապահական ծառայությունների մատչելիություն

Կոնվենցիայի 4-րդ և 25-րդ հոդվածներին համաձայն՝ պետությունները պետք է ապահովեն և օժանդակեն հաշմանդամություն ունեցող անձանց՝ մարդու իրավունքների, այդ թվում՝ առողջության պահպանման իրավունքի լիակատար իրականացումն առանց հաշմանդամության պատճառով որևէ խտրականության: Չնայած նշված պահանջին, տարիներ շարունակ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանները բարձրաձայնել են հաշմանդամություն ունեցող անձանց համար առողջապահական ծառայությունների մատչելիության հարցը: Մասնավորապես, բժշկական հաստատությունների մասնագետները հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատելու վերաբերյալ ունեն իրազեկվածության ցածր մակարդակ, իսկ առողջապահական ծառայություններն ու շենքերը շարունակում են մնալ անմատչելի հաշմանդամություն ունեցող շատ անձանց համար: Խնդիրը հատկապես նկատելի է մարզերում: ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ 2017 թվականի ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց համար առողջապահական ծառայությունները մատչելի դարձնելու ուղղությամբ համապատասխան աշխատանքներ չեն իրականացվել ՀՀ Գեղաքունիքի, Շիրակի, Կոտայքի և Սյունիքի մարզերում: Ավելին, 2017 թվականի ընթացքում հաշմանդամություն ունեցող կանանց համար շարունակում են անհասանելի մնալ նաև վերարտադրողական ծառայությունները[317]:

Խնդիրների լուծման ուղղությամբ մի շարք քայլեր են ձեռնարկվել: Այսպես, համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի թիվ 958-Ն որոշմամբ հաստատված՝ ՀՀ Արագածոտնի մարզի առողջապահական ոլորտի օպտիմալացման ծրագրի՝ Աշտարակի բժշկական կենտրոնի ստացիոնար ծառայությունը կենտրոնացվել է

[316] ՀՀ կրթության և գիտության նախարարության տվյալներ

[317] Նշված խնդիրների մասին մանրամասն ներկայացված է ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի «Սեռական և վերարտադրողական առողջության ծառայությունների հզորացում» ծրագրի և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հետ համագործակցությամբ իրականացված «Հայաստանում սեռական և վերարտադրողական առողջության իրավունքների իրացման վերաբերյալ հանրային հետազոտության» (Հետազոտություն) շրջանակներում

մեկ շենքում, որտեղ կա վերելակ և թեքահարթակ՝ ընդունարանի մուտքի մոտ: Ըստ Նախարարության՝ խնայված միջոցների հաշվին ներկայումս կատարվում են կապիտալ վերանորոգման աշխատանքներ, որի ժամանակ կկառուցվեն նաև թեքահարթակներ մյուս մուտքերի համար: ՀՀ Վայոց ձորի մարզում 2017 թվականին Վայք քաղաքի «Վայքի բուժական միավորում» ՓԲԸ-ում կառուցվել է հարմարեցված վերելակ:

Ըստ ՀՀ առողջապահության նախարարության՝ 2017 թվականին Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող վարկային ծրագրի շրջանակներում ընթացել են ՀՀ Արարատի մարզի Արտաշատի և ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի բժշկական կենտրոնների շինարարական աշխատանքները, որոնք նախատեսվում է ավարտել 2018 թվականին: Ավելին, ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրած տեղեկությունների համաձայն՝ վերոնշյալ բժշկական կենտրոնները հարմարեցված են հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի մուտքի, ելքի, հաստատություններում ազատ տեղաշարժի և սանհանգույցներից օգտվելու համապատասխան բոլոր պայմաններին:

2016 թվականի Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդմամբ անդրադարձ է կատարվել նաև բուժաշխատողների հատուկ վերապատրաստմանը: Մասնավորապես, ըստ ՀՀ առողջապահության նախարարության՝ բուժաշխատողների շփումները պացիենտների հետ և այդ շփումներում էթիկական նորմերի պահպանումը ուսուցանվում է բժշկական կրթության դիպլոմային և հետբուհական կրթության փուլերում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բուժաշխատողները պացիենտների հետ իրենց շփումներում արդեն իսկ պարտավոր են լինել նրբանկատ և պահպանել էթիկական նորմեր՝ որևէ լրացուցիչ կրթություն հաշմանդամություն ունեցող անձանց հետ շփումներում վարվելակերպի առանձնահատկություններ ուսուցանելու վերաբերյալ չի իրականացվում: Նախարարության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ հաշմանդամություն ունեցող անձանց հետ շփվելու և վերջիններիս սպասարկելու էթիկայի վերաբերյալ բժշկական հաստատության աշխատակիցների իրազեկվածության բարձրացման ուղղությամբ միջոցառումներ չեն իրականացվել նաև 2017 թվականին:

Ելնելով վերոգրյալից՝ պարզ է դառնում, որ դեռևս հրատապ անհրաժեշտություն է համակարգային գործողությունների իրականացումը հաշմանդամություն ունեցող անձանց՝ Կոնվենցիայով և ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված առողջության պահպանման իրավունքի լիարժեք իրացման համար:

Ուստի անհրաժեշտ է՝

1. ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց համար առողջության պահպանման իրավունքի լիակատար իրականացումը, այդ թվում՝ ապահովելով բժշկական ծառայությունների և բուժտեխնիկայի մատչելիությունը վերջիններիս համար,

2. ՀՀ առողջապահության նախարարության կողմից բուժանձնակազմի համար իրականացնել շարունակական վերապատրաստումներ՝ հաշվի առնելով հաշմանդամության՝ մարդու իրավունքների սկզբունքի վրա հիմնված մոդելը,

3. *ՀՀ առողջապահության նախարարության և ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի և ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ապահովել բուժհաստատությունների մատչելիությունը:*

8. Աշխատանք և զբաղվածություն

2017 թվականի ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության ապահովման խնդիրը շարունակում է մնալ սոցիալական ոլորտի դժվար լուծելի խնդիրների շարքում: Խնդիրը համակարգային է, քանզի այն պետության կողմից իրականացվող զբաղվածության խթանմանն ուղղված ոչ բավարար ծրագրերի և հասարակության մեջ հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ կարծրատիպերի առկայության արդյունք է: Հարցի լուծումը նախատեսված է նաև «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» № 483-Ն որոշմամբ, որով նախատեսվել է 2017 թվականից պարբերաբար գործատուին տրամադրել պետական աջակցություն զբաղվածության կարգավորման պետական ծրագրերով աշխատաշուկայում անմրցունակ և հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի տեղավորման դեպքում:

Ըստ այդմ, ՀՀ կառավարության 2017 թվականի մարտի 30-ի թիվ 339-Ն որոշման 6-րդ կետով գործատուներին միանվագ փոխհատուցման չափերը սահմանվել են ըստ աշխատաշուկայում անմրցունակ անձանց կատեգորիաների, հստակեցվել են պետություն-գործատու-անմրցունակ անձ եռակողմ պայմանագրերը և դրանց ժամկետները, սահմանվել են միանվագ փոխհատուցման տրամադրման համար առաջնահերթությունները՝ ըստ շահառուների կատեգորիաների[318]: Ավելին, 2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրում» ծրագրում ընդգրկվել է աշխատաշուկայում անմրցունակ 510 անձ, որից 15-ը՝ հաշմանդամություն ունեցող անձինք[319]:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից տրամադրված տվյալների համաձայն՝ 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ զբաղվածության տարածքային կենտրոններում հաշվառվել է 2983 հաշմանդամություն ունեցող անձ, որոնցից տարվա ընթացքում աշխատանքի է տեղավորվել 187 անձ (56-ը զբաղվածության ծրագրերի միջոցով): Մասնագիտական ուսուցման դասընթացներում ընդգրկվել է հաշմանդամություն ունեցող 8 անձ:

Հաշվի առնելով Կոնվենցիայի պահանջները[320] և հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության հարցը լուծելու անհրաժեշտությունը՝ 2016 թվականի հունվարի 1-ից պետական մարմինների համար, որոնք ունեն 100-ից ավել աշխատող, գործել է հաշմանդամություն ունեցող անձանց համար աշխատանքի տեղավորման համար պարտադիր ապահովման քվոտա[321]: Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի

---

[318] Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019թթ. գործողությունների ծրագրի շրջանակում ՀՀ ԱՍՀՆ-ի կողմից իրականացված միջոցառումների վերաբերյալ հաշվետվություն

[319] Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019թթ. գործողությունների ծրագրի շրջանակում ՀՀ ԱՍՀՆ-ի կողմից իրականացված միջոցառումների վերաբերյալ հաշվետվություն

[320] «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա, հոդված 27, կետ 1, ենթակետ «ե»:

[321] «Զբաղվածության մասին» ՀՀ օրենք, հոդված 20, ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 1308-Ն որոշում

նախարարության՝ նախնական հաշվարկներով 2017 թվականի համար քվոտավորման ենթակա 708 կազմակերպություն (պետական և ոչ պետական) քվոտայի պահանջը պետք է ապահովեր 3621 աշխատատեղի մասով, այդ թվում՝ 1725-ը՝ պետական կազմակերպություններում: Մինչդեռ, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 453-Ն որոշմամբ քվոտայի պարտադիր կատարման պահանջը ժամանակավոր կասեցվել է մինչև 2018 թվականի հուլիսի 1-ը: Խնդիրն այն է, որ քվոտավորման ենթակա կազմակերպությունների կողմից քվոտայի պահանջի կատարման գործընթացների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դեռևս առկա են որոշ օբյեկտիվ խոչընդոտներ՝ առանձին ոլորտներում այդ պահանջի լիարժեք կատարման առումով, ինչի կապակցությամբ իրականացվել է ուսումնասիրություն[322]: Խնդիրները հետևյալն են՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ անձնավորված հաշվառման տեղեկատվական բազայում առկա տեղեկատվությունը գործող կարգավորումների շրջանակներում հնարավորություն չի տալիս լիարժեք հաշվարկել քվոտայի պահանջը չկատարած աշխատատեղերի թվաքանակը, պետական կառավարման որոշ մարմիններում աշխատողների (ծառայողների) թվաքանակի վերաբերյալ տեղեկատվության գաղտնիությունը (ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՀ ոստիկանություն և այլն), որն անհնար է դարձնում այդ մարմինների համակարգերում գործող կազմակերպությունների համար քվոտավորման ենթակա աշխատատեղերի թվի հաշվարկը, քաղաքացիական, դիվանագիտական, զինվորական, քրեակատարողական, փրկարար ծառայությունների և համայնքային ծառայության պաշտոնները հաշմանդամություն ունեցող անձանցով համալրման օրենսդրական սահմանափակումները և գործնականում առկա մի շարք այլ խոչընդոտներ[323]:

Արդյունքում, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից մշակվել և սահմանված կարգով 2017 թվականին ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել քվոտայի պահանջի՝ օրենքով սահմանված հիմքերի փոփոխություններ նախատեսող օրենքի նախագիծ, որը 2018 թվականի մարտի 4-ի դրությամբ չի ընդունվել:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է՝

1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից քայլեր ձեռնարկել հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի, զբաղվածության ապահովման համար արդյունավետ ծրագրերի մշակման և ներդրման ուղղությամբ,

2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից բարձրացնել քվոտավորման համակարգի արդյունավետությունը՝ ներդնելով վերջինիս գնահատման և մշտադիտարկման գործուն մեխանիզմ:

9. Հաշմանդամություն ունեցող երեխաների՝ ընտանեկան միջավայրում ապրելու իրավունք

Շարունակվում է համակարգային առումով չլուծված մնալ հաշմանդամություն ունեցող երեխաների խնամքն ընտանեկան կամ ընտանեկանին մոտ միջավայրում կազմակերպելու, ինչպես նաև նշված երեխաների որդեգրման պրակտիկայի ներդրման և խթանման հարցը, որը տարիներ շարունակ բարձրաձայնվել է Մարդու իրավունքների

[322] http://www.mlsa.am/?p=5945
[323] http://www.mlsa.am/?p=5945

պաշտպանի զեկույցներում: Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ 2017 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի մանկատներում խնամվում է 620 երեխա, այդ թվում՝ շուրջ 450 երեխա ունի հաշմանդամություն:

Նշված ցուցանիշը վկայում է այն մասին, որ հաշմանդամություն ունեցող երեխաները կազմում են մանկատանը խնամվող երեխաների ճնշող մեծամասնությունը, ինչն իր հերթին նշանակում է, որ դեռևս արդիական է հաշմանդամություն ունեցող երեխաների խնամքը ընտանիքում կազմակերպելու խնդիրը:

«Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան ճանաչում է յուրաքանչյուր երեխայի՝ ընտանեկան միջավայրում ապրելու իրավունքը[324]: Իրավունքն ունիվերսալ է, ուստի նաև ընտանեկան միջավայրում ապրելու իրավունք ունեն հաշմանդամություն ունեցող երեխաները: 2017 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի համագործակցության արդյունքում Երևանում կայացել է «Ընտանիքում ապրելու երեխայի իրավունքը» թեմայով միջազգային երկօրյա խորհրդաժողովը, որին մասնակցել են, Եվրոպայի խորհրդի ներկայացուցիչները, Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի ավելի քան տասը երկրի՝ երեխայի իրավունքի ոլորտի պատասխանատուներ, ներկա և նախկին օմբուդսմաններ: Խորհրդաժողովին մասնակցել են նաև պետական կառույցների, Ազգային ժողովի ներկայացուցիչներ, գիտական գործունեություն ծավալող անձինք հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Խորհրդաժողովի նպատակն է եղել ոլորտի պատասխանատու և շահագրգիռ կողմերի հետ քննարկել իրականացվող ընթացիկ քայլերը, միջազգային հանրությանը ներկայացնել հայաստանյան փորձը՝ միևնույն ժամանակ ծանոթանալով այլ երկրների փորձին: Հանդիպման ժամանակ անդրադարձ է կատարվել նաև հաշմանդամություն ունեցող երեխաների ընտանիքում ապրելու իրավունքի իրացմանն ուղղված քայլերին:

Խնդրի լուծման ուղղությամբ 2017 թվականին ձեռնարկվել են որոշակի քայլեր: Այսպես, ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ «Խնամատար ընտանիքում երեխայի խնամքի և դաստիարակության աջակցության տրամադրում» միջոցառման շրջանակում 2017 թվականին խնամատար ընտանիքներում խնամք է տրամադրվել առանց ծնողական խնամքի մնացած 25 երեխայի, այդ թվում՝ երկուսը՝ հաշմանդամություն ունեցող:

«Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» № 483-Ն որոշմամբ նախատեսվել է ընդլայնել հաշմանդամություն ունեցող երեխաներին և նրանց ընտանիքներին սոցիալ-վերականգնողական ծառայություններ տրամադրող համայնքային կենտրոնների ցանկը: Ըստ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալների՝ հաշմանդամություն ունեցող երեխաներին ցերեկային կենտրոնում սոցիալ-վերականգնողական ծառայություններ մատուցելու նպատակով պետական աջակցություն է ցուցաբերվում «Փրկություն» և «Լիարժեք կյանք» հասարակական կազմակերպություններին: Ավելին, 2017 թվականից առուտիզմ ունեցող դեռահասներին և

[324] «Երեխաների այլընտրանքային խնամքի ուղեցույց», 64/142 բանաձև, ընդունված ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից (A/RES/64/142*), կետ 14:

երիտասարդներին զբաղվածության և սոցիալ-հոգեբանական ծառայությունների տրամադրման նպատակով ծառայություն է պատվիրակվել նաև «Իմ ուղին» սոցիալ-աբիլիտացիոն ցերեկային կենտրոնին: Կենտրոնի կողմից իրականացվում է առուիզմ ունեցող դեռահասների և երիտասարդների սպասարկում՝ խնամք, առօրյա զբաղվածություն, սոցիալ-վերականգնողական ծառայությունների տրամադրում՝ ապահովելով նրանց մասնագիտական կողմնորոշումը, ընտանիքում ապրելու իրավունքի իրացումը և սոցիալական ներառումը:

Երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի ապահովման, մասնավորապես ՀՀ քաղաքացիների կողմից մանկատներից առողջական խնդիրներով երեխաների որդեգրումը խթանելու նպատակով ՀՀ ընտանեկան օրենսգրքում կատարվել է համապատասխան լրացում, համաձայն որի՝ սահմանվել է դրույթ, որը վերաբերում է որդեգրողի և որդեգրվողի տվյալների համադրմանը: Նախատեսվում է ՀՀ կառավարության որոշմամբ սահմանել որդեգրման ենթակա երեխայի և որդեգրել ցանկացող անձի տվյալների համադրելիության չափանիշներ, որի գնահատման հիման վրա կիրականացվի որդեգրումը: Իսկ հաստատություններից երեխաներին կենսաբանական ընտանիքներ վերադարձնելու (բեռնաթափում և կանխարգելում) միջոցառման շրջանակում 2017 թվականին կենսաբանական ընտանիք է վերադարձել 40 երեխա, և կանխարգելվել է 60 երեխայի մուտքը հաստատություններ, այդ թվում՝ ՀՀ Լոռու և Շիրակի մարզերում՝ յուրաքանչյուրում 20 երեխա վերադարձել է կենսաբանական ընտանիք, կանխարգելվել է 30 երեխայի մուտքը հաստատություններ[325]:

Սակայն ինչպես արձանագրել է «Հյուման Ռայթս Ուոթչ» (Human Rights Watch) իրավապաշտպան կազմակերպությունը՝ չնայած նրան, որ ՀՀ կառավարությունը պարտավորվել է երեխաներին դուրս բերել առնվազն 22 մանկատնից, հատուկ, գիշերօթիկ դպրոցներից և վերափոխել դրանք համայնքահեն ծառայություններ մատուցող ոչ բնակելի կենտրոնների՝ ծրագրեր չկան երկրի՝ բացառապես հաշմանդամություն ունեցող երեխաների համար նախատեսված երեք մանկատները վերափոխելու ուղղությամբ[326]:

Հետևաբար, տվյալները վկայում են այն մասին, որ խնդիրը դեռևս մնում է չլուծված: Ավելին, շարունակում է ցածր մնալ ՀՀ քաղաքացիների կողմից հաշմանդամություն ունեցող երեխաների որդեգրման թիվը: Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կենտրոնացված հաշվառման տվյալների՝ 2017 թվականի ընթացքում որդեգրվել է 53 երեխա: Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից որդեգրած 24 երեխաներից 12-ը որդեգրվել են ընտանիքից և առողջ են, իսկ մանկատներից որդեգրած 12 երեխայից 8-ն ունի առողջության հետ կապված լուրջ խնդիրներ: Օտարերկրյա քաղաքացիների կողմից որդեգրած՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող 29 երեխայից 28-ն ունեցել է առողջական խնդիրներ, այդ թվում 15-ը՝ հաշմանդամության կարգավիճակ:

Ուստի՝ 2017 թվականի ընթացքում համակարգային առումով լուծված չէ հաշմանդամություն ունեցող երեխաների խնամքն ընտանեկան կամ ընտանեկանին մոտ միջավայրում կազմակերպելը, ինչպես նաև նշված երեխաների որդեգրման պրակտիկայի ներդրման և խթանման հարցը:

---

[325] ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2017 թվականի գործունեության հաշվետվություն

[326] https://www.hrw.org/sites/default/files/report_pdf/armenia0217arm_web_0.pdf

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք՝

1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը՝ շարունակել մշակել ծրագրեր հաշմանդամություն ունեցող երեխաների՝ ընտանեկան միջավայրում ապրելու իրավունքի ապահովման, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների որդեգրման կամ խնամատար ընտանիքներ տեղափոխվելու նպատակով,

2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը՝ ինստիտուցիոնալացումը կանխելու նպատակով հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների համար ստեղծել արդյունավետ համայնքահեն ծառայություններ:

10. Մասնագիտացված հատուկ մանկատների հաշմանդամություն ունեցող սաների համար համապատասխան կացարանների և խնամքի հաստատությունների բացակայության խնդիրը

Մասնագիտացված հատուկ մանկատների՝ հաշմանդամություն ունեցող սաների 18 տարեկանը լրանալուց հետո մանկատներում մնալու կամ նյարդահոգեբուժական տուն-ինտերնատներ, համապատասխան բժշկական հաստատություններ տեղափոխելու խնդիրը շարունակում է մնալ չլուծված: Տվյալ խնդիրը, մասնավորապես, պայմանավորված է ՀՀ-ում համապատասխան կացարաններ և այլընտրանքային խնամքի հաստատությունների բացակայությամբ: Դեռևս 2013 թվականից Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցներով և հաղորդմամբ բարձրաձայնվել է այն խնդիրը, որ Խարբերդի մասնագիտացված մանկատանը ապրում են մտավոր և ֆիզիկական լուրջ խնդիրներ ունեցող երեխաներ, և առկա է գերբեռնվածության լուրջ խնդիր:

Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ 2017 թվականի դրությամբ Վանաձորի մանկատանը խնամվում է հանրակրթության մեջ ընդգրկված 18 տարին լրացած 2 սան, Մարի Իզմիրլյանի անվան մանկատանը խնամվում է 18 տարեկանը լրացած 7 սան, այդ թվում՝ 2 սան սովորում է հատուկ դպրոցում, իսկ Խարբերդի մասնագիտացված մանկատանը խնամվում է 18 տարեկանը լրացած շուրջ 130 սան: Միևնույն ժամանակ, Նախարարության համակարգի երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության (այդ թվում՝ մասնագիտացված) հաստատությունների 18 տարեկանը լրացած սաներից 2017 թվականի ընթացքում սոցիալական կացարանով ապահովվել են 4-ը:

Ինչ վերաբերում է մանկատների՝ հաշմանդամություն ունեցող շրջանավարտների համար բնակարանով ապահովման արտոնություններ սահմանելուն, ապա ըստ նախարարության՝ 2017 թվականին մանկական խնամակալական կազմակերպությունների հաշմանդամություն ունեցող շրջանավարտների համար այդպիսի արտոնություններ սահմանելու ուղղությամբ որևէ միջոցառում չի իրականացվել: Ավելին, ներկայումս սոցիալական կացարան ստանալու համար հերթագրված են մանկական խնամակալական կազմակերպությունների 222 շրջանավարտներ (2003-2013 թվականներ):

Արդյունքում, համայնքային ծառայությունների, այլընտրանքային խնամքի հաստատությունների սակավաթվության պատճառով մանկատան հաշմանդամություն ունեցող շրջանավարտները չեն կարողանում անկախ կյանք վարել՝ ուստի և մնում են այն մանկատանը, որի շրջանավարտներն են, տեղափոխվում են «Զորակ» հոգեկան առողջության խնամքի կենտրոն, կամ էլ՝ հոգեբուժարաններ:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք՝ առանձնացնել այլընտրանքային խնամքի հաստատություններ և բնակելի տարածքներ՝ մանկատան շրջանավարտներին տրամադրելու համար, ներդնել համայնքային ծառայություններ՝ հաշվի առնելով նրանց կարիքներն ու հասարակությանն ինտեգրվելու անհրաժեշտությունը:

11. Քաղաքական իրավունքներ

2017 թվականին արձանագրվել է հաշմանդամություն ունեցող անձանց՝ քաղաքական իրավունքների իրացման սահմանափակումներ: 2017 թվականի ապրիլի 2-ին կայացած Ազգային ժողովի ընտրությունների անցկացման ընթացքում Մարդու իրավունքների աշխատակազմը ստացել է ահազանգեր հաշմանդամություն ունեցող անձանց կողմից քվեարկությունը կատարելու հարմարությունների բացակայության վերաբերյալ: Մասնավորապես, Մարդու իրավունքների պաշտպանի թեժ գծին ստացվել է հաշմանդամություն ունեցող անձանց քվեարկության համար անհրաժեշտ պայմանների բացակայության հետ կապված 5 կոնկրետ դեպքի վերաբերյալ ահազանգ, ինչպես նաև մեկ ընդհանուր բնույթի մտահոգություն: Պաշտպանի աշխատակազմի և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համատեղ քննարկման արդյունքում ԿԸՀ-ի կողմից բոլոր տեղամասային ընտրական հանձնաժողովներին հանձնարարվել է հատուկ աջակցություն ցուցաբերել այն ընտրատեղամասեր այցելած հաշմանդամություն ունեցող անձանց, որոնք չունեն համապատասխան պայմաններ: Նշվածը վկայում է այն մասին, որ դեռևս համակարգային խնդիրը մնում է չլուծված:

Հաշմանդամություն ունեցող անձանց՝ ընտրություններին մասնակցելու ընթացքում առաջ եկած խնդիրներին անդրադարձել է նաև Կոմիտեն[327]: Հիմնական խնդիրը կապված է ընտրական գործընթացների հետ: Հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքի ապահովման հետ կապված մտահոգությունը պայմանավորված է նախևառաջ Ընտրական օրենսգրքում այդ իրավունքի իրական ապահովման համար գործուն կառուցակարգերի բացակայությամբ: Մասնավորապես, ՀՀ ընտրական օրենսգրքի 17-րդ հոդվածի 5-րդ մասը ամրագրում է, որ տեղական ինքնակառավարման մարմինները սահմանափակ ֆիզիկական հնարավորություններ ունեցող[328] ընտրողների ընտրական իրավունքի իրականացման մատչելիությունն ապահովելու համար տեղամասային կենտրոններում ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ: Միաժամանակ, օրենսգրքի 65-րդ հոդվածի 8-րդ մասը ընդհանրական անդրադարձ է կատարում քննարկվող հարցին՝ նշելով, որ քվեարկությանը մասնակցելու դժվարություններ ունեցող ընտրողների համար քվեարկությունը մատչելի դարձնելու նպատակով Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պարտավոր է սահմանել լրացուցիչ հնարավորություններ՝ ապահովելով քվեարկողի կամքի ազատ արտահայտման հնարավորությունն ու քվեարկության գաղտնիությունը: Ուստի՝ այս կարգավորումները բավարար հստակ չեն և չեն նախանշում այն քայլերը, որոնք պետք է և կարող են ձեռնարկվել:

Հարցի լուծման կապակցությամբ դեռևս 2011 թվականին «Քվեարկությանը մասնակցելու դժվարություններ ունեցող ընտրողների համար քվեարկությունը մատչելի

[327] Տե՛ս ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի 2017 թվականի Հայաստանի նախնական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ

[328] ՀՀ ընտրական օրենսգրքում կիրառվող ձևակերպում:

դարձնելու նպատակով լրացուցիչ հնարավորություններ սահմանելու մասին» ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 30-ի թիվ 19-Ն որոշմամբ՝ տեսողության պատճառով քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող քաղաքացիների համար քվեարկությունը մատչելի դարձնելու նպատակով սահմանել է հատուկ ընթացակարգ: Ավելին, հաշվի առնելով, որ տեղամասային կենտրոնների տեղակայման շենքերի մեծ մասը հարմարեցված չեն շարժասայլակներով տեղաշարժվելու համար՝ շարժասայլակով տեղաշարժվող ընտրողների համար քվեարկությունը մատչելի դարձնելու նպատակով վերոնշյալ կարգով սահմանվում է, որ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, տեղեկանալով, որ տեղամասային կենտրոնի տեղակայման շենքի մոտ է գտնվում շարժասայլակով տեղաշարժվող ընտրող, տեղամասային կենտրոնում հայտարարում է այդ մասին, մոտենում է ընտրողին և նրան բացատրում որոշման համապատասխան քվեարկությանը մասնակցելու կարգը[329]: Այնուհանդերձ, վերոնշյալ դրույթների ձևակերպումը ենթադրում է նշված անձանց աջակցության տրամադրում միայն տեղամասային կենտրոններում, այնինչ ընտրական իրավունքի իրական երաշխավորման համար նրանց աջակցություն է հարկավոր տրամադրել նաև տեղամասային կենտրոններ հասնելու համար:

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից տրամադրված տեղեկությունների համաձայն՝ 2017 թվականի ընթացքում ՀՀ մարզերում ընտրատեղամասերը հաշմանդամություն ունեցող անձանց հարմարեցնելու կապակցությամբ իրականացվել են որոշ քայլեր: Մասնավորապես, ՀՀ Արագածոտնի մարզում կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրատեղամասերը տեղակայված են եղել շենք-շինությունների առաջին հարկերում: Իսկ ՀՀ Արարատի մարզի 154 ընտրական տեղամասերից 32-ում կառուցվել են թեքահարթակներ, իսկ մնացած տեղամասերում, անհրաժեշտության դեպքում, տեղադրվել են ժամանակավոր թեքահարթակներ: Մինչդեռ, ՀՀ Սյունիքի մարզում հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքն իրականացնելու ապահովման համար մշտապես հարմարեցված ընտրական տեղամասեր չկան, սակայն ՀՀ Սյունիքի մարզպետարանից նշում են, որ բոլոր ընտրությունների ժամանակ օրենքով սահմանված կարգով ապահովվել է ընտրություններին մասնակցելու ցանկություն հայտնած՝ հաշմանդամություն ունեցող անձանց լիարժեք մասնակցությունը ընտրական գործընթացին: Միևնույն ժամանակ, ըստ Նախարարության՝ Երևանի քաղաքի ավագանու ընտրությունների ժամանակ ընտրատեղամասերի գերակշռող մասը հարմարեցված է եղել հաշմանդամություն ունեցող անձանց համար, բացառությամբ այն ընտրատեղամասերի, որոնք տեխնիկապես հնարավոր չի եղել հարմարեցնել հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Այսպես, 2017 թվականի ապրիլին անցկացված խորհրդարանական ընտրությունների ընթացքում «Ունիսոն» հասարակական կազմակերպությունը դիտարկումներ է անցկացրել մայրաքաղաքի տարբեր վարչական շրջանների 67 ընտրատեղամասում, որից միայն 3-ն է եղել լիովին մատչելի, 42-ը՝ լրիվ անմատչելի: Ինչ վերաբերում է տեսողության ու լսողության խնդիրներ ունեցող ընտրողներին, կազմակերպությունը դիտարկել է նաև տեղամասերում ոսպնյակների առկայությունը, որը

[329] Տե՛ս http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=69693

նույնպես ձևական բնույթ է կրել. դրանք առկա են եղել մի քանի տեղամասում: Միևնույն ժամանակ, հարկ է նկատել, որ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի շենքը ևս հարմարեցված չէ հաշմանդամություն ունեցող անձանց համար[330]:

Պետք է նկատի ունենալ, որ հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքի գործնականում իրականացման նպատակով, բացի ողջամիտ տարածքի ապահովումից, պետք է ձեռնարկվեն այլ միջոցներ ևս՝ ապահովելու համար ընտրական իրավունքի ֆիզիկական, տեղեկատվական և հաղորդակցությունների մատչելիությունը: Բացի այդ, ոլորտի հասարակական կազմակերպությունները նշում են նաև, որ օրենսդրորեն պետք է լուծում տրվի նաև հաշմանդամություն ունեցող անձանց համար ընտրական հանձնաժողովներում ընդգրկվելու մեխանիզմների հարցին:

Ավելին, հաշմանդամություն ունեցող անձանց համար Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից մշակվել են տպագիր և աուդիո-տեսողական նյութեր, քվեարկության օրվա նոր ներդրված ընթացակարգերի վերաբերյալ տեղեկություններ: Սույնի վերաբերյալ, սակայն, հարկ է նշել ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը Հայաստանի խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ ներկայացրած իր հանձնարարականներում գնահատելով վերը նշվածը, այնուամենայնիվ նշել է, որ հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված նյութերը Հայաստանի հեռավոր վայրերում բավականաչափ հասանելի չեն եղել:[331]

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը սույնի վերաբերյալ հանդես է եկել հանձնարարականով առ այն, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն առաջիկայում ամեն ինչ անի, որպեսզի նմանատիպ կրթական նյութերն էլ ավելի հասանելի դառնան հաշմանդամություն ունեցող անձանց:

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք փաստել, որ հաշմանդամություն ունեցող անձինք բարդություններ են ունենում քաղաքական կյանքին ներգրավման հարցում:

Ուստի՝ առաջարկում ենք՝

1. քայլեր ձեռնարկել հաշմանդամություն ունեցող անձանց քաղաքական կյանքին մասնակցելու, այդ թվում՝ ընտրելու իրավունքի լիարժեք իրացման ուղղությամբ, ներառյալ տեղամասային կենտրոններ հասնելու, կենտրոններում ազատորեն տեղաշարժվելու և տեղեկատվություն ստանալու, ինչպես նաև այլ օրենսդրական կարգավորումների սահմանման միջոցով,

2. ՀՀ ընտրական օրենսգրքով և հարակից իրավական ակտերով կարգավորել հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական հանձնաժողովներում ընդգրկվելու մեխանիզմների հարցը:

12. Հաշմանդամություն ունեցող կանայք

Կոնվենցիայի համաձայն՝ մասնակից պետությունները, գիտակցելով, որ հաշմանդամություն ունեցող կանայք և աղջիկները ենթարկվում են խտրականության բազմաթիվ ձևերի, պարտավորվում են միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու մարդու բոլոր իրավունքներից և հիմնարար ազատություններից նրանց լիակատար և հավասար

---

330 https://www.panorama.am/am/news/2017/04/04/%D4%B1%D6%80%D5%B4%D5%A5%D5%B6-%D4%B1%D5%AC%D5%A1%D5%BE%D5%A5%D6%80%D5%A4%D5%B5%D5%A1%D5%B6/1755719

331 http://www.osce.org/odihr/328226?download=true, էջ 7:

օգտվելը: Այսինքն՝ հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների խնդիրները պետք է ենթարկվեն հատուկ ուսումնասիրության, և ըստ նրանց հատուկ կարիքների՝ պետք է ձեռնարկվեն առանձնահատուկ միջոցներ վերջիններիս իրավունքների իրացման հարցում: 2015 թվականից սկսած ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը բարձրաձայնել է հաշմանդամություն ունեցող կանանց հատուկ խնդիրների՝ կրկնակի խտրականության, վերարտադրողական ծառայությունների անմատչելիության մասին[332]: Նշված հարցերի հետ կապված մտահոգություն է հայտնել նաև Կոմիտեն[333]:

Մասնավորապես, Կոմիտեն մտահոգված է հաշմանդամություն ունեցող կանանց վերաբերյալ հատուկ անդրադարձի բացակայությամբ, հաշմանդամությանը և կանանց առնչվող ազգային օրենսդրությունում և քաղաքականություններում հաշմանդամություն, հատկապես՝ հոգեբանասոցիալական և (կամ) մտավոր, ունեցող կանանց համար հիմնական ծառայությունների մատչելիության և ողջամիտ հարմարեցումների բացակայությամբ, հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկներին գենդերային հիմքով բռնությունից, մասնավորապես՝ տանը և հաստատություններում, պաշտպանող օրենսդրության և համապատասխան կարգավորումների բացակայությամբ, ինչպես նաև զոհերի համար ապաստարանների և համապատասխան ծառայությունների բացակայությամբ[334]:

Ինչ վերաբերում է վերարտադրողական առողջությանը, ապա այստեղ խնդիրը թե՛ կրկին ֆիզիկական միջավայրի և տեղեկատվական նյութերի անմատչելիություն է, այնպես էլ բուժաշխատողների իրազեկման պակասը հաշմանդամություն ունեցող կանանց վերարտադրողական առողջության իրավունքի իրացման վերաբերյալ: Այն հարցին, թե 2017 թվականին ինչ քայլեր են ձեռնարկվել ՀՀ առողջապահության նախարարության կողմից վերարտադրողական բժշկական ծառայությունները հաշմանդամություն ունեցող կանանց համար մատչելի դարձնելու ուղղությամբ, ՀՀ առողջապահության նախարարությունից պատասխանել են, որ ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման մասին» թիվ 318-Ն որոշումը Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքացիների համար երաշխավորում է հղիության և ծննդաբերության հետ կապված ամբուլատոր-պոլիկլինիկական և ստացիոնար բուժօգնության բոլոր տեսակները: Միաժամանակ, ըստ ՀՀ առողջապահության նախարարության՝ կախված հաշմանդամության բնույթից բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելիս բժշկական կազմակերպությունները իրականացնում են հաշմանդամություն ունեցող անձի կարիքին ուղղված անհատականացված միջոցառումներ՝ ներգրավելով հարազատներին, խնամակալներին, ուղեկցող անձանց կամ այլ մասնագետների:

Չնայած վերոնշյալի՝ ՀԿ-ների կողմից տրամադրված տվյալները վկայում են խնդրի առկայության մասին: Այսպես, «Դիսբբիլիթի ինֆո» ՀԿ-ի կողմից տրամադրած տեղեկությունների համաձայն՝ 2017 թվականին հիմնանորոգումից հետո վերաբացված

---

[332] Նշված խնդիրների մասին մանրամասն ներկայացված է ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի «Սեռական և վերարտադրողական առողջության ծառայությունների հզորացում» ծրագրի և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հետ համագործակցությամբ իրականացված «Հայաստանում սեռական և վերարտադրողական առողջության իրավունքների իրացման վերաբերյալ հանրային հետազոտության» (Հետազոտություն) շրջանակներում

[333] ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի 2017 թվականի Հայաստանի նախնական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ

[334] http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRPD%2fC%2fARM%2fCO%2f1&Lang=en

Երևանի «Քանաքեռ-Զեյթուն» ծննդատանը իրականացված մոնիթորինգ-այցի ընթացքում պարզվել է, որ թեև շենքի մուտքը, վերելակը, սենյակները և կաբինետները հիմնականում հարմար են տեղաշարժման դժվարություն ունեցող անձանց համար, այնուամենայնիվ սենյակները չունեն հարմարեցված սանհանգույցներ: Սայլակ օգտագործող անձանց համար խոչընդոտ են հանդիսանում նաև փոքր շեմերը, ավտոմատ կառավարվող դռների բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք՝

1. ապահովել հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների համար կրթության, աշխատանքի, առողջապահական և այլ հիմնարար իրավունքների իրականացումը, այդ թվում՝ օրենսդրական կարգավորումներ նախատեսելու միջոցով,

2. համապատասխան միջոցառումների միջոցով բարձրացնել հասարակության և հաշմանդամություն ունեցող կանանց իրազեկվածությունը վերջիններիս իրավունքների վերաբերյալ,

3. իրականացնել իրազեկման աշխատանքներ բուժաշխատակիցների և բժշկական ծառայություններ մատուցող հաստատությունների այլ աշխատակիցների շրջանում՝ հաշմանդամություն ունեցող կանանց վերարտադրողական առողջության պահպանման առանձնահատկությունների վերաբերյալ:

13. Օրենսդրական թերի կարգավորումների հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների և արդար դատաքննության իրավունքների սահմանափակումը

Դեռևս 2014 թվականից Պաշտպանի տարեկան զեկույցներում և հաղորդմամբ բարձրաձայնել է օրենսդրական բացթողումների պատճառով հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց սահմանադրորեն ամրագրված՝ դատական պաշտպանության իրավունքի լիարժեք պաշտպանված չլինելու խնդիրը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 171-րդ հոդվածի համաձայն՝ անձի գործունակության հարցը քննելիս քաղաքացին կարող է կանչվել դատական նիստի, եթե դա թույլ է տալիս նրա առողջական վիճակը: Վերոգրյալից հետևում է, որ անձի դատաքննության մասնակցության հարցը լուծվում է դատարանի հայեցողությամբ: Ավելին, «առողջական վիճակը թույլ է տալիս» դրույթի բովանդակության բացահայտված չլինելու արդյունքում այն հանգեցնում է տարատեսակ մեկնաբանությունների, ուստի գործնականում անձի համար դատարանի մատչելիության սահմանափակման: Արդյունքում, անհամաչափորեն սահմանափակվում են անձի արդար դատաքննության իրավունքը, ինչպես նաև դատավարության կողմերի հավասարության և մրցակցային դատավարության հիմնարար սկզբունքները: Միևնույն ժամանակ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի համաձայն՝ անձի գործունակության վերականգնման հարցով դատարան իրավունք ունեն դիմել միայն անձի խնամակալը, ընտանիքի անդամը կամ հոգեբուժական հաստատության տնօրինությունը: Տվյալ կարգավորման արդյունքում ստացվում է, որ դատարանի վճռով անգործունակ ճանաչված անձը չի կարող անձամբ կամ իր կողմից ընտրված ներկայացուցչի միջոցով դիմում ներկայացնել դատարան՝ իր գործունակությունը վերականգնելու հարցով:

Հաշվի առնելով քննարկվող խնդրի կարևորությունը՝ Պաշտպանը 2014 թվականին դիմում է ներկայացրել ՀՀ սահմանադրական դատարան՝ վիճարկելով խնդրահարույց դրույթների սահմանադրականությունը: Արդյունքում, ՀՀ սահմանադրական դատարանը 2015 թվականի ապրիլի 7-ին կայացրել է թիվ ՍԴՈ-1197 որոշումը, որի համաձայն՝ դատական պաշտպանության, դատարանի մատչելիության, ներառյալ դատական ակտերը բողոքարկելու՝ անձի իրավունքները պետք է հավասարապես վերաբերելի լինեն նաև այն անձանց, ում գործունակության հարցը քննվում է դատարանում: Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է նաև, որ դիտարկվող հիմնահարցերի առնչությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում առկա է իրավակարգավորման բաց, ինչը համակարգային լուծում է պահանջում և կարող է հաղթահարվել միայն ՀՀ ազգային ժողովի կողմից՝ օրենսդրական համարժեք փոփոխություններ կատարելու միջոցով[335]: Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանը անդրադարձել է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում կիրառվող «գործունակություն», «անգործունակություն» և «սահմանափակ գործունակություն» հասկացություններին:

Միաժամանակ, 2017 թվականին հանրային քննարկման է ներկայացվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նախագիծը, որտեղ կարգավորել են վերոնշյալ խնդիրները: Նախագիծն ընդունվել է 2018 թվականին:

14. Հաշմանդամության սահմանման ոլորտում առկա խնդիրներ

Մարդը հաշմանդամություն ունեցող անձի կարգավիճակ է ձեռք բերում բժշկասոցիալական փորձաքննության արդյունքում այդպիսին ճանաչվելով: Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների քննությունը ցույց է տալիս, որ դեռևս առկա են խնդիրներ անձանց հաշմանդամության կարգավիճակը ստանալու հարցում:

Բողոքների քննարկման շրջանակներում Պաշտպանի առաջարկի հիման վրա նշանակվել են կրկնակի կամ հանձնաժողովի ընդլայնված կազմով բժշկասոցիալական փորձաքննություններ, սակայն այդ փորձաքննությունների արդյունքում կայացված որոշումները թողնվել են անփոփոխ: Առանձին դեպքերում էլ փորձաքննություններ չեն նշանակվել՝ պատճառաբանությամբ, թե դրանց իրականացումը նպատակահարմար չէ:

Դիմողների բողոքների հիմնական էությունն այն է, որ հանձնաժողովի ընդլայնված կազմով բժշկասոցիալական փորձաքննությունների ընթացքում օբյեկտիվ զննություն չի իրականացվում կամ դրանց իրականում մասնակից չեն դառնում առողջապահության նախարարության բժիշկ մասնագետներ: Այսինքն՝ փորձաքննությունները կրկին կատարում են բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող այն մասնագետները, որոնց դեմ ուղղված են բողոքները:

Հարցն այն է, որ բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովների կողմից հաշմանդամության խմբի սահմանման համար կիրառվող ՀՀ կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի «Բժշկասոցիալական փորձաքննության չափորոշիչները հաստատելու մասին» թիվ 780-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչներն ունեն ընդհանուր ձևակերպում: Դա իր հերթին լայն հայեցողության հնարավորություն է

[335] ՀՀ սահմանադրական դատարանի 2015 թվականի ապրիլի 7-ի թիվ ՍԴՈ-1197 որոշում, կետ 9:

ստեղծում հանձնաժողովի անդամների համար որոշում կայացնելիս: Ավելին, հանգեցնում է նաև երկակի ստանդարտների:

Բարձրացված խնդրի կապակցությամբ հատկանշական է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած դիրքորոշումն այն մասին, որ օրենքի կանխատեսելիության, որոշակիության և հստակության սկզբունքի երաշխավորումը, ի թիվս այլոց՝ կոչված է նաև կանխելու, բացառելու «կամայականության վտանգը»[336]:

Եվրոպական դատարանի այս դիրքորոշման լույսի ներքո վերլուծելով նշված որոշմամբ սահմանված չափորոշիչները՝ պետք է արձանագրել, որ նման ընդհանրական բնույթի չափորոշիչների առկայությունը գործնականում հանգեցնում է միևնույն իրավիճակներում մարդկանց նկատմամբ տարբերակված մոտեցումների: Սա իր հերթին հանգեցնում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով սահմանված կամայականության արգելքի սկզբունքի խախտման:

Այնուամենայնիվ, գործնականում արձանագրվել են մի շարք դեպքեր, երբ Պաշտպանի առաջարկությամբ ընդլայնված կազմով իրականացված վերափորձաքննության արդյունքում հաշմանդամության 3-րդ խումբը փոխվել է 2-րդի: Մեկ այլ դեպքում վերափորձաքննության արդյունքում տարիներ շարունակ քաղաքացուն սահմանված հաշմանդամության 2-րդ խումբը փոխվել է հաշմանդամության 3-րդ խմբի՝ մեկ տարի ժամկետով: Պաշտպանի աջակցությամբ վերափորձաքննության արդյունքում սահմանվել է հաշմանդամության երրորդ խումբ՝ անժամկետ:

ՀՀ կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի «Բժշկասոցիալական փորձաքննության չափորոշիչները հաստատելու մասին» թիվ 780-Ն որոշման հավելված 1-ի 31-րդ կետի «գ» ենթակետի համաձայն՝ հաշմանդամության խումբը սահմանվում է անժամկետ՝ իրականացված վերականգնողական միջոցառումների անարդյունավետության դեպքում, որը բերում է հաշմանդամի մշտական սոցիալական պաշտպանության անհրաժեշտության (առնվազն 7 տարվա ընթացքում բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինների դիտման պայմաններում):

Պաշտպանին հասցեագրվել են նաև բողոքներ այն մասին, որ վերանայվել են սահմանված անժամկետ հաշմանդամությունը և բժշկասոցիալական վերափորձաքննության արդյունքում հաշմանդամ չեն ճանաչվել: Եղել են դեպքեր, երբ տարիներ շարունակ սահմանված հաշմանդամությունը վերացվել է այն դեպքում, երբ տվյալ տարին հաշմանդամություն սահմանելու պարագայում հաշմանդամությունը կսահմանվեր այլևս անժամկետ:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պարզաբանմամբ՝ Բժշկասոցիալական փորձաքննության գործակալության վերափորձաքննության բաժնում իրականացվել է ԲՍՓ գործի ուսումնասիրությունը, որի արդյունքում աշխատանքային խումբը պարզել է, որ քաղաքացին վերափորձաքննվել է 2008 թվականին, որի արդյունքում նրան սահմանել է հաշմանդամության առաջին խումբ, անժամկետ, «ընդհանուր հիվանդություն» պատճառական կապով: Քաղաքացու իմունիտետի ֆունկցիայի խիստ արտահայտված խանգարումը հանգեցրել է ինքնուրույն տեղաշարժվելու,

[336] Տե՛ս Հիլդա Հաֆստեյնսդոտիրն ընդդեմ Իսլանդիայի (Hilda Hafsteinsdottir v. Iceland) գործով 2004 թվականի հունիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 40905/98, կետ 56:

աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողությունների երրորդ և ինքնասպասարկման ապահովման ունակության երկրորդ աստիճանների կենսագործունեության սահմանափակումների, որոնք էլ հիմք են հանդիսացել սահմանելու հաշմանդամության առաջին խումբ, անժամկետ: Նախարարության աուդիտի ստուգումների արդյունքում ներկայացվել է տեղեկանք, որ, ըստ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի տվյալների՝ 2007թ. մինչ օրս քաղաքացին աշխատում է վաճառողուհի:

Ըստ նախարարության՝ փորձագիտական եզրակացությամբ նշված է, որ ԲՍՓ գործի ուսումնասիրությամբ պարզվել է, որ քաղաքացու հաշմանդամության առաջին խմբի սահմանումը հիմնավորված չէ, գործում առկա բժշկական փաստաթղթերի տվյալներով իմունիտետի ֆունկցիայի խիստ արտահայտված խանգարումը հիմնավորված չէ, բացակայում են իմունիտետի ֆունկցիայի խանգարումը հավաստող կլինիկական և բիոքիմիական քննության տվյալները, հանձնաժողովի ներկայացրած ախտորոշումը, կենսագործունեության սահմանափակումները չեն համապատասխանում գործող չափորոշիչներին: ՀՀ ԲՍՓ գործակալության պետի հանձնարարականի համաձայն՝ վերափորձաքննության բաժնում իրականացվել է հսկողական կարգով վերափորձաքննությունը, արդյունքում հաշմանդամություն չի սահմանվել:

Փաստորեն ստացվում է, որ պատասխանատու մարմինը ժամանակին չի ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելու անհրաժեշտ հանգամանքները, ինչի արդյունքում էլ քաղաքացին տարիներ շարունակ 1-ին խմբի անժամկետ հաշմանդամ է ճանաչվել սոցիալական պաշտպանության անհրաժեշտությամբ չպայմանավորված:

Հաշմանդամության խմբի սահմանումը որոշակի առանձնահատկություններ ունի այն դեպքում, երբ կենսագործունեության սահմանափակումներ ունեցող անձը ՀՀ քաղաքացի չէ, սակայն հաշվառված է Հայաստանի Հանրապետությունում, իսկ բժշկասոցիալական փորձաքննություն անցնելու համար անհրաժեշտ համապատասխան միջպետական պայմանագիր Հայաստանի Հանրապետությունը դեռ չունի տվյալ պետության հետ, և այս փաստով պայմանավորված՝ նոր խոչընդոտներ են առաջանում նրա նկատմամբ հաշմանդամության այս կամ այն խումբը սահմանելու հարցում:

Օրինակ, Պաշտպանին բողոք է հասցեագրվել այն մասին, որ Վրաստանի քաղաքացին 2016 թվականից հաշվառված է Հայաստանի Հանրապետությունում (քրեակատարողական հիմնարկի հասցեով): 2015 թվականին ԲՍՓՀ առաջնակի փորձաքննությամբ մեկ տարի ժամկետով ճանաչվել է երկրորդ խմբի հաշմանդամ: Հաշմանդամության ժամկետ է սահմանվել 2016 թվականի օգոստոս ամիսը, իսկ բժշկասոցիալական վերափորձաքննության՝ 2016 թվականի հուլիս ամիսը, որն այդպես էլ չի իրականացվել ՀՀ քաղաքացի չհանդիսանալու հիմնավորմամբ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պարզաբանմամբ՝ կալանավորված անձն օտարերկրացի է, իսկ համաձայն «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետությունում օտարերկրացիներն ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին հավասար իրավունքներ, ազատություններ և պարտականություններ, եթե Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

ՀՀ Սահմանադրությամբ այլ կարգավորում վերոգրյալի վերաբերյալ նախատեսված չէ: «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ «Սույն օրենքով Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար նախատեսված իրավունքներն ու ազատությունները տարածվում են նաև օրենսդրությամբ սահմանված կարգով փախստականի կարգավիճակ ունեցող անձանց վրա»: Ըստ ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 2-ի թիվ 276-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի՝ օտարերկրյա պետության քաղաքացիները Հայաստանի Հանրապետությունում կարող են անցնել բժշկասոցիալական փորձաքննություն, եթե տվյալ պետության հետ Հայաստանի Հանրապետությունն ունի համապատասխան միջպետական պայմանագիր:

Քաղաքացին փախստական չէ, այլ Վրաստանի քաղաքացի, Հայաստանի Հանրապետությունը չունի Վրաստանի հետ սոցիալական պաշտպանության (բժշկասոցիալական փորձաքննության) ոլորտում կնքված միջպետական պայմանագիր: Ելնելով վերոգրյալից՝ հոգեբուժական մասնագիտացված ԲՍՓ հանձնաժողովին ուղղված՝ քրեակատարողական հիմնարկի պետի միջնորդագիրը վերջինիս վերաբերյալ, հետ է վերադարձվել, քանի որ նա Հայաստանի Հանրապետությունում չի կարող ենթարկվել բժշկասոցիալական փորձաքննության:

Այսպիսով, անձի մոտ փաստացի առկա են կենսագործունեության որոշակի սահմանափակումներ: Մինչդեռ վկայակոչված հանգամանքների ուժով՝ նրա նկատմամբ հաշմանդամության խումբ չի կարող սահմանվել: Ստեղծված իրավիճակում երկկողմ միջազգային պայմանագրի բացակայության պատճառով քաղաքացին չի կարողանում օգտվել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է՝

1. բացահայտել ԲՍՓ ոլորտում կոռուպցիայի դեպքերը, համակարգից հեռացնել ոլորտում չարաշահումներ թույլ տված կամ չարաշահումների հետ որևէ առնչություն ունեցած ԲՍՓ գործակալության մասնագետներին,

2. կնքել Վրաստանի հետ սոցիալական պաշտպանության (բժշկասոցիալական փորձաքննության) ոլորտում համապատասխան միջպետական պայմանագիր Հայաստանում հաշվառված, սակայն Վրաստանի քաղաքացիություն ունեցող անձանց սոցիալական ապահովության իրավունքի լիարժեք իրացման համար:

ԳԼՈՒԽ 3. ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Տարեկան գործունեության ընդհանուր ուղղությունները

Երեխաները յուրաքանչյուր հասարակության և պետության ապագան են, ուստի պետք է գտնվեն հատուկ և մշտական ուշադրության ներքո՝ առանցքում ունենալով ընտանիքում ապրելու և մեծանալու երեխայի կարևորագույն իրավունքը: Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված ջանքերը ենթադրում են պետական և հասարակական մասնագիտացված կազմակերպությունների, ինչպես նաև առանձին փորձագետների հետ համագործակցված և դրանով պայմանավորված՝ արդյունավետ աշխատանք:

Երեխայի իրավունքների պաշտպանությունը կազմում է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության առանցքներից մեկը: Այս փաստն արձանագրում ստացավ նաև սահմանադրական օրենքի մակարդակով: Այսպես, 2017 թվականի փետրվարի 2-ին ուժի մեջ է մտել «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքը, որի 2-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն Մարդու իրավունքների պաշտպանն իրականացնում է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 1989 թվականի նոյեմբերի 20-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում, ինչպես նաև երեխաների իրավունքների խախտումների կանխարգելում և պաշտպանություն:

Առաջին անգամ, սահմանադրական օրենքի մակարդակով ամրագրվել է, որ Պաշտպանն իրավասու է իրականացնել պարբերական, ինչպես նաև ըստ անհրաժեշտության անարգել այցեր երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ, ինչպես նաև հանրակրթական ուսումնական հաստատություններ, հանդես գալ երեխայի իրավունքներին առնչվող հատուկ հրապարակային զեկույցներով և իրավասու մարմիններ ներկայացնել երեխաների իրավունքներին վերաբերող իրավական ակտերի կամ դրանց նախագծերի կամ պրակտիկայի կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ («Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենք, հոդված 30):

Աշխատակազմի մասնագետները մշակել են նաև երեխաների իրավունքների ոլորտին առնչվող իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ օրենսդրական առաջարկներ (օրինակ՝ «Երեխայի իրավունքների մասին» օրենքի նախագիծ), կազմակերպել են վերապատրաստման դասընթացներ երեխաների իրավունքների վերաբերյալ, ինչպես նաև մասնակցել միջազգային կազմակերպությունների աշխատանքներին:

2017 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմը երեխաների իրավունքների վերաբերյալ ստացել է շուրջ 220 գրավոր և բանավոր դիմում-բողոք, որոնց ճնշող մեծամասնությունը կապված է եղել Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների (ԽՀՀ) գործունեությանը, ինչպես նաև երեխաների առողջության պահպանման, ծնողի հետ շփվելու, կրթություն ստանալու իրավունքներին:

Հաշվի առնելով դիմում-բողոքներում բարձրացված խնդիրները և երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի առկա մարտահրավերները՝ ՀՀ մարդու

իրավունքների պաշտպանի աշխատակազմում 2017 թվականին հրապարակվել են արտահերթ զեկույցներ և իրավական վերլուծություն:

Մասնավորապես, հրապարակվել է «Խնամակալության և հոգաբարձության մարմինների ու խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների վերաբերյալ» վերտառությամբ արտահերթ հրապարակային զեկույց[337]: Տվյալ զեկույցի նպատակն է եղել պարզել Խնամակալության և հոգաբարձության մարմինների և դրանց կից հանձնաժողովների գործունեության ընթացքում առաջացող խնդիրները, ոլորտը կարգավորող իրավական ակտերում առկա բացերը և հակասությունները, ինչպես նաև համապատասխան առաջարկությունների ներկայացումը:

Հրապարակվել է նաև իրավական վերլուծություն՝ «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության ուղենիշները երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում» խորագրով[338], որի կազմման ընթացքում խմբային ֆոկուսացված քննարկման մեթոդի կիրառմամբ երեխաների հետ քննարկվել են իրենց՝ լսված լինելու, բողոքարկելու իրավունքների իրացման, մասնագտական խորհրդատվություն ստանալու հնարավոր և իրենց համար առավել մատչելի, ցանկալի մեխանիզմները, ինչպես նաև անդրադարձ է կատարվել տվյալ ոլորտում առկա միջազգային փորձին:

Պաշտպանի աշխատակազմում կազմվել է նաև ՀՀ-ի կողմից «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման մասին դիտարկումների վերաբերյալ զեկույց[339]: Նշված զեկույցը կազմվել է Երեխայի իրավունքների կոմիտեի ամփոփիչ դիտարկումների ձևաչափով՝ ըստ «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի մի խումբ հոդվածներ ընդգրկող թեմատիկ ուղղությունների: Զեկույցում արտացոլված է 2013-2017 թվականների ընթացքում Հայաստանին ուղղված Կոմիտեի դիտարկումների կապակցությամբ ձեռնարկված քայլերը, երեխաների իրավունքների պաշտպանության աստիճանը, ինչպես նաև ներկայացվել են առաջարկներ ուղղված Կոմիտեի դիտարկումների լիարժեք կատարմանը:

Վերը նշվածի հետ մեկտեղ, հաստատություններում երեխաների իրավունքների պաշտպանվածության իրավիճակին ծանոթանալու, նրանց խնամքի պայմանները ուսումնասիրելու և հնարավոր խախտումների դեպքում դրանց վերացմանը նպաստելու նպատակով 2017 թվականին Պաշտպանի աշխատակազմի մասնագետները կատարել են մշտադիտարկման այցեր երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ:

Գիտաժողովներ, դասընթացներ, հանդիպումներ

2017 թվականի ընթացքում Պաշտպանը մասնակցել է Երեխաների օմբուդսմենների եվրոպական ցանցի աշխատանքներին: Երեխաների օմբուդսմենների եվրոպական ցանցը միավորում է 42 անկախ անդամների, որի նպատակն է խրախուսել երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի լիարժեք իրականացումը, տեղեկատվության և

[337] http://children.ombuds.am/%D5%A1%D6%80%D5%BF%D5%A1%D5%B0%D5%A5%D6%80%D5%A9-%D5%A6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81%D5%B6%D5%A5%D6%80/

[338] http://children.ombuds.am/%D5%AB%D6%80%D5%A1%D5%BE%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%BE%D5%A5%D6%80%D5%AC%D5%B8%D6%82%D5%AE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/

[339] Նախատեսվում է զեույցը հրապարակել 2018 թվականի ապրիլին :

լավագույն փորձի փոխանակումը, երեխաների իրավունքների քարոզումը և այլն[340]: Պաշտպանի աշխատակազմի Երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի ղեկավարն ընտրվել է Երեխայի իրավունքների կոմիտեի բյուրոի անդամ: Հարկ է նշել, որ Կոմիտեն ստեղծվել է Եվրոպայի Խորհրդի նախարարական կոմիտեի կողմից, որի նպատակներից է Եվրոպայի խորհրդի Երեխաների իրավունքների ռազմավարության[341] (2016-2021թթ) իրականացման վերահսկողությունը, «Երեխաների իրավունքների կոնվենցիայի» ՄԱԿ-ի և Եվրոպայի Խորհրդի երեխաներին վերաբերվող ստանդարտների իրականացման նպատակով ԵԽ անդամ երկրներին աջակցելը, որպեսզի վերջիններս մշակեն օրենքներ, քաղաքականություն, իրազեկվածությունը բարձրացնող նյութեր և այլն, ինչպես նաև ԵԽ նախարարներին և ԵԽ գլխավոր քարտուղարին խորհրդատվության տրամադրումը և այլ:

Երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի կողմից աշխատանքներ են տարվել երեխաների՝ իրենց իրավունքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացման ուղղությամբ: 2017 թվականի ընթացքում Երևանից և տարբեր մարզերից Պաշտպանի աշխատակազմ են այցելել շուրջ 500 երեխա: Երեխաները ծանոթացել են իրենց իրավունքներին, Պաշտպանի՝ երեխաներին նվիրված էլեկտրոնային կայքին[342],Պաշտպանին առցանց դիմում ուղարկելու և առցանց խորհրդատվություն ստանալու հնարավորություններին և աշխատակազմի գործունեությանը:

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հետ համագործակցության շրջանակներում 2017 թվականին Պաշտպանի աշխատակազմը կազմակերպել է դասընթացներ աշխատակազմի ներկայացուցիչների, ինչպես նաև երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտի մասնագետների համար: Դասընթացների շրջանակներում ներկայացվել են երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում «երեխայի լավագույն շահի» ապահովման ուղղությունները, երեխայի իրավունքների մշտադիտարկման մեթոդաբանությունը, սկզբունքներն ու գործիքները, երեխաների հետ հարցազրույցների անցկացման մեթոդները և տեխնիկան: Կազմակերպվել է նաև կլոր-սեղան քննարկում լրագրողների հետ «Զանգվածային լրատվության միջոցները և երեխաները» թեմայով:

Հատկանշական է նաև, որ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի համագործակցության արդյունքում 2017 թվականին Երևանում տեղի է ունեցել «Ընտանիքում ապրելու երեխայի իրավունքը» թեմայով միջազգային երկօրյա խորհրդաժողովը[343], որին մասնակցել են Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի ավելի քան տասը երկրների՝ մարդու և հատկապես երեխայի իրավունքների ոլորտի պատասխանատուներ, օմբուդսմաններ (օրինակ՝ Բոսնիա և Հերցեգովինայի, Լատվիայի, Լիտվայի, Մալթայի, Խորվաթիայի), պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, օրենսդիր իշխանության մարմինների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ և գիտական գործունեություն իրականացնող անձինք, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ (օրինակ՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, Եվրոպայի խորհուրդ, Վորլդ Վիժն):

---

[340] http://enoc.eu/
[341] https://rm.coe.int/168066cff8

[343] http://www.ombuds.am/media/mijazgayin-hamajoghov.html

Խորհրդաժողովի քննարկման թեմայի ընտրությունը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ Հայաստանի մանկատներում և խնամքի հատուկ հաստատություններում ապրող երեխաների մեծամասնությունն այնտեղ է հայտնվել հաշմանդամության, աղքատության և այլ գործոնների հետևանքով, որոնք դժվարացնում են ընտանիքներում երեխայի խնամքը: Բացի այդ, հիմնախնդրի արդիականությունը պայմանավորված էր նրանով, որ 2014 թվականից Հայաստանի կառավարությունը նախաձեռնել է նման տիպի հաստատությունների բեռնաթափման նոր գործընթաց:

Խորհրդաժողովի հիմնական նպատակներից է եղել քննարկել Հայաստանում երեխայի խնամքի համակարգի բարեփոխման (շուրջօրյա խնամքի խոշոր հաստատությունների ձևափոխում և համայնքահեն ու ընտանիքահեն ծառայությունների ցանցի ստեղծում) առաջընթացը, ընտանիքում ապրելու երեխայի իրավունքի ապահովմանն առնչվող փորձի փոխանակումը, Մարդու իրավունքների պաշտպանների կողմից ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ լավագույն փորձի ներկայացումը՝ ուղղված երեխայի շուրջօրյա խնամքի հաստատությունների ձևափոխման և իրենց կենսաբանական ընտանիքների հետ երեխաների վերամիավորման գործընթացի մշտադիտարկմանը, հաստատություններում ապրող, հատկապես հաշմանդամություն ունեցող երեխաների խնդիրների շուրջ իրազեկվածության մակարդակի բարձրացման գործողությունների համաձայնեցումը, և այլն:

Խորհրդաժողովի ընթացքում մասնակիցներն այցելել են Խարբերդի մասնագիտացված մանկատուն, Աջափնյակի ցերեկային խնամքի կենտրոն, Երեխաների աջակցության կենտրոն հիմնադրամ՝ տեղում ծանոթանալու երեխաների խնամքի պայմաններին և ցերեկային ու աջակցության կենտրոնների գործունեությանը:

1. Երեխաների աղքատության հիմնախնդիրը

Երեխաների իրավունքների պաշտպանությանը վերաբերող կարևոր խնդիրներից է երեխաների աղքատությունը, որի մասին Պաշտպանի կողմից նշվել է նաև 2016 թվականի տարեկան հաղորդմամբ:

Երեխայի պատշաճ կենսամարդակի ապահովումը կարևոր երաշխիք է երեխայի մյուս բոլոր իրավունքների պաշտպանությունն ապահովելու համար: Ուստի, թե՛ ներպետական և թե՛ միջազգային իրավական ակտերով կարևորվում է երեխայի սոցիալական ապահովության իրավունքը: Այսպես, ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածով ամրագրված պետության քաղաքականության հիմնական խնդիրներից է երեխաների անհատականության լիակատար և բազմակողմանի զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծումը: ՀՀ Սահմանադրության 83-րդ հոդվածով սահմանվում է յուրաքանչյուրի սոցիալական ապահովության իրավունքը: Միաժամանակ, «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքով սահմանված է երեխայի սոցիալական ապահովության իրավունքը, իսկ «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 26-րդ հոդվածի համաձայն՝ երեխան իրավունք ունի օգտվելու սոցիալական ապահովությունից (ներառյալ՝ սոցիալական ապահովագրությունից), և պետությունը պետք է միջոցներ ձեռնարկի այդ իրավունքի լիակատար իրականացմանը հասնելու համար՝ համաձայն իր ազգային օրենսդրության:

Հատկանշական է, որ կոնվենցիայով ամրագրված է նաև երեխայի անհրաժեշտ կենսամակարդակի իրավունքը: Կոնվենցիան վավերացրած բոլոր երկրներն ընդունել են, որ յուրաքանչյուր երեխա իր ֆիզիկական, մտավոր, հոգևոր, բարոյական և սոցիալական զարգացման համար անհրաժեշտ կենսամակարդակի իրավունք ունի: Երեխայի անհրաժեշտ կենսամակարդակ ունենալու իրավունքի իրացման գործում կարևոր դեր ունի պետությունը: Կոնվենցիայի 27-րդ հոդվածով ամրագրված է, որ պետությունը պետք է ծնողներին և երեխային դաստիարակող այլ անձանց օգնություն ցույց տա և հարկ եղած դեպքում ցուցաբերի նյութական աջակցություն ու սատարում հատկապես՝ սննդով, հագուստով և բնակարանով ապահովելու ծրագրերով: Երեխայի անհրաժեշտ կենսապայմաններ ունենալու իրավունքը ամրագրված է նաև «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով:

Այսպիսով, թեև ՀՀ-ում առկա են երեխաների կենսամակարդակի պատշաճ ապահովմանը նպաստող իրավական կարգավորումներ, այնուամենայնիվ, երեխաների աղքատության վերաբերյալ առկա տվյալները վկայում են, որ խնդիրը շարունակում է մնալ երեխաների իրավունքների պաշտպանության լրջագույն մարտահրավերներից մեկը:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» 2016 թվականի վիճակագրական վերլուծական զեկույցի տվյալների համաձայն՝ Հայաստանում երեխաների 2.5 տոկոսը 2015 թվականին ապրել է ծայրահեղ աղքատության, իսկ 33.7 տոկոսը՝ աղքատության մեջ[344]:

Միաժամանակ 2017 թվականին հրապարակված ՀՀ ազգային վիճակագրական ծառայության համապատասխան զեկույցը ցույց է տալիս, որ իրավիճակը զգալի առաջընթաց չի ապրել: Այսպես, ըստ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» 2017 թվականի զեկույցի[345]՝ 2016թ-ին երեխաների 2%-ն ապրում է ծայրահեղ աղքատության, իսկ 34.2%-ն՝ աղքատության մեջ: Ծայրահեղ աղքատ և աղքատ է հանրապետության չափահաս բնակչության համապատասխանաբար՝ 1.8 և 29.4%-ը: Ներկայացված պաշտոնական տվյալները վկայում են, որ երեխաներն ավելի խոցելի են և՛ ընդհանուր, և՛ ծայրահեղ աղքատության ռիսկի նկատմամբ, քան ամբողջ բնակչությունը:

Վերոնշյալ զեկույցի համաձայն՝ 2016 թվականին երեխաներ ունեցող տնային տնտեսությունների 24.0%-ը ստացել է ընտանեկան նպաստ, այդ թվում՝ ընտանեկան նպաստ ստացել է աղքատ տնային տնտեսությունների 34.7%-ը, ծայրահեղ աղքատների՝ 50.3%-ը և ոչ աղքատների՝ 18.5%-ը: 2016 թվականի տվյալները ցույց են տալիս մանկական աղքատության տարբերություններն ըստ սեռի. աղքատ է աղջիկների 36.1 և տղաների՝ 32.4%-ը (բոլոր երեխաների 34.2%-ը)[346]:

Պաշտոնական տվյալները վկայում են, որ ծայրահեղ աղքատության մեջ ապրող երեխաները թիվը նվազել է, սակայն, աճել է աղքատության մեջ ապրող երեխաների թիվը: Այսպես, աղքատ տնային տնտեսություններից, որտեղ ապրում են երեխաները, 65.3

---

[344] ՀՀ ԱՎԾ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» 2016 թվական, Վիճակագրական վերլուծական զեկույց, http://www.armstat.am/am/?nid=80&id=1819

[345] ՀՀ ԱՎԾ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» 2016 թվական, Վիճակագրական վերլուծական զեկույց, http://www.armstat.am/am/?nid=82&id=1988

[346] ՀՀ ԱՎԾ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» 2016 թվական, Վիճակագրական վերլուծական զեկույց, Գլուխ 5 «Մանկական աղքատությունը» http://www.armstat.am/file/article/poverty_2017_a_2.pdf

տոկոսն ընգրկված չեն ընտանեկան նպաստի համակարգում, իսկ ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունների՝ 40.7%-ը: Համակարգում չընդգրկվելու պատճառները տարբեր են եղել: Այսպես «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» կազմակերպության կողմից արված՝ «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» բյուջետային ծրագրի գնահատման[347] մեջ նշված է, որ ընտանեկան նպաստի համակարգում տնային տնտեսությունների չհաշվառման հիմնական պատճառն այն է, որ ընտանիքների շուրջ 51%-ն իրեն աղքատ չի համարել և չի դիմել նպաստ ստանալու համար: Մինչդեռ, չհաշվառվածների 6.7%-ը նպաստ ստանալու համար չի դիմել, քանի որ կարծել է, որ չի հանդիսանում համակարգի շահառու: Չհաշվառվածների 9 %-ը դեպքում էլ, պատճառը եղել է տեղեկացվածության բացակայությունը: Գնահատման համաձայն՝ ընտանեկան համակարգում չհաշվառվածների 5.8 %-ը չի դիմել համակարգում ընգրկվելու համար, քանի որ համարել է, որ համակարգում ընգրկելու «ընտրությունն արդար չէ»: Գնահատմամբ նշվում է նաև, որ համակարգում հաշվառված չլինելու պատճառներից է նաև, պահանջվող փաստաթղթերի և տեղեկանքների ձեռքբերման գործընթացի դժվարությունները (3.4%):

Այսինքն իրենց իրավունքների մասին իրազեկման պակասը խոչընդոտել է մի շարք դեպքերում սոցիալական աջակցության ծրագրերից օգտվելուն: Ավելին, 2016 թվականին ՀՀ-ում իրականացվել է մանկական բազմաչափ աղքատության գնահատումը, որով ցույց է տրվել, որ մանկական աղքատությունն ունի տարաբնույթ դրսևորումներ: Համաձայն այդ գնահատման՝ ՀՀ-ում երեխաների գրեթե կեսը խոցելի է կոմունալ ծառայությունների, բնակարանային պայմանների[348] և ժամանցային հնարավորությունների տեսանկյունից[349]:

ՀՀ-ում երեխաների աղքատությանը դեռևս 2013 թվականի ՀՀ-ի վերաբերյալ իր ամփոփիչ դիտարկումներում[350] անդրադարձել է նաև Երեխայի իրավունքների կոմիտեն՝ նշելով, որ պետք է շարունակել պայքարն աղքատության դեմ՝ ապահովելով նպաստների համակարգերի մեջ բոլոր խոցելի ընտանիքների ընդգրկումը՝ ապահովելով պետական օժանդակության հասանելիությունը նրանց համար, և բարձրացնելով առկա նպաստների մասին իրազեկվածությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը, անհրաժեշտ է իրազեկման բարձրացման արշավների միջոցով բարձրացնել բնակչության իրազեկվածությունը գործող սոցիալական աջակցության ծրագրերի վերաբերյալ:

2. Հաշմանդամություն ունեցող երեխաների ընտանիքում ապրելու իրավունքը

«Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան մասնակից երկրներից պահանջում է ապահովել, որ երեխաները չբաժանվեն ծնողներից, իսկ բաժանումը լինի այն դեպքերում, եթե դա բխում է երեխայի լավագույն շահից: ՀՀ ընտանեկան օրենսգիրքը և «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը (հոդվածներ 12, 13) նույնպես պաշտպանում

[347] Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ բյուջետային ծրագրի գնահատում, «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն», 2016
http://www.edrc.am/images/Publications/Analytical_Papers/2016_fbp_evaluation_arm.pdf

[348] Բնակարանային պայմանները սահմանվում են որպես բնակելի տարածքի գերբնակեցում և բնակարանային խնդիրների առկայություն:

[349] http://www.un.am/up/library/Child_poverty_Armenia_N-MODA_Report_2016_arm.pdf

[350] http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf

են ընտանիքում ապրելու երեխայի իրավունքը, ինչպես նաև ամրագրում պետության պարտականությունը՝ աջակցելու այդ իրավունքի իրականացմանը: Սակայն դեռևս կան բազմաթիվ երեխաներ, ովքեր խնամվում են հաստատություններում՝ չունենալով ընտանիքում ապրելու և դաստիարակվելու իրենց իրավունքն իրացնելու հնարավորություն:

Ավելին, պաշտոնական տվյալները վկայում են այն մասին, որ թեև մանկատներում շարունակում է նվազել խնամվող երեխաների թիվը, այդուհանդերձ, մասնագիտացված մանկատներում ավելացել է առողջական խնդիրներ ունեցող երեխաների թիվը: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախախարության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ 2017 թվականին խնամատար ընտանիքներում խնամք է տրամադրվել առանց ծնողական խնամքի մնացած 25, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երկու երեխայի: Ըստ Նախարարության տվյալների՝ 2017 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությամբ գործող մանկատներում խնամվում է 620 երեխա, որից շուրջ 450 երեխա ունի հաշմանդամություն:

2017 թվականի ընթացքում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը և ՀՀ կրթության և գիտության նախարարությունը մի շարք ծրագրեր և միջոցառումներ են իրականացրել՝ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների վերակազմակերպման, երեխաների խնամքի այլընտրանքային ձևերի զարգացման ուղղությամբ: Այսպես, վերակազմակերպվել են մի քանի գիշերօթիկ խնամքի հաստատություններ և հատուկ հանրակրթական հաստատություններ: Մասնավորապես, Կապանում, Սիսիանում, Գորիսում, Վանաձորում և Սպիտակում գործող հատուկ հանրակրթական հաստատությունները վերակազմակերպվել են տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների, իսկ Երևանի թիվ 1 գիշերօթիկ հաստատությունը՝ Նուբարաշենի Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոնի:

Չնայած իրականացված քայլերին, դեռևս մեծ թվով հաշմանդամություն ունեցող երեխաներ խնամվում են հաստատություններում, դժվարին իրավիճակներում հայտնված երեխաներին և նրանց ընտանիքներին աջակցող համայնքահեն ծառայությունների թիվը սահմանափակ է, բավարար չեն հաշմանդամություն ունեցող երեխաներին և նրանց ընտանիքներին աջակցող ծառայությունների թվի ավելացման ուղղությամբ ձեռնարկված քայլերը[351]:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից նշվել է նաև, որ 2018-2020 թվականների ՀՀ միջնաժամկետ ծախսային ծրագրով նախատեսված է յուրաքանչյուր տարի 94 երեխայի խնամքն ու դաստիարակությունը կազմակերպել խնամատար ընտանիքներում: Կարևոր են խնամատար ընտանիքների թվի ավելացմանն ուղղված քայլերը, սակայն անհրաժեշտ է խնամատար ընտանիքների թվի ավելացման գործընթացքում մեծ ուշադրություն դարձնել նաև հաշմանդամություն ունեցող երեխաներին խնամատար ընտանիքում խնամքով ապահովելու հարցին:

Խնամատար ընտանիքում հաշմանդամություն ունեցող երեխայի խնամքը կազմակերպելու համար անհրաժեշտ է, որպեսզի համայնքում լինեն աջակցող

[351] Մանրամասն տես սույն հաղորդման «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներ» բաժնում

կենտրոններ, որոնք կաջակցեն ընտանիքներին երեխայի խնամքի կազմակերպման հարցում: Նման կենտրոնների ստեղծումը կնպաստի նաև հաշմանդամություն ունեցող երեխաների վերադարձը կենսաբանական ընտանիք, քանի որ հաճախ հաշմանդամություն ունեցող երեխան գտնվում է հաստատությունում՝ կենսաբանական ընտանիքում վերջինիս համար անհրաժեշտ բավարար պայմանների բացակայության պատճառով:

Միաժամանակ, 2017 թվականի ընթացքում պետության կողմից հաստատությունների վերակազմակերպման և բեռնաթափման գործընթացում չեն ընդգրկվել այն մանկատները, որտեղ խնամվում են հաշմանդամություն ունեցող երեխաներ: Հաստատությունների վերակազմակերպման գործընթացին է անդրադարձել նաև «Հյուման Ռայթս Ուոթչ» (Human Rights Watch) իրավապաշտպան կազմակերպությունը՝ նշելով, որ չկան ծրագրեր երկրի՝ բացառապես հաշմանդամություն ունեցող երեխաների համար նախատեսված երեք մանկատները վերափոխելու ուղղությամբ[352]:

Միաժամանակ 2017 թվականի ընթացքում հաստատություններ կատարած մշտադիտարկման այցերի ժամանակ պարզվել է, որ վերակազմակերպված հաստատություններից (օրինակ՝ Սիսիանի և Սպիտակի մտավոր խնդիրներ ունեցող երեխաների հատուկ հանրակրթական հաստատություններ) ընտանիք վերադարձած երեխաներից մի քանիսը դպրոց չեն հաճախել, չնայած նրա, որ սահմանված կարգով հաշվառված են եղել դպրոցներում: Ինչը ցույց է տալիս, որ կարևոր է հաստատությունների վերակազմակերպման գործընթացում իրականացնել երեխաների և նրանց ընտանիքների կարիքների լիարժեք գնահատում՝ հատուկ ուշադրություն դարձնելով ընտանիք վերադարձած հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության իրավունքի արդյունավետ իրացմանը: Ավելին, այցերի ժամանակ Գյումրու մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 3 հատուկ դպրոցի տնօրենի հետ ունեցած առանձնազրույցի ընթացքում պարզվել է, որ Շիրակի մարզպետարանը դպրոցի տնօրինությանը տեղեկություն է տրամադրում կրթությունից դուրս մնացած հատուկ կրթական կարիքներ ունեցող երեխաների վերաբերյալ: Տնօրենի պնդմամբ՝ կրթությունից դուրս մնացած երեխաների վերաբերյալ տեղեկություն ունենալու դեպքում ինքը քայլեր է ձեռնարկում նրանց՝ տվյալ հաստատությունում տեղավորվելու և ուսումը կազմակերպելու ուղղությամբ:

Թեև ողջունելի է, որ Գյումրու մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 3 հատուկ դպրոցի տնօրինությունը փորձում է ապահովել հատուկ կրթական կարիքներ ունեցող երեխաների կրթություն ստանալու իրավունքի իրացումը, սակայն հատուկ հաստատությունում երեխայի տեղավորման հետևանքով վերջինս իր ժամանակի մեծ մասն անցկացնում է ընտանիքից հեռու՝ հաստատությունում: Ուստի՝ անհրաժեշտ է ջանքերն ուղղել երեխային և նրա ընտանիքին աջակցության տրամադրմանը, որի արդյունքում երեխան կրթություն կստանա իր բնակության վայրին մոտ գտնվող հանրակրթական ուսումնական հաստատությունում:

Չնայած այն հանգամանքին, որ վերակազմակերպված հաստատությունների հիմքի վրա ստեղծված մանկավարժահոգեբանական գնահատման կենտրոնների

[352] https://www.hrw.org/sites/default/files/report_pdf/armenia0217arm_web_2.pdf

մասնագետները կատարում են տնայցներ և այցելում են դպրոցներ՝ տեղում երեխաներին աջակցություն տրամադրելու համար, այնուամենայնիվ այդ կենտրոնների աշխատանքը դեռևս մնում է ոչ արդյունավետ: Այսպես մշտադիտարկման այցերի ընթացքում կենտրոնների անձնակազմերի ներկայացուցիչների հետ ունեցած առանձնազրույցերի ժամանակ վերջիններս տեղեկացրել են, որ կենտրոնները սպասարկում են բավականին մեծ տարածք և չունեն բավարար ռեսուրսներ բոլոր այցելությունները կազմակերպելու և աջակցությունն ամբողջ ծավալով մատուցելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք.

1. ստեղծել մասնագիտացված համայնքահեն աջակցության կենտրոններ, որոնք ծառայություններ կմատուցեն հաշմանդամություն ունեցող երեխաներին և նրանց ընտանիքներին՝ կանխարգելելով երեխաների մուտքը հաստատություններ,

2. հաստատությունների վերակազմակերպման գործընթացում ընդգրկել նաև հաշմանդամություն ունեցող երեխաների խնամք իրականացնող մանկատները՝ բացառելով նոր հաստատությունների ստեղծումը,

3. կազմակերպել վերապատրաստման դասընթացներ հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների համար՝ երեխաների խնամք և դաստիարակություն իրականացնելու հմտությունները զարգացնելու նպատակով,

4. ներդնել ընտանիքներ վերադարձած երեխաների կյանքի պայմանների մշտադիտարկման մեխանիզմ,

5. վերակազմակերպված հաստատությունների հիմքի վրա ստեղծված մանկավարժահոգեբանական գնահատման կենտրոններին տրամադրել բավարար ռեսուրսներ՝ ընտանիքներ այցելությունները կազմակերպելու և երեխաներին ու նրանց ընտանիքներին աջակցությունն ամբողջ ծավալով մատուցելու համար,

6. վերացնել կրթությունից դուրս մնացած երեխաներին հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունում տեղավորելու պրակտիկան՝ ստեղծելով մեխանիզմներ նրանց բնակության վայրին մոտ գտնվող հանրակրթական ուսումնական հաստատություններում կրթությունը կազմակերպելու համար:

3. Մշտադիտարկման այցեր երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ

2017 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները մշտադիտարկման այցեր են կատարել երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ (այդ թվում՝ ոչ պետական): Աշխատակազմի ներկայացուցիչների հետ միասին Գյումրու մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 3 հատուկ դպրոց է այցելել նաև Պաշտպանը[353] «Շիրակ կենտրոն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչների հետ միասին («Շիրակ կենտրոն» ՀԿ-ն աջակցում է երեխաներին և ընտանիքներին՝ նպաստելով հաստատությունից ընտանիք երեխաների վերադարձին):

[353] http://children.ombuds.am/%D5%BA%D5%A1%D5%B7%D5%BF%D5%BA%D5%A1%D5%B6%D5%B6-%D5%A1%D5%B5%D6%81%D5%A5%D5%AC%D5%A5%D5%AC-%D5%A7-%D5%A3%D5%B5%D5%B8%D6%82%D5%B4%D6%80%D5%B8%D6%82-%D5%A9%D5%AB%D5%BE-3-%D5%B0%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82/

Բոլոր այցերը եղել են չհայտարարված և իրականացվել են այդ նպատակով մշակված մեթոդաբանության համաձայն: Այցերի ընթացքում իրականացվել է երեխաների խնամքի պայմանների և հաստատությունում գտնվելու հիմք հանդիսացող փաստաթղթերի ուսումնասիրություն: Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներն առանձնազրույցներ են ունեցել երեխաների (ինչպես երեխաների խմբերի, այնպես էլ պատահականության սկզբունքով ընտրված առանձին երեխաների հետ), ինչպես նաև քննարկումներ հաստատությունների աշխատակիցների հետ, որոնց արդյունքում արձանագրվել են բոլորի կողմից բարձրացված խնդիրները:

Այցերի արդյունքում վերհանված խնդիրները քննարկվել են հաստատությունների տնօրինության և անձնակազմի հետ: Այսպես, ձեռք բերված տեղեկությունների, փաստաթղթերի և ոլորտի օրենսդրական կարգավորումների համադրման և վերլուծության արդյունքում արձանագրվել են ինչպես գործնական խնդիրներ, այնպես էլ օրենսդրական կարգավորման բացեր և թերություններ:

Հայտնաբերված խնդիրները համադրվել են նաև Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված անհատական բողոքների, ինչպես նաև միջազգային կառույցների, հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների հրապարակած նյութերի ու ուսումնասիրությունների հետ, որոնց արդյունքում հնարավորություն է ստեղծվել ներկայացնել այդ խնդիրների լուծման առաջարկներ:

Վերհանված խնդիրները, դրանց կապակցությամբ կատարված մասնագիտական վերլուծությունները և լուծմանն ուղղված առաջարկները ներկայացված են համակարգված եղանակով՝ ըստ հայտնաբերված խնդիրների:

3.1. Վերաբերմունքը երեխաների նկատմամբ

Հաստատություններում խնամվող երեխաների կողմից բարձրացվել է հանրակրթական ուսումնական հաստատություններում իրենց նկատմամբ բացասական վերաբերմունքի հարցը: Այսպես, երեխաները (օրինակ՝ Վանաձորի մանկատանը և Գյումրու երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատությունում) առանձնազրույցների ընթացքում հայտնել են, որ դպրոցների ուսուցիչները հաճախ բացասական երանգավորմամբ իրենց անվանում են «մանկատան երեխա» կամ «գիշերօթիկի երեխա»: Նշվածը մի շարք դեպքերում կարող է հանգեցնել խտրականության, որի արգելքն ամրագրված է թե՛ ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածով, թե՛ «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 2-րդ հոդվածով, ինչպես նաև մի շարք այլ միջազգային փաստաթղթերով:

Մանկատանը, գիշերօթիկ կամ այլ հաստատությունում խնամվող երեխան պետք է արժանանա նույն վերաբերմունքին, ինչպես և ընտանիքում ապրող երեխան՝ առանց որևէ խտրականության: Ուսուցչի կողմից երեխային «մանկատան երեխա» կամ «գիշերօթիկի երեխա» անվանելը ոչ միայն խտրական վերաբերմունք է երեխայի նկատմամբ, այլ նաև կարող է երեխայի կրթության սահմանադրական իրավունքի իրացման խոչընդոտ հանդիսանալ: Ավելին, ուսուցիչների նման քայլը կարող է հանգեցնել նաև այդ երեխաների հանդեպ համադասարանցիների բացասական վերաբերմունքին:

Առկա է նաև խտրականության և երեխաներին խարանի ենթարկելու վտանգ պայմանավորված որոշ հաստատությունների անվանումներով: Խնդրի մասին բարձրաձայնել է «Շիրակ կենտրոն» հասարակական կազմակերպության ղեկավարը՝ Վ.Թումասյանը: Ըստ այդմ Պաշտպանը ՀԿ նախագահի հետ այց է իրականացրել Գյումրու մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 3 հատուկ դպրոց: Արդյունքում պարզվել է ՀՀ-ում դեռևս կան հաստատություններ, որոնք անվանման մեջ ունեն «***մտավոր թերզարգացում***» ձևակերպումը, որը խորհրդային ժամանակներից գործող հաստատությունների անվանումների հետևանքն է և ամրագրված է ՀՀ կառավարության որոշումներում՝ որպես հաստատության առանձին տեսակ[354]:

Նշված խնդրի կապակցությամբ միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, որոշ հետխորհրդային երկրներում ևս երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների անվանման մեջ օգտագործվում է վերոնշյալ ձևակերպումը (օրինակ՝ Ռուսաստանի Դաշնություն, Ղրղզստանի Հանրապետություն և այլն): Մինչդեռ, զարգացած եվրոպական երկրների փորձի ուսումանսիրությունը ցույց է տալիս, որ այդ երկրներում նման ձևակերպումներ չեն օգտագործվում: Այսպես, Դանիայում և Նիդեռլանդներում օգտագործվում են «Խնամքի տներ» կամ պարզապես «Տներ», Ուելսի Սոցիալական ապահովության 2017 թվականի ակտով «Երեխաների տուն» անվանումը[355]: Ֆրանսիայում նմանատիպ հաստատություններն անվանվում են «Բժշկական և կրթական կենտրոններ[356]: Վրաստանում դրանք կոչվում են «Ընտանեկան տիպի տներ»:

Նշյալ միջազգային փորձը ցույց է տալիս, որ ընտրված անվանումները չեզոք են և որևէ կերպ հիմք չեն ստեղծում երեխաներին խտրականության ենթարկելու համար: Ուստի, նմատատիպ անվանումներն ավելի ընդունելի են և երեխայի վրա խարանի ազդեցություն չեն թողնում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք.

*1. փոփոխություններ կատարել ՀՀ կառավարության 2002 թվականի դեկեմբերի 26-ի թիվ 2179-Ն և 2005 թվականի մարտի 24-ի թիվ 381-Ն որոշումներում՝ բացառել «**մտավոր թերզարգացում**» ձևակերպման օգտագործումը և այն փոխարինել չեզոք ձևակերպամբ,*

2. նույն տրամաբանությամբ առաջարկում ենք նաև վերանայել գործող նմանատիպ հաստատությունների անվանումները և ըստ այդմ դրանք ենթարկել փոփոխությունների,

3. կազմակերպել դասընթացներ հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների համար երեխաների իրավունքների վերաբերյալ՝

---

[354] Մասնավորապես, ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 2179-Ն որոշման 4-րդ կետի «ե» ենթակետի համաձայն՝ հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերից է «Մտավոր թերզարգացում ունեցող երեխաների հատուկ (օժանդակ) հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը: ՀՀ կառավարության 2005 թվականի մարտի 24-ի «Հայաստանի Հանրապետությունում երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների տիպերի ցանկը, դրանցում երեխաների տեղավորման չափանիշները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 2179-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին» թիվ 381-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 7-րդ կետով նշվում է, որ հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերից է մտավոր թերզարգացում ունեցող երեխաների հատուկ (օժանդակ) հանրակրթական ուսումնական հաստատությունը:

[355] http://www.legislation.gov.uk/anaw/2014/4/section/86/enacted

[356] https://www.legifrance.gouv.fr/affichCodeArticle.do?cidTexte=LEGITEXT000006074069&idArticle=LEGIARTI000006906294&dateTexte=&categorieLien=cid

շեշտը դնելով խտրական վերաբերմունքի արգելքի վրա: Սահմանել դպրոցներում նման խտրական վերաբերմունքի կանխարգելման և սանկցավորման մեխանիզմներ:

Մշտադիտարկման ընթացքում պարզ է դարձել, որ Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիրում և Գյումրու մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 3 հատուկ դպրոցում շենքային պայմանները հարմարեցված չէին հաշմանդամություն ունեցող երեխաների կարիքների համար: Մասնավորապես, հաստատություններում հարմարեցված չէին սանիտարական հանգույցները, բացակայում էին, թեքահարթակներ, իսկ Կապանի թիվ 3 դպրոցի շենքի ներսում առկա էին մեծ թվով աստիճաններ, որոնք խոչընդոտներ էին ստեղծում հենաշարժական խնդիրներ ունեցող երեխաների համար: Միաժամանակ, միայն Գյումրու «Երեխաների տանն» էր գործում վերելակ:

Հաշմանդամություն ունեցող երեխաների համար ֆիզիկական միջավայրի մատչելիության և հարմարեցվածության անհրաժեշտությունն ամրագրված է թե՛ ներպետական և թե՛ միջազգային փաստաթղթերով: Այսպես, «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր երեխա ունի Կոնվենցիայով երաշխավորված բոլոր իրավունքներն առանց որևէ խտրականության: Կոնվենցիայի 28-րդ հոդվածի համաձայն՝ երեխան պետք է հավասար հնարավորությունների հիման վրա իրացնի իր կրթության իրավունքը: «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 7-րդ հոդվածը սահմանում է, որ հաշմանդամություն ունեցող երեխայի համար պետք է ապահովվի մարդու իրավունքներից և հիմնարար ազատություններից մյուս երեխաների հետ հավասար հիմունքներով օգտվելը, իսկ հաշմանդամություն ունեցող երեխաներին վերաբերող բոլոր գործողություններում երեխայի բարձրագույն շահերը համարվում են առաջնահերթ: Կոնվենցիայի 9-րդ հոդվածով սահմանվում է, որ հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և կյանքի բոլոր բնագավառներում լիակատար մասնակցության հնարավորություն ընձեռելու նպատակով մասնակից պետությունները ձեռնարկում են համապատասխան միջոցներ, որպեսզի նրանց համար մյուսների հետ հավասար հիմունքներով ապահովեն ֆիզիկական միջավայրի, փոխադրամիջոցների, տեղեկատվության և հաղորդակցության, ներառյալ տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաներն ու համակարգերը, ինչպես նաև այլ հարմարությունների ու ծառայությունների մատչելիությունը, որոնք հասանելի են հասարակությանը և՛ քաղաքներում, և՛ գյուղական վայրերում: Այս միջոցները, որոնք ներառում են խոչընդոտների և արգելքների բացահայտումը և վերացումը, կիրառվում են, մասնավորապես, կառույցների, ճանապարհների, փոխադրամիջոցների, բացօթյա և փակ հաստատությունների, այդ թվում՝ դպրոցների, բնակելի տարածքների, բժշկական հաստատությունների և աշխատավայրերի նկատմամբ[357]:

Չնայած գործող օրենքների և իրավական ակտերի հստակ պահանջներին՝ դրանք միշտ չէ, որ կիրառվում են, որի հետևանքով խախտվում են թե՛ երեխայի տեղաշարժվելու և թե՛ օրենքներով սահմանված մի շարք այլ իրավունքներ: Մինչդեռ, հասարակական ցանկացած վայրում, այդ թվում՝ երեխաների խնամք իրականացնող

[357] Մարամասն տես սույն հաղորդման «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներ» բաժնում

հաստատություններում, երեխաները պետք է օգտվեն իրենց բոլոր իրավունքներից առանց որևէ խտրականության և անհարմարության

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք հաստատությունների շենքային պայմանները հարմարեցնել հաշմանդամություն ունեցող երեխաների համար, մասնավորապես՝ տեղադրել թեքահարթակներ, կառուցել վերելակներ, վերանորոգել սանիտարական հանգույցները:

Մշտադիտարկման ընթացքում Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները արձանագրել են հաստատությունների սանիտարահիգիենիկ պայմանների հետ կապված մի շարք խնդիրներ: Օրինակ, Կապանի թիվ 3 կրթահամալիրի և Գյումրու թիվ 3 հատուկ դպրոցի առաջին հարկում տեղակայված տղաների և աղջիկների սանհանգույցներում տեղադրված էին ասիական տիպի զուգարաններ, որոնք բաժանված էին ընդհանուր հատակից մեկ կամ երկու աստիճաններով: Կրթահամալիրի մյուս մասնաշենքի սանհանգույցները՝ բացառությամբ մեկի, ևս ասիական տիպի էին և բաժանված էին ընդհանուր հատակից երեք աստիճանով՝ թեքահարթակների բացակայության պարագայում: Նման պայմաններում սանհանգույցներից օգտվելու համար մեծ դժվարություններ կառաջանան հենաշարժական խնդիրներ ունեցող երեխաների համար:

Գյումրու թիվ 3 հատուկ դպրոցի այն սաների համար, ովքեր ինքնուրույն չէին կարողանում օգտվել սանհանգույցներից, առկա էին գիշերանոթներ, սակայն ոչ բավարար քանակի, 8-10 երեխայի համար ընդամենը մեկը:

Գյումրու «Թռչունյան տուն» կրթահամալիր-մանկատանը սանհանգույցներում զուգարանակոնքերը միջնորմներով բաժանված չէին, մինչդեռ անձնական տարածքի առկայությունը տվյալ պարագայում կարևոր և պարտադիր է:

Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատության սանհանգույցներում զուգարանակոնքերը վնասված էին և բացակայում էին հիգիենայի պարագաները (օճառ, զուգարանի թուղթ, սրբիչ):

«ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմին ճանաչելու և երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխաների խնամքի ու դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2004 թվականի օգոստոսի 5-ի թիվ 1324-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 15-րդ կետի համաձայն՝ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունն ապահովում է առանձնացված պայմաններում երեխաների նեղ անձնական պահանջմունքները, կարիքները (անձնական հիգիենա) ինքնուրույն բավարարելու հնարավորությունը, անհրաժեշտության դեպքում՝ աշխատողների օգնությամբ:

Հաշվի առնելով, որ ներպետական օրենսդրությամբ հստակ սահմանված չեն երեխաների խնամք իրականացնող հաստատությունների սանիտարահիգիենիկ պայմանների չափորոշիչներ, Պաշտպանի աշխատակազմում կատարվել է տվյալ խնդրի կապակցությամբ միջազգային փորձի ուսումնասիրություն: Այսպես, օրինակ Միացյալ

Թագավորության դպրոցների համար սահմանված չափորոշիչներով[358] (կիրառելի են նաև համայնքային կենտրոնների, հատուկ դպրոցների և այլ հաստատությունների համար) երեխաների և անձնակազմի զուգարանները պետք է լինեն առանձին, երեխաների զուգարանները պետք է ունենան դռներ, որոնք փակվում են ներսից և նախատեսված են միաժամանակ միայն մեկ երեխայի օգտվելու համար: Հենաշարժական խնդիրներ ունեցող երեխաների համար զուգարաններում պետք է բացառվեն աստիճանները և այլ խոչընդոտները, իսկ զուգարանները պետք է լինեն այնպիսի վայրում, որ երեխաները ստիպված չլինեն անցնել 40 մետրից ավել տարածք: Առողջապահության համաշխարհային կազմակերպության ուղեցույցով[359] սահմանվում են դպրոցների համար սանիտարահիգիենիկ պահանջներ: Հաշմանդամություն ունեցող երեխաների համար նախատեսված սանհանգույցների համար սահմանված չափորոշիչները ներառում են թեքահարթակ, լայն դուռ, ներսում բավականաչափ տարածք անվասայլակով տեղաշարժման համար, հարմարեցված զուգարանակոնք և բռնակներ:

Իռլանդիայում «Հիմնական դպրոցներում սանիտարահիգիենիկ պայմանների» 2014 թվականի ուղեցույցով սահմանված են տեխնիկական չափորոշիչներ ուսումնական հաստատություններում սանիտարահիգիենիկ պայմանների վերաբերյալ[360]: Նշված չափորոշիչներով ևս պահանջվում է, որպեսզի յուրաքանչյուր սանհանգույց պարտադիր ունենա դռներ: Նման օրինակ առկա է նաև Սինգապուրի Հանրապետությունում, որտեղ սանիտարական նորմերով պահանջվում է, որ սանհանգույցները հարմարեցված լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար և ունենան դռներ:[361]

Մշտադիտարկման ընթացքում ուսումնասիրվել են նաև հաստատություններում երեխաների լոգանքի կազմակերպման պայմանները: Կատարված ուսումնասիրությունների արդյունքում վեր են հանվել մի շարք խնդիրներ: Մասնավորապես՝ լոգասենյակների ոչ բավարար պայմաններ, տեղաշարժման սահմանափակումներ ունեցող երեխաների լոգանքի կազմակերպման, ինչպես նաև երեխաների անձնական տարածք ունենալու իրավունքի խախտում:

Այսպես, Կապանի թիվ 3 կրթահամալիրի աշխատակիցների պնդմամբ՝ ամեն երեկո աղջիկ երեխաները քնելուց առաջ ամեն երեկո լոգանք են ընդունում, սակայն, հարկ է նշել, որ կրթահամալիրում լոգանք ընդունելու համար առանձնացված վայր առկա չէ: Ավելին, աղջիկների սանհանգույցում, լվացարանների մոտ, տեղադրված էր մեկ ցնցուղ, որն առանձնացված էր սանհանգույցներից միջնապատով, սակայն այնտեղ բացակայում էր դուռը: Ավելին, ցնցուղի մյուս կողմում տեղադրված էր լուսամուտ, որն այցի պահին չէր փակվում և որևէ կերպ ծածկված չէր և տեսանելի էր հաստատության դիմաց գտնվող բնակելի շենքից: Մինչդեռ, նշված իրավիճակն անընդունելի է, քանի որ խախտում է ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածով ամրագրված մարդու արժանապատվության և 31-րդ հոդվածով ամրագրված մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի և բարի համբավի անձեռնմխելիության իրավունքները: Ստեղծված իրավիճակը պայմանավորված չէ միայն տնտեսական որոշակի խնդիրների առկայությամբ:

---

[358] https://www.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/410294/Advice_on_standards_for_school_premises.pdf
[359] http://www.who.int/water_sanitation_health/publications/wash_standards_school.pdf
[360] https://www.education.ie/en/School-Design/Technical-Guidance-Documents/Current-Technical-Guidance/TGD%E2%80%93021-2-Guidelines-and-Standards-for-Sanitary-Facilities-in-Primary-Schools-1st-Edition-April-2014-.pdf
[361] https://www.bca.gov.sg/data/ImgCont/439/05_Sanitary%20Provisions.pdf

Վերոնշյալ խնդրի առնչությամբ ուսումնասիրվել է միջազգային փորձը: Այսպես, Միացյալ Թագավորության դպրոցների համար սահմանված չափորոշիչներով պահանջվում է, որ լոգարաններն առանձնացված լինեն զուգարաններից, և հարմարեցվեն հատուկ կարիքներ ունեցող երեխաներին, իսկ ջրի առավելագույն ջերմաստիճանը պետք է լինի +43° C, որպեսզի բացառվի ջրից այրվածքներ ստանալը:

Լոգասենյակների ոչ բավարար պայմաններ են արձանագրվել նաև «Թռչունյան տուն» կրթահամալիր-մանկատանը և Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք.

1. հաստատությունների սանհանգույցները բաժանել միջնորմներով և տեղադրել դռներ,

2.հաստատությունների սանհանգույցները և լոգարանները համապատասխանեցնել հենաշարժական խնդիրներ ունեցող երեխաների օգտագործման համար,

3.հաստատել սանհանգույցի և լոգարանի չափորոշիչներ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների համար, հիմք ընդունելով ներկայացված միջազգային փորձը:

Մշտադիտարկման ընթացքում արձանագրվել է, որ Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ դպրոցի ողջ տարածքում, այդ թվում՝ ննջասենյակներում, չափազանց ցուրտ էր, իսկ ընդհանուր ջեռուցումը միացված չէր (2017 թվականի հոկտեմբերի 23-ի դրությամբ): Հաստատության տնօրենի պնդմամբ ջեռուցման խնդիրը կապված էր ոչ բավարար ֆինանսական միջոցների հետ, ինչի պատճառով շենքի ջեռուցումը նոյեմբերի 15-ից ավելի վաղ չէին կարող միացնել: Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունում արձանագրված մեկ այլ խնդիր էր տղաների սենյակներում դռների բացակայությունը, որի հետևանքով սենյակներում ավելի ցուրտ էր. երեխաները չունեին իրենց անձնական տարածքը:

Հարկ է նշել նաև, որ հաստատությունում այցի պահին տաքացվող միակ սենյակը՝ բուժկետն էր, որտեղ միացված էր էլեկտրական ջեռուցման սարք, իսկ ջերմաչափը +14°C էր:

Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների օդի ջերմային ռեժիմի վերաբերյալ ՀՀ օրենսդրությունում հատուկ կարգավորումներ չկան, առկա են կարգավորումներ միայն հանրակրթական դպրոցների համար, որոնք ամրագրված են ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի մարտի 28-ի «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ» թիվ 2.2.4-016-17 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2002 թվականի փետրվարի 11-ի թիվ 82 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 12-Ն հրամանով: Ըստ այդ հրամանի հաստատված հավելվածի 48-րդ կետի համաձայն՝ հաստատության դասարաններում, ուսումնական կաբինետներում, դասախոսությունների լսարանում, գրադարանում, բուժկետում (բժշկի կաբինետ), մարզադահլիճի հանդերձարաններում, լաբորատորիաներում, խմբակային պարապմունքների սենյակներում, հանդիսությունների դահլիճում՝ առնվազն 18-22°C,

իսկ ուսումնական արհեստանոցներում, նախասրահում, հանդերձարանում ցուրտ եղանակային պայմաններում՝ առնվազն 18-20°C, իսկ մարզադահլիճում՝ 17-19°C:

Այսպիսով, թեև երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների համար չկան օդի ջերմաստիճանի վերաբերյալ հստակ մշակված չափանիշներ, այնուամենայնիվ, համադրելով դպրոցներում գործող չափարոշիչների հետ, կարող ենք եզրահանգել, որ հաստատությունում օդի ջերմաստիճանը նույնպես պետք է լինի 18 °C ոչ պակաս:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք,

1.հաստատել հաստատություններում օդի ջերմային մակարդակի հստակ չափորոշիչներ (կամ կիրառել հանրակրթական դպրոցների համար սահմանված չափորոշիչները) և, անկախ տարվա եղանակից, հաստատությունում ապահովել օդի բավարար ջերմային մակարդակը,

2.նախքան վերոնշյալ հրամանի հաստատումը առաջնորդվել ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի մարտի 28-ի «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ» թիվ 2.2.4-016-17 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2002 թվականի փետրվարի 11-ի թիվ 82 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 12-Ն հրամանով և ապահովել համապատասխան ջերմաստիճան:

4. Հաստատությունում գտնվող երեխաների կողմից բողոք ներկայացնելու մեխանիզմեր

Չափազանց կարևոր է երեխայի լսվելու, ըստ այդմ նաև երեխաների իրավունքների հնարավոր խախտումների կամ դրանց մասին տվյալների ստացման համար անհրաժեշտ կառուցակարգերի առկայությունը, որոնց մասին մանրամասն ներկայացված է 2017 թվականին հրապարակված «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության ուղենիշները երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում» իրավական վերլուծությամբ[362]:

Երեխայի լսված լինելու իրավունքն ամրագրված է թե՛ ներպետական և թե՛ միջազգային օրենսդրությամբ: ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի համաձայն՝ երեխան ունի ազատ արտահայտվելու և լսված լինելու սահմանադրական իրավունք:

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 12-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ իր հայացքները ձևակերպելու ընդունակ երեխայի համար պետություններն ապահովում են դրանք ազատորեն արտահայտելու իրավունք այն բոլոր դեպքերում, որոնք վերաբերում են երեխային: Երեխայի հայացքների նկատմամբ ցուցաբերվում է նրա տարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրություն:

Երեխայի՝ սեփական կարծիքն արտահայտելու իրավունքը երաշխավորվում է նաև «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով:

Ավելին, ՀՀ կառավարության 2004 թվականի օգոստոսի 5-ի թիվ 1324-Ն որոշումով հաստատվել են երեխաների խնամքի և պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխաների խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները: Նշյալ որոշման 2-րդ չափորոշչի

[362] http://children.ombuds.am/wp-content/uploads/2017/12/Guidelines-for-Ombudsman_arm.pdf

համաձայն՝ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունն ապահովում է երեխայի և նրա շահերից հանդես եկող անձանց (ծնողական իրավունքից չզրկված ծնողներ կամ օրինական ներկայացուցիչներ, հարազատներ)՝ մանկատան անձնակազմի անօրինական գործողությունները բողոքարկելու իրավունքի իրացումը, սահմանում է օրենքին համապատասխանող բողոքարկման ներքին կարգ և պահում հատուկ արկղ՝ բողոքների և առաջարկությունների համար:

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեի թիվ 12 ընդհանուր մեկնաբանության համաձայն[363]՝ բոլոր այն գործընթացներում, որտեղ ներգրավված են երեխաները, պետք է հարգվեն մի շարք սկզբունքներ, այդ թվում՝ տեղեկացվածությունը և անվտանգությունը: Տեղեկացվածության սկզբունքը ենթադրում է, որ երեխաները պետք է տեղեկացված լինեն նաև լսված լինելու իրենց իրավունքի վերաբերյալ: Միևնույն ժամանակ, անվտանգության սկզբունքը ենթադրում է, որ երեխան իր կարծիքն արտահայտելիս պետք է համոզված լինի, որ նրան վտանգ չի սպառնա, եթե նա խոսի իրեն հուզող հարցերից:

Լսված լինելու իրավունքի իրացման ձևերից մեկը երեխայի կողմից բողոք ներկայացնելու իրական հնարավորությունն է: Խոսքը հատկապես վերաբերում է խնամք իրականացնող հաստատություններին կամ այն հաստատություններին, որոնք բնույթով փակ են: Բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացման կարևորագույն չափանիշ է բողոքարկման գաղտնիությունը, որը հնարավորություն կտա երեխային իր խնդիրն իրավասու մարմնին երկայացնել առանց վախի կամ իր համար բացասական հետևանքների ռիսկի: Հարցի լուծման համար հաստատություններում տեղադրված են արկղեր, որոնք, սակայն, արդյունավետ չեն: Այսպես, մշտադիտարկման ընթացքում պարզ է դարձել, որ բոլոր հաստատություններում բողոքի արկղերը տեղադրված են եղել անձնակազմի համար տեսանելի վայրերում, որտեղ երեխան հնարավոր է կաշկանդվի իր կարծիքն արտահայտելուց:

Միևնույն ժամանակ, բոլոր հաստատությունների տնօրենների կողմից նշվել է, որ երեխաները երբեք բողոքի արկղերից չեն օգտվել, սակայն ազատ հայտնել են խնդիրների մասին իրենց կարծիքը: Այնուամենայնիվ, հնարավոր են դեպքեր, երբ երեխան վախենա իրեն հուզող հարցերի վերաբերյալ կարծիք արտահայտելուց: Այդ իսկ պատճառով, հաստատություններում պետք է հատուկ ուշադրություն դարձվի, որպեսզի բողոքի արկղերն այնպիսի հարմարեցված վայրերում տեղադրվեն, որտեղ երեխան առանց վախի և ճնշվածության զգացողության կարողանա իր բողոքը կամ կարծիքն արտահայտել (այդ թվում՝ անանուն):

Միաժամանակ կարևոր է երեխաների իրազեկումը բողոքարկման արկղերի, դրանց միջոցով բողոքի ներկայացման գաղտնիության մասին: Ավելին, բողոքի արկղերի առկայության հետ մեկտեղ հաստատությունում պետք է լինի բողոքարկման հստակ մեխանիզմ, որի մասին երեխաները պետք է տեղյակ լինեն:

Խնդրի կապակցությամբ ուսումնասիրվել է միջազգային փորձը: Օրինակ, Անգլիայի անչափահաս իրավախախտների հաստատություններում գործում է բողոքարկման հատուկ մեխանիզմ: Մասնավորապես, երեխաներն իրենց բողոքները ներկայացնում են

[363] http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/AdvanceVersions/CRC-C-GC-12.pdf

փակ ծրարով, ինչն անմիջապես փոխանցվում է հաստատությունը վերահսկող մարմնին[364]:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք

1. կատարելագործել հաստատություններում երեխաների համար մատչելի բողոքարկման մեխանիզմները՝ ապահովելով դրանց գաղտնիությունը և հատուկ ուշադրություն դարձնելով այդ բողոքարկման արկղերի տեղակայմանը,

2. բարձրացնել երեխաների տեղեկացվածությունը գործող բողոքարկման մեխանիզմների մասին հատուկ դասընթացների միջոցով,

3. իրազեկել հաստատությունների երեխաներին Պաշտպանի աշխատակազմում գործող՝ բողոքելու և կարծիք արտահայտելու հեռախոսային և առցանց մեխանիզմների մասին:

5. Երեխաների խնամք և պաշտանություն իրականացնող հաստատություններում ընդունելության և խնամվելու գործընթացի նկատմամբ վերահսկողության խնդիրներ

Մշտադիտարկման ընթացքում պարզ է դարձել, որ որոշ հաստատություններում խնամվող երեխաների փաստաթղթերի հետ կապված առկա են բացթողումներ: Օրինակ, Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիրում Պաշտպանի ներկայացուցիչների կողմից իրականացված ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ երեխաներից 19-ը չունեն կրթության հատուկ պայմանների կարիքը հավաստող վկայագիր, ինչը պարտադիր է հատուկ հաստատությունում խնամվելու համար: Նշվածի կապակցությամբ կրթահամալիրի աշխատակիցները տեղեկացրել են, որ 9 երեխայի համար արդեն արվել է կրթության հատուկ պայմանների կարիքի գնահատում մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից, ինչի հիման վրա էլ պետք է տրամադրվեն վկայագրեր: Վկայագիր չունեցող մյուս 10 երեխաները 12-րդ դասարանի սաներ են, ովքեր նախկինում գնահատված են եղել որպես հատուկ կրթական կարիք ունեցողներ, և ավարտական դասարանի համար մարզպետարանն այլևս վկայագիր չի տալիս, քանի որ այս տարի երեխաներն արդեն ավարտում են դպրոցը:

«Հանրակրթության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով սահմանվում է «երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում» հասկացությունը, այն է՝ անձի կրթական ծրագրերին մասնակցության դիտարկում, երեխայի զարգացման հնարավորությունների բացահայտում և կրթության առանձնահատուկ անհրաժեշտ պայմանների սահմանում: Օրենքի 17.2-րդ հոդվածի համաձայն՝ կրթության առանձնահատուկ պայմաններ սահմանելու նպատակով երեխան կարող է ներկայացվել կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման՝ ծնողի (օրինական ներկայացուցչի) դիմումի հիման վրա կամ երեխայի կրթության վայր հանդիսացող ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի դիմումի հիման վրա, եթե դիմումին կցված է ծնողի ստորագրած համաձայնագիրը: Այսինքն՝ երեխայի՝ կրթության առանձնահատուկ պայմանի կարիք ունենալու փաստը պետք է ամրագրվի նախ համապատասխան եզրակացությամբ, որը ըստ 2016 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ

[364] http://srsg.violenceagainstchildren.org/sites/default/files/consultations/restorative_justice/presentations/nikhil_roy/Complaints%20Procedures%20Presentation.pdf

1058-Ն ՀՀ կառավարության «Հանրապետական և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների օրինակելի կանոնադրությունները և ցանկը սահմանելու մասին» հավելված N 2-ի 20-րդ կետի՝ տրամարդում է կենտրոնը՝ իր սպասարկման տարածքում գնահատելով երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը: Արդյունքում, դրա հիման վրա տարածքային կառավարման պետական մարմինը վկայագրում է երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը:[365]):

Ուշագրավ է այն հանգամանքը, որ այցի պահին արձանագրված Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիրում երեխաներից 9-ը, արդեն իսկ այդ հաստատությունում ստանալով կրթություն, գտնվում էին գնահատման փուլում, ինչը հակասում է վերոնշյալ իրավական ակտերով սահմանված դրույթների պահանջներին:

Միաժամանակ, «Թռչունյան տուն» կրթահամալիր-մանկատանը խնամվող երեխաների մեծ մասի փաստաթղթերում բացակայում էին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից տրված ուղեգրերը: Հաստատությունում խնամվող 87 երեխայից 45-ը չուներ Նախարարության կողմից ուղեգիր և/կամ Մազպետարանի կողմից տրված եզրակացություն:

Ուղեգրի և եզրակացության առկայությունը՝ որպես հաստատություն ընդունելության պարտադիր պայման սահմանված է ՀՀ օրենսդրությամբ: Մասնավորապես, ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112-Ն որոշմամբ հաստատված «Երեխաների խնամքի տրամադրման կարգն ու պայմանները» հավելվածով սահմանվում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին ՀՀ մարզպետարանների կողմից եզրակացությունների և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ուղեգրերի տրամադրման կարգը: Վերոնշյալ հավելվածի 19-րդ կետի համաձայն՝ ՀՀ մարզպետարանների կողմից իրականացվում է երեխայի կենսապայմանների և սոցիալ-հոգեբանական ուսումնասիրություն, կատարում է անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև գործակալության նախնական եզրակացության լրիվ, օբյեկտիվ ու համակողմանի ուսումնասիրություն և ստացված փաստաթղթերի ու տեղեկատվության համադրման, վերլուծության արդյունքում կազմում է եզրակացություն՝ երեխայի հետագա խնամքը տրամադրելու մասին: Նույն որոշման 21-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախախարությունը երեխային ուղեգրում է բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի կամ հատուկ (մասնագիտացված) հաստատություն:

Ստացվում է, որ «Թռչունյան տուն» կրթահամալիր մանկատունը պարտավոր էր ապահովել եզրակացությունների և ուղեգրերի առկայությունը, իսկ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը՝ վերահսկել հաստատությունում երեխաների տեղավորման գործընթացը: Նման վերահսկողության լիազորություն նախարարությանը վերապահված է «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածով, համաձայն որի՝ ՀՀ կառավարության լիազորած պետական մարմինը, այն է՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը[366], վերահսկողություն է իրականացնում

[365] Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 17.3

[366] ՀՀ կառավարության 2004 թվականի օգոստոսի 5-ի թիվ 1324-Ն որոշման 1-ին կետի համաձայն՝ «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն է:

մանկատներում (անկախ կազմակերպական-իրավական ձևից) երեխաներին տեղավորելու, ինչպես նաև նրանց խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչների կիրառման նկատմամբ:

Ուստի՝ առաջարկում ենք ՀՀ կրթության և գիտության նախարարությանը և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը պատշաճ վերահսկողություն իրականացնել երեխաներին հաստատություններում ընդունելու գործընթացի նկատմամբ՝ ապահովելով օրենսդրությամբ անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը:

6. Երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում 18 տարեկանը լրացածների հիմնահարցերը

Մշտադիտարկման ընթացքում պարզ է դարձել, որ 2017 թվականի սեպտեմբերի դրությամբ Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիրում խնամվում են հատուկ կարիքներ ունեցող 20-30 տարեկան 15 անձինք, ովքեր նախկինում տեղափոխվել են Նուբարաշենի հատուկ դպրոցից՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության և մարզպետարանի թույլտվությամբ:

Տնօրենի պնդմամբ՝ ուսումն ավարտելուց հետո նրանք մնացել են հաստատությունում, քանի որ չունեն բնակվելու վայր: Հաստատությունը ննջասենյակային մասում նրանց սենյակներ է հատկացրել, նրանց խնամքի համար միջոցները տրամադրվում են հաստատության բյուջեից, իսկ անձնակազմը խնամք է իրականացնում: Տնօրենի պնդմամբ՝ հաճախ վերոնշյալ անձանց միջև վեճեր են առաջանում, որոնց ստիպված միջամտում են տնօրենը և անձնակազմը:

Խնդրի կապակցությամբ կրթահամալիրում ուսումնասիրվել են տնօրենի կողմից ներկայացված փաստաթղթերը, որոնք վկայել են, որ նշված անձանց բնակելի տարածք տրամադրելու կամ այլ հաստատություն տեղափոխելու խնդրով տնօրենը դիմել է Կապանի քաղաքապետին և ստացել է պատասխան, որ Կրթահամալիրում բնակվող չափահաս անձինք չեն համարվում իր համայնքի բնակիչներ և համայնքապետարանն այս հարցով իրավասու չէ որևէ խնդիր լուծել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից տնօրենի դիմումին ի պատասխան հայտնել են, որ Կրթահամալիրում բնակվող հատուկ կարիքներ ունեցող չափահաս անձինք կարող են տեղավորվել «Զորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոնում միայն ազատ տեղերի առկայության դեպքում:

Պաշտպանի 2017 թվականի տարեկան հաղորդման շրջանակներում արված հարցմանն ի պատասխան ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ 2017 թվականի դրությամբ 18 տարին լրացած անձինք բնակվում են նաև այլ հաստատություններում: Այսպես, Վանաձորի մանկատանը խնամվում են հանրակրթության մեջ ընդգրկված 18 տարին լրացած 2 սան, Մարի Իզմիրլյանի անվան մանկատանը խնամվում են 18 տարեկանը լրացած 7 սան, Խարբերդի մասնագիտացված մանկատանը խնամվում են 18 տարեկանը լրացած շուրջ 130 անձ: 2017 թվականի ընթացքում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի երեխաների շուրջօրյա խնամքի հաստատությունների,

այդ թվում նաև՝ մասնագիտացված հաստատությունների 18 տարեկանը լրացած սաներից սոցիալական կացարանով ապահովվել են միայն 4-ը[367]:

Մանկատներում բնակվող 18 տարեկանը լրացած անձանց խնդիրը բարձրաձայնվել է նաև «Հյուման Ռայթս Ուոթչ» իրավապաշտպան կազմակերպության կողմից (Human Rights Watch): Նշված կազմակերպության կողմից նշվում է, որ 18 տարեկանը լրացած հաշմանդամություն ունեցող անձինք կարող են անորոշ ժամանակով մնալ հաստատություններում: Հաստատություններում նրանց մնալու պատճառներից են համայնքում այլընտրանքային ծառայությունների բացակայությունը, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող չափահաս երիտասարդների գործունակության իրացման երաշխիքների բացակայությունը[368]:

«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչներից է բնակարանի իրավունքի ապահովումը: ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 1069-Ն որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ բնակելի տարածություն ստանալու իրավունք ունեցող՝ սոցիալապես անապահով և հատուկ խմբերին դասված անձինք են «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին դասվող անձինք:

Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ բազմաթիվ շրջանավարտներ շարունակում են ապրել երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում: Հաշմանդամություն ունեցող շրջանավարտների համար էլ չկան մասնագիտացված ծառայություններ մատուցող այլընտրանքային համայնքահեն կենտրոններ: Այդ կենտրոնները կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին և նրանց ընտանիքներին սոցիալ-հոգեբանական, սոցիալ-վերականգնողական և սոցիալ-մանկավարժական աջակցություն տրամադրող ծառայություններ են, որոնց նպատակն է ապահովել համայնքի յուրաքանչյուր երեխայի և ընտանիքի բարեկեցության և զարգացման համար անհրաժեշտ պայմաններ՝ սոցիալ-հոգեբանական, սոցիալ-վերականգնողական և սոցիալ-մանկավարժական աջակցություն տրամադրելու, ընտանիքները ամրացնելու, երեխաների իրավունքների պաշտպանության և համայնքային ռեսուրսների համախմբման միջոցով:

Վերոնշյալ խնդրին անդրադարձ է կատարվել նաև տարեկան հաղորդման «հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներ» բաժնում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք առանձնացնել այլընտրանքային խնամքի հաստատություններ և բնակելի տարածքներ՝ մանկատան շրջանավարտներին տրամադրելու համար, ներդնել համայնքային ծառայություններ՝ հաշվի առնելով նրանց կարիքներն ու հասարակությանն ինտեգրվելու անհրաժեշտությունը:

[367] Տես սույն հաղորդման «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներ» բաժնում
[368] https://www.hrw.org/sites/default/files/report_pdf/armenia0217arm_web_2.pdf

7. Թափառաշրջիկ ու մուրացիկ երեխաներին հայտնաբերելու և աջակցություն տրամադրելու գործընթացի հետ կապված խնդիրներ

Թափառաշրջիկ ու մուրացիկ երեխաներին հայտնաբերելու և աջակցություն տրամադրելու արդյունավետ մեխանիզմների բացակայության հետևանքով խնդիրը շարունակում է մնալ արդիական: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին 2017 թվականին հասցեագրվել են բազմաթիվ ահազանգեր մուրացկանությամբ ու թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների վերաբերյալ:

Ստացված ահազանգերի հիման վրա Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները կապ են հաստատել ՀՀ Ոստիկանության և Հայ Օգնության Ֆոնդի երեխաների աջակցության կենտրոն հիմնադրամի հետ, որոնք օպերատիվ կերպով արձագանքել են՝ տեղափոխելով երեխաներին ՀՕՖ-ի կենտրոն կամ ընտանիք: Սակայն, մտահոգիչ է այն փաստը, որ որոշ ժամանակ անց նույն երեխաների վերաբերյալ Պաշտպանի աշխատակազմը ստացել է նույնաբովանդակ ահազանգեր, ինչը նշանակում է, որ խնդրի լուծմանն ուղղված գործողությունները բավարար չեն եղել:

Դեռևս 2013 թվականին Հայաստանի երրորդ և չորրորդ պարբերական զեկույցների վերաբերյալ իր դիտողություններում ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների կոմիտեն նշել է, որ զգալի թվով երեխաներ, այդ թվում՝ մինչև 14 տարեկան, լքում են դպրոցները՝ աշխատելու համար ոչ ֆորմալ ոլորտներում, ինչպիսիք են գյուղատնտեսությունը, ավտոսպասարկումը, շինարարությունը, մետաղների թափոնների հավաքումը և ընտանեկան բիզնեսները: Կոմիտեն մտահոգություն էր հայտնել նաև մուրացիկության մեջ ներգրավված երեխաների աճող թվի վերաբերյալ:

Չնայած ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող աշխատանքներին՝ մուրացիկ և թափառաշրջիկ երեխաների թիվը 2016 թվականի համեմատ էական փոփոխությունների չի ենթարկվել:

ՀՀ ոստիկանության կողմից տրամադրված տեղեկությունների համաձայն՝ 2017 թվականի ընթացքում ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից տարածքային ստորաբաժանումներ է ներկայացվել մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ, այդ թվում ծաղիկ և տարբեր իրերի վաճառքով /գործողությունները զուգորդվել են մուրացկանությամբ/ զբաղվող ընդհանուր թվով 53 երեխաներ:

2017 թվականի ընթացքում հայտնաբերված մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաներից 50-ը հայտնաբերվել են Երևան, 2-ը՝ Վաղարշապատ, 1-ը՝ Աբովյան քաղաքներում: Հայտնաբերված մուրացիկ և թափառաշրջիկ երեխաներին և նրանց ընտանիքներին անհրաժեշտ սոցիալական աջակցություն ցուցաբերելու նպատակով վերջիններիս վերաբերյալ տեղեկությունները Ոստիկանության կողմից տրամադրվել են տարածքային սոցիալական ծառայություններին: ՀՀ ոստիկանության տարածքային ստորաբաժանումների երեխաների գործերով բաժանմունքներում մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվելու համար պրոֆիլակտիկ հաշվառման մեջ է գտնվել 18 երեխա /Երևան- 11, Սպիտակ- 3, Կոտայք- 2 , Կումայրի-2/:

ՀՀ Ոստիկանության և Երևանի քաղաքապետարանի կողմից հայտնած տեղեկությունների համաձայն՝ ակտիվ համագործակցություն է իրականացվում խնդրի լուծման ուղղությամբ: Սակայն այն փաստը, որ 2017 թվականի ընթացքում

Հանրապետական թիվ 1 կրթահամալիր են ընդունվել թվով 15 թափառաշրջիկ և մուրացիկ երեխաներ, որոնցից 14-ը Երևանից են և մեկը՝ Կոտայքի մարզից, պարզ է դառնում, որ խնդրի լուծման ուղղությամբ կատարված քայլերը բավարար չեն:

Մուրացիկ և թափառաշրջիկ երեխաների հայտնաբերման գործում կարևոր է միջգերատեսչական համագործակցությունը, ինչպես նաև երեխաների մուրացկանությամբ զբաղվելու կանխարգելումը:

Կանխարգելման առումով կարևոր նշանակություն ունի ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգը: «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և ֆիզիկական անձանց, սոցիալական աջակցության շրջանակներում նրանց կողմից իրականացվող գործառույթների (լիազորությունների) և միջոցառումների ամբողջությունն է: Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգը համագործակցության ապահովման միջոցով կանխարգելում է անձի (ընտանիքի, այլ սոցիալական խմբի) կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելը, վերացնում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու պատճառները և հետևանքները:

Նույն հոդվածի 2-րդ կետով ամրագրված է, որ ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի հիմնական բաղադրիչներից են միջգերատեսչական սոցիալական համագործակցության կողմերը:

ՀՀ կառավարության կողմից 2015 թվականի սեպտեմբերի 10-ին հաստատվել է «Միջգերատեսչական սոցիալական համագործակցության կանոնակարգը սահմանելու մասին» թիվ 1044-Ն որոշումը: Նշված որոշմամբ սահմանվում են միջգերատեսչական սոցիալական համագործակցության կողմերը, կարգը և ձևերը: Այսպես, համագործակցությունն ենթադրում է տեղեկատվական և վարչական-կազմակերպական համագործակցություն, համակարգող և խորհրդատվական մարմինների ձևավորում, սոցիալական դեպքի վարման շրջանակներում բազմամասնագիտական խմբի աշխատանք:

Այսպիսով, միջգերատեսչական համագործակցության կողմերը համատեղ աշխատանքի արդյունքում պետք է կանխարգելեն երեխաների՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելը, իսկ նման իրավիճակում հատնվելու դեպքում ջանքեր գործադրեն, որպեսզի վերանան դրա պատճառներն ու հետևանքները:

Հարկ է նշել, որ Եվրոպայի խորհրդի Երեխաների իրավունքների ռազմավարության (2016-2021թթ.) 28-րդ կետի համաձայն՝ երեխաների սոցիալական ինտեգրման խնդիրները կարող են առավել արդյունավետ կերպով լուծվել երեխաների պաշտպանության համակարգերի, կանխարգելիչ միջոցառումների, ընտանիքին աջակցության, վաղ մանկության կրթության միջոցով[369]:

Թեև առկա կարգավորումները նախատեսում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցությունը դժվարին իրավիճակներում հայտնված երեխաների հայտնաբերման և հետագա ուղղորդման հարցում, այնուամենայնիվ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից

[369] https://rm.coe.int/168066cff8

տրամադրված տեղեկատվության համաձայն՝ հարցի վերաբերյալ Նախարարությունը իր իրավասության շրջանակներում տեղեկատվությանը չի տիրապետում:

Վերոգրյալից կարելի է հետևություն անել, որ թափառաշրջիկ և մուրացիկ երեխաներին հայտնաբերելու և համապատասխան աջակցություն տրամադրելու խնդիրը շարունակում է մնալ արդիական նաև այն պատճառով, որ խնդրով հիմնականում զբաղվում է Ոստիկանությունը և շատ հազվադեպ են սոցիալական ծառայությունների հետ համագործակցության դեպքերը: Մինչ օրս չեն մշակվել ապօրինի աշխատող երեխաների և իրենց հարկադիր աշխատանքի դրդողների բացահայտման մեխանիզմներ, իսկ երեխաներին հաստատությունում տեղավորելն ընտրվել է որպես դյուրին ճանապարհ՝ ընտանիքների հետ աշխատելու փոխարեն: Չեն հավաքագրվել հստակ վիճակագրական տվյալներ, համապատասխան լիազոր մարմինների կողմից չի իրականացվել համագործակցություն և չի կատարվել իրավիճակի համալիր գնահատում:

Թափառաշրջիկ ու մուրացիկ երեխաները զրկված են սոցիալական ծառայություններից պատշաճ օգտվելու հնարավորությունից: Բացի այդ, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված նման երեխաների և նրանց ծնողների հետ սոցիալական ծառայությունների և համայնքների կողմից չեն իրականացվում ամենօրյա մասնագիտական աշխատանքներ, ինչպես նաև հսկողություն նրանց կյանքի, կենցաղային պայմանների նկատմամբ, բացակայում են նաև կանխարգելիչ ծառայություններ՝ ժամանակին բացահայտելու ռիսկային ընտանիքներին և երեխաներին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք.

1. օրենսդրությամբ սահմանել «անօթևան, մուրացիկ և թափառաշրջիկ երեխաների» եզրույթները՝ հաշվի առնելով Փողոցային իրավիճակներում հայտնված երեխաների վերաբերյալ ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների կոմիտեի թիվ No. 21 (2017) ընդհանուր մեկնաբանության դրույթները, ինչը թույլ կտա ունենալ իրական պատկեր և ավելի հստակ վիճակագրություն,

2. ուժեղացնել ՀՀ ոստիկանության և սոցիալական ծառայությունների համագործակցությունը՝ ուղղված մուրացկանությամբ ու թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների հայտնաբերմանը և աջակցության տրամադրմանը :

8. Խնամակալության և հոգաբարձության մարմիններ (հանձնաժողովներ)

Պաշտպանի կողմից տարիներ շարունակ տարեկան հաղորդումներում նշվել են Խնամակալության և հոգաբարձության մարմինների աշխատանքներում հայտնաբերված խնդիրների մասին: Ինչպես 2016 թվականին այնպես էլ 2017 թվականին Պաշտպանի աշխատակազմի Երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի կողմից ստացված մեծ թվով դիմում-բողոքներ վերաբերել են Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների (ԽՀՀ) գործունեությանը: Ավելին, 2017 թվականի ընթացքում Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների (ԽՀՀ) գործունեության հետ կապված բողոքների թիվն աճել է: Մասնավորապես, նշված դիմում-բողոքները հիմնականում վերաբերել է երեխայի՝ իր ծնողների հետ շփվելու և նրանց կողմից դաստիարակություն ստանալու իրավունքի պաշտպանության գործում ԽՀՀ-ների գործունեությանը:

Մարդու իրավունքների պաշտպանի նախորդ տարիների զեկույցներում, ինչպես նաև Պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքների հիման վրա առանձնացվել են մի քանի հիմնական խնդիրներ, որոնք արտացոլվել են «Խնամակալության և հոգաբարձության մարմինների ու խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների վերաբերյալ» արտահերթ հրապարակային զեկույցում[370]:

Վերը նշված խնդիրներից է ԽՀՄ/ԽՀՀ գործունեության իրականացումը կամավորության սկզբունքով: Խնդրին նպաստող հանգամանքներից է նաև այն, որ նշված կառույցների անդամները, զբաղված լինելով իրենց հիմնական գործունեությամբ, լիարժեք ներգրավվածություն չունեն ԽՀՄ/ԽՀՀ գործառույթների իրականացմանը, իսկ երբեմն էլ ընկալում են այն որպես ավելորդ ծանրաբեռնվածություն:

Վերհանված մեկ այլ խնդիր է ԽՀՄ/ԽՀՀ անդամների ճնշող մեծամասնության մոտ համապատասխան որակավորում և բավարար փորձի բացակայությունը, ինչպես նաև պարբերական վերապատրաստումների չանցկացումը: Նշվածը խնդրահարույց է, քանի որ ԽՀՄ/ԽՀՀ գործունեությունը սերտորեն կապված է երեխաների սոցիալ-հոգեբանական և առողջական բարօրության հետ, ինչը պահանջում է հոգեբանական գիտելիքներ և հաղորդակցման հմտություններ: Հարկ է նաև նշել, որ ԽՀՄ/ԽՀՀ անդամների մեծամասնությունը, հատկապես մարզային համայնքներում, լիարժեք իրազեկված չէ երեխաների իրավունքների պաշտպանության մեխանիզմների վերաբերյալ:

Մարդու իրավունքների պաշտպանի 2013-2016 թվականների տարեկան զեկույցներում և հաղորդմամբ նշվել է, որ ԽՀՄ/ԽՀՀ գործունեությունը կարգավորված չէ պատշաճ մեթոդաբանությամբ և ընթացակարգերով: Ստացվում է, որ դրանց բացակայության հետևանքով տուժում է գործառույթների լիարժեք իրականացումը, իրավիճակներին արձագանքելու օպերատիվությունը և դեպքերի վարման օբյեկտիվությունը:

ԽՀՀ-ների գործունեության մասին նշվել է նաև ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեի՝ ՀՀ-ի վերաբերյալ 2013 թվականի ամփոփիչ դիտարկումներում, որոնց համաձայն՝ ԽՀՀ-ների անդամները չեն վարձատրվում և համապատասխանաբար մոտիվացված չեն:

ԽՀՀ հետ կապված խնդիրների մասին նշվել է նաև Հայաստանի Հանրապետությունում Երեխաների իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագրում[371]:

Այսպիսով, թեև խնդիրը տարիներ շարունակ բարձրաձայնվում է Պաշտպանի, տեղական և միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև պետական մարմինների կողմից, սակայն այն չի լուծվում և ավելին, ««Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով ԽՀՀ-ները երեխաների իրավունքների պաշտպանության համայնքային մակարդակում գլխավոր դերակատարն են՝ պահպանելով գործունեության նույն սկզբունքները:

Նշված նախագծի վերաբերյալ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ուղղված Պաշտպանի կարծիքում նշվել է, որ եթե համայնքային մակարդակում երեխայի իրավունքների պաշտպանության համակարգի

[370] http://children.ombuds.am/wp-content/uploads/2017/12/GTC-report.pdf
[371] http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=81357

գործունեությունն ապահովող խնամակալության և հոգաբարձության մարմինները շարունակեն գործել նույն սկզբունքներով, ապա երեխայի իրավունքների պաշտպանությունը համայնքային մակարդակում արդյունավետ չի լինի, ինչը կբերի երեխայի իրավունքների շարունակական խախտումների:

Այսպիսով, Պաշտպանի կողմից բազմիցս նշվել է ԽՀՄ/ԽՀՀ գործունեության անարդյունավետության մասին, իսկ ԽՀՄ/ԽՀՀ գործունեության վերաբերյալ Պաշտպանի վերոնշյալ զեկույցով վեր են հանվել ոլորտի այն առանցքային խնդիրները, որոնք ունեն հրատապ լուծման կարիք*: Բացի այդ, տրվել են առաջարկներ, որոնցից են.*

1. աշխատանքներ տանել ԽՀՀ-ի անդամների մասնագիտական կարողությունների բարձրացման ուղղությամբ,

2. հնարավորության սահմաններում բացառել ԽՀՀ-ի անդամների աշխատանքի կամավորության սկզբունքը և մասնագետներ ներգրավել վճարովի հիմունքներով (օրինակ՝ սոցիալական աշխատող, հոգեբան),

3. ԽՀՀ-ների համար մշակել մեթոդաբանական ուղեցույց, ինչպես նաև համապատասխան միջոցներ տրամադրել գործառույթների լիարժեք իրականացման համար:

9. Երեխայի նկատմամբ բռնությունը

Երեխաների նկատմամբ բռնությունը բացասական ազդեցություն է ունենում երեխայի զարգացման վրա և մեծացնում է հետագայում նրա կողմից բռնության կիրառման ռիսկը: Այդ իսկ պատճառով երեխաների նկատմամբ բռնության արգելքի և բացառման մասին համապատասխան կարգավորումներ են նախատեսվում գործող իրավական ակտերում՝ Ընտանեկան օրենսգիրք, «Երեխաների մասին» ՀՀ օրենք և այլն: «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 19-ի հոդվածի համաձայն՝ երեխան պետք է պաշտպանված լինի ծնողների, օրինական խնամակալների կամ երեխայի մասին հոգ տանող ցանկացած այլ անձի կողմից ֆիզիկական կամ հոգեբանական բռնության բոլոր ձևերից, վիրավորանքից կամ չարաշահումից, հոգատարության բացակայությունից կամ անուշադրությունից, կոպիտ վերաբերմունքից կամ շահագործումից: Կոնվենցիայի 28-րդ հոդվածով ամրագրված է, որ դպրոցական կարգապահությունն իրականացվում է երեխայի մարդկային արժանապատվության հետ համատեղելի մեթոդներով:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ հանրակրթությունը նպատակաուղղված է, ի թիվս այլնի, յուրաքանչյուր սովորողի մարդկային արժանապատվության պահպանմանը: «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձի, այդ թվում՝ ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին, արգելվում է երեխային ենթարկել բռնության կամ նրա արժանապատվությունը նվաստացնող պատժի, կամ նմանօրինակ այլ վերաբերմունքի:

Վերոգրյալը ենթադրում է, որ դպրոցում, ընտանիքում, ինչպես նաև ցանկացած այլ վայրում, երեխայի նկատմամբ բռնության դրսևորումներն անթույլատրելի են:

Չնայած երեխայի նկատմամբ բռնության արգելքի, այնուամենայնիվ երեխաների նկատմամբ բռնության խնդիրը համակարգային լուծում դեռևս չի ստացել: Երեխաների նկատմամբ բռնության խնդրին մանրամասն անդրադարձ է կատարվել 2017 թվականին

հրապարակված «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության ուղենիշները երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում» իրավական վերլուծությամբ[372]:

Դեռևս 2013 թվականին Երեխայի իրավունքների Կոմիտեն ՀՀ-ի վերաբերյալ իր դիտարկումներում մտահոգություն է հայտնել այն մասին, որ փակ և մասնակի փակ հաստատություններում երեխաները ենթարկվում են վատ վերաբերմունքի և բռնության: Կոմիտեն նշել է նաև, որ ՀՀ ընտանեկան օրենսգիրքը և «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը պարունակում են երեխայի հանդեպ ֆիզիկական պատիժն արգելող դրույթներ, սակայն այդ դրույթների կիրարկման մեխանիզմներ չկան և ՀՀ օրենսդրությամբ չեն նախատեսվում պատժամիջոցներ խախտումների դեպքերի համար:

2013 թվականից մինչև 2017 թվականի հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում, ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից տրամադրած տեղեկությունների համաձայն՝ հաստատություններում տեղի է ունեցել երեխաների նկատմամբ բռնության 2 դեպք: Մասնավորապես, 2014 թվականին «Բյուրեղավանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ում երեխաների նկատմամբ բռնության դեպք է արձանագրվել որի կապակցությամբ հարուցվել է քրեական գործ այն բանի համար, որ ՊՈԱԿ-ի աշխատակիցն ուսումնական հաստատությունում իր կողմից կազմակերպված տողանների ընթացքում, ինչպես նաև ուսումնադաստիարակչական գործընթացի այլ փուլերում՝ 2010-2014 թվականների ընթացքում միասնական հանցավոր մտադրությամբ, պարբերաբար, տարբեր պատճառաբանություններով բռնություն է գործադրել հաստատության՝ իր բնորոշմամբ «կարգազանց» ավելի քան մեկ տասնյակ սաների նկատմամբ, ինչով էլ նրանց դիտավորությամբ պատճառել է հոգեկան ուժեղ տառապանք[373]:

Երկրորդ դեպքն արձանագրվել է 2016 թվականի մայիսին Կապանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունում, որի վերաբերյալ հետագայում քրեական գործ չի հարուցվել՝ հանցակազմի բացակայության հիմքով:

Նշված խիստ փոքր ցուցանիշը, թերևս, կարող է պայմանավորված լինել առնվազն մի քանի գործոններով, օրինակ.

1. *բռնության մասին իրազեկվածության ու ընկալումների յուրահատկություններով.* ոլորտում իրականացված հետազոտություններից մեկի (որն իրականացվել է մանկավարժների շրջանում հինգ ֆոկուսացված խմբային քննարկումների միջոցով) համաձայն՝ ի տարբերություն Երևանի մանկավարժների, մարզերի մանկավարժները հակված չեն որպես բռնություն դիտարկել իրենց կողմից ձեռնարկվող մի շարք բռնի գործողություններ (ականջ քաշել, սաստել ֆիզիկապես և այլն): Ավելին, նրանք կարծում են, որ նման սահմանումներն «արտերկրից են պարտադրվում մեր հասարակությանը և հակասում են մեր ազգային հոգեկերտվածքին»: Շատերը նշում են, որ ավանդական կրթության և դաստիարակության մեթոդները իրենց պատժամիջոցների համակարգով շատ ավելի արդյունավետ են եղել, քան այն, ինչ այսօր պահանջում են մանկավարժներից[374]: Այս իմաստով, ինչպես նման դեպքերի արձանագրումները, այնպես

[372] http://children.ombuds.am/wp-content/uploads/2017/12/Guidelines-for-Ombudsman_arm.pdf

[373]Հիմք՝ ԿԴ2/0060/01/15 քրեական գործ.
http://www.datalex.am/?app=AppCaseSearch&page=default&tab=criminal:

[374]Երեխաների նկատմամբ բռնության դրսևորումները Հայաստանի Հանրապետությունում: Հետազոտության արդյունքների վերլուծության հաշվետվություն // Հետազոտ. աշխատ. խումբ.- Եր.: Լուսաբաց, 2014 թվական 116 էջ:

էլ դրանց նկատմամբ համապատասխան իրավական արձագանքի փոքր թվաքանակը կարող է պայմանավորված լինել հենց բռնության՝ որպես հասարակության մեջ ընդունելի վարքի ընկալումներով, և բռնություն գործադրողների նկատմամբ դրսևորված անտարբերությամբ,

2. *հաստատություններում բռնության ցուցիչների, նման դեպքերի արձանագրման վիճակագրության վարման և վերլուծությունների բացակայություն.* հարկ է նշել, որ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը 2017 թվականի ընթացքում ստացել է տարբեր բնույթի բողոքներ դպրոցներում երեխայի նկատմամբ բռնության դեպքերի վերաբերյալ: Բողոքները վերաբերել են դպրոցներում երեխաների նկատմամբ բռնության դրսևորումներին թե՛ աշակերտների և թե՛ ուսուցիչների կողմից:

2017 թվականին բռնության մասին տեղեկություններ են ներկայացվել նաև զանգվածային լրատվության միջոցներով: Այսպես, աշակերտների կողմից բռնության դրսևորումներից էր Երևանի կենտրոն վարչական շրջանի Ջոն Կիրակոսյանի անվան դպրոցում տեղի ունեցած միջադեպը: Զանգվածային լրատվության աղբյուրներից ստացված տեղեկատվության համաձայն[375]՝ դպրոցի աշակերտներից մեկի դասընկերները զուգարանում կպչող ժապավենով կապել են նրա ձեռքերը, մի քանի հարվածներ հասցրել, այնուհետև նրանցից մեկն էլ մկրատով կտրել է երեխայի թարթիչները: 2017 թվականի ընթացքում Ջոն Կիրակոսյանի անվան դպրոցում տեղի ունեցած բռնության դրսևորումների կապակցությամբ Պաշտպանի աշխատակազմում սեփական նախաձեռնությամբ սկսվել էր հարցի քննարկում:

Պաշտպանի աշխատակազմում ստացվել են նաև բողոքներ դպրոցներում (այդ թվում՝ մասնավոր) ուսուցիչների կողմից բռնության դրսևորումների վերաբերյալ, որոնց համապատասխան ընթացք է տրվել:

Ինչպես արդեն նշվել է, Պաշտպանի աշխատակազմ պարբերաբար այցելում են տարբեր տարիքային խմբերի երեխաներ: Նման հանդիպումների ժամանակ մի շարք երեխաներ հայտնել են, որ դպրոցներում կան ուսուցիչների կողմից աշակերտների նկատմամբ բռնության (թե՛ ֆիզիկական և թե՛ հոգեբանական) դեպքեր: Աշխատակազմ այցելած երեխաներից շատերը չգիտեին, որ ուսուցիչներն իրավունք չունեն հարվածել աշակերտներին, եթե, օրինակ՝ նրանք խանգարում են դասընթացին: Հանդիպումների ընթացքում երեխաներին մանրամասն բացատրվել են իրենց իրավունքները և դրանց պաշտպանության առկա մեխանիզմները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք.

1. հաստատել դպրոցներում և երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում բռնության դրսևորման դեպքերի արձանագրման և հաղորդման հստակ ընթացակարգեր,

2. առաջին դասարանից սկսած՝ երեխաների հետ իրականացնել հատուկ դասընթացներ, խաղեր և զրույցներ՝ քննարկելու և կանխարգելելու իրենց կողմից միմյանց հանդեպ բռնի վերաբերմունք ցուցադրելու հնարավոր ռիսկերը,

3. հասարակագիտության դասաժամերի ընթացքում ավելացնել երեխաների իրավունքների վերաբերյալ դասաժամերը՝ շեշտը դնելով երեխաների նկատմամբ բռնության արգելքի վերաբերյալ քննարկումներին,

[375] http://shamshyan.com/hy/article/2017/11/13/1082119/

4. բռնության դեպքերի վերաբերյալ հաղորդման հստակ պարտականություն սահմանել ուսուցիչների և դպրոցների աշխատակազմի համար:

ԳԼՈՒԽ 4. ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների ապահովումը և գործնականում դրանց իրացման երաշխիքների ստեղծումը իրավական պետության սկզբունքներից է: Նշված կատեգորիայի անձանց իրավունքների պաշտպանությունը պահանջում է հատուկ ուշադրություն: Ուստի, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում փախստականների և ապաստան հայցողների իրավունքների ապահովման կարևորությունը և դրան առնչվող մարտահրավերները 2017 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը նախաձեռնել է համապատասխան ուսումնասիրություն, որի արդյունքները ներկայացվել են *«Հայաստանի Հանրապետությունում փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ»* արտահերթ զեկույցում[376]:

Ինչպես արձանագրվել էր Արտահերթ զեկույցում՝ *«Ապաստան հայցող անձանց իրավունքների իրացման տեսանկյունից կարևոր է, որպեսզի Սահմանապահ զորքերն անհրաժեշտ գիտելիքներ ունենան ապաստանի ընթացակարգի, դրա հետ կապված՝ անձի իրավունքների ու պարտականությունների, ինչպես նաև իրենց լիազորությունների վերաբերյալ: Սա բխում է հենց միջազգային պահանջներից:»:*

Այս կապակցությամբ հարկ է ընդգծել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության[377], ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակի ծրագրերի շրջանակներում իրականացվել են փախստականների և ապաստան հայցողների պաշտպանության միջազգային և ՀՀ չափանիշների վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ, այդ թվում՝ ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի[378] ծառայողների համար: Դասընթացները կազմակերպվել են ՀՀ պետական սահմանի «Բագրատաշեն», «Գոգավան», «Բավրա», «Ագարակ» անցման կետերում, ինչպես նաև «Զվարթնոց» և «Շիրակ» օդանավակայաններում ծառայություն իրականացնող Սահմանապահ զորքերի ծառայողների համար: Դրանք հիմնականում վերաբերել են փախստականների և ապաստան հայցողների միջազգային պաշտպանության մեխանիզմներին և ներպետական օրենսդրական կարգավորումներին, ինչպես նաև ներկայացվել են 2016 թվականի ընթացքում Օրենքում կատարված փոփոխությունները և լրացումները: Դասընթացները կարևոր են եղել հատկապես այն առումով, որ դրանց մասնակցել են Սահմանապահ զորքերի իրավասու ներկայացուցիչներ, ովքեր պատասխանատու են դասընթացի առարկա հարցերի համար: Դրանց մասնակցել են նաև Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները:

Դասընթացների նպատակն է եղել բարձրացնել մասնակիցների իրազեկության աստիճանը ՀՀ միջազգային պարտավորությունների, երկրի տարածք մուտք գործելու, չվերադարձելիության սկզբունքի, ապաստանի ընթացակարգի հասանելիության, ապաստան հայցողների բացահայտման ու ուղղորդման ներպետական և միջազգային կարգավորումների վերաբերյալ:

---

[376]Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունում փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույցը:
Այսուհետև սույն բաժնում՝ Արտահերթ զեկույց: http://pashtpan.am/resources/ombudsman/uploads/files/publications/20f0503aafb55a1154e9ddd605d71bca.pdf:

[377]Այսուհետև սույն բաժնում՝ ՀԿԽԸ:

[378]Այսուհետև՝ սույն բաժնում Սահմանապահ զորքեր:

Նույն ծրագրի շրջանակներում 2017 թվականին իրականացվել են նաև կլոր սեղան քննարկումներ Սահմանապահ զորքերի՝ սահմանային վերահսկողության համար պատասխանատու ծառայողների, ինչպես նաև ոլորտի մյուս իրավասու պետական մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ: Հանդիպումներին մասնակցել են նաև Պաշտպանի աշխատակազմի, ՄԱԿ ՓԳՀ-ի, Եվրոպական սահմանային և ափերի անվտանգության գործակալության («ՖՐՈՆՏԵՔՍ»), ՀԿԽԸ-ի և Միգրացիոն պետական ծառայության ներկայացուցիչները: Քննարկման թեմաները հիմնականում վերաբերել են Կոնվենցիայի և Արձանագրության դրույթներին, փախստականների պաշտպանության հիմնական սկզբունքներին, ՄԱԿ ՓԳՀ-ի մանդատին, ապաստան հայցողների բացահայտմանը և ուղղորդմանը, ինչպես նաև սահմանի անցման կետերում փախստականների ընդունելությանը և աջակցությանը: Ներկայացվել են նաև ՀՀ Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքով Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունները, ինչպես նաև փախստականների և ապաստան հայցողների իրավունքների պաշտպանության ուղղությամբ ձեռնարկվող միջոցները: ՀԿԽԸ կողմից ներկայացվել են նաև կառույցի՝ ապաստան հայցողների և փախստականների համար թարգմանչական ծառայությունների ապահովմանն առնչվող գործառույթները:

Քննարկումները կարևոր են փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների վերաբերյալ Սահմանապահ զորքերի իրազեկության բարձրացման տեսանկյունից: Դրանք թույլ են տալիս ոչ միայն ուսումնասիրել ոլորտի օրենսդրական կարգավորումները, այլ նաև քննարկել գործնականում դրանց կիրառման առանձնահատկությունները, ինչն էլ դրական է անդրադառնում փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների ապահովման վրա: Ընդ որում, դրանք հենց այնպիսի թեմաներով դասընթացներ են, որոնք նախատեսված են Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի վերը նշված հանձնարարականով:

Դասընթացները կարևոր են նաև մասնակիցների միջև աշխատանքային արդյունավետ համագործակցություն հաստատելու տեսանկյունից: Խոսքը հատկապես վերաբերում է Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին և ԱԱԾ սահմանապահ զորքերի ծառայողներին: Այդ համագործակցության հիման վրա ներկայում իրականացվում է համատեղ աշխատանք՝ իրավունքների հնարավոր խախտումների վերաբերյալ համապատասխան ահազանգերի առկայության, տեղեկության փոխանակման անհրաժեշտության դեպքերում:

Հատկանշական է, որ իրավասու մարմինների կողմից Սահմանապահ զորքերի շրջանում իրազեկվածության աստիճանը բարձրացնող միջոցառումները կրում են շարունակական բնույթ:

Արտահերթ զեկույցում տեղ են գտել նաև փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների ապահովման առանձին ոլորտների վերաբերյալ բարձրացված հիմնական խնդիրներ և դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ: Դրանց մի մասը տեղ են գտել նաև սույն զեկույցում:

1. Փախստականների և ապաստան հայցողների իրավունքներին առնչվող ՀՀ օրենսդրությունը

Չնայած քննարկվող տարվա և դրան նախորդող տարիների ընթացքում փախստականների և ապաստան հայցողների իրավունքների ապահովմանն ու պաշտպանությանն առնչվող օրենսդրության զարգացումներին, ոլորտում դեռևս առկա են խնդիրներ, որոնք պահանջում են օրենսդրական լուծումներ: Դրանց անդրադարձ է կատարվել նաև Արտահերթ զեկույցի համապատասխան հատվածում: Կատարված ուսումնասիրությունների արդյունքում վեր հանված խնդիրները հիմնականում հետևյալն են՝

1) «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի[379] 9-րդ հոդված 1-ին մասով սահմանվում է չվերադարձելիության սկզբունքը, ըստ որի *արգելվում է փախստականին որևէ կերպ վերադարձնել այն տարածքների սահմանները, որտեղ նրա կյանքին կամ ազատությանը կարող է վտանգ սպառնալ ռասայական, կրոնական, ազգային, սոցիալական որոշակի խմբի պատկանելության, քաղաքական հայացքների կամ համատարած բռնության, արտաքին հարձակման, ներքին հակամարտությունների, մարդու իրավունքների զանգվածային խախտումների կամ հասարակական կարգը խախտող այլ լուրջ իրադարձությունների հիմքով:* Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը չի կարող արտաքսվել, վերադարձվել կամ հանձնվել այլ երկիր, որտեղ հիմնավոր պատճառներով վտանգ կա, որ նա կենթարկվի դաժան և անմարդկային կամ ստորացուցիչ վերաբերմունքի կամ պատժի, ներառյալ՝ խոշտանգումների:»:*

Նշվածի հետ կապված անընդունելի է մեջբերված պատճառների թվում կյանքի իրավունքին առնչվող բացառության բացակայությունը: Մասնավորապես, 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Ոչ ոք չի կարող արտաքսվել կամ հանձնվել օտարերկրյա պետությանը, եթե իրական սպառնալիք կա, որ տվյալ անձը կարող է այդ երկրում ենթարկվել **մահապատժի,** խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:»:* Նման մոտեցումը համահունչ է Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիայի 19-րդ 2-րդ մասի հոդվածի կարգավորումներին[380]:

2) Օրենքը, սահմանելով փախստականի հասկացությունը 6-րդ հոդվածի 1-ին մասով, արտացոլել է Կոնվենցիայի և Արձանագրության համապատասխան դրույթով ամրագրված հասկացությունը, այն է՝ *«Փախստական է համարվում այն օտարերկրյա քաղաքացին, որը ռասայական, կրոնական, ազգային, սոցիալական որոշակի խմբի պատկանելության կամ քաղաքական հայացքների համար հետապնդման ենթարկվելու հիմնավոր երկյուղի հետևանքով գտնվում է իր քաղաքացիության երկրից դուրս և չի կարող կամ նույն երկյուղի պատճառով չի ցանկանում օգտվել իր քաղաքացիության երկրի պաշտպանությունից, կամ նա, ով, չունենալով քաղաքացիություն և գտնվելով իր նախկին մշտական բնակության երկրից դուրս, չի կարող կամ այդ նույն երկյուղի պատճառով չի ցանկանում վերադառնալ այնտեղ:»:* Նույն մասի 2-րդ կետը վերաբերում է այն դեպքերին, երբ անձը լքել է իր քաղաքացիության կամ նախկին մշտական բնակության երկիրը

[379]Այսուհետև սույն բաժնում՝ Օրենք:

[380]Տե՛ս Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիայի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, http://www.europarl.europa.eu/charter/pdf/text_en.pdf:

համատարած բռնության, արտաքին հարձակման, ներքին հակամարտությունների, մարդու իրավունքների զանգվածային խախտումների կամ հասարակական կարգը խախտող այլ լուրջ իրադարձությունների պատճառով:

Օրենքը պաշտպանության որևէ այլ միջոց չի նախատեսում, և օրենսդրությունն ընդհանրապես չի սահմանում լրացուցիչ պաշտպանություն տրամադրելու կարգ, որը հնարավորություն կտար չվերադարձնելու սկզբունքով սահմանված հիմքերի առկայության դեպքում անձին նման պաշտպանություն և համապատասխան կարգավիճակ տալ՝ ապահովելով նրա անվտանգությունը Հայաստանի Հանրապետությունում: Հատկանշական է, որ Օրենքի 58-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ Ոստիկանությունը պատասխանատվություն է կրում ապաստանի տրամադրումը մերժելու մասին վերջնական որոշում ստացած օտարերկրյա քաղաքացու կացության կարգավիճակի հարցը ՀՀ օրենսդրությանը համապատասխան լուծելու համար: Սա հատկապես կարևորվում է այն դեպքերում, երբ ապաստանի տրամադրման մերժում ստացած անձի վերադարձն անհնարին է՝ պայմանավորված մարդու իրավունքների պաշտպանության միջազգային իրավունքի նորմերով:

Այս առումով, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի[381] վճիռներում, օրինակ, սահմանված է պետության հայեցողությունը հիմնավոր պատճառների առկայության դեպքում անձին թուլ չտալու մուտք գործել երկիր կամ արտաքսելու հարցում: Այնուամենայնիվ, դատարանը կարևորել է նաև դրա շրջանակներում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի արգելքի ապահովումը, որն ունի բացարձակ բնույթ: Մասնավորապես, Սայիդն ընդդեմ Նիդեռլանդների գործով 2005 թվականի հուլիսի 5-ի վճռի 46-րդ կետի համաձայն՝ *պետությունները, հաշվի առնելով միջազգային իրավունքի նորմերը և պայմանագրային պարտավորությունները, իրավունք ունեն վերահսկել օտարերկրացիների մուտքը, բնակությունը և արտաքսումը (...): Այնուամենայնիվ, պետության կողմից արտաքսումը կարող է առաջացնել խնդիրներ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի՝ խոշտանգումների արգելքի լույսի ներքո և պատասխանատվություն տվյալ պետության համար, եթե առկա են լուրջ հիմքեր, որ արտաքսվելու դեպքում անձը կարող է ենթարկվել 3-րդ հոդվածին հակասող վերաբերմունքի*[382]:

Ավելին, եթե Կոնվենցիան նախատեսում է որոշ բացառություններ չվերադարձելիության սկզբունքից, ապա Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ 1984 թվականի կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ *«Ոչ մի մասնակից պետություն չպետք է որևէ անձի արտաքսի, վերադարձնի կամ հանձնի մեկ այլ պետության, եթե լուրջ հիմքեր կան ենթադրելու, որ նրան կարող է սպառնալ խոշտանգումների ենթարկվելու վտանգ:»*[383]:

Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին 2002 թվականի կոնվենցիայի 89-րդ հոդվածի 1-ին մասի զ) կետով նախատեսված է, որ «*Հանձնում չի կատարվում, եթե ծանրակշիռ հիմքեր*

[381]Այսուհետև սույն բաժնում՝ Եվրոպական դատարան:

[382]Տե՛ս Սայիդն ընդդեմ Նիդերլանդների (Said v. The Netherlands) գործով 2005 թվականի հուլիսի 5-ի վճիռը, գանգատ թիվ 2345/02, կետ 46: Տե՛ս Մ.Ա-ն ընդդեմ Շվեյցարիայի (M.A. v. Switzerland) գործով 2014թ. նոյեմբերի 18-ի վճիռը, գանգատ թիվ 52589/13, կետ 52:

[383]Տե՛ս 1984 թվականի դեկտեմբերի 10-ի ՄԱԿ-ի Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին մասը, http://www.ohchr.org/documents/professionalinterest/cat.pdf :

կան ենթադրելու, որ հանձնման վերաբերյալ հարցումը կապված է ռասայի, սեռի, դավանանքի, էթնիկական պատկանելության կամ քաղաքական հայացքների համար անձին հետապնդելու հետ:»[384]*:*

Նշված դիրքորոշման, ներպետական օրենսդրության և դրա կիրառման փորձի վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել, որ հնարավոր են դեպքեր, երբ անձը, չստանալով փախստականի կարգավիճակ կամ այդ կարգավիճակի դադարման դեպքում պետք է արտաքսվի ծագման երկիր: Այնուամենայնիվ, դա անհնար է, եթե կա հիմնավոր վտանգ, որ նա կենթարկվի խոշտանգման, դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

Գործնականում այս խնդրի լուծման համար անհրաժեշտ իրավական հիմքերի բացակայությունը տվյալ անձանց, իրավական պաշտպանվածության առումով, թողնում է անապահով վիճակում: Միջազգային իրավաբանությունը նման պարագայում սահմանում է լրացուցիչ պաշտպանության տրամադրման հնարավորություն: Օրինակ՝ Վրաստանում, *բացի փախստականի կարգավիճակից, տրամադրվում է նաև* ***մարդասիրական կարգավիճակ,*** *որը ժամանակավորապես տրվում է այն անձանց, ովքեր չեն համապատասխանում փախստականի կարգավիճակի համար սահմանված չափանիշներին, սակայն ստիպված լքել են իրենց երկիրը բռնության, արտաքին ագրեսիայի, բռնազավթման, ներքին հակամարտությունների, մարդու իրավունքների և հասարակական կարգի զանգվածային խախտումների հետևանքով, ինչպես նաև այն անձանց, որոնք հարևան երկրներից են եկել և ապաստան են փնտրում բնական աղետներից*[385]*:*

Պաշտպանության նման մեխանիզմ ամրագրված է նաև Պորտուգալիայի օրենսդրությամբ: Մասնավորապես, *սուբսիդիար պաշտպանություն է նախատեսված այն ապաստան հայցողների համար, ում նկատմամբ կիրառելի չեն փախստականի կարգավիճակի համար անհրաժեշտ չափանիշները, սակայն վերջիններս չեն կարող վերադառնալ իրենց քաղաքացիության կամ մշտական բնակության երկիր՝ մարդու իրավունքների զանգվածային խախտումների կամ զգալի վնաս կրելու վտանգի պատճառով*[386]*:* Նշվածը հնարավորություն է տալիս չվերադարձնելու իրավունքից օգտվող անձանց կոնկրետ իրավական կարգավիճակով բնակվել օտար երկրում և ստանալ միջազգային պաշտպանություն իր՝ ոչ արդյունավետ ազգային պաշտպանության փոխարեն:

Ուստի անհրաժեշտ է՝

1. Օրենքի՝ չվերադարձելիության սկզբունքն ամրագրող համապատասխան հոդվածում ներառել նաև մահապատժի ենթարկվելու վտանգի առկայության պարագայում անձի արտաքսման կամ հանձման արգելքը,

2. ՀՀ օրենսդրությամբ ամրագրել անձանց նոր իրավական կարգավիճակ, որը հնարավորություն կտա լրացուցիչ պաշտպանություն սահմանել փախստականի կարգավիճակի համար անհրաժեշտ չափանիշներին չբավարարող, սակայն

---

[384]Տե՛ս 2002 թվականի Քաղաքացիական, ընտանեկան եվ քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին կոնվենցիայի 89-րդ հոդվածի 1-ին մասի գ) կետը, http://www.parliament.am/library/APH/195.pdf:

[385]Տե՛ս «Փախստականի և մարդասիրական կարգավիճակի մասին» Վրաստանի օրենքի 4-րդ հոդվածը, http://mra.gov.ge/res/docs/2014022416564743748.pdf:

[386]Տե՛ս 27/2008 Ապաստանի օրենքի 7-րդ հոդվածը, http://www.refworld.org/docid/48e5c13c8.html:

չվերադարձնելու սկզբունքի պաշտպանությունից օգտվող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար:

2. Ապաստան հայցողների իրավունքների ապահովումը ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության Միգրացիոն պետական ծառայության[387] «Հատուկ կացարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունում

Միգրացիոն պետական ծառայության «Հատուկ կացարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունում[388] բնակվող ապաստան հայցողների և նրանց ընտանիքի անդամների պայմանների, ինչպես նաև նրանց տրամադրվող ծառայությունների համապատասխանությունը միջազգային և ներպետական օրենսդրության չափորոշիչներին ուսումնասիրելու նպատակով Պաշտպանի իրավասու ներկայացուցիչները 2017 թվականի ընթացքում այցելել են Կացարան: Այցի ընթացքում արձանագրվել են անհապաղ լուծում պահանջող խնդիրներ մի շարք խնդիրներ, որոնց մի մասը ներկայացվում է ստորև՝

1) Տնօրինության կողմից վարվում է «Կարգապահության և անվտանգության կանոնակարգ» մատյանը, որում կատարվում են գրառումներ Կացարանում տեղավորելու և կենսապահովման պայմաններ տրամադրելու կարգի 12.1-րդ կետով սահմանված՝ Կացարանում բնակության ներքին կարգապահական կանոնները խախտած ապաստան հայցողի՝ տնօրենի կողմից գրավոր նախազգուշացումները խախտելու հետևանքների վերաբերյալ: Հատկանշական է, որ նույն կետի համաձայն՝ *բնակության ներքին կարգապահական կանոնների երկու և ավելի անգամ խախտման դեպքում՝ ապաստան հայցողին տրված ուղեգիրը, կենտրոնի տնօրենի առաջարկության հիման վրա, ուժը կորցրած է ճանաչվում Միգրացիոն պետական ծառայության կողմից:*

Կացարանում բնակության ներքին կարգապահական կանոնները սահմանվում են ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2016 թվականի օգոստոսի 10-ի N 10-Ն հրամանով, որն արձանագրում է Կացարանում բնակվող ապաստան հայցողների իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև դրանց չկատարման դեպքում առաջացող հետևանքները: Հաշվի առնելով, որ նշված հրամանով սահմանված պարտականությունները ապաստան հայցողների կողմից չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու պարագայում նրանք կարող են զրկվել Կացարանում բնակվելու իրավունքից՝ դրանց վերաբերյալ տեղեկացված լինելու իրավունքը և գործնականում դրա ապահովումը չափազանց կարևոր է:

Այցի ընթացքում արձանագրվել է, որ գործնականում ապաստան հայցողներին նշված ներքին կարգապահական կանոնների ծանոթացումը իրականացվում է Կացարան մուտք գործելու պահին, ինչի առնչությամբ ապաստան հայցողը ստորագրում է Կացարան մուտքն ու ելքը արձանագրող գրանցամատյանում: Այնուամենայնիվ, առկա է ներքին կարգապահական կանոնների միայն հայերեն տարբերակ: Սա նշանակում է, որ ապաստան հայցողների կողմից դրանց ծանոթանալը կկրի ձևական բնույթ, եթե չապահովվի դրանց ներկայացումը ապաստան հայցողներին իրենց համար հասկանալի լեզվով: Սա առաջացնում է ինչպես անձի կողմից իր իրավունքների և

[387]Այսուհետև սույն բաժնում՝ Միգրացիոն պետական ծառայություն:
[388]Այսուհետև սույն բաժնում՝ Կացարան:

պարտականությունների, այնպես էլ դրանից առաջացող հետևանքների դեպքում հնարավոր քայլերի վերաբերյալ իրեն հասկանալի լեզվով տեղեկանալու իրավունքի պատշաճ իրացմանն առնչվող խնդիր: Ավելին, տեղանքի ուսումնասիրման արդյունքում արձանագրվել է նաև, որ Կացարանի ընդհանուր օգտագործման կամ այլ երևացող հատվածներում փակցնելու կամ այլ ճանապարհով ևս ապաստան հայցողները չեն ծանուցվում ներքին կարգապահական կանոնների մասին:

Նշված խնդիրը պայմանավորված է հիմնականում թարգմանության բացակայությամբ: Մասնավորապես, քննարկվող փաստաթղթերը Կացարանում բնակվող ապաստան հայցողներին իրենց համար հասկանալի լեզվով գրավոր չներկայացնելուց զատ, բացակայում է նաև բանավոր թարգմանության հնարավորությունը: Սա պայմանավորված է նաև տեղում համապատասխան թարգմանության մասնագետի հաստիքի բացակայությամբ: Վարչակազմի կողմից նշվել է, որ ապաստան հայցող անձանց հետ կենցաղային շփումը անգլերեն, ռուսերեն կամ հասկանալի որևէ այլ լեզվով, այնուամենայնիվ, իրականացվում է: Ներկայացված խնդիրը գործնականում ուղղակիորեն կարող է նպաստել Կացարանում բնակվող ապաստան հայցողների իրավունքների ոչ պատշաճ ապահովմանը:

Հատուկ հաստատություններում պահվող ապաստան հայցողների հասկանալի լեզվով իրենց իրավունքների և պարտականությունների մասին տեղեկացված լինելու իրավունքին անդրադարձել է նաև Եվրոպական դատարանը: Մ.Ս.Ս.-ն ընդդեմ Բելգիայի և Հունաստանի գործով 2011 թվականի հունվարի 21-ի վճռում, դատարանն արձանագրել է, որ *ապաստանի ընթացակարգի խնդիրներից են նաև տրամադրված տեղեկությունների ոչ հստակ լինելը, պետական մարմինների և ապաստան հայցողի միջև հաղորդակցության ոչ պատշաճ համակարգը, ինչը պայմանավորված է նաև թարգմանության համար մասնագետների պակասով*[389]*:*

Այնուամենայնիվ, հարկ է նշել նաև, որ ներկայումս Կացարանում անցկացվում են հայոց լեզվի անվճար դասընթացներ՝ շաբաթական երկու անգամ: Այցերը հնարավորություն են տվել արձանագրել, որ բնակիչները որոշակիորեն կարողանում են միասին հաղորդակցվել հենց հայերենով:

2) Մեկ այլ խնդիր վերաբերում է Կացարանում ապաստան հայցող անձանց և նրանց ընտանիքի անդամների կենսաապահովման պայմաններին: Մասնավորապես, ապաստան հայցողներին Կացարանում տեղավորելու և կենսաապահովման պայմաններ տրամադրելու կարգի 19-րդ կետի համաձայն՝ *Կացարանում տեղավորված ապաստան հայցողներին կենտրոնի տնօրինության կողմից տրամադրվում են կենսաապահովման պայմաններ՝ սնունդ (օրական երեք անգամ), սպիտակեղեն, անձնական հիգիենայի պարագաներ, անհրաժեշտության դեպքում՝ հագուստ և կոշիկ:* Նույն կարգի 21-րդ կետով սահմանվում է, որ *Կացարանում տեղավորված ապաստան հայցողներին օրական հատկացվող սննդամթերքի չափաքանակները և նրանց անկողնային պարագաներով ապահովումը հաշվարկվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի «Ծերերի և հաշմանդամների խնամքի և սոցիալական սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» N 730-Ն որոշման*

[389]Տե՛ս Մ.Ս.Ս.-ն ընդդեմ Բելգիայի և Հունաստանի (M.S.S. v. Belgium and Greece) գործով 2011թ. հունվարի 21-ի վճիռը, գանգատ թիվ 30696/09, կետ 301:

համապատասխանաբար NN 2 և 4 հավելվածներով սահմանված նվազագույն չափորոշիչներով:

Քննարկվող հարցի կապակցությամբ խնդիրն առնչվում է առաջին հերթին սննդին և ապաստան հայցողներին տրամադրվող սննդատեսակներին: Մասնավորապես, առանց հաշվի առնելու Կացարանում բնակվող ապաստան հայցողների կրոնական ու ազգային պատկանելությունը և դրանով պայմանավորված որոշակի սննդատեսակներից օգտվելու անհնարինությունը՝ ապաստան հայցողներին տրամադրվում է նույն տեսակի սնունդ: Այնուամենայնիվ, գործնականում այս խնդիրը փորձ է արվում լուծել՝ քննարկելով սննդատեսակը բոլոր բնակիչների հետ: Չնայած դրան, այս դեպքում նույնպես խնդիրը շարունակվում է մնալ այդպիսին:

Այս խնդիրը բարձրացվել է նաև Կացարանում բնակվող ապաստան հայցողների հետ ունեցած առանձնազրույցների ընթացքում: Մասնավորապես, վերջիններս նշել են, որ իրենց կրոնական առանձնահատկություններով պայմանավորված հաճախ ունենում են խնդիրներ մատուցվող սննդատեսակների հետ կապված:

Հաջորդ հարցը վերաբերում է Կացարանի բնակիչների սանիտարահիգիենիկ պայմաններին: Առանձնազրույցների ընթացքում ապաստան հայցողների կողմից հնչել են բողոքներ՝ կապված խոհանոցի սանիտարական վիճակի հետ (օրինակ՝ խոհանոցում միջատների առկայությունը):

Հատուկ հաստատություններում պահվող ապաստան հայցող անձանց տրամադրվող սննդի չափորոշիչներ և առանձնահատկություններ են սահմանվել նաև ՄԱԿ ՓԳՀ-ի «Ապաստան հայցող անձանց ազատությունից զրկմանը և դրա այլընտրանքներին առնչվող չափանիշների և ստանդարտների վերաբերյալ» 2012 թվականի ուղեցույցում: Մասնավորապես, փաստաթղթի 48-րդ կետի (xi) պարբերությունը սահմանում է, որ *«Կալանավորվածներին պետք է տրամադրվի **սննդարար արժեք ունեցող**՝ տարիքին, առողջական վիճակին և մշակութային/կրոնական առանձնահատկություններին համապատասխան **սնունդ**: Հղի կանանց և կերակրող մայրերի համար պետք է ապահովվի համապատասխան սննդակարգ: **Սննդի պատրաստման և ընդունման տարածքները պետք է համապատասխանեն սանիտարահիգիենիկ տարրական պահանջներին:»:***

Ապաստան հայցող անձանց կացարաններում սանիտարահիգիենիկ պայմանների հետ կապված հարցին անդրադարձ է կատարել նաև Եվրոպական դատարանը: Իր՝ Մ.Ս.Ս.-ն ընդդեմ Բելգիայի և Հունաստանի գործով 2011 թվականի հունվարի 21-ի վճռում դատարանի արտահայտած դիրքորոշման համաձայն՝ *միգրանտների համար նախատեսված հատուկ կացարաններում առկա գերծանրաբեռնվածությունը, ինչպես նաև **ոչ բավարար սանիտարահիգիենիկ պայմանների ապահովումը** կարող է հանգեցնել պետության կողմից Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով սահմանված խոշտանգումների արգելման սկզբունքի խախտման*[390]:

Ուստի անհրաժեշտ է՝

1. «Հատուկ կացարանում» բնակվող Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցող անձանց հասկանալի լեզվով գրավոր և բանավոր եղանակով

[390]Տե՛ս Մ.Ս.Ս.-ն ընդդեմ Բելգիայի և Հունաստանի (M.S.S. v. Belgium and Greece) գործով 2011թ. հունվարի 21-ի վճիռը, գանգատ թիվ 30696/09, կետ 222:

տրամադրել տեղեկություններ իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ,

2. կացարանում ապաստան հայցողների սննդի տրամադրման հիմքում դնել յուրաքանչյուրի ազգային և կրոնական պատկանելության առանձնահատկությունները, ինչպես նաև ֆիզիկական վիճակը: Կացարանում, մասնավորապես խոհանոցում, ապահովել պատշաճ սանիտարահիգիենիկ պայմաններ:

3. Ապաստան հայցողների իրավունքների ապահովումը Միգրացիոն պետական ծառայության որոշումների կայացման շրջանակներում

Սույն զեկույցի մշակման շրջանակներում վերլուծության են ենթարկվել 2017 թվականի ընթացքում Միգրացիոն պետական ծառայության՝ ապաստանի տրամադրումը մերժելու, ինչպես նաև փախստական ճանաչելու և ապաստան տրամադրելու վերաբերյալ մի քանի որոշումներ՝ պարզելու դրանց համապատասխանությունը ՀՀ միջազգային պարտավորություններին և ներպետական օրենսդրությանը: Քննարկվող ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում ապաստան է հայցել 151 անձ, իսկ փախստականի կարգավիճակ է ստացել 99 անձ[391]:

Միգրացիոն պետական ծառայության կողմից ընդունված՝ փախստական ճանաչելու և ապաստան տրամադրելու մասին որոշումների ուսումնասիրությունը վկայում է, որ դրանցում հաշվի են առնվում ապաստան հայցողի ծագման երկրում առկա վիճակի վերաբերյալ հանրահայտ և հավաստի աղբյուրներից ձեռք բերված տեղեկությունները: Այդ որոշումներում գնահատվում է նաև ապաստան հայցողի հետ անցկացված հարցազրույցների արդյունքում ձեռք բերված տեղեկությունների արժանահավատությունը և անդրադարձ է կատարվում չվերադարձելիության սկզբունքի կիրառմանը: Որոշումները պարունակում են նաև փաստերին, ինչպես նաև միջազգային և ներպետական համապատասխան իրավակարգավորումներին հղումներ:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ուսումնասիրվել են նաև Միգրացիոն պետական ծառայության կողմից դիմումների քննության ժամկետները: Օրինակ՝ Սիրիայի քաղաքացիների կողմից ներկայացված՝ ապաստանի դիմումները քննության են առնվել հնարավոր սեղմ ժամկետներում: Հաշվի առնելով, որ դրանք եղել են ակնհայտ հիմնավոր հայցեր, կապված Սիրիայում տեղի ունեցող ներքին հակամարտությունների հետ, դա հիմք է հանդիսացել Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա անձին ճանաչել փախստական: Հատկանշական է, որ ապաստանի հայց ներկայացրած այդ անձանցից բոլորը ստացել են փախստականի կարգավիճակ:

Քննարկվող ժամանակահատվածում 14 ապաստան հայցողի վերաբերյալ կայացվել է ապաստանի տրամադրումը մերժելու մասին որոշում, որոնք ենթարկվել են ուսումնասիրության:

2017 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում ապաստանի տրամադրումը մերժելու մասին Միգրացիոն պետական ծառայության որոշումների վերաբերյալ ՀՀ դատարանները կայացրել են 17 որոշում և վճիռ, որոնցից 2-ը բավարարվել

[391]Տե՛ս Միգրացիոն պետական ծառայության պաշտոնական կայքէջը, http://www.smsmta.am/?menu_id=151:

է ամբողջությամբ, իսկ 1-ը մասնակի: Մնացած որոշումները մերժվել են դատարանի կողմից[392]:

Միգրացիոն պետական ծառայության՝ Հայաստանի Հանրապետությունում ապաստանի տրամադրումը մերժելու մասին որոշումների ուսումնասիրման արդյունքում վեր են հանվել մի շարք խնդիրներ, որոնք արձանագրվել էին նաև Արտահերթ զեկույցում:

Մասնավորապես, հատուկ ուշադրություն է դարձվել այդ որոշումների հիմնավորվածությանը: Համաձայն Օրենքի 52-րդ հոդվածի 3-րդ մասի՝ *«Միգրացիոն պետական ծառայությունը ապաստանի տրամադրման որոշում կայացնելիս պետք է հիմնվի նաև ապաստան հայցողի ծագման երկրի մասին առկա տեղեկությունների վրա, որոնք պետք է լինեն ստույգ, արդի և տարբեր վստահելի աղբյուրներից ձեռք բերված (…):»:*

Անդրադառնալով ծագման երկրի վերաբերյալ տեղեկության հավաստիությանը՝ Եվրոպական դատարանը Սուֆին և Էլմին ընդդեմ Միացյալ Թագավորության գործով 2011 թվականի հունիսի 28-ի վճռում նշել է, որ *ծագման երկրի վերաբերյալ տեղեկության կշիռը գնահատելիս պետք է հաշվի առնել աղբյուրը, մասնավորապես՝ անկախությունը, հավաստիությունը և օբյեկտիվությունը*: Անդրադառնալով զեկույցներին՝ Եվրոպական դատարանն արձանագրել է, որ *պետք է հաշվի առնել դրանց հեղինակությունը և հեղինակի համբավը, քննությունների լրջությունը, որոնց հիման վրա կազմվել են զեկույցները, եզրակացությունների հետևողականությունը և դրանց հաստատումն այլ աղբյուրների կողմից[393]:*

Եվրոպական դատարանը, անդրադառնալով ապաստանի դիմումի քննարկման ընթացքում տեղեկությունների ձեռքբերմանը և դրանց համապարփակ վերլուծությանը, հատկապես կարևորել է այն դեպքերը, երբ անձի վերաբերյալ մերժման որոշում կայացնելու և նրան արտաքսելու դեպքում կա հիմնավոր վտանգ, որ նա կենթարկվի խոշտանգման, վատ, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Մասնավորապես, Դատարանը Աբդուլխանին և Քարիմնիան ընդդեմ Թուրքիայի գործով 2009 թվականի սեպտեմբերի 22-ի վճռում նշել է, որ *Կոնվենցիայի 13-րդ հոդվածի ներքո համապատասխան արդյունավետ միջոցի հասկացությունը պահանջում է հատկապես այն բողոքի անկախ և լուրջ քննություն՝ համաձայն որի առկա են լուրջ հիմքեր հավատալու, որ դիմողին համապատասխան երկիր արտաքսելու դեպքում առաջ կգա 3-րդ հոդվածին հակասող վերաբերմունքի դրսևորման լուրջ ռիսկ[394]:*

Ավելին, Եվրոպական դատարանը Մ.Ա.-ն ընդդեմ Շվեյցարիայի գործով 2014 թվականի նոյեմբերի 18-ի վճռում արձանագրել է, որ պետությունները, հաշվի առնելով միջազգային իրավունքի նորմերը և պայմանագրային պարտավորությունները, իրավունք ունեն վերահսկել օտարերկրացիների մուտքը, բնակությունը և արտաքսումը[395]: ***Այնուամենայնիվ, պետության կողմից արտաքսումը կարող է առաջացնել խնդիրներ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի՝ խոշտանգումների արգելման լույսի ներքո և պատասխանատվություն տվյալ պետության համար, եթե առկա***

[392]Տե՛ս Միգրացիոն պետական ծառայության պաշտոնական կայքէջը, http://www.smsmta.am/?menu_id=141:

[393]Տե՛ս Սուֆին և Էլմին ընդդեմ Միացյալ Թագավորության (Sufi and Elmi v. The United Kingdom) գործով 2011թ. հունիսի 28-ի վճիռը, գանգատ թիվ 8319/07 և 11449/07, կետ 230:

[394]Տե՛ս Աբդուլխանին և Քարիմնիան ընդդեմ Թուրքիայի (Abdolkhani and Karimnia v. Turkey) գործով 2009թ. սեպտեմբերի 22-ի վճիռը, գանգատ թիվ 30471/08, կետ 108:

[395]Տե՛ս նաև Ռ.Ց.-ն ընդդեմ Շվեդիայի (R.C. v. Sweden) գործով 2010 թվականի մարտի 9-ի վճիռը, գանգատ թիվ 41827/07, կետ 48:

են լուրջ հիմքեր, որ անձն արտաքսվելու դեպքում կարող է ենթարկվել 3-րդ հոդվածին հակասող վերաբերմունքի[396]:

Հիմք ընդունելով Եվրոպական դատարանի տրամաբանությունը քննարկվող հարցի կապակցությամբ, կարելի է եզրակացնել, որ ապաստանի դիմումի քննարկման ընթացքում պետությունը պետք է իրականացնի ձեռքբերված հավաստի և վերաբերելի տեղեկության ամբողջական վերլուծություն: Ավելին, այն դեպքերում, երբ կա կոնվենցիայով նախատեսված 3-րդ հոդվածի խախտման հիմնավոր վտանգ, պետական իրավասու մարմինը պետք է ձեռնարկի առավել արդյունավետ միջոցներ դա բացառելու ուղղությամբ:

ՄԱԿ ՓԳՀ-ի 2011 թվականի դեկտեմբերին Կոնվենցիայի և Արձանագրության հիման վրա կազմված Փախստականի կարգավիճակի տրամադրման ընթացակարգի և չափանիշների վերաբերյալ ձեռնարկի և ուղեցույցի Միջազգային պաշտպանության վերաբերյալ 5-րդ ուղեցույցի 35-րդ պարբերության համաձայն՝ *«(…) Ծագման երկրի վերաբերյալ մանրամասն տեղեկությունը պարտադիր է պարզելու համար, թե արդյոք հետապնդման վախը օբյեկտիվորեն հիմնավոր է:»[397]:*

Անդրադառնալով ծագման երկրի վերաբերյալ տեղեկության հավաքագրման հետ կապված հարցին՝ ՄԱԿ ՓԳՀ-ի Ծագման երկրի վերաբերյալ տեղեկություն. դեպի ընդլայնված համագործակցություն ծրագրի շրջանակներում 2004 թվականի փետրվարին ընդունված փաստաթղթի 1-ին պարբերության համաձայն՝ *այն վերաբերում է ծագման երկրի վերաբերյալ տեղեկություն եզրույթին և միտված է բացահայտելու ինչպես պետությունների, այնպես էլ ՄԱԿ ՓԳՀ-ի և պետությունների միջև հնարավոր համագործակցության ուղիները՝ առավել համակարգային եղանակով ընդունված չափանիշների հիման վրա տեղեկություններ փոխանակելու համար:* Այս փաստաթղթի 9-րդ պարբերության համաձայն՝ *«Ծագման երկրի վերաբերյալ տեղեկությունն անհրաժեշտ է ապաստանի դիմումին առնչվող ընդհանուր և մասնավոր հանգամանքները գնահատելու համար: Որոշում կայացնող մարմինը պետք է գնահատի դիմումատուի խնդրանքը և վստահելիությունը, ինչպես նաև նրա «պատմությունը» ծագման երկրում հայտնի իրավիճակի համատեքստում:»:* Ավելին, Իրավական երաշխիքները, չափանիշները և սահմանափակումները գլխի 22-ից 50-րդ պարբերություններով սահմանվում են ծագման երկրի վերաբերյալ տեղեկությունների հավաքագրման, օգտագործման և դրանց հիման վրա փախստականի կարգավիճակի տրամադրման վերաբերյալ որոշումների կայացման վերաբերյալ ***Չփարատված կասկածները հօգուտ դիմումատուի մեկնաբանելուն, Աղբյուրների ընտրությանը և գնահատմանը, Տեղեկությանը և դրա աղբյուրների մատչելիությանը, Ծագման երկրներում տեղեկության աղբյուրներին, Անձնական տվյալների պաշտպանությանը, Տեղեկությունը տրամադրողի արժանահավատությանը և հեղինակությանն առնչվող սկզբունքներին[398]:***

Եվրոպական խորհրդարանի և խորհրդի 2013 թվականի հունիսի 26-ի 2013/32/EU Միջազգային պաշտպանության շնորհման և դադարեցման միասնական

---

[396]Տե՛ս Մ.Ա-ն ընդդեմ Շվեյցարիայի (M.A. v. Switzerland) գործով 2014թ. նոյեմբերի 18-ի վճիռը, գանգատ թիվ 52589/13, կետ 52:

[397]Տե՛ս ՄԱԿ ՓԳՀ-ի 2011 թվականի դեկտեմբերին Կոնվենցիայի և Արձանագրության հիման վրա կազմված Փախստականի կարգավիճակի տրամադրման ընթացակարգի և չափանիշների վերաբերյալ ձեռնարկի և ուղեցույցի Միջազգային պաշտպանության վերաբերյալ 5-րդ ուղեցույցի 35-րդ պարբերությունը, http://www.unhcr.org/3d58e13b4.pdf:

[398]Տե՛ս ՄԱԿ ՓԳՀ-ի 2004 թվականի փետրվարի Ծագման երկրի վերաբերյալ տեղեկություն. դեպի ընդլայնված համագործակցություն ծրագրի շրջանակներում ընդունված փաստաթղթի 1-ին, 9-րդ և 22-ից 50-րդ պարբերությունները, http://www.refworld.org/pdfid/403b2522a.pdf:

ընթացակարգերի վերաբերյալ վերանայված դիրեկտիվի 39-րդ կետի համաձայն՝ *«Պարզելու համար արդյոք դիմումատուի ծագման երկրում գերակայում է անորոշ վիճակ, անդամ պետությունները պետք է իրականացնեն հստակ և արդի տեղեկության հավաքագրում այնպիսի աղբյուրներից, ինչպիսիք են՝ Ապաստանի աջակցման եվրոպական գրասենյակը, ՄԱԿ ՓԳՀ-ն, Եվրոպայի խորհուրդը և այլ համապատասխան միջազգային կազմակերպությունները:»*[399]:

Ծագման երկրի վերաբերյալ տեղեկության որակն ու ճշգրտությունը կարևորվում է նաև Ապաստանի աջակցման եվրոպական գրասենյակի կողմից: Վերջինիս, որպես ծագման երկրի վերաբերյալ տեղեկության հավաքագրման ոլորտում կարևոր չափորոշիչ, առանձնացնում է *նպատակային, վերաբերելի, հավաստի, ճշգրիտ և արդի տեղեկության թափանցիկ և անաչառ հավաքագրումը*[400]: Ավելին, կառույցի կողմից մշակվել է նաև տեղեկությունների հավաքագրման և արձանագրման մեթոդաբանություն, որի կարևոր ուղղություններից է անհրաժեշտության դեպքում ծագման երկրի վերաբերյալ հավելյալ տեղեկության հավաքագրումը, հետազոտության աղբյուրների հավաստիության ստուգումն ու գնահատումը և այլն[401]:

Նշյալ ոլորտի վերաբերյալ հրապարակվել են նաև մի շարք ձեռնարկներ: Մասնավորապես, Ավստրիական կարմիր խաչի ընկերության, ինչպես նաև Ծագման երկրի և ապաստանի դիմումի հետազոտման ու փաստաթղթավորման Ավստրիական կենտրոնի «Ծագման երկրի վերաբերյալ տեղեկության հետազոտումը» ձեռնարկում առանձնացվում են ծագման երկրի մասին տեղեկության որակի չափորոշիչները, ինչպես նաև դրանց հետազոտման և կիրառման միջազգային սկզբունքները: Մասնավորապես, *որպեսզի ծագման երկրի մասին տեղեկությունը համարվի որակյալ, այն պետք է լինի վերաբերելի, հավաստի, անաչառ, ճշգրիտ, արդի, թափանցիկ և թիրախային:* Համաձայն նշյալ ձեռնարկի՝ *տեղեկատվությունը պետք է հետազոտվի և կիրառվի պահպանելով չեզոքության, անաչառության, տվյալների պաշտպանության, հանրային տեղեկության օգտագործման և տեղեկության հասանելիության մասով կողմերի հավասարության սկզբունքները*[402]:

Ծագման երկրի վերաբերյալ տեղեկության օգտագործումը փախստականի կարգավիճակի տրամադրման հարցում. քննադատող հեռանկարները 2009 թվականի մայիսի փաստաթղթի Ծագման երկրի վերաբերյալ տեղեկություն որպես մերժման որոշումների հիմք գլխի Առաջարկություններ բաժնի 2-րդ պարբերության համաձայն՝ *«Ծագման երկրի վերաբերյալ տեղեկությունը պետք է օգտագործվի խնդիրները վեր հանելու և դիմումատուի վերաբերյալ հավաքագրված տվյալների հավաստիությունը ստուգելու, ինչպես նաև հետագա ռիսկերը գնահատելու և անձի՝ ծագման երկիր վերադարձնելու հարցը որոշելու նպատակով:»:* Ավելին, 8-րդ պարբերությամբ

---

[399]Տե՛ս Եվրոպական խորհրդարանի և Եվրոպայի միության խորհրդի 2013 թվականի հունիսի 26-ի 2013/32/EU դիրեկտիվայի 39-րդ կետը, http://eurlex.europa.eu/legalcontent/EN/TXT/PDF/?uri=CELEX:32013L0032&from=EN:

[400]Տե՛ս Ապաստանի աջակցման եվրոպական գրասենյակի պաշտոնական կայքէջը, https://www.easo.europa.eu/country-origin-information:

[401]Տե՛ս Ապաստանի աջակցման եվրոպական գրասենյակի Ծագման երկրի վերաբերյալ տեղեկության հավաքագրման մեթոդաբանությունը, https://coi.easo.europa.eu/administration/easo/PLib/EASO_COI_Report_Methodology.pdf:

[402]Տե՛ս Ավստրիական կարմիր խաչի ընկերության, ինչպես նաև Ծագման երկրի և ապաստանի դիմումի հետազոտման ու փաստաթղթավորման Ավստրիական կենտրոնի 2013 թվականի «Ծագման երկրի վերաբերյալ տեղեկության հետազոտումը» ձեռնարկը, էջ 30, https://www.coi-training.net/handbook/Researching-Country-of-Origin-Information-2013-edition-ACCORD-COI-Training-manual.pdf:

սահմանվում է, որ *«Անհրաժեշտ է մշակվել գործնականում ծագման երկրի վերաբերյալ տեղեկության օգտագործման մասին հատուկ ուղեցույցներ, որոնք պետք է կիրառվեն ապաստանի քաղաքականության իրականացման, ինչպես նաև հիմնական վերապատրաստումների և հավատարմագրման ընթացակարգերի ընթացքում (…):»*[403]:

Այնուամենայնիվ, Միգրացիոն պետական ծառայության՝ ապաստանի տրամադրումը մերժելու մասին որոշումների ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրել, որ անհրաժեշտ է կատարելագործել ապաստան հայցողների ծագման երկրի վերաբերյալ տեղեկության ձեռք բերման աշխատանքները և ընդլայնել ապաստան հայցողների ծագման երկրի վերաբերյալ տեղեկության աղբյուրների շրջանակը՝ որոշումների հիմնավորվածությունը բարձրացնելու նպատակով: Գործնականում որոշումների մեծ մասում օգտագործված տեղեկությունները հաճախ թարմ չեն (ունեն նվազագույնը 3-ամսյա վաղեմություն): Ինչպես վկայում է միջազգային փորձի ուսումնասիրությունը՝ ծագման երկրի վերաբերյալ ձեռքբերված տեղեկությունները պետք է լինեն թարմ, իսկ աղբյուրների շրջանակը՝ լայն, որպեսզի առավելագույնս ապահովվի որոշումների հիմնավորվածությունը:

Նշված պահանջների պատշաճ իրականացման համար անհրաժեշտ է առաջին հերթին սահմանել տեղեկությունների ձեռքբերման կայուն և հստակ մեխանիզմ, որի շրջանակներում կապահովվեն նաև ապաստան հայցողների իրավունքները: Այս առումով հատկապես ուշադրության արժանի է նաև ապաստան հայցողների վերաբերյալ ստացված տեղեկության գաղտնիության սկզբունքը, քանի որ գործնականում հնարավոր են տեղեկությունների հավաքագրման այնպիսի մեխանիզմների կիրարկում, որոնք կարող են հանգեցնել երրորդ պետությանը անձի վերաբերյալ տեղեկություններ տրամադրելուն: Կարևոր է ապահովել նաև տարբեր լեզուներով ծագման երկրի վերաբերյալ տեղեկությունների հավաքագրում և դրանց պատշաճ թարգմանություն: Սա թույլ կտա ապահովել ծագման երկրի վերաբերյալ առավել հավաստի տեղեկության ուսումնասիրում, այդ թվում նաև այդ երկրի լեզվով:

Ուստի անհրաժեշտ է իրականացնել ապաստան հայցողների ծագման երկրների վերաբերյալ որակյալ և հավաստի տեղեկատվության ձեռքբերման պրակտիկայի և մեթոդաբանության վերաբերյալ միջազգային չափանիշների ուսումնասիրություն և ապահովել դրանց կիրառումը գործնականում՝ իրականացնելով իրավասու աշխատակիցների վերապատրաստում, ինչպես նաև ապաստան հայցող անձի ծագման երկրի լեզվով տեղեկությունների հավաքագրում և դրանց թարգմանություն:

[403]Տե՛ս Ծագման երկրի վերաբերյալ տեղեկության օգտագործումը փախստականի կարգավիճակի տրամադրման հարցում. քննադատող հեռանկարները 2009 թվականի մայիսի փաստաթղթի Ծագման երկրի վերաբերյալ տեղեկություն որպես մերժման որոշումների հիմք գլխի Առաջարկություններ բաժնի 2-րդ և 8-րդ պարբերությունները, http://www.refworld.org/pdfid/4a3f2ac32.pdf: